

ՎԱՐԴԻՎԱՌ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ՅՈՒՇԵՐ  
Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆԻ ԿԵԱՆՔԷՍ  
1940 - 1952



VARTIVAR OHANNESSIAN

LES ANNEES GLORIEUSES DU FOOTBALL  
HOMENETMEN LIBAN 1940 - 1952

EN ANNEXE: LE RESUME EN FRANÇAIS

*Միրելի՛ ընթերցող,*

*Կարդա՛ եւ միշտ հոգիիդ ու մտքիդ մէջ վա՛ն պահե  
Պէյրուքի Հ.Մ.Ը.Մ.ի ֆուքպոլի խումբին փառաւոր անցեալը,  
երբ տնտեսական ոչ նախանձելի վիճակի մէջ իսկ, մենք  
յաղթանակներ կը տանէինք ու քանիցս տիրացած էինք  
Լիբանանի ախոյեանի եւ բաժակակիրի տիտղոսներուն,  
իսկ մեր մարզիկները՝ մեծամասնութեամբ մաս կազմելով  
ազգային խումբին, դարձած էին Լիբանանի մարզական  
կեանքի փառքն ու պարծանքը:*

*Վարդիվառ*

ՎԱՐԴԻՎԱՌ  
ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

ՅՈՒՇԵՐ  
Հ.Մ.Ը.Մ. - ԱԿԱՆԻ  
ԿԵԱՆՔԷՍ

ԼԻԲԱՆԱՆԻ ՀՄԸՄ-Ի ՖՈՒԹՊՈԼԻ  
ՓԱՌԱՊԱՆԾ ՏԱՐԻՆԵՐԸ 1940-1952  
ԵՒ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՍ ՀՄԸՄ-ԷՆ  
ՆԵՐՍ 1939-ԷՆ ՄԻՆՉԵՒ ՄԵՐ ՕՐԵՐԸ

Փարիզ  
2000



ԼԻԲԱՆԱՆԻ ՀՄԸՄ-Ի ՖՈՒԹՊՈԼԻ ՓԱՌՔԻ  
ՇՐՋԱՆԸ (1940-1952)  
ՅԱԻԵՐԺԱՅՆՈՂ ԱՅՍ ՀԱՏՈՐԸ  
ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԷ  
ՎԵՀԱՆՁՆ ՄԵԿԵՆԱՍՈՒԹԵԱՄԲ՝  
ՆԱԽԿԻՆ ՄԱՐԶԻԿ ԵՒ ՄԱՐԶԻԿԸ  
ԲԱՐՁՐՕՐԷՆ ԳՆԱՀԱՏՈՂ՝  
ՀՄԸՄ-Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ  
ԱՅԺՄՈՒ ԱՆԴԱՄ,  
ԵՂԲ. ՀՐԱԶ ՍԻՍԵՌԵԱՆԻ

# ՉՕՆ

ԼԻԲԱՆԱՆԻ Հ.Մ.Ը.Մ. Ի  
ՖՈՒԹՊՈԼԻ ՊԱՆԾԱԼԻ ՏԱՐԻՆԵՐԸ (1940 - 1952)  
ՅԱԻԵՐԺԱՅՆՈՂ ԱՅՍ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ  
ԿԸ ՉՕՆԵՄ՝ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՔՈՅՐԵՐՈՒՍ ԵՒ  
ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒՍ, Հ.Մ.Ը.Մ. Ի ԲԱԶՄԱՀԱԶԱՐ  
ՀԱՄԱԿԻՐՆԵՐՈՒՆ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ  
ՖՈՒԹՊՈԼԻ ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ՍԻՐԱՀԱՐՆԵՐՈՒՆ:

## Խ Օ Ս Թ

### Գ Ն Ա Հ Ա Տ Ա Ն Թ Ի

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչությունը գնահատանքով կ'ողջունէ վեթերան Հ.Մ.Ը.Մ.ական եղբայր Վարդիվառ Յովհաննէսեանի յուշերու ներկայ հատորի հրատարակութիւնը:

Տիպար միութեանական՝ եղբայր Վարդիվառ գործած է ֆութպոլի մարզէն ներս ծառայելով իբրեւ՝ մարզիկ, մարզիչ, խմբապետ, դեկավար ու վարչական, սերունդներ առաջնորդելով դէպի Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարաքանութիւնը: Վարդիվառ Յովհաննէսեան եղած է նաեւ Հ.Յ.Դաշնակցութեան շարքային ընկեր եւ վարած պատասխանատու պաշտօններ լիբանանահայ կեանքի տագնապալի օրերուն:

Վստահ ենք, որ հեղինակին տիպար Հ.Մ.Ը.Մ.ականի օրինակը վարակիչ կը դառնայ երիտասարդ սերունդին, հարուստ բովանդակութեամբ այս հատորի ընթերցումի ընդմէջէն:

2 Նոյեմբեր 2000  
Պէյրուս

## Խ Օ Ս Թ Ո Ղ Ջ Ո Յ Ն Ի

Ողջունել եղբ. Վարդիվառ Յովհաննէսեանի յուշերու հրատարակումը, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան համար, կը նշանակէ ողջունել ամբողջ սերունդ մը, որ գործեց համեստօրէն, համեստ կարելիութիւններով, կարգապահ, լուռ ու մունջ, հեռու լուսարձակներէ, Հ.Մ.Ը.Մ.ականի տիպարով, Հ.Մ.Ը.Մ.ականի գաղափարով ու շունչով՝ ի ինդիր Հ.Մ.Ը.Մ.ին, ի ինդիր հայութեան վերելքին ու անոր ողնասիւնը կապմող երիտասարդ սերունդներու առողջ դաստիարակման ու գաղափարական դարբնումին:

Հրատարակման սա պահուն, յանուն Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ու Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի ընտանիքին, մեր եղբօր՝ Վարդիվառ Յովհաննէսեանին վարձքդ կատար ըսելով պիտի չբաւարարուինք, այլ՝ պիտի քալենք այն ուղիէն, որ քալեցին ինքն ու իր համեստ գործակիցները, հաւատարիմ իրենց պաշտած Հ.Մ.Ը.Մ.ի վսեմ ու անբասիր նշանաբանին՝ «Բարձրացիր - Բարձրացուր»ին:

15 Յունուար 2002  
Պէյրութ



## ԱՅՍ ԳԻՐՔՍ ԿԸ ՆՈՒԻՐԵՄ

*Իմ գաւակներուս՝ Շահէին, Նոնոյին, Շողիկին, Վիգէնին, որոնք  
անպայման կ'ուզէին տեսնել հրատարակութիւնը գանձի պէս պահուած  
Հ.Մ.Ը.Մ.ականի յուշերուս, գորս յանախ կը պատմէի իրենց:*

*Նաեւ իրենց քաջալերանքով է որ համբերութեամբ պատրաստեցի  
այս գիրքս: Չեմ մոռնար թոռնիկս՝ Սեւակը, որ վերջնական  
էջադրումները ըրաւ սոյն հատորին:*

*Նաեւ իմ ֆութպոլիստ թոռնիկիս՝ Զէֆին, որ հետեւելով մեծ հօրը  
օրինակին, ինը տարեկանին արդէն լաւագոյն խաղացողն է իր  
խումբին՝ «FC FIRE» Տալասի կրտսերներու ֆութպոլի ակումբին,  
Թեֆասս-Ամերիկա:*



ԶԷՔ ՆԿԱՐՈՒԱԾ ԲՈԼՈՄՊԻԱՑԻ ԱՆՈՒԱՆԻ  
ՖՈՒԹՊՈԼԻՍՏԻՆ ՀԵՏ՝ ՏԱԼԱՍ 2000:

## ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՍՐՏԱԳԻՆ ԽՕՍԶ

Շնորհակալութիւն կը յայտնեմ բոլոր անոնց, որոնք զիս քաջալերեցին այս հատորին անպայման հրատարակութեան ի խնդիր, ի մասնաւորի հետեւեալ երեք վաստակաւոր եղբայրներուս, որոնց հետ ամենայն նուիրումով ծառայած եմ միութեանս, մաս կազմելով անոնց հետմիասին Հ.Մ.Ը.Մ.ի Միջին Արեւելքի վերջին Շրջանային Վարչութեան: Յետագային սոյն եղբայրները տարիներ շարունակ մաս կազմած են Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան:

Յ. ԳԵՂԱՐԴ, (Տոբ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳԱԶԱՆՃԵԱՆ).- Օրը օրին արձանագրած էի յուշերս, ի մասնաւորի Հ.Մ.Ը.Մ.ի մեր սփանչելի մրցումներուն եւ միջ-մասնանիւղային խաղերուն նկարագրութիւնները, նաեւ Հ.Մ.Ը.Մ.ական կեանքիս կարեւոր դէպքերը:

Օր մը, Փարիզ, հանդիպումի ընթացքին, եղբայր Յ. Գեղարդ, երբ իմացաւ այս իրողութիւնը, ուրախացաւ եւ պնդեց, թէ իրատունէ չունէի զուտ անձնական յուշ պահել զանոնք, այլ պարտաւոր էի հատորով մը սեփականութիւնը դարձնել հանրութեան ամէնէն առաջ ի շահ Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՏԵՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, որուն հետ, 1945էն սկսեալ, մաս կազմելով Հ.Մ.Ը.Մ.ի ֆուքպոլի երկրորդական խումբերու Կեդրոնական Յանձնախումբին, պատրաստած ենք Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարականով բրձուած ֆուքպոլիստներ եւ ախոյեան խումբեր: Եղբ. Յովհաննէս գիտակից այս իրողութեան եւ գրքիս ձեռագիրը աչքէ անցընելէ վերջ, գրեց ինծի. «Միրելի Վարդիվառ, յուշերդ, պէտք է խոստովանիլ, որ արժէքաւոր նիւթեր են Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան համար, եւ ափսոս կ'ըլլայ չհրատարակելը»:

ԲԻԻԶԱՆԴ ԹՐՐԻԿԵԱՆ իր փորձառու եւ օգտակար խորհուրդները չզլացաւ սոյն գիրքս լաւագոյնս ներկայացնելու մտահոգութեամբ: Պնդեց, որ անպայման լոյս տեսնէ այս գիրքը, որպէս կարեւոր վկայութիւն մը Լիբանանի Հ.Մ.Ը.Մ.ի ֆուքպոլի փառապանծ շրջանի պատմութեան յաւերժացման: Եղբայրը ներկայիս Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետն է:

Շնորհակալութեան խօսք ունիմ նաեւ իմ նախկին բարեկամիս՝ փարիզաբնակ Նազարէթ Թօփալեանին, որ քաջատեղեակ Լիբանանի Հ.Մ.Ը.Մ.ի ֆուքպոլի պանծալի շրջանին, սիրով ստանձնեց յուշերուս բաւական ծանր սրբագրութիւնները:

Շնորհակալութիւն նաեւ իմ ընկերոջս, Յարութիւն Մարկարոսեանին, որ այժմ մաս կը կազմէ Լիբանանի ֆուքպոլի Ֆետերասիոնին, իբր Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցիչ: Ան օրը օրին հետեւեցաւ յուշերուս պատրաստութեան, յանախ յիշեցնելով ինծի մոռցուած կարեւոր դէպքեր, որովհետեւ պատանի տարիքէն միասին եղած ենք եւ շարունակած մնալ Հ.Մ.Ը.Մ.ի ֆուքպոլի ասպարէզէն ներս:

Շնորհակալութիւն՝ Հ.Մ.Ը.Մ.ի նախկին ֆուքպոլիստներուն, որոնք անհամբեր էին տեսնել օր առաջ հրատարակութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի ֆուքպոլի փառապանծ տարիներու պատմութեան, իմացնելու համար ընթերցողներուն, թէ ինչ մեծ զոհողութեամբ եւ յաղթելու վնասկամութեամբ կը խաղային նախկին ֆուքպոլիստները:



## Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

### Գ Ի Ր Ք Մ Ը Ե Ի Մ Ա Ր Տ Մ Ը

Գիրքը վերնախաւի մը գրչի արգասիքը չէ ալլելս: Ժողովրդական ցան եւ հունձձ է ներկայիս, մենաշնորհեալներու միայն մատչելի՝ շամիրամեան գաղտնի պարտէզ մ'ըլլալէ աւելի: Գրական-ստեղծագործական որակաւոր երկերու խոյն ի վեր՝ անուանի արհեստաւորէն, ախոյեան մարգիկէն ու հռչակաւոր դերասանէն մինչեւ պետական անձնաւորութիւններ կողքի մը տակ կ'ամփոփեն ու գրատուններու ցուցափեղկի ետին կը շարեն իրենց կեանքի պատմութիւնները, յուշերն ու փուշերը՝ վկայութիւն մը փոխանցելու դարերուն, իրենց հոգեբարոյական բարեփոխեալ դիմանկարը աւանդելու համար մարդկային յիշողութեան: Մեծ համրանք հաշուող ազգերու, մանաւանդ՝ նարտարապետականացած հարուստ երկիրներու մէջ սովորութիւն դարձած է այսօր ինքնասեւեռման, երբեմն ալ պարզապէս՝ փառք ու եկամուտ կրկնապատկելու այս երեւոյթը:

Տարբեր է սակայն այս գիրքին հանգամանքը: Մարգիկի մը շապիկին տակ խոռովայոյց իր ժամանակաշրջանը բարձրահակատ կտրած ու անցած մաքրակենցաղ եւ գաղափարական մարդու մը վերապրումները, վաւերական հաստատումներն են այս էջերը, եւ զանոնք իմաստաւորող, անհատականի զոհաբերութեամբ հաւաքական յաղթանակ մը կենսաւորող շունչը՝ գալիք սերունդներուն փոխանցելու պարտաւորութեան գիտակցումն է աղբիւրը անոնց հանրամատուցման:

## ՎԱՐԴԻՎԱՌ ...

Ամենի խոյանձով եւ անգուսպ հարուածով հակառակորդին բերդը խորտակող եւ յանախ Հ.Մ.Ը.Մ.ի յաղթանակը կերտող ամրակուռ յառաջապահը, որուն «Պոմպ Աթոմիք» ժողովրդային որակումն ու որակաւորումը արդար դատած էր օրին Լիբանանի բազմադէմ եւ բազմաթոյր մարզաշխարհը :

Սաաթնի եւ Նդիշէ, Օննիկ (Դամասկոս) եւ Վազգէն(Հալէպ), Հանի Հայկ եւ Օգսէն, Տիգրան եւ Նալպանտեան, Յովհաննէս «Կիւլիւմ», Ժիրայր եւ Կիրակոս, Մանուէլ, Ստեփան եւ Սարգիս, ու տակաւին ուրիշներ ոչ միայն կը կազմէին Հ.Մ.Ը.Մ.ի ոտնագնդակի հոյը, այլ եւ թագն ու պսակը Սուրիոյ եւ Լիբանանի ազգային խումբերուն: Գերընտիրներու այս շարքին մաս կը կազմէր Վարդիվառ՝ անկասկած:

Բացի քաջավարժ մարզիկէն, կարգապահ եւ հեղինակաւոր խմբապետէն, տարբեր հանգամանք մը իւրայատուկ տեղ ու դիմագիծ կու տար անոր :

Այդ տասնամեակին (1942-1952), Համաշխարհային Բ. Պատերազմը երկրագունդը՝ նոյնիսկ մեր փոքր ածուն կիսած էր երկուէի: Սովետ քանակի յաղթանակներուն ի տես՝ օրէ օր կը բազմանար Մուրն - Մանգաղին երկրպագողներուն թիւը, Նոագոյնը լճողներուն եւ Կարմիր Դրօշին բարեւի կեցողներուն համրանքը:

Հ.Մ.Ը.Մ. անմասն չմնաց այդ տեղատուութեան, ոտնագնդակի ախոյեան խումբի լաւագոյններէն ալ անցան էնդի դէմը, միացան նորակազմ «Բագրամեան»ին, երեւակայելով իրենց մայր խումբին եւ ակումբին շուտափոյթ քայլաշտուր:

Լինել - չլինելու բախտորոշ այս պահուն է որ՝ հասակակիցներէն, ամբոխէն վեր կարկառեցաւ Վարդիվառ: Կուսակցութեան՝ Հ.Յ.Դ.ի «Ազատութիւն կամ Մահ» կարգախօսին ուխտապահ եւ Հ.Մ.Ը.Մ.ի «Բարձրացի՛ր Բարձրացո՛ւր» նշանաբանին հաւատարիմ՝ խմբապետ Վարդիվառ բարձր բռնեց Նոագոյնը, յաղթաբազուկ եւ ամբողջական յանձնառութեամբ: Եւ թիկունք ունենալով հիններէն՝ Սաաթնի եւ Նդիշէն, բայց մանաւանդ՝ անմիջական գործակից իր աննման պահակագունդը՝ Յովհաննէս, Կիրակոս Գալայնեան եւ Սարգիս Ազնաւորեան, կուրծք տուաւ պղտոր հոսանքին, վերակազմեց Հ.Մ.Ը.Մ.ի ոտնագնդակի խումբը աւելի հզօր՝ քան առաջ, ու խլեց նորէն դապնեպսակը ախոյեանութեան, յուսադրելով շարքերը եւ բազմացնելով կրկին միութեան համակիրներուն համրանքը:

Ուրիշ բան մի փնտռէք այս գիրքին մէջ. ո՛չ անհատական կամ միութեանական շարահիւս պատմութիւն, ոչ ալ դատողական երգ ու մարզանք: Բառերը, նախադասութիւնները մերկ ու հատու են սուրի պէս, առանց գրականի մտահոգութեան: Հ.Մ.Ը.Մ.ի եւ անոր առնչաբար ազգային կեանքէն դէպքերու եւ իրադարձութիւններու վաւերական յիշատակումներ,

մրցումներու նշգրիտ արդիւնքներ, խաղընկերներու եւ ժամանակից մարզիկներու մասին արագ, բայց բնորոշիչ դիմաստուերներ ու լուսանկարներ, սրտի տրոփ, քիչ մըն ալ զգացողական զեղում: Ծանօթութեանց, տեղեկութիւններու հարուստ շտեմարան մը առաջին հերթին: Բայց ուրիշ արժանիքներ ալ ապէս կ'արժեւորեն՝ այս հատորը :

Լեոնային կածաններէ մագլցողներուն ծանօթ, ժայտերու ծերպերէն ծաւալող ծոթրինի բոյրին պէս՝ տողերուն եւ էջերուն արտաբուրած եղբայրասիրական շերմ զգացումը, Հ.Մ.Ը.Մ.ի եղբայրական ոգին, գաղափարական երիտասարդի հոգեկան զէն ու զարդ սեպ բարձունքները նուանելու, գագաթը բարձրանալու ուժը եւ արիասրտութիւնը, վերջապէս պարտքը կատարած մարդու ներքին երանութիւնը, որ կը համակէ եւ կը խրախուսէ ընթերցողը:

Առանց այս գիրքին աղիւս մը, նոյնիսկ անկիւնաքար մը պիտի պակսէր, անպայման, Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան կառոյցէն:

Այս գիրքով եղբայր Վարդիվառ կ'ամբողջացնէ Հ.Մ.Ը.Մ.ականի իր առաջնութիւնը, սկառուտ տարիքին՝ «Լաւագոյնս» տալու իր խոստումը:

Մփոռող ջոյնը ու շֆանշանը բաւարար չեն սակայն: Գնահատանքը տեւականացնելու, բայց մանաւանդ միութեանական կենսոյժի վերածելու ի խնդիր՝ հարկ է որ իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ական, ինչու ոչ ամէն գաղափարապաշտ ու մարգասէր հայ կարդայ, կրկին ու կրկին թղթատէ, ազգային հպարտութեան եւ ներշնչման աղբիւր՝ այս հատորը:

Յ. ԳԵՂԱՐԴ

05 - 08 - 1999 Փարիզ

# Ի ԽՆԴԻՐ ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀՄԸՄ-Ի ՖՈՒԹՊՈԼԻ ՓԱՌԱՊԱՆԾ ՏԱՐԻՆԵՐԸ՝ 1940-1952

Լիբանանի ՀՄԸՄի ֆուտբոլի խումբը փառապանծ շրջան մը ապրեցաւ 1940-1952 երկարող տարիներուն: Կը բաւէ հպանցիկ ակնարկ մը նետել այդ տարիներու Լիբանանի ֆուտբոլի պատմութեան վրայ, ՀՄԸՄի յաղթական երթին, եւ մենք անմիջապէս կը համոզուինք, թէ որքան ճշմարիտ ու տեղին է փառապանծ որակումը, իսկապէս տիրանալով Լիբանանի ախոյեանական եւ բաժակի տիտղոսներուն, նոյնքան արժեքաւոր ՀՄԸՄի միջմասնահիւղայինի բաժակներուն: Առաւել՝ մեր կազմը առաջատար դիրքեր գրաւած է նաեւ Լիբանանեան Ա. դասակարգի խումբերու միջեւ կազմակերպուած զանազան մրցաշարքերու ընթացքին: Եղած են յանախ միջազգային բարեկամական մրցումներ, ուր պատուաւոր արդիւնքներ արձանագրած ենք:

Իսկ թերեւս աւելի յատկանշականը այն է, թէ այն ժամանակաշրջանին, Լիբանանի Ազգային խումբը փայլած է ՀՄԸՄական միւնչեւ եօթը մարզիկներու մասնակցութեամբ, եւ երբեմն վարած է Ազգային խումբին խմբապետութիւնը:

Անշուշտ վերոյիշեալ այս արդիւնքները եւ նուաճումները սովորական փաստեր չեն լոկ: Անոնց ետին գոյութիւն ունի ամբողջ պատմութիւն մը, որ լեցուն է յուզումնալի եւ զուարթ պահերով, անդուլ ճիգերով, յաղթանակի բերկրանքներով ու ձախողութիւններու տխրութեամբ... Բայց այս պատմութիւնը չի կրնար համարուիլ միայն զայն կերտողներու սեփականութիւնը, անկա կը պատկանի Լիբանանի համայն հայութեան եւ ի մասնաւորի՝ ՀՄԸՄի ընտանիքին ու անոր համակիրներուն: Վերջին հաշուով՝ այս ժամանակաշրջանը, Լիբանանի հայ համայնքին հպարտութիւնն է, համայնք մը, որ գերմարդկային ճիգերով նոր դուրս կու գար իրեն պարտադրուած գաղթականի կարգավիճակէն եւ մարզական թէ այլ բնագաւառներու վերաբերող նուաճումներով, ապացոյցը կու տար իր անյողդողդ կամփին ու վերապրելու ձգտող իր աննահանջ ոգիին: Հետեւաբար այս տարիներու մարզական փառաւոր պատմութիւնը պէտք է համարել անբաժան մասը Լիբանանահայ կեանքին:

Այս բոլոր իրադարձութիւնները տեղի ունեցան ՀՄԸՄի դրօշին տակ, բոլորս ալ, մարզիկ թէ պատասխանատու, հաւատաւոր ՀՄԸՄական գաղափարակիցներ էինք, թրծուած անոր ոգիով ու սերտօրէն կապուած անոր սկզբունքներուն, իսկ մեր յանձնառութիւնը եւ նուիրումը այս կազմակերպութեան նկատմամբ անսակարկելի էին: Մեր ֆուտբոլի յաղթանակներու ոսկեայ այս տարիները հիմը կը դնէին լիբանանեան ֆուտբոլէն ներս, ՀՄԸՄի նախանձելի պատմութեան: Մեր մարզա-

սերներու համոզումով, ՀՄԸՄը հայ ժողովուրդի հպարտութիւնն էր:

Ես հպարտ եմ, իբր ՀՄԸՄական ֆուլբայոլիստ, այս փառապանծ շրջանը կերտողներուն մասնակից ըլլալուս համար, մանաւանդ՝ երբ յիսուն տարիներ ետք, «ԱԶԴԱԿ» օրաթերթի մարզական թղթակիցը, 5 Յունուար 1998ի թիւին մէջ, անդրադառնալով ՀՄԸՄի խումբին մէկ ճախող մրցումին, չվարանեցաւ յիշեցնելու ՀՄԸՄի մարզասէր համակիրներուն հետեւեալը:

«Երէկ, Պէյրութի Բաղաբապետարանի դաշտին վրայ, բացակայ էին պատմութիւն կերտած, Վարդիվառներու նման շարունակ յամառօրէն պայքարող, քրտինքի վերջին կաթիլը թափող մարզիկները»:

ՅԻՍՈՒՆ ՏԱՐԻ ԵՏՔ «ԱԶԴԱԿ» ԳՐԵՅ ՈՒՐԲԱԹ 6 ՄԱՐՏ 1998



## Մարզական



### ՎԵԹԵՐԱՆ ԽՄԲԱՊԵՏԻՆ ՕՐԻՆԱԿՈՎ

«Ահա եղբայր Վարդիվառը» ինչպէս կ'ըսէին ժամանակին համակիրները, երբ զինք նամբան կը տեսնէին: Մենք ալ նոյն բանը ըսինք առաջին հերթին, երբ մտերմիկ հանդիպում մը ունեցանք եղբ. Վարդիվառ Յովհաննէսեանի հետ:

Պատանիներ անվարան կրնան հարց տալ, թէ ո՞վ է այս եղբայրը:

Այս հարցադրումը բնական է: Ահաւասիկ գրեթէ յիսուն տարիներ գլտորուած են, եւ Լիբանանի դաժան Բաղաբապետարանի պատերազմն ալ իրարմէ հեռացուցած է հին ու նոր սերունդները:

Եղբայր Վարդիվառը այդ տիպար ՀՄԸՄական ֆուլբայոլիստն է: Այդ բիւրեղացած մարզիկը, որ նոյնիսկ հին աշխարհամասէն առաջարկներ մերժեց, նիւթական շատ աւելի լաւ պայմաններ երկրորդական սեպեց եւ նախընտրեց կառչած մնալ իր պաշտած կազմին՝ ՀՄԸՄին:

Հանդիպումը տեւեց երկար մարդուն կարեւորագոյն թշնամիին՝ ժամացոյցին համար, սակայն մեզի եւ բնականաբար եղբ. Վարդիվառին եւ անոր ընկերացող Լիբանանի Ֆետերասիոնի անդամ եղբ. Յարութիւն Մարկարոսեանին համար՝ կարճ:

Յիշատակներով եւ գաղափարներով հարուստ՝ անկարելի է Բանի մը վայրկեաններու մէջ տեսակցիլ եղբ. Վարդիվառին հետ, որ մինչեւ օրս քայլ պահած է իր նախասիրած մարզախաղին՝ ֆուլբայոլին հետ:

Այսօր եղբայր Վարդիվառի պէս դէմքեր կը բացակային դաշտերէն: Սակայն ինք կը շեշտէ, եւ կը պնդէ. «Երկրորդական կազմերուն ուժ տուէ՛ք: Պատանի տարիքէն պատրաստեցէ՛ք ՀՄԸՄական մարզիկներ եւ Վարդիվառներ անպակաս պիտի ըլլան»:

Ահա եղբայր Վարդիվառը :



ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ  
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ  
HOMENETMEN  
CENTRAL COMMITTEE

## ՀԱՍՏԱՏԱԳԻՐ

### Եղբայր Վարդավառ Յովհաննեսյանին

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի շրջանի միութենական կեանքին, յատկապես ոտնագնդակի մարզին մէջ, Ձեր տարիներու աշխատանքը գնահատելով, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը իր վերջին նիստին, որոշեց սոյն գնահատագրին հետ, Ձեզ պարգևատրել Հ.Մ.Ը.Մ.ի արտակարգ պատուանշանով:

Պէյրոս, 27 Մարտ 1999

Ի շնորհիւ  
Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան  
Ատենադպիր Կարոյանի Ատենապետ  
Կ. Թիւրքինճեան Գրգումանեան







ՎԱՐԴԻՎԱՌ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ ՀՄԸՄ-Ի ԱՆԴԱՄ  
 1939ԷԸ ՄԻՆՉԵԻ ՕՐԵՐՍ  
 ՀՄԸՄ-Ի ԱՆԴԱՄԱՏԵՏՐՍ



Անդամակցութեան թիւ 209  
 Անունը *Վարդիվան*  
 Մականունը *Յովհաննէսեան*  
 ՎԱՐՉՈՒԹԻՒՆ  
 Ա. Դպիր Ա. Պետ  
*Վարդիվան* *Յովհաննէսեան*



هو متحن  
 جمعية للاعبان الرياضية  
 رقم الاشتراك 209  
 الاسم *قريشان*  
 الشهرة *أثنيسيان*  
 امين السر رئيس  
*عمر احيا*

ԼԻԲԱՆԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԻՆ ՄԱՍ ԿԱԶՄԱԾ ԵՄ 1943-1951  
 ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ԲԱՐԴՍ Ի ԶՕՐՈՒ ՑԿԵԱՆՍ

الاتحاد اللبناني لكرة القدم  
 FEDERATION LIBANAISE DE FOOTBALL ASSOCIATION  
 Wartiwar Ohannessian



Ancien foot-balleur international  
 Dans l'équipe nationale libanaise  
 date 30 - 9 - 1999  
 date d'expiration - à vie.

Personality Card *بطاقة شخصية*



الإمين العام  
 SECRETARY  
 GENERAL



الاتحاد اللبناني لكرة القدم  
 الرقم *209*

الاسم *وارتيوار أو هانسيان*

الصفة *الإمين العام*  
*مفتري لبنان الوطني*  
 تاريخ الإصدار *30/9/1999*

Expiry Date *إلى الأبد*

# ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ՎԿԱՅԱԳԻՐԸ

(թարգմանուած)

## ՎԱՐԴԻՎԱՌԻ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

ԱՍՏՂԸ՝ ՈՐ ԻՆՔՉԻՆՔ ԱՆՄԱՀԱՑՈՒՑ

### ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՖՈՒԹՊՈԼԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Վարդիվառ Յովհաննէսեան...աստղ մը, զոր անմահացուց Լիբանանեան ֆութպոլը եւ ոսկի տառերով արձանագրուած պիտի մնայ յիշողութեանը մէջ ֆութպոլի սիրահար զանգուածներուն, իբրեւ հայրենի մարզադաշտերէն ծնունդ առած բացառիկ մէկ յայտնութիւնը, լիբանանեան ֆութպոլի ողջ պատմութեան փառքի ոսկեդարը կերտած տիտաններու շարքին:

Վարդիվառ Յովհաննէսեան... ուժեղ վնոակամութեան տիպարը, որ վաղ պատանեկութենէն որոշեց նեղքել իր ուղին հսկաներու ընդմէջէն, զարգացուց ֆութպոլի տիրանալու իր ճիրքը, մշակեց իր ֆիզիքական լայն կարողութիւնները եւ մարզական շնորհները, մինչեւ որ նակատագիրը տնօրինեց հազնելու ՀՄԸՄի շապիկը, ապահովելով հիմնական իր ուրոյն տեղը խումբին փայլուն աստղերու փաղանգին մէջ: Կարճ ժամանակէն նուաճեց ՀՄԸՄի համակիր զանգուածներուն վստահութիւնը եւ դարձաւ ոսկեայ թանկագին աստղ մը:

Կայծակի արագութեամբ սուրացող Վարդիվառ, դարձաւ այն արտակարգ մարզիկը, որ ամենի գրոհով խուճապի ու սարսափի կը մատնէր մրցակիցները, ի մասնաւորի բերդապահը, միաժամանակ հիացնելով համակիրն ու հաղիսատեսը, իր արուեստով եւ իրեն յատուկ ստեղծագործ խաղարկութեամբ:

Ապա, Վարդիվառ արժանաւորապէս հագուեցաւ Ազգային խումբի շապիկը, իր կորովի եւ անձնուէր խաղարկութեամբ նակատեցաւ միջազգային մրցումներուն, ոսկեգօծելով ամենաթանկ էջեր, ու անելցնելով Լիբանանի ֆութպոլի Ազգային խումբի պատմութեան տոմարներուն մէջ:

Վարդիվառ... արժէքաւոր անուն մը, որ անուրանալի ներդրումը բերաւ ՀՄԸՄ մեծ միութեան պատմութեան դրուատալից էջերուն, եւ արդարօրէն արժանացաւ տիպար խորհրդանիշ «օրինակելի» կոչումին, իր բոլոր կարելութիւնները ի սպաս դրած ըլլալով իր համայնքին եւ հայրենիքին:

ՎԱՐԴԻՎԱՌԻ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ - անուն մը, որ պիտի յաւերժացնէ մարզական պատմութիւնը եւ յաւէտ ֆանդակուած պիտի մնայ մեր յիշողութեան մէջ:

### ՌԱՀԻՖ ԱԼԷՄԻ

Լիբանանի ֆութպոլի ֆետերասիոնի  
ընդհանուր ֆարտուղար

1-10-1999

**ԱՀԱԻԱՍԻԿ ԵՕԹԸ ԳԼՈՒԽՆԵՐՈՒ ՄԷՋ**

ԼԻԲԱՆԱՆԻ Հ.Մ.Ը.Մ. Ի ՖՈՒԹՊՈԼԻ

ՓԱՌԱՊԱՆԾ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ՅՈՒՇԵՐՈՒՍ ԸՆԴՄԷՋԷՆ

ՆԱԵԻ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼԻՍՏԻ

ԿԵԱՆՔԻՍ ՅԻՇԱՏԱԿԵԼԻ ԴԷՊՔԵՐԸ

1939ԷՆ ՄԻՆՁԵԻ ՕՐԵՐՍ



## ԼԻՔԱՆԱՆ - ՀՄԸՄ - ՖՈՒԹՊՈԼ

### ԳԼՈՒԽ 1

#### ՀՄԸՄ-Ի ՀՍԿԱՆԵՐՈՒԻ ԽՈՒՄԲԸ 1940-1944

- ԹԷ ԻՆՉՊԷՍ ՖՈՒԹՊՈԼԻՍՏ ԵՂԱՅ ԵՒ ...
- ՊԷՅՐՈՒԹԻ ՀՄԸՄ-Ի ՖՈՒԹՊՈԼԻ ԱՌԱՋԻՆ ԽՈՒՄԲԸ
- 1940 ՊԷՅՐՈՒԹԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԲԱԺԱԿ
- 1942 ՇՐՋԱՊՏՈՅՑ ԴԷՊԻ ՊԱՂԵՍՏԻՆ
- 1943 ԼԻՔԱՆԱՆԻ ԲԱԺԱԿ
- 1944 ԼԻՔԱՆԱՆԻ ԱԽՈՅԵԱՆ



## ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒՄ ԿՈՒՌՔՆ ԷՐ ՀՄԸՄ-Ի ՀՍԿԱՆԵՐՈՒ ԾՈՒԹՊՈԼԻ ԿԱԶՄԸ 1938 - 1940

Այդ թուականներուն, ՀՄԸՄի ֆուբպոլի խումբը քաղաքական ոյժ մը ունէր ինծի պէս ֆուբպոլի սիրահար հարիւրաւոր պատանիներու համար: Որեւէ մրցում չէինք փախցնէր, արշաւելու պէս, խումբ խումբ կամ առանձնապէս քաղաքով կ'երթայինք մինչեւ Ֆրըն-Շըպպէ Ե պատէն ցատկելով կը մտնէինք DPHBի դաշտը, նոյն երեւոյթը կը պարզուէր Քարախոլ Տրուզի ՀՄԸՄի դաշտը, նաեւ Պէյրուքի հեռաւոր քաղաքայեւտարանի դաշտը: Իւրաքանչիւրս իր հերոսը ունէր ՀՄԸՄի խումբին մէջ, յարաբերաբար խաղցած դիրքին: Օրինակ՝ եթէ յետսապահ մարզիկ էր, իր հերոսներն էին Սաթթին Ե Եղիշը, եթէ միջնապահ էր, իր հերոսներն էին՝ Յովհաննէսը, Ժիրայրը Ե Կիրակոսը, իսկ եթէ յառաջապահ մարզիկ էր, իր հերոսն էր Հանի Հայկը:

Իմ հերոսս էր ՀՄԸՄի հսկաներու խումբը իր ամբողջութեամբ: Այսպէս, պատանիներս երբ խմբուած ըլլայինք, խանդավառութեամբ կը խօսէինք մարզիկներու Ե մրցումներու մասին, կը վերլուծէինք մրցումները Ե հակառակորդ խումբին խաղարկութիւնը: Կ'ապրէինք ու կը տարուէինք ապագայի երազներով, մենք մեզի հարց տալով, թէ օր մը օրանց, արդեօք մենք ալ պիտի կարենայինք՞ այս հերոսներուն պէս խաղալ Ե մուտք գործել ՀՄԸՄի հսկաներու խումբին մէջ:

Այս մարպիկները հսկաներ էին պատանիի մեր հիացական աչքերուն առջեւ:

### ԵՐԱԶՍ ԷՐ ՀԱՍՆԻԼ ՀՄԸՄ-Ի ՀՍԿԱՆԵՐՈՒ ԽՈՒՄԲԻՆ

Միակ պայմանը հոն հասնելու՝ տիպար երիտասարդ Ե Հ.Մ.Ը.Մ.ի ռզիով թրծուած ֆուբպոլիստ ըլլալն էր:

Ժամանակագրական Ե հանգրուան առ հանգրուան յառաջ-դիմութիւնս, ֆուբպոլի ասպարէզիս մէջ:

**Առաջին** - 1934էն սկսեալ, առաջին քայլերս ֆուբպոլի-Քարանթինայի մեր Ամանոս Քեմբի չարքաշ կեանքը, ուր բոլորիկ ռոմբերով ֆուբպոլ կը խաղայինք:

**Երկրորդ** - Էշրէֆիէ, Ս. Գրիգոր Լուսաւորիչ ճեմարանի զբօսանքներուն Ե կէսօրուան դադարին, ամէն օր ֆուբպոլ խաղալնիս:

**Երրորդ** - 1939- մուտքս Պէյրուքի Հ.Մ.Ը.Մ.ի սկաւտական «Յառաջ» խումբը, ուր թրծուեցայ Հ.Մ.Ը.Մ.ի ռզիով՝ իբր մարզիկ-ֆուբպոլիստ:

**Զորքորդ** - 1941ին, երազներուս հասայ՝ հագնելով Հ.Մ.Ը.Մ.ի հսկաներու խումբին եռագոյն տարազը եւ շարունակեցի դէպի գեղեցիկ հորիզոններ:

**Հինգերորդ** - մինչեւ 1952- մեր խումբին յաղթական երթը, տիրանալով Լիբանանի ախոյեանութեան եւ բաժակակիրի վսեմ տիտղոսներուն, եւ այլ տեղական ու միջազգային մրցաշարքերու բաժակներուն:

## ԱՅՍ ԲՈԼՈՐԻՆ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՐԴԱՐ ԱՐԴԻՒՆՔԸ ԵՒ ՀԵՏԵՒԱՆՔԸ...

- Մեր հազարաւոր մարզասէր Հ.Մ.Ը.Մ.ականներուն հերոսները դարձան:
- Լիբանանի ֆութպոլի ֆետերասիոնի նախագահին կողմէ հռչակւեցանք՝ ֆութպոլի դրօշակակիրը այս երկրին:
- Լիբանանեան մամուլը գնահատեց մեզ, իբր Լիբանանի ամէնէն զօրաւոր եւ տիպար մարզիկի ոգիով խումբը:
- Պարգեւատրուեցայ Հ.Մ.Ը.Մ.ի գերագոյն մարմնի կողմէ:
- Լիբանանի ֆութպոլի ֆետերասիոնի գնահատական վկայագիրը:



### ՀՄԸՄ-Ի ՀՍԿԱՆԵՐՈՒ ԽՈՒՄԲԸ 1938-1940

Զախէն՝ Մարտիրոս Պալըզնեան, Օգսէն Սմբատեան, Աւետիս Տէր Պետրոսեան, Կիրակոս Գալայնեան, Սարգիս Պատագեան, Արմենակ Թիւֆէնֆնեան, Կարապետ Սաաթնեան եւ Խաչիկ Խաչատուրեան:

Ծոած՝ Վարդան Պետիկեան, Պետրոս Սետեֆեան, պահեստի բերդապահ եւ Երուանդ Պալըզնեան:



## ԹԷ ԻՆՉՊԷՍ ՖՈՒԹՊՈՒԼԻՍՏ ԵՂԱՅ

Իրերայաջորդ երկու պարագաներ մեծ դեր ունեցան իրր ֆութպուլիստ կազմաւորմանս, ֆութպուլիս վառ սէրը ըլլալով նախապայմանը: Այսպէս՝ 1930ական թուականներուն կը բնակէին Պէյրութի ծովափնեայ Քարանթինա թաղաշրջանին մէջ հաստատուած հայոց հիւղաւանը (Ֆեմբը) մեր բոլոր ամանոցի հայրենակիցներուն հետ: Այդ տեղի չարքաշ կեանքը շատ օգնեց ինծի վարժութիւնն ձեռք առնելու, դիւրացնելով յետագային մուտքս ֆութպուլի խումբին մէջ: Բոպիկ ոտքերով եւ ցեխերու մէջ գնդակ կը խաղային: Սպանդանոցը մօտ ըլլալով ծովեզերքին, ընկերներուս հետ կ'երթային պետեւիներու մօտ, եւ իրենցմէ կ'ուզէին մորթուած ոչխարի տիկեր, ապա զանոնք ուռեցնելով ֆութպուլ կը խաղային: Այսպէս ընթացան նախաֆայերս, եւ չուշացաւ ժամանակը երբ՝ Ամանոսի մեր ֆեմբը ունեցաւ ֆութպուլի իր խումբը՝ «Հայրենիք» անունով:



ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԸԼԼԱԼՈՎ ՖՈՒԹՊՈՒԼԻ ՏԱՐԱԶՈՎ  
«ՀԱՅՐԵՆԻՔ» ԽՈՒՄԲԷՆ

Զախէն՝ վարդիվառ, Կարպիս Սարաֆեան, Խաչեր՝ եղբայրս եւ  
Հրանդ Նագաշեան: Քեմբի մեր դաշտը 1938ին:



ՇԹՈՐԱՅԻ ԱԿԸ  
ԵՒ ԸԺՏԻԹԱՅԻ ՄԵՐ  
ԱՅԳԻԻՆ ՄԷՋ

*Զախեն ծնած՝ Կարպիս Սարաֆեան, Լեւոն Պետրոսեան (Քեռիիս տղան), եղբայրս՝ Խաչեր եւ Սարգիս. աջէն ոտի՝ Վարդիվառ, Պետրոս, ումն եւ Պ. Յակոբ՝ ուսուցիչս:*



*Զախեն՝ Սարգիս, Խաչեր, Լեւոն, Վարդիվառ եւ Կարպիս:*



*« Հ ա յ ր ե ն ի ք » խ ու մ բ ի խ ա դ ա ց ո ղ ն եր ր ՝ Զ ա ի լ է 1938. ճ ա խ է ն վ եր ր ՝ Լ եւ ո ն, Պ ե տր ո ս եւ Վ ա ր դ ի վ առ : Վ ա ր ր ՝ Ս ե դր ա կ, Ա ս ա տ ու ը, Մ ա ն ու կ, Ս ա ր գ ի ս եւ Խ ա չ եր :*

Բարեբախտաբար դաշտի պէս բան մը գոյութիւն ունէր նիշդ սպանդանոցին մօտը, ուր պետեւիները շարաքը քանի մը անգամ ոչխարներ կը բերէին ու կը ծախէին. յանախ հոն կը մրցէին ուրիշ թաղերու խումբերուն հետ, նաեւ պետեւիներու խումբին հետ, շատ մեծ հետաքրքրութիւն ստեղծելով մեր հայրենակիցներուն մօտ:

Երբեմն Նոր Մարաշէն ՀՄԸՄի ֆութպոլիստներ կու գային մեզ քաջալերելու. շատ մեծ ուրախութեամբ կը շրջապատէին գիրենք եւ ուշադիր կը դիտէին իրենց ֆութպոլի գնդակին հարուածելը ոտով եւ գլխով: Հիմակուան պէս կը յիշեմ, անգամ մը քեզքը եկան ՀՄԸՄի երկու ֆութպոլիստներ, Սարգիս Պատագեան եւ Գրիգոր Պագրընեան, մրցումէն առաջ մեզի ցուցմունքներ ըրին. շատ ուրախ էինք եւ կը խնդրէինք որ յանախ կու գան:

## **«ՀԱՅՐԵՆԻՔ» ԽՈՒՄԲԻ ՄԱՐԶԻԿՆԵՐՈՎ ԱՄԱՌԸ 1938 ԸԺՏԻԹԱ ԳԻՒՂԸ**

Ինչպէս սովորութիւն էր, ամառը մեր հայրենակիցներով գիւղ կ'ելլէինք եւ երեք ամիս կը մնայինք՝ առանց Պէյրութ իջնելու: Հայրս փայտահատ ըլլալով՝ մօտակայ գիւղերը կը շրջէր եւ անպայման գործ կը գտնէր եւ օրապահիկը կը հանէր: Մեր ձմեռուան պաշարը կը հոգայինք այգի վարձելով: 1938ին այգի վարձած էինք կնքահօրս ընտանիքին՝ «տեւէ Մանուկ» ենց հետ: Հոն է, որ Հայրենիք խումբի խաղացողները յանախ կու գային մեզի այցելութեան:

## **ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԾԵՄԱՐԱՆ ԷՇՐԷՖԻԷ 1934**

### **(ՇՏԵՄԱՐԱՆԸ ՀԱՅ ՄԱՐԶԻԿ - ՖՈՒԹՊՈԼԻՍՏՆԵՐՈՒ)**

1934ին է որ սկսայ եղբօրս հետ յանախել այս վարժարանը, որ հոչակի տիրացած էր ոչ միայն կրթական տեսակետով իր բարձրորակ հայերէնի եւ ֆրանսերէնի դասաւանդումներով, այլ նաեւ դաստիարակչական տեսակետով, իր կարգապահութեան գործադրութեամբ, ու նաեւ ֆութպոլի եւ վոլի-պոլի հետեւողական յայտագրով մը: Զարմանալի պիտի թուէր այսօր, բայց իրողութիւն էր, որ առաջին դասարանէն մինչեւ բարձրագոյն կարգի աշակերտները ֆութպոլ կը խաղային զբօսանքներուն եւ կէսօրուան դադարին: Հաստատութեան տնօրէնը՝ Հայր Ալպան Տը Լալերնէթ, անկեղծ հայասէր, մարզանքի «SPORT» ի մասնաւորի՝ ֆութպոլի սէրը կը մշակէր տղոց մօտ, կէսօրուան ճաշէն ետք կազմակերպելով ֆութպոլի մրցում իր հսկողութեան տակ, եւ կէս ժամ տեւողութեամբ, կազմուած դպրոցի

լաւագոյն խաղացողներէն, վեցական հոգինոց երկու խումբերու միջեւ: Այս առնչութեամբ տեղին ու արդար է հաստատել, թէ Լիբանանի հայկական մարզական միութիւնները այս վարժարանին կը պարտին իրենց լաւագոյն եւ հռչակաւոր խաղացողները, ինչպէս՝ նշանաւոր Հանի Հայկը, Էմմիեան եղբայրները, Պօղոս Սիսեանը, Երուանդ Էլլէզեանը, Բարգէն Պոյանեանը, Կարպիս Սարաֆեանը, Պորոյոսը, Սարգիս Ազնաւորեանը, Մանուէլ Ալթունեանը, ես եւ շատ ուրիշներ:

Երախտագիտութեան զգացումը կը պարտաւորէ զիս յարգանքի սրտագին խօսք ըսելու եւ խոնարհելու յիշատակին առջեւ վարժարանի հիմնադիր եւ նուիրեալ մեծաւորին: Արդարեւ, Ս. Գրիգոր Լուսաւորիչ ձեւմարանը եղաւ այն կրթական օճախը, որ հայութեան տուաւ տիպար, դաստիարակուած, եւ ուսումի տէր քանի քանի երիտասարդներ, որոնք դեկավար դիրքեր գրաւեցին Լիբանանահայ համայնքին մէջ: Յիշատակներով լեցուն՝ վեց անմոռանալի տարիներ եմ անցուցած այս վարժարանի յարկին տակ՝ 1934 -1940:

Երբ տասնամեակներ ետք ուզեցի այս սրբավայրը այցելել, խոր յուզում մը ալեկոծեց հոգիս: Դպրոցին գլխաւոր դռնէն մուտք գործելով, դիտեցի երկարօրէն այն բակը, ուր ամէն կէսօր ֆուլթայլի մրցում կ'ունենային: Ամէն անկիւն, իւրաքանչիւր ծառ ու քար հոգիիս խորը եւ յիշողութեանս մէջ արթնցուցին անդարձ մեկնած պատանեկութեանս գեղեցիկ ու քաղցր յիշատակները: Ինքնաբեր քայլերով, մագնիսուած,



Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԸՄՄԱՐԱՆ ՀԻՄՆՈՒԱԾ 1923-ԻՆ՝ ԷԾՐԷՖԻԷ

կեցայ բակին այն տեղը, ուր մեր սիրելի տնօրէնը կը նստէր աթոռի վրայ, եւ ուշադրութեամբ կը հետեւէր մեր մրցումներուն:

Անհամեստութիւն թող չնկատուի եթէ խոստովանիմ, թէ մեր մեծաւորը զիս շատ կը սիրէր, որովհետեւ ոչ միայն մարզական գետնի վրայ, այլ նաեւ ուսումնական մարզին մէջ, ամենաշառաչադէմ աշակերտը եղած էի հոն անցուցած վեց տարիներուս ընթացքին: Ինչ քաղցր յիշատակներ, զանոնք մտաբերելն իսկ երջանկութիւն կը պարգեւէ այսօր հոգիիս: Այդ տարիներուն, երբ տակաւին փոքր էի, կը փափաքէի արագ մեծնալ եւ կեանքի ասպարէզ մտնել. հաւատք չէի ունենցել, որ մեծաւորը խօսքիս, երբ անոնք կ'ըսէին թէ՛ վաղը պիտի փնտռէինք մեր մանկութեան եւ պատանեկութեան դպրոցական շրջանի անուշ օրերը:

Բակին մէջ կանգնած յիշատակներուս հետ՝ այսօր իրաւունք կու տայ իրենց...

Տարուան ամէնէն յուզիչ օրը, անկասկած վիճակացոյցներու եւ մրցանակներու բաշխման արարողութիւնն էր, որ կը նշէր տարեշրջանի աւարտը եւ տեղի կ'ունենար դպրոցի հանկարծի մէջ ներկայութեամբ՝ Մեծաւորին եւ ուսուցիչներուն:

Վիճակացոյցներուն կցուած կ'ըլլային առաջնութեան եւ ջանասիրութեան բարենիշերը (PRIX D'EXCELLENCE ET PRIX DE DILIGENCE) եւ նուէր գիրքեր: Շահած մրցանակներս, բարենիշերը եւ վիճակացոյց շալկած կը վազէի տուն եւ ծնողքիս կը նկարագրէի տարեվերջի հանդիսութիւնը, եւ նորէն դասարանին առաջին հանդիսանալս: Ինչ մեծ երանութիւն էր ինծի համար տեսնել ծնողքիս հպարտութիւնը եւ սրտանց ուրախութիւնը:

Հոս անպայման կ'ուզեմ յայտնել երախտագիտական զգացումներս, նախ Ս. Գրիգոր Լուսաւորիչ ձեւարանի հայասէր տնօրէնին՝ Ալպան Տը Լավերնէթին, ապա իմ բոլոր ուսուցիչներուս, որոնց հայասէր եւ հայրենասէր շունչին տակ վեց տարիներ անցուցած եմ, ջանալով հետեւիլ իրենց պատգամած առաքելութեան՝ ազգասիրութեան եւ հայրենասիրութեան: Այդ ուսուցիչներս՝ վեցերորդ դասարանէն մինչեւ առաջին դասարանը «սերթիֆիքայի» էին. - Պարոն Յակոբ ծածկանունով՝ Մագիստրոս, Արթին Ադա, Պ. Ժոզէֆ Նալչայեան, Պ. Համբարձում Վիրանեան, Պ. Սիմոն, Աստիկ Էֆէնտի, Պ. Տիգրան (արաբերէնի ուսուցիչ), Պ. Բենիամին (աշխարհագրութեան ուսուցիչ) եւ Պ. Գէորգ Պաղեան (հայերէնի ուսուցիչ վերին դասարաններու), ծածկանունով՝ Վազգէն Այգունի:

Միջանկեալ - 1940ին, մեր այս դպրոցէն, Լիբանանի պետական Սերթիֆիքայի ֆննութիւններուն առաջին հաղիսացաւ իմ դասընկերս՝ Սիմոն Շմաւոնեան, իսկ բոլոր մասնակցողները յաջողեցան, ի միջի այլոց՝ նաեւ ես, շատ լաւ դասաւորումով:



Սիմոն Շմաւոնեան եւ Վարդիվառ Յովհաննէսեան. մէջտեղը՝ Պ. Գէորգ Պաղնեան «Վազգէն Այգունի». ձախ ծայրը առջեւը՝ (ծոած) Վարդիվառ Սերայտարեան. աջ ծայրը առջեւը՝ (ծոած) Գուրգէն Քեօշկերեան:

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱԺԱՌԻ ՏԱԽՏԱԿԸ ԲՈՆԱԾ 13 ԱՊՐԻԼ 1940



PERE SUPERIEUR ALBAN DE LAVERNETTE շրջապատուած բարձրագոյն դասարաններու աշակերտներով՝ Գրանեան եղբայրներ, Օննիկ, Վարդիվառ, Շմաւոնեան, Պ. Գէորգ Պաղնեան, Պետրոս Ազնաւորեան, Գրգեաշարեան, Փանոս Կրրտանեան, Ոսկեբերան Արզումանեան, Զաւէն Տէր Պետրոսեան, Զաւէն Կոստանեան եւ ուրիշներ:

# 1939 ՄՈՒՏ-ՔՍ ՀՄԸՄ-ԷՆ ՆԵՐՍ

ՊԷՅՐՈՒԹԻ ՀՄԸՄ-Ի ՍԿԱՌԻՏԱԿԱՆ

«ՅԱՌԱՋ» ԽՈՒՄԲԻՆ ՄԱՍ ԿԱԶՄԵՑԻ

ՄԵՐ ԽՄԲԱՊԵՏՆ ԷՐ՝ ՍԿԱՌԻՏԱՊԵՏ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԺԱՄԿՈՉԵԱՆ

Իմ ֆուբպոլիստի փայլուն ասպարեզս կը պարտիմ ՀՄԸՄի սկաուտ քրոջս տղուն՝ Մելինն Մելինեանին, որ բարեբաստիկ օր մը, զիս եւ եղբայրս տարաւ Պէյրուսի ակումբը, ուր արձանագրուեցանք սկաուտական «Յառաջ» խումբէն ֆուբպոլ խաղալու. մեր խմբապետն էր՝ սկաուտապետ եղբ. Յովհաննէս Ժամկոչեան, որ իր ուշիմ վարմունքով եւ խիստ կարգապահութամբ կը դեկավարէր խումբը:



ՀՄԸՄ-Ի ՍԿԱՌԻՏ  
ՄԵԼ.ՔՈՆ ՄԵԼ.ՔՈՆԵԱՆ  
(ՔՐՈՋՍ ՏՂԱՆ)

Հնս է որ ինքզինքս գտայ բոլորովին տարբեր շրջանակի մէջ, ՀՄԸՄի գեղեցիկ ընտանիքին մարզիկներով եւ սկաուտներով շրջապատուած: Ամէն տեղ, ակումբը թէ դաշտը կարգապահութիւն, եղբայրական սիրալիր մթնոլորտ եւ ազգային ոգի կը տիրէր, ՀՄԸՄ-ի «Բարձրացի՛ր Բարձրացո՛ւր» նշանաբանը կը սաւառնէր ամէնուն վրայ:

Մեծ էր դերը օրուան պատասխանատուներուն, ՀՄԸՄի վեհ ու վսեմ գաղափարը, զոհաբերութեան եւ մարզիկի ազնիւ ոգին ներմուծելու մեր պատանի հոգիներէն ներս: Երկու տարի այս մթնոլորտին մէջ թրծուեցայ իբր ՀՄԸՄական մարզիկ: ՀՄԸՄի ներկայ երկրորդական խումբերու միջեւ կազմակերպուած յանախակի մրցումներէն եւ մրցաշարքերէն հսկայական յառաջդիմութիւն արձանագրեցի: Խումբով կ'երթայինք ներկայ գտնուելու հսկաներու խումբին բոլոր մրցումներուն, ապա խաղարկութեան վերլուծումը ընելով շատ օգտակար թեֆնիքներ կը ստրվէինք: Անպայման կ'ուզեմ արձանագրել հոս քանի մը խաղընկերներուս անունները, որոնց ջերմ եւ եղբայրական վերաբերմունքը անձիս հանդէպ թեւեր կուտային ինծի մրցումներու ընթացքին (տարիքով ամէնէն պզտիկն էի խումբին):

Խմբապետ Յովհաննէս Ժամկոչեան, Զօհրապ Ժամկոչեան, Արթին Հատիտեան, քրոջս տղան՝ Մելինն Մելինեան, Վարդգէս Պէրպէրեան եւ ուրիշներ:

## 1941-1942 ԵՂԱՆԱԿԻՆ ՍԿՍԱՅ ԽԱՂԱԼ ՀՄԸՄ-Ի ՀՍԿԱՆԵՐՈՒ ԽՈՒՄԲԷՆ ՏԱԿԱԻՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ 16 ՏԱՐԵԿԱՆԻՍ

Ամէն տարի ֆութպոլի եղանակին սկիզբը, ՀՄԸՄի բոլոր երկրորդական խումբերը, յանախ փորձ-մրցումներ կ'ունենային ՀՄԸՄի Ա. խումբին հետ, ուր ներկայ կ'ըլլային վարչականներ եւ ֆութպոլի պատասխանատու եղբայր Յովհաննէս Շահինեան. հոս է, որ կը գտուէին Ա. խումբի ապագացու խաղացողները: Ես կը զգայի, թէ խաղարկութիւնս եղբայր Յովհաննէս Շահինեանին աչքէն չէր վրիպած: Այսպիսի մէկ փորձ-մրցումին, վերջապէս ես ալ ընտրուեցայ Ա. խումբին մաս կազմելու 1941ին եւ ստորագրեցի: Ահա թէ ինչպէս հասայ ՀՄԸՄի Ա. կազմի ֆութպոլի հերոսներու կողքին խաղալու երազիս, եւ հպարտութեան զգացումներով է որ առաջին անգամ ըլլալով հագայ ՀՄԸՄի տարագը՝ նարնջագոյն շապիկ, կապոյտ տաբատ, եւ կարմիր գուլպայ, այլ խօսքով՝ հայկական եռագոյն: Ինքզինքս բախտաւոր կը նկատէի եւ շատ ուրախ էի երէկուան իմ պաշտած հերոսներուն կողքին խաղալու: Կը վայելէի իրենց մեծ եղբօր գուրգուրանքը, որոնք յանախ առիթ կու տային ինծի «կոլ» նշանակելու:

Կը խաղայի յառաջապահ գծի վրայ՝ ձախ մէջ, հակառակ որ աջիկ էի, սակայն ձախ ռոտով հարուածներս շատ ուժեղ ըլլալուն այդ դիրքը յարմար նկատուեցաւ ինծի համար: Այս դիրքով կը խաղալուէի եւ ամէն ճիգ կը թափէի աւագ եղբայրներուն արժանի խաղընկերը ըլլալու:



Չախէն՝ Մինաս «Յառաջ» խումբին անբաժանելի համակիրը, սկառուտապետ՝ Յովհաննէս ժամկոչեան («Յառաջ» խումբին խմբապետը) եւ վարդիվաւ:



1942 - Ընկերոջս Մարտիրոս Մարտիրոսեանի հետ ամառնային խումբի տարագով:





ԱՅՍՊԷՍ,  
 ՎԱՂ ՊԱՏԱՆԵԿՈՒԹԵՆԷՍ  
 ԱՐԴԷՆ ՖՈՒԹՊՈՒԼԻՍՏ ԷԻ:  
 ՔԱՐԱՆԹԻՆԱՅԻ  
 ԱՄԱՆՈՍ ՔԵՄԲԻ  
 «ՀԱՅՐԵՆԻՔ» ԽՈՒՄԲԷՆ  
 ՏԱՍՆԸ ԵՐԿՈՒ ՏԱՐԵԿԱՆԻՍ  
 1937 - 1938  
 ՎԱՐԴԻՎԱՌ

ՎԵՐՋԱՊԷՍ ՀԱՍԱՅ ՆՊԱՏԱԿԻՍ  
 ԱՊԱԳԱՅԻ ՇՈՂՇՈՂՈՒՆ  
 ԵՐԱԶՆԵՐՈՎ,  
 ՀՄԸՄ-Ի ՀՍԿԱՆԵՐՈՒ ԽՈՒՄԲԻՆ  
 ՏԱՐԱԶԸ ՀԱԳՈՒԵՑԱՅ՝  
 ԿԱՐՄԻՐ, ԿԱՊՈՅՏ, ՆԱՐՆՋԱԳՈՅՆ,  
 ԱՅՍԻՆՔՆ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՌԱԳՈՅՆ:  
 ՏԱՍՆԸ ՎԵՑ ՏԱՐԵԿԱՆԻՍ - 1941  
 ՎԱՐԴԻՎԱՌ





ԲՈԼՈՐԵՑԻՆՔ ԼԻԲԱՆԱՆԻ ԵՒ ՀՄԸՄ-Ի  
 ՖՈՒԹՊՈԼԻ ԱՄԷՆԱՓԱՅԼՈՒՆ  
 ՏԱՐԻՆԵՐԸ 1941 - 1952  
 ԱՐԴԱՐՕՐԷՆ ՀՌԶԱԿՈՒԵԼՈՎ՝  
 ԼԻԲԱՆԱՆԻ ԱՄԷՆԷՆ ՆԵՐԴԱՇՆԱԿ  
 ԵՒ ԶՕՐԱԻՈՐ ԽՈՒՄԲԸ:  
 ԽՈՒՄԲԻՆ ՆՈՒԻՐԵԱԼ ԽԱՂԱՑՈՂԸ,  
 ԱՊԱ ԽՄԲԱՊԵՏԸ՝  
 22 ՏԱՐԵԿԱՆԻՆ, 1948-ԻՆ,  
 ՀՄԸՄ-Ի ՎԱՐԴԻՎԱՌԸ:

ԼԻԲԱՆԱՆԻ ՀՄԸՄ-Ի ՖՈՒԹՊՈԼԻ  
 ԲՈԼՈՐ ԱՌԻԹՆԵՐՈՒՆ ԵՒ  
 ԱՄԵՆԱՓԱՅԼՈՒՆ ԾՐՋԱՆԻՆ  
 ԾԱՀՈՒԱԾ ԲԱԺԱԿՆԵՐ  
 1940-1952  
 ՈՐՈՆՑՄՈՎ ՍԿՍԱՆ ԼԵՑՈՒԻԼ  
 ՊԷՑՐՈՒԹԻ ՀՄԸՄ-Ի ԱԿՈՒՄԲԸ  
 ԼԻԲԱՆԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ  
 ՊԸՇԱՐԱ ԽՈՒՐԻԻ ՕՐՈՎ



ՊԷՅՐՈՒԹԻ ՀՄԸՄ-Ի ԱՌԱՋԻՆ ՖՈՒԹՊՈԼԻ ԽՈՒՄԲԸ 1924-ԻՆ  
 ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻ ՀՄԸՄ-Ի ԱՌԱՋԻՆ  
 ՄԻՋՄԱՍՆԱՃԻՒՂԱՅԻՆ ԽԱՂԵՐՈՒՆ ՀԱԼԷՊ 1927-ԻՆ

ՀՄԸՄԻ առաջին մասնաճյուղին հիմք կը դրուի Լիբանանի գեղատեսիլ ավերուսն վրայ 1924ին՝ Պէյրուս, որ կ'ունենայ իր ֆութպոլի խումբը. առաջնորդութեամբ օրին անուանի մարզիկ եւ ֆութպոլիստ՝ Յովհաննէս Շահինեանի, որ կը կազմակերպէ ՀՄԸՄի Ա. ֆութպոլի խումբը, մասնակցութեամբ ձիպէյլի եւ Պոլսոյ որբանոցներու նախկին լաւագոյն խաղացողներուն. այս ձեւով կը կազմուի Պէյրուսի Մասնաճյուղին առաջին ֆութպոլի խումբը, որ յաջողութեամբ կը կազմակերպէ ֆութպոլի մրցումներ տեղական խումբերու դէմ:

1927ին կը մասնակցի ՀՄԸՄի առաջին Միջմասնաճյուղային մրցումներուն Հալէպի մէջ, Ջատկուան տօնակատարութիւններուն առիթով: Շոգեկառնով այս նամբորդութիւնը դէպի Հալէպ կը տեւեր 18 ժամ:

Այս ձեւով է որ հիմք կը դրուի ՀՄԸՄի Միջմասնաճյուղային խաղերուն, որոնք կը շարունակուին տարուէ տարի աւելի մեծ խանդավառութեամբ եւ մասնակցութեամբ ՀՄԸՄի տասնեակներով մասնաճյուղերու՝ Սուրիոյ, Լիբանանի եւ Անդրյորդանանի սահմաններէն ներս, անսահման ցնծութիւն առթելով հայ ժողովուրդի զաւակներուն հոգիներէն ներս:

ՊԷՅՐՈՒԹԻ ՀՄԸՄ-Ի ԱՌԱՋԻՆ ՖՈՒԹՊՈԼԻ ԽՈՒՄԲԸ - 1924



Ա. շարք՝ ճախէն՝  
 Ժիրայր ձիւրեան,  
 Եզնիկ Քէշիշեան,  
 Կիւլպէնկ  
 Կիւլպէնկեան,  
 Օննիկ Փիլիկեան  
 եւ Պօղոս Շահինեան:  
 Բ. շարք՝  
 Արսէն Գրիգորեան,  
 Յովհաննէս  
 Շահինեան եւ Յակոբ  
 Անեմեան:  
 Գ. շարք՝  
 Վահրամ Զոհհարեան,  
 Աւետիս  
 եւ Հայկ Պուտախեան:

**LE PREMIER TROPHEE OFFICIEL DE HOMENETMEN EN 1940**  
**COUPE DE BEYROUTH REMISE AU CAPITAINE SAATJIAN**  
**PAR LE GENERAL RICHARD**

(A l'époque Syrie et Liban étaient sous mandat Français jusqu'à 1946)  
 ՀՄԸՄ-ի ՀՍԿԱՆՆԵՐՈՒԻ ԽՈՒՄԲԸ 11 Փետր. 1940 - ՇԱՀԵՑԱԻ ԱՌԱՋԻՆ  
 ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԻՏՂՈՍԸ, ՅԱՂԹԵԼՈՎ ՀԻԼՄԻ ՍՓՈՐՏԻՆ 4-2



ՖՐԱՆՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ԶՕՐԱՎԱՐ ՌԻՇԱՐ ԿԸ ՅԱՆՁՆԷ ՊԵՅՐՈՒԹԻ ՔԱՂԱՔԱ-  
 ՊԵՏԱՐԱՆԻ ԲԱԺԱԿԸ ՅՍԸՄ-Ի ԽՄԲԱՊԵՏԻՆ. ՆԵՐԿԱՅ Է ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Պ. ՅԱՄԻԷ



ՍԱԱԹԵԻ,  
 ԻՐԱԲԱՐԱՐ՝ ՓԻԷՐ ԳԵՍԱՅԷԼ,  
 ԽՄԲԱՊԵՏ՝ ՍԱԼԱՅ ՖԱԼԱՅ

## ԱՅԴ ՀՍԿԱՆԵՐՈՒ ԸՐՋԱՆԱԿԻՆ ՄԷՋ ՍԿՍԱՅ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՍՊԱՐԷՋՍ ԱՊԱԳԱՅԻ ՍՔԱՆՁԵԼԻ ԵՐԱՋՆԵՐՈՎ 1941 - 1942

Պատերազմի տարիներ էին, Լիբանան կը գտնուէին ֆրանսական եւ անգլիական բանակները, որոնց հետ ամէն շաբաթ մրցումներ կ'ունենայինք, աւելցնելով մեր փորձառութիւնը: Մեր առաւելութիւնն էր ժայռի պէս պաշտպանողական գիծը, Սաաթնիով եւ Եղիշով, որոնցմէ գնդակ անցընել անկարելի էր. Սաաթնին կը ցատկէր օդին մէջ, եւ աջ կամ ձախ ծռելով գնդակը կ'ազատէր հակառակորդին գլխուն վրայէն: Եղիշը կը հետեւէր խաղի ընթացքին, եւ այնպիսի դիրք մը կը բռնէր, որ դիմացի խաղացողը չէզոքացած կ'ըլլար: Գալով միջնապահ գիծին, Յովհաննէս, Ժիրայր, Կիրակոս, լաւագոյնը Սուրիոյ եւ Լիբանանի, որոնք օժտուած էին ֆուտպոլիստի ամէն թէքնիքով, ներդաշնակելով խաղը պաշտպանողականի եւ յարձակողականի միջեւ:



### ՊԷՅՐՈՒԹԻ ՀՄԸՄ-Ի ԱՌԱՋԻՆ ՏԻՏՂՈՍ ՇԱՀՈՂ ԽՈՒՄԲԸ 1940 1941-ԻՆ ԿԸՄԻԱՆԱՄ ԱՅՍ ՀՍԿԱՆԵՐՈՒ ԿԱԶՄԻՆ

Կազմը - Չախէն ոտֆի՝ Միսաֆ Ապանեան՝ ֆուտպոլի խումբը պաշտողներէն, Երուանդ Պալըզեան, Արմենակ Թիւֆէնկեան, Հանի Հայկ Կարմիրեան, Կիրակոս Գալայեան, Կարապետ Սաաթնեան՝ խմբապետ, Խաչիկ Խաչատուրեան եւ Օգսէն Սմբատեան:

Չախէն ծոած՝ Եղիշէ Մանուկեան, Ժիրայր Ուրֆալեան, Պետրոս Սէտէֆեան, Վարդան Պետիկեան եւ Մարտիրոս Պալըզեան:

Նաեւ մաս կազմած են՝ Սամուէլ Անդրանիկեան (Սամօ), Գրիգոր Պագրընեան եւ Գեղամ Բարսեղեան:

Իսկ մեր յառաջապահ գիծը՝ Մարտիրոս, Օգսէն, «փին» Ներսէս, Հանի Հայկ, Վարդիվառ, Խաչիկ Խաչատուրեան, «չոլախ» Խաչիկ եւ Սարգիս Ազնաւորեան. ամէնէն ներդաշնակ եւ զօրաւոր գիծն էր այդ օրերուն: Հանի Հայկը երբ գնդակ ստանար, հակառակորդը արդէն ահ ու սարսափի կը մատնուէր, իսկ աջ ծայրէն Մարտիրոսին քաջած քորները՝ Հանի Հայկ ամէնուն ուսերուն վրայէն թռչելով եւ գլխու զօրաւոր հարուածով անպայման կոլի կը վերածէր: Հայութեան հպարտութեան կոռուքը եղած էր այս խումբը եւ արժանացած **հսկաներու խումբ** կոչուելու համբաւին. նոյնիսկ տեղացի ժողովուրդը կը հիանար այս խումբին խաղարկութեան վրայ:

## 1942 ՀՄԸՄ-ՖՈՒԹՊՈՒԻ ՇՐՋԱՊՏՈՅՏԸ ԴԷՊԻ ՊԱՂԵՍՏԻՆ

Առաջին անգամ ըլլալով ՀՄԸՄ պիտի նամբորդէր դէպի Պաղեստին, մրցելու համար Թէլ Ավիվի մէջ՝ հրեաներու ախոյեան Պիթարի դէմ, ինչպէս նաեւ Երուսաղէմի մէջ՝ ՀՄԸՄի դէմ: Մեր խմբապետը՝ Ժիրայր Ուրֆալեան, եկաւ մեր վարժարանը՝ Արուստից եւ Արհեստից, եւ տնօրէնութենէն արտօնութիւն խնդրեց սոյն շրջապտոյտին իմ մասնակցութեանս համար: Դպրոցի պատասխանատուն սիրով արտօնութիւն տուաւ ինծի եւ իր ուրախութիւնը յայտնեց, որ իրենց աշակերտը մաս կը կազմէր Լիբանանի անուանի խումբին՝ ՀՄԸՄին:

27 Մարտ 1942ին նամբայ ելանք դէպի Պաղեստին: Օթօֆարին առջեւ պարզուած էին լիբանանեան եւ եռագոյն դրօշակները: «Յառաջ Նահատակ» երգելով հասանք Տամուր, ուր անակնկալօրէն տեսանք Լիբանանի Վարչապետ՝ Ռիատ Սուլիք եւ Կրթական Նախարար՝ Հապիպ Ապու Շահլան, որոնք ծովեզերեայ սրճարան մը նստած, սուրճ կը խմէին եւ **ներկիւէ** կը ծխէին: Կանգ առինք, ապա բարեւելով յայտնեցինք իրենց մեր նամբորդութեան նպատակը:

Անոնք մեր ուրախութիւնը բաժնելով բարի նախապարհ եւ յաջողութիւն մաղթեցին: Կանգ առինք նաեւ Սայտա եւ Սուր քաղաքներու մէջ, ուր տեղացիները մեզ դիմաւորեցին «Նախշ Էրմէն» (կեցցեն հայերը) բացազանչութիւններով, իսկ Սուրի հայերը եկեր էին մեզ ողջունելու, բարի նախապարհ եւ յաղթանակներ մաղթելու:

Վերջապէս մտանք Պաղեստին. շատ գեղեցիկ երկիր մը, մանաւանդ՝ Հայֆայէն Թէլ Ավիվ համբան, որ եզերուած էր գեղեցիկ տուններով եւ պարտէզներով, որոնք կ'ոռոգուէին ինքնագործ ցնցուղներով: Գիշերը անցուցինք Նաֆա՝ Թէլ Ավիվի մօտ արաբական քաղաք մը:

## ՀԱՐԸՄ - ՊԻԹԱՐ ՄԵՐ ԱՌԱՋԻՆ ՄՐՑՈՒՄԸ 28 ՄԱՐՏ 1942

Թել Ավիվի մէջ մեր առաջին մրցումը՝ հրեաներու խոտյան Պիթարի դէմ: Երբ դաշտ իջանք, անակնկալի եկանք լսելով ամէն կողմէ հայերուն որոտագին ծափերը եւ հուռուաները, որոնցմով մեզ դիմաւորեցին, շարունակ վանկարկելով՝ «ՀՄԸՄ, կու կ'ուզեմք»: Հայերը եկած էին Պաղեստինի չորս կողմերէն՝ այս պատմական մրցումին ներկայ ըլլալու համար: Առաջին անգամ ըլլալով է, որ դուրսէն եկած այսպէս հայկական զօրաւոր խումբ մը կը տեսնէին: Հոս տեղին է մատնանշել, թէ պատերազմի այդ տարիներուն, հազարաւոր հայեր Լիբանանէն Պաղեստին եկած էին գործ ու աշխատանք գտնելու համար: Անոնք ընդհանրապէս կօշկակարներ կամ ուրիշ արհեստաւորներ էին: Գալով մրցումին, անիկա շատ տաք խաղ մը եղաւ եւ մենք անակնկալի եկանք մեր առջեւ ուժեղ կազմ մը գտնելով: Անոնք մեզմէ շատ աւելի զօրաւոր էին եւ մենք չկրցանք պաշտպանողականէն յարձակողականի անցնիլ, ու պարտուեցանք 3-0 արդիւնքով:

Խաղէն ետք ֆետերասիոնը եւ Պիթարի վարչութիւնը մեզ հիւրասիրեցին:

## ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷՋ՝ ՏԵՂԻՈՅՆ ՀՄԸՄ-Ի ՀԵՏ 29 ՄԱՐՏ 1942

Շատ սիրալիր եւ հետաքրքրական մրցում մը ունեցանք: Ներկայ էին հազարաւոր հայեր, նաեւ Սուրբ Յակոբայ վանքի ժառանգաւորաց սաները, որոնք կը պոռային եւ կը խանդավառէին երկու խումբերն ալ: Խաղը վերջացաւ Պէյրութի յաղթանակով՝ 4-2: Յաջորդ օր անգլիական թերթերը լայնօրէն անդրադարձած էին մրցումին եւ կը գովէին մեր ներդաշնակ խաղը:

Մեր ազատ ժամերը յատկացուցինք այցելելու Ս. Յակոբայ վանքը. տեսանք հայապատկան կալուածներն ու շէնքերը. այցելութիւն տուինք հայոց Պատրիարքին, որ սիրալիր ընդունեց մեզ եւ մեզի ցոյց տուաւ հայոց հին թանկագին գանձերը. յետոյ գացինք Գեթսեմանիի եկեղեցին եւ Բեթղեհեմի հայոց սրբավայրերը: Շատ խրախուսիչ էր տեսնել այս բոլորը: Բուռ մը հայ քաջ եկեղեցականներ իրենց անսահման զոհողութեամբ, տիւ ու գիշեր հսկելով՝ կը պահէին այս հայապատկան թանկագին գանձերն ու վայրերը, ամէն օր պատարագ մատուցելով: Այս մթնոլորտէն ազդուած՝ գացի եւ **հաճի** եղայ: Պատեցանք Երուսաղէմի հին ու գոց շուկան, ուր մեծ է թիւը հայ ոսկերիչներուն: Պատեցանք նաեւ նոր Երուսաղէմի շատ գեղեցիկ թաղերը, բարձրադիր

գեղեցիկ թաղերը, բարձրադիր շենքերով, մաքուր փողոցներով, որոնց մէջ շատ մը հայեր իրենց վիլլաները ունէին: Այստեղի հայերը մեծամասնութեամբ հարուստ էին:

Յիշատակելի եւ պատմական շրջապտոյտ էտք վերադարձանք Լիբանան:



ԵՐՈՒՍԱՂԷՄ 1942

Զախէն՝

Ժիրայր Ռեֆալեան,

Պօղոս Պետրոսեան

(Նրուսաղէմէն)

եւ Վարդիվառ:



ԵՐՈՒՍԱՂԷՄԻ  
ԲԵՐԴԻՆ ԱՌՋԵՒ

Աջէն ծոած՝

Վարդիվառ

եւ Ժիրայր:





29 ՄԱՐՏ 1942-ի ՊԷՅՐՈՒԹԻ ԵՒ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀՄԸՄ-Ի ԽՄԱՆԱԿԱՐ  
*Զախեն՝ Սիվիլ մը եւ Յարուբիւն Մանուկեան (մեր ընդհանուր  
 խմբապետը):*

*Աջէն՝ Լեւոն Քէշիշեան եւ Պօղոս Պետրոսեան (Երուսաղէմէն) եւ  
 Շահինեան:*

*Մեր կազմը՝ Տիգրան եւ Տրդատ (Դամասկոսէն), Սարգիս Պատազեան,  
 Սաաթի, Ժիրայր (խմբապետ), Յովհաննէս, Խաչիկ, Ներսէս, Հանի Հայկ,  
 Վարդիվառ, Մարտիրոս: Երուսաղէմի կազմին մէջ կան Գէորգ  
 Քէօրեան եւ Պորոլոս՝ Պէյրուբէն:*



ԳԷՈՐԳ ՔԷՕՐԵԱՆ  
 ԵՒ ՎԱՐԴԻՎԱՐ  
 ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷՋ՝  
 1942

## ՊԷՅՐՈՒԹ - ԴՐՈՒԱԳ ՄԸ ՖՈՒԹՊՈՒԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԷՆ

ՀՄԸՄ օժտուած էր սեփական մարզադաշտով մը Քարաֆօլ Տրիւզի շրջանին մէջ՝ Պէյրութ, որ մեծ յարմարութիւններ ունէր ֆութպոլի մրցումներու համար. գետինը՝ աւագուտ, շրջապատուած էր ցանկապատով մը եւ մէկ կողմը կոկիկ **թրիպիւն** մը կար: Այս բոլորէն զրկուեցանք, պատերազմը հարկադրեց եւ Ֆրանսական բանակը գրաւեց մեր դաշտը, այնուհետեւ մենք դաշտ չունեցանք:

1942 Ապրիլին, այս դաշտին վրայ հետաքրքրական մրցում մը ունեցանք անգլիացիներու դէմ, որ եզրափակուեցաւ մեր յաղթանակով 2-1: Սովորականէն դուրս եկած միջադէպ մը յիշողութեանս մէջ կապուած կը մնայ այս մրցումին եւ Քարաֆօլ Տրիւզի մեր մարզադաշտի անուան հետ: Արդարեւ, երբ երկու խումբերը դաշտ իջան, իւրաքանչիւր խումբ պատ իր հետ բերաւ իր խումբին գնդակը. իրաւարարը լաւ մը քննեց զանոնք ստուգելու համար թէ լաւ ուռած են, ձեռքով զանոնք կշռել փորձեց, ու վերջապէս ընտրեց գնդակներէն մէկը: Մրցումը սկսաւ շատ խանդավառ, քիչ ետք գնդակը դաշտին պատէն դուրս ինկաւ. քիչ մը սպասեցինք, մինչեւ որ մէկը պատէն դուրս ցատկելով գնաց ու բերաւ զայն... Պայծած էր՝ ինքնաշարժի մը անիւին տակ մնալով: Բարեբախտաբար միւս գնդակը բերինք եւ խաղը վերսկսաւ: Կիսախաղին հինգ վայրկեան մնացած էր, երբ այս գնդակն ալ պայթեցաւ... Ուրիշ գնդակ չկար... Մեր ձախ ծայր խաղացող Խաչիկը, որ միեւնոյն ժամանակ խումբին գոյնապահն էր, անմիջապէս գնաց մեր ակումբը, որ շատ հեռու չէր, բերաւ գնդակ մը եւ քսան վայրկեանի ականջ ուշացումէ մը ետք, վերսկսանք մեր մրցումը:

Ահաւասիկ դէպք մը անհաւատալի, բայց իրաւ...

ՀՄԸՄ-Ի ՄԻԶՄԱՍՆԱԾԻԻՂԱՅԻՆ ԽԱՂԵՐԸ՝ ՊԷՅՐՈՒԹ  
ՀՄԸՄ ՊԷՅՐՈՒԹ ՅԱՂԹԵՑ ՀՄԸՄ ՀԱԼԷՊԻ՝ 4-3, 6 ԱՊՐԻԼ 1942

Անշուք մրցում մը եղաւ, որ բաւական ըսի-ըսաւի տեղի տուաւ. հայկացիները քանի մը անգամ դաշտէն հեռացան, առարկելով իրաւարարին ի նպաստ մեզի ըրած կողմնակալութիւնը: Սակայն խաղը շարունակուեցաւ եւ մենք յաղթեցինք 4-3 արդիւնքով:



### HOMENETMEN «COUPE INTER» HOMENETMEN 1942

*Մեր կազմը ձախեն՝ Սաաթնի, Եղիշ, անգլիացի մը, Հանի Հայկ, Խաչիկ, Մարտիրոս, Վարդիվառ, Յովհաննէս, Փին Ներսէս, Պետրոս եւ Ժիրայր (սմբապետ):*

### ԱՐՈՒԵՍՏԻՑ ԵՒ ԱՐԸՆՍՏԻՑ ՎԱՐԺԱՐԱՆԸ ՅԱՃԱԽԵՑԻ 1940-1944

*Այս վարժարանը յանախած եմ չորս տարի: Ամբողջ դպրոցին մէջ միայն հինգ հայեր էինք, եւ ամէնէն յառաջադէմ աշակերտները: 8 Փետրուար 1943ին, կէսօրուան ճաշի պահուն, յանկարծ աշակերտները սկսան իրարու փսփսալ եւ ինծի նայելով, հարց տուին թէ երէկուան Ռասինկ-ՀՄԸՄ ֆութպոլի մրցումին կու՞նշանակողը ե՞ս էի: «Այո՛» պատասխանեցի: Այս ձեւով դպրոցի բոլոր աշակերտներն ալ իմացան ֆութպոլիստ ըլլալս Լիբանանի լաւագոյն խումբէն՝ ՀՄԸՄէն, եւ այնուհետեւ տարբեր ձեւով սկսան վարուիլ հետս:*

*Դպրոցի մարզանքի մեր ուսուցիչը՝ Ատէլ Սիտանին, լաւ կը ճանչնար զիս, որովհետեւ Լիբանանի լաւագոյն իրաւարարներէն էր. օր մը կանչեց զիս եւ առաջարկեց դպրոցին մէջ ֆութպոլի խումբ մը կազմել: Խումբը կազմուեցաւ եւ սկսանք փորձերու: Այնուհետեւ*

մասնակցեցանք դպրոցներու մրցաշարքին արձանագրելով լաւ արդիւնքներ: Մեր կազմին խմբապետն էի: Դպրոցիս տնօրէնը՝ Մօրիս Զուէյն, օր մը բոլոր աշակերտներու ներկայութեան շնորհաւորեց զիս եւ մեծապէս գնահատեց տարած աշխատանքս ֆութպոլի մարզին մէջ դպրոցէն ներս: Բախտի մէկ տարօրինակ դիպուածով, դպրոցներու մրցաշարքին, պիտի մրցէիմք իմ շատ սիրելի երբեմնի դպրոցիս՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ նեմարանի խումբին դէմ: Հասկնալի պատճառներով ինձի համար շատ դժուար եղաւ այս մրցումը: Յաղթեցինք: Միւս մրցումներուն ընթացքին մեր աշակերտները, խումբը խանդավառելու համար՝ իմ մասին յօրինած էին աշուղական քառեակ, զոր կ'երգէին մրցումի ամբողջ տեւողութեան:



### Արարերէն

Եալլա ակէհում Վարդիվառ  
Շուրթք ֆութպոլ մթըլ նար

### Հայերէնի թարգմանում

Դէպի յստաջ Վարդիվառ,  
Ֆութպոլի հարուածդ հրավառ:

ՎԱՐԴԻՎԱՌ  
ԱՐՈՒԵՍՏԻՑ ԵՒ ԱՐՀԵՍՏԻՑ  
ՎԱՐԺԱՐԱՆԻ  
ԵՐԱՆԵԼԻ ՕՐԵՐՈՒՆ 1942

1942 ՀՄԸՄԻ Ա.ԽՈՒՄԲԻՆ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ

ԲԵՐԴԱ ՊԱՀ՝ Պետրոս Սէտէֆեան եւ պգտիկ Պետրոս:  
 ՅԵՏՍԱ ՊԱՀ՝ Կարապետ Սաաթեան, Եղիշէ Մանուկեան եւ Սամուէլ Անդրանիկեան:  
 ՄԻՋՆԱ ՊԱՀ՝ Յովհաննէտ Նազարեան, Ժիրայր Ուրֆալեան, Կիրակոս Գալայեան, Օննիկ Կելրեկեան, Արմենակ Թիւֆէնկեան, Միհրան Մելիքեան եւ Վարդան Պետիկեան  
 ՅԱՌԱՋԱ ՊԱՀ՝ Հանի Հայկ Կարմիրեան, Օգսէն Սմբատեան, «բին» Ներսէս, Վարդիվառ Յովհաննէսեան, Երուանդ, Մարտիրոս Պալըզեան, Խաչիկ Խաչատուրեան, Յարութիւն Մարտիրոսեան, Սարգիս Ազնաւորեան, Աւետիս Տէր Պետրոսեան եւ «չոլախ» Խաչիկ:  
 ԽՄԲԱ ՊԵՏ՝ Ժիրայր Ուրֆալեան  
 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՄԲԱ ՊԵՏ՝ Յարութիւն Մանուկեան

1942-Ի ՀՄԸՄ -Ի Ա.ԽՈՒՄԲԻ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒՆ ԳՈՒՄԱՐԸ՝ 22  
 ՅԱՂԹԱՆԱԿ 13 - ՀԱՒԱՍԱՐՈՒԹԻՒՆ՝ 4 - ՊԱՐՏՈՒԹԻՒՆ՝ 5  
 ԿԱՐԵՒՐ ՄՐՅՈՒՄՆԵՐ

ԹՈՒԱԿԱՆ	ՄՐՅԱԿԻՑ ԽՈՒՄԲ ԱՐԴԻՒՆՔ	ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ
Յունւլ. 25	Անդրանիկ 3-0	2 կոլ Մարտիրոս 1՝ Հանի Հայկ
Մարտ 1	RAF անգլ. 5-2	2 Վարդիվառ -2 Ներսէս -1 Հայկ
Մարտ 8	Սէլէմ 2-1	
Մարտ 29	ՀՄԸՄ Երուս. 4-2	Երուսաղէմ
Ապրիլ 6	ՀՄԸՄ Հալէպ 4-3	Պէյրուք միջմասնանկիւղայիկ
Մայիս 3	NAVY անգլ. 5-1	
Մայիս 10	Ռընէսանս 2-1	1 կոլ Վարդիվառ 1՝ Ներսէս
Նոյեմ. 8	RAF անգլ. 3-1	2 կոլ Հայկ 1՝ Սարգիս
Դեկտ. 6	Պէֆաս 4-1	1 Վարդիվառ 3՝ Հայկ
Փետր. 15	SIGNALS անգլ 3-3	1 Վարդ. 1 Ներսէս 1 Բէնալթիով
Փետր. 22	NAVY անգլ. 1-1	1 Վարդիվառ
Մարտ 22	անգլ. բանակ 1-3	1 կոլ Ժիրայր
Մարտ 28	Պիթար Թէլ Ավիւ 0-3	Թէլ Ավիւի մէջ
Մայիս 17	Ռընէսանս 2-5	1 Խաչիկ 1 Հայկ
Մայիս 31	անգլ. բանակ 0-1	

Լիբանանի ֆուտպոլի ֆետերասիոնի առաջին դասակարգին հետեւեալ խումբերը մաս կը կազմէին.- ՀՄԸՄ, ՀՄՄ, ԱՆԴՐԱՆԻԿ, ՌԸՆԵՍԱՆՍ, ՄԱԶՐԱԱ, ՌԱՍԻՆԿ ՔԼԻԻՊ, ՍԵԼԵՄ, DPHB:

## ՀՄԸՄ - 1943

ԼԻԲԱՆԱՆԻ ԲԱԺԱԿԻՆ ՅԱՂԹԵՑԻՆՔ ՌԱՍԻՆԿԻՆ 3 - 0

7 ՓԵՏՐՈՒԱՐ 1943 «ՄԵՌԱՄ ՀՄԸՄ»...

Այսպէս ըսին ու շատեր հաւատացին: Տարիներ շարունակ հայ մկանին ու հայ խելին փառքը իր հետ պտտցնելէ յետոյ, պատահական, անհաւատալի երկու արդիւնքներ, կասկածը սպրդեցուցին թեթեւ ուղեղներէ ներս, զանոնք մղելով որ նոյնիսկ ուրանալ փորձեն այս արժէքաւոր միութեան փառահեղ անցեալը: Եօթը Փետրուարին, DPHB մարզարանին վրայ ՀՄԸՄի (մեռած) խումբը հակատեցաւ խրոխտ Ռասինկի դէմ, հոծ բազմութեան մը առջեւ, ջախջախիչ մեծամասնութեամբ հայեր:

Խաղը սկսաւ Անգլիացի իրաւարարին սուլիչին վրայ, հակառակորդը կատաղի յարձողականի անցաւ, բայց մեր տղոց անընկեցի պաշտպանողականը փշրեց զայն գնդակը փոխադրելով դիմացի բերդին առջեւ: Եւ պատահեցաւ անխուսափելին, քանի մը վայրկեանի ընթացքին ՀՄԸՄ նշանակեց յաջորդաբար երկու կոլ, խանդավառ եւ խելայեղ ծափերու մէջ եւ յաղթութեան նժարը վերջնականապէս հակեցնելով իր կողմը: Ռասինկ նորէն յարձակողականի անցաւ, բայց ՀՄԸՄի Յովհաննէսը, Ժիրայրն ու Խաչիկը խաղացին այնքան տիրական ՀՄԸՄական ոգիով թրծուն խաղ մը, որ խեղճ Եղիշին ու Գրիգորին փշրանքներ միայն կը հասնէին հակառակորդին խոյանքէն: Երկրորդ կիսախաղին, Ռասինկը, վերջնական յարձակողականի անցաւ քանի մը անգամ ՀՄԸՄի բերդին մօտենալով, բայց մերիններուն ամբողջ պաշտպանողական գիծը, մէջը ըլլալով բերդապահ Ջաւէնը, անդին աննման Վարդավառը, ոգի ի բռին մաքառեցաւ եւ գնդակը անգամ մըն ալ փոխադրեց հակառակորդին բերդին առջեւ, եւ առիթ տուաւ տեւական ումբակոծումի մը այն աստիճան որ Ռասինկի կարգ մը խաղացողները, բերդը փրկելու համար գետնէ գետին կը զարնուէին, բայց այդ ոգորումը արգելք չեղաւ որ Յարութիւնին փախցուցած մէկ գնդակը, Ներսէս գողնայ եւ տեղաւորէ հռչակաւոր բերդապահ Նալպանտեանին բերդէն ներս, մի անգամ ընդմիջտ փշրելով հակառակորդին բոլոր յոյսերը եւ խաղը վերջացաւ ի նպաստ ՀՄԸՄի 3-0, անգամ մըն ալ հաստատելով թէ՛ ՀՄԸՄ անկարելի կարծուած վերելքներու միութիւնն է:

Գրեց Եղիշէ «Ազդարար»ի մէջ

# ՀՄԸՄ-Ի ՄԻՋՄԱՍՆԱԾԻԻՂԱՅԻՆ ԽԱՂԵՐԸ՝ ՀԱԼԷՊ

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԸԼԼԱԼՈՎ Կ'ԵՐԹԱՄ ՀԱԼԷՊ

ԱՊՐԻԼ 16 - 19 1943

Պէյրուսէն շատ մը մարզիկներու նման ես ալ առաջին անգամ ըլլալով կ'երթայի Հալէպ, մասնակցելու Ջատկուան ՀՄԸՄի միջմասնանիւղային խաղերուն: Աննկարագրելի բարձր ու գուարթ տրամադրութեան մէջ հասանք Հալէպ, Ուրբաթ երեկոյ եւ իջանք ուղղակի ՀՄԸՄի ակումբը, ուր կը վիտային սկաուտներ եւ մարզիկներ, Լիբանանի եւ Սուրիոյ բոլոր շրջաններէն եկած: Մեր աչքերուն առջեւ առաջին անգամ ըլլալով պարզուող տեսարանը իսկապէս յուզիչ էր: Հայ ծնողներ եկած էին ակումբ եւ վարչութեան սենեակին առջեւ շարքի կեցած, մինչեւ ուշ գիշեր սպասելով, որ իրենց ալ բաժին իյնայ եւ բախտը ունենային հեռուէն եկած մէկ կամ երկու մարզիկ, սկաուտ կամ արեւոյշ իրենց տունը տանելու եւ Ջատկուան քանի մը օրերը զիրենք հիւրասիրելու եւ վայելելու: Այս էր ուրեմն ՀՄԸՄի մեծ ընտանիքը, իսկապէս կ'արժէր, այս սքանչելի միութեան համար զոհաբերուիլ: Մրցումները անցան խանդավառ եւ ուրախ մթնոլորտի մէջ: Հասաւ վերջապէս Երկուշաբթի օրուան ֆութպոլի վերջին մրցումը, Հալէպի եւ Պէյրուսի միջեւ: ՀՄԸՄի դաշտը լեցուն էր, խումբերը դաշտ իջան եւ սկսաւ հսկաներու նակատամարտը: Հալէպի տղաք բաշտերուած իրենց համակիրներուն հուռոտներէն՝ հետգհետէ սկսան իշխել մեր վրայ եւ յաղթանակը ապահովեցին 3-2 արդիւնքով: Այսպէս



ՀՄԸՄ - ՀԱԼԷՊ ԵՒ ՊԵՅՐՈՒԹ ԽՄԲԱՆԿԱՐ ՀԱԼԷՊ 1943  
Ձախ ծայրը ոտքի՝ Վարդիվառ:  
Աջ ծայրը ոտքի՝ Կարապետ Աղնեան (Հալէպէն):

վերջացաւ խաղը: Կիսախաղի ընթացքին, Հալէպի հռչակաւոր փողերախումբի առաջնորդութեամբ սկսան տողանցել կակուղ թաթիկ, գայլիկ, սկառուտ, պասէթպոլի, փինկ փոնկի, ֆութպոլի մարզիկները, հայ ժողովուրդի խելայեղ ծափահարութիւններու տարափին տակ: Իսկապէս շքեղ փառատօն մըն էր, փառաւոր յաղթանակ մը ՀՄԸՄին:

Մեր խումբին կազմն էր՝ բերդապահ Զաւէն, Սաաթնի, Եղիշ, Յովհաննէս, Ժիրայր, Կիրակոս, Մարտիրոս, Օգսէն, Հանի Հայկ, Վարդիվառ եւ Ներսէս:

## ՀՄԸՄ - ՖՐԱՆՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ԽՈՒՄԲԻՆ ԴԷՄ ՖՐԱՆՍԱՑԻ ԶՕՐԱՎԱՐԻՆ ԳՆԱՀԱՏԱՆՔԸ ՀՄԸՄ-Ի 23 ՄԱՅԻՍ 1943

Շատ գեղեցիկ ու բարձր մակարդակի այս մրցումը աւարտեցաւ հաւասար 2-2: Օրուան մրցումը հովանաւորող ֆրանսացի զօրավարը գնահատելով մեր խումբին մաքուր խաղարկութիւնը, բաժակը յանձնեց ՀՄԸՄի խմբապետին, ապա երկու խումբերը հրաւիրեց Մեծ Սերայ, ուր մեզ պատուեցին շամբայնով. հոն Ֆրանսացի զօրավարը ոտքի ելլելով բաժակը բարձրացուց եւ ըսաւ.

«Ֆութպոլը մարզական բարձր ոգիով կիրարկելնուդ, ինչպէս նաեւ մեր խումբին նկատմամբ ձեր ունեցած շատ սիրալիք եւ բարեացակամ վերաբերմունքին առ ի գնահատութիւն, կը խմեմ այս բաժակով ի պատիւ ՀՄԸՄին»: Ծափահարեցինք եւ VIVE LA FRANCE բացագանչեցինք, ապա սկսանք երգել ֆրանսական քայլերգը՝ MARSEILLAISE, որմէ ետք թնդացուցինք մեր «Յառաջ Նահատակը»: Շատ ուրախ մթնոլորտի մէջ մինչեւ ուշ գիշեր երգեցինք մեր յեղափոխական երգերը, մինչ ֆրանսական շամբայնը առատօրէն կը հոսէր:

## ՀՄԸՄ ԿԸ ՏԻՐԱՆԱՅ ԼԻԲԱՆԱՆԻ ԲԱԺԱԿԻՆ - 1943

Առաջին անգամ ըլլալով հայկական խումբի մը կողմէ: Լիբանանի բաժակի եզրափակիչ այս մրցումը մեզի համար մեծ կարեւորութիւն ունէր, որովհետեւ արդէն շահած էին՝ Հալէպի, Դամասկոսի եւ Երուսաղէմի ՀՄԸՄի մասնաճիւղերը տեղւոյն բաժակները: Բազմահազար հայերու ցնծագին բացագանչութեանց մթնոլորտի մէջ դաշտ իջանք եւ այնպիսի կրակոտ վճռակամութեամբ խաղը սկսանք, որ դիմացի հսկայ Ռընեսանսը, Լիբանանի ախոյեանութիւններ շահած խումբը, շշմած մնաց: Անոնք չէին կրնար հաւատալ որ ՀՄԸՄ այսպէս զօրաւոր եւ ներդաշնակ խաղ



կրնար ցուցաբերել: Մեր բոլոր մարզիկները իրենք գիրենք կը գերազանցեին: Օգսէնը՝ իրեն յատուկ թէֆնիֆով, սֆանչելի երկու կոլեր նշանակեց: Ժողովուրդը գինովցած էր ծափահարութիւններու եւ պոռչտուֆներու մէջէն, Խաչիկին արձանագրած երրորդ կոլով խաղը աւարտեցաւ 3-2 մեր յաղթանակով: «Կեցցէ ՀՄԸՄ, կեցցէ հայ ժողովուրդ» բացազանչութիւններու ընդմէջէն խմբապետ Ժիրայրը թրիպիւն բարձրացաւ, ստացաւ բաժակը, համբուրեց եւ զայն փոխանցեց միւս խաղացողներուն:

Այդ օր մեր յաղթանակը ձօնեցինք մեր սֆանչելի ժողովուրդին, անոր շնորհելով Լիբանանի Բաժակակիրի տիտղոսը՝ առաջին անգամ ըլլալով:



### HOMENETMEN - COUPE DU LIBAN 1943

ՊԷՅՐՈՒԹԻ ՀՄԸՄ-Ը ԼԻԲԱՆԱՆԻ ԲԱԺԱԿԱԿԻՐ - ԿԱԶՄԸ 1943

Զախէն ոտֆի՝ Մարտիրոս Պալըզեան, Հանի Հայկ Կարմիրեան, Օգսէն Սմբատեան, Վարդիվառ Յովհաննէսեան եւ Խաչիկ Խաչատուրեան:

Զախէն կէս ծոած՝ Յովհաննէս Նազարեան, Ժիրայր Ուրֆալեան, խմբապետ՝ Կիրակոս Գալայնեան:

Առջեւը՝ անգլիացի, Զաւէն Հրթիկեան եւ Նդիշէ Մանուկեան:

## ՀՄԸՄ ԿԸ ՏԻՐԱՆԱՅ ԼԻՒԱՆԱՆԻ ԲԱԺԱԿԻՆ 3-2

ՓԱՅԼՈՒՆ ՅԱՂԹԱՆԱԿՈՎ ՌԸՆԵՍԱՆՍԻ ԴԷՄ՝ 3 ՅՈՒՆԻՍ 1943-ԻՆ

ՀՄԸՄ՝ հայ մկանհին, հայ մտփին, հայ կամփին արժանաւոր գաւակը: «Հաւատքը լեռներ կը խախտէ».- գրեց Եղիշ «Ազդարար»ի մէջ:

Որքան իրական է ժողովրդական այս բացատրութիւնը, որ մարմին առաւ Կիրակի օր ՀՄԸՄ - Ռընեսանս մրցումի առթիւ, ուր հազարաւոր ժողովուրդին առջեւ հայկական զօրաւորագոյն խումբը շահեցաւ Լիբանանի բաժակը:

Ափ մը հայութեան ծոցէն ծլած ժիր ու հաւատաւոր երիտասարդներու հոյլ մը իր 11 ներշնչեալ մարզիկներով, եկաւ փրկել ազգին վարկը, հիացում պատճառելով բոլորին: Դաշտը լեցուն էր, եկած էին ծեր ու երիտասարդ, դաշնակցական, ռամկավար, հնչակեան եւ համայնավար: Գաղափարական տարբերութիւնները սրբազան միութիւն մը կազմած էին ՀՄԸՄի նարնջագոյն շապիկներուն տակ: Հոն է լուսաւորչականը, կաթոլիկը, բողոքականը, պոպկացող բաղձանփի մը, յաղթանակի մը տենչով պապակած: Յուզիչ, ուղղակի արտասուաբեր բան մը կայ այն նայուածքներուն մէջ, զորս մարզիկ ու հանդիսատես կը փոխանակեն իրարու: Ու իրաւ ալ տարբեր էր ՀՄԸՄը, որ դաշտ իջաւ վնոակամ եւ խրախուսուած: Ռընեսանս անմիջապէս յարձակողականի անցաւ եւ հասաւ մինչեւ ՀՄԸՄի բերդը... բայց մեր բերդապահ Ջաւէնը գնդակը խլեց եւ խելայեղ ծափերու մէջ զայն հասցուց դէպի յառաջապահ գիծը:

Արթուն էին ամէնք, Եղիշը, մեր անգուգական Կիրակոսը, Յովհաննէսն ու ժիրայրը, որոնք խրոխտաբար փշրեցին հակառակորդին յարձակումները, եւ անդիմադրելի թափով մը խաղը փոխադրեցին Ռընեսանսի բերդին առջեւ, ուր Օգսէնը գնդակը առնելով քանի մը խաղացող ետեւը ձգեց եւ նշանակեց առաջին կողմը՝ արժանանալով որոտընդոստ ծափերու: Զուշացաւ երկրորդ կողմը՝ Խաչիկին կողմէ, իսկ երրորդը՝ նորէն Օգսէնին կողմէ, ու կիսախաղը վերջացաւ ՀՄԸՄի 3-0 յաղթանակով: Երկրորդ կիսախաղը նոյն ոգիով շարունակուեցաւ, եւ խաղը վերջացաւ ՀՄԸՄի յաղթանակով 3-2: Հայ զանգուածը ներխուժեց դաշտ, ու մարզիկները տարաւ պատուոյ բեմին առջեւ, ուր բաժակը Պ. Կապրիէլ ձեմայէլի կողմէ յանձնուեցաւ ՀՄԸՄի խմբապետ ժիրայրին:

Հիմա մենք ալ կրնանք ձայնակցիլ մեր Երջանկայիշատակ Կաթողիկոսին եւ քսել:

— Ապրի՛՛՛՛՛, տղա՛՛՛՛՛, դուք արժանաւոր գաւակներն էք հայ ժողովուրդին:

**ԱՒԱՆԴԱԿԱՆ ԽՐԱԽԾԱՆՔ**  
**ՖՈՒԹՊՈՒԼԻ ԵՂԱՆԱԿԻ ՎԵՐՋԱԻՈՐՈՒԹԵԱՆ**  
**ՆԱԵՒ ՏՕՆ ՅԱՂԹԱՆԱԿԻ՝ ԺԻՍՐ ՓԱՇԱՅԻ**  
**ՊԱՐՏԷՋ - ԾԱՇԱՐԱՆԻՆ ՄԷՋ 1943-ԻՆ**

Այս յաղթանակը տօնեցինք նաշկերոյթով մը, գոր խումբին ի պատիւ վարչութիւնը սարքած էր տարեվերջին, Ժիսր Փաշայի գեղատեսիլ նաշարան-սրճարանին մէջ՝ 13 Յունիս, 1943ին: Այս յաղթանակը կը յիշեցնէր ՀՄԸՄի 1940ի շահած Պէյրութի Քաղաքապետարանի բաժակը: Բոլոր վարչականները ներկայ էին, հրաւիրուած էին նաեւ խումբին շատ մ'օտիկ բարեկամները, որոնք միշտ ֆութպոլիստներուն կողքին կ'ըլլային ամէն տեղ, փորձերու թէ մրցումներու ընթացքին: Մեր սիրելի Խաչիկը խորոված ոչխար մը պատրաստել տուած էր: Փառաւոր նաշ մը սարքեցինք, երգելով, պարելով, ինչպէս նաեւ անմահական օղին խմելով: Զովանալու համար շատեր մ'օտակայ գետը իջան եւ լողացին: Շատ ուրախ եւ անմոռանալի յիշատակներով բաժնուեցանք, մաղթելով ՀՄԸՄին աւելի փայլուն յաղթանակներ ապագային:

**ԲԱՆԱԿՈՒՄ ՊԻՔՖԱՅԱ ԱՅՆ-ՆԱԱՍ**  
**ԱՂԲԻՒՐԻՆ ՄՕՏ 25 ՕԳՈՍՏՈՍ 1943**

ՀՄԸՄ-Ի Ա. ԽՈՒՄԲԻ ՖՈՒԹՊՈՒԼԻՍՏՆԵՐԸ ԻՐԵՆՑ ՄՕՏԻԿ ԸՆԿԵՐՆԵՐՈՎ

Մէկ շաբթուան պաշարով բեռնաւորուած՝ մեր (Տօրայի) տունէն նամբայ ելանք դէպի Պիքֆայա՝ Նասսի ալը, որ հռչակաւոր է իր առողջարար ջուրով: Գիշերով հասանք, վրանները լարեցինք եւ այնքան յոգնած էինք որ անմիջապէս քնացանք: Առտու կանուխ ելանք, ըստ սովորութեան, մեր մարզանքները ըրինք, ապա գացինք պաշար բերելու: Ամէն իրիկուն, անպայման, քանի մը հիւրեր կ'ունեննայինք, որոնք գիշերը մեր մօտ կ'անցընէին, իսկ յաջորդ առաւօտ Պէյրութ կ'իջնէին: Այս ձեւով, մեր բացակայ ֆութպոլիստները, գրեթէ բոլորն ալ եկան եւ վայելեցին մեր բանակավայրը: Անմոռանալի յիշատակներով լեցուն շաբաթ մը վայելեցինք այս գեղատեսիլ վայրերը:

Մասնակցողներն էին, մնայուն կերպով՝ Յովհաննէս եւ Անդրանիկ Նազարեան, Սարգիս Ազնաւորեան, Վարդիվառ, Պարգեւ՝ իր տրմպըրայով, Մանուէլ, Գարրիէլ եւ «Սուս» Յակոբ, որ իր գիլ ձայնով թռչունները երգել կու տար...



*Յովհաննէս, Վարդիվառ եւ  
Ներսէս Իղնեան:*



*Ներսէս, «Սուս» Յակոբ, Յովհաննէս,  
Գարրիէլ, Մանուէլ, Վարդիվառ,  
«Փուքպոլիստներ եւ Էշրէֆիէի մեր  
մտերիմները»:*



1943 ՀՄԸՄԻ Ա.ԽՈՒՄԲԻՆ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ԽԱՂԱՑՈՂՆԵՐԸ

ԲԵՐԴԱՊԱՀ՝ Պետրոս Սետեֆեան, Զաւէն Հրթիկեան:

ՅԵՏՍԱՊԱՀ՝ Սաաթնի, Եղիշ Եւ անգլիացի մը:

ՄԻՋՆԱՊԱՀ՝ Յովհաննէս, Ժիրայր, Կիրակոս Եւ Նուպար:

ՅԱՌԱՋԱՊԱՀ՝ Մարտիրոս, Օգսէն, Հանի Հայկ, Վարդիվառ, Խաչիկ,  
Յարութիւն, Հրայր Ուրֆալեան, Սարգիս Ազնաւորեան Եւ Գէորգ  
Քէօրեան:

ԽՄԲԱՊԵՏ՝ Ժիրայր Ուրֆալեան

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՄԲԱՊԵՏ՝ Սամուէլ Գալուստեան

1943 ՀՄԸՄ-Ի Ա.ԽՈՒՄԲԻ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒ ԳՈՒՄԱՐ՝ 21

ՅԱՂԹԱՆԱԿ՝ 11 - ՀԱԽԱՍԱՐՈՒԹԻՒՆ՝ 4 - ՊԱՐՏՈՒԹԻՒՆ՝ 6

ԿԱՐԵՒՈՐ ՄՐՅՈՒՄՆԵՐ

ԹՈՒԱԿԱՆ	ՄՐՅԱԿԻՑՆՈՒՄԲ	ԱՐԴԻՒՆՔ	ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ
Յունւի. 10	DPHB	8-2	
Փետր. 07	Ռասիկնկ	3-0	Մարտիրոս-Հայկ-Ներսէս
Մարտ 28	Պէյրուք Սէրվիս	8-0	
Ապրիլ 04	RAF անգլ.	5-1	
Մայիս 09	Ատանա	11-2	Լիբանանի բաժակ
Մայիս 16	Մազրաս	3-1	
Յունիս 06	Ռընեսանս (ֆիւնալ)	3-2	Օգսէն 2 - Վարդ. 1
Նոյեմ. 07	SIGNANS. անգլ.	5-1	Վարդիվառ 3 - Հայկ 2
Փետր. 21	MP (անգլ.)	1-1	
Ապրիլ 10	Ֆրանս. բանակ	2-2	
Սեպտ. 12	ՀՄԸՄ Պըրն Համուտ	0-0	փորձ մրցում
Յուն. 17	Մազրաս	2-3	Ստեփան 1 - Հայկ 1
Ապրիլ 19	ՀՄԸՄ Հալէպ	2-3	Միջմսնհիւղյն. Հալէպ
Հոկտ. 17	RA անգլ.	3-6	Վարդիվառ 3 - Ժիրայր 1

Այս եղանակէն սկսեալ Լիբանանի ֆութպոլի ֆետերասիոնը  
ախոյեանութեան համար որդեգրեց կէտերու դրութիւնը.

յաղթանակի պարագային՝ 2 կէտ  
հաւասարութեան՝ 1 կէտ  
պարտութեան՝ 0 կէտ:

## ՀՄԸՄ - 1944

### ՀՄԸՄ - ՖՐԱՆՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՕԳԱՅԻՆ ԵՒ ԾՈՎԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ

23 Յունուար, 1944: Պաշտօնական մրցում՝ նախագահութեամբ՝ Լիրանանի վարչապետ՝ Ռիատ Սուլիի, որ իր շուրջ ունէր հայ երկու երեսփոխանները՝ Տօֆ.Մելիքոն Հայրապետեան եւ Մովսէս Տէր Գալուստեան. ներկայ էին ֆրանսացի բարձրաստիճան սպաներ: Իրաւարարն էր՝ Փիէր Ճեմայէլ: Պարզ էր որ ամբողջ կարելին ընելու էինք ֆրանսացի սպաներուն առջեւ, նախ՝ մեր վարչապետը ամօթապարտ չձգելու համար, ապա՝ մեզի միշտ զօրավիզ կանգնող մեր համակիրներու բազմութիւնը: Խաղին սկիզբէն իսկ յարձակողականի անցանք, Հանի Հայկը գնդակը առած ներս կը խուժէր, երբ յանկարծ ոտէն ստացաւ հարուած մը եւ գետին տապալեցաւ: Իրաւարարը արդար **բենալթի** մը սուլեց, զոր նոյն Հայկը կողի վերածեց: Այնուհետեւ բարելաւուեցաւ մեր խմբային խաղարկութիւնը եւ Գէորգ նշանակեց երկրորդ կող մը: Հակառակորդը չուշացաւ զգաստանալու, եւ իր հերթին նշանակեց կող մը, վերջնական արդիւնքը հասցնելով 2-1ի: ՀՄԸՄ յաղթանակած էր: Վարչապետը մեծ հաճոյքով յանձնեց բաժակը մեր խմբապետին եւ մէկ առ մէկ շնորհաւորեց բոլոր խաղացողները:



Ձախէն՝ Փիէր Ճեմայէլ (իրաւարար), Կիրակոս, Խաչիկ, Յովհաննէս, Հանի Հայկ, Ժիրայր (խմբապետ), Վարդիվառ եւ Գէորգ Բէօրեան:

Ձախէն ծոած՝ Սաաթնի, Գէորգ (էյնէշ), Նիլշ եւ Շատարեւեան:



Համատեղ խմբանկար՝ ՀՄԸՄ-ի - Ֆրանսական խումբի

## ՀՄԸՄ ՅԱՂԹԵՑ ՌԸՆԵՍԱՆՍԻՆ 3-0

12 ՄԱՐՏ 1944 ԾՓԻԲ-ի ԴԱՇՏԸ ՖԸՐԸՆ ՇԸՊՊԷՔ

### ԶՕՐԱԻՈՐ ԷԻՆՔ - ՎՃՌԱԾ ԷԻՆՔ ԵՒ ՅԱՂԹԵՑԻՆՔ

Ախոյեանական խաղերու ծիրէն ներս շատ կարեւոր ու բախտորոշ կը նկատուէր այս մրցումը: Հակառակ այս իրողութեան, մեր երկու խաղացողներէն՝ Ժիրայր եւ Խաչիկ, տասը վայրկեան ուշացան եւ մենք դաշտ իջանք ինը խաղացողով միայն: Ժողովուրդը լուռ կը մնար, մենք կը զգայինք անոնց անձկութիւնը, թէ հակառակորդը այս առիթէն կրնար օգտուիլ եւ կողմը նշանակել: Խաղացողներս գիտակից այս վտանգին՝ մեր կարելին կ'ընէինք ամէն տեղ հասնելու համար:

Այս պայմաններու մէջ հրաշքներ գործեց յատկապէս՝ հսկաներու պաշտպանողականը, իր թիկունքին ունենալով բերդապահ Գեորգը: Վերջապէս մեր երկու բացակայ խաղացողները հասան եւ մենք սկսանք գործադրել մեր ժողովին մէջ որոշուած թափփը, այլ խօսքով՝ խաղալ վճռակա՛ն, սրտա՛նց, եւ անպայմա՛ն յաղթել: Սկսանք տիրապետել խաղին, ժողովուրդն ալ իր կողմէ նեցուկ կը կանգնէր մեզի՝ «ՀՄԸՄ կող կ'ուզենք», խանդավառ բացազանչութիւններով: Ստեղծուեցաւ այնպիսի կացութիւն մը, ուր կարծես թէ դաշտի վրայ միայն մենք էինք: Սկսանք կիրարկել ներդաշնակ խաղարկութիւն մը:

Ռընեսանսի տղաքը շշմած էին պարզապէս եւ կը գոհանային մեր խաղը դիտելով: Կոլերը չուշացան, առաջինը նշանակեց Հանի Հայկ,

մինչ երկրորդը՝ ես... եւ այսպէս վերջացաւ կիսախաղը: Երկրորդ կիսախաղին նոյն ձեւով շարունակեցինք, ժողովուրդը հիացած էր ու կը դիտէր ֆուլպուլի գեղեցիկ խաղարկութիւն մը: Գէորգին երրորդ կողով խաղը վերջ գտաւ:

Այդ հսկայ, հռչակաւոր, ահագոյն Ռընեսանսը այսպիսի պարտութիւն տակաւին չէր կրած: Երկու թրիպիւններուն առջեւ ջերմ համակրանք շահած, բարեւելով ժողովուրդին, ելանք դաշտէն: Իսկ անդին՝ ուրախ հուռուաներով եւ երգելով ժողովուրդը կը հեռանար:

Ինծի համար հոգեկան մեծ հաճոյք էր ՀՄԸՄի յաղթանակը, որովհետեւ այս յաղթանակի մէջէն կը տեսնէի եւ կը դիտէի մեր ժողովուրդին ուրախութիւնն ու հպարտութիւնը: Պուրն Համուտի մէջ խրախնանք սկսաւ այս փառաւոր յաղթանակը տօնելու համար: Այս անգամ հիւրասիրողները Տատեան եղբայրներն էին: Ուղղակի իրենց տունը գացինք ու բազմեցանք հայկական նոյս սեղանի շուրջ: Ամէն մարդ ուրախ էր. կերանք ու խմեցինք եւ մեր անմահ ֆետայիներու երգերով թնդացուցինք մթնոլորտը: Տունին շուրջ տասնեակներով տղաք մեզի նման ուրախ իրենց կարգին կ'երգէին: Ներկայ էին ընկերներ՝ Սարգիս Ուննեան եւ Գառնիկ Ոսկանեան, ՀՄԸՄի ֆուլպուլի խումբին սիրահարներ, ընկեր Գառնիկ ոտփի ելաւ եւ խանդավառ նառ մը խօսեցաւ, յիշեցնելով մեր ֆետայիներու քաջագործութիւններն ու յաղթանակները հայոց լեռներուն վրայ. շնորհաւորեց ՀՄԸՄը եւ խաղացողներս իբրեւ անոնց արժանաւոր ժառանգորդներ, եւ նորանոր յաղթանակներ մաղթեց: Տատեան եղբայրները՝ Հրաչ եւ Գեղամ, որ ՀՄԸՄի աթլետիք մի (Barre fixeի) ախոյեաններն էին, այնքան ուրախ էին, որ ներկայ եղող ֆուլպուլիստներուս հետ կը փաթթուէին եւ կը համբուրուէին: Շատ ուրախ ու խանդավառ մթնոլորտի մը մէջ մինչեւ ուշ գիշեր մնացինք իրենց յարկին տակ:

## ՀՄԸՄ - ԱՌԱՋԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ ԼԻԲԱՆԱՆԻ ԱԽՈՅԵԱՆ - 1944

Որեւէ մրցումի յաղթելու համար պէտք էր դէմ դնէինք երեք մրցակիցներու.

- 1-Դիմացի խումբին,
- 2-Իրաւարարի կողմնակալութեան,
- 3-Ֆետեբասիոնի կամակոր որոշումներուն:

Այս բոլորը յաղթահարելով՝ ՀՄԸՄ հռչակուեցաւ Լիբանանի ախոյեան, իբր առաջին հայկական խումբը, որ այս երկրին ախոյեանութեան կը տիրանար:

Արդարեւ 12 Մարտ 1944ին, ախոյեանութեան մաս կազմող մրցումի մը ընթացքին խորտակեցինք Լիբանանի հզօր Ռընեսանսը 3-0 արդիւնքով:



Ֆետերասիոնը համոզուած ըլլալով, որ Ռընեսանս կորսնցուցած էր այլեւս ախոյեանութեան տիրանալու իր յոյսերը, որոշեց առկախել ախոյեանական մրցումները՝ պատրուակելով, թէ մրցումներուն ընթացքին կռիւներ տեղի ունեցած էին դաշտերուն վրայ: Պէտք է ըսել, որ ախոյեանութեան այլ մրցումներուն եւս կռիւներ կ'ըլլային, սակայն ֆետերասիոնը երբեք նման որոշում չէր առած, նկատի ունենալով որ այդ ժամանակներուն Ռընեսանս կը գտնուէր դասաւորման առաջին դիրքի վրայ: Այս որոշումը անըմբռնելի էր մեզի համար. բոլոր ակումբները բողոքեցին այս անարդար վճիռին դէմ. մամուլը բնադատեց զայն եւ խնդիրը հասաւ մինչեւ կրթական նախարարութիւն, որ ֆետերասիոնը լուծելու որոշում առաւ: Վերջապէս նոր ֆետերասիոնը ընտրուեցաւ եւ որոշուեցաւ խաղերը շարունակել: Որոշուեցաւ նաեւ թէ այն մրցումին ընթացքին, որ խումբի խաղացողները կամ համակիրները կռիւի առիթ տային, նոյն այդ խումբը ախոյեանութենէն պիտի կախակայուէր: Մրցումները շարունակուեցան եւ մեր կէտերու գումարը հասաւ 16ի, մինչ Ռընեսանս ունեցաւ միայն 12 կէտ եւ հանդիսացաւ երկրորդ: Փառաւոր յաղթանակ էր մեզի համար:

Յաջորդ օրը Լիբանանեան մամուլը արդարօրէն հռչակեց ՀՄԸՄի խումբը՝ որպէս տարուան ամէնէն ներդաշնակ եւ ամէնէն հզօր կազմը:

Հոս հարկ է արձանագրել թէ մեր խումբը ոչ մէկ ատեն այսօրէն միատարր, ներդաշնակ եւ զօրաւոր չէր եղած: Այս բոլորին մէջ մեծ դեր ունէր մեր ընդհանուր խմբապետը՝ Սամուէլ Գալուստեան, որ հոգիով ու մարմնով զոհուած էր խումբին համար: Մեր նուիրեալ վարչականներուն անգնահատելի վերաբերմունքը մարզիկներուս հանդէպ մեզի թեւեր կու տար մրցումներու ընթացքին: Անշուշտ չեմ կրնար մոռնալ մեր սիրելի ժողովուրդը, որ անվերապահ քաջալերանքով ու գուրգուրանքով խումբս կը մղէր յաղթանակէ յաղթանակ: Խումբը իր կարգին արդարացուց իր վրայ դրուած յոյսերը: Բոլոր ախոյեանական մրցումներուն ընթացքին ոչ միայն պարտութիւն չկրեցինք, այլեւ հաւասարութիւն իսկ չ'արձանագրեցինք:

Մինչեւ այդ տարին, Ռընեսանս ընդհանրապէս ինք տիրացած էր Լիբանանի ախոյեանութեան, որով անոնք ստացած էին «սարսափազդու» ըլլալու մակդիրը:

ՀՄԸՄ շահելով Լիբանանի ախոյեանութիւնը՝ արժեցուց իրեն տրուած «ՀՍԿԱ ՆՆՐՈՒ ԽՈՒՄԲԸ» մակդիրը:

## ՀՄԸՄ-Ի ՄԻԶՄԱՍՆԱԾԻՒՂԱՅԻՆ ԽԱՂԵՐԸ ՀԱԼԷՊ 1944 - ՅԱՂԹԵՑԻՆՔ ՀԱԼԷՊԻ 2-1

10 Ապրիլ 1944 - ժողովուրդը կանուխեն կը փութար ՀՄԸՄի դաշտը թրիպիւնին մէջ տեղ ապահովելու եւ լաւագոյն պայմաններու մէջ դիտելու համար փառապանծ տողանցքն ու բարձր մակարդակի նակատումը՝ ընդմէջ Պէյրութի եւ Հալէպի խումբերուն, ախոյանները Լիբանանի եւ Սուրիոյ: Դաշտը արդէն լեցուեր էր երբ երկու խումբերուն արժանաւոր աստղերը դաշտ իջան եւ ընդունուեցան որոտընդոստ ծափահարութիւններով:

Խաղը չսկսած արդէն ելեկտրականացած էր մթնոլորտը: Հալէպահայ հանդիսատեսները կոլ կը պահանջէին իրենց խաղացողներուն անունները տալով: Եւ պատահեցաւ անսպասելիք...

Հալէպն է որ սկսաւ խաղը: Սանթրֆօր Արմէնը գնդակը փոխանցեց իր մօտը գտնուող Արսէնին, որ առանց կեցնելու բացաւ դէպի աջ ծայր, ուր Յակոբ, իրեն յատուկ խորամանկ տրիպիւնկով առաջ անցաւ եւ կայծակի արագութեամբ ու ուժգին հարուածով մը գնդակը տեղաւորեց մեր բերդէն ներս: Այս բոլորը տեղի ունեցաւ, երբ մրցումը սկսելուն մէկ վայրկեան չէր եղած եւ մենք գնդակին չէինք դպած իսկ... Մնացինք շշմած: Մեր խմբապետը՝ Ժիրայր, համախմբեց մեզ եւ քանի մը խրախուսիչ խօսքերով հրահանգներ տուաւ մեր կողմէ որդեգրուելիք թափփին մասին. իր խօսքը եզրափակելով ընկալեալ ուխտադրութեամբ՝ «մեռնիլ կայ պարտութիւն չկայ»: Ապա սկսանք խաղը զգոյշ եւ պաշտպանողական դիրքերու վրայ մինչեւ որ մեր ինքնավստահութիւնը վերագտանք: Հալէպցիները ուրախութեամբ արբեցած էին եւ թրիպիւններու մէջէն երկրորդ կոլ մը կը պահանջէին. Հալէպի մարզիկները դարձեալ սկսան ննչում բանեցնել մեր վրայ՝ ստեղծելով վտանգաւոր պահեր, բայց մեր բերդապահը անդդուելի մնաց: Ան ինչպիսի հրաշքներ գործեց բռնելով ֆուտպուսիսին մէջէն ֆաշուած ֆանի մը գօրաւոր հարուածներ: Նոյնքան անխորտակելի էր մեր պաշտպանողականը, յանձնա՝ Եղիշի, Կիրակոսի, Յովհաննէսի եւ Ժիրայրի:

Առաջին կիսախաղը արարտեցաւ 1-0 արդիւնքով, ի նպաստ Հալէպի: Կիսախաղի դադարին տեղի ունեցաւ ամէնուն կողմէ այնքան սպասուած տողանցքը: Հայոց ապագայի բանակը կը տողանցէր կազմուած հազարաւոր սկաուտներէ եւ մարզիկներէ, առաջնորդութեամբ՝ Հալէպի անուանի ֆանֆարին, որ զինուորական ֆայլերգներով եւ ազգային երգերով կը թնդացներ մթնոլորտը: Այս ընդհատումը մեծապէս նպաստեց մեզի՝ հանդարտեցնելով մեր ջիղերը:

Երկրորդ կիսախաղը սկսաւ աւելի բուռն եւ աւելի վճռական: Երկու խումբերս համահաւասար մակարդակի վրայ էինք, բայց մենք, ըստ մեր որոշած նոր թափփին, պիտի մնայինք միշտ յարձակողական դիրքի վրայ եւ կարելի եղածին չափ գնդակը մեր ոտներուն մէջ պիտի պահէինք: Պէտք էր չէզոքացուէին նաեւ դիմացիներն վտանգաւոր երկու

ծայրերը, մեր արթուն հաֆպէֆներու՝ Յովհաննէսի եւ Կիրակոսի կողմէ: Այսպիսի տաֆ եւ վնոական խաղ ոչ տեսած էի եւ ոչ ալ խաղցած: Որոշ պահեր կը մոռնայի ինֆզինֆս եւ հիացումով կը դիտէի այս գեղեցիկ խաղարկութիւնը:

Մենֆ սկսանֆ հետզհետէ աւելի լաւ խաղալ ու խաղին նծարը սկսաւ մեր կողմը հակիլ: Անդիմադրելի թափով մեր յարձակողականը ապարդիւն չանցաւ եւ առիթներ ստեղծեցինֆ հրաշալի երկու կոլեր նշանակելու, առաջինը՝ Վօֆրրի կողմէ, մինչ երկրորդը՝ Հանի Հայկի, որ խոյանալով դէպի առաջ եւ նեղֆելով Հալէպի պաշտպանողական գիծը՝ նշանակեց յաղթանակի կոլը: Խաղը վերջ գտաւ 2-1 արդիւնֆով՝ ի նպաստ Պէյրութի:

Հոս կ'ուզեմ արձանագրել, թէ Հալէպի խաղարկութիւնը մեզմէ գերադաս էր: Բայց մեր անխորտակելի պաշտպանողականը հրաշֆներ գործեց, մեր անզուգական բերդապահին շնորհիւ, նաեւ մեր հաֆպէֆ Յովհաննէսը՝ Կիւլիւմ, որ յաջողեցաւ չէզոֆացնել Հալէպի սարսափագրու ձախ ծայրը՝ Համագասպը:

Յաջորդ օրերուն լիբանանեան եւ սուրիական թերթերը լայնօրէն անդրադարձան այս աննախընթաց խաղին, մրցումի ընթացֆին գործադրուած անհատական եւ խմբային խաղարկութեան, թաֆիֆով եւ թէֆնիֆով բարձր մակարդակի ֆութպոլիս: Այս պարագան կը հաստատուի այն իրողութեամբ, թէ հազարաւոր տեղացի սուրիացիներ եւ լիբանանցիներ եկած էին հեռաւոր ֆաղաֆներէ՝ ներկայ ըլլալու համար երկու երկիրներու ախոյեաններու մրցումիս:



#### HOMENETMEN - COUPE INTER - HOMENETMEN 1944

ՀՄԸՄ ՊԷՅՐՈՒԹԻ ԱՄԵՆԱԶՕՐԱԻՈՐ ԿԱԶՄԸ՝ 1944 ՀԱԼԷՊ

Ձախէն ոտֆի՝ Սամուէլ Գալուստեան (ընդհանուր խմբապետ), Եղիշ, Գէորգ Քէօրեան, Վարդիվառ, անգլիացի իրաւարար, Անդրանիկ Մկրտիչեան, Հանի Հայկ եւ անգլիացի Վօգրր:

Ձախէն ծոած՝ Ժ. Ուրֆալեան (խմբապետ), Կիրակոս Գալայնեան, Գէորգ Էյնէշլեան, Յովհաննէս Նազարեան եւ Ստեփան Մելիֆսեթեան:

## ԽՕՍՔ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ 1944

### ՀԱԼԷՊԻ ՀՄԸՄ-Ի ԽՈՒՄԲԻՆ ԵՒ ՖՈՒԹՊՈԼԻՍՏՆԵՐՈՒՆ

Սուրբիոյ ախոյեան Հալէպի ՀՄԸՄի անուանի խաղացողները.  
ՀԱՄԱԶԱՍՊ, ԱՐՍԷՆ, ԱՐՄԷՆ, ՎԱԶԳԷՆ ԵՒ ՅԱԿՈՒՔ:

բարձր մակարդակի մարզիկներ, Սուրբիոյ ազգային խումբին կորիզը:  
ԼԵՒՈՆ՝ Բերդապահ, ճկուն, արթուն եւ անվախ:

ԱԼԵՔՍԱՆ ԵՒ ՄԱՆՈՒԷԼ՝ յետսապահներ, տոկուն եւ կարծր, դիմացի  
խաղացողը կը զգուշանար մօտենալու անոնց, թէեւ քիչ մը դանդաղ, բայց  
հզօր պաշտպանողական դիմադրութիւն մը կը կազմէին:

ՄԱՆՈՒԿ, ԵՐՈՒԱՆԴ ԵՒ ԳԱՐԱՅԵԱՆ՝ միջնապահներ, վստահելի եւ  
ներդաշնակ միջնապահ գիծ մը կը կազմէին եւ միշտ կ'օգնէին պաշտ-  
պանողական եւ յառաջապահ գիծերուն: Խմբապետ Երուանդին հմուտ եւ  
իմաստուն ցուցմունքներով խաղին ընթացքը միշտ եղած է ի նպաստ իր  
խումբին:

ՀԱՄԱԶԱՍՊ՝ յառաջապահ ձախ ծայր, եղած է իր դիրքին վրայ  
Սուրբիոյ եւ Լիբանանի լաւագոյն մարզիկը: Տոկուն ձախ ծայր մըն էր,  
երբ գնդակին տիրանար, չես գիտեր ինչ թեփնիփով եւ տրիպլիկով  
դիմացիները խաղի կը բերեր եւ կը սուրար դէպի բերդը ու կը նշանակէր  
կոլը: Այլապէս այնպիսի սանթրաժ մը կ'ընէր, որ շատ դիւրութեամբ  
ընկերներէն մէկը կոլի կը վերածէր: Այս մրցումին մեր **հաֆպէֆ**  
Յովհաննէսը իր «մուխը մարեց» ինչպէս պիտի ըսէին հալէպցիները:

ՅԱԿՈՒՔ՝ յառաջապահ աջ ծայր, իր խաղարկութեամբ Համազասպի  
կը նմանէր, բայց աւելի ճկուն էր եւ ունէր աւելի հզօր հարուածներ:

ԱՐՍԷՆ, ԱՐՄԷՆ ԵՒ ՎԱԶԳԷՆ՝ կը կազմէին յառաջապահ մէջտեղի  
անզուգական երրորդութիւնը: Սֆանչելի էին անոնց եռանկիւն  
փոխանցումները: Յառաջ կը սուրային՝ կարծես իրենց առջեւ ոեւէ մէկը  
չըլլար, եւ առանց նայելու փոխանցումներ կը բաշխէին պէտք եղած  
տեղերը:

ՎԱԶԳԷՆԸ ամբողջ Սուրբիոյ լաւագոյն յառաջապահն էր: Ճկուն  
էր ու արագաշարժ, գետնէն թէ օդէն գնդակին տիրող, դիմացի  
պաշտպանողականը շփոթի կը մատնէր ու կը սպրդէր անոնց մէջ,  
յանախ նշանակելով կոլը: Երբեմն, իրենց յաղթանակը ապահովելէ  
ետք շատ գեղեցիկ ֆութպոլի ցուցադրութիւն կ'ընէր ներկաներուն  
հիացմունք պատճառելով: Միայն Պէյրութի ՀՄԸՄի անխորտակելի  
պաշտպանողականը յաջողեցաւ դիմանալ այս սարսափելի  
յարձակողականին: Ասոնք էին, որ կը կազմէին Սուրբիոյ ազգային  
խումբին յառաջապահ գիծը:

*Կը պատահէր, որ Արտաւազդը, որ անուանի մարզիկ մըն էր Հայէպի Քլիւպ Սթորթիֆէն, փոխարինէր առջեւի այս խաղացողներէն մէկը կամ միւսը, Սուրիոյ ազգային խումբէն ներս:*



**ՀԱԼԷՊԻ ՀՄԸՄ-Ի ՀՌԶԱԿԱԻՈՐ ԽՈՒՄԲԸ՝ 1944**

*Չախէն ոտքի՝ Արսէն, Երուանդ, Յակոբ Աֆարեան, անգլիացի իրաւարար, Ալեքսան, Լեւոն, Արմէն, Մանուէլ, խաղացող մը, Մանուկ եւ Վազգէն:*

*Չախէն ծոած՝ Գարայեան եւ Համազասպ:*



**ԽՄԲԱՆԿԱՐ ՍՈՒՐԻՈՅ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆՈՅԵԱՆՆԵՐՈՒ ՀՄԸՄ ՀԱԼԷՊ - ՀՄԸՄ ՊԷՅՐՈՒԹ՝ ՀԱԼԷՊԻ ՄԷՋ 1944-ԻՆ**

**ԽՕՍՔ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ 1939-1944  
ՊԷՅՐՈՒԹԻ ՀՄԸՄ- Ի  
ՆՈՒԻՐԵԱԼ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՈՒՆ,  
ԽՈՒՄԲԻՆ ԵՒ ՖՈՒԹՊՈԼԻՍՏՆԵՐՈՒՆ**

**ՀՄԸՄ-Ի ՆՈՒԻՐԵԱԼ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ**

ՀՄԸՄի ներկայ ու գալիք սերունդներու յաւերժական երախտագիտութեան եւ գնահատանքին արժանի կը մնան մեր անձնագոհ վարչականները եւ պատասխանատուները, որոնք գործ ու ընտանիք ձգած կը վազեն ֆուքպոլիստներու եւ այլ մարզիկներուն հետեւէն, առանց անձնական փառքի ակնկալութեան: ՀՄԸՄի հանդէպ ունեցած իրենց անսասան հաւատով է որ տարուէ տարի մէջտեղ եկան սփանջելի խումբեր եւ մարզիկներ բոլոր մարզերու մէջ. անոնք են.

**ՄԵՐ ՎԱՐՉԱԿԱՆՆԵՐԸ՝** Անդրանիկ Երամեան, Հրանդ Մուրատեան, Յակոբ Խուպեսերեան, Մարտիրոս Ճամպուլեան, Յովհաննէս Պայթարեան, Կարպիս Մերտինեան, Տոբոբ Բարգէն Փափագեան, Վահէ Դանիէլեան, Արամ Անթիգանեան, Ժագ Էրֆէլէթեան եւ այլն:

**ՖՈՒԹՊՈԼԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝** ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԱՀԻՆԵԱՆ՝ ֆուքպոլի ընդհանուր պատասխանատու եւ ֆետերասիոնի մօտ ՀՄԸՄի ներկայացուցիչը:

**ՖՈՒԹՊՈԼԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՄԲԱՊԵՏՆԵՐԸ.**

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ (Քառձայր), միշտ ներկայ էր, ամէն մրցումի եւ ամէն փորձի, բնաւ չէր բացակայեր ժողովներէ եւ ինքզինք դրած էր ֆուքպոլիստներու տրամադրութեան տակ:

ՍԱՄՈՒԷԼ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ՝ խաղացողներու կողմէ ամէնէն շատ սիրուած ընդհանուր խմբապետը եղած է: Եւ իրաւ ամէն ինչ էր. խանութք կը ձգէր եւ կ'երթար ժամերով խաղացողի մը գործը կարգադրելու:

ԲԵՆԻԱՄԻՆ ՇԱՄԼԵԱՆ՝ նոյն գոհաբերութեան ոգիով տոգորուած, ֆուքպոլիստներու հետեւէն կը վազէր անպայման օգտակար ըլլալու նպատակով:

**ՄԵՐ ԽՈՒՄԲԸ** 1943ին Լիբանանի բաժակիին տիրանալով եւ 1944ին Լիբանանի ախոյեանութեան, հայ ժողովուրդին կողմէ արժանացաւ հսկաներու խումբի մակդիրին, նաեւ Լիբանանեան մամուլին կողմէ հռչակուեցաւ հզօրագոյն խումբը: Անխորտակելի պաշտպանողական եւ անզուգական միջնապահ գիծ, լաւագոյնը Լիբանանի եւ ՀՄԸՄի ամբողջ պատմութեան մէջ: Յառաջապահ գիծը նոյնպէս բացառիկ, կը ճեղքէր, կը պատռէր հակառակորդին պաշտպանողականը եւ յանախ մեծ քառակուսիին դուրսէն եկած

հարուածները կողի կը վերածէր: Այսպէս, յառաջանալով յաղթանակէ յաղթանակ, ոսկեայ տառերով արձանագրուեցան այդ տիտղոսները, ՀՄԸՄի պատմութեան տոմարներուն մէջ:

**ՄԵՐ ԱՆՆՄԱՆ ՖՈՒԹՊՈՒՍՏՆԵՐԸ**, որոնք մաս կազմելով հսկաներու միշտ յաղթական խումբին, արժանացան մեր սքանչելի ժողովուրդին սուղ եւ արդար հիացումին:

**ԲԵՐԴԱՊԱՀ՝ Պետրոս Սետեֆեան, Զաւէն Հրթիկեան, Գէորգ Էյնէշլեան «Էյնէշ Գէորգ»**, որ այդ օրերուն լաւագոյն բերդապահն էր Լիբանանի մէջ: Ան հիացում կը պատճառէր բոլորին, նոյնիսկ փոքր քառակուսիէն քառակուսի անփրկելի կարծուած գնդակները կը զսպէր: Անվախօրէն կը նետուէր հակառակորդին դիմաց եւ անոնց ոտէն գնդակը կը խլէր:

**ՅԵՏՍԱՊԱՀ՝ Սաաթի (Կարապետ Սաաթեան) խմբապետ, Եղիշէ Մանուկեան, Գրիգոր Պագրեան, Գեղամ Բարսեղեան, Սամուէլ Անդրանիկեան (Սամօ), Սարգիս Պատագեան, Միհրան Մելիքսեֆեան եւ վարդան Պետիկեան:**

**ՍԱԱԹՃԻ - ԵՂԻՇ՝** երբ հանդիսատեսը մրցումի մը սկիզբը նկատէր այս զոյգին ներկայութիւնը պաշտպանողական գիծին վրայ, յաղթուելու վախը անմիջապէս կ'անհետանար: Անկարելի էր տրիպլիկով կամ օդէն այս երկուքէն գնդակ անցընել: Եղիշը խումբին արթուն պահակն էր, գնդակը կը փրկէր եւ կը հասցնէր ազատ վիճակի մէջ գտնուող մեր ծայրերէն մէկուն: Այս երկու մարզիկներուն հոչակը կու գար անցեալէն, երբ Դամասկոսի մէջ մաս կը կազմէին ֆրանսական բանակի Զէրէգներու ֆութպոլի նշանաւոր խումբին, որուն երկու սիւներն էին, միաժամանակ 1935ական թուականներուն Դամասկոսի ՀՄԸՄի նշանաւոր եւ սարսափազդու խումբին մաս կը կազմէին:

Այս շրջանին է, որ Դամասկոսի ՀՄԸՄի խումբը ապրեցաւ իր փառահեղ շրջանը: Ուրեմն մեր խումբը կը վայելէր այս վաստակաւոր մարզիկներու ներկայութիւնը: Խումբիս հերթական ժողովներուն ընթացքին լրջօրէն կը բնակէին օրակարգի բոլոր հարցերը, եւ իրենց օգտակար թելադրութիւնները միշտ նկատի կ'առնուէին:

**ՄԻՋՆԱՊԱՀ՝ Յովհաննէս Նազարեան, Ժիրայր Ուրֆալեան, Կիրակոս Գալայեան եւ Արմենակ Թիւֆէնկեան:**

**ՅՈՎՀԱՆՆԵՍ, ԺԻՐԱՅԻՐ եւ ԿԻՐԱԿՈՍ՝** միջնապահ լաւագոյն գիծը Լիբանանի նաեւ բոլոր ՀՄԸՄի խումբերուն եւ բոլոր ժամանակներուն, իսկապէս իրարու շաղկապող մեքենան՝ պաշտպանողական եւ յարձակողական գիծերու միջեւ: Մեր յառաջապահ գիծին անմիջական նեցուկ կը կանգնէր:

**ՅԱՌԱՋԱՊԱՀ՝ Հանի Հայկ Կարմիրեան, Ներսէս, Օգսէն Սմբատեան, Մարտիրոս Պալըզեան, Գէորգ Քէօրեան, Յարութիւն Մարտիրոսեան, Խաչիկ Խաչատուրեան, Աւետիս Տէր Պետրոսեան, Սարգիս Ազնաւորեան, վարդիվառ Յովհաննէսեան եւ ուրիշներ:**

Մեր յառաջապահ գիծը շատ փոփոխութիւններ կրած է տարուէ տարի, բայց իւրաքանչիւրը իր լաւագոյնը տուած է: Անհատական շատ գեղեցիկ խաղարկութիւններ ցուցաբերած են եւ դարձած են անուանի խաղացողներ: Տեղին է յիշել իսկապէս մեծ ֆուլպոլիստ Հանի Հայկը՝ սանթրֆոթ, յառաջապահ գիծի վրայ: Ֆուլպոլի այս վիթխարի հսկան, իր անհատական արի խոյանկներով եւ փշրելով ամէն խոչընդոտ՝ կը յառաջանար եւ կոլ կը նշանակէր:

Իր թէֆնիֆը.- գնդակը որ օդին մէջէն կը հասնէր հակառակորդին քարէին մէջ, ամէնուն ուսերուն վրայէն թռչելով եւ գլխու զօրաւոր հարուածով անպայման կոլ կը նշանակէր, հիացում պատճառելով բոլորին, մանաւանդ հակառակորդ խաղացողներուն: Անուրանալի է, որ Լիբանանի լաւագոյն խաղացողներէն մին եղած է:



#### ՀՄԸՄ-Ի ՆՈՒԻՐԵԱԼՆԵՐԷՆ ՊԷՅՐՈՒԹԻ ՎԱՐՁԱԿԱՆՆԵՐ

Չախէն՝ Վահէ Դանիէլեան, Յովհաննէս Շահիյեան, Հրանդ Մուրատեան, Սամուէլ Գալուստեան, Յովհաննէս Պայթարեան եւ Ժագ Էրֆելեթեան:



ՀՄԸՄ 1943 - ԼԻԲԱՆԱՆԻ ԲԱԺԱԿԱԿԻՐ  
ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԸԼԼԱԼՈՎ  
ՀՄԸՄ 1944 - ԼԻԲԱՆԱՆԻ ԱԽՈՅԵԱՆ  
ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԸԼԼԱԼՈՎ  
ՀՄԸՄ 1944 - ՀՄԸՄ-Ի ՄԻՋՄԱՍՆԱԺԻԻՂԱՅԻՆԻ ԲԱԺԱԿ  
ՀՌ-ՉԱԿՈՒԱԾ ՍՈՒՐԻՈՅ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ  
ԱՄԷՆԷՆ ԶՕՐԱԻՈՐ ԽՈՒՄԲԸ

*Այս յաղթանակներուն առթիւ գրած եմ յուշերուս մէջ 29 Մարտ 1944:*

*ՀՄԸՄ մեծ դեր կը խաղայ արտասահմանի հայութեան մէջ: ՀՄԸՄ իր շարքերէն ներս ունի սկառուտներ եւ ամէն տեսակի մարզիկներ՝ ֆութպոլ, պասֆէթպոլ, թենիս եւ այլն:*

*ՀՄԸՄ իր անդամներուն մէջ, առաջին անգամ ըլլալով կ'արթնցնէ հայ ազգին պատիւը բարձր պահելու զգացումը, յետոյ կ'արթնցնէ անոր մէջ ինքնանանաչման եւ պատասխանատուութեան ոգի եւ հպարտ զգացումներ: Այսպիսով ՀՄԸՄ կը պատրաստէ պողպատեայ կամֆի տէր երիտասարդներ:*

### ՄԵՐ ՖՈՒԹՊՈԼԻ ԽՈՒՄԲԸ

*ՀՄԸՄի ֆութպոլի խումբը, կրնամ վկայել, թէ այս վերջին տարիներուն՝ Լիբանանի ու Սուրիոյ ֆութպոլի պատմութեան մէջ եղած է զօրաւորագոյն կազմը:*

*Անոր մաս կը կազմէին.- բերդապահ Գէորգ «Էյնէշ»՝ մամուլի կողմէ, որ նկատուած է լաւագոյնը Լիբանանի եւ Սուրիոյ, կրնամ ըսել թէ իրեն կը պարտինք շատ մը յաղթանակներ: Յետապահ Սաաթնի եւ Եղիշ, անխորտակելի պաշտպանողական: Միջնապահ Կիրակոս, ժիրայր եւ Յովհաննէս Սֆանչելի: Յռոտապահ Խաչիկ եւ Սարգիս, Վարդիվառ եւ Օգսէն, Հանի Հայկ, Գէորգ «Ղարա օղլան» Մարտիրոս: Այս կազմով կրնամ ըսել որ Սուրիոյ եւ Լիբանանի ամէնէն զօրաւոր խումբին կրնանք յաղթել: Այս խաղացողները արժանացած են լաւագոյն ֆութպոլիստները կոչուելու համբաւին:*

Վերջին տարիս էր Արուեստից եւ Արեեստից պետական վարժարանին մէջ:

Կազմակերպուած էր միջարարական մրցում մը Իրաքի դէմ, որ կը վայելէր բարձր հովանաւորութիւնը Լիբանանի հանրապետութեան նախագահ՝ Պըշարա էլ Խուրիի, իր շուրջ ունենալով՝ վարչապետ Ռիատ Սուլիբ, Ազգային Կրթութեան Նախարար՝ Հապիպ Ապի Շահլան, եւ մեր վարժարանին տնօրէնը՝ Մօրիս Զուէյն: Մրցումը տեղի կ'ունենար Ամերիկեան համալսարանի խոտածածկ մարզադաշտին վրայ՝ միակ խոտածածկ մարզադաշտը Լիբանանի մէջ: Լիբանանեան գոյներով իջանք դաշտ, լիբանանեան եւ իրաքեան քայլերգները նուագեցին եւ եղաւ դրօշակներու փոխանակումը: Ապա խմբապետի հանգամանքով շուրջս հաւաքեցի տղաքը, եւ վերջին ցուցմունքներ ընելէ ետք՝ խաղը սկսաւ: Իրաքիները սկսան շատ կոշտ խաղալ. արդէն յայտնի էր՝ շատ ալ դպրոցականի չէին նմաներ. շատերը արդէն քսան հինգը անց էին: Սակայն աստիճանաբար սկսանք խաղին տիրապետել: Եկեր էին հարիւրաւոր հայեր եւ՝ «Վարդիվառ կոլ կ'ուզենք» կը պոռային, կարծես ՀՄԸՄի մէկ մրցումը ըլլար: Մեծապէս քաջալերուած տիրող մթնոլորտէն, գնդակը առի դաշտին մէջէն եւ յառաջացայ: Ոտքիս զարկին, իրաւարարը ֆաուլ սուլեց: Երեսուն մեքք հեռաւորութենէ, զօրաւոր հարուածով առաջին կոլը նշանակեցի: Իրաքիները շշմած էին, իսկ բազմութիւնը կը բացագանչէր՝ **եաիշ Լուպնան, եաիշ Վարդիվառ ...** (կեցցէ Լիբանան, կեցցէ Վարդիվառ)... Օգտուելով պահ մը իրաքիներու շշմած վիճակէն՝ երկրորդ կոլը տեղաւորեցի նոյն հեռաւորութենէն (30 մեքք): Մեր մարզիչը՝ Ատէլ Սիտանի, զիս կանչեց եւ առանց պատեհառարանութեան հրահանգեց որ ետ քաշուիմ եւ խաղամ պաշտպանողական գիծի վրայ... Ես վրդովեք էի պարզապէս... Նոյն միջոցին իրաքիները, օգտուելով մեր խառնաշփոթ փոփոխութենէն, կոլ մը նշանակեցին: Երկրորդ կիսախաղին այլեւս մէկու մը մտիկ չէի ըներ, կայծակնային յարձակողականի անցանք. ապա ճեղքելով իրենց պաշտպանողական գիծը՝ երրորդ կոլը նշանակեցինք արժանանալով բազմաձայն հուռուաներու: Մեր վարժարանի ուսանողները աշուղական երգով «Եալլա՛ ալէյիում Վարդիվառ, շուքաֆ ֆուքպոլ մըքըլ նառ եւայլն» (խալէ անոնց վրայ Վարդիվառ, ֆուքպոլի շուքոյ բոցավառ): Ասոր կը ձայնակցէին հայերը՝ «Վարդիվառ կոլ կ'ուզենք» երգելով: Զորրորդ կոլ մըն ալ նշանակեց ընկերս եւ խաղը վերջացաւ 4-1 մեր յաղթանակով: Ուսանողները դաշտ խուժեցին եւ մեզ՝ բոլոր խաղացողներս ուսամբարձ տարին պատուոյ բրիպիւնին առջեւ: Վարչապետը, կրթական նախարարը եւ մեր

տնօրէնը եկան եւ շնորհաւորեցին մեզ:

Երեկոյեան՝ փայլուն ընդունելութիւն մը սարքուած էր ծովահայեաց Հոթէլ Նօրմանտի շէնդ սրահներուն մէջ, ի պատիւ երկու խումբերուն: Մեր տնօրէնը, որ իր շուրջ ունէր խումբին մարզիչը եւ պաշտօնակիցները, զիս իր մօտը կանչեց եւ դառնալով ուսանողներուն յայտարարեց.- «Այսօրուան յաղթանակը կը պարտինք Վարդիվառին, որ նախ Լիբանանի պատիւը փրկեց, ապա մեր վարժարանին վարկը բարձրացուց: Պաշտօնապէս կը յայտարարեմ, թէ յառաջիկայ Երկուշաբթի եւ Երեքշաբթի օրերը մեր վարժարանին բոլոր ուսանողները արձակուրդ պիտի ունենան»: Ներկաները «կեցցէ»ներ արձակելով վեցնուցնեցին Վարդիվառին եւ համբուրելով շնորհաւորեցին զիս:

(Վերջը մեր մարզիչը բացատրեց ինձի, թէ վարչապետին հրահանգով է որ զիս ետեւ քաջել տուած էր որ ալ կողմ չնշանակեմ):

### ՇՐՋԱՆԱԻԱՐՏ ԱՐՈՒԵՍՏԻՑ ԵՒ ԱՐՀԵՍՏԻՑ ՎԱՐԺԱՐԱՆԷՆ 1 ՅՈՒԼԻՍ 1944 ՊԷՅՐՈՒԹ

Պէյրութի Արուեստից եւ Արհեստից պետական վարժարանը աւարտեցի 1 Յուլիս 1944ին, չորս տարի յաճախելէ ետք, շատ փայլուն արդիւնքներով: Ստացայ «MENTION BIEN» «լաւ յիշատակութիւն» կրող վկայականս՝ ուրքը մրցանակներով: Վկայականներու բաշխման հանդիսութիւնը տեղի ունեցաւ վարժարանի բակին մէջ, բարձր հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ Լիբանանի նախագահ՝ Պըշարա Խուրիի, վարչապետ՝ Ռիատ Սուլիի: Ներկայ էր նաեւ ազգային կրթութեան նախարար՝ նշանաւոր Հայիպ Ապի Շահլան: Վկայականս ստացայ ձեռամբ վարչապետին: Նկատի ունենալով որ արժանացեր էի պատուոյ գնահատանքի ուրքը մրցանակներով, իր անուամբ նուէրը տուաւ եւ կոտակելով որ հայ եմ ծագումով, հանեց իր ոսկետառ այգետումսը, ինձի տալով թրքերէն ըսաւ,- «Ձաւակս, իբր ամէնէն արժանաւոր աշակերտը այս վարժարանին, եւ մասնաւորաբար՝ միակ հայը, կը գնահատեմ քեզ. առ այս քաջութիւն, եւ ներկայացիր ինձի երբ որ պէտք ունենաս»: Պէտք չունեցայ:

Հանդիսութեան ներկայ էր նաեւ, Սուրիոյ եւ Լիբանանի հեռավայնի սպասարկութեան ֆրանսացի պատասխանատու սպան. մօտս եկաւ, շնորհաւորեց զիս եւ այցետումսը ինձի երկարելով ըսաւ.- «Երկուշաբթի կ'երթաս Transmission - Parc Telegraphique եւ կը սկսիս գործի՝ իբր մեր պաշտօնեան: Կը գնահատեմ քեզ, ելեկտրականութեան, հեռավայնի եւ ռատիո-հեռագրի միւլտիպլիկացիոն շահած մրցանակներուդ համար»: Շատ ուրախ էի՝ ապագաս ապահովուած էր. ինձմէ աւելի ուրախ էին ծնողներս, որոնք ներկայ գտնուեցան այս փառաւոր հանդի-

սուբեան: «Այսօր՝ ՀՄԸՄ խաղցաւ Թէլ Ավիվի Մաքապի խումբին դէմ, յաղթեց 3-2, իմ տեղս խաղցաւ Գամարեան»:

Աշխատելու սկսելէս քանի մը շաբաթ ետք, զիս գործով ուղարկեցին Լաթաքիա: Ամէն օր գործէ արձակուելուս՝ Լաթաքիոյ ՀՄԸՄականները, որ զիս լաւ կը ճանչնային Հալէպի միջմասնաճիւղային մրցումներէն, կու գային, եւ մենք կ'երթայինք ծովեզերք, իսկ երեկոյեան՝ ակումբ կը հաւաքուէինք եւ երիտասարդական պզտիկ խնոյքներ կը սարքէինք: Մեր ուրախ կերուխումին կը մասնակցէր նաեւ Լաթաքիոյ ծխատէր քահանան՝ յանձին Տէր Սուրէն Քհնյ. Բարսիսեանի:



ՎԱՍՅԱՎԱՆՍ DIPLOME, ECOLE DARTS et METIERS, MENTION BIEN

**ՆԻԿՈՒ ԱՂԲԱԼԵԱՆԻ ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ ՆԵՐԷՆ ՀՄԸՄ-Ի ՄԱՍԻՆ**

**Պատգամ՝ Նիկոլ Աղբալեանէ**

Բազմալատտակ գրականագէտ եւ մանկավարժ Նիկոլ Աղբալեան (Թիֆլիս 1873 - Պէյրութ 1947), որ Հայաստանի Ա. Հանրապետութեան խորհրդարանի անդամ եղած էր, եւ 1919ին Լուսաւորութեան նախարար, ՀՄԸՄի մասին հրապարակային երկու յայտարարութիւններ կատարած է, մին՝ 3 Յունիս 1943ին, իսկ երկրորդը՝ 8 Յունուար 1944ին, այս վերջինը՝ Միութեան 25ամեակին առթիւ:

Այս դասախօսութիւնները կարելի է նկատել պատգամներ, որոնք ի գորու կը մնան այսօր ալ: Խոստովանիմ, թէ Նդիշէ Մանուկեանի թելադրութեան վրայ է, որ խմբովին ներկայ գտնուեցանք այս դասախօսութեանը:

## ՀՄԸՄԻ 25 ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ ՊԷՅՐՈՒԹ - 8 ՅՈՒՆՈՒԱՐ 1944

Պիտի խօսիմ ձեզի իբր հին սերունդի անդամ, նորերուն հանդէս ինչ կրնամ ըսել եթէ ոչ գնահատել, քաջալերել, թելադրել եւ մաղթել: Մարմնակրթանքի գաղափարը եւ պահանջը պատրաստել պէտք է եւ արթնցնել խօսքով եւ գործով: Պէտք է լայնցնել ՀՄԸՄԻ հիմները ամէնուն հրաւիրելով մասնակցելու: Ազգային մեծարժէք հաստատութիւն է՝ կոթնած երիտասարդութեան կորովին: Ան պէտք է ձգտի ազգովին վերափոխել հայ ժողովուրդը՝ նկուն վիճակէն հանելով եւ առոյգ բարձունքին տանելով: ՀՄԸՄը պէտք է մարգէ երկու սեռը անխտիր, եւ երկսեռ հայութիւնը պէտք է դառնայ յենարան անոր: Ամէն ոք պէտք է գիտնայ որ մարզական կեանքը գրաւականն է վերածնունդի:

ՀՄԸՄը պէտք է ինքզինքը նկատէ հայութեան մարմնակրթութեան վարչարար, տէր ու ղեկավար, պէտք է ամէն տուն մտնէ յորդորելու, համոզելու, որ պատանի եւ երիտասարդ մարզանքի հետեւին. ծնողները պէտք է դրդեն, որ իրենց զաւակները դրկեն ՀՄԸՄԻ արիներու խումբերուն:

Այս բոլորը կը պահանջեն անդուլ եւ անձնուէր աշխատանք եւ յամառ հետապնդում: Մեծ է դերը ՀՄԸՄԻ, անհրաժեշտ է ազգային բարձր գիտակցութիւն, այսինքն՝ մեր ուժերու, մեր արժէքի, մեր նպատակի պայծառ ըմբռնում:

Յարգանք, պատկառանք աշխարհի մէջ ուժով կը ստացուի, կը պարտադրուի եւ կը ներշնչուի: Իսկ ուժեղ են առոյգը, առողջն ու կորովին: Կը հետեւի, թէ ՀՄԸՄը ազգային հիմնարկութիւնն է, եւ այս կցորդ գաղափարներէն ազգայինն է հիմնականը, հանրութեան համակրանքը ստով է պայմանաւոր եւ ստոր մէջ է հանրային արժէքը: ՀՄԸՄը հայ կորովին կազմակերպութիւնն է:

Կը յորդորեմ ներկաները անվերապահ աջակցիլ ՀՄԸՄին եւ իր բոլոր ձեռնարկներուն: Հանրութիւնն արդէն իր գիտակցութեան չափով միշտ գնահատած է ՀՄԸՄը, ստոր ապացոյցն է ներկայ բազմութիւնը, այն խանդավառութիւնը, որ կը ցուցադրուի մարզադաշտերու մէջ եւ այն համակրանքը, որ կ'արտայայտէ մամուլը:

25 տարուան ընթացքին, ՀՄԸՄը մեծ գործ տեսած է, պատրաստած է ուժ եւ հող՝ աւելի մեծ գործերու համար: Կը մաղթեմ որ ՀՄԸՄԻ գործունէութիւնը ընթանայ հին հայրենիքին զուգահեռ:

(Այսօր՝ Հ.Մ.Ը.Մ.ի 80 ամեակէն վերջ, վերի գրութիւնները նոյնքան աշխատական են):

## 1944 ՀՄԸՄԻ Ա.ԽՈՒՄԲԻՆ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ԽԱՂԱՅՈՂՆԵՐԸ

ԲԵՐԴԱՊԱՀ՝ Ձաւէն Հրթիկեան եւ Գէորգ Էյնեշլեան:  
 ՅԵՏՍԱՊԱՀ՝ Սաաթնի, Եղիշ եւ Անդրանիկ «Քարագան»:  
 ՄԻՋՆԱՊԱՀ՝ Յովհաննէս, Ժիրայր, Կիրակոս եւ Նուպար:  
 ՅԱՌԱՋԱՊԱՀ՝ Մարտիրոսեան, Վօքըր (անգլիացի), Սարգիս Ազնաւորեան,  
 Խաչիկ, Ստեփան, Մարտիրոս եւ Անդրանիկ Գամարեան:  
 ԽՄԲԱՊԵՏ Ժիրայր Ուրֆալեան:  
 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՄԲԱՊԵՏ՝ Սամուէլ Գալուստեան:

## 1944 ՀՄԸՄ -Ի Ա.ԽՈՒՄԲԻ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒՆ ԳՈՒՄԱՐԸ՝ 19

ՅԱՂԹԱՆԱԿ՝ 15 - ՀԱԽԱՍԱՐՈՒԹԻՒՆ՝ 2 - ՊԱՐՏՈՒԹԻՒՆ՝ 2

### ԿԱՐԵՒՈՐ ՄՐՅՈՒՄՆԵՐ

ԹՈՒԱԿԱՆ	ՄՐՅԱԿԵՑ ԽՈՒՄԲ	ՍՐԴԻՒՆՔ	ՊԱՆՈՒԹԻՒՆ
Յուլի. 02	Ա.Էլի	5-2	
Յուլի. 23	Ֆրանս. բանակ 2-1	Հանի - Գէորգ	
Փետր. 06	ՀՄՄ	3-1	Հանի - Գէորգ - Վարդի
Փետր. 13	Մազրաս	1-0	Գէորգ
Փետր. 20	Ռասիկ	3-0	
Մարտ 12	Ռընէսանս	3-0	Վարդի - Գէորգ - Հանի
Ապրիլ 02	Ռասիկ	2-1	Գէորգ - Հանի
Ապրիլ 09	ՀՄԸՄ՝ Նոր Գիւղ	3-1	Միշմասնան. Հալէպ
Ապրիլ 10	ՀՄԸՄ՝ Հալէպ	2-1	Վօքըր - Հանի
Ապրիլ 23	Անդրանիկ	4-1	Վօքըր 3 - Վարդիվ. 1
Յուլիս 01	Մաքսիմի Թէլ Ավիւ	3-2	
Յուլի. 16	Սիկնալս անգլ.	1-1	Հանի
Մայիս 14	Ֆրանս. բանակ 4-4		
Յուլի. 09	Մազրաս	2-3	
Մայիս 28	Բառալայ Նէյվի	3-6	8 հոգիով խաղացանք

23 Դեկտեմբեր 1944 ՀՄԸՄ ի պատգամաւորական ժողովը որոշեց մշակել ֆութպոլի յատուկ կանոնագիր-ծրագիր:



## ԼԻՔԱՆԱՆ ՀՄԸՄ ՖՈՒԹՊՈԼ

### ԳԼՈՒԽ 2

#### ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ ՀՄԸՄ-Ի ԽՈՒՄԲԻՆ

1945 – 1946 – 1947

1945-Ա. ԽՈՒՄԲԻՆ ՑՆ ՑՈՒՄԸ ԵՒ ՎԵՐԱԿԱՆ ԳԵՈՒՄԸ

ՄԵՐ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲԵՐԸ

ՍԵՓԱԿԱՆ ԴԱՇՏ

1946-ԼԻՔԱՆԱՆԻ ԱԽՈՅԵԱՆ

ՖՐԱՆՍԱ ԿԸ ՀՐԱԻՐՈՒԻՄ ՖՈՒԹՊՈԼԻ

1947- ՀՄԸՄ-ՌԱՍԻՆԿ ՄՐ ՑՈՒՄԻՆ ԱՀԱԻՐ ԿՈՒԻ ԵՒ ԲԱՆՏ





**ՀՄԸՄ 1945**  
**1930-ԱԿԱՆ ԹՈՒԱԿԱՆ ՆԵՐՈՒՆ**  
**ՀՄԸՄ-Ի Ա. ԽՈՒՄԲԸ**  
**ԿՐԵՑ ԻՐ ԱՌԱՋԻՆ ՑՆՑՈՒՄԸ**

**ԻՍԿ 1945-ԻՆ ԿՐԵՑ ԵՐԿՐՈՐԴ ՑՆՑՈՒՄԸ**

1930 թուականներին սկսեալ, ՀՄԸՄ սկսած էր աւելի լաւ կազմակերպուիլ եւ մեծ ժողովրդականութիւն վայելել ֆուլթայոլի մէջ իր յաղթական արդիւնքներով եւ սկսուտական շարքերու նախանձելի գործունէութեամբ: ՀՄԸՄի այս փայլուն պատկերը կը սկսի նախանձը շարժել յետադիմական մարդոց, որոնք կը մտածեն հարուած մը տալ ՀՄԸՄի այս յառաջդիմութեան, սկսելով ֆուլթայոլէն: Յանկարծ անվստահութեան մթնոլորտ մը կը ստեղծուի խումբի խաղացողներուն միջեւ, մութ ձեռքեր թափանցած էին ՀՄԸՄի շարքերէն ներս եւ աւեր կը գործէին: Մասամբ մը հասան իրենց նպատակին: ՀՄԸՄի ազգայնական ոգիին եւ վսեմ գաղափարին անհաղորդ քանի մը խաղացողներ լքեցին ՀՄԸՄը եւ գացին մաս կազմելու ՀԵԸԻ ֆուլթայոլի խումբին: Յիշենք մի քանիները: Եփրեմ Էլլէզեան, Արսէն Գրիգորեան, Յարութիւն Զամբէարդեան, Հրաչ Եանըզեան, Յակոբ Անեմեան, որոնք լաւ ֆուլթայոլիստներ էին: ՀՄԸՄ անմիջապէս դիմեց գոյութիւն ունեցող իրեն գաղափարակից, չափահաս որբերու «Վահագն» եւ Լիկայի «Աստղ» խումբերուն, որոնք չմերժեցին եւ միացան ՀՄԸՄի մեծ ընտանիքին: Կը յիշեմ այս աննման տղոց անունները: Լուտեր Եարտըմեան, Արմենակ Թիւֆէնկեան, Ոսկան Օհանեան, Խորէն Աւետիսեան, Հրանդ Տոստումեան, Գեղամ, Պետրոս Մէտէֆեան, Սարգիս Պատագեան, Սամուէլ Անդրանիկեան, Փայլակ Թիթոյեան, Պատրիկ Ճընկըրեան, Սարգիս Տէւէլեան եւ այլն: Ներդաշնակ եւ զօրաւոր խումբ մը մէջտեղ կը բերուի, որուն խանդավառ յառաջընթացով, մինչեւ 1940ական թուականները, ՀՄԸՄ նորէն կը սկսի ժողովուրդի խաւերէն ներս թափանցել, տարածելով իր ազգային գաղափարականութիւնը՝ «Բարձրացի՛ր Բարձրացո՛ւր» նշանաբանով, տիպար երիտասարդութիւն պատրաստելու վճռականութեամբ: Այս աշխատանքին դիմաց իբր գրաւական, քանի մը տարուան մէջ ան կ'արձանագրէ նախանձելի յաջողութիւններ՝ ի մասնաւորի ֆուլթայոլի մարզէն ներս, տիրանալով բաժակներու եւ ախոյեանական տիտղոսի:

1940 - Պէյրութի Քաղաքապետարանի բաժակ:

1943 - Լիբանանի Բաժակ (COUPE DU LIBAN):

1944 - Լիբանանի Ախոյեան (CHAMPION DU LIBAN):

1944 - ՀՄԸՄ հռչակուեցաւ Լիբանանի ամէնէն զօրաւոր խումբը, մարզական թերթերու կողմէ:

Ասոնց զուգահեռ, շատ յաջող կերպով կազմակերպուեցան ՀՄԸՄի նորոմպիական մարզախաղերը, միջմասնանիւղային ֆութպոլի եւ պասֆէթպոլի մրցումները եւ ասոնց փառապսակը հանդիսացող՝ փառապանծ տողանցքը հազարաւոր սկաուտներու եւ մարզիկներու մասնակցութեամբ, առաջնորդութեամբ՝ Հալէպի ՀՄԸՄի հարիւր հոգիները փողերախումբին:

Այս բոլորը ստեղծեցին մեր ժողովուրդին մէջ տեսակ մը հիացմունք եւ պաշտամունք ՀՄԸՄի հանդէպ:

Այս փայլուն յաղթանակներով յառաջացած անսահման ժողովրդական նուաճումները ՀՄԸՄի, անտարբեր չէր կրնար ձգել Սովետական դեսպանատունը՝ իր միջազգային ընդարձակ ցանցով եւ նիւթական լայն միջոցներով: Անմիջապէս գործի լծեց Լիբանանի իր հայ համայնավար խամանիկները, քայքայելու համար ՀՄԸՄի ֆութպոլի խումբը: Այս նպատակին իրագործման համար յառաջացուցին ֆութպոլի խումբ մը՝ Բագրամեան անունով: Ահաւասիկ նոյն պատմութիւնը կը կրկնուէր շուրջ տասնեակ տարիներ ետք: ՀՄԸՄի վսեմ ու ազգային գաղափարականին անհաղորդ՝ նոյն տեսակի խաղացողներ դարձեալ լիբանանացի ՀՄԸՄը եւ գացին Բագրամեան: Նիւթական մեծ գումարներ յատկացուեցան հետեւեալ խաղացողներուն.- Հանի Հայկ Կարմիրեան, Մարտիրոս Պալըզեան, Օգսէն Սմբատեան, Գէորգ Էյնէշլեան, Գէորգ Քէօրեան եւ հետագային՝ Ժիրայր Ուրֆալեան: Մնացին միայն ՀՄԸՄի ոգիով եւ դաշնակցական գաղափարականով թրծուած հետեւեալ նուիրեալ խաղացողները՝ Կարապետ Սաթեհեան, Եղիշէ Մանուկեան, Յովհաննէս Նազարեան, Կիրակոս Գալայեան, Սարգիս Ազնաւորեան եւ ես, ինչպէս նաեւ ուրիշ քանի մը համեստ խաղացողներ:

Արեւի լոյսին պէս յստակ էր մեզի համար, խաղացող թէ դեկավարութիւն, որ մինչեւ հիմա ՀՄԸՄի մէջ կիրարկուող գործելակերպին մէջ անտես առնուած էր Հ.Յ.Դ.ի ազգասէր եւ ազգին նուիրուելու գաղափարախօսութեան դաստիարակութիւնը, նաեւ նոյնքան կարեւորութիւն չէր ընծալուած երկրորդական խումբերուն լաւ կազմակերպման եւ սեփական դաշտ մը ունենալու անհրաժեշտութեան:

Անշուշտ մեզի համար մեծ կորուստ էր, տարիներէ ի վեր ՀՄԸՄի մէջ խաղացած եւ յառաջացած շատ լաւ վեց խաղացողներու հեռացումը մէկ օրէն միւսը: Մարդկայնօրէն ապերախտ վերաբերմունք էր, որովհետեւ անոնք լաւ խաղացող ըլլալով հանդերձ, ՀՄԸՄի հմայքով է որ անուանի դարձած էին:



### ԲԱԳՐԱՄԵԱՆ ԽՈՒՄԲԸ

*Ձախէն՝ Մարտիրոս Պալըզեան (ՀՄԸՄ), Գէորգ Էյնեշլեան (ՀՄԸՄ), Կարպիս Սարաֆեան (ԱՆԴՐԱՆԻԿ), ումն, Բարգէն Պոյանեան (ԱՆԴՐԱՆԻԿ), Օգսէն Սմբատեան (ՀՄԸՄ), Հանի Հայկ Կարմիրեան (ՀՄԸՄ), Գէորգ Քէօրեան (ՀՄԸՄ), ումն, Երուանդ Էլլէզեան (ԱՆԴՐԱՆԻԿ) եւ Գրիգոր Պէմէզեան (ԱՆԴՐԱՆԻԿ):*

### ՀՄԸՄ-Ի Ա. ԽՈՒՄԲԻՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ 1945

*Բարեբախտաբար կորիզը կը մնար, կազմուած հաւատաւոր նուիրեալներէ: Տուն տեղ մոռցած՝ գործի լծուեցանք ՀՄԸՄի վայել եւ ներկայանալի խումբ մը մէջտեղ բերելու նուիրական առաքելութեամբ: Կը վայելէինք վարչութեան ամբողջական վստահութիւնը, նաեւ մեր ժողովուրդին քաջալերանքը եւ անսակարկ գոհողութիւնը մեզի, որպէսզի դարձեալ կարենայինք գրաւել ՀՄԸՄին արժանի երբեմնի դիրքը Լիբանանի ֆութպոլի մարզէն ներս: Խմբապետ ընտրուեցայ, գիտակցելով ծանր պատասխանատուութեան, կ'ուզէի արժանաւորապէս կատարել ինծի վստահուած այս պարտականութիւնը: Կը ծրագրէի ընելիքս խորհրդակցաբար՝ Սաաթնիի եւ Նդիշի, եւ գործակցաբար իմ անձնուրաց խաղընկերներուս՝ Յովհաննէսի, Կիրակոսի եւ Սարգիսի հետ: Խաղացողի փնտոտուիքն համար, առաջին հերթին դիմեցինք Պուրն Համուտի ՀՄԸՄին, շտեմարանը մեր ապագայի ֆութպոլիստներուն, որ սիրով տրամադրեց մեզի աչքի զարնող հետեւեալ խաղացողները՝ Սեւ Սարգիսը, Աւետիս Զալեանը, Յակոբ Վարժապետեանը, Ներսէսը եւ Վարուժանը. ապա մեր երկրորդական խումբերէն ունեցանք՝*

Մանուէլ Ալթունեան, Ռայաֆի ՀՄԸՄԷն՝ Օննիկ Պալբֆենեանը, (Լիբանանի հեծելարշաւի նախկին ախոյեան), Դամասկոսի ՀՄԸՄԷն հոշակաւոր բերդապահ՝ Տիգրան Արապեան, Տրդատ Փանոսեան, Արթիւնիկ եւ Զելլօ Վարդան: Իսկ Հալէպի ՀՄԸՄԷն բերինք Վազգէնը, Ստեփանը եւ Համագասարը:

Իսկապէս մեծ անակնկալ մը եղաւ մեզի համար, երբ անուանի երկու խաղացողներ՝ Ժոզէֆ Նալպանտեան եւ Ժորժ Շատարեւեան, որոնք տեղացի արար շրջանակի մէջ մեծցած էին եւ յանախած արարական վարժարաններ, եկան եւ միացան մեզի: Իբր արժեքաւոր ֆութպոլիստներ, անոնք մաս կազմած էին տեղական անուանի մեծ խումբերու եւ քանիցս մասնակցած՝ Լիբանանի ազգային խումբին: Իրենց այս ինքնաբերական մասնակցութիւնը ՀՄԸՄին, մեծ նշանակութիւն կը ստանար մեր աչքերուն, նաեւ հանրային կարծիքին համար՝ իբր զօրակցութիւնը իր խորհրդանշական բացայայտ իմաստովը: Արդեօք իրենց հայու արեան ճա՞յնն էր, որ մղեց զիրենք գալու ՀՄԸՄին, ի մասնաւորի այս նեղ օրերուն:

Բաւական խաղացողներ ունեցանք տարբեր շրջաններէ, տարբեր թէքնիքով, որով խմբային խաղարկութեան մէջ ներդաշնակութեան պակասը զգալի էր: Լծուեցանք շատ խիստ փորձերու: Ամէն շաբաթ մրցումներ ունեցանք ֆրանսական եւ անգլիական բանակային խումբերու հետ:



ՀՄԸՄ-ի ՎԵՐԱԿԱԶՄՈՒԱԾ ԽՈՒՄԲԸ 1945

Զախէն ոսֆի՝ Անդրանիկ, Յովհաննէս, Եղիշ, Արմէն եւ Գէորգ (Հալէպէն) եւ Վարդիվառ:

Զախէն ծոած՝ Սարգիս, Կիրակոս, Տիգրան, Ստեփան եւ Մանուէլ:

## ՎԵՐՋԱՊԷՍ ՀՄԸՄ-Ի ՎԱՅԵԼ ԵՒ ՆԵՐԿԱՅԱՆԱԼԻ ԽՈՒՄԲ ՄԸ ՄԷՋՏԵՂ ԲԵՐԻՆՔ - 1945

Ներգաղթի օրերուն հայ համայնավարներուն շղթայագեր ծած աղտոտ պայթարը ձախողեցաւ: Ընդհակառակը՝ ՀՄԸՄի շարքերը աւելի խտացան, իսկ ֆուլբայոլի խումբը սկսաւ արձանագրել հետեւեալ փայլուն յաղթանակները.

24 Յունիս 1945ին յաղթեցինք հզօր Ռընէսանսին՝ 7-1 արդիւնքով, որ ախոյեանական դասաւորման մէջ առաջին էր: Մեր այս յաղթանակով ՀՄՄ Լիբանանի ախոյեան հռչակուեցաւ:

15 Յուլիս եւ 5 Օգոստոս 1945ին յաղթեցինք ախոյեան ՀՄՄ-ին:

30 Դեկտեմբեր 1945ին յաղթեցինք Կիպրոսի ախոյեան ԷԲԱին՝ 1-0 արդիւնքով:

Այս մրցումը կը հովանաւորէր Լիբանանի վարչապետ՝ Սամի Սուլի:



### ՎԵՐԱԿԱՆԳՆԱԾ ՀՄԸՄ-Ի ԿԱԶՄԸ 1945

Չախէն ոտֆի՝ Համազասպ եւ Յակոբ Աֆարեան (Հալէպէն), Աւետիս Չալեան, Վարդիվառ, Յովհաննէս Նազարեան, Ստեփան (Հալէպէն), Յովհաննէս, Ժիրայր Ռըֆայեան, Կիրակոս Գալայեան եւ Սաաթնի (խմբապետ):

Առջեւը ծռած՝ Ժոզէֆ Նալպանտեան (բերդապահ):

**ՀՄԸՄ-Ի ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲԵՐՈՒ  
ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ՝  
ԱՒԵԼԻ ԼՈՒՐՋ ԵՒ ԱՄՈՒՐ ՀԻՄԵՐՈՒ ՎՐԱՅ**

Մեր ուշադրութեան առարկան էր ուրիշ կարեւոր հարց մը՝ ստիպողական բնոյթով: Երբ մեր շուրջ նայէինք, կը ստուգէինք թէ մեզ փոխարինելու ի վիճակի եղող խաղացողներ չկային: ՀՄԸՄի Պէյրութի եւ Պուրն Համուտի վարչութիւնները, խումբ մը խաղացողներուս դիմումին վրայ, շատ կարեւոր ժողով մը գումարեցին, ներկայութեամբ հին ու նոր ֆութպոլիստներու եւ պատասխանատուներու: Ժողովը որոշեց յառաջացնել կեդրոնական յանձնախումբ մը, որուն առաջնահերթ առաքելութիւնը պիտի ըլլար գործադրել հետեւեալ հիմնական սկզբունքները.

**ԱՌԱՋԻՆ** Պէյրութի եւ Պուրն Համուտի թաղային շրջաններու մէջ յառաջացնել ՀՄԸՄի երկրորդական խումբեր եւ ասոնց վարիչ - մարզիչ նշանակել այդ շրջանը բնակող Ա.խումբի խաղացող մը:

**ԵՐԿՐՈՐԴ** Կազմակերպել ախոյեանական մրցաշարքեր եւ յաղթական խումբը վարձատրել գեղեցիկ բաժակով մը:

**ԵՐՐՈՐԴ** Կազմակերպել դասախօսութիւններ՝ մարմնակրթանքի, ազգային եւ հայրենասիրական նիւթերու, ինչպէս նաեւ ֆութպոլի գիտելիքներու մասին: Այս վերջինին համար հրաւիրել անուանի վաստակաւոր ֆութպոլիստներ:

Կը հաւատայինք պատրաստել ապագային տիպար ֆութպոլիստներ, ՀՄԸՄի մարզական ռզիով թրծուած՝ «Բարձրացի՛ր-Բարձրացո՛ւր» գեղեցիկ նշանաբանով եւ ազգային ու հայրենասիրական գաղափարներով դաստիարակուած:

Արդէն որոշեցինք գոյութիւն ունեցող խումբերը հրաւիրել եւ՝ իբր կորիզը երկրորդական խումբերու, սկսիլ մեր կազմակերպչական աշխատանքը:

**ՀՄԸՄ-Ի ՖՈՒԹՊՈԼԻ ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ ԿԱԶՄԸ**  
Ժօզէֆ Նալպանտեան՝ ՀՄԸՄի Ա. խումբի մարզիչ:

Յովհաննէս Տէր Յարութիւնեան՝ Պուրն Համուտի ՀՄԸՄի վարչական եւ խումբի խմբապետ:

Վարդիվառ Յովհաննէսեան՝ Պէյրութի ՀՄԸՄի Ա խումբի խմբապետ:

**ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ (1998ին)**

ՀՄԸՄական եղբայր մը, որ տարիներով Շրջանային Վարչութեան մաս կազմած է, կը պատմէ հետեւեալը՝ պատահած 50ական բուսականներուն:

«Մեր թաղին մէջ լուր տարածուեցաւ, որ եղբայր Վարդիվառը ակումբ պիտի գար դասախօսութեան համար: Աննկարագրելի ուրախութիւն մը պատեց մեզի՝ շրջանի պատանիներու: Ժամադրութենէն քանի մը ժամ առաջ արդէն ակումբը լեցուցած էինք, կը սպասէինք զինք: Վերջապէս հասաւ եղբայր Վարդիվառը: Սկսաւ աշխուժօրէն եւ խանդավառ պատմել ՀՄԸՄի ֆուֆպոլի մրցումներէն եւ տարած յաղթանակներէն: Ուշադիր մտիկ կ'ընէինք զինք: Զիմացանք ժամանակը ինչպէս անցաւ: Վերջաւորութեան՝ միաբերան խնդրեցինք որ դարձեալ գար»:

## ՀՄԸՄ-Ի ՍԵՓԱԿԱՆ ՄԱՐԶԱԴԱՇՏԻ ՄԸ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ

1942ին, Պէյրութի Քարաֆոյ Տրուզ թաղամասին մէջ մեր ունեցած ֆուֆպոլի դաշտը գրաւուեցաւ ֆրանսական բանակի կողմէ՝ պատերազմի պատճառով, եւ մնացինք առանց դաշտի, որ շատ անհրաժեշտ էր մեր երկրորդական խումբերը մարզելու համար: Յարմար դաշտի մը փնտրուտուքի համար Յովհաննէս, Կիրակոս, Սարգիս եւ ես գացինք Տորայէն անդին, ուր միայն պարտէզներ կային, որեւէ շինութիւն չկար (մենք կը բնակէինք Տորա Ամանոս թաղը): Ֆուֆպոլի դաշտի յարմար քանի մը հողամասեր գտանք, մատչելի գիներով, քարտէսները առինք, ուրախութեամբ վագեցինք վարչութեան մօտ, տեղեկացուցինք այս լուրը...

Յուսախար եղանք: Բացարձակ անտարբերութիւն վարչականներու կողմէ, որոնք մեզի բացէ ի բաց հասկցուցին, թէ քաղաքի մարդիկը կը նախընտրէին առանց դաշտի մնալ, քան Տորայի կամ Պուրն Համուտի կողմերը երթալ:

Մենք չյուսահատեցանք: Իմացեր էինք, որ Քօրնիշ՝ Նահրի վրայ, ուր ժեզուիթները ֆուֆպոլի զոյգ դաշտեր ունէին, վարի դաշտը ծախու էր: Անմիջապէս դիմեցինք եղբայր Յակոբ Խուպեսերեանին՝ ՀՄԸՄի շրջանային վարչութեան անդամ, ֆուֆպոլիստներու սրտակից եւ մեզի հետ համաձայն ֆուֆպոլի դաշտ մը ունենալու, ուր որ ըլլար այդ դաշտը: Միասին գացինք ժեզուիթներու ֆրանսացի մեծաւորին քով, եւ մեր գալուն պատճառը հասկցուցինք իրեն (որովհետեւ եղբայր Յակոբը ֆրանսական AFP լուրերու գործակալութեան փոխ-տնօրէնն էր): Մեծաւորը մեզի բացատրեց դաշտին առաւելութիւնները ֆուֆպոլի եւ ուրիշ մարզական բոլոր խաղերու համար, իսկ մենք արդէն ծանօթ էինք դաշտին, մեր փորձերը հոն կ'ընէինք, ինչպէս նաեւ՝ մեր երկրորդական խումբերու մրցումները: Մեծաւորը յստակօրէն մեզի ըսաւ, - «Կը նախընտրեմ ՀՄԸՄի պէս տիպար մարզական միութեան մը ծախել այս դաշտը: Գինը՝ հարիւր հազար լիբանանեան ոսկի»:

Ուրախութեամբ գացինք աւետեցինք այս լուրը մեր վարչականներուն: Այս անգամ ալ առարկեցին, թէ շատ սուղ էր... եւ այսպէս՝ մենք մնացինք առանց դաշտի:

*Ես վստահօրէն կրնամ վկայել, թէ այդ օրերուն, մեր բազմահազար համակիրները անպայման այդ գումարը կրնային հայթայթել եւ այդ շատ յարմար դաշտը գնել:*



**ԽՄԲԱՆԿԱՐ ՀՄԸՄ - ՖՐԱՆՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՀԱԻԱՔԱԿԱՆԸ**  
*Աջին ոտքի՝ վարդիվառ եւ Հալէպի հռչակաւոր Արտաւազդը...*

**24 ՅՈՒՆԻՍ 1945-ին**  
**ՀՄԸՄ-ի ՎՃՌԱԿԱՆ ԽԱՂԱՐԿՈՒԹԵԱՄԲ**  
**ՓԱՌԱՒՈՐ ՅԱՂԹԱՆԱԿ ՄԸ ՏԱՐԻՆՔ**  
**ՌԸՆԵՍԱՆՍԻՆ ՎՐԱՅ 7-1 ԱՐԴԻՒՆՔՈՎ ԵՒ**  
**Հ.Մ.Մ. ՀՈՉԱԿՈՒԵՑԱԻ ԼԻԲԱՆԱՆԻ ԱԽՈՅԵԱՆ**

*1945ին Ռընեսանսն էր Լիբանանի գօրաւորագոյն խումբը: Ախոյեանական մրցաշարքի ընդհանուր դասաւորման մէջ կը գրաւէր առաջին դիրքը, իսկ երկրորդը՝ ՀՄՄ: ՀՄԸՄի եւ Ռընեսանսի միջեւ կայանալիք մրցումի արդիւնքէն կախեալ էր Լիբանանի ախոյեանին նշանակումը: Եթէ նոյնիսկ ՀՄԸՄ հաւասարութեան արդիւնք մը ձեռք ձգէր, Ռընեսանս ախոյեան պիտի դառնար:*

*Միւս կողմէ, մեր խումբին վերջին ցնցումներէ ետք, մենք տակաւին նոր վերակազմուած էինք, եւ այս պատճառով մեզի դժուար կը թուէր Ռընեսանսին յաղթել. այսուհանդերձ, պէտք էր յաղթէինք: Մեր վարչութիւնը խստօրէն հրահանգեց մեզի, ի գին ամէն զոհողութեան, անպայման յաղթել:*



Յստակօրէն պարզ էր, որ եթէ պարտուէինք, ՀՄՄի մարդիկը պիտի ըսէին, թէ մասնաւոր նպատակով պարտուեցանք, որպէսզի ՀՄՄ ախոյեան չդառնար:

Մինչ մեզի համար՝ կարեւորը հայկական խումբի մը ախոյեան դառնալն էր:

Կիրակի 24 Յունիս 1945, առաօտեան ժամը իննին դաշտ իջանք ամէն գնով յաղթելու վճռականութեամբ: Առաջին անգամ ըլլալով, հայ ժողովուրդը միաբերան «կեցցէ ՀՄԸՄ - ՀՄԸՄ կոլ կ'ուզենք» բացագանջելով կը թնդացնէին ամէն կողմ: Հետաքրքրական երեւոյթ էր տեսնել ՀՄԸՄի եւ ՀՄՄի համակիրները, որոնք խանդավառ հուռոտանքով միասնաբար մեզ կը դիմաւորէին: Խաղին սկիզբը, իբր խմբապետ, տղաքը հաւաքեցի շուրջս եւ թրիպիւններու մէջէն հայ ժողովուրդին խանդավառութիւնը ցուցնելով ըսի իրենց.

- «Նայեցէ՛ք, սա մեր սփանջելի ժողովուրդին, մեր համակիրները եւ ՀՄՄի համակիրները, ամէնը միաբերան, մէկ սիրտ, մէկ հոգի՛ կը պոռան,- «ՀՄԸՄ կոլ կ'ուզենք».- վայ մեզի, եթէ յուսախար ընենք այս ժողովուրդը: Մեր հայու եռանդուն խանդավառութեամբ եւ ՀՄԸՄի ոգիով խաղալը մեզի համար կրկնակի առաւելութիւններ են, ամբողջ ուժով, խաղալով առիւծի պէս եւ կայծակնային արագութեամբ, անպայման կը յաղթենք, միշտ յարձակողական դիրքերու վրայ, նաեւ մի մոռնա՛մ մեր նշանաբանը՝ ՄԵՌՆԻԼ ԿԱՅ, ՅԱՂԹՈՒԻԼ ԶԿԱՅ»:

Եւ ճիշդ այդպէս ալ խաղացանք: Առաջին վայրկեաններուն իսկ, ամբողջ ուժովս քսանը հինգ մեթրէն քաշելով նշանակեցի երկու կոլեր, երրորդ կոլը չուշացաւ: Ատր վրայ, հզօր Ռընեսանսիս հսկայ խմբապետը՝ էմիլ Նասսար, եկաւ մօտս եւ ըսաւ.- «Վարդիվառ, այսփան լաւ խաղալդ չէի տեսած»:

Խաղը վերջ գտաւ 7-1՝ մեր յաղթանակով: Խորտակուած էր Ռընեսանսը: Անպայման յաղթանակելու ուխտս կատարուած էր այդ օր: Այսպէս՝ ՀՄԸՄի յաղթանակով ՀՄՄ հռչակուեցաւ Լիբանանի ախոյեան: Խաղի աւարտին, ՀՄՄի վարչականները եկան եւ շնորհաւորեցին մեզ ըսելով թէ՛ «ՀՄԸՄ այսփան վճռական խաղ չէր խաղացած»: Իսկ ես ալ իրենց պատասխանեցի թէ՛ «Այսպիսի կացութեան մը առջեւ եթէ գտնուելու ըլլա՛մ օր մը օրանց, կ'ակնկալենք նոյնպիսի վերաբերմունք մեր կողմէ»:

Յաջորդ օր թերթերը գրեցին, թէ ՀՄԸՄ այս եղանակին իր լաւագոյն խաղը ցուցաբերեց: Իսկ մենք, ՀՄԸՄի վարչական եւ խաղացող, ունէինք հոգեկան մեծ բաւարարութիւնը՝ հայու ազգային պարտականութիւնը կատարած ըլլալուն...

L'ORIENT ՕՐԱԹԵՐԹԻ ՄՐՑԱՇԱՐՔԸ  
ՀՄԸՄ - ՌԱՍԻՆԿ ՅԱՂԹԵՑ  
ՌԸՆԵՍԱՆՍ - ՍԱԺԵՍԻ 1-0 ԱՐԳԻՒՆԻՔՈՎ

Գրեց Եղիշ «Ազդարար»ի մէջ

10 Յունիս 1945ին կայացաւ «L'Orient» օրաթերթին կազմակերպած մրցաշարքին եզրափակիչ հանդիպումը, ՀՄԸՄ-Ռասինկ հաւաքականը կը խաղար Ռընեսանս-Սաժէս հաւաքականին դէմ: Դաշտը լեցուն էր չորս խումբերու բազմահազար համակիրներով, որոնց մէջ հայերը մեծամասնութիւն կը կազմէին: Մրցումը սկսաւ շատ հետաքրքրական եւ շատ լաւ մարզական ոգիով: Ռընեսանս-Սաժէս հաւաքականը սկսաւ տիրապետել եւ բաւականին վտանգաւոր իջուածքներ ունեցաւ, բայց մեր նշանաւոր բերդապահ Նալպանտեանին խիզախ կեցուածքը եւ հրաշալիօրէն շատ վտանգաւոր գնդակներ ազատելը, միեւնոյն ատեն մեր անհման Սաաթնիին անթափանցելի պաշտպանողականը, ի դերեւ հանեցին դիմացինին ջանքերը: Շատ լաւ խաղարկութեամբ եւ առանց միջադէպի վճիռչացաւ աւաչին կիսախալը՝ 0-0 արդիւնքով: Նրկորդ կիսախաղին սկսաւ սփանջելի երրեակ բասարկութիւն՝ Վարդիվառ - Ժիրայր - Սալէհ, որուն յաջորդեց հակառակորդ բերդին սարսափելի ուժբալոծումը, Վարդիվառին ռումբի պէս հարուածներով: Ժիրայրին մէկ ուժեղ հարուածը յաղթանակի կէտը արձանագրեց՝ 1-0 արդիւնքով:

L'ORIENT Թերթին կողմէ, Տիգրան Թոսպաթ, սոյն Թերթին խմբագիրը, յանձնեց երկու բաժակներ ՀՄԸՄի եւ ՌԱՍԻՆԿի խմբապետներուն: Մեր կազմը.

ՀՄԸՄէն՝ Նալպանտեան, Սաաթնի, Յովհաննէս, Ժիրայր եւ Վարդիվառ:  
ՌԱՍԻՆԿէն՝ Մաթթա, Հանի, Անթուն, Ապոս, Մուրատ եւ Էլի Հատտատ:

«Հոս կ'ուզեմ արձանագրել որ մեր յարաբերութիւնները շատ լաւ էին Ռասինկի հետ, եւ յաճախ երկու խումբերու խառն կազմով միջազգային մրցումներ կ'ունենայինք»:

ԵՈՒԿՈՍԱԽ «ՀԱՅԳՈՒԿ» ԽՈՒՄԲԻՆ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ-ՄԱՅԻՍ 1945

«Հայդուկ» խումբը ինը մրցումներ ունեցաւ Սուրիոյ եւ Լիբանանի մէջ, նաեւ զօրաւոր Բագրամեանին յաղթեց՝ 8-1 արդիւնքով, Հալէպի ՀՄԸՄին յաղթեցին՝ 3-1 արդիւնքով: Իսկ յաղթեցին ՀՄԸՄ - Ռասինկ խառն խումբին միայն՝ 3-2 արդիւնքով, որուն մասին իրենց մարզիչը քսաւ. «Այս խումբը գտանք ամէնէն ներդաշնակ խումբը Սուրիոյ եւ Լիբանանի մէջ»:

ՀՄԸՄէն կային՝ Նալպանտեան, Սաաթնի, Յովհաննէս, Ժիրայր, Վարդիվառ եւ Ստեփան, իսկ Ռասինկէն կային հինգ խաղացողներ:



ՀՄԸՄԵԻ ՌԱՍԻՆԿ ԸՆԳՂԷՄԵՆՈՒԿՈՍԱԿԻ «ՀԱՅԳՈՒԿ» ԽՈՒՄԲԻՆ

### 1945 ՀՄԸՄ-Ի ԽՈՒՄԲԻՆ ԳԺՈՒԱՐԻՆ ՕՐԵՐՈՒՆ ԺՈՁԷՖ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ ԵՒ ԺՈՐԺ ՇԱՏԱՐԵԻԵԱՆ ԵԿԱՆ ՄԻԱՅԱՆ ՄԵՉԻ

Պարտք կը գգամ, իբր ՀՄԸՄական եւ այդ տարիներու խումբին խմբապետը, երախտագիտական եւ գնահատանքի զգացումներս արձանագրելու հոս, այս երկու վեհոգի եւ հարազատ հայ մարզիկներու յիշատակին, որոնք իրենց յօժար կամֆով եկան միացան մեզի՝ մեր նեղ օրերուն: Պարագաներու բերումով, ապրած էին առաւելաբար արարական շրջանակի մէջ եւ յանախած արարական դպրոցներ: Մաս կազմած են լիբանանեան լաւագոյն խումբերուն, Ռընեսանս, Ռասինկ, DPHB, Հիլմի Սփոր: Լիբանանի ազգային խումբին մէջ Նալպանտեան եղած է լաւագոյն բերդապահը, իսկ Շատարեւեան՝ միջնապահ եւ յառաջապահ գիծերու վրայ աչառու խաղացող:

Իրենց այս ինքնաբերական վերածնունդը իբր հայ, մեծ նշանակութիւն կը ստանար ընդհանրապէ՛ս մեր ժողովուրդին մօտ, իսկ մասնաւորապէ՛ս բոլոր ՀՄԸՄականներու մօտ: Արդեօք իրենց արեան հայու ճա՞նն էր, որ գիրենք մղեր էր միանալու ՀՄԸՄին, տագնապալի այս նեղ օրերուն:

Նալպանտեան խաղաց իբր բերդապահ, յետոյ իր ամբողջ կեանքին տեւողութեան մարզեց խումբը ամենայն զոհողութեամբ եւ ամբողջական նուիրումով, առաջնորդելով ՀՄԸՄը բազմաթիւ յաղթանակներու եւ ախոյեանական փառապանծ տիտղոսներու: Տարիներ շարունակ մասնակցեցաւ ՀՄԸՄի երկրորդական խումբերու կեդրոնական յանձնախումբին եւ մաս կազմեց Պէյրութի վարչութեան: 1950ին Լիբանանի Ազգային խումբին մարզիչ նշանակուեցաւ: Հրաւիրուեցաւ ստանձնելու Պուրն Համուտի Քաղաքապետարանի մարզադաշտին պատասխանատու տնօրէնի պաշտօնը:





*Ժորժ Շատարեւեան, իր հերթին, իր թանկագին մասնակցութիւնը բերաւ յատկապէս 1946ի, 1948ի եւ 1951ի ՀՄԸՄի վերելին, հասնելով ախոյեանական տիտղոսներուն: 1951ի վերջաւորութեան, տարիքի բերումով քաշուեցաւ ֆութպոլի ասպարէզէն:*

## ՀՄԸՄ - BEIRUT SERVICES

(Անգլիական Բանակ)

«Ազդարար»ի մէջ գրեց՝ Եղիշ

4 Փետրուար 1945՝ Քաղաքացիական պատերազմի ընթացքին զաշտը հազարաւոր բազմութիւն: Կարգապահութիւնը յանձնուած է ՀՄԸՄի սկաուտներուն, որոնք հիացում պատճառեցին ներկայ բարձրաստիճան անձնաւորութիւններուն եւ անգլիացի սպաներուն:

Շատ կարեւոր մրցում, ներկայութեամբ՝ Լիբանանի ներքին գործոց նախարարին:

Առաջին կիսախաղին՝ ՀՄԸՄ տիրապետեց դաշտին վրայ, իսկ վերջին քսան վայրկեաններուն՝ անգլիացիները իշխեցին: ՀՄԸՄ խաղցաւ լաւագոյն խաղերէն մին, նշանակեց իր միակ կէտը, նոյնիսկ Վարդավառի նեղոդ խոյանքը եւ ոչ ալ Յակոբի հրաշալի դարձրածները օգնեցին: Անգլիացիները շատ տոկուն խաղարկութիւն ցուցաբերեցին: Ամբողջ ծանրութիւնը բեռցուեցաւ ՀՄԸՄի յետասպահ գծին, որ շատ լաւ տոկաց: Հրաշքներ գործեց Նալպանտեան, քանի մը անգամ փրկելով մեր բերդը: Արդիւնքը եղաւ ի վնաս մեզի՝ 1-3:



Զախէն ոտքի՝ Սաաթի, Յարութիւն Մարտիրոսեան, Կիրակոս Գալայնեան, Ժոզէֆ Նալպանտեան, Զաւէն Հրթիկեան, Եղիշէ Մանուկեան եւ Վարդիվառ:

Զախէն ծոած՝ Անդրանիկ Մկրտիչեան, Յովհաննէս Նազարեան, Ժիրայր Ուրֆալեան եւ Ստեփան Մելիքսեթեան:

ՀՄԸՄԻ ԿԱԶՄԵՐԷՆ ՄԷԿԸ  
ԼԻԲԱՆԱՆԻ ԲԱԺԱԿՈՎ՝ 1945

ՀԱՐԱ-Ի ՎԵՐԱԿԱԶՄՈՒԱԾ ԽՈՒՄԲԻՆ ԿԱԶՄԵՐԸ 1945



*Զախէն ոտփի՝ սիվիլ մը, Սարգիս, Արթինիկ (Դամասկոսէն), Ստեփան, Մանուէլ, Վարդիվառ, Տրդատ, Սեւ Սարգիս եւ Ժիրայր (վերջին մրցումը՝ յետոյ գնաց Բագրամեան):  
Զախէն ծոած՝ Եղիշ, Նալպանտեան եւ Զելլօ Վարդան (Դամասկոսէն):*



*Զախէն՝ Շահինեան, Վարդիվառ (խմբ.), Տիգրան - Մանուէլ, Ստեփան, Լեւոն, Տրդատ, Յակոբ Վարժապետեան, Յովհաննէս, Գամարեան, Սարգիս եւ Շատարեւեան:*

ԵՐԿՈՒ ՅԱՂԹԱԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐ ԼԻՖԱՆԱՆԻ  
ԱԽՈՑԵԱՆ ՀՄՄ-Ի ՀԵՏ

15 Յուլիս եւ 5 Օգոստոս 1945՝ Սահակեան դաշտը

ՀՄՄ 1945ի Լիբանանի ախոյեան էր: Ֆութպոլի եղանակի վերջա-  
ւորութեան ուզեցին մեզի հետ երկու մրցումներ կազմակերպել, մուտքի  
հասոյթներու գումարով իրենց Սահակեան դաշտին վարձքի յետնեալ  
պարտքը գոցելու համար: Առաջին մրցումին՝ սկիզբէն վեռական խաղի  
սկսանք. արդէն որոշած էինք անպայման յաղթել, որովհետեւ խաղէն  
առաջ շատ մը տեղեր յոխորտացեր էին որ ՀՄԸՄին շատ դիւրութեամբ  
կրնան յաղթել, շատ շուտ մոռնալով որ ՀՄԸՄի շնորհիւ է, որ իրենք  
ախոյեան դարձած էին: Կայծակնային յարձակումի անցանք եւ մեր  
անգսպելի իջուածքներով խաղը վերջացուցինք 5-2 փայլուն յաղթանա-  
կով: Փոխ վրէժի մրցումին շատ վեռական եւ տաք խաղ եղաւ, երկու  
կողմէ համահաւասար: Այս ձեւով՝ առաջին կիսախաղը վերջացաւ 2-2  
հաւասար արդիւնքով: Երկրորդ կիսախաղին՝ մեր պաշտպանողական  
գիծը՝ Նալպանտեան, ժայռի պէս Սաաթեհին եւ եկուն Յովհաննէսը  
հրաշքներ գործեցին: Վերջին վայրկեաններուն, ձախ ծայրէն Սարգիսը  
առաւ գնդակը եւ խոյանքով յառաջանալով, ռումբի պէս հարուածով  
նշանակեց յաղթանակի կոլը: Խաղը վերջացաւ այս մեր երկրորդ  
յաղթանակով ՀՄՄի վրայ, փաստելով մեր գերակայութիւնը ֆութպոլի  
մարզէն ներս, 3-2 արդիւնքով:



ՍԱԱԹՃԻ ԵՒ ԵՂԻԾ - ՀՄԸՄ-Ի ԱՆԵՆՈՐՏԱԿԵԼԻ ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ Ը  
ՍԱԱԹՃԻՆ ԻՆՔՆԱՏԻՊ ԹԻԻԶՔՈՎ ՕԴԻՆ ՄԷՋԷՆ ԿԱԶԱՏԷ ԳՆԴԱԿԸ  
(ՊԷՅՐՈՒԹԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԴԱՇՏԸ)

ՀՐԱԺԵՇՏ ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ՍԱԱԹՃԻՒՆ  
 ՀՄԸՄ-ի ՏԱՐԵԿԱՆ ԽՆՃՈՑՔԻՆ  
 ԱՅՆ - ՆԷՊԻ ԱՆԹԻԼԻԱՍ - 8 ՅՈՒԼԻՍ 1945

ՀՄԸՄի վարչութիւնը, ֆութպոլի եղանակի վերջաւորութեան, խրախ-  
 նանք մը սարքեց ի պատիւ ֆութպոլիստներուն, Անթիլիասի Այն-Նէպի  
 ակնադբիւրին մօտ: Ներկայ էին նաեւ մեր վարչականները եւ մեր  
 սիրելի ընդհանուր խմբապետ՝ Սամուէլ Գալուստեան: Շատ ուրախ եւ  
 խանդավառ մթնոլորտի մէջ անցուցինք այս ճաշկերոյթը, որովհետեւ

ֆութպոլի շատ դժ-  
 ւար, բայց յաղթական  
 եղանակ մը անցու-  
 ցինք: Վարչութիւնը  
 շնորհաւորեց բոլոր  
 խաղացողները, մա-  
 նաւանդ՝ Սաաթինն,  
 որ ֆութպոլի ասպա-  
 րէզէն պիտի քաշուէր՝  
 տարիքի բերմամբ:  
 Սաաթինն (Կարապետ  
 Սաաթըրեան) եղած  
 էր՝ բառին բուն առու-  
 մով, տիպար ՀՄԸՄ-  
 կան, հռչակաւոր  
 ֆութպոլիստ, սկսեալ  
 Հալէպի ՀՄԸՄէն,  
 անցնելով Դամաս-  
 կոսի չեքեքներու



ԽՄԲԱՊԵՏ ՍԱԱԹՃԻ ԿԸԽՄԷ ՀՄԸՄ-ի  
 ՓԱՌԱՊԱՆԾ ԱՆՑԵԱԼԻՆ  
 ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐՈՒՆ ԿԵՆԱՑԸ,  
 ՄԱՂԹԵԼՈՎ՝ ԱՊԱԳԱՅԻՆ ՆՄԱՆ  
 ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐ

նշանաւոր խումբին եւ Դամասկոսի ՀՄԸՄին, ուր փառաւոր  
 յաղթանակներ արձանագրելէ ետք՝ կը հասնէր Պէյրութ, եւ ՀՄԸՄի  
 հսկաներու խումբին կ'ընծայէր իր առաջին տիտղոսը, շահելով  
 Պէյրութի Քաղաքապետարանի բաժակը՝ 1940ին: Այսպէս՝ տասնեակ  
 մը տարիներ փայլած է ՀՄԸՄի մէջ եւ պանծացուցած ՀՄԸՄի դրօշակը:

Այս երկար շրջանին հիացած են իր վրայ ֆութպոլի տեղացի թէ հայ  
 սիրահարներ, իբր օրինակելի եւ տիպար մարզիկ: Այսօր վերջ կը դնէ իր  
 ասպարէզին, ՀՄՄի դէմ երկու փառաւոր յաղթանակներ տանելէ ետք: Իր  
 կենացը խմելով բաժնուեցանք մեր բոլորին սիրելի Սաաթինէն:

1945-ի ԿՈՒԹՊՈՒԼԻ ԵՂԱՆԱԿԻՆ ՎԵՐՋԱԻՈՐՈՒԹԵԱՆ



ՀՈՍ ԱԼ ՆՈՐԸՆՏԻՐ ԽՄԱՊԵՏ  
 ՎԱՐԴԻՎԱՌ ԿԸ ԽՄԷ ՀՄԸՄ-Ի  
 ԱՊԱԳԱՅԻ  
 ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐՈՒՆ ԿԵՆԱՑԸ  
 ՆՍՏԱԾ՝ ԵՂԱՅՐՍ ԽԱՉԵՐ,  
 ՔՈՎԸ՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՒ ԵՍ  
 ԲԱԺԱԿՈՎ:

ԽՄԱՆԿԱՐ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՀՄԸՄ-Ի ՆԱԵՒ ՖՐԱՆՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ  
 ՉԵՐՔԵՋՆԵՐՈՒ ՀՌՉԱԿԱԻՐ ԽՈՒՄԲԻՆ 1935 - 1937



*Զախէն՝ ՕՆՆԻԿ Կեվրեկեան, Զաւէն Զորպանեան, Եղիշէ, Պուպուլ,  
 Կոլար Էտուար Աւրիկեան, Կարապետ (պէրպէր), Գեղամ (Պէյրուքէն),  
 Սաաթնի, մարգիկ մը, Շահինեան եւ Մարգար:*

*Աջին՝ Վահան Էֆէնտի:*





**ՀՄԸՄ ՅԱՂԹԵՑ ԿԻՊՐՈՍԻ ԱԽՈՅՅԱՆ ԷԲԱ-ԻՆ**  
**Պէլրուք 30 Դեկտեմբեր 1945**

Ի գին գերմարդկային նիգերու, լաւապէս վերակազմուելէ ետք, նակատարաց, հպարտ՝ յաջողեցանք հասնիլ տարեվերջ: Մինչ այդ տարեր էինք շատ կարեւոր յաղթանակներ ընդդէմ Ռընեսանսի եւ ՀՄՄԻ: Խրախոսուած այս բոլորէն՝ յանդգնեցանք Պէլրուք հրաւիրել Կիպրոսի ախոյեան «ԷԲԱ»ն, հովանաւորութեամբ՝ Լիբանանի հայասէր վարչապետ Սամի Սուլի, որ սիրով ընդունեց:

Տասը հազարէ աւելի մարգասէր բազմութիւն մը կար, ասոնց որոտընդոստ ծափերու տարափին տակ դաշտ իջանք: Անակնկալօրէն վարչապետը փափաք յայտնեց ծանօթանալու խաղացողներուս եւ դաշտ իջաւ շնորհաւորելու մեզ: Երբ հերթը եկաւ ինծի, մօտեցաւ, հարցուց, թէ թրքերէն կը հասկնայի՞՞ արդեօք, պատասխանեցի՝ «այո՛»: Այնուհետեւ շարունակեց.

- Էյի, պաք պանա, քուզն՛ւմ, պու կիւն հէլպէք գազանմալըսընըզ (Լա՛ն նայէ ինծի, գաւա՛կս, այսօր անպայման պէտք է շահիք...):

- Հէլպէ՛ք, Պէլի՛մ (Անպայմա՛ն, Պէլս),- պատասխանեցի խրախոսուած վարչապետին խօսքերէն եւ մեր ժողովուրդին «ՀՄԸՄ, կոլ կ'ուզենք», - բացազանչութիւններէն: Սքանչելի խաղարկութիւն մը ունեցանք եւ յաղթեցինք 1-0 արդիւնքով: Յաջորդ օրուան թերթերը գնահատեցին երկու խումբերու բարձր թեքնիքը եւ մաքուր խաղարկութիւնը:



**ՀՄԸՄ - ԷԲԱ ԽՄԲԱՆԿԱՐԻ ԼԻԲԱՆԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ, ՍԱՄԻ ՍՈԼՀ  
ՎԱՐՉԱՊԵՏԸ ԿԸ ԸՆՈՐՀԱԻՈՐԷ ԽԱՂԱՑՈՂՆԵՐԸ**

*ՀՄԸՄի ատենապետ՝ եղբայր Անդրանիկ Նրամեան կը ներկայացնէ խաղացողները: Աջէն՝ Վարդիվառ (խմբապետ), Նալպանտեան (բերդապահ), Յովհաննէս, Մանուէլ, Համազասպ եւ Վազգէն (Հալէպէն), Շատարեւեան, Սարգիս Ազնաւորեան, Յակոբ Վարժապետեան, Եղիշ եւ Գամարեան:*

**ՀՄԸՄ-Ի ՖՈՒԹՊՈԼԻ ԽՈՒՄԲԻՆ ԸՆԲԱԹԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ**

*Խումբիս շաբաթական հերթական ժողովը տեղի կ'ունենար իւրաքանչիւր Ուրբաթ երեկոյեան Բաղաբի ակումբը: Յանախ ֆութպոլի ընդհանուր խմբապետը ներկայ կ'ըլլար ժողովին՝ մեզի փոխանցելու վարչութեան որոշումները: Բոլոր խաղացողները անպայման ներկայ կ'ըլլային, իրենց առաջարկները նկատի կ'առնուէին ինչպէս նաեւ դիտողութիւնները կը քննուէին, եւ յարմարագոյն լուծումներու կը յանգէին:*

*Կարեւորագոյն հարցը՝ խաղացողին գործի ապահովութիւնն էր, ապա՝ փորձերու մասնակցելու կարելութիւնը: Հիւանդութեան պարագային բժիշկ եւ դեղ պէտք էր ապահովէինք: Փառք Աստուծոյ, եղբայր Շահինեանին դեղարանը միշտ բաց էր ձրի դեղ առնելու՝ ո՛չ թէ միայն ՀՄԸՄի մարզիկներուն, այլ նոյնիսկ՝ տեղացի ֆութպոլիստներուն, եթէ դիմէին իրեն: Խմբապետը յանձն կ'առնէր բոլոր հարցերը լուծելու դժուարին պարտականութիւնը, ըլլա՛յ ընդհանուր խմբապետի, ըլլա՛յ վարչութեան*

խողովակով, կամ խումբիս բարեկամներուն միջոցաւ:

Այս հարցերու բարւո՛ւ լուծումէն ետք կը սկսէր ֆուլթայլի բաժինը: Գնահատանքը եւ քննադատութիւնները կ'ընէին վերջին մրցումին: Իւրաքանչիւր խաղացող, հաւասարէ հաւասար իր դիտողութիւնները կ'ընէր եւ իր կարծիքը կը յայտնէր: Կը քննէին նախորդ մրցումին գործուած սխալները, անուղակիօրէն յանցաւոր խաղացողին ուշադրութեան կը յանձնուէր իր պարագան եւ միշտ կը յանձնարարուէր լաւագոյնը ընել: Յանախ չէ, որ խաղացող մը իր սխալը կ'ընդունէր: Տաք, բայց շինիչ վիճարանութիւններ տեղի կ'ունենային եղբայրական մթնոլորտի մէջ:

Կը պատահէր նաեւ որ իրար բարկացնելու համար դիտողութիւններ ըլլային, բարեբախտաբար՝ մէջերնիս կային վաստակաւոր եւ անուանի խաղացողներ յանձին՝ Սաաթնիի եւ Նդիշի, որոնց հեղինակութիւնը եւ տրամաբանական բացատրութիւնները կը հանդարտեցնէին կողմերը, միշտ յանցանք մատնանշելով, բայց երբեք յանցաւորը: Յետոյ կը քննէին գալիք մրցումին որդեգրուելիք խաղարկութեան ձեւը, թափիքը, նկատի ունենալով դիմացինին խաղարկութիւնը եւ խաղացողները, որոնց լաւերը կ'ուզէին չէզոքացնել, «մէն թու մէն» թափիք գործադրելով: Միշտ կը կրկնուէր, որ իւրաքանչիւր խաղացող պէտք է խաղար նախ խումբին համար, այսինքն՝ մէկը տասնըմէկին համար, իսկ տասնըմէկը՝ մէկուն: Նկատի ունէին, որ մենք կրկնակի եռանդով պէտք է խաղայինք՝ չէզոքացնելու համար դիմացի խումբը եւ իրաւարարին կողմնակալութիւնը: Հոս եւս Սաաթնիի եւ Նդիշի իմաստուն խորհուրդները իրենց օգտակար դերն ու ազդեցութիւնը կ'ունենային:

Հոս կ'ուզեմ աւելցնել, որ խմբովին, յանախ, միւս խումբերու մրցումներուն ներկայ կ'ըլլային եւ ուշադիր կը հետեւէին խաղին, կը դիտէին իրենց վտանգաւոր կամ տկար կողմերը, որպէսզի ըստ այնմ թափիք գործածէին իրենց հետ մրցումի պարագային: Այդ մրցումներուն ես յանախ թրիպիւնին տանիքը կ'ելլէի, աւելի լաւ դիտելու (observer-դիտորդ) համար:

### ԽՈՒՄԲԻ ԺՈՂՈՎՆԵՐԷՆ - ԿԱՏԱԿԻ ԲԱԺԻՆ

Օր մը, ժողովի ընթացքին պատահեցաւ հետեւեալը.

Նդիշը եւ Տրդատը Դամասկոսէն էին եւ միասին խաղացած՝ ՀՄԸՄԷՆ եւ ֆրանսական բանակի չեքեզներու խումբէն, իրարու հետ միշտ կատակ կ'ընէին եւ յանախ իրար կը ջղայնացնէին: Ժողովի մը վերջաւորութեան Տրդատը խօսք ուզեց եւ սկսաւ այնպիսի խօսքեր ըսել, որ Նդիշը ջղայնացաւ եւ ուզեց պատասխանել, բայց խմբապետը թոյլ չտուաւ. - «Կեցի՛ր, թող վերջանայ», - ըսաւ, Տրդատ վերջացուց. Նդիշ ուզեց պատասխանել, բայց խմբապետը ժողովը փակուած յայտարարեց եւ ոտքի ելաւ: Նդիշ բարկութենէն վրաս պոռալով՝ «Վարդիվառ, - ըսաւ, - քեզի պէս խմբապետին խերն եմ անիծեր, գալ անգամ սպասէ, որ խմբապետ ըլլաս»: Այսպէս կատակներով եւ ուրախ կը վերջանային խումբի ժողովները ժամը՝ 10-11 ին:

**1945 ՀՄԸՄԻ Ա.ԽՈՒՄԲԻՆ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ԽԱՂԱՑՈՂՆԵՐԸ**

*ԲԵՐԴԱՊԱՀ՝ Նալպանտեան, Տիգրան եւ Յակոբ Գըլընեան:*

*ՅԵՏՍԱՊԱՀ՝ Սաաթնի, Եղիշ, Տրդատ, Անդրանիկ Մկրտիչեան, Սարգիս (Սուր Բաղաբեկ), Իսահակ, Ժիրայր Մարգարեան եւ Աւետիս Զայեան:*

*ՄԻՋՆԱՊԱՀ՝ Յովհաննէս, Կիրակոս, Ճիմ, Գեորգ Շատոյեան, Յակոբ Վարժապետեան, Էլի Հաբիմ, Ժիրայր Ուրֆալեան եւ Շատարեան:*

*ՅԱՌԱՋԱՊԱՀ՝ Վարդիվառ, Մանուէլ, Սարգիս, Վազգէն Ղուկասեան, Արմէն Աբգարեան եւ Համազասպ (Հալեպէն), Վարուժան Բամպուխեան, Ստեփան Մելիքսեթեան, Արտաւազդ (Հալեպէն), Արթինիկ եւ Զելլօ Վարդան (Դամասկոսէն), Սել Սարգիս, Անդրանիկ Գամարեան, Յովհաննէս Պաղտոյեան, Օննիկ Պալըզեան (Ռայագէն) եւ Ներսէս Իղնեան (Պուրն Համուտէն):*

*ԽՄԲԱՊԵՏ՝ Սաաթնի՝ յետոյ Վարդիվառ:*

*ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՄԲԱՊԵՏ՝ ԲԵՆԻԱՄԻՆ ՇԱՄԼԵԱՆ*

*ՄԱՐԶԻԶ՝ ՕՆՆԻԿ ԿԵՎՐԵԿԵԱՆ յորոշ շրջան մը, յետոյ՝ Նալպանտեան:*

**1945 ՀՄԸՄ -Ի Ա.ԽՈՒՄԲԻ ՄՐՅՈՒՄՆԵՐԸ ԳՈՒՄԱՐ 20**

**ՅԱՂԹԱՆԱԿ՝ 13-ՀԱԽԱՍԱՐՈՒԹԻՒՆ՝ 2-ՊԱՐՏՈՒԹԻՒՆ՝ 5**

**ԿԱՐԵՒՈՐ ՄՐՅՈՒՄՆԵՐ**

ԹՈՒԱԿԱՆ	ՄՐՅԱԿԻՑ ԽՈՒՄԲ	ԱՐԴԻԻՆՔ	ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ
Փետր. 11	Անդրանիկ	5-1	
Մարտ 17	Ռասինկ	2-1	Ժամհուր թերթի բաժակի մրցաշարք
Մարտ 18	Սաժէս	1-0	
Ապրիլ 01	ՀՄԸՄ Երուսաղէմ	5-1	Միջմասնանիւղյն. Հալեպ
Ապրիլ 27	Օրթոտոֆս Երուսաղէմ	2-0	Երուսաղէմի մէջ
Յունիս 24	Ռընէսանս	7-1	Վարդիվառ 3 կող
Յուլիս 01	Ռասինկ	2-1	Orient թերթի բաժակ
Յուլիս 15	ՀՄՄ	5-2	
Օգոստ. 05	ՀՄՄ	3-2	Սաաթնիին վերջին խաղը
Դեկտ. 30	ԷԲԱ Կիպրոսի ախոյ.	1-0	
Ապրիլ 02	ՀՄԸՄ Հալեպ	0-0	Միջմասնանիւղյն. Հալեպ
Փետր. 04	Պէրթ. Սէրվիսըս անգ.	1-3	
Փետր. 25	Ռասինկ	0-2	ախոյեանական
Ապրիլ 29	Իսլէմի, Եաֆայի մէջ	0-3	
Ապրիլ 29	Շէպէպ Արսայ Հայֆա	2-3	



**ՀՄԸՄ - ՌԸՆԵՍԱՆՍ ՀԱԻԱՍԱՐ 2-2 10 ՓԵՏՐՈՒԱՐ 1946-ԻՆ**

*Մեր կազմը ձախեն՝ Տիգրան, Կիրակոս, Մանուէլ, Վազգէն, Վարուժ, Ստեփան, Տրդատ, Յովհաննէս, Սարգիս, իրաւարար՝ Ատէլ Սիտանի, Եղիշ եւ Վարդիվառ (խմբապետ):*

**ՀՄԸՄ 1946-ԼԻԲԱՆԱՆԻ ԱԽՈՅԵԱՆԱԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ  
ՅԱՂԹԵՑԻՆՔ ՀՄՄ-ԻՆ 4-0 24 ՄԱՐՏ 1946**

*Մեր խումբին կրած վերջին ցնցումին հետեւանալով մեր որդեգրած որոշումները լի ու լի գործադրելով վերագտանալ մեր առաջնակարգ դիրքը: Ախոյեանական իւրաքանչիւր մրցումին, որդեգրեցինք դիմացի խումբին յատուկ խաղալու թափօթի եւ վտանգաւոր խաղացողներու չէզոքացում: Այս բոլորը դիրքին չեղան, երկար ժամանակի պէտք եղաւ: Շնորհիւ մեր կազմին մէջ գտնուող վաստակաւոր ֆութպոլիստ Եղիշի եւ անոր տեղին ցուցմունքներուն, մասնաւորապէս՝ խումբին հաւաքական խաղարկութեան ձեւին՝ «մէկը տասնըմէկին, տասնըմէկը մէկուն համար», եւ մեր յարատեւ ու յաճախակի փորձերուն եւ մրցումներուն, կրցանք ներդաշնակել խումբին խաղարկութիւնը իբր թեփնիք, ի մտի ունենալով անպայման վերագտնել մեր նախկին համբաւը, տիրանալով վերստին Լիբանանի Ախոյեանութեան:*

*Մեր յաջողութիւնները կը պարտինք մեր բոլոր խաղացողներուն հոգւով եւ սրտանց խաղալուն, մեր անխորտակելի պաշտպանողականին, Եղիշին եւ Տրդատին, բայց մանաւանդ՝ մեր բերդապահ Տիգրանին, որ իր հիանալի սլացքներով օդին մէջէն կը զսպէր գնդակները, յառաջապահ խաղացողներուն՝ այնպիսի եռանդով կը խաղային ու կը պայտարէին անպայման յաղթանակ ապահովելու:*

*Այսպէս՝ առաջին յաղթանակը տարինք անցեալ տարուան*

ախոյեան ՀՄՄի վրայ 24 Մարտին: Այս խաղին նոր թափփոխով դաշտ իջանք, սկիզբէն յանկարծակիի բերինք զիրենք, կայծակնային յարձակողականով երկու կողմը նշանակեցինք առաջին 15 վայրկեաններուն: Այսպէս՝ ամբողջ խաղին տեւողութեան իշխեցինք ՀՄՄի վրայ եւ խաղը վերջացաւ մեր փայլուն յաղթանակով՝ 4-0 արդիւնքով:

**ՅԱԶՈՐԴ ՕՐԸ «ԱԶԴԱԿ» ԳՐԵՑ** - «ՀՄՄի խումբին խմբապետը՝ Վարդիվառ, իրեն յատուկ անգուգական շուքով երկու կողմը նշանակեց, առաջին 15 վայրկեաններուն ՀՄՄի բերդէն ներս, 24 Մարտ 1946»:



Բերդապահ Տիգրանին օդին մէջէն ազատած գնդակները յառաջապահ խաղացողներուն սեւեր կու տային դէպի յառաջ սուրայլու եւ կողմը արձանագրելու:

1946 ՀՄՄ-ի ՄԻԶՄԱՍՆԱԾԻԻՂԱՅԻՆ ԽԱՂԵՐԸ ՀԱԼԷՊ

ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՄԲ ՅԱԿՈՒ ՕՇԱԿԱՆԻ 22 Ապրիլ 1946

Գրեց Եղիշ «Ազդարար»ի մէջ

Պատմական տողանցքէն վերջ կրկին դաշտ իջան Հալէպի եւ Պէյրութի ֆութպոլիստները: Ամէն մարդ անակնկալի եկաւ, երբ Պէյրութի Վարդիվառը, հիւլէական ուժով զինուած այդ կրակոտ տղան, Հալէպի բերդէն ներս կը տեղաւորէր հաւասարութեան կողմը: Ասկէ ետք Պէյրութն սկսաւ իշխել եւ խաղը վերջացաւ 2-2 հաւասար: Երեկոյեան, ողջերթի երեկոյթին, Յակոբ Օշական արտասուաթոր աչքերով ըսաւ.

- Տղաք, ես կը լեցուիմ ձեր աչքերուն կրակով եւ ձեր ճակատներուն շփեղութեամբ: Ձեր մեծերը ձեզի տուած են ու ասկէ յետոյ եւս պիտի տան ձեր ճակատներուն լաւագոյն առաքիւնութեանց ամէնէն ընտիրները: Աշխատեցէք արժանի ըլլալ անոնց աշխատանքին եւ ձեր պայպերուն ողջակիզման:

Ահա սերունդը, զոր տեսանք Հալեպի մէջ եւ զոր կ'ուզենք տեսնել ամէն տեղ:

Երկու խումբերը ստացան մէկական բաժակ. անձնապէս ինծի համար մեծ պատիւ էր օրուան բաժակը ստանալ Յակոբ Օշականի ձեռքէն:

ՀՄԸՄ ՊԵՅՐՈՒԹԻ ԿԱԶՄԸ ՀԱԼԷՊ՝ ԱՌԱՋԻՆ ՄՐՑՈՒՄԻՆ



Զախէն՝ Կարապետ Աղեհան (Հալեպի պատասխանատու), Գամարեան, Մանուէլ, Վարդիվառ, Էլի Հաֆիմ, Ստեփան եւ Շահինեան (Պէյրուքի պատասխանատու):

Մոսժ՝ Օննիկ Պալըգեհան (Ռայաֆի ՀՄԸՄԷՆ), Յակոբ Վարժապետեան, Յովհաննէս, Տիգրան, Եղիշ եւ Ներսէս Իղեհան (Պուրն Համուտի ՀՄԸՄԷՆ):

(Մէջբերում մը Ազդակ Ծարաթօրեակէն)

«Եղբայր Վարդիվառ՝ Պէյրուքի խումբին խմբապետը, կ'առնէ գնդակը, խորտակելով ամէն խոչընդոտ, իր սովորական, անզուսպ յառաջխաղացքով եւ ումբի պէս հարուածով կը նշանակէ Պէյրուքի հաւասարութեան կէտը»:





ՀՄԸՄ-Ի ՄԻՋՄԱՍՆԱԺԻԻՂԱՅԻՆ ՏՈՂԱՆՑՔԻՆ ՀԱԼԷՊ-ԱՊՐԻԼ 1946



ԱՐԵՆՈՅԾՆԵՐ



«ՊԱՏՈՒԻ ԱՐ»

ԱՅՍ ՄԻՋՄԱՍՆԱԺԻԻՂԱՅԻՆ ԵՌՕՐԵԱՅ ԽԱՆԳԱՎԱՌՄԹՆՈԼՈՐՏԷՆ ՏՊԱԽՈՐՈՒԱԾ՝ ՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՍ ՄԷՋ ԱՐՋԱՆԱԳՐԱԾ ԵՄ.

«ՀՄԸՄ հայ ժողովուրդի կենդանի հոգին է, իրմով է որ հայ ժողովուրդը ինքզինքը եակատարաց ու հպարտ կը զգայ տեղացիներու եւ օտարներու առջեւ, որովհետեւ ՀՄԸՄի շունչին տակ մեծցած երիտասարդը կայտառ է ու արի, ինքնավստահ եւ պարտանանաչ, քաղաքավար ու ազգասէր, վտանգը արհամարհող եւ հայու պատիւը միշտ բարձր պահող:

Ահա թէ ինչու, օր ըստ օրէ, կը խտանան ՀՄԸՄի շարքերը՝ սկսուտական, մարզական եւ ընկերային: Ծնողները կը փութան իրենց զաւակները յանձնելու այս գեղեցիկ, ազնիւ եւ վսեմ հայու դպրոցին՝ ՀՄԸՄին»:

21 ԱՊՐԻԼ 1946 - ՀՄԸՄ-Ի ՄԻՋՄԱՍՆԱԺԻԴԱՅԻՆ ԽԱՂԵՐՈՒՆ ԶԱՐԵՀ ՍՐԲԱԶԱՆ ԿԸ ԾՆՈՐՀԱԽՈՐԷ ԽՈՒՄԲԻՍ ԽԱՂԱՑՈՂՆԵՐԸ




*(Վարդիվառիկն հետ ձեռնուեղու ատեն)*



ՀՄԸՄ-Ի ՖԱՆՖԱՌԸ ԿԸ ՀՆՁԵՑՆԷ ՔԱՅԼԵՐԳՆԵՐԸ



ՀԱՐՄ-ի Ա. ԽՈՒՄԲԻ ՍԻՒՆԵՐԷՆ՝  
*Վարդիվառ - Կիրակոս - Յովհաննէս - Տրդատ*  
 22 Ապրիլ 1946 - ՀԱԼԷՊ



1946-ի ՊԷՅՐՈՒԹԻ ՀԱՐՄ-ի ԿԱԶՄԵՐԷՆ ՄԷԿԸ  
 ՅԱՂԹԵՑԻՆՔ ՌԸՆԵՍԱՆՍԻՆ 4-2, 5 ՄԱՅԻՍ 1946  
*Ջախէն՝ Վարդիվառ (խմբ.), Կիրակոս, Եղիշ, Մանուէլ, Տրդատ, Սարգիս, Անդրանիկ Մկրտիչեան, Ստեփան, Վազգէն, Յովհաննէս Է. Լալպանտեան:*

## ՀՄԸՄ՝ ՅԱՂԹԵՑԻՆՔ ՌԸՆԵՍԱՆՍԻՆ 4-2 5 ՄԱՅԻՍ 1946

Վեճական ու ախոյեանական մեր վերջընթեր մրցումին՝ անպայման պէտք է յաղթէինք Ռընեսանսին, պահպանելու համար մեր առաջին տեղը ախոյեանական ընդհանուր դասաւորման մէջ: Այդ վեճականութեամբ դաշտ իջանք Կիրակի, հազարներով ՀՄԸՄական մարզասէրներու հուռոտներուն եւ «ՀՄԸՄ, կոյ կ'ուզենք» բացազանչութիւններուն մէջէն: Արդէն Ուրբաթ օրուան մեր հերթական ժողովին որոշած էինք անպայման յաղթել, վերատիրանալու համար Լիբանանի ախոյեանութեան տիտղոսին, ըստ այնմ քանի մը թափփինք ի գործ դնելով՝ դաշտին վրայ մրցումի ընթացքին: Մեր բոլոր որոշումները լի ու լի գործադրելով, յաղթեցինք 4-2 արդիւնքով: Սարգիսը այս մրցումին հերոսն էր՝ արձանագրելով երեք կոլեր, իսկ չորրորդ կոլը արձանագրելը՝ ինծի վիճակուած էր:

Հոս կ'ուզեմ անպայման գնահատանքի խօսքս ըսել Ռընեսանսի եւ Լիբանանի լաւագոյն յառաջապահներէն՝ ժողէֆ Ապու Նատէրին «Joseph Abou Nadir», որ այս մրցումին, մեր քարէին դուրսէն՝ օդէն եկած գնդակ մը գլխու գօրաւոր հարուածով մեզի կոլ նշանակեց, արժանանալով հայ թէ տեղացի, բոլորին հիացմունքին եւ ծափահարութեանց:



Սարգիս Ազնաւորեան՝ ձախ ծալր, ամէնուն վրայէն թռչելով, գլխու գօրաւոր հարուածով կը նշանակէ ՀՄԸՄի յաղթանակի երրորդ կոլը:

## ՀՄԸՄ-ի ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ՝ ՊԷՅՐՈՒԹ

15 և 16 Յունիս 1946 «Ազդարար»ի մէջ գրեց Եղիշ

... Երկու օր յուզեցին խանդավառուելէն, եւ հպարտութեամբ լեցուցին սրտերը Պէյրութի հայ ժողովուրդին: Հոգեկան վայելք, ջերմ ու խանդավառող մթնոլորտի մէջ ապրեցան հայերը: ՀՄԸՄի միջմասնանիւղային Բ. հանդիպումը (Ֆութպոլ եւ աթլետիզմ) անգամ մը եւս առիթ տուաւ մեր մարզական մեծագոյն կազմակերպութեան, ցուցարբերելու իր ջանքերուն արդիւնքը, իր կարգ ու կանոնի ուժը: Մեր երիտասարդութեան տօնն էր, հայ պարմանուհիներու, պատանիներու եւ ծիլ ու ծաղիկ սերունդին գեղեցկութեան հանդիսադրութիւնը: Անոնք մեզ ոգեւորեցին եւ յուզեցին, եւ մենք փառաբանեցինք անոնց կայտառ տեսքը, խրոխտ գնացքը, ոգեւորիչ արշաւն ու հրահրող սլացքը: Ողջունեցինք անոնց կարգապահութեան ոգին, մրցակցութեան մէջ ազնիւ մնալու կամքը եւ մանաւանդ՝ կորովի, շնորհալի եւ տաղանդաւոր ցեղի մը արժանաւոր մէկ մասնիկը ըլլալու գիտակցութիւնը, անհատապէս ու հաւաքաբար: ՀՄԸՄ՝ չորս տառ, բայց որքան խորհուրդ ու կախարդանք անոնց սիրոյ շաղկապումին եւ ծփանքին մէջ: Տասնեակ հազարաւոր հանդիսատեսներու խանդակաթ ճայուածքներուն ու տրոփող սրտերուն եւ ցնծայելի կանչերուն ստեղծած տաք մթնոլորտին մէջտեղ, 1600 մարզիկ, հայ արի, արեւնուշ, արծուիկ, գայլիկ ու կակուղ բաթիկ տոյանցեցին:

Երեկոյեան եղաւ ջահագնացութիւն, հազարաւոր ժողովուրդ ՀՄԸՄի ֆանֆառի առաջնորդութեամբ Պէյրութի ակումբէն դէպի Պուրն Համուտ, Մեսրոպեան վարժարանի բակը, ուր տեղի ունեցաւ խարուկահանդէս՝ մեծ խանդավառութիւն ստեղծելով հայ ժողովուրդին մէջ:



Տղանցքին Նալպանտեան կ'առաջնորդէ ՀՄԸՄ-ի Ֆութպոլի Ա. խումբը:

1946 ՀՄԸՄ-ի ՆՈՐԱԿԱԶՄ ՓԱՌԱՊԱՆԾ ԽՈՒՄԲԸ  
ԿՐԿԻՆ ԱԽՈՅԵԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ

ՅԱՂԹԵԼՈՎ ՌԱՍԻՆԿԻՆ 3-2 23 ՅՈՒՆԻՍ 1946-ԻՆ

ԱՅՍՊԻՍՈՎ ԻՐԱԳՈՐԾԵՑԻՆՔ ՄԵՐ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ  
ՀԱՆԳԷՊ ՄԵՐ ՄԻՈՒԹԵԱՆ  
ԵՒ ՄԵՐ ՍՔԱՆՁԵԼԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ  
ՎԵՐԱՏԻՐԱՆԱԼՈՎ ԼԻԲԱՆԱՆԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ  
ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ ԸԼԼԱԼՈՎ  
HOMENETMEN, CHAMPION DU LIBAN 1946



ԾԱԿԱՏԱԲԱՑ ՈՒ ՀՊԱՐՏ ԱԽՈՅԵԱՆՆԵՐԸ ԼԻԲԱՆԱՆԻ

*Զախէն ռոֆի՝ Յովսէփ (կողմի իրաւարար՝ մեր կողմէ), Վազգէն,  
Տրդատ, Ստեփան, Տիգրան, Եղիշ, Սարգիս, Անդրանիկ, Մանուէլ եւ Զաւէն  
Հրթիկեան:*

*Մռած՝ Յովհաննէս, Կիրակոս եւ Վարդիլառ (խմբապետ):*

1945-ի ՀՄԸՄ-ի Ա. ԽՈՒՄԲԻՆ ՑՆՑՈՒՄԷՆ ՀԱԶԻՒ ՄԷԿ ՏԱՐԻ ՎԵՐՋ ՆՈՐԷՆ ՇԱՀԵՑԱՆՔ ԼԻԲԱՆԱՆԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆԸ

ԱՆՆԿԱՐԱԳՐԵԼԻ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՒՆ ՊԱՏՃԱՌԵԼՈՎ ՄԵՐ  
ՀԱԶԱՐԱԿՈՐ ՄԱՐԶԱՍԷՐ ՀԱՄԱԿԻՐՆԵՐՈՒՆ  
ԵՒ ԱՐԺԱՆԻՕՐԷՆ ԿԸ ՏՕՆԵՆՔ ՄԵՐ ԱԽՈՅԵԱՆ ՀՌ-ՉԱԿՈՒԻԼԸ  
ԽՈՒՄԲԻՆ ՄՕՏԻԿ ՀԱՄԱԿԻՐՆԵՐՈՎ, ԾԱՇԱՐԱՆԻ ՄԸ ՄԷՋ:



### ԳՈՒՓՈԼԻ ՄԷՋ՝ ՊԷՅՐՈՒԹ՝

*Ձախէն ոտքի՝ Վարդգէս Գըլընեան, Լեւոն Պալապանեան, Յովսէփ, Գրիգոր Ուզունեան, Յովհաննէս Նազարեան, Ժիրայր Ուզունեան եւ ծայրը՝ Թիթօ:*

*Ձախէն նստած՝ Վարդիվառ, Մանուէլ, Ստեփան, Անդրանիկ Նազարեան եւ բաժակին ետեւը մեր ամէնուն սիրելի՛ Մուխթար Սիմոն Յակոբեան:*

### ՀՄԸՄ ԿԸ ՊԱՐՏՈՒԻ ԵԳԻՊՏՈՍԻ ԱՀԼԻԷՆ 7 ՅՈՒԼԻՍ 1946-ԻՆ

*Քաղաքապետարանի դաշտը լեցուած էր հոծ բազմութեամբ՝ տեղացի եւ հայ: Արաբական երկիրներու ամէնէն զօրաւոր խումբն էր Ահլին, եւ ուրեմն՝ մեզի համար պատիւ էր Ահլիի դէմ խաղալը: Մէկ օր առաջ Ահլին յաղթած էր Ռընեսանսին 6-1: Խաղը սկսաւ տաք: Յայտնի էր որ բարեկամական ռզիտվ լաւ խաղ մը կը կիրարկէին: Իսկապէս կը հիանայինք իրենց բասարկութեան եւ խաղին ներդաշնակութեան վրայ:*

Զգիտցանք թէ ինչպէս առաջին կողմը ըրին: Մենք ալ մեր ուժը ցոյց տալու համար ամբողջ սրտով սկսանք խաղալ եւ քանի մը անգամ իրենց բերդը վտանգի ենթարկեցինք: Բայց բենալթի մը չկրցանք կռի վերածել, մինչ իրենք, իմ վրայ եղած բենալթի մը, կոլ նշանակեցին եւ եղան 2-0: Այս արդիւնքէն ետք մենք շատ լաւ խաղցանք, մինչ մեր պաշտպանողական գիծը հրաշքներ գործեց:

Խաղը վերջացաւ 2-0 Ահլիի յաղթանակով:

Ահլիի ղեկավարները եւ համաշխարհային մարզիկի տիտղոս ունեցող իրենց յառաջապահ Մուխթարը, եկան շնորհաւորեցին մեզ եւ Եգիպտոս հրաւիրեցեն փոխվրէժի մրցումի: Միջազգային իրաւարար Ատիլ Սիտանի եկաւ, իր հերթին շնորհաւորեց մեզ եւ ըսաւ թէ այս մրցումին արդիւնքը պէտք էր հաւասար ըլլար:

Յաջորդ օրուան բոլոր թերթերը շնորհաւորեցին ՀՄԸՄի մաքուր խաղարկութիւնը եւ գրեցին, թէ «հակառակ իր պարտութեան, ՀՄԸՄ բարձր բռնեց իր պատիւը, եւ տեւաբար պարտադրեց իր խաղը միջազգային արժէքով, Եգիպտոսի ցոյց տալով լիբանանեան ֆութպոլը իր գեղեցիկ խաղարկութեամբ»:

## ՀՄԸՄ - ԱՀԼԻ ԵԳԻՊՏՈՍ ԽՄԲԱՆԿԱՐ



ՀՄԸՄի խմբապետը՝ Վարդիլվառ, դրօշակի փոխանակման միջոցին:



ԼԻԲԱՆԱՆԻ Ա. ԴԱՍԻ ԽՈՒՄԲԵՐՈՒ ՄՐՑԱՇԱՐՔ  
ՀՄԸՄ ԿԸ ՏԻՐԱՆԱՅ ԲԱԺԱԿԻՆ

24 Նոյեմբեր 1946ին է, որ տեղի ունեցաւ Լիբանանի Ա. դասի խումբերուն մրցաշարքին աւարտական խաղը, որ ՀՄԸՄը կը հակադրէր Մագրաայի:

Որոշ դժուարութեամբ երկու խումբերու յաղթելէ ետք՝ հասեր էինք ֆինալի, ուր մեզի դէմ կը գտնէինք Մագրաան:

Դաշտ իջանք, շատ լաւ գիտնալով դիմացիներն իսաղը: Նախ փորձեցինք մեր պաշտպանողական գիծը ներդաշնակել միջնապահ գիծին հետ, որպէսզի կարենանք, պէտք եղած պարագային, երկու երեք խաղացողով յառաջապահ գիծին օգնել: Մեր այս թափփին դէմ հակառակորդին կողմէ շատ կոշտ խաղարկութեան մը հանդիպեցանք. կը զարնէին, կը հրէին անտեղի կերպով, շատ անհամ խաղ մը կ'ընթանար եւ իսաղին մինչեւ վերջին վայրկեանները 1-1 արդիւնքով մնացինք:

Հակառակ մեր բողոքներուն, այս ամբողջ կոշտ ու կոպիտ խաղարկութիւնը անպատիժ մնաց՝ իրաւարարին կողմնակալութեան հետեւանքով:

Այլ ժողովուրդը, նոյնիսկ տեղացին, յուսախաբ, սկսաւ կամաց կամաց թրիպիւնները ձգել եւ դաշտէն ելլել: Անպայման բան մը պէտք էր ընէինք. քանի մը վայրկեան կար իսաղը լրանալուն, հրաշքի պէս բան մը պէտք էր ըլլար, եւ այդ որոշեցի ես ընել: Գնդակը առի դաշտին մէջտեղէն եւ սկսայ յառաջանալ, ժամանակ չկար ուրիշին բաս տալու, ինքնավստահ, կրնայի լաւագոյնս օգտագործել մնացած վերջին րոպէները: Դիմացիներ տրիպլէ ըրի, զարնողին անխնայ հակադարձեցի, իրենց պէս կոշտօրէն նեղէնով ու կոխկոտելով, մօտեցայ քարէին եւ գնդակը շտկելով՝ 25 մեթրէն, բոլոր ուժովս քաշեցի, վստահ թէ նոյնիսկ բերդապահը, եթէ բռնէր գնդակը, ինքն ալ գնդակին հետ ներս կ'երթար:

Կոլը եղաւ, յաղթեցինք 2-1 արդիւնքով եւ այսպէս ճակտի քրտինքով ու կարծրօրէն մաքառելով՝ առինք բաժակը, մեր ժողովուրդին անհուն հպարտութիւն պատճառելով: Արդար յաղթանակ էր:

Յաջորդ օրուան արաբական եւ ֆրանսաստառ թերթերը արդարօրէն շնորհաւորեցին ՀՄԸՄի այսպիսի վճռական խաղարկութիւնը եւ մինչեւ վերջին վայրկեան չյուսալքուելով յաղթականի հասնիրը:

«ԱԶԴԱԿ» ԸՆԲԱԹՕՐՈՒԵԱԿ ՀԵՏԵԻԵԱԼԸ ԳՐԵՑ - Յովհաննէս Ծափնեան.

«Շատ հետաքրքրական եւ վճռական մրցում, բաւականին կոշտ խաղարկութիւն Մագրաայի կողմէ, երկու խումբերը հաւասար կը մնան 1-1 մինչեւ վերջին վայրկեանը: Վերջին երկվայրկեաններուն, ՀՄԸՄ

միշտ իշխող դաշտի վրայ, առիթ կու տայ իր խմբապետին՝ հիւլէական անունով Վարդիվառին, որ հակառակորդի ոտքէն առնելէն ետք գնդակը դաշտի կէսէն, կը սկսի յառաջանալ ճախի եւ աջի պատւարները զիկ զակ բերելով եւ անտեսանալի ու անզուսպ հարուածով մը՝ կը խորտակէ Մագրաայի բերդը, որուն բերդապահը գնդակի փոթորիկէն կը մնայ գետին փռուած, արդիւնք՝ 2-1, ՀՄԸՄի անմոռանալի յաղթանակով»:

Ինձի համար հոգեկան հանոյ՛ էր ժողովուրդիս ուրախութիւնը եւ հպարտութիւնը տեսնել ՀՄԸՄի փայլուն յաղթանակով:

### ԵՒ ԵՂԱՆՔ ՀՄԸՄ-Ի ԵՐԷՅ ՍԿԱՌԻՏ

1946, ներգաղթի օրերուն ահաւոր պայքար շղթայագերծուած էր Դաշնակցութեան եւ ՀՄԸՄի դէմ՝ համայնավար բոլոր բջիջներու կողմէ: Կու գային միւնչեւ Պուրն Համուտի թաղերուն մէջ, «Ժողովուրդի Զայն» համայնավար թերթ ծախելու: ՀՄԸՄի 1945-1946 Լիբանանի ֆուրպոլի ախոյեան հռչակուիլը եւ լիբանանեան ամբողջ մամուլին կողմէ ՀՄԸՄի հանդէպ գովասանքը եւ փառաբանութիւնը՝ այս բջիջներուն էունը փախցնել տուաւ: Մենք ալ, մեր կողմէ, մեր ազգային տօնակատարութիւնները՝ Փետրուարեան ապստամբութիւն, Ապրիլ 24, Մայիս 28 եւ ՀՄԸՄի Լիբանանի ախոյեան հռչակուիլը, այս բոլորը տօնեցին՝ հանդէսներ, ջահագնացքներ եւ տողանցքներ կազմակերպելով, առաջնորդութեամբ՝ Պուրն Համուտի ՀՄԸՄի սփանչելի ֆանֆառին:



ՀՄԸՄ-Ի ԵՐԷՅ ՍԿԱՌԻՏ ԵՂԱՆՔ  
 Զախէն ոտքի՝ Սիսակ (սկառուտապետ),  
 Սարգիս, (սկառուտ-խմբապետ) Թերեանեան,  
 Վարուժ եւ Յարութիւն Բարսեղեան՝ (սկառու-  
 տապետ) Հալէպէն:

Այս տողանցքներուն աւելի փայլ տալու եւ մեր երիտասարդութիւնն ու ժողովուրդը աւելի խանդավառելու համար, անուանի մարզիկներ ինչպէս՝ Հրաչ եւ Գեղամ Տատեան եղբայրներ՝ (Barre Fixe)ի ախոյեաններ, Վարուժեան Բամպուրգեան (բարձր ցատկելու ՀՄԸՄի ախոյեան եւ Ա. խումբի ֆուրպոլիստ) եւ ուրիշ մարզիկներ, նաեւ անլանի ֆուրպոլիստ-

ներ՝ Սարգիս Ազնաուրեան, ես եւ այլն, երէց սկաուտի տարազը հագանք եւ մասնակցեցանք այս փառահեղ տողանցքներուն, նակատաբաց ֆալելով երէց սկաուտներու շարքերուն առջեւէն:

Այս բոլորը առանց արձագանգի չմնացին մեր ազնիւ ժողովուրդի խաւերէն ներս: ՀՄԸՄի շարքերը սկսան լեցուիլ բազմաթիւ՝ մարզիկ, սկաուտ, արեւուշ, եւ կակուղ թաթիկներով: Համայնավարները այս տեսնելով իրենց աչքերուն չէին կրնար հաւատալ. ո՞ւրտեղէն կու գային այս բոլորը եւ կը խուժէին ՀՄԸՄէն ներս:

**ՀՄԸՄի** քաջողական հմայքն էր այդ:



**ՀՄԸՄ-ի ԵՐԷՑ  
ՍԿԱՈՒՏ ԵՂԱՆՔ**

*Չախէն՝ Սկաուտապետ  
Հալէպէն եւ Ա. խումբի  
երեք խաղացողները՝  
Վարդիվառ, Վարուժ  
եւ Սարգիս:*



**ՀՄԸՄ-ի ՄԱՐԶԻԿ ԵՒ  
ՖՈՒԹՊՈՒԼԻՍՏ ԵՐԷՑ  
ՍԿԱՈՒՏԻ ՏԱՐԱԶՈՎ**

*Վարուժան, Գեղամ,  
Վարդիվառ եւ  
Սարգիս:*

# ՖՐԱՆՍԱՑԻՆԵՐՈՒ ՄՕՏ, PARC TELEGRAPHIQUE DES TRANSMISSIONS

ԳՈՐԾԻ ՄՏԱՑ 3 ՅՈՒԼԻՍ 1944-ԻՆ  
ԵՒ ՀՈՆ ՖՈՒԹՊՈԼԻ ԽՈՒՄԲԸ ԿԱԶՄԵՑԻ

Պէյրուքի Արուեստից եւ Արհեստից վարժարանը աւարտեցի 1 Յուլիս 1944ին: Վկայականներու տուչութիւնը եղաւ վարչապետ Ռիատ Սուլի կողմէ, ուր հրաւիրուած էր նաեւ ֆրանսական բանակի հեռաձայնի սպասարկութեան պատասխանատու սպան, որ իմանալով թէ ես առաջին մրցանակը շահած էի ռատիօ, ելեկտրականութեան եւ հեռաձայնի, եկաւ շնորհաւորեց զիս, ու այցետոմսը տալով ըսաւ:

- Երկուշաբթի կը ներկայանաս Parc Telegraphique des Transmissions եւ գործի կը սկսիս: Ուրախութիւնս չափ չունէր: Ուրեմն, դեռ 1944ին, Սուրիա եւ Լիբանան գտնուելով ֆրանսական հոգատարութեան տակ՝ «Sous Mandat Français» կառավարական բոլոր սպասարկութիւնները կը գտնուէին ֆրանսացիներուն ձեռքը, նաեւ հեռաձայնի եւ հեռագիրի սպասարկութիւնը հետեւեալ անունով:

## F.F.L. FORÇES FRANCAISES LIBRES AU PROCHE ORIENT SERVICE T. T. P. TRAFIC TELEPHONIQUE PUBLIC

3 Յուլիս 1944, գործի սկսայ: Գեղեցիկ զուգադիպութեամբ այդ տարի՝ 1944-ին, ՀՄԸՄ հռչակուեցաւ Լիբանանի ֆութպոլի ախոյեան: Սպասարկութեան պատասխանատու սպաները, երբ իմացան թէ պաշտօնի կանչուած եմ իրենց մօտ, եկան գտան զիս եւ առաջարկեցին ֆութպոլի խումբ մը կազմել: Առաջարկը սրտիս կը խօսէր անշուշտ: Անմիջապէս մէջտեղ բերին ֆութպոլի TRANSMISSIONS խումբը, որուն կորիզը եղան ՀՄԸՄի չորս խաղացողներ՝ Սարգիս Ազնաւորեան, Մանուէլ Ալթունեան, Տիգրան Արապեան եւ ես: Սկսանք լուրջ փորձերու եւ կազմակերպեցին մրցաշարքեր՝ ֆրանսական բանակի եւ սպասարկութիւններու (Services) խումբերու միջեւ, շատ մեծ խանդավառութիւն ստեղծելով: Մրցումներէն վերջ ուղղակի կ'երթային Messes des Officiers, ուր ներկայ կ'ըլլային նաեւ բարձրաստիճան սպաներ, տեղակալ Մախլուֆ (տեղացի), որ կը հիանար մեր խաղարկութեան վրայ եւ միշտ ներկայ կ'ըլլար: Շատ ուրախ ժամանակ կ'անցընէինք:

Սփորի պատասխանատու ֆրանսացի սպան, Officier de sport, տեսնելով այս խանդավառութիւնը բանակի շրջանակէն ներս, ուզեց բանակի խառն խումբ մը կազմել: Կանչեց զիս, միասին կազմեցինք ցանկ մը՝ քսանի չափ խաղացողներէ, որոնք մաս կը կազմէին, Parc

Artillerieի, Parc de Gaulleի եւ Aviation de Rayakhի, եւ փորձերու սկսանք:

Մրցումներ կազմակերպեցինք Սուրիոյ եւ Լիբանանի բոլոր խումբերուն հետ: ՀՄԸՄէն 4-5 խաղացողներս՝ խումբին լաւագոյն տարրերն էինք: Սփորի սպան լրջօրէն կը հետեւէր այս խաղերուն եւ կը հիանար իմ գօրաւոր շուքերուս վրայ, եւ կ'ըսէր. «Այսպիսի գօրաւոր շուք ունեցող էիչ կայ նոյնիսկ՝ Եւրոպայի մէջ»: Օր մը կանչեց զիս բանակի կեդրոնը՝ Մեծ Սերայի մէջ, եւ ներկայացուց Զօրավարին, գովասանքով խօսելով ՀՄԸՄի եւ իմ մասիս, ըսաւ.

- Վարդիվա՛նն է այս խաղերը կազմակերպողը, եւ բանակի խառն խումբին ամենաօգտակար տարրը նաեւ ամէնէն լաւ խաղացողը:

Իբր արձագանգ այս գնահատանքին՝ ամիս մը չանցած ամսականի յաւելում ունեցայ:

### ՖՐԱՆՍԱՅԷՆ ՆԱՄԱԿ ՍՏԱՑԱՅ ԹՈՒԼՈՒԶԻ ԱՐՇԵՍՏԱՎԱՐԺ ՖՈՒԹՊՈԼԻ ԽՈՒՄԲԷՆ ԽԱՂԱԼՈՒ՝ 6 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1946ԻՆ

Վերջապէս օրերը փոխուեցան եւ քաղաքական մթնոլորտը այնպէս բերաւ որ Ֆրանսան, վերջնական պիտի քաշուէր Սուրիայէն եւ Լիբանանէն:

Օր մը մեր գործատեղին եկաւ սփորի սպան, գտաւ զիս եւ ըսաւ. «Վարդիվա՛ն, մենք մօտ տեսնէն պիտի քաշուինք Լիբանանէն, դուն փայլուն ապագայ եւ մեծ ասպարէզ ունիս ֆութպոլի մարզէն ներս: Լիբանանի մէջ ֆութպոլը սահմանափակ է, իսկ Ֆրանսայի լաւագոյն յառաջապահներէն կրնա՛ս ըլլալ եւ գօրաւորագոյն խումբէն կրնաս խաղալ, մանաւանդ՝ այդ շատ գօրաւոր շուքերուդ համար, որ հազուագիւտ է հոն: Եթէ կ'ուզես, ամէն ինչ կրնամ կարգադրել եւ մեզի հետ կրնաս Ֆրանսա գալ, որեւէ խումբէն կրնաս ստորագրել եւ խաղալու սկսիլ: Եթէ ոչ, մօտ տեսնէն քեզի նամակ կը գրեմ:

Ֆրանսացիները քաշուեցան Լիբանանէն: Արդարեւ, 15 Սեպտեմբեր 1946ին ստացայ նամակ մը Թուլուզէն:

6 Septembre 1946 Toulouse

Cher Vartivar

Je n'ai pu pour des raisons indépendantes de ma volonté vous écrire plus tôt. Je suis affecté à Toulouse depuis trois jours à peine. Ayant eu une courte maladie mais assez sérieuse je n'ai pu tenir mes engagements au sujet des sports.

Dès mon arrivée à Toulouse je vous ai signalé aux dirigeants de Foot Ball Club, équipe professionnelle de première division une des meilleures opérant en France. Voici les conditions dans lesquelles ils vous prennent :

Situation assurée. Tous les frais occasionnés par votre déplacement de Beyrouth en France seront à la charge du club toulousain. Pour cette dernière question les dirigeants demandent si vous acceptez de prendre l'avion pour venir en France.

Ecrivez -moi le plus rapidement possible pour me faire savoir si cela vous convient. Renseignez -vous pour pouvoir me dire la somme nécessaire pour votre voyage. Ecrivez -moi votre adresse exacte et je vous enverrai le nécessaire.

L'équipe vous attend et vous réserve un bon accueil en souhaitant vous voir sous peu.

Meilleurs souvenirs Bien à vous  
Parc Régional des Transmissions Toulouse Haute-Garonne  
Signature

ՖՐԱՆՍԵՐԻՆ ՆԱՄԱԿԻՆ ԲԱՌԱՑԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

6 Սեպտեմբեր 1946 - Թուլուզ

Սիրելի՛ վարդիվառ,

Հագիւ երեք օր է որ փոխադրուած եմ Թուլուզ: Կարճատեւ, բայց բաւական լուրջ հիւանդութիւն մը ունեցած ըլլալով, յանձնառարութիւններս չկրցայ յարգել:

Թուլուզ ժամանումիս, «Ֆուքսոլ Քլիւպ Թուլուզ»ի ղեկավարներուն հետ տեսնուեցայ. Ա. կարգի արհեստավարժ խումբ մը՝ ներկայիս Ֆրանսայի մէջ գործող լաւագոյններէն մին: Ահա այն պայմանները, որոնց մէջ ձեզ կ'առնեն: Թուլուզեան ակումբը յանձն կ'առնէ այն բոլոր ծախսերը, զորս պիտի պատճառէ Պէյրուէն Ֆրանսա ձեր տեղափոխութիւնը, ապա նիւթական շատ ապահով կացութիւն: Այս վերջին հարցին կապակցութեամբ թուլուզցի ղեկավարները հարց կու տան, թէ պիտի ընդունի՞ք օդանաւ առնել իբր փոխադրամիջոց:

Գրեցէ՛ք ինծի կարելի եղածին չափ շուտ, որ անհրաժեշտ գումարը ղրկեմ ձեզի եւ ձեր ճիշդ հասցէն:

Խումբը ձեզ կը սպասէ եւ ձեզի կը վերապահէ լաւ ընդունելութիւն մը, միշտ մաղթելով ձեզ տեսնել անյապաղ:

Լաւագոյն յիշատակներով՝  
Զերդ

## ՖՐԱՆՍԱՅԷՆ ՍՏԱՑԱԾ ՆԱՄԱԿԻՍ ՀԵՏԵՒԱՆՔԸ

Անկեղծ շեշտով գրուած նամակը իր հրապուրիչ խոստումներով, ստիպողական երկրնտրանքի մը առջեւ դրաւ զիս: Շատ լուրջ կացութիւն մը ստեղծուած էր մէջս: Մէկու մը բան չէի կրնար ըսել: Նամակը առած տուն վերադարձայ մտահոգ վիճակով:

Պուրն Համուտէն դէպի Սիս եամբուս վրայ սովորական բան մըն էր ինծի համար լսել, երբ խանութներու առջեւէն հետիոտն կ'անցնէի.

- Ահա՛, Վարդիվառը կ'անցնի, եկո՛ւր, տե՛ս: Բարե՛ւ, եղբայր Վարդիվառ:

Այդ օրը սակայն՝ լսածներս մուրնի հարուածներու պէս կը զարնուէին ուղեղիս մէջ: Գլուխս պիտի պայթէր կարծես, մինչդեռ ամէն օր նոյն նամբայէն կ'անցնէի, նոյն բաները կը լսէի, բարեւ կու տայի եւ կ'առնէի: Բայց այդ օր տարբեր էր:

Տարբեր էր, որովհետեւ բաժանումի վիշտը կար: Այս բոլորը, որ կը տեսնէի ու կ'ապրէի ամէն օր, կրնայի՞ մէկ օրէն միւսը մոռնալ, ձգել եւ օտար աշխարհ երթալ...

Ամէն օր նոյն պատմութիւնը... Այլ չէի կրնար դիմանալ, պէտք էր յստակ եւ վերջնական որոշումս առնէի, ապագայի ճակատագիրս էր խնդրոյ առարկան: Հազար ու մէկ հարցեր կու գային աչքիս առջեւ: Մեր ՀՄԸՄի խումբը հազիւ գտած էր ինզիմէր, գերմարդկային ճիգերով, տիւ ու գիշեր վազելով, վերջապէս խլած էինք Լիբանանի Կոնյանի խոյնալիւծները եւ կ'ուզէինք պահել այս տիտղոսը: Ի՞նչպէս այդ վիճակի մէջ ձգէի եւ հեռանայի, խումբին ապաւենն էի խմբապետի պաշտօնով, եւ ամէնուն կարիքներուն ես կը հասնէի:

Ո՞ւր պիտի գտնէի բազմութիւնները փոթորկող մեր մրցումները, ուր մեր սմանչելի ժողովուրդը անընդհատ՝ «ՀՄԸՄ, կոյ կ'ուզենք, Վարդիվառ, կոյ կ'ուզենք», - կը պոռար: Ի՞նչպէս կրնայի գրկուիլ ՀՄԸՄի յաղթանակներուն ստեղծած անմոռանալի եւ հոգեպարար ապրումներէս: Ի՞նչպէս ձեր ծնողքէս, սիրելիներէս, հարազատներէս եւ թանկագին ընկերներէս պիտի բաժնուէի: Գիշերները քուն չունէի, հանգիստս կորսնցուցած էի մինչեւ այն ատեն... երբ որոշեցի. «ՈՁ» ըսել եւ մերժել հրաւեր առաջարկը: Ծանր բեռը իջաւ ուսերուս վրայէն, թեթեւցայ, սիրտս ու խիղճս հանդարտեցան... Ասկէ ետք աւելիով փարեցայ ՀՄԸՄին, նկատելով, որ իմ հոգեկան ապրումներուս աղբիւրը ՀՄԸՄն էր՝ իր սմանչելի մրցումներով եւ յաղթանակներով:

ԹՐԱՆՍՄԻՍԻՈՆ ԵՒ ՖՐԱՆՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՕԴՈՒԺԻ ԽՈՒՄԲԸ 9 Փետր., 1945-ին



*Թրանսմիսիոնի կազմին մէջ կան չորս ՀՄԸՄականներ:*

La Selection de l'armée Française avec cinq joueurs de Homenetmen 1946



Ֆրանսական բանակի հասարականը, ուր կային հինգ ՀՄԸՄի խաղացողներ.

*1 Սարգիս - 2 Վարդիվառ - 3 Վազգէն - 4 Տրդատ - 5 Տիգրան:*



ՀԵՏԵԻԵԱԼ ԼԱՄԱԿՈՎ ՖՐԱՆՍԱ ԿԸ ՀՐԱԻՒՐՈՒԻՄ ԹՈՒԼՈՒՁԻ  
ԱՐՀԵՍՏԱՎԱՐԺ (PROFESSIONNEL) ԽՈՒՄԲԷՆ

ՖՈՒԹՊՈԼ ԽԱՂԱԼՈՒ

ՍՏԱՑԱԾ ԼԱՄԱԿԻՍ ԲԵՆԱԳԻՐԸ 6 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1946

է/թ- 2-43

Ֆրանսիայի ֆուտբոլի ֆեդերացիայի 6 սեպտ. 1946.

Le 6 septembre 1946

Toulouse

Monsieur le Président

J'ai eu pu faire des choses indépendantes de ma volonté  
vous en êtes plus tel. Je suis appelé à Toulouse depuis quinze  
ans pour représenter mon club de football. Je n'ai  
eu pu faire mes engagements au sujet des sports. Mes  
non amant à Toulouse je vous ai signé tout de suite  
une désignation de tout club club de Toulouse, champion  
professionnelle de 1<sup>er</sup> Division, sous ses meilleures conditions ac-  
tuellement en France. Vous en conditions dans lesquelles ils  
vous pressent.

1<sup>er</sup> Situation dans une union ou club radio-  
athlétique.

2<sup>o</sup> Sous les plus mauvaises par votre déplacement  
de l'équipe en France, vous êtes à la charge du club toulousain.  
Pour cette dernière question, les désignés demandent, si vous  
acceptez, de prendre l'assurance comme moyen de locomotion.

Ecrivez moi le plus rapidement possible pour me  
faire savoir si cela vous convient. Surtout, vous  
pensez pouvoir me dire les sommes qui vous est nécessaires

pour votre voyage et écrivez-moi votre adresse exacte et j'en  
je vous enverrai le nécessaire. L'équipe vous attend et vous serez  
un bon accueil - tout en attendant vous voir sous peu  
souhaitant de vous voir.  
Cordialement  
Meilleures salutations

Bien à vous  
J. J.

Paris Régional des Transmissions  
7107

J'ai reçu cette lettre 15 sept. 1946

1946 ՀՄԸՄԻ Ա. ԽՈՒՄԲԻՆ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ԽԱՂԱՅՈՂՆԵՐԸ  
 ԲԵՐԴԱՊԱՀ Տիգրան, Նալպանտեան եւ Յակոբ Գըլընեան:  
 ՅԵՏՍԱՊԱՀ Եղիշ, Տրդատ, Անդրանիկ Մկրտիչեան, Իսհակ եւ Ժիրայր  
 Մարգարեան:  
 ՄԻԶՆԱՊԱՀ Յովհաննէս, Կիրակոս, Յակոբ Վարժապետեան, Էլի Հաֆիմ  
 եւ Անդրանիկ Գամարեան:  
 ՅԱՌԱԶԱՊԱՀ Վարդիվառ, Մանուէլ, Սարգիս, Վազգէն, Արմէն,  
 Արտաւազդ, Վարուժան Բամպուխեան եւ Ստեփան  
 Մելիքսեթեան:  
 ԽՄԲԱՊԵՏ Վարդիվառ:  
 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՄԲԱՊԵՏ Բենիամին Շամլեան:  
 ՄԱՐԶԻՉ Ժոզէֆ Նալպանտեան, որ փոխարինեց Օննիկ Կելրեկեանը:

1946 ՀՄԸՄ -Ի Ա. ԽՈՒՄԲԻ ՄՐՅՈՒՄՆԵՐԸ ԳՈՒՄԱՐ՝ 22  
 ՅԱՂԹԱՆԱԿ՝ 14 - ՀԱԽԱՍԱՐՈՒԹԻՒՆ՝ 4 - ՊԱՐՏՈՒԹԻՒՆ՝ 3

ԿԱՐԵՒՈՐ ՄՐՅՈՒՄՆԵՐ

ԹՈՒԱԿԱՆ	ՄՐՅԱԿԻՑ ԽՈՒՄԲ	ԱՐԴԻՒՆՔ	ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ
Յնվր. 20	ՀՄՄ	2-1	
Փետր. 03	Ռասիկ	5-4	
Մարտ 11	Մազրաս	2-1	
Մարտ 24	ՀՄՄ	4-0	
Ապրիլ 01	Անդրանիկ	4-1	
Ապրիլ 21	ՀՄԸՄ Դամաս.	4-1	Միջմասնան. Հալէպ
Մայիս 5	Ռընեսանս	4-2	3 Սարգիս 1 Վարդիվառ
Մայիս 12	Անդրանիկ	1-0	խաղին կէսէն կը իջուին
Յունիս 06	ՀՄՄ	2-0	
Յունիս 23	Ռասիկ	3-2	ՀՄԸՄ ախոյեան
Հոկտ. 17	Ահլի	8-2	Դամասկոսի մէջ
Նոյեմ. 24	Մազրաս	2-1	
Դեկտ. 15	Ռընեսանս	1-0	
Փետր. 10	Ռընեսանս	2-2	ախոյեանական
Մարտ 04	ՀՄՄ	3-3	
Ապրիլ 22	ՀՄԸՄ Հալէպ	2-2	Միջմասնան. Հալէպ
Յունիս 15	ՀՄԸՄ Հալէպ	1-1	Միջողովակ. Պէյրուք
Յուլիս 07	Ահլի Եգիպտոս	0-2	Պէյրուք
Դեկտ. 22	ՀՄՄ	1-2	

ԼԻԲԱՆԱՆԻ Ա. ԴԱՍԻ ՄԱՍՆԱԿՅՈՂ ԽՈՒՄԲԵՐԸ  
 ՀՄԸՄ, ՀՄՄ, ԱՆԴՐԱՆԻԿ, ՌԸՆԵՍԱՆՍ, ՌԱՍԻՆԿ եւ ՄԱԶՐԱՍ:

ՀՄԸՄ-ՌԱՍԻԵՆԿ ԾԱԿԱՏՈՒՄ 12 ՅՈՒՆՈՒԱՐ 1947-ԻՆ

Տարին բացուեցաւ փայլուն յաղթանակով մը՝ 7-1, զոր տարինն Ռասիենկի վրայ. կու գայինք փաստելու՝ թէ մեր խումբը իր լաւագոյն կազմին մէջ է, «en pleine forme», եւ թէ կը շարունակէ իր յաղթական ընթացքը՝ նախորդ եղանակին խլելէ ետք Լիբանանի ախոյեանութիւնը: Այս մրցումին, խումբը ինքնավստահ եւ իրեն վայել ներդաշնակութեամբ ու հիանալի բասարկութեամբ սկսաւ յաջորդաբար կոյեր նշանակել, հասցնելով արդիւնքը՝ 7-1ի: Խաղին վերջաւորութեան ժողովուրդը դաշտ խուժեց եւ բոլոր խաղացողները ուսամբարձ թրիպիւններուն առջեւ տարաւ՝ «կեցցէ ՀՄԸՄ» պոռալով:

Խաղացողներս շատ ազդուեցանք ժողովուրդին այս գնահատանքէն: Համակրանքի այս հաւաքական արտայայտութիւնները միշտ վարակիչ կը մնան, անոնց մէջ խաղացողները կը տեսնեն արդար վարձատրութիւն եւ անկեղծ գնահատանք:

ՀՄԸՄ-Ի 9 ՐԳ ՊԱՏՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Պէյրութ՝ 15 Փետրուար 1947: Ժողովին կը մասնակցէին պատգամաւորներ Լիբանանի բոլոր մասնահիւղերէն՝ Սուրիայէն, Պաղեստինէն եւ Անդրյորդանանէն: Ես ալ՝ իբր պատգամաւոր մասնակցեցայ ժողովին:

Իմ անձնական տպաւորութիւններս: Վերջին տասըրիւնգ տարիներու ընթացքին, մինչեւ 1945, Պէյրութի ՀՄԸՄի ֆութպոլի խումբին կրած երկու ցնցումները անտարբեր չէին կրնար ձգել մեր դեկավարութիւնը: Ուրեմն՝ օրուան հրատապ նիւթն էր:

Ազգային Հայրենասիրական Դաստիարակութիւն ՀՄԸՄէն ներս:

Մարզիկներուն չէր բաւեր միայն մարզական դաստիարակութիւն, այլ՝ անհրաժեշտ էր նաեւ հայրենասիրական եւ մանաւանդ՝ Հ.Յ.Դ.ի անմահ ֆէտայիներու անձնուրաց պատմութեան դաստիարակութիւնը: Ժողովը լսելէ ետք Շրջանային Վարչութեան տեղեկագիրը, անմիջապէս անցաւ 1945ի ներգաղթի օրով ստեղծուած ցաւալի դէպքերուն, նաեւ համայնավարներու կողմէ «Բագրամեան» ֆութպոլի խումբին երեւան գալուց, ուր մեր վեց լաւագոյն խաղացողները գացին: Ուրիշներու կարգին ես ալ ծանրացայ այն իրողութեան վրայ, թէ մեր շարքերէն ներս կը պակսէր դաշնակցական գաղափարականի, այսինքն՝ ազգին համար զոհուելու դաստիարակութիւնը, գոհանալով միայն յեղափոխական երգեր երգելով, որոնք օգտակար ըլլալով հանդերձ՝ բաւարար չէին: Ուրիշ պատգամաւոր մը՝ Հալէպէն, շեշտեց ՀՄԸՄի ազդեցութիւնը մեր ժողովուրդին վրայ, եւ որպէսզի այդ ոգիին



Հ.Մ.Ը.Մ.-ի սոսիոնոՅ, Լիբանանի, ՊԱՂԵՍՏԻՆԻ ԵՒ ԱՆԳՐ-ՅՈՐԴԱՆԱՆԻ  
ԶԳԳ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ 15 ՓԵՏԻ., 1947  
*Ա. շարբ. - ձախձն ծրած երկրորդ 'Վարդիիվառ, չորրորդ 'Եղիշ':*

առաջելութիւնը կատարեալ ըլլայ, առաջարկեց որ ՀՄԸՄի մարզիկներն ալ թրծուին մեր պատմութեան անվեհեր հերոսներու եւ Դաշնակցութեան անմահ նուիրեալներուն բազմահարիւր օրինակներովը:

Եղիշը՝ «Ֆութպոլիստ», վեր առաւ ՀՄԸՄի ազգօգուտ եւ անվիճելի դերը մեր երիտասարդութեան մօտ, օրինակ տալով ՀՄԸՄի միջմասնանիւղային խաղերուն ստեղծած խանդավառութիւնն ու ցնծութիւնը ողջ հայութեան հոգիներէն ներս, շեշտելով ազգային դաստիարակութեան աւելի զարկ տալու անհրաժեշտութիւնը մեր շարքերէն ներս:

Այս լուրջ հարցին լուծումը ամուր հիմերու վրայ դնելու մտահոգութեամբ, այն եզրակացութեան եկանք, թէ ՀՄԸՄ նկատուելու էր Դաշնակցութեան տեսակ մը մարզական թելը: Վերջին խօսքը առաւ մեր ամէնուն սիրելի Վահան Էֆէնտին՝ Դամասկոսի ՀՄԸՄի Հայրիկը, եւ ըսաւ, - «Բոլորս հետեւեցանք այս բացառիկ ժողովին եւ անկէ բխած եզրակացութիւններուն, որոնք կը ձգտին ՀՄԸՄը աւելի ամուր հիմերու վրայ դնել. ամէնքս կ'ուզենք զարկ տալ ՀՄԸՄի գեղեցիկ առաջելութեան, առաջնորդելու հայ երիտասարդութիւնը դէպի ազնիւն ու վեհը իր «Բարձրացի՛ր Բարձրացո՛ւր» նշանաբանով: Այս պատմական ժողովը պատասխանատուներուս իւրաքանչիւրին վրայ պարտք կը դնէ աւելիով վերանորոգելու դաստիարակութիւնը՝ Դաշնակցութեան ազգայնական գաղափարին, մեր շարքերէն ներս: Ապա բացագանչեց.

Մենք՝ ՀՄԸՄականներ, դաշնակցականէ աւելի դաշնակցական ենք»:

Բոլորս ոտքի, որոտընդոստ ծափերով եւ հուռոտանքով ողջունեցինք Վահան Էֆէնտին եւ ինքնաբոլոր սկսանք երգել «Յառաջ Նահատակ»ը:

Այս ոգիով փակուեցաւ ՀՄԸՄի այս շինիչ եւ պատմական պատգամաւորական ժողովը՝ 18 Փետրուար 1947ին, որպէսզի ալ չկրկնուին 1930ական թուականներու եւ 1945ի պատահած ցաւալի դէպքերը:

ՀՄԸՄ-ի ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԾԱՆՐ ՀՐԵՏԱՆԻՆ ՆԵՐԿԱՅ Է ԱՅՍ  
ԳՐԴ ՊԱՏԳԱՄԱԽՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ՝ ՊԷՅՐՈՒԹԻ ԱԿՈՒՄԲԸ,  
15 ՓԵՏՐՈՒԱՐ 1947


Այս ժողովին կը մասնակցին Պէյրութի Ա. խումբի երեք ֆութպոլիստները՝ Եղիշէ Մանուկեան, Սարգիս Ազնաւորեան եւ Վարդիվառ Յովհաննէսեան:

## ՀԱԼԷՊ 1947

### ՀՄԸՄ-Ի ՄԻՋՄԱՍՆԱԾԻԻՂԱՅԻՆ ԲԱՑԱՌԻԿ ԽԱՂԵՐԸ ՀԱԼԷՊ

Ձատիկ է դարձեալ: «Դէպի Հալէպ» ազդանշանը տրուած է արդէն: Լիբանանի եւ Սուրիոյ բոլոր քաղաքներէն կ'երթային Հալէպ՝ Նաւասարդեան տօնակատարութեան: Հայ ժողովուրդը կ'ուզէր նորէն ապրիլ եւ վայելել ՀՄԸՄի ստեղծած այս խանդավառ մթնոլորտը, յիշեցնելով եւ վերապրեցնելով հայոց պատմութենէն մեզի հասած Նաւասարդեան տօնակատարութիւնները:

Տասնեակ մը օթոպիւսներով նամբայ ելանք Պէյրութէն՝ բարձր տրամադրութեամբ թնդացնելով մեր յեղափոխական երգերը: Մեզի հետ էր «Կիւլիւմ» Յովհաննէսը՝ Երուսաղէմէն, որ մասնաւորաբար իմ խնդրանքիս ընդառայելով եկած էր մեզի միանալու: Նոյնպէս մեզի հետ էր ամէնուս սիրելի Տոպրին՝ ՀՄԸՄի ֆութպոլի խումբին Mascottep, որ իր զուարեակի խաղերով եւ պատմութիւններով կը խանդավառէր մթնոլորտը: Ո՞վ չէր ուզեր արդեօք այսպիսի խանդավառ մթնոլորտի մէջ նամբորդել ֆութպոլիստներուն հետ: Խումբին մօտիկ մեր բոլոր ընկերները կ'ընկերակցէին մեզի:



ՌԷՊԻ ՀՄԸՄ-Ի ՄԻՋՄԱՍՆԱԾԻԻՂԱՅԻՆ ԽԱՂԵՐԸ ԺԱՄԲԱՆ՝ ՀԱՄԱՅԻ  
ՄԷՋ 8 ԱՊՐԻԼ 1947 ԶՐԶԱՆ ՆԱՌԻՐԱԻ ԱՌՋԵԻ  
ՄԵԶԻ ՀՅՏ ԵՆ ԼԻԲԱՆԱՆԻ ԲԻՆԿ-ԲՈՆԿԻ ԱՆՈՅԵԱՆՆԵՐ  
Ձախէն ծոած՝ Պօղոսիկ, Վահագն Յովհաննէսեան եւ Վարդիվառ:

## «ՀՐԱՇՔ» ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆ ԴԱՇՏԸ ՆՈՐ ԳԻՒՂԻ ՄԷՋ

Դաշտի մը չգոյութեան պատճառաւ, եւ որպէսզի Կիրակի օրուան միջմասնանիւղային մրցումները կարենային տեղի ունենալ, մէկ շաբթուայ ընթացքին, մեր աննման ժողովուրդի զաւակները դաշտ մը մէջտեղ բերած էին Նոր Գիւղի մէջ:

Հրաշք մըն էր այս նոր դաշտին շինութիւնը, որ միայն ՀՄԸՄի հաւատքն ունեցող մարդիկը կրնային իրագործել: Այդ դաշտին վրայ խաղցանք առաջին մրցումը Նոր Գիւղի դէմ, որուն դիւրաւ յաղթեցինք եւ մնացինք աւարտականի Հալէպի հետ: Կիսախաղի դադարին, Հալէպի շատ սիրուած առաջնորդ՝ Զարեհ Սրբազան Փայասլեան, դաշտին պաշտօնական բացումը կատարեց մկրտելով զայն մեր հին հայոց պատմութենէն եկած «Նաւասարդեան դաշտ» անունով:

Երկուշաբթի կէսօրէ ետք, 30 հազարի հասնող բազմութիւն մը փութացած էր Հալէպի նորակառոյց դաշտը՝ ներկայ ըլլալու միջմասնանիւղայինի եզրափակիչ հանդիսութեան: Պէյրութ - Հալէպ մրցումը շատ տաք խաղ մը եղաւ: Գեղեցիկ մէկ եռանկիւն բասարկութենէ մը ետք, Վարուժան կը նշանակէր Պէյրութի առաջին կոլը: Հալէպ, մեզմէ աւելի զօրաւոր, սկսաւ տիրապետել դաշտին վրայ: Թէեւ ճանի մը առիթներ ունեցանք կոլ նշանակելու, բայց չյաջողեցանք, որովհետեւ Հալէպի պաշտպանողական գիծը անսպասելի, շատ զօրաւոր դիմադրութիւն ցոյց տուաւ, եւ բերդապահ Լեւոնը հրաշքներ գործեց: Խաղը վերջացաւ 3 - 2՝ Հալէպի յաղթանակով:



ՊԷՅՐՈՒԹԻ ՀՄԸՄ-Ը ՀԱԼԷՊԻ ՄԷՋ 1947-ԻՆ

Զախէն՝ Վարդիվառ (խմբապետ), Տիգրան, Եղիշ, Էլի Հաքիմ, Ժիրայր, Յակոբ, Յովհաննէս, Սարգիս, Վարուժան, Մանուէլ, Ստեփան եւ Գամարեան:

## 1947-ի ՀՄԸՄ-ի ՓԱՌԱՊԱՆԾ ՏՈՂԱՆՑՔԸ

ՀՄԸՄի փառքը պանծացնող, հայ ժողովուրդի թանկագին պատիւը միշտ բարձր պահող, եւ մեր հոգիներուն վերանորոգում եւ յոյսի թռիչք տուող փառահեղ տողանցքը: Զինուորագրեալ մարզիկները սկսան յառաջանալ ճակատաբաց՝ բարեւելով ռոտի կեցած ժողովուրդին, որ բոլոր հոգիով կը հետեւէր տողանցքին եւ իւրաքանչիւր դրօշակիրին անցնելուն, որոտընդոստ ծափերով կ'ողջունէր զայն: Հազարներ կը մասնակցէին՝ կակուղ թաթիկէն մինչեւ երէց սկաուտ, արեւուշներ, մարզիկներ իրենց հեծիկներով, պամֆէթպուլի եւ ֆուլթպուլի խումբեր, կը ֆայէին զինուորական անթերի ֆալուածքով, առաջնորդութեամբ Հալէպի ՀՄԸՄի հռչակաւոր ֆանֆառին, որ երկինք ու երկիր իրար կը խառնէր ի՛ր հոգեցունց նուագով:

Այս սմանչելի տեսարանին հոգեւին տարուած եւ յուզումով կը հետեւէի մեր խումբին, կարծես մարդամեքենայ (Robot) ըլլայի: Հանգիստ չէի, պակաս բան մը կը զգայի մէջս. գրկուածի պէս, ես ալ կ'ուզէի խառնուիլ ժողովուրդին, հոգեպարար ապրումներ ունենալ, իրենց ինքնաբուխ փսփսուէներն ունկնդրել, դիտելով այս զմայլելի տողանցքը հազարաւոր հայորդիներու: Ալ ոչինչ արգելք կրնար ըլլալ ինծի: Սպրդեցայ դուրս տողանցքի շարքէն, ելայ թրիպիւն, խառնուեցայ ժողովուրդին, սկսայ դիտել եւ ապրիլ... Այս ինչ հիանալի եւ տպաւորիչ տեսարան էր:



ՀԱԼԷՊԻ ԳԱՅԼԻԿՆԵՐՈՒ ՖԱՆՖԱՌԸ ԿԱՌԱՋՆՈՐԴԷ ՏՈՂԱՆՑՔԸ



Ձորս կողմէս կը լսէի միաբերան օրհնութիւն մը... «Աստուած պահէ այս ժողովուրդը»: Դաշտը լեցուած էր. իւրաքանչիւր խումբ իր տեղը գրաւած, պատրաստ կը սպասէին ընդհանուր սկաուտապետ՝ Լեւոն Պապուզեանի հրահանգին:

- Օ՛ն, յառաջ... եւ այդ հրահանգին վրայ ամբողջ դաշտը մէկ մարդու նման սկսաւ յառաջանալ: Իսկ երկրորդ հրահանգին վրայ.

- Խումբ կա՛ց, պատուի ա՛ն...

Բոլորը կանգ առին եւ պատուի կեցան, արժանանալով որոտընդոստ ծափերու, ապա փողերախումբը հնչեցուց քայլերգները՝ Սուրիոյ, Լիբանանի եւ ՀՄԸՄի: Ամբողջ ժողովուրդը՝ հանդիսութիւնը հովանաւորող Հալէպի Կուսակալով, շրջանային եւ տեղական վարչութիւններով, հայ եւ տեղացի երեւելի հիւրերով ոտքի կեցած կը հետեւէին այս սքանչելի տեսարանին: Աչքերէս արցունքները կը թափէին: Կարծես հայոց հայրենիքին պաշտպանութեան ապագայ բանակն էր սա պահուս, սուրիացի ազնիւ ժողովուրդին հիւրընկալ երկնքին տակ... Հանգստացայ, իջայ թրիպիւնէն եւ միացայ խումբիս:

Փութալոյի մրցումը շարունակուեցաւ ու Հալէպի յաղթանակով վերջացաւ խաղը՝ 3-2 արդիւնքով: Յաղթանակի տօնը ընդհանուր էր ՀՄԸՄի մեծ ընտանիքին համար, եւ զայն տօնեցինք երեկոյեան, ակումբին մէջ, ուր սեղանները ծանրաբեռնուած էին տեսակ տեսակ մեզէն-



ՏՊԱԻՐՈՒԻԶ ԽՄԲԱՆԿԱՐ՝ ՀՄԸՄ՝ ՊԷՅՐՈՒԹ, ՀՄԸՄ ՀԱԼԷՊ 1947

Ձախէն՝ Լեւոն Պապուզեան (ընդհանուր սկաուտապետ՝ Հալէպէն), Կարապետ Ադնեան (կազմակերպիչ յանձնախումբ՝ Հալէպէն), Յովհաննէս Շահինեան (Միջմասնաճիւղային խաղերու ընդհանուր պատասխանատու՝ Պէյրութէն), Վարդիվառ (Պէյրութի խումբին խմբապետը) ապա՝ Պէյրութի խումբը եւ Հալէպի խումբը միջմասնաճիւղային խաղերուն՝ Հալէպ:

րով, հայկական այլ համեղ կերակուրներով եւ Հալէպի խորովածով: Հալէպի հիւրընկալ հայերը, առատօրէն բերին պաստրման, սունուխը, պանիրի եւ պէօրէկի տեսակները եւ այլն:

Այս խրախնամանքին զուարթ մթնոլորտին յարատեւման մէջ իր բաժինն ունէր մեր սիրելի Տոպրին, իր զուարնալի անէֆտօքներով: Եղան նոյնպէս ինքնաբուխ նառեր, արտասանութիւններ եւ մեներգներ: Մեր ուրախութիւնը իր գագաթնակէտին հասաւ, երբ Հալէպի խաղացողները եկան միացան մեզի, եւ իրենց շահած բաժակով սկսանք խմել: Այդպէս, մինչեւ ուշ գիշեր ուրախութեամբ եւ խանդավառութեամբ տօնեցինք ՀՄԸՄի այս փառաւոր յաղթանակը:

1947 ԶԱՏԻԿ ՀՄԸՄ-Ի ՄԻՋՄԱՍՆԱԾԻՒՂԱՅԻՆ ԽԱՂԵՐԸ ՀԱԼԷՊ  
գրեց Եղիշ «Ազդարար Ծաբաթօրեակ»ի մէջ

ՀՄԸՄ՝ ՀԱՅ ՄՏՔԻՆ, ՀԱՅ ՄԿԱՆԻՆ ՈՒ ՀԱՅ ԿԱՄՔԻՆ  
ԱՐԹՈՒՆ ՊԱՀԱԿԸ

30 000 ՀԱՅՈՐԴԻՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ

Զատկական տօներէն մօտաւորապէս շաբաթ մը առաջ Հալէպ քաղաքը կը զգենու իրական մրջնարանի մը բոլոր յատկութիւնները: Դեռ քանի մը՝ շաբաթ առաջ իր պատեանին մէջ ծուարած այս ոստանը, յանկարծ կը սթափի իր տարեկան թմբիրէն ու կը յորդի կեանքով ու աւիւնով: Մեծով-պգտիկով, ամէն մարդ ոտքի է:

ՀՄԸՄի ակումբը յանախավայրը դարձած է առօրեայ քաղաքին առողջ երիտասարդութեան ու միշտ կենդանի է եկող գացողներու յարանուն երթեւեկով:

Այդ օրերուն, արդարեւ շրջանային վարչութեան հրաւերով, ՀՄԸՄի Հալէպի մասնաճիւղին ակումբին մէջ կը ժամադրուին հայ մկանին լաւագոյն ներկայացուցիչը հանդիսացած այս կազմակերպութեան բոլոր մասնաճիւղերը, հեռաւոր Գամշլիէն, չարաշուք Տէր Զօրէն, գեղածիժաղ Լաթափալէն, պատմական Դամասկոսէն ու շարժման անկիւնադարձ հանդիսացած Պէյրութէն մինչեւ ամենահամեստ մեր մասնաճիւղերուն, որոնք մէկ մտասեւեռում ունին՝ Զատկուան հանդիպումները, ուխտի օրը ՀՄԸՄին, երթալ Հալէպ, իրարմով անգամ մը եւս հաղորդուելու, իրարու աչքերուն մէջ անմար մնացած հայու հարազատ զաւակներուն կայծով լուսաւորուելու, իրենց հոգիներուն մէջ կուտակուած արմէնական ցեղին ամէնէն ընտիր յատկութիւններով անգամ մը եւս պարուրուելու համար:

Ու այդ օր հոն է՝ Սուրիոյ, Լիբանանի, Պաղեստինի եւ Անդր-յորդանանի ՀՄԸՄ ՌԱՀՎԻՐԱՆ: Հոն է Պէյրութը եւ երբեմնի ահարկու հսկան՝ Դամասկոսը, հոն է Հումսը, Արաբ Բունարը, Բասէլ Այնը,

Ճարապուրուքը, Ազէզը, Թէլ Ապիատը, Տէրպէսիէն, Պուրն Համուտը, Թրիփօլին եւ Զահլէն: 17 մասնաճիւղեր եկած են խանդավառ եւ հաւատաւոր, թէ կայ կազմակերպութիւն մը, որ գիտէ իր զաւակները պատրաստել հայրենիքի բազմին: այդ կազմակերպութիւնը իրենց միութիւնն է՝ ՀՄԸՄը: Անշէջ այս հաւատով առլի, ՀՄԸՄի 17 մասնաճիւղերը սկսան 21րդ հանդիպումներուն, Կիրակի օր, 6 Ապրիլ 1947, ՀՄԸՄի Նոր Գիւղի նորակառոյց մարզարանին վրայ, ՀՐԱՇՔ ՄԱՐԶԱՐԱՆԸ:

Բլուրի մը ստորոտը ծուարած, դեռ շարաթ մը առաջ, անոր վրայ եզներ եւ ոչխարներ կ'արածէին, շարաթ մը յետոյ՝ ահա մարզարանը: Գիտական ամէնէն արդիական միջոցներով գործող կազմակերպութիւններն իսկ ափ ի բերան պիտի մնային, մարդկային, դու՛ք ըսէ՛ք՝ ՀՄԸՄական այս հրաշքին առջեւ:

Անցողակի ըսենք սակայն, թէ մեզի, ՀՄԸՄական երիտասարդներուս համար հրաշք մը չէ ասիկա, որովհետեւ մենք կը հաւատանք ազնիւ ոգիով ու անշահախնդիր նուիրումով սկսած գործերու բարւո՛ք վախճանին:

Ձեռք գարմանար որ հազարաւոր ՀՄԸՄականներ, իրենց գործերը ձգած եկած են, աշխատած են մինչեւ մարզարանին աւարտումը: Կակուղ թաթիկ, գայլիկ, սկառուտ, երէց, արծուիկ ու արեւունշ, վարչական, բժիշկ, փաստաբան, այր ու կին գիշերը ցերեկին խառնած, խոպան գետիկը յարդարեցին, բարձրացուցին իրենց հոգեկան տաճարին պարիսպները, կանգնեցին ֆուսպոլի գոյգ բերդերը, ջուր եւ ելեֆտրականութիւն հասցուցին անկէ ներս, որպէսզի ՀՄԸՄ ունենայ իր օճախը՝ առ ի չգոյէ լաւագոյնին, անոր, որ գալոց է շատ մօտ ատենին: Ու հրաշք մարզարանին վրայ է որ տեղի ունեցան, Շարաթ եւ Կիրակի օրերը, երկրորդական խումբերու բոլոր հանդիպումները, ինչպէս նաեւ առաջին դասակարգի վերջընթեր մրցումները:

### ՀՄԸՄ-Ի 3 ՐԴ ՄԻՋՄԱՍՆԱԾԻՒՂԱՅԻՆ ՈՂՈՄԻՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ ՊԷՅՐՈՒԹ՝ 21 ԵՒ 22 ՅՈՒՆԻՍ 1947

Զօրաշարժի ենթարկուած էին մեր բոլոր կարելութիւնները՝ լաւագոյն պայմաններու տակ կայացնելու ՀՄԸՄի միջմասնաճիւղային 3րդ ողոմպիական խաղերը, որոնք տեղի պիտի ունենային Պէյրութի Քաղաքապետարանի դաշտին վրայ: Կազմակերպիչ յանձնախումբը, որուն ես ալ մաս կը կազմէի, ջանք չէր խնայեր այդ նպատակով, որպէսզի պատշաճօրէն ընդունին մեր յարգելի հիւրերը՝ բարձրաստիճան սպաներ Լիբանանի բանակէն, սրորի եւ ֆուսպոլի ֆետերասիոններու անդամներ, հայ եւ տեղացի երեսփոխականներ, հայ ընտրանին, ՀՄԸՄի շրջանային վարչութեան անդամներ եւ նախարարներ: Տրուած ըլլալով որ ողոմպիական խաղերը աւելի

մարզական եւ արիւթիզմի համար էին, ֆութպոլի մրցումը անշուք անցաւ, Հալէպ յաղթեց Պէյրութի 3-0 արդիւնքով եւ առաւ ֆութպոլի բաժակը: Կէսօրէն վերջ սկսան մարզական խաղերը բազմահազար ժողովուրդի ներկայութեան, կարծես ազգային մեծ տօնակատարութիւն ըլլար, ուշադիր եւ հետաքրքրութեամբ կը հետեւէին այս գեղեցիկ խաղերուն, ամէնուն սրտերը կը լեցուէին խանդավառ ուրախութեամբ:

Ահա սկսաւ ամենայուզիչ եւ միեւնոյն ատեն ամենախանդավառ պահը՝ ՀՄԸՄի փառահեղ տողանցքը: Շարքերը սկսան յառաջանալ գինուորական անթերի կարգապահութեամբ, սկառուտ, գայլիկ, կակուղ քաթիկ, մարզիկ, ֆութպոլիստ, աւելի քան երկու հազար հոգի: Օրուայ օտար եւ տեղացի հիւրերը հիացումով կը դիտէին եւ ոգելորուած անընդհատ կը ծափահարէին, այսպիսի գեղեցիկ մարզական տօնակատարութիւն առաջին անգամ էր որ կը տեսնէին Լիբանանի մէջ: ՀՄԸՄի եւ ՀՄԸՄականներու լուսեղէն ոգին էր, որ կը սաւառնէր տողանցողներու շքեղ փաղանգին վրայ: Այս տարի եւս Հալէպի ՀՄԸՄը շահեցաւ ողովպիականի բաժակը: Լիբանանեան մամուլը լայնօրէն անդրադարձաւ այս խաղերու անթերի կազմակերպման՝ շնորհաւորելով ՀՄԸՄի ղեկավարութիւնը:

## ՄԵՐ ԱՄԱՌՆԱՅԻՆ ՇՐՋԱՊՏՈՅՏՆԵՐԸ

Լիբանանի զանազան շրջաններու մէջ, մարզական եւ ընկերային կապեր հաստատելու համար, ամէն ամրան եղանակին՝ Կիրակի օրերը, շրջապատյոտներ կը կազմակերպէինք ֆութպոլի բարեկամական մրցումներ ունենալու բոլոր քաղաքները՝ Թրիփոլի, Զդարթա, Ռայեաֆ, Ալէյ, Սայտա, Սուր նաեւ Դամասկոս:

Խումբը ընդհանրապէս կազմուած կ'ըլլար մեր երկրորդական խումբերու ապագացու խաղացողներէն, ինչպէս՝ «Մայր Հայաստան»էն, «Հայրենիք»էն, «Մուրատ»էն, եւ այլն: Այս մրցումները լաւագոյն առիթը կ'ընծայէին մեր երկրորդական խաղացողներուն առաւել եւս մարզուելու: Հիւրընկալ խումբը կը հոգար մեր նախապահածախսն ու նաշը:

Մրցումը տեղի կ'ունենար ի ներկայութեան գիւղին կամ քաղաքին երեւելիներուն եւ տեղացիներու հոծ բազմութեան մը: Երբ մեր խումբը դաշտ իջնէր՝ «Եսիշ էրմէն, Եսիշ ՀՄԸՄ» (կեցցեն հայերը, կեցցէ ՀՄԸՄը) բացազանչութիւններով կը դիմաւորուէր: Ի յայտ կու գար թէ՛ ՀՄԸՄը մեծ հմայք կը վայելէր այս շրջաններուն մէջ եւս: Ամառ ըլլալով՝ կը նախընտրէինք լեռնային օդասուն շրջանները այցելել:

ՀՄԸՄ - ՊԱՐԱՏԱ 2-2 ՀԱԻԱՍԱՐ ԴԱՄԱՍԿՈՍ  
21 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1947-ԻՆ

Դամասկոսի Պարատա խումբը հրաւիրեց մեզ մրցումի մը Դամասկոսի մէջ, անշուշտ բոլոր ծախսերը իրենց վրայ, երթեւեկ, նաշ եւ այլն: Սիրով ընդունեցինք այս առաջարկը եւ առիթէն օգտուելով, ՀՄԸՄի Բ. խումբը՝ «Մայր Հայաստան», հետերնիս տարինք մրցելու Դամասկոսի ՀՄԸՄի դէմ: Դեռ ամառուան շրջանն էր, կանոնաւոր



Վարդիվառ, Վարուժան, Սարգիս:



Դամասկոսի անուանի ֆութպոլիստ Արթինիկը եւ Վարդիվառ:

փորձերու չէինք սկսած, բայց շատ մեծ խանդավառութեամբ գացինք Դամասկոս, մեզի համար տեսակ մը ձրի պտոյտ էր, նաեւ ես կը հաւատամ որ ամառնային մեր շրջապտոյտ - մրցումները մեծ դեր կը խաղային մեր խաղացողներուն մէջ, աւելի սերտ եւ մտերիմ բարեկամութիւն ստեղծելու իրարու մէջ: Գալով «Մայր Հայաստան»ի խաղացողներուն, անոնց ուրախութեան չափ չկար, որովհետեւ կը ճամբորդէին Ա. խումբի խաղացողներուն հետ: Մրցումները եղան շատ հետաքրքրական. մենք հաւասար մնացինք 2-2, իսկ «Մայր Հայաստան»՝ յաղթեց 4-3 արդիւնքով:

Անմոռանալի խանդավառ պտոյտ, շատ ուրախ ճամբորդութիւն, կէսօրուայ փառաւոր նաշ՝ Պարատա գետի եզերքի պարտէզներուն մէջ՝ խորովածներու տեսակներով. վերադարձին խանդավառ՝ յեղափոխական երգերով եւ մեներգներով. երբեք ճամբորդութեան յոգնութիւն չզգացինք: Գիշերով հասանք Պէյրութ:

ՅԻՇԱՏԱԿԵԼԻ ՄՐՑՈՒՄ -ՀՄԸՄ ՅԱՂԹԵՑ ՌԱՍԻՆԿԻՆ 3-0  
ԱՀԱԻՈՐ ԿՌԻԻ - ԺԱՆՏԱՐՄՆԵՐՈՒ ՀԵՏ ԲԱԽՈՒՄ  
ԵՒ ՎԵՑ ՕՐԵՐ ՊԱԱՊՏԱՅԻ ՍԵՐԱՅԻ ԲԱՆՏԻՆ ՄԷՁ  
16 ՆՈՅԵՄԲԵՐ 1947

Սովորական երեւոյթ էր դարձեր՝ ամէն անգամ որ յաղթէինք, հակառակորդ խումբին համակիրները կռիւ կը փնտռէին: Այս «կանոն»ը յարգուեցաւ 16 Նոյեմբեր 1947ին՝ DPHB ի դաշտին վրայ ՅԸՐՆ ԷԼ-ՇԸՊՊէՔ, ուր ՀՄԸՄը պիտի դիմակալէր Ռասինկը: Հոժ բազմութիւն մը տեղ գրաւած էր թրիպիւնին մէջ՝ հայերով լեցուն: Այս մրցումին ինձի հետ միասին եկան դաշտ բրոջս տղան՝ Մելնոնը եւ նշանածս՝ Յասմիկը, Եղիշը եւ տիկինը: Մթնոլորտը ծանր էր եւ ջղային վիճակ կը տիրէր: Խաղը սկսաւ իրաւարարութեամբ Ատէլ Սիտանիի՝ անկողմնակալ եւ ուղղամիտ անձ: Ռասինկի կոշտ խաղարկութենէն յայտնի եղաւ, որ անպայման կ'ուզէին յաղթել: Փոխադարձաբար սկսանք կարծր խաղալ՝ առանց կորսընցնելու մեր ներդաշնակ խաղարկութիւնը, անհատական անգսպելի իջուածքներով սկսանք հարուածել դիմացի բերդը, եւ առիթը գտանք գնդակը օդէն հակառակորդին բերդին առջեւ հասցնելու, անդիէն՝ Սարգիսը, թոչնով օդին մէջէն գլխու գօրաւոր մէկ հարուածով նշանակեց մեր առաջին կոլը: Ժողովուրդին խանդավառութիւնը ո՞վ կրնար զսպել, «հուռոտ» եւ «ՀՄԸՄ, կոլ կ'ուզեմք», - կը պոռային ու կ'երգէին... Ռասինկի մարդիկը չկրցան այս բոլորը կլլել: Թրիպիւնին մէջէն սկսաւ կռիւը: Ժողովուրդը դաշտ խուժեց. իրաւարարը խաղը կեցուց. ընդհանուր իրարանցում, կռիւ. հսկողութեան համար դաշտ եկած ժանտարմները անմիջապէս միջամտեցին: Եւ ինչ տեսնեմք... Հսկայակազմ տեղացի երիտասարդ մը, Ռասինկի համակիրներէն, երեսը արիւնլուայ՝ մէկու մը ետեւէն կը վազէ, ժանտարմ մը ատրեանակը քաշած կը պոռայ փախչողին ետեւէն, - «կեցի՛ր, թէ ոչ կը կրակեմ»:

Շուտով կը նշմարեմ Սարգիսին եղբայրը՝ Գէորգն է, որ ձեռքին «ամերիկեան բոունցֆոլ» կը փախի: Ասիկա տեսնելով ես արագ մը կը վազեմ եւ ժանտարմին առջեւը կեցնալով կը պոռամ երեսին. - «Տըպպըլ ֆէրտ, խալլիֆ անտէֆ» (ատրեանակը վար առ եւ տեղէդ մի շարժիր): Ժանտարմը աւելի կը կատողի: Վրայ հասեր էին արդէն Սարգիսը եւ ուրիշներ: Կը յարձակիմ վրան, ձեռքս կը տանիմ ատրեանակին եւ գիր կընդխառնումով երկուսս գետին կը տապալին: Կը խլեմ ժանտարմի ձեռքէն ատրեանակը եւ զայն կու տամ վրայ հասած ընկերոջս՝ Վարդանին: Այս վերջինը երկու հարուած գետին կը կրակէ եւ խոյս կու տայ:

Դաշտը պարպուած էր: Քիչ ետք, ժողովուրդը թրիպիւն կը

վերադառնալ, խաղը կը վերսկսի: Այս անգամ դերերը շրջուած էին, հակառակորդին թափը կոտրուած էր, իսկ մենք՝ առիւծ կտրած, նորէն յարձակողականի անցանք, եւ առաջին կիսախաղը վերջացաւ 3-0՝ մեր յաղթանակով:

Կիսախաղի դադար. դաշտին մէջտեղ նստած կը հանգչէինք: Մէյ մըն ալ դաշտէն ներս խուժեցին յիսունէ աւելի ժանտարմներ եւ ուղղակի հայիոյելով մեզի մօտեցան եւ ձերբակալեցին ՀՄԸՄի բոլոր խաղացողները. տարին մօտակայ Ֆըրն էլ-Շըպպեֆի ոստիկանատունը: Միայն Մանուէլը օձիքը ազատած էր: Ռասիկնի խաղացողները մէջտեղ չկային:

Իրաւարար Ատէլ Սիտանին ոստիկանատուն եկաւ, վկայեց ոստիկանապետին մօտ, որ այս խաղացողները որեւէ ձեւով կոխիւն հետ կապ չունին, Լիբանանի Ազգային խումբին հերոսներն են, քանիցս յաղթանակներ տարած են, մաքուր եւ ազնիւ ոգիով մարզիկներ են, ասոնք ազատ պէտք է արձակուին, գացէք բուն յանցաւորները գտէք: Մտիկ ընող չեղաւ:

Անդիէն Խաչիկ էֆէնտի Եղվերեանի դիմումին վրայ կը հասնի մեր երեսփոխանը՝ Մելիքն Հայրապետեան, կը միջամտէ ոստիկանապետին մօտ, բայց անկարելի էր մեր ազատ արձակումը, շատ ծանր յանցանք կը նկատէին ժանտարմային խոշտանգումը, արիւնլուայ վիճակի մէջ ոտնակոխ ըլլալը, իսկ մեծագոյն յանցանքը՝ ժանտարմային ատրճանակին բռնագրաւումն էր, որ անպայման պէտք էր վերադարձուէր:

Միայն ես գիտէի ատրճանակին ուր ըլլալը. յայտնեցի եղբայր Շահինեանին, որ եկած էր բանտի մեր խուցը: Գնաց, բերաւ եւ յանձնեց ատրճանակը ոստիկանապետին: Որոշուեցաւ չորս հոգի պահել, մնացեալները ազատ արձակել: Ես եւ Սարգիսը ծեծ ուսող ժանտարմին ցուցմունքին վրայ ստոյգ պիտի մնայինք, իսկ մնացեալ երկուքը պիտի նշնակուէին ըստ քախտի:

Այդ «բախտաւորները» եղան Տիգրանն ու Լեւոնը, որ բողոքեցին, թէ իրենք կոխիւ չէին մասնակցած, բայց ի գուր: Այսպէս, գիշերով չորսերնիս տարին, քաղաքէն հեռու, Պապատայի տխրահռչակ բանտը նետեցին:

Բանտին այդ ընդարձակ խուցը (Նագարա), արդէն լեցուն էր քսանի չափ առժամեայ ձերբակալեալներով: Անոնք զարմացած մեզի կը նայէին որ ֆուրքովի տարագով էինք դեռ: Տեղւոյն ժանտարմները արդէն իմացեր էին ծանր միջադէպը, մեզ դիմաւորեցին հայիոյելով եւ պոռալով: Երբ մեր հերթին, իրենցմէ աւելի պոռալով սկսանք հայիոյել եւ սպառնալ իրենց, ձգեցին ու հեռացան անգամ մըն ալ չերեւալու համար: Մենք ալ քաշուեցանք անկիւն մը, եւ քով քովի եկած քունի մտանք, բանտի առաջին գիշերը:

17-11-1947 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ՝ ԵՐԿՐՈՐԴ ՕՐԸ ՊԱԱՊՏԱՅԻ ԲԱՆՏԸ

Երկուշաբթի առտու արթնցուցին մեզ, զարմանքով իրարու երես կը նայէինք թէ ո՞ւր ենք. երա՞զ էր. մեր աչքերուն չէինք հաւատար թէ բանտն էինք:

Ժամը տասին եկան մերինները, եղբայր Շահինեանը եւ մեր երեսփոխան Տոբթոր՝ Մելիֆոն Հայրապետեանը: Ուրեմն գացեր տեսեր էին հարցաքննիչ դատաւորը եւ իմացեր իրմէ, թէ մեր ամբաստանագիրը շատ ծանր էր, ուր յստակօրէն մենք կ'ամբաստանուէինք ժանտարմը խոշտանգելու եւ իր ատրճանակը խլելու յանցանքներով: Եղբայր Շահինեանը մեզ յուսադրեց, ըսելով թէ պէտք եղած ջանքը պիտի թափէին... «Մեր նակատագիրն է», - ըսինք եւ մենք զմեզ համոզելու համար սկսանք մեր ազգային եւ յեղափոխական երգերը մոմճալ մինչեւ ուշ գիշեր, յետոյ չորսերնիս միասին մէկ ծածկոցի տակ... քնացանք:

18-11-1947 ԵՐԵՔՇԱԲԹԻ՝ ԵՐՐՈՐԴ ՕՐԸ ՊԱԱՊՏԱՅԻ ԲԱՆՏԸ

Առտուն արթննալով, դեռ կը զարմանալիմք պատահածին վրայ, սակայն ստիպուած սկսեր էինք վարժուիլ բանտի կեանքին: Քիչ ետք՝ ես եւ Սարգիսը կանչուեցանք հարցաքննիչ դատաւորին մօտ, որ մեզ բաւական հարցուփորձել էտք, պահ մը շուարած մնաց. անդրադառնալով, թէ իր դիմացի երիտասարդները փողոցային, հասարակ յանցագործներ չէին, հարց տուաւ: Հապա ի՞նչ է այս ամբաստանագիրը: Անշուշտ մերժեցինք ստանձնել միջադէպին բուն պատասխանատուութիւնը, հաստատելով, թէ մենք մարզիկներ ենք, Լիբանանի ֆութպոլի ազգային խումբին մաս կը կազմենք եւ միշտ պաշտպանած ենք Լիբանանի պատիւը ֆութպոլի մարզադաշտերու վրայ:

Վերադարձանք մեր խուցը պատուիրելով Տիգրանին եւ Լեւոնին որ նոյն պատասխանները տալին հարցաքննութեան կանչուելու պարագային: Կէսօրուայ մօտերը մերինները եկեր էին մեծ քանակութեամբ ուտելիքներով ծանրաբեռնուած. մեզ յուսադրեցին յայտնելով՝ թէ յարատեւ ջանքեր կը թափուին մեզ ազատելու համար: Ուրախացուցիչ յուսադրութիւն մը՝ որ շուտով փարատեցաւ, երբ հրաման եկաւ մեզ փոխադրել դատապարտեալներու սրահը: Երաշխաւորութեամբ դուրս գալու ամէն յոյս կորսնցուցինք: Եւ մեզ տարին արդէն իսկ դատուած ու դատապարտուածներու սրահը, ուր սակայն հանելի անակնկալի մը հանդիպեցանք այս անգամ:

Սրահին մէջ, դատապարտեալներուն ամէնէն տիրակալ անձը, այսինքն՝ **գալիմը**, սիրալիք ընդունելութիւն մը վերապահեց՝ մեզ առաջնորդելով սրահին ամէնէն յարմարաւէտ տեղը, նշդելով թէ այդ



անկիւնը մերն էր: Իսկապէս զարմացանք այս անակնկալ մեծ պատիւին համար: Մեզի տրամադրուած անկիւնը տեղաւորուելէն ետք, մօտս կանչեցի **գայիւմը**, եւ հարցուցի թէ մեզ ո՞ւր կէ կը ճանչնար: Պատմեց իր պատմութիւնը, տխուր պատմութիւն: **Զղարթացի է**, երկու տարի առաջ, պատիւի համար ոնիր գործած է՝ մարդ սպաննելով, եւ դատապարտուած է քսան տարուան բանտարկութեան: Մեզ ճանչցած է **Զղարթայի մէջ**, ամառը, մեր ունեցած ֆութպոլի մրցումներու ատեն, եւ ներկայ եղած է աղբիւրի եզերքի ճաշարանին մէջ մեր խնճոյքներուն, մեր խանդավառ երգերը մտիկ ըրած: Այսպէս, մեզի վերապահուեցաւ բանտի պատուոյ տեղը, անդին երեսունի չափ բանտարկեալներ, իրենց դատապարտութեան ծանրութեան համապատասխան տեղեր գրաւած էին՝ անկիւնէն մինչեւ դուռը: Բոլորն ալ նստած՝ իրենց հոգերուն մէջ սուգուած, դեղնած, գունատ երեսներով իրարու հետ կը խօսէին, կամ պատերը կը դիտէին: Երեկոյեան ժամը 9ին, ամէն մարդ պառկած պէտք է ըլլայ. լոյսերը վառած կը մնային:

## 19-11-1947 **ՉՈՐԵՔՇԱԲԹԻ՝ ՉՈՐՐՈՐԴ ՕՐԸ ՊԱԱՊՏԱՅԻ ԲԱՆՏԸ**

Մեր տեղերը հանգիստ ըլլալուն՝ լաւ քնացանք: Առտու երբ արթընցանք, ես շատ տխուր էի, աչքիս առջեւէն չէր երթար Յասմիկին արցունքոտ աչքերով հեռանալը Փըրն էլ-Շըպպէքի ոստիկանատունէն, կիրակի գիշեր: Շատ լաւ գիտէի, թէ իրեն համար տաժանելի օրեր էին իմ բանտարկութեան շրջանը... Ժամը 11ին լուր եկաւ որ դատարան պիտի երթանք: **Չորսերնիս** նոյն պատասխանները պիտի տայինք, այսինքն՝ կըռիւի երբեք չմասնակցեցանք, փաստը այն է, որ կռիւէն ետք մենք խաղը շարունակեցինք: Նուաստացումի զգացումներով սիրտերնիս նեղուեցաւ, երբ երկու-երկու ձեռնակապերով իրարու կապուած՝ մեզ դատարան տարին, եւ այս վիճակի մէջ տեսան մեզ ընկերներ, բարեկամներ եւ բազմաթիւ **ՀՄԸՄ** կանգներ: Դատը սկսաւ դատաւորին կողմէ մեր ամբաստանագիրին ընթերցանութեամբ: Ներկաները լուռ կը հետեւէին: Ընթերցումէն անմիջապէս ետք խօսքը տրուեցաւ մեզի եւ առաջիկը ես առի:

— Այո, կռիւ եղաւ երկու խումբերու համակիրներուն միջեւ, ինչ որ յանախ կը պատահի մրցումներու ընթացքին, բայց մենք՝ խաղացողներս, երբեք կռիւի չենք մասնակցիր եւ ոչ ալ մասնակցած ենք այս կռիւին: Բոլորովին կը մերժեմ եղած ամբաստանութիւնը, մենք մարզիկներ ենք, Լիբանանի ազգային խումբին մաս կը կազմենք եւ միշտ պաշտպանած ենք Լիբանանի գոյները օտար երկիրներու դէմ՝ արիւն-քրտինք թափելով դաշտին վրայ...

Ներկաները որոտընդոստ ծափերով դիմաւորեցին այս վերջին խօսքս:

Սարգիսը, Տիգրանը եւ Լեւոնը նոյն ձեւի արտայայտութիւններ ունեցան, բացարձակապէս մերժելով եղած ամբաստանութիւնը: Ամբաստանող կողմը ներկայ չէր: Նախագահը յայտարարեց, թէ դատը յետաձգուած է յառաջիկայ Ուրբաթ օրուան եւ հաւանական վճիռը պիտի տրուէր այդ օր:

Նորէն առատ ուտելիքներ բերին, զոր տրամադրեցինք սրահի Զդարթացի պետին, որպէսզի զանոնք բաժնէր բոլոր բանտարկեալներուն: Իւրաքանչիւրին առջեւ կէսօրուայ կերակուրը նոյն ու առատ էր, այնպէս որ բանտի տրուած կերակուրին երեսը նայող չկար: Բանտարկեալները այս առատութենէն գոհ էին, եւ անպայման կ'աղօթէին որ մենք երկար առեւն մնանք բանտ...

## 20-11-1947 ՀԻՆԳՇԱԲԹԻ՝ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ՕՐ ՊԱԱՊՏԱՅԻ ԲԱՆՏԸ

Այլեւս բանտի օրէնքներուն եւ բանտարկեալներուն գրեթէ վարժուեցանք:

Պաղտատցի Ապպուտ անունով 50-60 տարեկան ֆիւրտ մը մեր երազներուն մեկնութիւն կ'ընէր եւ կը պնդէր որ շաբաթը չվերջացած մենք անպայման ազատ պիտի արձակուէինք: Իսկ հինգէն տասը տարի բանտ մնացածները, բանտին իմաստուն փաստաբանները եղեր էին: Երբ իմացան մեր հարցին իրողութիւնը, քով քովի եկան եւ շուրջ հինգ վայրկեան իրարու հետ խորհրդակցելէ ետք, վճիռ կայացուցին, եւ յայտնեցին, թէ անպայման ազատ պիտի արձակուէինք, - «որովհետեւ», - պատճառաբանեցին անոնք, - «ամէն բանէ առաջ՝ դուք մարզիկ երիտասարդներ էք, երկրորդ՝ դուք հայ էք, ամէնէն վստահելի տարրը այս երկրին: Եղածը եղած է, բայց ձեր կողմէ կանխամտածուած չէ, ընդհակառակը՝ ձեր հակառակորդ խումբի համակիրները կողմ ուտելէն ետք է որ կոխին պատճառ եղած են: Իսկ ամենակարեւորը՝ ձեր ղեկավարները դիմումներ կը կատարեն Լիբանանի նախագահին, վարչապետին եւ նախարարներուն, որպէսզի դուք անպայման ազատ արձակուիք դատարանի յաջորդ նիստին: Մինչեւ իսկ քաղաքական եւ հայու արժանապատուութեան հարցի կը վերածեն այս խնդիրը»:

«Սակայն մէկ բան լաւ գիտնալու էք. ժանտարմի մը վերարկուին մէկ կոճակը փրցնողը, օրէնքով վեց ամսուան բանտարկութեան կը դատապարտուի: Ո՞ւր մնաց ժանտարմի մը ֆիթն ու բերանը արիւնլուայ ընելը եւ ստրեանակը ձեռքէն խլելը»... Այսպէս վճիռ տուին բանտի մեր իմաստունները:

21-11-1947 ՈՒՐԲԱԹ՝ ՎԵՑԵՐՈՐԳ ՕՐԸ ՊԱԱՊՏԱՅԻ ԲԱՆՏԸ  
ՎԵՐՋԱՊԷՍ՝ ԱՆՊԱՐՏ ԱՐՁԱԿՈՒՄ

Դատավարութեան օրն էր: Առտու կանուխ արթնցանք պզտիկ յոյսով մը: Սովորականէն տարբեր եռուզեռ մը կը տիրէր մեր շուրջը: Բանտարկեալները մեր չորս կողմը կը դառնային: Շուտով գետին փռեցին նախանաշի սփռոցը, բերին ուտելիք եւ ջուր, ապա համով սուրն մը պատրաստեցին:

Ժամը 11 ին, ատենին առջեւ պիտի հանուէինք: Հարց ու փորձի ատեն, որպէսզի սխալներ չընենք, մեր նախապէս ըսածներուն վերաբառը ըրինք, շեշտելով որ նոյն բաները պիտի ըսէինք դատավարութեան ընթացքին, - թէ մենք երբեք չենք մասնակցած կռիւին: Վերջապէս ներկայացանք. սրահը լեցուն էր. բոլորը հայ՝ մեծով պզտիկով, վարչականներ, ՀՄԸՄականներ, ազգականներ, ընկերներ, բարեկամներ, մէկ խօսքով՝ ամբողջ Պուրն Համուտը հոն էր:

Նստեցանք դատապարտեալներու նստարանին վրայ, իսկ մեր դիմացը՝ ամբաստանող կողմը: Դատաւորին ընթացիկ ստուգումներէն ետք՝ շեշտեցինք կռիւին մեր չմասնակցիլը եւ անմեղ ըլլալը: Խօսքը ամբաստանող կողմին տրուեցաւ: Ծեծ ուտող եւ ատրեանակը կորսնցնող ժանտարմը ոտքի ելաւ եւ յայտարարեց. «Ասոնք չէին»: Նոյնը յայտարարեցին ամբաստանող կողմի վկաները:



ԲԱՆՏԷՆ ՏՈՒՆ

Գեղամ Տատեան - Վարդիվառ - Սարգիս

Ասոր վրայ մեր փաստաբանը ելաւ, պաշտպանողական, կուռ ճառ մը արտասանելէ ետք՝ պահանջեց մեր ազատ արձակումը:

Ատեանի նախագահը ամբողջ սրահը լոնցուց եւ արձակեց վեհուր:  
- Պէրաս,- այսինքն՝ անպարտ:

Մեզի դէմ եղած բոլոր ամբաստանութիւնները չեղեալ կը համարուէին եւ մեր դատական թղթածրարը (*casier judiciaire*) մաքուր պիտի մնար:

Ներկայ ժողովուրդը ուրախութեան բացագանչութիւններով եւ որոտընդոստ ծափերով դիմաւորեց արձակուած վեհուր... Ուղղուեցանք դէպի մեր խուցը: Բանտարկեալները մեծ ուրախութեամբ դիմաւորեցին մեզ, արդէն իմացեր էին մեր անպարտ արձակուիլը: Ինչ որ ուտելիք մնացած էր, իրենց ձգեցինք եւ բաժնուեցանք՝ «ազատ արձակում» մաղթելով: Մերինները դուրսը մեզի կը սպասէին՝ 15-20 ինքնաշարժներով եկած, փաթթուեցանք եւ համբուրուեցանք բոլորին հետ, ես եւ Սարգիսը՝ Գեղամ Տատեանին մօթօսիքիւ վերադարձանք Պուրն Համուտ, ուր բոլորը հաւաքուած՝ ուրախութեան հուռոտներով մեզ դիմաւորեցին:

Իրիկունը քաղաքի ակումբը գացինք, ֆութպոլի հերթական ժողովը, վարչութիւնը սեղան շտկած էր առատ ուտելիքներով եւ խմիչքներով, լաւ քէֆ մը ըրինք, խմեցին մեր կենացը ազատ արձակուելունս համար, բանտի վեցօրեայ կեանքէն հանելի ու տխուր դրուագներ պատմեցինք: Առաջին անգամ ըլլալով, ժորժ Շատարեանը իր գեղեցիկ ձայնով քանի մը ֆրանսերէն երգեր երգեց, եղան նաեւ իմբական երգեր եւ արտասանութիւններ՝ ստեղծելով խանդավառ տաք մթնոլորտ մը:

Հոն իմացանք, թէ վարչութիւնը միջամտեր է մինչեւ վարչապետին մօտ, մեր ազատ արձակումը ապահովելու համար: Այսպէս՝ վեցօրեայ բանտարկութեան աւարտին, մեր առաջին հանդիպումն էր ՀՄԸՄի հետ:

## ՎԵՐԱԴԱՐՁ ՊԱԱՊՏԱՅԻ ԲԱՆՏԸ...

1949ին կազմակերպուած էր մրցում ՀՄԸՄի Բ. խումբի մը եւ Տրքուէնիի միջեւ: Մրցումը աւարտեցաւ մեր յաղթանակով եւ ծայր տուաւ կռիւր: Տրքուէնիի ղեկավարները մեզի բարեկամ էին, դաշտ իջանք, կոռուողները իրարմէ բաժնեցինք, քամիոններու մէջ ելան եւ կը հեռանային... Յանկարծ, մեր խենթերէն մէկը ատրճանակը կը հանէ եւ հեռացող քամիոններուն վրայ կը կրակէ եւ կը վիրաւորէ մէկը: Ես անմիջապէս ետիս կը դառնամ, կը յանդիմանեմ մեր խենթ կրակողը, եւ,- «կորսուէ՛», - ըսելով կը հեռացնեմ զինքը:

Այս բոլորը տեսեր էին հոն եղող Տրքուէնիի մարդիկը: Յաջորդ օրը երկու ոստիկաններ եկան մեր գործատեղին, զիս ձերբակալեցին

իբր ՀՄԸՄի պատասխանատու, եւ տարին Պապատայի Սերայը՝ հարցաճանճիչ դատաւորին ինչ: Դատաւորը վկաներուն խօսքերուն վրայ հիմնուելով ըսաւ ինծի.- «Դուն ներկայ էիր հոն, ահա չորս հոգի կը վկայեն, թէ ինչ միջամտութեամբդ է որ կոխը աւելի ծանր հետեւանճներ չէ ունեցած. դուն ատրճանակը կրակողին ձեռքէն առեր ես եւ զինքը ապտակելով՝ վռնտեր ես. պիտի ըսե՞ս թէ ով էր կրակողը»:

Նայեցայ մէյ մը. վկաներուն չորսն ալ ծանօթ են ինծի. պատասխանեցի,- «Այս վկաները սուտ չեն խօսիր, բայց սխալած են, այդ օրը ես հոն չէի, անպայման ուրիշ մէկը ինծի նմանցուցած են»:

Դատաւորը վկաներուն նայեցաւ, որոնք պնդեցին իրենց ըսածներուն վրայ: Յետոյ կանչեց ժանտարմները, զիս ցոյց տալով ըսաւ.- «Ասիկա բանտի սրահը տարե՞ք»...

Իբր ՀՄԸՄի ֆուլթայլի պատասխանատու, եւ խենթի մը պատճառաւ, հինգ օր բանտ մնացի: Այդ խենթին ով ըլլալը ես շատ լաւ գիտէի, վկաներուն ըսածը շատ շիտակ էր, եթէ ձերբակալուէր, անպայման ճանի մը տարի բանտի մէջ պիտի մաշէր: Բանտէն դուրս գալուս, մօտեցաւ ինծի եւ՝ «Լաւ որ անունս չտուիր», - ըսաւ: Սարգիսը ամէն օր կու գար այցելութեան եւ ինքն էր, որ ամէն տեղ վագեց մինչեւ ազատ արձակուիլս:



ՀՄԸՄ-ի ՄԷՋ ԹԷ ԴՈՒՐՍԸ՝ ԱՆԲԱԺԱՆ ԸՆԿԵՐՆԵՐ  
Վարդիվառ եւ Սարգիս 1947

ՀՄԸՄ-Ի ՓԱՅԼՈՒՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ ՌԸՆԵՍԱՆՍԻ ԴԷՄ 5-2  
«Ազդարար»ի մէջ գրեց Եղիշ

21 Դեկտ. 1947, Մազրասայի դաշտը: ՀՄԸՄ փայլուն յաղթանակ մը տարաւ Ռընեսանսի վրայ, հոծ բազմութեան մը ներկայութեան, փաստելով իր անվիճելի գերակայութիւնը լիբանանեան խումբերու վրայ: Կիրակիի հանդիպումը սկսաւ իրաւարար Ատէլ Սիտանիի ազդանշանին վրայ: Առաջին վայրկեաններուն իսկ, երկու մրցակիցներ նըգնեցան ցնցել հակառակորդին բարոյականը: ՀՄԸՄ՝ գիտակից այն դառն փորձառութեանց, զորս տարիներ շարունակ այդ օրուն հակառակորդը վերապահած է իրեն, որոշուած **թափթիք** սկսաւ գործադրել: Վարդիվառի մէկ անսպասելի խոյանքին եւ գեղեցիկ կերպով տեղաւորած հարուածին վրայ, մեր տղաքը նշանակեցին առաջին կողը, խելայել ծափերու մէջ: Ռընեսանսի մարզիկները անցան յարձակումի եւ հայկական մեծ խումբի բերդին առջեւ ստեղծուած խառնաշփոթ կացութեան մը ընթացքին, բերդապահ Տիգրան ստացաւ գլխուն կոպիտ հարուած մը, որուն հետեւանձնով ուշակորոյս վիճակի մը մատուցեցաւ խաղի մնացեալ շրջանին: Այս վիճակէն օգտուելով է որ Ռընեսանս նշանակեց երկու կոլեր:



ՀՄԸՄԻ ԱԽՈՅԵԱՆ ԿԱԶՄԵՐԷՆ ՄԷԿԸ

Զախէն՝ Վարդիվառ, Տիգրան, Ստեփան, Եղիշ, Մանուէլ, Վարուժան, Յովհաննէս, Ժիրայր, Գամարեան, Սարգիս, Էլի Հափիմ եւ Արմէն (Հալէպէն):

Երկրորդ կիսախաղին, ՀՄԸՄ ցուցադրեց ներդաշնակ ու ազդու խաղ մը, որուն հետեւանքով Նասսար քաջեց իր մարզիկները, ինչ որ աններելի սխալ մըն էր իրեն նման փորձառու խմբապետի համար, որովհետեւ Վարդիվառին բերդը տեղէն ցնցող հարուածներէն չէին կրնար պրծիլ, նաեւ Մանուէլի աղուէսի խորամանկութենէն: Աններելի այս սխալին, ինչպէս նաեւ ՀՄԸՄի մարզիկներուն անդիմադրելի խոյանքին մէջ փնտռել պատճառը հինգ կոլերու շարանին, որ դիզուեցաւ Պիթարի բերդին մէջ, բարոյալուծ խումբի մը տխուր պատկերը պարզելով Ռընեսանսի մարզիկներուն մէջ. բան մը, որ յաճախ կարելի չէ հաստատել այս մարդոց մօտ:

ՀՄԸՄ իր յաղթանակով կարելի է ապահով նկատել Լիբանանի բաժակին իր տիրացումը: Մենք կասկած չունինք որ յաղթանակներով սկսած այս տարին ՀՄԸՄ պիտի վերջացնէ անսայթափ, պատիւ բերելով այն ժողովուրդին, որուն մտքին եւ մկանին ներկայացուցին է հիւրընկալ այս երկիրներու մէջ:

**1947-ի ՀՄԸՄԻ Ա.ԽՈՒՄԲԻՆ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ԽԱՂԱՅՈՂՆԵՐԸ**

*ԲԵՐԴԱՊԱՀ՝ Տիգրան, Նալպանտեան եւ Յակոբ Գըլընեան:  
 ՅԵՏՍԱՊԱՀ՝ Եղիշ, Տրդատ, Անդրանիկ, Իսհակ, Ժիրայր Մարգարեան  
 եւ Պետրոս Վեֆիլեան (երկրորդականէն):  
 ՄԻՋՆԱՊԱՀ՝ Լեւոն, Յովհաննէս, Գամարեան եւ Յակոբ  
 Վարժապետեան:  
 ՅԱՌԱՋԱՊԱՀ՝ Վարդիվառ, Սարգիս, Մանուէլ, Վազգէն, Ստեփան,  
 Վարուժան եւ Ժորժ Շատարեան:  
 ԽՄԲԱՊԵՏ՝ Վարդիվառ:  
 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՄԲԱՊԵՏ՝ Բենիամին Շամլեան:  
 ՄԱՐԶԻՉ Նալպանտեան՝ վարչութեան կողմէ պաշտօնապէս մարզիչ  
 նշանակուեցաւ 20 Մարտ, 1947ին, փոխարինելով Օննիկ  
 Կեվրեկեանը: Արդէն ոչ-պաշտօնական ձեւով երկու տարիէ  
 ի վեր Նալպանտեանը կը մարզէր խումբը եւ պէտք եղած  
 ատեն կը խաղար իբր բերդապահ:*

**1947 ՀՄԸՄ -Ի Ա.ԽՈՒՄԲԻ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒ ԳՈՒՄԱՐ՝ 16**

ՅԱՂԹԱՆԱԿ՝ 10 - ՀԱԽԱՍԱՐՈՒԹԻՒՆ՝ 2 - ՊԱՐՏՈՒԹԻՒՆ՝ 4

**ԿԱՐԵՒՈՐ ՄՐՅՈՒՄՆԵՐ**

ԹՈՒԱԿԱՆ	ՄՐՅԱԿԻՑ ԽՈՒՄԲ	ԱՐԴԻՒՆՔ	ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ
Յնվր. 12	Ռասիկ	7-1	
Փետր. 23	Ռընեսանս	2-1	1 կոլ՝ Վարդիվառ
Մարտ 30	Սաժէս	2-1	1 կոլ՝ Վարդիվառ
Ապրիլ 06	ՀՄԸՄ նոր Գիւղ	7-0	Միջմասնանհիւղ. Հալէպ
Նոյեմ. 02	Պարատա	2-1	Գամասկոսի մէջ
Նոյեմ. 16	Ռասիկ	3-0	կոլի եւ բանտ
Դեկտ. 14	Սաժէս	3-1	Մանուէլ-Գամարե. Վարդ.
Փետր. 0-9	Մազրաս	3-3	Մանուէլ-Սարգիս-Վարդ.
Սեպտ. 21	Պարատա	2-2	Գամասկոսի մէջ
Մարտ 0-9	ՀՄՄ	1-2	1 կոլ՝ Սարգիս
Ապրիլ 0-7	ՀՄԸՄ Հալէպ	2-3	Միջմասնանհիւղ. Հալէպ
Յունիս 0-1	Զղարթա	1-2	ամառուան խումբ





ԼԻԲԱՆԱՆ ՀՄԸՄ ՖՈՒԹՊՈԼ

ԳԼՈՒԽ 3

ՀՄԸՄ-Ի ՅԱՂԹԱԿԱՆ ԵՐԹԸ

1948 - 1949 - 1950 - 1951 - 1952

1948 ԼԻԲԱՆԱՆԻ ԱԽՈՅԵԱՆ

1948 ԼԻԲԱՆԱՆԻ ԲԱԺԱԿ

1948 ՅԱՂԹԱԿԱՆ ԸՐՋԱՊՏՈՅՑ ԿԻՊՐՈՍ

1951 ԼԻԲԱՆԱՆԻ ԱԽՈՅԵԱՆ

1951 ԳՈՐԾՈՎ ԿԸ ՄԵԿՆԻՄ ԸՈՒԷՏ

1952 ՀՄԸՄ - ԵԳԻՊՏՈՍ ՄՐՑՈՒՄԻՆ ՈՏՔԻՍ ԱՐԿԱԾՈՎ  
ՎԵՐՋ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՍՊԱՐԷՋԻՍ



ՀՄԸՄ - 1948 ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐՈՒ ՏԱՐԻՆ  
ՀՄԸՄ - ՀՄՄ ՎԾՌԱԿԱՆ ՄՐՑՈՒՄԸ 18 Յունուար 1948

Ախոյեանական մրցում էր: Պետք էր յաղթեինք, խումբիս Ուրբաթ օրուան ժողովին այդպէս էր որոշուած: Իւրաքանչիւր խաղացող գիտէր ընելիքը, կարեւոր մրցում ըլլալուն՝ վարչականներ եւ եղբայր Շահին-եան եկած էին եւ մեզ խրախուսելու, թէ ներելի չէր մեզի համար պարտուիլ նախ գաղափարական տեսակետէն, ապա ՀՄԸՄի վարկին համար, որ այս օրերուն աւելի քան երբեք պետք ունէր փառաւոր յաղթանակներու, յիշեցնելով մեր սկզբունքը՝ «խաղալ խումբին համար», այսինքն՝ «մէկը տասներմէկին համար, իսկ տասներմէկը՝ մէկուն»:

Այս բոլորը ի մտի ունենալով, Կիրակի օր իջանք դաշտ, տասը հազարի հասնող խուռներամ բազմութեան մը բացազանչութեանց մէջ, մէկ կողմէ «ՀՄԸՄ, կոլ կ'ուզենք», միւս կողմէ, ի պատասխան, կը պոռային. - «ՀՄՄ, կոլ կ'ուզենք»: Խաղը սկսաւ շատ տաք եւ վճռական, բայց մենք սկսանք առիւծի պէս խաղալ եւ ննշել իրենց վրայ, վտանգաւոր առիթներ ստեղծելով իրենց բերդին առջեւ եւ գեղեցիկ մէկ իջւածքով, աջ ծայրէն Ստեփան գնդակը առաւ, դէպի ՀՄՄի բերդը խուժեց եւ տեղաւորեց առաջին կողմը: Կիսախաղէն ետք խաղը աւելի տաքցաւ, մեր ժայռի պէս պաշտպանողական գիծէն անդին չկրցան անցնիլ, որովհետեւ մեր բերդապահ Տիգրանը արթուն կը հսկէր եւ մէյ մը աջ, մէյ մը ձախ թռչելով բոլոր գնդակները կ'ազատէր: Այսպէս՝ ներդաշնակ եւ հրաշալի խաղարկութեամբ, մեծ նիգերով եւ եռանկիւն բասարկութեամբ սկսանք յառաջանալ եւ յաջորդաբար նշանակեցինք չորս կոլեր եւս: Խաղը վերջացաւ 5-0՝ ՀՄԸՄի փառաւոր յաղթանակով: Օրուան հերոսն էր՝ Ստեփանը, որ չորս կոլ նշանակեց, իսկ մէկ կոլ՝ Մանուէլը:

ՅԱԻԵՐԺԱԿԱՆ ՀՄԸՄ-Ը  
ՀՄԸՄ - ՌԸՆԵՍԱՆՍ ԱՄԵՆԱՎԾՌԱԿԱՆ ԽԱՂԸ  
Ֆրընէլ-Շըպպէքի դաշտը 8 Փետրուար 1948

գրեց Եղիշ «Ազդարար»ի մէջ

Ամենավճռականն է, - ըսինք եւ արդարեւ այդպէս էր: Ռընեսանս, մէկ կէտի առաւելութեամբ կը գրաւէր պատուոյ տեղը, իսկ անմիջապէս յետոյ կու գային ՀՄԸՄ եւ Ռասինկ: Մեզի կը մնար, միայն ու միայն զգետնել ոստիւր եւ գրաւել պատուոյ տեղը:

Դաշտը լեցուած էր. հայ ժողովուրդը մեծով-պզտիկով, հարուստով-աղքատով, մէկ խօսքով՝ ամէն իր դասակարգով: Գերագրգիռ այս մթնոլորտին մէջ է որ իրաւարարի հրաւերով դաշտ իջան ՀՄԸՄ եւ Ռընեսանս եւ սկսաւ այնքան սպասուած տիտանամարտը: Հակառա-

կորդը գլխիվայր կը նետուի ՀՄԸՄի բերդին վրայ առաջին 15 վայրկեաններուն ընթացքին եւ մօտենալով մեր բերդին՝ գնդակ մը կը վրիպի բերդապահ Տիգրանի ձեռքէն ու Ռընեսանս կը նշանակէ առաջին կոլը: Նասսարի տղաքը ալ աւելի կը սեղմեն օդակը ՀՄԸՄի պաշտպանողական գիծերուն շուրջ: Եւ սակայն սխալ էին իրենց հաշիւները, որովհետեւ անոնք թերզնահատած էին մեր տղոց ոչ միայն խանդը, այլ նաեւ ֆուքպոլի գաղտնիքներուն թափացման աստիճանն ու հայ ժողովուրդը ներմակ երեսով տուն դրկելու անվկանդ վճռականութիւնը: Բայց սխալած էին, երբ Սարգիս ամեհի իր խոյանքներով եւ վեհ ճակատով, հիանալի կերպով օգտագործեց աջ ծայրէն իրեն եկած զոյգ գնդակները եւ առաջին կիսախաղին աւարտման 10 վայրկեան մնացած՝ նշանակեց ՀՄԸՄի առաջին եւ երկրորդ կոլերը, տեղէն խախտելով մարզարանը, որուն մէջ գունդ առ գունդ իրարու փակած հայ կուրծքերը պոռթկացին երկու անգամ: Տասը վայրկեան դադարէն յետոյ կրկին դաշտ իջան աւելի վճռական՝ քան երբեք:

Եւ սակայն կոռուախնձորը, մէկ կէտը եւ յաղթանակի կամքը այնքան զօրաւոր էին, որ ՀՄԸՄ առանց երկար բարակ գետին շօշափելու կրկին ինկաւ Պիթարի վրայ ու Ստեփանին կողմէ անկիւնէն քաշուած գնդակ մը, Վարդիվառ, առանց սպասցնելու եւ ի գին ֆիզիքական անսովոր պրկումի մը, տեղաւորեց շշմած բերդապահի բերդէն ներս, վճռապէս յաղթանակը հակեցնելու ՀՄԸՄի կողմը: 10 վայրկեան վերջ, շնորհիւ Ստեփանին, որ կարծես անմասն չէր ուզեր մնալ իր ընկերներուն յաջողութենէն, ինք դրաւ վերջակէտը կոլերու շարքին, ՀՄԸՄի պարգեւելով 4-1 փայլուն յաղթանակ մը:

Տեղական արաբատառ եւ ֆրանսատառ թերթերը անվերապահ համակրանքով արտայայտուեցան այս յաջողութեան մասին աւելցնելով, որ ՀՄԸՄ լիուրի արժանի էր իր յաղթանակին, որովհետեւ նախ՝ աւելի լաւ մարզուած էին իր տղաքը, ու ապա՝ աւելի վճռական էին քան Ռընեսանսի մարզիկները:

Ի տես այսֆան կորովի եւ հայ անունին տասնամեակներէ ի վեր անշեղ պանծացման, մեզի կը մնայ միայն գոչել, լիահագագ, յաւիտեական է ՀՄԸՄ եւ մեր փառքը՝ իր յաղթական տղաքը:

## Հ Մ Ը Մ - 1948 Լ Ի Բ Ա Ն Ա Ն Ի Ա Խ Ո Յ Ե Ա Ն

ՅԱԳԹԵԼՈՎ ՌԸՆԵՍԱՆՍԻՆ 3-1 ԱՐԴԻԻՆՔՈՎ 14 ՄԱՐՏ 1948

Պէյրուքի Քաղաքապետարանի դաշտը լեցուն էր հայ եւ տեղացի մարզասէրներով, հակառակ անձրեւին եւ փոթորիկին:

Հոս կ'ուզեմ յիշել հետեւեալը ցոյց տալու համար ՀՄԸՄականի հաւատքն ու ակնածանքը հանդէպ իր հոգեւորականներուն: Կիրակի կէսօրէն առաջ քանի մը խաղացողներով գացինք Անթրիապի վանք՝

Հալէպի Առաջնորդ Ջարեհ Սրբազանը հրաւիրելու այսօրուան բախտորոշ մրցումին. կը հաւատալինք, որ իր ներկայութեան անպայման պիտի յաղթէինք: Սրբազանը, ազնուասիրտ եւ զգացական կապերով՝ բարձր գնահատելով ՀՄԸՄը, այդ անձրեւին ու փոթորիկին եկաւ մարգադաշտ:

Բարձր տրամադրութեամբ դաշտ իջանք, ՀՄԸՄի փողերախումբը նուագեց լիբանանեան ֆայլերգը եւ խաղը չսկսած խաղացողներս ֆով ֆովի եկանք, անգամ մը եւս ուխտեցինք, թէ «մեռնիլ կայ պարտուիլ չկայ»: Մեր բախտէն՝ հովին դէմ ինկանք: Խաղը սկսաւ, կատաղի կը փչէր հովը ի նպաստ Ռընեսանսի, որմէ օգտուելով լայնածաւալ յարձակողականի անցանք:

Բայց ՀՄԸՄի պաշտպանողական գիծը գերմարդկային խաղարկութեամբ պաշտպանեց իր բերդը, որուն արթուն պահակը՝ Տիգրան, հրաշքներ գործեց, նոյնիսկ յարձակողականի ալ անցանք, ուր մեր աջ ծայր Ստեփանը այնքան լաւ փոխանցում մը ըրաւ ֆորըրրով, որ Գամարեանը զլխու գեղեցիկ մէկ հարուածով գնդակը տեղաւորեց Պիթարի բերդէն ներս: Այսպէս՝ դիմակալելով սաստիկ հովն ու փոթորիկը, եւ մեր վնասական ու սրտանց խաղարկութեամբ, վերջացուցինք առաջին կիսախաղը՝ 1-0 մեր յաղթանակով:

**Իրաւարարին կասկածելի առաջարկը:** Կիսախաղին, իրաւարարը՝ Ժան Արապ, որ Ռընեսանսի դեկավարներէն էր, ուզեց խաղը կեցնել պատրուակ բռնելով հովը, փոթորիկն ու անձրեւը: Իրեն պատասխանեցի թէ հովը, փոթորիկն ու անձրեւը շատ աւելի սաստիկ էին խաղը տակաւին չսկսած, այն ատեն էր որ հարկ էր խաղը յետաձգել եւ ոչ թէ հիմա, երբ մենք մէկ կողմի առաւելութիւն ունինք. եթէ խաղը յետաձգէր, անարդար որոշում առած կ'ըլլար եւ այս բազմութիւնը այն ատեն ո՞վ պիտի կրնար զսպել: «Եթէ այդպիսի որոշում մը առնես, ասոնց ձեռքէն չես կրնար ազատիլ» ազդարարեցի: Կարծես մեր ժողովուրդը նախազգացած կռահեր էին, թէ ինչ կ'անցնէր կը դառնար, եւ սկսան իրենց աւանդական բացագանչութիւնները արձակել.- «ՀՄԸՄ, կոլ կ'ուզենք»: Իրաւարարը՝ Ժան Արապ, շատ լաւ հասկցաւ իմաստը իմ ֆողարկեալ սպառնալիքիս, եւ հրաժարեցաւ իր առաջարկը գործադրելէ:

Երկրորդ կիսախաղին Ռընեսանս այնպիսի յարձակողականի մը անցաւ, որ մենք անակնկալի եկանք, եւ օգտուելով այս խառնաշփոթութենէն, նշանակեց հաւասարութեան կէտը: Անմիջապէս սրափեցանք եւ յարձակողականի անցանք. բերդապահ Ժորժ Պիթար շուրաժ էր. գնդակները կարկուտի նման կը տեղային իր բերդին վրայ, զոր ֆաշարար կը պաշտպանէր: Վերջապէս Ստեփան աջ ծայրէն սանթրաժ մը ըրաւ, Մանուէլ բռնեց գնդակը եւ ետեւ՝ ինծի փոխանցեց: Առի գնդակը, յառաջացայ եւ 30 մեթրէն ամբողջ ուժս դնելով ֆաշեցի եւ տեղաւորեցի մեր երկրորդ կողմը: Մեր ժողովուրդը իր այս ուրախութենէն դեռ

չյագեցած, քանի մը վայրկեան ետք նոյն հեռաւորութենէն եւ նոյն ուժով երրորդ կողմ տեղաւորեցի Պիթարի բերդէն ներս: 3-1՝ մեր յաղթանակով, վերջացաւ խաղը:

Անմիջապէս մեր համակիրները դաշտ խուժեցին եւ մեզ իրենց ուսերուն վրայ բարձրացուցած, հուռաներով եւ կեցցէներով մարզադաշտին շրջանը ըրին: Մեր հոգեկան գոհունակութիւնը անսահման էր: ՀՄԸՄ, երրորդ անգամ ըլլալով իր վեռական կամֆը պարտադրեց Լիբանանի ֆութպոլի մարզին մէջ, տիրանալով ախոյեանութեան պատուաբեր տիտղոսին:

Յաջորդ օր, Լիբանանի բոլոր թերթերը գնահատանքով ընդգծեցին մեր բացառիկ գերակայութիւնը, մասնաւոր յիշատակութեան արժանացնելով՝ «ընպլէ զըրրիյէ» (հիւլէական ոռումը) անուանուած խմբապետին երկու կողերը, որոնք խորտակեցին Ռընեսանսը: Երեկոյեան մեր վարչութիւնը գնահատելով խաղացողներու այս բացառիկ խաղարկութիւնը, յատկապէս՝ եղբայր Ժոզէֆ Նալպանտեանի, «Քաֆէ Տը Լա Պուրս»ի մէջ շէնդ նաշկերոյթ մը սարքեց, ուր խաղացողները եւ մարզիչը առանձին - առանձին սրտագին շնորհաւորութեանց արժանացան:



ՀՄԸՄ - ՌԸՆԵՍԱՆՍ ՄՐՑՈՒՄԻ ԴԱՂԱՐԻՆ 1948

Չախէն՝ էմիլ Նասսար (Ռընեսանսի խմբապետը), Ժան Արապ (իրաւարար) եւ Վարդիվառ...

Հոս իրաւարարը կը փորձէ մրցումը յետաձգել:

## ՀԱՐԸՄ ԼԻՔԱՆԱՆԻ ԱՐԺԱՆԱԻՈՐ ԱԽՈՅԵԱՆԸ 1948-Ի

### ՄԷՋԲԵՐՈՒՄՆԵՐ ՕՐՈՒԱՆ ԹԵՐԹԵՐԷՆ

**«ԱԶԳԱԿ»Ի ՄԷՋ ԳՐԵՑ ՇԱՀԻՆԵԱՆ:** Երէկ, Կիրակի, Քաղաքապետարանի դաշտին վրայ տեղի ունեցաւ Լիբանանի ֆութպոլի ախոյեանութեան վերջին վճարական մրցումը ՀՄԸՄի եւ Ռընեսանսի միջեւ: Հակառակ օդին աննպաստ պայմաններուն, անձրեւին եւ հովին, 5000Է աւելի մարգասէր հասարակութիւն մը փութացած էր դաշտ: ՀՄԸՄի վինակուեցաւ հովին դէմ խաղալ: Ասկէ օգտուելով՝ Ռընեսանս բուռն յարձակողականի անցաւ, որոնք բոլորն ալ փշրուեցան ՀՄԸՄի պաշտպանողական գծի կորովի կեցուածքին առջեւ: ՀՄԸՄի տղաքը արտասովոր նիգով մը եւ խաղի 22րդ վայրկեանին՝ Գամարեան նշանակեց ՀՄԸՄի առաջին կոլը: Երկրորդ կիսախաղին՝ լնացած դաշտին վրայ, ՀՄԸՄ սկսաւ փաստելու իր գերազանցութիւնը: Հակառակ Ռընեսանսի նշանակած հաւասարութեան կէտին, ՀՄԸՄ բուռն յարձակողականի անցաւ եւ Վարդիվառ յաջորդական երկու խոյանգներով խորտակեց Պիթարի բերդը եւ խումբին ապահովեց արժանի յաղթանակ մը ու նաեւ Լիբանանի ֆութպոլի Ա. դասի ախոյեանութեան նախանձելի տիտղոսը:

Մեր խումբին յաղթանակը այնքան արդար էր, որ խաղի վերջաւորութեան Ռընեսանսի խմբապետը՝ Էմիլ Նասսար, հանդերձարան եկաւ, համբուրեց ՀՄԸՄի խմբապետ Վարդիվառը, ջերմօրէն շնորհաւորեց բոլոր խաղացողները, ՀՄԸՄի յաղթանակը եւ ախոյեան հռչակուիլը:

### «ԱԶԳԱՐԱՐ»Ի ՄԷՋ ԳՐԵՑ ԵՂԻԾ

## ՀՄԸՄ - 1948-Ի ԼԻՔԱՆԱՆԻ ԱՐԺԱՆԱԻՈՐ ԱԽՈՅԵԱՆԸ

Կիրակի 14 Մարտ 1948՝ ոսկի տառերով գրուած թուական մը պիտի մնայ Լիբանանի ֆութպոլի տարեգրութեան մէջ: Յաղթելու վճարականութեամբ է որ գոյգ խումբերը դաշտ իջան հակառակ բուռն հովին եւ անձրեւին, ու տեղերու ընտրութենէն յետոյ, սկսաւ տիտանամարտը, ժան Արապի իրաւարարութեամբ:

Հակառակորդը օգտուելով հովէն, անցաւ բուռն յարձակողականի մը: Բայց ՀՄԸՄի մարզիկներուն կատաղի պաշտպանողականով խորտակուեցան Նասսարի տղոց բոլոր խոյանգները ու հայ ժողովուրդի ներկայացուցիչները խորխտ թափով մը, անգամ մը եւս խոյանալով՝ պատճառ դարձան որ առաջին կոլը տեղաւորէ Գամարեան, անտեղիտալի թափով մը նետուելով օդէն եկող գնդակին վրայ: Երկրորդ կիսախաղը հագիւ 10 վայրկեան անցած, Ռընեսան կը նշանակէ իր

առաջին կոլը, որ պիտի ըլլար նաեւ վերջինը: Անվկանդ կորովով ՀՄԸՄ կը շարունակէ մ'ըցումը եւ անխնայ կը հարուածէ Պիթարի բերդը:

Ու այսպէս է որ ՀՄԸՄի Սուրիոյ եւ Լիբանանի անգուգական տղան՝ Վարդիվառ, իրարու ետեւէ, 10 վայրկեանի ընթացքին, կը նշանակէ ՀՄԸՄի երկրորդ եւ երրորդ կոլերը, խորտակելով ընդդիմութեան որեւէ խոչընդոտ հակառակորդին բերդին մ'օտ եւ խաղը վերջացնելով ՀՄԸՄի փայլուն յաղթանակով՝ 3-1 արդիւնքով:

Մեր ժողովուրդին ուրախութեան չափ չկար, նաեւ մեր ժողովուրդին պարծանքը հանդիսացած ՀՄԸՄի 11 մարզիկները լիովին արժանի եւ իրենց տարած յաղթանակին, փաստելով իրենց բացարձակ գերազանցութիւնը լիբանանեան բոլոր խումբերուն վրայ:



## HOMENETMEN CHAMPION DU LIBAN 1948

ՊԷՅՐՈՒԹԻ ՀՄԸՄ-Ի ԼԻԲԱՆԱՆԻ ԱԽՈՅԵԱՆ - ԿԱԶՄԸ 1948

Զախէն ոտքի՝ Ժորժ Շատարեւեան, Տիգրան Արապեան, Լեւոն Պալապանեան, Սարգիս Ազնաւորեան, Անդրանիկ Գամարեան, Ստեփան Մելիքսեբեան, Տրդատ Փանոսեան, Վարդիվառ Յովհաննէսեան (խմբապետ) եւ Պարգեւ Տապանեան:

Նստած՝ Յովհաննէս Նազարեան, Եղիշէ Մանուկեան եւ Մանուէլ Ալթունեան:



1948 ՀՄԸՄ-ի 22-րդ ՄԻՋՄԱՍՆԱԾԻԻՂԱՅԻՆ ԽԱՂԵՐԸ ՀԱԼԷՊ

Ջատկուան այս օրհնեալ օրերուն, ՀՄԸՄի միջմասնանհրդայինի նաւասարդեան խաղերու մասնակից ըլլալու, կամ իբր դիտող ներկայ ըլլալու համար, հազարաւոր հայեր կը փութային դէպի Հալէպ, Սուրիայէն, Լիբանանէն եւ Անդրյորդանանէն: Խումբիս մօտիկ բարեկամները կը նախընտրէին խաղացողներուս հետ նամբորդել:



Ձախէն ծռած՝ Ալաման վարդան (խումբիս իբր գոյնապահ), Տիգրան, Սուս Յակոբ, Եղիշ, Լեւոն, Նալպանտեան, Իսահակ, Յակոբ Վարժապետեան եւ Վահագն Յովհաննէսեան (Լիբանանի բինկ բոնկի ախոյեան):

Ձախէն ոտքի՝ Պօղոսիկ Յովհաննէսեան (Լիբանանի բինկ բոնկի ախոյեան), Սուրէն Թապաքեան (Էշրէֆիէէն), Սարգիս, Վարդիվառ, Յովհաննէս Պայթարեան, Ներսէս Իդնեան, Տրդատ, Գամարեան, Անտոն Պէզնեան եւ Ժիրայր Մարգարեան: Դէպի Հալէպ նամբան՝ հանգիստի պահուն:



Այսպիսի  
օթօպիւսով կը  
նամբորդէինք,  
երեկոյեան կը  
հասնէինք  
Հալէպ:  
Տանիքին վրայ՝  
Վարժապետեան,  
Լեւոն, Տրդատ  
եւ Սուս Յակոբ:




ՄԵՐ ԽՈՒՄԱԲԸ ԻՐ ՄՕՏԻԿ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՎ՝ ԴԷՊԻ ՀԱԼԷՊ  
 «ՀԱՄԱՅԻ ՄՕՏ» 1948:

*Զախէն ոտփի՝ Անտոն Պէգնեան, Ստեփան, Վարդիվառ, Ներսէս,  
 Յովհաննէս, Տրդատ, Շաւարշ եւ Մարտիրոս:*

*Ծռած՝ Տիգրան, ընկեր մը, Սուս Յակոբ եւ Սարգիս:*



*Լիրանանի հեծելարշաւի ախոյեան Նալչայեան եղբայրները, մէջտեղը  
 Վարդիվառ:*



ԴԵՊՈ ԸԱԼԷՊ

ՀԱՄԱՅԻ

ՋՐ ՀԱՆԻՆ

ԱՌՋԵԻ

1948

*Ձախեն նստած՝  
Շատարեւեան,  
Տիգրան,  
Անթուան  
Խատրա  
(Ռասինկի  
վարչական),  
Նալպանտեան,  
Ալաման  
Վարդան  
եւ Լեւոն:*

**ՀՄԸՄ-Ի ՄԻՋՄԱՍՆԱՃԻՒՂԱՅԻՆ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ ՀԱԼԷՊ  
ՎԵՐՋԻՆ ՄՐՑՈՒՄԸ ՀՄԸՄ ՊԵՅՐՈՒԹ - ՀՄԸՄ ՀԱԼԷՊ 29 ՄԱՐՏ 1948**

Շատ բարձր մակարդակի մրցում մը եղաւ:

1948 Մարտի վերջին շաբաթը, հիւսիսային Սուրիոյ մայրաքաղաք Հալէպի մէջ կայացան ՀՄԸՄի միջմասնահիւղային մրցումները: Պէյրուսի եւ Հալէպի աւարտական մրցումը տեղի ունեցաւ ի ներկայութեան երեսուն հազարէ աւելի հանդիսատեսներուն, որոնք եկած էին դիտելու այս գեղեցիկ ֆութպոլի հանդիպումը եւ փառապանծ տողանցքը: Փարիզէն հիւրաբար Հալէպ կը գտնուէր մեծ հրապարագիր, գրագէտ՝ Շաւարշ Միսաֆեան: Շատ բարձր մակարդակով մրցում մը եղաւ պատմական եւ յիշատակելի, ֆութպոլի սիրահարներ ուշի ուշով կը հետեւէին այս գեղեցիկ խաղին, ի մասնաւորի Պէյրուսի խաղը կ'ուզէին դիտել, որ հազիւ երկու շաբաթ առաջ հռչակուած էր Լիբանանի այսոյնեան: Պէտք է ընդունիլ որ երկու խումբերն ալ շատ զօրաւոր էին եւ կիրարկեցին այնպիսի վեճական խաղ մը, որ մինչեւ վերջին վայրկեանները ոչ մէկ խումբ կրցաւ կոլ մը նշանակել:

Ինձի համար ուրիշ ընելիք չէր մնացած մրցումը դրական արդիւնքով եզրափակելու համար: Հարկ էր լաւագոյնս օգտագործել մնացած վերջին վայրկեանները: Եւ ինքնավստահ՝ դաշտին մէջտեղէն առի գնդակը եւ անարգել սկսայ յառաջանալ, բաս տալու ժամանակ չկար, երբ անցայ հաֆպէկի մօտէն, վրաս չյարձակեցաւ, (խաղի աւարտին, մէկդի քաշելով այդ հաֆպէկը, հարցուցի իրեն, թէ ինչո՞ւ չէր յարձակած վրաս, երբ իր մօտէն անցեր էի, ըսաւ.- «Աչքերէդ կրակի բոցեր կը ժայթփէին կարծես»):

Վերջապէս հասայ Հալէպի բերդին մօտ, քարէն ներս մտայ, անցայ Հալէպի պէկը, հսկայակազմ Ալեքսանը՝ որ քանի մը անգամ ետեւէն հարուածեց ոտքս, ու ես գետին ինկայ: Իրաւարարը բենալթի սուլեց ամենայն արդարութեամբ: Բենալթին պիտի քաշուէր եւ խաղը վերջանար: Գնդակը տեղը դրի որ քաշեմ... Գնդակը չէի տեսներ, չափազանց յուզուած եւ տակնուվրայ հոգեվիճակ մը ունէի: Խաղացողները մօտս կանչեցի, եւ խնդրեցի քիչ թէ շատ պաղարիւն խաղացողներէն՝ Մանուէլէն, Ստեփանէն, որ բենալթին մին կամ միւսը



#### ՊԱՍՔԵԹՊՈԼԻ ՄՐՑՈՒՄԻՆ ՀԱԼԷՊ 1948

Պէյրուքի ՀՄԸՄը, իր վարչականներով եւ ֆուլթոլիստներով ներկայ է քաշալերելու պասսեթպոլի Պէյրուքի խումբը:

ԶՐԴ ԸՄԱՐԲ ՄԷՋՏԵՂԸ՝ ՎԱՐԴԻՎԱՌ,  
ԱՋԻՆ՝ ԿԻՐԱԿՈՍ ԹՆՃՈՒԿԵԱՆ, ՋԱՍԻՆ՝ ՅՈՎՀԱՆՆԵՆԸՍ ԸԱՀԻՆԵԱՆ:

ֆաշէր: Անկարելի եղաւ. մէկը չէր ուզեր ֆաշել: Անդիէն վազելով եկաւ  
յետսապահ Տրդատը, մօտենալով ինծի ըսաւ.— «Խմբապետ, ես պիտի  
ֆաշեմ»:

Շուարած նայեցայ իրեն, կեանքին մէջ բենալթի չէր ֆաշած,  
մօտեցայ իրեն, ու նակատէն համբուրելով, ըսի.— «Քաշէ՛»... Քաշեց եւ  
գնդակը տեղաւորեց Հալէպի բերդէն ներս: Յաղթանակեր էինք՝ 1-0,  
եւ տիրացանք բաժակին:

Ներկայացանք դէպի պատուոյ բեմը, օրուայ հիւրը՝ Շուարշ  
Միսաֆեան, բաժակը յանձնելով ինծի, ըսաւ.

— Մի՛ յուզուիր, Վարդիվա՛ն, մեծ է ՀՄԸՄը...

Որովհետեւ ես շատ յուզուած էի, աչքերէս արցունքները կը հոսէին  
ի տես ՀՄԸՄի այս փառապանծ յաղթական ընթացքին:



HOMENETMEN - COUPE INTER - HOMENETMEN 1948

ՀՄԸՄ-ՊԷՅՐՈՒԹ ԿԸ ՏՈՂԱՆՑԷ ՀԱԼԷՊ 1948

ԿԻՍԱՆԱՂԻ ԴԱՂԱՐԷՆ ՎԵՐՋ ԿԸ ՇԱՀԻ ԲԱԺԱԿԸ  
Դրօշակիր Տիգրան, ետեւը՝ Վարդիվաւ եւ Յովհաննէս:



ՀԱԼԷՊԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԸ ԿԸ ԺԱՄԱՆԷ ԴԱԾՏԸ:  
 ՀՄԸՄ-Ի ԽԱՂԵՐՈՒՆ ԾՐՋԱՊԱՏՈՒԱԾ՝ ՀՄԸՄ-Ի  
 ՂԵԿԱՎԱՐՆԵՐԷՆ 1948-ԻՆ:



ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՆԵՐԿԱՅ  
 ՀՄԸՄԻ փառապանծ տողանցքը սպասող 30 հազարի մօտ հազերը,  
 անթերի հսկողութեամբ ՀՄԸՄԻ սկաւտներուն:



ՀԱԼԷՊԻ ԱԿՈՒՄԲԻՆ ՄԷՋ ԿԸ ՏՕՆԵՆՔԻ ՀՄԸՄ-Ի  
ՅԱՂԹԱՆԱԿԸ 1948

*Ջախէն՝ Փայլակ Անեմեան, Յարուք (վարսայարդար, Salon Français), Վարդիվառ եւ Իովը՝ Ներսէս Իղնեան:*



*(Մեր խումբին  
բոլոր այս  
նկարները ինքը  
նկարած է)  
Ջախէն՝ Մանուկ,  
Եղիշ  
եւ Տրդատ:*

ՖՈԹՕ ՄԱՆՈՒԿ ՄԻՇՏ ՄԵՋԻ ՀԵՏ՝ ՀԱԼԷՊ 1948:

ՅԱՐԳԱՔ ՄԵՐ ԱՆՁՆՈՒՐԱՅ ՆՈՒՐԵԱԼ ՂԵԿԱՎԱՐՆԵՐՈՒՆ ՀԱԼԷՊ 1948  
 ՀՄԸՄ-Ի ՄԻՋՄԱՍՆԱԾԻՒՂԱՅԻՆ ԽԱՂԵՐՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ  
 ՆԵՐԿԱՅ ԵՆ՝ ԳԻՇԵՐ - ՑԵՐԵԿ, ԱԿՈՒՄԲԸ ԹԷ ԴԱՇՏԸ:

*«Այնքան ատեն որ նման անձնուրաց ղեկավարներ ունինք,  
 ՀՄԸՄ միշտ պիտի ծաղկի, որովհետեւ իրենց օրինակով յաջորդներ  
 պիտի ծնին»:*



*Զախէն՝ Լեւոն Պապըլուզեան (ընդհանուր սկաուտապետ),  
 Կարապետ Աղնեան (Հալէպէն), Վահան Էֆենտի Տօնապետեան (Դա-  
 մասկոսի Հայրիկը), Յովհաննէս Շահինեան (ընդհանուր պատաս-  
 խանատու՝ Պէյրութէն) եւ Լուսեբ Մասպանանեան (Հալէպէն):*



*Զախէն՝  
 Վահան  
 Էֆենտի,  
 Լուսեբ  
 Մասպա-  
 նանեան  
 եւ  
 Տոմբ.  
 Յակոբ  
 Պէրպէրեան:*



## ՀՄԸՄ ԸԱՀԵՑԱԻ ԼԻԲԱՆԱՆԻ ԲԱԺԱԿԸ 1948

Յաղթելով Ռասիսկին 1-0 քաղաքապետարանի դաշտը

4 Ապրիլ 1948 - Հազարներով հայ ժողովուրդ: Լիբանանի ֆուլբպոլի տարեգրութեանց մէջ առաջին անգամ է որ խումբ մը ախոյեան դառնալէ ետք, նոյն տարին հասնի Լիբանանի բաժակի աւարտականին: Մրցումի նախօրեակին, Ուրբաթ օրուան խումբիս հերթական ժողովին, փութացած էին նաեւ մեր վարչականները մեզի յիշեցնելու Կիրակի օրուայ մրցումին կարեւորութիւնը, շեշտելով անպայման յաղթելու վնակամուրթիւնը: Եղբայր Շահինեան՝ ֆուլբպոլի պատասխանատու, ըսաւ. - «Տղաք, ախոյեան էք արդէն, կը մնայ ձեզի փաստել որ Կիրակի օր Ռասիսկին յաղթելով կրնաք նաեւ տիրանալ Լիբանանի բաժակին եւ հասցնել ՀՄԸՄը ֆուլբպոլի յաղթանակներու գերագոյն տիտղոսներուն, ախոյեան եւ բաժակակիր միեւնոյն տարին: Կարող էք, ինքնավստահութեամբ եւ յաղթելու վնակամուրթեամբ դաշտ իջէք, եւ անպայման պիտի յաղթէք, եւ պիտի դառնաք մեր սիրելի ժողովուրդին պաշտամունքի ֆուլբպոլի հերոսները»:

Հայ ժողովուրդի հուռոսներուն մէջէն իջանք դաշտ, ուխտած էինք անպայման յաղթել, ողջունեցինք զիրենք պոռալով՝ «կեցցէ հայ ժողովուրդը», իսկ իրենք պատասխանեցին՝ «կեցցէ ՀՄԸՄը»:

Նախքան խաղին սկսիլը, դաշտին մէջտեղ հաւաքուեցանք, իբր խմբապետ նորէն յիշեցուցի՝ «Մեռնիլ կայ, յաղթուիլ չկայ», եւ յաղթանակելու վնակամուրթեամբ յարձակողականի անցանք: Ռասիսկի իր լաւագոյն խաղացողներով իջած էր եւ պաշտպանողականը շատ գորացուցած, որով մեր յանախակի իջուածքները ի դերեւ ելան. չկրցանք նեղեմք, թէպէտ կրակի պէս, ոգի ի բոլին ամէն տեղ էինք: Ռասիսկի վտանգաւոր պահեր ստեղծեց եւ հասաւ մինչեւ մեր բերդը, բայց հրաշքի պէս, Յովհաննէս իր արթնութեամբ եւ կայծակի արագութեամբ գնդակը ազատեց մեր բերդին մէջէն եւ փրկեց ստոյգ կողմ: Այս դէպքը մեզի այնպիսի թոխչք մը տուաւ, իւրաքանչիւրս կարծես առիւծ կտրած՝ ամէն տեղ էինք, եւ սկսանք իրերայաջորդ յարձակումներով եւ խոյանքներով ումբակոծել իրենց բերդը, չթոյլատրելով որ շունչ քաշէին: Վերջապէս մեր յառաջապահ աննման Մանուէլը, գնդակը առաւ, երկու երեք տրիպլինկ ըրաւ, յառաջացաւ հակառակորդի քարէն մէջ եւ տեղաւորեց ՀՄԸՄի միակ կողմը:

Երկրորդ կիսախաղին, Ռասիսկի քսան վայրկեանի չափ իշխեց մեր վրայ, բայց շնորհիւ մեր սքանչելի բերդապահ Տիգրանին, որ հրաշքներ գործեց, մեր բերդին քաշուած բոլոր գնդակները բռնելով, նաեւ ժայռի պէս մեր պաշտպանողական գիծը, որ թումբի պէս կանգնած ետ մղեց



Այս  
նակատագրական  
մրցումէն  
առաջ  
խմբապետ  
Վարդիվառ  
կը պատգամէ.-  
«ՄԵՌՆԻԼ  
ԿԱՅ,  
ՅԱՂԹՈՒԻԼ  
ԶԿԱՅ»:

ՀՄԸՄ ԼԻՐԱՆԱՆԻ ԲԱԺԱԿԱԿԻՐ 2 ԱՊՐԻԼ 1948



ՀՄԸՄԻ ՅԱՂԹԱՆԱԿԵՆ ՎԵՐՋ ՌԱՍԻՆԿԻ ԽՄԲԱՊԵՏԸ  
ԿԸ ԾՆՈՐՀԱԻՈՐԷ ՀՄԸՄ-Ի ԽՄԲԱՊԵՏ ՎԱՐԴԻՎԱՌԸ, ՄԱՐԶԻՉ  
ՆԱԼՊԱՆՏԵԱՆԸ ԵՒ ՖՈՒԹՊՈԼԻ ՊԱՏԱԽԱՆԱՏՈՒ ԾԱՀԻՆԵԱՆԸ

Զախէն՝ Լեւոն Պալապանեան, Յովհաննէս Նազարեան, Մանուէլ  
Ալթունեան, Իսահակ Սարգիս Ազնաւորեան, Ժորժ Շատարեան, Ստեփան  
Մելիքսեբեան, Անդրանիկ Գամարեան, Տրդատ Փանոսեան, Տիգրան  
Արապեան, Եռսեֆ Հենի (Ռասիմկի խմբապետը կը շնորհաւորէ Վարդիվառ  
Յովհաննէսեանը) եւ Ժողէֆ Նալպանտեան. առջեւը՝ Շահինեան:

Ռասինկին բոլոր յարձակումները: ՀՄԸՄ, ախոյեանական մրցումներու պէս վեճական խաղալով, այս մրցումն ալ վերջացուց փառաւոր յաղթանակով՝ 1-0 արդիւնքով եւ տիրացանք Լիբանանի բաժակին:

Եղիշը այս մրցումին չկրցաւ խաղալ, նախորդ մրցումին ոտէն վիրաւորուելուն պատճառաւ:

Աննկարագրելի ցնծութեանց եւ ծափահարութեանց մէջ՝ խմբովին պատուոյ թրիպիւն ներկայացանք, ուր ՀՄԸՄի խմբապետին յանձնուեցաւ Լիբանանի բաժակը, զոր համբուրելով եւ գլխուս վրայ բարձրացնելով ու դառնալով մեր ժողովուրդին, պոռացի. - «Այս բաժակը կը նուիրենք մեր աննման եւ յաղթանակներու արժանի հայ ժողովուրդին: Կեցցէ՛ հայ ժողովուրդը»: Պատասխանեցին. - «Կեցցէ, ՀՄԸՄ»:



ՀՄԸՄ-ի ԽՄԲԱՊԵՏ ՎԱՐՎԻՎԱՌ ԶԱՂԹԱՆԱԿԻ ԲԱԺԱԿՈՎ 1948

ՀԱՅ ԺՈՂՎՈՒՐԴԸ ԹՐԻՊԻԻՆԷՆ ԿԸ ՊՈՌԱՅ

«ԿԵՑՑԷ՛ ՀՄԸՄ»

Ա.ՋԻՆ՝ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԸ. ԶԱԽԻՆ՝ ՆԱՍԻՖ ՄԵԺՏԵԼԵՆԻ (ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ). ԵՏԵԻԸ՝ ՏԻԳՐԱՆ ԹՈՍՊԱԹ (ՀԱՅ ԵՐԵՍՓՈՒԽԱՆ), ՆԱԵԻ՝ ԽԱՀԱՏՈՒՐ ՊՈՅԱԾԵԱՆ (ՖՈՒԹՊՈԼԻ ԱՆԱՀԱՌ ԻՐԱԽԱՐԱՐ):

ԱՌՋԵԻԸ՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԸԱՀԻՆԵԱՆ, ԺՈՐԺ ԻՍԿԷՆՏԷՐԵԱՆ ԵՒ ՏԻԳՐԱՆ ԾԻՐԻՆԵԱՆ:

## 1948 ՀՄԸՄ ԼԻԲԱՆԱՆԻ ԲԱԺԱԿԱԿԻՐ

«Ազդակ»ի մէջ գրեց Շահինեան 6 Ապրիլ 1948

*Պէյրուքի Քաղաքացետարանի դաշտ, 4 Ապրիլ 1948:*

Լիբանանի ախոյեանութեան նախանձելի տիտղոսը ստանալէ, ՀՄԸՄի միջմասնանիւղայինի բաժակին տիրանալէ ետք՝ Հալէպի մէջ, Կիրակի օր ՀՄԸՄ պարտութեան մատնեց Ռասինկը եւ առաւ Լիբանանի բաժակը՝ 10 հազար բազմութեան ներկայութեան. իրաւարար՝ Ատէլ Սիտանի: Շատ կանոնաւոր խաղ եղաւ, 20րդ վայրկեանին Յովհաննէսի կողմէ քաշուած գնդակ մը Վարդիվառէն Մանուէլի փոխադրուեցաւ, որ նշանակեց առաջին կողմ: Բ. կիսախաղին որեւէ կող չեղաւ եւ խաղը վերջացաւ ՀՄԸՄի յաղթանակով: Կրթական նախարարը բաժակը յանձնեց ՀՄԸՄի խմբապետ Վարդիվառին, ընդհանուրի ծափերու մէջ:



### HOMENETMEN - COUPE DU LIBAN 1948

1948 - ՀՄԸՄ ԼԻԲԱՆԱՆԻ ԱԽՈՅԵԱՆ ԵՒ ԲԱԺԱԿԱԿԻՐ

նաեւ ուրիշ այս տարուայ շահած բաժակներով

Ձախէն ոտքի՝ Ժորժ Շատարեւեան, Սարգիս Ազնաւորեան, Անդրանիկ Գամարեան, Վարդիվառ (խմբապետ), Յովհաննէս Նազարեան, Եղիշէ Մանուկեան, Տրդատ Փանոսեան եւ Ժոզէֆ Նալպանտեան (մարզիչ):

Ձախէն ծոած՝ Տիգրան Արապեան, Մանուէլ Ալթունեան, Յակոբ Վարժապետեան եւ Լեւոն Պալապանեան. ՀՄԸՄի ակումբը՝ Ապրիլ 1948:

*Խաղացողները ստացան ոսկեզօծ մետալներ: ՀՄԸՄ իր գեղեցկագոյն խաղերէն մէկը ցուցադրեց: Յիշատակի արժանի է Յովհաննէս, որ առաջին կիսախաղին, երբ գնդակը հագիւ մէկ մեթր մնացած էր ՀՄԸՄի բերդէն, խիզախ խոյանալով մը կրցաւ փրկել իր խումբին պատիւը: Կիրակի օրուան յաղթանակով ՀՄԸՄ վերստին տիրացաւ իր «հսկաներու խումբը» տիտղոսին, զոր սովոր էին ըսելու 1944ին:*



**ԱՅՍ ԵՐՐԵԱԿ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐՈՒ ԱՌ Ի ԳՆԱՀԱՏԱՆՔ ՀԱՅ  
ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԻՐ ԱՐԳԱՐ ՎՃԻՌՈՎ ՀՌՁԱԿԵՑ 1948-Ը ՀՄԸՄ-Ի  
ՈՍԿԻ ՏԱՐԻՆ ՄԻԵՒՆՈՅՆ ԱՏԵՆ ՊԱՐԳԵՒԱՏՐԵՑ ՀՄԸՄ-Ի  
ԽՄԲԱՊԵՏԸ ԿՈՉԵԼՈՎ ԶԻՆՔ  
«ՀՄԸՄ-Ի ՎԱՐԴԻՎԱՌԸ»**

*Խումբիս խաղացողները՝ մեր գերագոյն նպատակը իրագործեր էինք, նոյն տարին ՀՄԸՄ հասեր էր Լիբանանի ախոյեան եւ բաժակակիր վսեմ տիտղոսներուն, արժանանալով մեր սիրելի ժողովուրդին թանկագին գնահատանքին: Իսկ ես, կը զգայի սրտիս խորերէն, գերազանցապէս վարձատրուած: Ասկէ աւելի վեհ ու վսեմ վարձատրութիւն պիտի չըլլար՝ անկասկած:*

## 1948 ՀՄԸՄ-ի ՈՍԿԻ ՏԱՐԻՆ

### ՀՄԸՄ ԼԻԲԱՆԱՆԻ ԱԽՈՅԵԱՆ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ ԲԱԺԱԿԱԿԻՐ ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԸ ԿԸ ՇՆՈՐՀԱԽՈՐԷ ՀՄԸՄ-Ը

#### ՀՄԸՄ-ի ակումբին մէջ՝ 14 Ապրիլ 1948

Կրկնակի յաղթանակները նկատի ունենալով, Լիբանանի ֆուտբոլի ֆետերասիոնը ուզեց հանդիսաւորապէս շնորհաւորել ՀՄԸՄը իր խաղացողներով եւ պատասխանատուներով: Առ այդ, մեր ակումբին մէջ կազմակերպուած էր շքեղ ընդունելութիւն մը, որուն ներկայ եղաւ ֆետերասիոնը իր լրիւ կազմով: Հոն էին բոլոր վարչականները եւ խաղացողները՝ անխտիր: Խօսք առնելով, Ֆետերասիոնի նախագահը՝ Նասիֆ Մեժտելեհի, նախ շնորհաւորեց ՀՄԸՄի վարչականներն ու խաղացողները, դրուատեց ՀՄԸՄի լայն գործունէութիւնը մարզական բոլոր նիւղերու մէջ, ապա աւելցուց.

«ՀՄԸՄը Լիբանանի լաւագոյն մարզական միութիւնն է, որ առաւել՝ ունի կազմակերպուած լաւագոյն սկաուտութիւնը: Կը շնորհաւորեմ ձեզ, ձեր զոյգ տիտղոսները արժանաւոր կերպով շահելուդ համար: Կը շնորհաւորեմ ձեր ղեկավարութիւնը այսպիսի տիպար եւ մարզական ոգիով ֆուտբոլիստներ պատրաստելուն համար»:

Դառնալով դէպի եղբայր Յ. Շահինեանին, մասնաւոր շնորհակալութիւն յայտնեց անոր՝ այն նեցուկին համար, զոր կ'ընծայէր ֆետերասիոնին:

Ապա, եզրափակելէ առաջ իր խօսքը, Պ. Նասիֆ Մեժտելեհի, յանուն իր գլխաւորած ֆետերասիոնին, սրտագին շնորհաւորութիւններ յայտնեց ՀՄԸՄի մեծ ընտանիքին, իր ծաւալած այնքան օգտաշատ գործունէութեան համար Լիբանանի մարզական կեանքէն ներս, եւ աւելցուց.

#### «ԴՈՒՔ ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԶԱՀԱԿԻՐՆ ԷՔ»

1948ը ՀՄԸՄի համար դարձաւ ոսկեփայլ տարի, եւ իբր այդպիսին ալ՝ արձանագրութեցաւ մեր տարեգրութեանց մէջ անջնջելիօրէն: Այս զոյգ տիտղոսներուն յաւելեալ փայլ մը կու տար Հալէպի միջմասնանիւղայինի շահուած բաժակը: Երեք արժէքաւոր բաժակներ՝ մէկ տարւան ընթացքին:

Ասիկա գեղեցիկ առիթ մը եղաւ գնահատելու այն վերելքը, զոր իրագործած էինք 1945ի մեր այդ տկար կազմէն ետք մինչեւ 1948ի այս զօրաւոր կազմը, երեք տարիներու յարաբերաբար կարճ ժամանակի ընթացքին: Այս բացայայտօրէն պատուաբեր արդիւնքը կարելի եղաւ ձեռք ձգել շնորհիւ այն յարատեւ ջանքերուն, զորս վարչական թէ խաղացող չխնայեցին, եւ այն բազում զոհողութեանց, որոնց յանձնառու եղան: Այս երեք յաղթական տիտղոսները եկան աւելնալու 1943ի Լիբանանի բաժակի՝ 1944ի ու 1946ի ախոյեանութեան տիտղոսներուն վրայ, նոր յաղթանակներու ի խնդիր մեր վճռակամութիւնը ամրապնդելու:

ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԸ ԿԸ ԸՆՆՈՐՀԱԽՈՐԷ ՀՄԸՄ-Ը ԵՒ ՄԵՆՔ ԿԸ ՏՕՆԵՆՔ ՄԵՐ ՅԱՂԹԱԿԱՆԻ ԶՈՅՔ ՏԻՏՂՈՍՆԵՐԸ՝ ՄԵՐ ԱԿՈՒՄԲԸ:



14 Ապրիլ 1948 ներկայ են ՀՄԸՄի Շրջանայինի եւ Պէյրութի վարչութեանց անդամները: Ֆութպոլիստները աջէն նստած՝ Յովհաննէս Նազարեան, Ստեփան, Տրդատ, Սարգիս Ազնաւորեան, Վարդիվառ, Մանուկ Ալթունեան եւ Տոբ. Պէրպէրեան:



Առջեւը նստած են՝ Մարտիրոս Ճամպուլեան, Ֆետերասիոնի անդամները, Տոբ. Արամ Պաղտասարեան, Մանուկ Տէտէեան եւ Տոբ. Յակոբ Պէրպէրեան:

1948-ի ԱՅՍ ՓԱՌԱԻՈՐ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐՈՒՆ ԻՐ ԱՐԳԱՐ ՈՒ  
ԱՐԺԱՆԻ ԲԱԺԻՆԸ ՈՒՆԻ ՀՄԸՄ-Ի ՖՈՒԹՊՈԼԻ ԱՐՏԱԿԱՐԳ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝ ԵՂԲԱՅՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԱՀԻՆԵԱՆ,  
«ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՆՈՒԻՐՈՒՄ ՀՄԸՄ-ԻՆ»:



ԵՂԲԱՅՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ  
ՇԱՀԻՆԵԱՆ, ՆԿԱՐ՝  
4 ԱՊՐԻԼ 1948-ի  
ԼԻԲԱՆԱՆԻ ԲԱԺԱԿԻՄԵՐ  
ՅԱՂԹԱԿԱՆ ՄՐՑՈՒՄԻՆ

Եվ այդպիսով կը հրաժարէր պատուոյ թրիպիւնն ընտելէ, կու գար մարգարաշտին եզերէր, արագ արագ կը յառաջանար, ետ կը վերադառնար, այսպիսով խաղացողներուս աւելի մօտ ըլլալով կը բազմաթիւ մեզ: Չէր գոհանար այսքանով, ու չէր վարաներ միջամտելու իրաւարարի անարդար որոշումներուն դէմ:

Ամբողջական ու անսակարկ նուիրումը եղբայր Շահինեանի, ընդհանրապէս ֆուքպոլի մարզանիւղին եւ մասնաւորապէս ՀՄԸՄի մեծ ընտանիքին, ունէր գաղտնիք մը, որ կը բացատրէր այս իր օրինակելի վերաբերմունքը:

Այդ գաղտնիքը կը կայանար այն իրողութեան մէջ, թէ 1924ին, իբր անուանի ֆուքպոլիստ, ինքը եղած էր հիմնադիրներէն եւ խաղացողներէն մէկը Լիբանանի առաջին մասնաճիւղին, Պէյրութի առաջին ֆուքպոլի խումբին, նաեւ սոյն մասնաճիւղին առաջին վարչութեան մաս կազմած էր: Եղբայր Շահինեան եղած է ոչ միայն ֆուքպոլիստ, այլ նաեւ հռչակաւոր աթլէթ, ՀՄԸՄի կազմակերպած Ա. եւ Բ. Ողումպիական խաղերու օրուայ ախոյեան՝ 1925ին եւ 1926ին:

Կարելի՞ է մոռնալ եղբայր Յովհաննէս Շահինեանը եւ արժանավայել գնահատանքը չընծայել իրեն...

Յովհաննէս Շահինեան իր անձն ու Պէյրութի կեդրոնական շրջանի մէջ գտնուող իր դեղարանը, դրած էր տրամադրութեան տակ եւ ճիշդ դեղորայք, ոչ միայն ՀՄԸՄի ֆուքպոլիստներուն, այլ նաեւ տեղացի խումբերու խաղացողներուն, երբ դիմէին իրեն: Կրկնակի հանգամանքով՝ ինք էր ՀՄԸՄի ֆուքպոլի վերին պատասխանատուն եւ անդամ՝ Լիբանանի ֆետերասիոնին: Մասնաւորաբար կարելորդ ամէն մրցումի նախօրեակին, կը մասնակցէր խումբիս ժողովին, եւ փորձառու մարզասէր խորհուրդներով անհրաժեշտ թելադրութիւնները կ'ընէր: Ներկայ կը գտնուէր Կիրակի օրուան մրցումին, խաղին ընթացքին մօտէն հետե-



Միշտ հաւատարիմ մնալով մարզիկի կոչումին, ան եղաւ  
ամբողջական նուիրումի ու զոհաբերութեան տիպար ղեկավարը՝  
գիտակից իր ստանձնած պատասխանատուութեանց:

1945-էն 1950, երբ ստանձնեք էի ՀՄԸՄի ֆուքպոլի Ա. խումբին  
խմբապետութիւնը, խումբիս խաղացողներէն որեւէ մէկուն  
վերաբերող խնդրի մը կապակցութեամբ, գործ հայթայթել, բժիշկի կամ  
դեղորայքի հարց, եւ այլն, երբ իրեն կը դիմէի, միշտ ուշադիր մտիկ  
կ'ընէր զիս, եւ իր կարելին կ'ընէր, անպայման լուծում մը գտնելու  
հարցին:

Ինչպէս պիտի ըսէր ֆուքպոլիստ Եղիշէ Մանուկեան, իր «ԿԵԱ ՆՔՍ»  
գիրքին մէջ.

- «Անձամբ եւ բարձրադասակ կը վկայեմ թէ ո՛չ ոք, ո՛չ մէկ  
մասնաճիւղի անդամ, որեւէ տեղ ՀՄԸՄի համար այնքան աշխատանք  
թափած եւ այնքան զոհաբերուած է, որքան եղբայր Յովհաննէս  
Շահինեանը»:

ՀՄԸՄի մեծ ընտանիքէն ներս, զոհաբերութեան նոյն ոգիով  
տոգորուած՝ կային նաեւ ուրիշ նուիրեալներ, ՀՄԸՄի Մերձաւոր  
Արեւելիի Շրջանային վարչութեան սահմաններէն ներս եղող  
մասնաճիւղերուն մէջ.

Դամասկոսէն Վահան Էֆէնտի Տօնապետեան

Հալէպէն Եղբայր Լուտեր Մասմանանեան

Հայֆայէն Եղբայր Յարութիւն Պէօյիւքեան

Երուսաղէմէն Եղբայր Լեւոն Քէշիշեան

Այս նուիրեալներուն օրը կը սկսէր ՀՄԸՄով եւ կը վերջանար ՀՄԸՄով:

ՀՄԸՄ-ի ՓԱՌԱՊԱՆԾ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐՈՒ ԱՌԹԻԻ ԽՐԱԽԾԱՆՔ  
 ԽՐԲԱՆԿԱՐ ՊՈՒՐԾ ՀԱՄՈՒՏԻ ՄԵՐ ՏՈՒՆԻՆ ԲԱԿԸ 1948  
 ՈՐ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ ՀՄԸՄ-Ի ՊԷՅՐՈՒԹԻ ԱԿՈՒՄԲԸ



Ա. խումբի տղաքը շրջապատուած մտերիմ համակիրներով:  
 Խմբանկար առջեւէն Ա. շարք՝ Լեւոն Պալապանեան, Պարգեւ Տապանեան:  
 Բ. շարք՝ Կարապետ Սաաթեան (Սաաթեի), Վարդիվառ, Ժան Նալչայեան,  
 Ժոզէֆ Նալպանտեան, Պաղտասար Նազարեան, Մարգիս Ազնաւորեան,  
 Յակոբ Խուլպէսերեան, Ժորժ Շատարեան եւ Անտոն Պէզնեան:  
 Գ. շարք՝ Ստեփան Մելիքսեթեան, Պետրոս Վեֆիլեան, Յովհաննէս Թերզեան,  
 Անդրանիկ Նազարեան, Սուս Յակոբ, Մանուէլ Ալթունեան եւ Տոպրի:  
 Դ. շարք՝ Յովհաննէս Նազարեան, Գէորգ Քէօրեան, Յակոբ Վարժա-  
 պետեան, Անդրանիկ, Տիգրան Արապեան, Անդրանիկ Գամարեան եւ  
 Եղբայրս՝ Խաչեր:



Զախէն՝ Ժիրայր  
 Ատուրեան, Յովհաննէս  
 Թերզեան, Եղբայրս՝  
 Խաչեր, Վարդիվառ եւ  
 Լեւոն (ապագայի հրո-  
 չակաւոր Ուստան):

Աջէն ոտքի՝ Արթին  
 Քեպպպեան, Կարօ  
 Սեդրակեան, Բիւզանդ  
 Մղսի Աւետիսեան:

1948-ԻՆ ՀՄԸՄ ՖՈՒԹՊՈՒԼԻ ՇՐՋԱՊՏՈՅՏԸ  
ԴԷՊԻ ԿԻՊՐՈՍ 4-14 ՅՈՒՆԻՍ 1948

Կիպրահայերը կ'երազեին տարիներէ ի վեր որ հայկական զօրաւոր խումբ մը երթար Կիպրոս ու հոն ցուցադրէր հայերուն խաղարկութիւնը, ուժն ու տաղանդը եւ իրենք նակատարաց եւ հայու հպարտութեամբ երթային դաշտ քաջալերելու այդ հայկական խումբը եւ խանդավառելու հայ մարզիկները: Կարծես թէ վստահ էին գալիք խումբին անպարտելիութենէն, որովհետեւ Դեկտեմբեր 30, 1945ին ՀՄԸՄ յաղթած էր՝ 1-0 արդիւնքով Կիպրոսի ախոյեան ԷԲԱ-ին, Պէրուքի մէջ:

Երկար ատենէ ի վեր խոր ցանկութեան մը հետ շփոթուող նախազգացումով մը՝ անոնք ակնկալէր էին, որ ՀՄԸՄ Լիբանանի ախոյեան հռչակուէր եւ միեւնոյն ատեն Լիբանանի բաժակը շահէր որ մեր Կիպրոս երթալը իրականանար: Այդպէս ալ եղաւ:

Մեր շրջապտոյտին յաջող կազմակերպման մէջ մեծ եղաւ դերը կիպրահայ Անանիա Մահտեսեանի, որ նոյն նպատակին համար քանի մը անգամ Պէրուք եկաւ, նաեւ մեզ զգուշացուց, թէ պիտի նակատէինք Կիպրոսի լաւագոյն խումբերու հետ, որոնք յաճախ Եւրոպական խումբերու դէմ խաղցած են եւ գոհացուցիչ արդիւնքներ արձանագրած:

Մենք ալ աւելի զօրաւոր ըլլալու համար Հալէպի ՀՄԸՄի լաւագոյն խաղացողներէն՝ յառաջապահ Վազգէնը եւ աջ ծայր Յակոբը, խումբին մէջ առինք:



ՊԷՅՐՈՒԹԻ ՕԴԱԿԱՅԱՆԸ - ԲԱՐԻ ԾԱՆԱՊԱՐՀԻ ԵԿԱՄ ԵՆ 4 ՅՈՒՆԻՍ 1948  
Ձախէն երկրորդը՝ Վարդիվառ, բռնած Լիբանանի դրօշակը:

4 Յունիս 1948՝ դեպի Կիպրոս: Մեծ թիւով ընկերներ եւ ՀՄԸՄականներ օդակայան փութացած էին մեզի բարի նանապարհ եւ յաղթանակներ մաղթելու: Առաջին անգամ ըլլալով է, որ օդանաւով կը նամբորդէինք: Կէս ժամէն արդէն Կիպրոսի վրայ էինք եւ հիանալով կը դիտէինք այդ գեղեցիկ կղզին: Իջանք Նիկոսիոյ օդակայանը, ուր հարիւրաւոր հայեր եկած էին մեզ դիմաւորելու:

Նրեկոյեան այցելեցինք ՀՅՄի ակումբը, ուր լեցուած էր համակիրներու հոծ բազմութիւն մը: Անոնք սիրալիբ մօտեցումով կը շրջապատէին մեզ. առաջին անգամ ըլլալով է որ հայկական զօրաւոր խումբ մը մօտէն կը տեսնէին:

### ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

5 Յունիս 1948, Նիկոսիա, հրապուրիչ ինքզինք մըն է, ուր առաւելաբար վիլլաներ կան, առջելը պարտէզներով: Քաղաքին թրքական կողմն ալ նոյնպիսի տուններ կան: Մեր շրջագայութեան ընթացքին կըրցանք ստուգել թէ կիպրահայերուն վիճակը լաւ էր, մեծամասնութիւնը կը զբաղէր վաճառականութեամբ: Մեր կուրծքերուն ՀՄԸՄի պեններով, հպարտօրէն կ'անցնէինք շուկային մէջէն, կիպրացիներուն հետաքրքիր եւ զարմացական նայուածքներուն տակ, մինչ հայերը ուրախութեամբ կը բարեւէին մեզի եւ իրենց խանութները կը հրաւիրէին:



Մելգոնեանի աշակերտներու հետ. մէջտեղը՝ Վարդիվառ:

Կարեւորագոյնը եղաւ այն այցելութիւնը, զոր տուինք Մելգոնեան Կրթական Հաստատութեան: Այս կրթարանը հռչակի տիրացած էր, որովհետեւ մեծ գրագէտներ, ինչպէս՝ Յակոբ Օշական, Վահան Թէֆէեան եւ այլք պաշտօնավարած էին հոն, եւ իրենց շունչին տակ կը

պատրաստէին այնպիսի սերունդ մը, որ հրապարակագրական, գրական ու մարզական գետնի վրայ նշանակելի դիրքերու պիտի հասնէր: Եղիշէն ալ այստեղէն շրջանաւարտ ըլլալով մեզ պտըտցուց հաստատութեան ամենահետաքրքրական մասերը, միեւնոյն ատեն պատմելով մեզի իր դպրոցական կեանքի յուշերէն: Մելգոնեանի աշակերտները շրջապատած էին մեզ եւ ամէն տեսակ հարցումներ կ'ընէին, թէ ինչպիսի՞ խաղ կը կիրարկէինք, «Մանչեսթր Եունայթըտի» կրնայի՞նք յաղթել եւ այլն, սիրով կը պատասխանէինք իրենց հարցումներուն: Նկատեցինք, թէ շատ կը վախճային որ մենք պարտուէինք: Անոր համար տեսակ մը կ'աղաչէին միշտ զգոյշ ըլլալ եւ անպայման յաղթել: Բացէ ի բաց վստահեցուցինք զիրենք, որ եկած ենք անպայման յաղթելու, առաջ Աստուած, որպէսզի Կիպրոսի մեր հայրենակիցները ուրախ ու նակատարաց ըլլային եւ հպարտ՝ ՀՄԸՄով: Շատ յուզիչ եւ անուշ տպաւորութեամբ բաժնուեցանք մեր այս խոստմնալից պատանիներէն եւ այս շատ օգտակար հայկական օճախէն:

### ՄԱՅԻՍ 28-Ի ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ՆԻԿՈՍԻՈՅ ՄԷՋ

Յունիս 5ի երեկոյեան, մեծ շուքով տօնուեցաւ Մայիս 28ը՝ Հայաստանի Անկախութեան տարեդարձը, ուր ներկայ եղանք բոլոր խումբով: Հանդիսութեան նախագահն էր՝ մեր ֆուքպոլիստ Եղիշը, որ բացումը կատարեց պատշան խօսքերով, ապա բեմ հրաւիրեց գլխաւոր բանախօսը՝ ընկեր Գարրիէլ Լազեան, Հ.Յ.Դ. ի գերագոյն մարմնի անդամ, մասնաւոր հրաւերով՝ Եգիպտոսէն եկած:

### ՄԵՐ ԱՌԱՋԻՆ ԵՒ ՇՌՆԴԱԼԻՑ ՅԱՂԹԱՆԱԿԸ ԼԻՄԱՍՈՒԼԻ ՄԷՋ 6 ՅՈՒՆԻՍ 1948

Կիպրական հողի վրայ մեր առաջին հանդիպումը պիտի ունենայինք Լիմասոլի մէջ, Նիկոսիայէն 80 ֆիլովեթր հեռու, Ա.Է.Լ. խումբին հետ:

Յունիս 6ին, լիբանանեան եւ հայկական եռագոյն դրօշակները պարզած ուղղուեցանք դէպի Լիմասոլ, ուղղակի մարզադաշտը... Հանելի անակնկալ մը եղաւ մեզի համար, երբ դաշտ իջնելով դիմաւորուեցանք «կեցցէ՛, ՀՄԸՄ», հուռուներով եւ ծափահարութիւններով: Հազարաւոր հայեր եկած էին կղզիին բոլոր քաղաքներէն: Արդէն խումբիս որդեգրելիք թափփիք որոշած էինք: Տրուած ըլլալով որ կիպրացիները անտեղեակ էին մեր խաղարկութենէն, որոշեցինք խաղի սկիզբէն իսկ, որ բասերը ծայրերէն ինծի պիտի տային, ես ալ՝ հեռուէն պիտի քաշէի: Այսպէս ալ հասանք մեր նպատակին՝ նշանակելով 2 կողեր: Ա՛է՛լի տղաքը շշմած էին, երբեք չէին սպասեր որ այսքան հեռաւորութենէն՝ «30 մեթր» քաշէին կողին, ալ զիս երկու հոգիով չէզոքացուցին, մենք ալ թափփիք փոխելով՝ Մանուէլ երկու կող նշանակեց, իսկ Սարգիս՝ մէկ կող եւ այսպէս խաղը վերջացաւ՝ 5-1 ՀՄԸՄի շունդալից յաղթանակով:



ՀՄԸՄ - ԿԻՊՐՈՍԻ ՀԱՒԱՔԱԿԱՆՆԸ՝ ԿԻՊՐՈՍ 1948

*Ձախեն՝ Յովհաննէս Շահինեան, Կարպիս Մերտինեան եւ Ժորժ Շատարեւեան:*

*Դադարին՝ հայերը եկան, գտան զիս եւ պոռալով կը պահանջէին, որ դաշտին մէջտեղէն քաշելով կոլ մը ընեմ: «Ինչո՞ւ չէ, քանի որ դուք կ'ուզէք, ես ալ կ'ընեմ».- ըսի: Խաղէն ետք հայերը դաշտ խուժեցին, խաղացողներուն փաթթուեցան, ողջագուրուեցան, եւ ունեւրնուն վրայ առած՝ դաշտին չորս կողմը դարձան, այնքան ուրախ էին, առաջին անգամ է որ հայեր այսպիսի փառաւոր յաղթանակ մը կը տեսնէին հայկական խումբի մը կողմէ:*



ՄԵՐ ԿԱԶՄԸ.- *Ձախեն՝ Կարպիս Մերտինեան, Յովհաննէս Պայթարեան եւ Վարդիվառ (խմբապետ):*

## Լուսանցքի վրայ

Տեղին կը գտնեմ մատնանշել հետեւեալը: Աէլին ձախ հաֆպէկը հայ մըն էր (յետոյ իմացանք որ համայնաւար է), շատ կոպիտ կը խաղար, կը նեղէր մեր աջ ծայր Յակոբ Աֆարեանը, որ մաքուր խաղացող է: Երկրորդ կիսախաղին Յակոբը եկաւ թէ,- «խմբապետ, ալ կարելի չէ ասոր վայրագութեան դիմանալ, տեղս խաղցիր եւ ասոր դասը տուր»: Յակոբին տեղը անցայ աջ ծայր: Գնդակ մը եկաւ, առի եւ առաջ անցայ, սպասեցի որ մօտենայ, վրան յարձակեցայ, ոտքիս տակը առի եւ կրնամ ըսել թէ նզմեցի զինքը. ինծի դառնալով ըսաւ.- «Քեզի ի՞նչ ըրի որ այսպէս կը վարուիս հետս»: «Շատ լաւ գիտես», պատասխանեցի: Ասկէ վերջ Յակոբին չմօտեցաւ իսկ:

Մատնանշելի պարագայ մը եւս, բայց այս մէկը՝ ներքին բնույթով:

Կիպրոսի այս առաջին մրցումին, մեր բերդապահը Նալպանտեանն էր եւ ոչ Տիգրանը. ինչո՞ւ: Մեր վերջին փորձին՝ Պէյրուս, սկսանք գնդակ փաշել կոլարին. ես ալ փաշեցի. կարծեմ քիչ մը զօրաւոր էր հարուածս. Տիգրանը գնդակը բռնեց. «այս» մը փրթաւ բերնէն եւ մէկ կողմ փաշուեցաւ թելը բռնած. շատ կը ցաւէր: Անմիջապէս բեկաբոյժի տարի զինք, պէտք եղած դարմանումը ըրաւ, պատուիրեց մէկ շաքաթ հանգիստ ընել եւ ֆուսպոլ չխաղալ. երեք օր վերջ արդէն Կիպրոս մեր առաջին մրցումը պիտի խաղայինք:

Այնուհետեւ ինծի արգիլուեցաւ ՀՄԸՄի փորձերուն կոլարին գնդակ փաշել:

## ԱՅՍ ՇՈՒՆԴԱԼԻՑ ՅԱՂԹԱՆԱԿԷՆ ԵՏՔ՝ ԽՐԱԽԾԱՆՔ

Դարձեալ դրօշակները պարզած՝ մրցումէն ետք նամբայ ելանք դէպի Նիկոսիա. մեզի ընկերակցող հայերը ուրախութիւնէն կ'երգէին եւ կը ծափէին: Մօտաւորապէս նամբուն կէսերը հասնելով շատ ուրախալի անակնկալի մը առջեւ գտնուեցանք: Նիկոսիայէն հայ երիտասարդներ մեզ դիմաւորեցին եւ հրաւիրեցին ինչպէս նախապէս, ի պատիւ մեզի նաշկերոյթ մը սարքած էին այսօրուան այս գեղեցիկ յաղթանակը տօնելու համար: Տեղաւորուեցանք սեղաններուն շուրջը, ուր Եղիշ, յանուն ֆուսպոլիստներու, նախ շնորհակալութիւն յայտնեց եղած յարգանքին համար, ապա խօսեցաւ ներշնչեալ բոցավառ հառ մը, ներկաները մասնակից դարձնելով իր յուզումներուն, որովհետեւ ինք ոչ միայն ուսում առած էր Մելգոնեան հաստատութենէն, այլ նաեւ հոն մարզուած էր իբր ֆուսպոլիստ եւ այսպէս՝ տեսակ մը տարիներու վրէժը կ'առնէր կիպրացիներէն: Այնուհետեւ սկսաւ բուն խրախճանքը, որ տեւեց մինչեւ ուշ գիշեր, խանդավառելով մթնոլորտը մեր յեղափոխական երգերով:

Յաջորդ օր, կիպրական թերթերը մեծ վերնագիրներով կը շնորհա-  
 ւորէին ՀՄԸՄի յաղթանակը, դրուատելով գեղեցիկ եւ ներդաշնակ  
 խաղարկութիւնը, մասնաւորաբար կը յիշատակէին՝ իրենց համար ար-  
 տաստվոր երեւոյթը ՀՄԸՄի խմբապետին, որ 30 մեթրի հեռաւորութենէ  
 նշանակած էր, պոմպ աթումիֆի հարուածով երկու կողերը:



ՀՄԸՄ-Ի ՅԱՂԹԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ ԼԻՄԱՍՈՒ 1948

Զախէն ոտֆի՝ Վազգէն, Շատարեւեան, Սարգիս, Աֆարեան,  
 Վարդիվառ, Յակոբ Վարժապետեան, Մանուէլ եւ Տրդատ:

Զախէն ծոած՝ Նդիշ, Նալպանտեան, Լեւոն եւ Յովհաննէս:



HOMENETMEN -VAINQUEUR DE A.E.L. A CHYPRE 1948

ՀՄԸՄ-Ի ՅԱՂԹԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ ԿԻՊՐՈՍ 1948

Զախէն ոտֆի՝ Ժորժ Շատարեւեան, Մանուէլ Ալթունեան, Ժողէֆ  
 Նալպանտեան, Յովհաննէս Նազարեան, Տիգրան Արապեան, Յակոբ  
 Վարժապետեան, Անդրանիկ Գամարեան, Ստեփան Մելիֆսեթեան եւ  
 Վարդիվառ Յովհաննէսեան (խմբապետ):

Մոած՝ Նդիշէ Մանուկեան, Տրդատ Փանոսեան, Յակոբ Աֆարեան  
 (Հալէպ), Սարգիս Ազնաւորեան եւ Վազգէն Տէր Ղուկասեան (Հալէպ):





ՀՄԸՄ-ի խՄԲԱՊԵՏ ՎԱՐԳԻՎԱՌ ՅՈՒՇԱԴՐՕՅԻ ՓՈՒՍԱՆԱԿՈՒՄ Կ'ԸՆԷ Ա.Է.Լ-ի խՄԲԱՊԵՏԻՆ ՀԵՏ (կռնակէն՝ եղբ. Շահինեան):

### 1948 ՀՄԸՄ-ի ՓԱՌԱԻՈՐ ՅԱՂԹԱԿԱՆ ՇՐՋԱՊՏՈՅՏԸ ԿԻՊՐՈՍ

*Մեր առաջին յաղթական մրցումէն ետք կիպրահայերը կերպարանափոխուած էին եւ ուրախ ու հպարտ: Փողոցներէն անցնելու ատեն ակնածանքով կը դիտէին մեզ: Երկրորդ մրցումը Կիպրոսի հաւաքականին դէմ վերջացաւ 2-2 հաւասար արդիւնքով: Երրորդ մրցումը նորէն Կիպրոսի խոյեան ԱԲՕԷԼին դէմ, 0-0 հաւասար: Մէկական բաժակ ստացանք:*

*Այս արդիւնքները մեզի համար գնահատելի էին:*



ՀՄԸՄ-ԿԻՊՐՈՍԻ ՀԱԻԱՔԱԿԱՆԸ ԱՐԴԻԻՆՔ՝ 2-2

## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ Ս.ՄԱԿԱՐԱՅ ՎԱՆՔԻՆ ՅՈՒՆԻՍ 1948

Մրցումներուն շարքը աւարտելով Կիպրոսի մէջ այցելեցինք մեր սրտին խօսող Սուրբ Մակարայ վանքը, որ կը գտնուի Քարփաս լեռան բարձունքին վրայ. այս վայրը մեզի յիշեցուց հայոց պատմութենէն դրուագ մը, ուր հայ հերոսներ եկած ապաստան գտած են այստեղ: Վանահայրը մեզ պտտցուց յետոյ տարաւ հարիւրամեայ ծառի մը տակ եւ այնտեղէն վարի գեղեցիկ ծովը ցուցնելով ըսաւ.

- Կար ժամանակ, որ այս տեղէն մինչեւ դիմացի ծովեզերքը մեզի կը պատկանէր...

Եւ պատմեց թէ ինչպէս կղզիին կառավարիչ անգլիացի զօրավարը, ներկայ եղած է հայ մարտիկներու քաջագործութեան, որմէ ետք եկած է վանքը եւ վանահօր ըսած է.

- Ինչ որ կ'ուզէք, պիտի տրուի ձեզի, ի հատուցում հայ մարտիկներու քաջագործութեան... Վանահայրը օգտուելով այս հրաշալի առիթէն, ուզած է բաւական լայն նամբայ մը՝ վանքէն մինչեւ ծովեզերք: Անգլիացի զօրավարը, խոստումին տէր, հաւանութիւն յայտնած է եւ այդ ընդարձակ հողամասը արձանագրուած է Սուրբ Մակարայ վանքին անունով:

- Յետոյ ինչ ինչ նկատումներով այդ մեծարժէք հողամասը ետ առին, - ըսաւ վանահայրը՝ որուն աչքերը արդէն թրջուած էին:

Կէսօրին, այդ ազնուասիրտ վանահօր նաշի հիւրը եղանք:

### Գնահատանքի խօսք Կիպրահայ բարեկամ Անանիա Մահտեսեանի

Իբր ՀՄԸՄական եւ խումբի խմբապետ, երախտագիտական խօսք կ'արձանագրեմ կիպրահայ Անանիա Մահտեսեանի, որ իր անձնական ջանքերով յաջողցուց մեր այս յաղթական շրջապտոյտը Կիպրոսի մէջ: Մեր այցելութեան տասը օրուայ ընթացքին, մրցում չեղած օրերը,



այնքան լաւ կազմակերպած էր, որ Կիպրոսի գեղեցիկ եւ տեսարժան բոլոր վայրերը կրցանք այցելել: Քիրենիա, Փամակուսթա, Լառնաֆա՛ լեռնային եւ ծովափեայ շրջաններով:

ԴէՊԻ Ս.ՄԱԿԱՐԱՅ ՎԱՆՔ ԿԻՊՐՈՍ 1948

Ուրքի երկրորդը՝ Անանիա Մահտեսեան եւ Յովհաննէս Պայթարեան: Մէջտեղը ծուած՝ Վարդիվաւ:



ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԿԸ ԴԻՄԱԽՈՐԷ ՀՄԸՄ-Ը Հ.Ե.Մ.-Ի ԱԿՈՒՄԲԸ ՆԻԿՈՍԻԱ, 1948:

*Մէջտեղը ոսփի՝ Կարպիս Մերտինեան, Յովհաննէս Շահինեան, Գաբրիէլ Լազեան, Յովհաննէս Պալթարեան եւ Վարդիվառ:*

### ՎԵՐԱԴԱՐՁ ԼԻՐԱՆԱՆ

Այսպէս գեղեցիկ եւ անմոռանալի յիշատակներով եւ յաղթական մրցուններու յաղթանակներու անջնջելի տպաւորութիւններով, նոր կորովով տոգորուն՝ վերադարձանք Լիբանան, ՀՄԸՄԻ ֆուլթայլի պատմութեան մէջ նոր յաղթական էջեր աւելցնելով:



ՀՄԸՄ-Ի ԽՈՒՄԲԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ ԿԻՊՐՈՍԻ ԸՐՋԱՊՏՈՅՏԻՆ *Զախէն՝ Յովհաննէս Պալթարեան եւ Յովհաննէս Շահինեան: Վարչական պատասխանատուներ՝ Վարդիվառ (խմբապետ) եւ Ժոզէֆ Նալպանտեան (մարզիչ):*

## ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԽՕՍՔ ԵՂԻՇԷ ՄԱՆՈՒԿԵԱՆԻՆ ՀՄԸՄ-Ի ՆՈՒԻՐԵԱԼ ՄԱՐԶԻԿԸ ԵՒ ՊԱՐԿԵՇՏ ՄՏԱԻՈՐԱԿԱՆԸ

Միասին եղած ենք Պէլյուրի ՀՄԸՄ-ի Ա. Խումբին մէջ 1941-1950:

Մեր մարզական տարեգրութեանց մէջ բացառիկ տեղ մը կը գրաւէ Եղիշէ Մանուկեան, իր կրկնակի բարձր արժանիքով, տաղանդաւոր ու նուիրեալ մարզիկ եւ պարկեշտ մտաւորական: Նկարագրի երկու հիմնական գիծեր՝ որոնք անբաժնելիօրէն միաձուլուած էին իր անձին մէջ: Մարզիկը հասակ առաւ որբանոցի օրերէն, երբ 1923ին, Քէլէկեան որբանոցի մարզադաշտին վրայ ռտաբոսիկ ֆութպոլ սկսաւ խաղալ՝ բուրժէ գնդակով, իսկ մտաւորականը իր մէջ զարգացաւ, երբ 1926ին գնաց Կիպրոս, Մելգոնեան Կրթական Հաստատութեան մէջ իր ուսումը ստանալու: Ուսման մէջ սակայն արթուն էր մարզիկը, եւ այդ շրջանին իսկ մաս կը կազմէր օրուան ախոյեան «Կայծակ» խումբին:

1932ին, աւարտելով Մելգոնեանը կու գայ Դամասկոս, ուր կ'ընդգրկէ ուսուցչական ասպարէզ՝ դասաւանդելով Միացեալ վարժարանէն ներս, միեւնոյն ատեն կը խաղայ ֆրանսական բանակի չեմպեօններու հոչակաւոր խումբէն, նաեւ Դամասկոսի ՀՄԸՄի Ա. խումբէն, որ այդ շրջանին Սուրիոյ-Լիբանանի ամէնէն զօրաւոր խումբն էր: 1936ին կու գայ Պէլյուր, կը պաշտօնավարէ երկաթուղիի եւ նաւահանգիստի ընկերութեան մէջ (DPHB) եւ կը խաղայ ֆութպոլի խումբէն: Տարի մը ետք, ՀՄԸՄի Շրջանային վարչութեան կողմէ իբր գործավար կ'անցնի Հայֆա, Պաղեստին, ուր կը վերակազմէ տեղւոյն ՀՄԸՄը:



ՀՄԸՄ-ի ՏԱՐԱԶՈՎ 1946, ԵՐԲ ՎԵՐԱԳՐԱԿՆԵՐԻ ԼԻԲԱՆԱՆԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆԸ: ԺԱՅՈՒ ՊԷՍ ՅԵՏՍԱՊԱՆ՝ ԵՂԻՇԸ, ՅԱՌԱԶԱՊԱՆ՝ ՎԱՐԴԻՎԱՌԸ:

1938ին վերջնականօրէն կը հաստատուի Պէլյուր եւ կը խաղայ ՀՄԸՄի հսկաներու խումբէն, Սաաթնիին հետ կազմելով պաշտպանողական անխորտակելի գիծ մը: Եղիշը մշտաբարուն պահակն էր խումբին, եւ մրցումի մը վճռական վայրկեաններուն, անմիջապէս կը միջամտէր՝

փորձառու խաղացողի ցուցմունքներն հասցնելով ընկերներուն:

1941ին, ես ալ կը միանամ այդ հսկաներու կազմին, ուր կը սկսի յաղթական երթը մեր խումբին, հասնելով տիտղոսներու գագաթնակէտին:

## ԵՂԻՇ, ԲԾԱԽՆԴԻՐ ԺՈՂՈՎԱԿԱՆԸ ԵՒ ԽԻԶԱԽ ՀՐԱՊԱՐԱԿԱԳԻՐԸ

Մեր հերթական ժողովներուն նշապահութեամբ ներկայ կը գտնուէր՝ տալու իր օգտաշատ խորհուրդները: Բախտաւոր էինք Նդիշի նման տաղանդաւոր ու վաստակաշատ մարզիկ ու մտաւորական մը ունենալնուս մեր խումբին մէջ: Պատկերացումը պակասաւոր պիտի ըլլար, եթէ չ'արձանագրէի հետեւեալ պարագան եւս ի նպաստ Նդիշի.

–1945ին, երբ համայնավարները մէջտեղ բերին «Բագրամեան» խումբը, որուն միացան մեր խումբէն վեց խաղացողներ՝ Նդիշը անմիջապէս գործի լծուեցաւ, քաջալերեց մնացեալ հաւատաւոր խաղացողներս, զօրավիգ կանգնեցաւ մեզի, մինչեւ որ տարի մը չանցած՝ 1946ին, վերատիրացանք Լիբանանի ախոյեանութեան:

«ԿԵԱՆՔՍ» վերնագրեալ իր գրքին մէջ Նդիշը այսպէս կ'արտայայտուի այդ մասին.

«Իրենց ուխտը դրժող այս մարզիկներուն դէմ ծառացան հաւատաւորներ, ինչպէս՝ Վարդիվառ Յովհաննէսեան, Սարգիս Ազնաւորեան, Յովհաննէս Նազարեան, Կիրակոս Գալայնեան եւ ինքս»:



Ան նուիրուած էր երկրորդական խումբերու կազմաւորման՝ յանախ դասախօսութիւններ տալով իրենց, միշտ ջատագովելով տիպար մարզիկի յատկութիւնները. նաեւ ներկայ կ'ըլլար իրենց ախոյեանական մրցաշարներուն:

Ապա գրիչը ձեռք կ'առնէր, իր խորաթափանց մեկնաբանութիւններն ու վերլուծումները կ'ընէր մրցումներու վերաբերեալ եւ մարգասէր ընթերցողները լար-

1947-ին ՀՄԸՄ-ի ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ  
ԺՈՂՈՎԻ ԴԱԳԱՐԻՆ ՊԷՅՐՈՒԹԻ  
ԱԿՈՒՄԲԸ  
ՎԱՐԳԻՎԱՆ ԵՒ ԵՂԻՇԷ

լած հետաքրքիրութեամբ կը կարդային այդ շահեկան յօդուածները: Ֆրանսատառ թերթերու սիւնակներէն կը քննադատէր մրցումի մը ընթացքին, իրաւարարի մը կողմնակալութիւնը, նաեւ ֆետերասիոնի կողմէ, ՀՄԸՄի ի վնաս, յաճախակի առնուած որոշումները:

ՀՄԸՄի 1947ի պատմական պատգամաւորական ժողովին, որուն ես ալ կը մասնակցէի, Եղիշ շատ օգտակար առաջարկներ ըրաւ եւ եզրափակեց շեշտելով՝ ՀՄԸՄի շարքերէն ներս ազգային դաստիարակութեան աւելիով զարկ տալու անհրաժեշտութիւնը:

### ԵՂԻՇԻՆ ԱՄԵՆԱԵՐՋԱՆԻԿ ՊԱՆԿՐԸ ԿԻՊՐՈՍ - 1948-ԻՆ

Իր մարզական կեանքին ամենաերջանիկ պահերը ապրեցաւ 1948ին, երբ մեր խումբը Կիպրոսի շրջապտոյտին, առաջին մրցումին փառապսակուեցաւ շոնդալից յաղթանակով մը, զոր տարինք Կիպրոսի լաւագոյն խումբին՝ Ա.է.Լ.ին դէմ՝ 5-1 անվիճելի արդիւնքով. յուզումնալից ուրախութիւն մը անցուց Եղիշ, կարծես տարիներու վրէժը լուծեց կիպրացիներէն: Նաեւ մեծ խանդավառութեամբ առաջնորդեց մեզ Մելգոնեան Կրթարանը, ուր իր պատանեկութեան դպրոցական տարիները անցուցեր էր:

Ինքն է, որ նախագահեց Մայիս 28ի Տօնակատարութեան, որ մեծ շուքով նշուեցաւ Նիկոսիոյ մէջ, իսկ վերադարձի ընդունելութեան՝ Եղիշը յայտարարեց.- «ՀՄԸՄի որեւէ մասնահիւղ, իր որեւէ տեղափոխութեան ընթացքին, չէ հանդիպած այնքան սրտագին ընդունելութեան, որքան մենք կրցանք հաստատել Հ.Ն.Մ.ի անդամներուն եւ անդամուհիներուն մօտ, գնահատելով մեր վնասակար խաղարկութիւնը եւ մանաւանդ՝ Հայու անունը բարձր պահելու մեր գերմարդկային ճիգերը»:

### Վերջ ֆուրպոլի ասպարէզին

Եղիշէ Մանուկեան, իբր ֆուրպոլիստ, 18 տարիներ ամբողջական նուիրումով ծառայեց ՀՄԸՄին, 1932էն 1950, երբ տարիքի բերումով վերջ դրաւ ֆուրպոլի ասպարէզին: Ան մեծ դեր ունեցաւ այն բոլոր փայլուն յաղթանակներուն մէջ, զորս ՀՄԸՄ արձանագրեց այս ժամանակաշրջանին, հռչակուելով քանիցս Լիբանանի Ախոյեան եւ Բաժակակիր: Նոյն շրջանին, յաճախ մաս կազմած է ՀՄԸՄի Շրջանային վարչութեան:

Այսօր, տարիներու հեռաւորութենէն դիտելով այդ անցեալը, կրնամ անվարան հաստատել, թէ Եղիշէ Մանուկեան արժանի է մեր բոլորին անվերապահ մեծարանքին՝ իր ՀՄԸՄականի բարձր արժանիքներուն եւ իր անկորնչելի վաստակին համար:

## ԵՂԻՇ - ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԻ ԽԱՂԱՑՈՂ

Լիբանանի Ֆետերասիոնը լրիւ կը գնահատէր Եղիշին արժէքը, այս ձեւով է որ միջազգային կարեւոր մրցումներուն՝ անպայման կը դիմէր իրեն, որովհետեւ, 1943էն 1948, Եղիշ եւ «Ռընեսանս»-ի խմբապետ՝ Էմիլ Նասսար, կը կազմէին պաշտպանողական անխորտակելի գիծը Լիբանանի Ազգային խումբին:



ՎԱՐԴԻՎԱՌ ԵՒ ԵՂԻՇ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԻ ՏԱՐԱԶՈՎ

ԵՂԻՇԻՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ ՎԱՐԴԻՎԱՌԻ ՄԱՍԻՆ

ՄԱՄՈՒԼԻ ՄԷՋ - 1948-ԻՆ ՀՄԸՄ-Ի ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐՈՒ ԱՌԹԻԻ

ՀՄԸՄի խումբին նուիրեալ խմբապետը եւ Սուրիա-Լիբանանի անգուգական ֆութպոլիստը՝ Վարդիվառ, 1948-ի ախոյեանական եզրափակիչ վեռական մրցումին, իրարու ետեւէ երկու կողեր նշանակելով ՀՄԸՄին պարգեւեց ախոյեանութեան տիտղոս, առաւել միւս փայլուն յաղթանակներու առ ի գնահատութիւն, արժանացաւ բացառիկ վարձատրութեան:

«Մեր ժողովուրդը անվարան կոչեց զինք՝ ՀՄԸՄ-ի ՎԱՐԴԻՎԱՌԸ»:

**ՎԱՐԳԻՎԱՌ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ**

Այս այն տղան է, զոր ԱԶԴԱՐԱՐ օրաթերթին մէջ գրած լայնածաւալ մէկ յօդուածով առաջին անգամ որակած էի «ՀԻԻԼԷԱԿԱՆ ՈՒԺՈՎ ԶԻՆՈՒԱԾ ԱՅՍ ՏՂԱՆ» ի տես իր ահաւոր ուժգնութեամբ քաշած գնդակներուն: Ժիշդ այդպէս «ՊՈՄՊ ԱԹՈՄԻՔ» անուան տակ ՎԱՐԳԻՎԱՌ պիտի անցնի ՀՄԸՄի եւ Լիբանանի ֆութպոլի պատմութեան մէջ:

Միջահասակ, այլ կարշնեղ, դանդաղաշարժի մը տպաւորութիւնը գործող Վարդիվառ, իր վարակող ժպիտով եւ կեանք ժայթող խօսակցութիւններով, կ'արտացոլար մագնիսականութիւն մը, որ զինք կը դարձնէր հաւաքոյթներուն կորիզը, ինչ որ կ'ենթադրէր բացառիկ անհատականութիւն մը:

ՀՄԸՄի մրցակիցներուն մղձաւանջն էր Վարդիվառ: Իր խոյանքը զսպելու համար մէկ հոգի ոչնչութիւն էր: Խաղի ընթացքին դեղեկելու սկսած իր ընկերներուն ուղղած արթննալու հրաւերը կը բաւէր նոր աւիւն ներարկելու իր եղբայրներուն, որ սքափին եւ նոր թափ տան իրենց խղարկութեան:

Մարզական այս անսովոր մանրամասնութիւնները իրենց ակը կ'առնէին գաղափարաբանութեան մը, որ յատկանիշն էր ՀՄԸՄին՝ խաղալ հաւատով, խաղալ՝ ոչ թէ սեփական գոհունակութիւն ստանալու համար, այլ մարզասէր հայ զանգուածները ժպիտով տուն դրկելու համար:

Իր նշանաբանն ըլլալ կը թուէր «ՆՊԱՏԱԿՍ ՏԿԱՐՈՒԹԻՒՆ ԶԻ ԸԱՆՁՆԱՐ»:

Ու անկորնչելի այս հաւատին անհերքելի ապացոյցը տրուեցաւ 1945ին, երբ հայրենիքէն եկող կոչի մը պատասխանած ըլլալու համար, ՀՄԸՄի առաջին խումբին վեց մարզիկներ Միութիւնը ձգեցին եւ միացան «Բագրամեան»ի:

Փիղի տրուած ասեղի մը տուած հարուածին տպաւորութիւնը գործեց այս դաւաճանութիւնը: Սաաթնի, Վարդիվառ, Սարգիս Ազնաւորեան, Յովհաննէս Նազարեան, Կիրակոս Գալայեան եւ ինքս՝ հաւատարիմ մնացիմք երդումի մը, զոր տասնամեակներ առաջ տուած էինք ՀՄԸՄին: Արդի՞ւնք:

Հայրենական հողին վրայ «Բագրամեան» մնաց գունաթափ ներկայութիւն մը, մինչ ՀՄԸՄը էր, է եւ կը մնայ կանգուն՝ հայութեան մարզական վարկը անխոցելի պահելու պատնէշին վրայ:

**Հաւատարիմներու անունները մինչեւ այսօր յարգանքով կը յիշատակուին:**



ՄՐՑԱՇԱՐՔ ԼԻՒԱՆԱՆԻ Ա. ԽՈՒՄԲԵՐՈՒ ՄԻՋԵՒ 14 - 11 - 1948

Ֆետերասիոնը կազմակերպեց ֆուլթայոլի մրցաշար՝ մը Լիբանանի առաջնակարգ խումբերու միջեւ: Եւրոպացի նոր մարզիչը ներկայ պիտի ըլլար ուսումնասիրելու ազգային խումբի խաղացողները: Այս մրցաշարքը ՀՄԸՄի համար փորձաքար մը պիտի հանդիսանար, Լիբանանի ախոյեան եւ բաժակակիր ըլլալէ ետք: Կիրակի օր հայ ժողովուրդը նորէն դաշտ խուժած էր խանդավառելու իր սիրելի խումբը:

Մրցումները եղան կէսական ժամ եւ ստացուեցան հետեւեալ արդիւնքները.

Ռընեսանս յաղթեց Սաժեսին 2-0	ՀՄՄ յաղթեց Մազրաային	1-0
ՀՄԸՄ յաղթեց Ռընեսանսին 1-0	Ռասինկ յաղթեց ՀՄՄին	1-0
Եզրափակիչ մրցումին ՀՄԸՄ յաղթեց Ռասինկին		1-0

Եւ խլեցինք Ֆետերասիոնի յաղթանակի դրօշակը, որ խորհրդանշական փայլ մը կ'աւելցնէր նոյն տարուան մեր տիրացած բարձր տիտղոսներուն վրայ: Յաջորդ օրուան թերթերը լայնօրէն անդրադարձան մրցաշարքի խաղերուն եզրակացնելով, թէ ՀՄԸՄ միշտ կը մնայ Լիբանանի ֆուլթայոլի զօրաւորագոյն տիպար խումբը:



ՀՄԸՄ-ի գեղեցիկ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐՈՒ ԱՌԹԻՒ ԱՄԵՆՈՒՐԷՔ ԽՆՃՈՅՔ Ձախէն՝ Ներսէս Իղնեան, Գրիգոր Ուզունեան, Վարդիվառ, Յասմիկ, Արմինէ եւ Տոպրին, որուն բացակայութեան խննոյժ տեղի չէր ունենար:

## ՀՄԸՄ ԵՐԿԱՐ ՎԱԶՔԻ ԱԽՈՅԵԱՆ 1948-ԻՆ

Այդ տարիներուն աթլետիզմի պակասը զգալի էր Լիբանանի մէջ, ևս չէր զարգացած: Այս առաջադրութեամբ, ՀՄԸՄի Պէրոլի եւ Պուրն Համուտի վարչութիւնները կազմեցին պատասխանատու մարմին մը, մէջտեղ բերելու երկար վազքի խումբ մը՝ մասնակցելու լիբանանեան Աթլետիզմի Ֆետերասիոնին կազմակերպած մրցումներուն:

Պատասխանատու մարմինը կազմուեցաւ հետեւեալ եղբայրներէն. Զաքար Զորպանեան, Արսէն Նանարեան՝ Պուրն Համուտէն, Յակոբ Թաշնեան՝ Պէրոլէն, Յովհաննէս Թերզեան՝ «Մայր Հայաստան» ֆութպոլի խմբապետ եւ Վարդիվառ Յովհաննէսեան՝ ընհանուր պատասխանատու:

Այնուհետեւ կազմեցինք երկար վազքի խումբ մը, մասնակցութեամբ այն մարզիկներուն, որոնք այս մարզանիւղը կ'ուզէին կիրարկել: Փորձերը ամիսներ տեւեցին: Պուրն Համուտի ՀՄԸՄի ակումբին առջեւէն ճամբայ կ'ելլէինք մինչեւ Պէրոլի ակումբը, հոն կէս ժամ դադարէ վերջ կը վերադառնայինք մինչեւ Պուրն Համուտ: Այլ պատրաստ էինք. 30 մարզիկներով մասնակցեցանք Ֆետերասիոնի կազմակերպած ախոյեանական երկար վազքի մրցումին:

Խլեցինք դասաւորման առաջինէն մինչեւ տասերորդ տեղերը: Լիբանանի Ֆետերասիոնի քարտուղարը՝ Իզզէթ Թուրք, շնորհաւորելէ վերջ առաջնակարգ մարզիկները, յայտարարեց:

«Եթէ ՀՄԸՄի այս փառաւոր խումբը չըլլար, այս պաշտօնական վազք տեղի պիտի չունենար: Ապրիլ եւ ապրիլ ՀՄԸՄը»:

Թանկագին գնահատանք էր անշուշտ ՀՄԸՄի համար:



ՀՄԸՄ-Ի ԵՐԿԱՐ ՎԱԶՔԻ ԽՈՒՄԲԸ 1948

Երկրորդ շարք աջ կողմը ոտքի՝ Արսէն Նանարեան, ճախ կողմը ոտքի՝ Զաքար Զորպանեան, ետեւը ոտքի՝ Յակոբ Թաշնեան, մէջտեղը նստած՝ Վարդիվառ:

**ՀՄԸՄ -Ի ՖՈՒԹՊՈԼԻ ՈՍԿԻ ՏԱՐՈՒԱՆ ՀԱՇՈՒԵԿՇԻՌԸ  
1947 Նոյեմբերէն մինչեւ 1948 Ապրիլի մրցումներու թիւը՝ 20:**

Յաղթանակներ	18
Հաւասարութիւն	1
Պարտութիւն	1
Նշանակուած կողեր	58
Ստացուած կողեր	19

**ՇԱՀՈՒԱԾ ՏԻՏՂՈՍՆԵՐ**

- Ա-Լիբանանի ակոյտանութիւն
- Բ-ՀՄԸՄ -ի միջնասնամիւղայինի ֆութպոլի բաժակ
- Գ-Լիբանանի բաժակ
- Դ-Ֆետերասիոնի մրցաշարքի Դրօշակ

**ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒ ԱՐԴԻԻՆՔՆԵՐԸ**

*Ստորեւ կը ներկայացնեմ հետեւեալ մրցումները իրենց արդիւնքներով, որոնք ցոյց կու տան, որ ՀՄԸՄի խումբը պարծանք մըն է իր պատկանած ժողովուրդին եւ հիւրընկալ Լիբանանին, որ նոյնիսկ իր ազգային խումբին մէջ չվարանեցաւ եօթը խաղացողներ առնելու ՀՄԸՄէն:*

ԹՈՒԱԿԱՆ	ՄՐՅԱԿԻՑ ՆՈՒՄԲ	ԱՐԴԻԻՆՔ	ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ
09-11-47	Պարատա Դամասկոս	2-1	յաղթական
23-11-47	Սաժես	4-2	յաղթական
30-11-47	Ռասիկնկ	3-0	յաղթական
07-12-47	Սաժես	3-1	յաղթ. Լիբ. բաժակ
21-12-47	Ռընեսսանս	6-2	յաղթ. Լիբ. բաժակ
04-01-48	Թիմսալ	5-1	յաղթ. Լիբ. բաժակ
11-01-48	Մազրաս	3-3	հաւ. Լիբ. բաժակ
18-01-48	ՀՄՄ	5-0	յաղթ. Լիբ. բաժակ
25-01-48	Բագրամեան (չներկայացաւ)		յաղթ. Լիբ. ախոյեան
01-02-48	Ռասիկնկ	2-4	պարտ. Լիբ. ախոյեան
08-02-48	Ռընեսսանս	4-1	յաղթ. Լիբ. ախոյեան
15-02-48	Մազրաս	3-1	յաղթ. Լիբ. ախոյեան
22-02-48	ՀՄՄ	4-1	յաղթ. Լիբ. ախոյեան
29-02-48	Բագրամեան (չներկայացաւ)		յաղթ. Լիբ. ախոյեան
07-03-48	Ռասիկնկ	3-0	յաղթ. Լիբ. ախոյեան
14-03-48	Ռընեսսանս	3-1	յաղթ. Լիբ. ախոյեան
21-03-48	Բարբ Օթօ (չներկայացաւ)		յաղթ. Լիբ. ախոյեան
28-03-48	ՀՄԸՄ Դամասկոս	6-1	յաղթ. Միջմասնանիւղ.
29-03-48	ՀՄԸՄ Հալէպ	1-0	յաղթ. Միջմասնանիւղ.
04-04-48	Ռասիկնկ(աւարտական)	1-0	յաղթ. Լիբ. բաժակ

**1948-ԻՆ ՀՄԸՄԻ Ա.ԽՈՒՄԲԻՆ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ  
ԽԱՂԱՅՈՂՆԵՐԸ**

- ԲԵՐԴԱՊԱՀ- Տիգրան Արապեան - Ժողէֆ Նալպանտեան - Յակոբ Գըլընեան*
- ՅԵՏՍԱՊԱՀ- Եղիշէ Մանուկեան - Տրդատ Փանոսեան - Ժիրայր Մարգարեան Իսահակ - Յովհաննէս Թերզեան*
- ՄԻՋՆԱՊԱՀ- Լեւոն Պալպանեան - Յովհաննէս Նազարեան - Անդրանիկ Գամարեան - Յակոբ Վարժապետեան - Գէորգ Ոսկերիչեան (շամի)*
- ՅԱՌԱԶԱՊԱՀ- Ստեփան Մելիքսեթեան - Ժորժ Շատարեւեան - Մանուէլ Ալթունեան - Վարդիվառ Յովհաննէսեան - Սարգիս Ազնաւորեան - Սարգիս Սարգիսեան - Օննիկ Պարսամեան - Վարուժան Բամպուլեան:*
- ԽՄԲԱՊԵՏ - Վարդիվառ Յովհաննէսեան*
- ՄԱՐԶԻԶ - Ժողէֆ Նալպանտեան*

**1948 ՀՄԸՄ-Ի Ա.ԽՈՒՄԲԻ ՄՐՅՈՒՄՆԵՐԸ ԳՈՒՄԱՐ՝ 20**

ՅԱՂԹԱՆԱԿ՝ 13 - ՀԱԽԱՍԱՐՈՒԹԻՒՆ՝ 5 - ՊԱՐՏՈՒԹԻՒՆ՝ 2

**ԿԱՐԵՒՈՐ ՄՐՅՈՒՄՆԵՐ**

ԹՈՒԱԿԱՆ	ՄՐՅԱԿԻՑ ԽՈՒՄԲ	ԱՐԴԻՒՆՔ	ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ
Յուլի. 18	ՀՄՄ	5-0	4 կողմ՝ Ստեփան 1՝ Մանուէլ
Փետր. 08	Ռընեսանս	4-1	2 Սարգիս -1 Վարդ. - 1 Ստեփ.
Փետր. 22	ՀՄՄ	4-1	2 Սարգիս - 2 Ստեփան
Մարտ 07	Ռասինկ	3-0	2 Սարգիս - 1 Մանուէլ
Մարտ 14	Ռընեսանս	3-1	1 Գամարեան -2 Վարդ. Լիբ.ախոյ.
Մարտ 28	ՀՄԸՄ Դամսկ.	6-1	Միջմասնաճիւղ. Հալէպ
Մարտ 29	ՀՄԸՄ Հալէպ	1-0	Միջմասնաճիւղ. Հալէպ
Ապրիլ 04	Ռասինկ	1-0	1 Մանուէլ, բաժակի ֆինալը
Յունիս 06	ԱԷԼ Կիպրոս	5-1	2 Վարդ.- 2 Մանուէլ - 1 Սարգիս
Նոյեմ. 14	Ռընեսանս	1-0	մրցաշարք կէսական ժամ
նոյեմ. 14	Ռասինկ	1-0	մրցաշարքի ֆինալը
Յունիս 10	Կիպրոսի հաււ.2-2		Նիկոսիա
Յունիս 13	ԱԲՕԷԼ Կիպրոս 0-0		Նիկոսիա
Օգոստ. 08	ՀՄԸՄ Հալէպ	3-3	Պաղեստինցիներու ի նպաստ

ՀՄԸՄի Ա. խումբին կազմը այս տարի գրեթե անփոփոխ կը մնայ անցեալ տարուան հետ համեմատած: Այս տարի մարզիչ եղբայր Նալպանտեանը, աւելի առիթներ պիտի տայ երկրորդական խումբերէն խաղացողներու որ սկսին վարժուիլ կամաց կամաց Ա. խումբէն խաղալու, եւ հաւանական մեկնողներու տեղը գրաւելու պատրաստ ըլլան, որպէսզի անախորժ անակնկալներու առջեւ չգտնուին:

**ՀՊԱՆՑԻԿ ԱԿՆԱՐԿ ՄԸ ԼԻԲԱՆԱՆԻ ԽՈՒՄԲԵՐՈՒ  
ԵՒ ԽԱՂԱՑՈՂՆԵՐՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ**

Ընդհանրապէս Լիբանանի բոլոր ֆութպոլիստները, մանաւանդ հայերը, շատ քիչ անգամ խումբ կը փոխեն իւրաքանչիւր տարի, ինչպէս կը տեսնենք Եւրոպայի խումբերուն մէջ, որովհետեւ անոնք արհեստավարժ «Professionnel» են, իսկ Լիբանանի մէջ արհեստավարժ խումբ չկայ: Հայոց պարագային, խումբի մը պատկանող խաղացողը անպայման այդ խումբին կուսակցական գաղափարականին հետամուտ է, կամ համակիր: Այսպէս.

- ՀՄԸՄի խաղացողները կամ դաշնակցական են, կամ համակիր Դաշնակցութեան:

- ՀՄՄի խաղացողները կամ հնչակեան են, կամ համակիր ՍԴՀԿի:

- ՀԵԸԻ Անդրանիկ խումբին խաղացողները, կամ ուսուցիչներ են, կամ Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան անդամ, կամ բանի չխառնուող՝ չէզոք:

Լիբանանի տեղացի Ա. դասի խումբերը կը գտնուին ընդհանրապէս Պէյրուքի մէջ: Օրինակ՝ Էշրէֆիէի մէջ կան Ռասինկ, Սալամ եւ Սաժես խումբերը, իսկ Պէյրուքի արեւմտեան կողմը կան՝ Մագրասայի խումբը, բաղկացած գրեթէ իրենց թաղեցիներէ, յոյն-օրթօտոքս, Ռընեսանսի խումբը, որ կազմուած է տեղացի քրիստոնեայ եւ մահմետական խաղացողներէ: Կար նաեւ Հիլմի Սքօր խումբը, որ կը պատկանէր մեծահարուստ Խալիլ Հիլմիի, նաեւ բաղկացած էր տեղացի քրիստոնեաներէ եւ մահմետականներէ եւ DPHB խումբը, կազմուած էր շոգեկառփի ընկերութեան եւ Պէյրուքի նաւահանգիստի պաշտօնեաներէ, ուր ատենին հայեր ալ կային եւ գործի բերմամբ կը խաղային այդ խումբէն, որոնց մէջ՝ Եղիշը, Նալպանտեանը, Ներսէսը եւ շատ մը ուրիշներ:

## ԱՐԻԻՆԱԼԻ ԴԷՊՔ ՀՄԸՄ - ՌԱՍԻՆԿ ՄՐՑՈՒՄԻՆ

Յաղթեցինք 5-0 արդիւնքով 23 Յունուար 1949-ին

Լիրանանի անցեալ տարուայ ֆուտպոլի զոյգ տիտղոսներու տիրանալէ ետք, այս եղանակին սկիզբէն ի վեր մեր մրցումները շատ լաւ արդիւնքներով կ'ընթանային. հպարտ էինք երկրին լաւագոյն խումբը նկատուելնուս համար:

23-1-1949-ի մրցումին, որ տեղի ունեցաւ էշրէֆիէ Սալամի դաշտին վրայ, Ռասինկ Քլիւպի հետ, այնպիսի լաւ խաղ մը ցուցաբերեցինք, որ հակառակորդ խումբը գոյութիւն չունէր կարծես: Եւ մենք յաջորդաբար արձանագրեցինք 5 կոլեր, վերջնական արդիւնք՝ 5-0:

Հաւանաբար իրենց կրած այս ջախջախիչ պարտութեան հետեւանքով կոլի մը յառաջացուցին թրիպլինին մէջ, ժողովուրդը իրար խառնուեցաւ եւ աստրնակի կրակոցներ լսուեցան, պատհառ դառնալով Յակոբ անունով ՀՄԸՄականի մը սպանութեան եւ երկրորդի մը՝ Յարութիւն Զիւրիւֆեանի ծանրօրէն վիրաւորուելուն, զոր անմիջապէս փոխադրեցինք հիւանդանոց. յետոյ բուժուեցաւ: Այս դէպքին հետեւանքով՝ ֆուտպոլը իր հմայֆէն շատ բան կորսնցուց:

## 1949 ՀՄԸՄ-Ի ՄԻԶՄԱՍՆԱԾԻՒՂԱՅԻՆ ԽԱՂԵՐԸ ՀԱԼԷՊ

### «ԱՆՀԱԻԱՏԱԼԻ»

Եւ պատահեցաւ անհաւատալին: Հալէպի մէջ կայացած միջ-մասնանիւղային աւանդական խաղերու շրջագիծէն ներս ՀՄԸՄ Պէյ-րուս պարտուեցաւ ՀՄԸՄ Դամասկոսէն 0-1 արդիւնքով: Ոչ ոք կ'ուզէր հաւատալ այս արդիւնքին:

## ՀՄԸՄ՝ ԱՂԵՔՍԱՆ ԳՐԻՈՅ «ԹՐԱՄ» ԽՈՒՄԲԻՆ ԴԷՄ

13 Նոյեմբեր 1949, միջազգային այս մրցումին հազարաւոր հայեր եկած էին ներկայ ըլլալու, որովհետեւ քանի մը օր առաջ կայացած մրցումներուն՝ եզրապտակական խումբը մեծ առաւելութեամբ յաղթած էր տեղական խումբերու:

Խաղը սկսաւ մեր կողմէ շատ տափ: Առաջին կողը երբ առինք, ժողովուրդը ուրախութենէն սկսաւ պոռալ,- «ՀՄԸՄ, կո՛ւ կ'ուզենք»: Եզրապտակները չուշացան հաւասարելու: Շատ հետաքրքրական խաղ եղաւ եւ վերջացաւ 3-3 հաւասար արդիւնքով, որ շատ պատուաբեր էր մեզի համար, ինչպէս որ գրեցին յաջորդ օրուան թերթերը:

**ՀՄԸՄ-ի ՀԱՄԵՍՏ ՆՈՒԻՐԵԱԼՆԵՐ**  
 Եղիա Բիսկիպեան եւ «Ալաման» Վարդան



ԵՂԻԱ ԲԻՏԻՍԿԻՊԻԱՆ  
 ՀՄԸՄի ֆուբպոլի  
 խումբերուն բեկաբոյժը

Յիշատակութեան արժանի է ամբողջական նուիրումը Եղիա Բիսկիպեանի, որ տարիներ շարունակ իբր բեկաբոյժ՝ իր ծառայութիւնը սիրայօժար կերպով բերած է ՀՄԸՄին արկածեալ մարզիկներուն, իր հօրը օրինակով, ծառայելով իր շատ սիրած ՀՄԸՄի Ա. եւ Բ. խումբերուն: Ըլլալով ՀՄԸՄի ֆուբպոլին սիրահար, տարիներ շարունակ ծառայած է՝ առանց նիւթական ակնկալութեան: Յիշատակութեան արժանի ուրիշ նուիրեալ մըն է Վարդան «Ալաման», որ ինքը մէջտեղ բերած էր ՀՄԸՄի Մայր Հայաստան՝ Ա. եւ Բ. խումբերը:

Ան իր բնակարանէն սենեակ մը տրամադրած էր խումբին իբր հաւաքատեղի գործածուելու համար: ՀՄԸՄի մէջ եղած են եւ կան նման բազմաթիւ նուիրեալներ:



ԱԼԱՄԱՆ ՎԱՐԴԱՆ (ձախէն ծոած առաջինը)

1949-ին ՀՄԸՄԻ Ա.ԽՈՒՄԲԻՆ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ԽԱՂԱՅՈՂՆԵՐԸ

- ԲԵՐԴԱՊԱՀ՝ Տիգրան - Յակոբ Գըլընեան  
 ՅԵՏՍԱՊԱՀ՝ Եղիշ - Տրդատ - Անդրանիկ Մկրտիչեան - Յովհաննէս  
 Թերզեան - Պետրոս Վեֆիլեան - Արիս Մարգումանեան -  
 Էլի Հաֆիմ  
 ՄԻՋՆԱՊԱՀ՝ Յովհաննէս Նազարեան - Լեւոն Պալապանեան -  
 Անդրանիկ Գամարեան - Յակոբ Վարժապետեան - Իսահակ  
 - Յարութիւն Մարկարոսեան - Գէորգ Ոսկերիչեան (Շամի):  
 ՅԱՌԱՋԱՊԱՀ՝ Ստեփան - Շատարեւեան - Մանուէլ - Վարդիվառ -  
 Սարգիս Ազնաւորեան - Սարգիս Սարգիսեան - Օճնիկ  
 Պարսամեան - Մանուկ Զիւրիւֆեան - Ժիրայր Ատուրեան:  
 ԽՄԲԱՊԵՏ՝ Վարդիվառ  
 ՄԱՐԶԻԶ՝ Նալպանտեան

1949 ՀՄԸՄ-Ի Ա.ԽՈՒՄԲԻ ՄՐՅՈՒՄՆԵՐԸ ԳՈՒՄԱՐ՝ 9

ՅԱՂԹԱՆԱԿ՝ 3 - ՀԱԽԱՍԱՐՈՒԹԻՒՆ՝ 3 - ՊԱՐՏՈՒԹԻՒՆ՝ 3

ԿԱՐԵՒՈՐ ՄՐՅՈՒՄՆԵՐ

ԹՈՒԱԿԱՆ	ՄՐՅԱԿԻՑ ԽՈՒՄԲ	ԱՐԴԻՒՆՔ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ
Յուճկ. 02	ՀՄՄ	1-0
Յուճկ. 23	Ռասիկ	5-0 այս խաղին մեծ կոխ մը ծագեցաւ
Յուճիս	02 Սաժես	4-1
Յուճկ. 09	Ռընեսանս	1-1 Տրդատ նակատէն վիրաւոր
Յուճկ. 20	Մազրաս	--- դաշտէն քաշուեցան
Նոյեմ. 13	Թրամ - Եգիպ.	3-3 1 Սարգիս, 1 Ստեփ., 1 Ման.
Ապրիլ 10	Մազրաս	1-2
Ապրիլ 18	ՀՄԸՄ Դամասկոս	0-1 Միջմասնանիւղ. Հալէպ
Մայիս 01	ՀՄՄ	1-3



## ԸՆԿԵՐԱՅԻՆ ԽՐԱԽԾԱՆՔ - ՀԱՆԳԻՊՈՒՄՆԵՐ

ԽՈՒՄԲԻՍ ԽԱՂԱՑՈՂՆԵՐԸ ԻՐԵՆՑ ՄՕՏԻԿ ԸՆԿԵՐՆԵՐՈՎ

Շատ մեծ կարեւորութիւն կու տալինք այս հանդիպումներուն, որովհետեւ անոնք կը նպաստէին սիրալիր եւ անկեղծ մտերմութիւն եւ բարեկամութիւն ստեղծելու խաղացողներու միջեւ:

Պէտք է խոստովանիլ, թէ յարմար առիթներ կը ստեղծէինք խնջոյք սարքելու մեր անմիջական մօտիկ ընկերներով, ինչպէս՝ Անտոն Պեգնեան - Սուս Յակոբ՝ իր զիլ ձայնով, Ներսէս Իդեան - Պարգեւ Տապանեան՝ իր տընպըրայով եւ մանտոլինով, Տոպրի՝ խումբին կատակերգակը, Անդրանիկ Նազարեան, Մանուէլ եւ Գաբրիէլ Էշրէֆիէն - Տատեան եղբայրներ եւ շատ մը ուրիշներ:

Բոլոր պատրուակները լաւ էին խնջոյք սարքելու, աւելի լաւ՝ եթէ ՀՄԸՄ յաղթանակ տարած էր: Բայց պարտութիւնը մեզի կու տար ուրիշ պատրուակ մը, հարկ էր փարատել պարտութեան պատճառած մեր բոլորին սրտնեղութիւնը: Յանախ կը գոհանալինք պատրաստի համեստ լիրանանեան մեզէներով: Առաջին մէկ վայրկեանին ծայր կու տալին խօսակցութիւնները, առաւելաբար նիւթ ունենալով՝ օրուան մրցումը, մթնոլորտը տակաւ կը տաճնար բաժակներու պարպումով եւ ահա չէին ուշանար խանդավառող մեր յեղափոխական առինձնող երգերը:

Եթէ այդ Կիրակի ֆութպոլի մրցում չկայ, փառք Աստուծոյ, հայերուս Սուրբերը այնքան շատ են որ այդ օր մեզմէ մէկու մը անունը կը յարմարցնէինք այդ օրուայ եկող Սուրբի անունին եւ իբր այդ իր անուանակոչութիւնը կը տօնէինք:

Ամէն տարի անպայման պէտք է տօնէինք Սուրբի օրը, այդ անունը կրող ընկերոջ տունը, Ս. Սարգիս, Ս. Յակոբ, Ս. Յովհաննէս, Վարդիվառ, իսկ Սուրբի անուն չունեցող ընկերոջ տունը կը տօնէինք Վարդանանցին: Իւրաքանչիւրը, այդ օր, իր տունը կը պատրաստէր ճոխ սեղան, մեզէներու եւ խորովածներու տեսակներով, անշուշտ Լիբանանի անմահական Մուֆթախար օդին իր պատուոյ տեղը գրաւած կ'ըլլար սեղանին մէջտեղը: Պարգեւը միշտ պատրաստ էր իր քեմալայով եւ մանտոլինով, անդին Տոպրին արդէն սկսած էր պատմել իր նորանոր ծիծաղաշարժ պատմութիւնները: Սուս Յակոբը իր զիլ ձայնով այնքան անուշ կ'երգէր, որ բոլոր սեղանակիցներ, լուռ, ականջ կտրած եւ հմայուած մտիկ կ'ընէին. Սարգիս Ազնաւորեանը նոյնքան անուշ կ'երգէր:

Այս բոլորին փառապսակը կը կազմէին մեր անմոռանալի ֆետայիներու յեղափոխական երգերը, զորս միաբերան՝ խանդավառ կ'երգէինք՝ թնդացնելով ամբողջ մթնոլորտը: Անպակաս էին այսպիսի ընկերային խնոյքներ, որոնք կը տեւէին մինչեւ ուշ գիշեր: Անկասկած,

հանելի ջերմ մթնոլորտի մը մէջ կայացող այս խննդները կը նպաստէին ստեղծելու սիրալիր, անկեղծ մտերմութիւն՝ խաղացողներու միջեւ, սերտացնելով մեր բարեկամական կապերը:

## ՀՄԸՄ-ի Ա. ԽՈՒՄԲԻ ԽՄԲԱՊԵՏԻՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆ ՈՒ ԴԵՐԸ

ՀՄԸՄի ֆութպոլի Ա. խումբին խմբապետը կ'ընտրուէր խաղացողներուն կողմէ եւ վարչութեան կողմէ վաւերացուելէ ետք, խմբապետի իր հանգամանքը ի զօրու կ'ըլլար մէկ տարուան համար:

Խմբապետի պաշտօնը զուտ պատուակալ հանգամանք մը չէր, այլ ընդհակառակը՝ կը պահանջուէր ընտրուած ենթակայէն անսահման զոհողութիւն եւ ծանր պատասխանատուութեան ստանձնում:

Խմբապետն է, որ կը դեկավարէ խումբին ընթացքը մրցումի մը պարագային եւ լուծում կը գտնէ պատահական վէճերուն: Խմբապետն է, որ կը հոգար խումբին եւ խաղացողներուն բոլոր կարիքները: Փորձերու ատեն պէտք էր պահովէր ներկայութիւնը բոլոր խաղացողներուն, որոնք գրեթէ արհեստաւոր աշխատողներ էին ուրիշներու հով: Յանախ հարկ կ'ըլլար երթալ եւ խաղացողի վարպետին մօտ միջամտել, որպէսզի թոյլ տար իր գործաւորին մասնակցիլ փորձերուն:

Բոլորին ներկայութիւնը պէտք էր պահովուէր խումբի հերթական ժողովին, որովհետեւ հոն է, որ կը ֆննուէին անցնող մրցումին պատահած դէպքերը եւ ըստ այնմ լուծում կը գտնէին, նաեւ շատ կարեւոր որոշումներ կ'առնուէին գալիք մրցումին որդեգրուելիք խաղարկութեան եւ թափօթիին վերաբերեալ:

Բարեբախտաբար ՀՄԸՄը, ընդհանուր խմբապետի դրութիւն ունէր, որ վարչութեան կողմէ նշանակուած ներկայացուցիչն էր խումբին մօտ: Յանախ կը պատահէր որ խաղացող մը վիրաւորուէր մրցումի ընթացքին, կամ հիւանդանար, խմբապետն էր, որ պէտք էր վազէր եւ հոգար բժիշկ, դեղ եւ դարման: Ընդհանրապէս ՀՄԸՄական կամ համակիր բժիշկի կը դիմէինք, որոնք դրամ չէին առներ, իսկ դեղը՝ ողջ մնար եղբայր Շահինեանը իր դեղարանով, որ դեղը միշտ ձրի կը տրամադրէր:

Այս առնչութեամբ տեղին է հաստատել, թէ Լիբանանի ամենալաւ կազմակերպուած խումբերը նորէն հայկական երեք խումբերն էին, որոնք ետեւը միութիւն կար ինչպէս՝ ՀՄԸՄը, ՀՄՄը եւ ՀԵԸ-Անդրանիկը:

ՀՄԸՄի ընդհանուր խմբապետի պաշտօնի դրութիւնը մ'նաց մինչեւ 1947: Այդ տարին եղբայր Ժողէֆ Նալպանտեան պաշտօնապէս նշանակուեցաւ խումբի մարզիչը եւ թեքնիք պատասխանատուն՝ Պէյրութի վարչութեան կողմէ, թէպէտ երկու տարիէ ի վեր խումբը ինքը կը մարզէր եւ պէտք եղած պարագային ալ կը խաղար իբր՝ բերդապահ: Բայց կարեւոր որոշումները կ'առնուէին խումբի ժողովին:

Աւելցնելով որ 1945ին, կարճ շրջանի մը համար, մեզի մարզիչ եղաւ Օննիկ Կելրեկեան՝ Դամասկոսի երբեմնի անուանի ֆութպոլիստը:

Խմբապետը պատասխանատու էր խումբին պարտութեան պարագային, յաջս վարչութեան եւ ժողովուրդին, իսկ խաղացողներն էին պատիւի արժանացողները՝ յաղթանակի պարագային: Թէպէտ խմբապետն էր պատուոյ բեմէն բաժակը առնողը յաղթանակի պարագային, բայց նոյնպէս խմբապետն էր դառնօրէն լացողը դժբախտ պարտութեան համար:

## ՀՄԸՄ-Ի ՖՈՒԹՊՈՒԼԻ Ա.ԽՈՒՄԲԻՆ ԽՄԲԱՊԵՏ ԵՂԱՆ

1940 - 1942 - Կարապետ Սաաթեան (Սաաթեի)՝ ազնիւ ՀՄԸՄական:

1942 - 1945 - Ժիրայր Ուրֆալեան, փայլուն սանթր հաֆ, շատ լաւ խմբապետ՝ (դժբախտաբար 1945ին ՀՄԸՄը լքեց եւ Բագրամեան գնաց):

Սաաթեին նորէն ատեն մը մնաց մեր խումբին ցնցումէն ետք:

1945 - 1950 - Վարդիվառ Յովհաննէսեան:

1951 էն վերջ - Յովհաննէս Նազարեան (Կիւլիւմ):

## ՀՄԸՄ - ՌԸՆԵՍԱՆՍ ԱՄԷՆԷՆ ՅԻՇԱՏԱԿԵԼԻ ՄՐՑՈՒՄԸ ԻՆՇԻ ՀԱՄԱՐ

ՅԱՂԹԵՑԻՆՔ 7-2 19 ՅՈՒՆՈՒԱՐ 1950

«ՊԻ ՔԷՖՅԻ, ԵԱ ՎԱՐԴԻՎԱՌ» (ԲԱԻ Է, ՈՎ ՎԱՐԴԻՎԱՌ)

Ռընեսանս կորսնցուցած էր այլեւս իր երբեմնի իշխող խաղարկութիւնը: 1940-1945 Լիբանանի տեղացի լաւագոյն խաղացողները կը կազմէին Ռընեսանսի խումբը... Ժորժ Պիթար - Օսկար - Հսկայ Էմիլ Նասսարը (խմբապետ) - Սալահ Ֆալահ - Լեպիպ Մեթտելենի - Ժոզէֆ Ապի Նատրը - Քամիլ Ըրտահի - Մուհամմետ Ժարուտի եւ ուրիշներ:

Այդ տարիներուն՝ 1939-1940-1941, ես դեռ պատանի, ՀՄԸՄ-Ռընեսանս բոլոր մրցումներուն ներկայ կը գտնուէի: Ռընեսանսը իսկապէս զօրաւոր եւ սարսափազդու խումբ մըն էր, դաշտին վրայ ինքն էր, որ կ'իշխէր: Երբ կը տեսնէի ասոնց կոշտ ու կոպիտ խաղարկութիւնը, մանաւանդ հայերուն դէմ, ես ինձի կը կրկնէի հետեւեալ ուխտը. - Ե՞րբ պիտի մեծնամ եւ ասոնցմէ վրէժ լուծեմ...:

Մեծցայ եւ ուխտս լի ու լի կատարուած նկատեցի այս մրցումին, երբ 4-րդ կողը տեղաւորեցի 30 մեթրէն: Այն ատեն իրենց խմբապետը, երբեմնի սարսափազդու Էմիլ Նասսարը, որմէ ամէն խաղացող կը դողար, մօտեցաւ ինձի եւ տեսակ մը աղաչական շեշտով ըսաւ.

«ՊԻ ԷԷՖՖԻ, ԵԱ ՎԱՐԴԻՎԱՌ», այսինքն՝ (կը բաւէ ալ, ով Վարդիվառ):

Մուրազիս հասեր էի վերջապէս:

Յաջորդ օրը արաբական թերթ մը գովելով ՀՄԸՄի բարձրորակ խաղարկութիւնը կ'աւելցնէր,- «ՀՄԸՄի խմբապետ Վարդիվառը, իր աթոմիք շուրթերով, 4 կոլեր նշանակեց, յիշեցնելով մեզի իր երբեմնի փայլուն օրերը»:

Այս մրցումը ինձի համար շատ յիշատակելի մրցում մը եղաւ, որովհետեւ միշտ աչքիս առջեւ կու գային Ռընեսանսի խաղացողները, որոնք մեծ մասամբ հրշէջ էին, ինչ կոշտութեամբ կը խաղային հայերու դէմ... Այդ հայ խաղացողներու՝ ՀՄԸՄի, ՀՄՄի եւ Ա Նորանիկի վրէժը լուծեր էի:

## 1950 - ՀՄԸՄ-Ի ՄԻՋՄԱՍՆԱԾԻԻՂԱՅԻՆ ԽԱՂԵՐԸ՝ ՀԱԼԷՊ

Զեմ կրնար երեւակայել Հալէպը, Ս. Զատկուան տօներու երեք օրերուն, առանց ՀՄԸՄի միջմասնանիւղային խաղերու, Նաւասարդեան սֆանչելի մարզական տօնակատարութիւններու: Հայեր կու գային հեռուոր Գամշլիէն, Տէր Զօրէն, Ճարապուլսէն, Հասիչէէն, Գամասկոսէն, Պէյրութէն, Ջահլէէն, Թրիփոլիէն, Այննարէն, Սուրիոյ եւ Լիբանանի բոլոր գիւղերէն եւ քաղաքներէն, ուր բուռ մը հայութիւն կայ եւ ՀՄԸՄի մասնանիւղ, հաղորդուելու ՀՄԸՄի խորհուրդին եւ վայելելու փառապանծ տողանցքը: Արդարեւ, օրհնաբեր էին միջմասնանիւղային խաղերը, մասնաւորապէս՝ Սուրիոյ արաբ ազնիւ ժողովուրդին համար. այս առիթով բոլոր պանդոկներն ու ճաշարանները լեցուն կ'ըլլային հազարաւոր հայերով: Առիթ մըն էր ճաշակելու, առաւօտները՝ Հալէպի հռչակաւոր քաղցրեղէն մէմունիէն, իսկ կէսօր եւ իրիկուն՝ նոյնքան նշանաւոր խորովածը: Իսկ վերադարձին, ամէն մարդ հետը ֆիլմներով անուշեղէններու եւ գանազան տեսակի պանիրներու պաշարներով կը վերադառնար իր քաղաքը: Այս է Հալէպը՝ ՀՄԸՄի միջմասնանիւղային խաղերու առթիւ: Այս տարուայ պարագային կը մնայ մատնանշել, թէ Ապրիլ 10ին, ֆութպոլի խաղերուն յաղթեցինք Ամմանի ՀՄԸՄին, մինչ Երկուշաբթի օր կայանալիք Պէյրութ - Հալէպ աւարտական մրցումն ու քննիւմուր յայտագրին լաւագոյն մասը կազմող տողանցքը շնչուեցան առատօրէն տեղացող անձրեւներու պատնառաւ:

## ԱՆԿԱՐՄԱՆԵԼԻ ԿՈՐՈՒՍՏ ՄԸ՝ ՅԱԿՈՒ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

15 Հոկտեմբեր 1950, ՀՄԸՄի Ա. խումբը խորին ցաւով կորսնցուց իր լաւագոյն խաղացողներէն՝ Յակոբ Վարժապետեանը, որ գոհ գնաց իր մոթոսիքի ջաւալի արկածին:

## 1950- ՀՄԸՄԻ Ա.ԽՈՒՄԲԻՆ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ԽԱՂԱՑՈՂՆԵՐԸ

Նախորդ տարուան կապմինաւելցաւ Գէորգ Քէօրեան

### ՀՄԸՄ -Ի Ա.ԽՈՒՄԲԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ ԳՈՒՄԱՐ՝ 12

#### ԿԱՐԵՒՈՐ ՄՐՑՈՒՄՆԵՐ

ԹՈՒԱԿԱՆ	ՄՐՑԱԿԻՑ ԽՈՒՄԲ	ԱՐԴԻՒՆՔ	ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ
Մարտ 19	Սալամ	3-0	Լիբ. բաժակ
Ապրիլ 02	Վարսիթի	4-1	2 Մանուէլ - 2 Վարդիվառ
Ապրիլ 10	ՀՄԸՄ Ամման	5-1	Միջմասնանհիւղ. Հալէպ
Նոյեմ. 19	Ռընեսանս	7-2	4 կող Վարդիվառ
Դեկտ. 03	Ռասինկ	3-2	
Դեկտ. 24	Աղեֆսանդրիա	1-0	Պէյրուքի մէջ
Հոկտ. 29	Սալամ	1-1	
Նոյեմ. 25	Մազրաս		Եղան Լաւել ուրիշ մրցումներ

Այս տարի եղբայր Ժոզէֆ Նալպանտեան՝ ՀՄԸՄի մարզիչը, Լիբանանի ֆութպոլի ֆետերասիոնի կողմէ Լշանակուեցաւ ազգային խումբի մարզիչ:



ԵՐԵՔ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ  
ԸՆԿԵՐՆԵՐ -  
ՎԱՐԴԻՎԱՐ - ՊԱՐԳԵՒ  
- ՍԱՐԳԻՍ

(Պարգեւը եղած է  
ՀՄԸՄի arbitre de  
toucher)

ԼԻԲԱՆԱՆԻ ՄԱՐԶԱՍԷՐ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՊԱՐԾԱՆՔԻ ԵՒ  
ՀՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՕՐԸ 18 ՄԱՐՏ 1951  
ՀՄԸՄ - ՀՄՄ ԵՐԿՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՒՄԲԵՐԸ  
ԼԻԲԱՆԱՆԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ԱԻԱՐՏԱԿԱՆԻ ՄՆԱՑԻՆ  
ՖՈՒԹՊՈԼԻ ԱՍՊԱՐԷՋԻՍ ՈՒՐԱԽ ՕՐԵՐԷՆ ՄԷԿԸ  
(ՄԱՍՈՒՆՔԻ ՊԷՍ ՊԱՀՈՒԱԾ ՅՈՒՇԵՐՈՒՍ ԸՆԴՄԷՋԷՆ)

Ինչ մեծ ուրախութիւն եւ ցնծութիւն ողջ հայութեան համար, որ Լիբանանի ախոյեանութեան վերջին մրցումը տեղի կ'ունենայ երկու հայկական խումբերու միջեւ: Այս բացառիկ երեւոյթը չէր վրիպած համայն լիբանահայութեան եւ լիբանանեան մամուլի մարզական խմբագիրներուն ուշադրութենէն, որոնք գնահատանքի խօսքը ըսին հայ ժողովուրդի մարզական ոգիին, որ այսպէս պատկառելի խումբեր մէջտեղ բերած էր: Երբ դաշտ իջանք, կը լսէինք միայն հայկական բացազանչութիւններ. - «ՀՄԸՄ, կո՛ղ կ'ուզենք, ՀՄՄ, կո՛ղ կ'ուզենք»:

Հոս կ'ուզեմ արձանագրել երախտագիտութիւնս հանդէպ ասպընջական Լիբանանի, որ 1915 հայկական ջարդերէն վերջ՝ գործադրւած թուրքերու կողմէ, մնացորդաց հայերը, ի մէջ այլոց իմ ծնողքս, 1927ին, եկան ապաստան գտան այս գեղեցիկ երկիրը, որուն ազնիւ գաւակները գրկաբաց ընդունեցին զիրենք, պետութիւնը շնորհեց անոնց Լիբանանի քաղաքացիութիւն եւ ամէն դիւրութիւններ կեանքի բոլոր մարզերուն մէջ, օրինակի համար փաստը ֆութպոլի մարզին մէջ երկու հայկական խումբեր, ՀՄԸՄ եւ ՀՄՄ, Լիբանանի ֆութպոլի ախոյեանութեան մրցումներու աւարտականի մնացած են:

Մէյ մը թրիպիւններուն նայեցայ, տեսայ հայ ժողովուրդի բազմահազար գաւակներուն հպարտ ու նակատաբաց ուրախութիւնը. ինչ մեծ ուրախութիւն զգացի՝ ես ալ իրենց պէս հայու հարազատ գաւակ ըլլալուս:

Գանք մրցումին: Ուրբաթ երեկոյեան խումբիս ժողովին, ըստ սովորութեան, եղբայր Շահինեանը եկած էր մեզի փոխանցելու ՀՄԸՄի շրջանային վարչութեան բաղձանք որոշումը, թէ անպայման պէտք էր յաղթէինք: Որոշեցինք մրցումին սկիզբէն որդեգրել յաճակողական թափփի մը, կայծակնային արագութեամբ, կարելի եղածին չափ շուտ առաջին կոլը նշանակել, որպէսզի մնացած ժամանակին հանդարտ խաղալով անակնկալի չգայինք միշտ կոլի մը առաւելութիւնը ունենալով:

Խաղին սկիզբը արդէն մեր տղոցմէ՝ Պարգեւ, Ներսէս եւ Տոպրի ժողովուրդին մէջ սկսան լուր տարածել, թէ ՀՄԸՄը առաջին 10 վայրկեաններուն պիտի նշանակէր առաջին կոլը: Այսպէս ժողովուրդը այս լուրէն խանդավառ՝ սկսաւ աւելիով պոռալ.

«ՀՄԸՄ, կո՛ղ կ'ուզենք»:

Խաղին սկիզբէն իսկ յարձակողականի անցանք, գործադրելով ե-

ոանկիւն բասարկութեան թափփէր: Մանուէլ առաւ գնդակը, մէկ հոգի տրիպլէ ընելէ ետք բացաւ ձախ ծայր, Սարգիսը գնդակը առնելով կայծակնային արագութեամբ յառաջացաւ եւ սանթրաժ ըրաւ ՀՄՄի բերդէն բաւական հեռու. առի գնդակը. առջեւս մէկը չկար. շտկեցի եւ 30 մեթրէն ամբողջ ուժովս ֆաշեցի, նշանակելով մեր առաջին կոլը, խաղին Տրդ վայրկեանին: Այս շշմեցուցիչ կոլին վրայ մեր ժողովուրդը օդը ելաւ. սկսան առաւել սաստկութեամբ պոռալ. երկրորդ կոլ մը կ'ուզէին: Երկրորդ կիսախաղին ոտէտ վիրաւորուելով, պէտք եղածին պէս չկրցայ խաղալ, եւ խաղը վերջացաւ մեր փայլուն յաղթանակով՝ 2-1:

Այսպէս հռչակութեամբ Լիբանանի ախոյեան չորրորդ անգամ ըլլալով՝ 1944 - 1946 - 1948 - 1951... Մեր սիրելի ժողովուրդը ուրախութենէն կը ցնծար: Յաջորդ օրուան արարական թերթերը գրեցին.

«ՀՄՄ անակնկալի եկած էր ՀՄԸՄի կայծակնային արագութենէն, երբ ճիշդ Տրդ վայրկեանին ՀՄԸՄի խմբապետը՝ Վարդիվառ, գնդակը առած ֆիչ մը կը յառաջանայ եւ, իրեն վայել, ուժգին ոռումրի պէս հարուածով «ընկալի զըրրիյէ» (պօմպ աթօմիֆ) երեսուն մեթրէն կը նշանակէ ՀՄԸՄի առաջին կոլը: ՀՄԸՄի համակիրները խելագարած կը սկսին պոռալ, - «Վարդիվառ, կո՛ւ կ'ուզենք»:

## Հ Մ Ը Մ 1950-1951-Ի ԱԽՈՅԵԱՆ

### ՀՄԸՄ ՅԱԼՔԵՑ ՀՄՄ-Ի ԵՒ ՏԻՐԱՅԱԻ ԼԻԲԱՆԱՆԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ

18 Մարտ 1951 Պէյրութի Քաղաքապետարանի դաշտը

«Ազդակ Շարաթօրեակ» գրեց 23 Մարտ 1951

Ֆուրպալի ախոյեանութեան հանդիպումներու վերջին մրցումը տեղի ունեցաւ Կիրակի, 18 Մարտ 1951, Պէյրութի Քաղաքապետարանի դաշտին վրայ բազմահագար հասարակութիւն մը դաշտ ներկայացած էր՝ ախոյեանական մրցումներու արդիւնքը վերջնական ձեւի մը տակ դնելու յատկացուած վճռական մրցումին ներկայ գտնուելու համար:

Մրցումի կարեւորութիւնը նկատի ունենալով՝ հովանաւորութիւնը ստանձնած էր Լիբանանի վարչապետը, որ իր տեղ դրկած էր Կրթական Նախարար Պր. Էտուար Նուն:

Իրաւարար Պր. Պիխագիի ազդանշանէն յետոյ, հայկական զոյգ խումբերը՝ ՀՄԸՄ եւ ՀՄՄ դաշտ իջան ժողովուրդին բռուն ծափերուն տակ, պաշտօնական ձեւակերպութիւններէ յետոյ մրցումը կը սկսի:

Տրդ վայրկեանին, Վարդիվառ, իրեն վայել ուժգին հարուածով մը, 30 մեթրէն կը նշանակէ ՀՄԸՄի առաջին կէտը: ՀՄՄ, իր կարգին, ջանք չի գլանար նախաձեռնութիւնը իր ձեռքը պահելու համար եւ 30րդ

վայրկեանին կը նշանակէ հաւասարութեան կէտը, որուն չ'ուշանար ՀՄԸՄի պատասխանը յաղթանակի կէտով: Ա. կիսախաղը վերջացաւ 2-1՝ ի նպաստ ՀՄԸՄին:

Բ. կիսախաղին, ՀՄԸՄ միշտ տիրական, քանի մը անգամ նեղեց ՀՄՄի բերդը: ՀՄՄ անյուսահատ, մանաւանդ քաջալերուած վարդիվառի վիրաւորուելէն, քանիցս մօտեցաւ Տիգրանի բերդին, բայց ապարդիւն: ՀՄԸՄի խմբապետ Յովհաննէս, Գամարեան եւ մանաւանդ՝ Լեւոն, ոչ մէկ անգամ ձգեցին որ վտանգուէր իրենց բերդը: Խաղի վերջաւորութեան 3 վայրկեան մնացած, երբ ֆութպոլի սիրահար հազարաւոր մարզասէրներ, արար թէ հայ, մանաւանդ բարձրաստիճան անձնաւորութիւններ կը պատրաստուէին հիանալու մրցումի կանոնաւոր եւ հետաքրքրական ելքին վրայ, պատահեցաւ անսպասելին. ՀՄՄէն կարգ մը խաղացողներ դաշտը լքեցին իրաւարարի արդար մէկ որոշումին դէմ բողոքելու համար:

Մրցումի վերջաւորութեան, Պր էտուար Նուն ՀՄԸՄի խմբապետին յանձնեց Լիբանանի ախոյեանութեան գեղեցիկ բաժակը:

Հոս տեղին կը կարծենք շնորհաւորել նախ ՀՄԸՄը, ապա խումբին մարզիչ Ժոզէֆ Նալպանտեանը, որուն հսկողութեան տակ, արդիական վարժութիւններով մարզուելով, ՀՄԸՄի կազմը դարձաւ Լիբանանի ամէնէն զօրաւոր խումբը. շնոհաւորելի են նաեւ խումբին բոլոր անդամները, որոնք ամբողջ ախոյեանական մրցաշարքի ընթացքին՝ գիտցան յաղթանակը եւ պարտութիւնը դիմագրաւել մարզական միեւնոյն ոգիով, առանց մեղանչելու անոր օրէնքներուն դէմ:

Իր հերթին, Լիբանանի Ողումպիականի նախագահ՝ Կապրիէլ Ճեմայէլ կը յայտարարէր.

«Ուրախ եմ որ Լիբանանի ֆութպոլի Ա. կարգի ամէնէն զօրաւոր կազմերը հայկական խումբերն են՝ ՀՄԸՄը եւ ՀՄՄը»:

## ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԽՕՍՔ՝ ՀՄԸՄ-Ի ՄԱՐԶԻՉ ԺՈԶԷՖ ՆԱԼՊԱՆՏԵԱՆԻՆ

### Ամփոփ կենսագրական

Նալպանտեան ծնած է 1919ին, Սիս (Կիլիկիա):

Իր ուսումը ստացած է Պէյրութի LA SAGESSE հեմարանի մէջ: Ընդգրկած է ֆութպոլի մարզանիւղը: Եղած է Լիբանանի անզուգական բերդապահը: Տեղական լաւագոյն խումբերուն մաս կազմած է հետեւեալ կերպով.

1936-1944՝ բերդապահ եղած է հետեւեալ կարգով, նշանաւոր Հիլմի Սքոթ խումբին, Լիբանանի ազգային խումբին, DPHB ի (պաշտօնի բերմամբ), Ռասինկին եւ Սաժեսին: Պարտք կը զգամ՝ իբր ՀՄԸՄական եւ այդ տարիներու խումբին խմբապետը, երախտագիտական եւ գնահատանքի սրտագին զգացումներս արձանագրելու հոս, այս վեհոգի եւ հարազատ հայ մարզիկ-ֆութպոլիստի յիշատակին,



որ 1945ին, խումբիս նեղ օրերուն, եկաւ, միացաւ իր հարազատ ժողովուրդին լաւագոյն ներկայացուցիչին՝ ՀՄԸՄին, ուր կը մնայ նախ՝ իբր բերդապահ, ապա իբր մարզիչ. ամենայն անձնագոհութեամբ կը նուիրուի խումբին, զոր կը հասցնէ Լիբանանի ֆութպոլի բարձրագոյն տիտղոսներուն:



ԺՈՋԷՖ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ 1948-ին

զատելու լաւագոյն խաղացողները՝ մեր Բ. խումբերէն զանոնք ներգրաւելու համար Ա. խումբին մէջ:

Իր անձնագոհութիւնը խումբին, յարգանք կը պարտադրեն իրեն հետ գործակցողներուն եւ մարզիկներուն:

1950ին կը մեկնի Ֆրանսա ու կը հետեւի մարզիչի դասընթացներուն: Վերադարձին՝ կը նշանակուի Լիբանանի ազգային խումբի մարզիչ, որ մեծ պատիւ էր ՀՄԸՄի համար: Զոհուած էր խումբին եւ փոխադարձաբար սիրուած՝ խումբէն: Ինքն ալ ֆութպոլիստ ըլլալով, շատ լաւ կը հասկնար ֆութպոլիստի հոգեբանութենէն:

1945էն ի վեր մաս կը կազմէ ՀՄԸՄի ֆութպոլի երկրորդական խումբերու կեդրոնական յանձնախումբին: Սֆանչելի կարողութիւնը ունի դիտելու եւ

# HOMENETMEN, CHAMPION DU LIBAN 1951

## 1950 - 1951 ՀՄԸՄ ԼԻԲԱՆԱՆԻ ԱԽՈՅԵԱՆ



**X ժառնգ ճարտարագիտական - Կարգիչ**

- |                                    |                                   |
|------------------------------------|-----------------------------------|
| 1- ՏԻՐԱՆՆԻ ՍԻՐՅԱՆՆԻ ԲԵՐԿՄԱՆԻ       | 2- ՍԻՐՅԱՆՆԻ ԿԱՐԱՍՅԱՆՆԻ ԲԵՐԿՄԱՆԻ   |
| 3- ԱՐՄԵՆԻԱԿԱՆ ԳՐԻՍԻՄՅԱՆՆԻ ԲԵՐԿՄԱՆԻ | 4- ԱԽՈՅԵԱՆՆԻ ԳՐԻՍԻՄՅԱՆՆԻ ԲԵՐԿՄԱՆԻ |
| 5- ՍԻՐՅԱՆՆԻ ՍԻՐՅԱՆՆԻ ԲԵՐԿՄԱՆԻ      | 6- ՍԻՐՅԱՆՆԻ ԳՐԻՍԻՄՅԱՆՆԻ ԲԵՐԿՄԱՆԻ  |
| 7- ՍԻՐՅԱՆՆԻ ԿԱՐԱՍՅԱՆՆԻ ԲԵՐԿՄԱՆԻ    | 8- ՍԻՐՅԱՆՆԻ ԿԱՐԱՍՅԱՆՆԻ ԲԵՐԿՄԱՆԻ   |
| 9- ՍԻՐՅԱՆՆԻ ԿԱՐԱՍՅԱՆՆԻ ԲԵՐԿՄԱՆԻ    | 10- ՍԻՐՅԱՆՆԻ ԿԱՐԱՍՅԱՆՆԻ ԲԵՐԿՄԱՆԻ  |
| 11- ՍԻՐՅԱՆՆԻ ԿԱՐԱՍՅԱՆՆԻ ԲԵՐԿՄԱՆԻ   | 12- ՍԻՐՅԱՆՆԻ ԿԱՐԱՍՅԱՆՆԻ ԲԵՐԿՄԱՆԻ  |



## ՀՄԸՄ-Ի ՄԻՋՄԱՍՆԱԺԻՒՂԱՅԻՆ ԽԱՂԵՐԸ ՀԱԼԷՊ 1951

### ԱՒԱՐՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՄԻՆ ՅԱՂԹԵՑԻՆՔ ՀԱԼԷՊԻ 4-1

Այս տարի եւս հաստատուած աւանդութիւնը յարգուեցաւ՝ Սուրբոյ, Լիբանանի եւ Անդրյորդանանի ՀՄԸՄի բոլոր մասնաճիւղերուն կողմէ՝ Ջատիկը տօնելու Հալէպի մէջ: ՀՄԸՄի եւ ՀՄԸՄականներու համար տարին ամբողջացած չէր ըլլար առանց ՀՄԸՄի միջմասնաճիւղային խաղերուն, որոնք կը կազմէին Մարզական Ուխտ մը, եւ Հալէպ կը դառնար Մարզական Ուխտատեղի մը: Այս տարի եւս, ՀՄԸՄի փառաւոր տողանցքն էր ամէնէն յուզիչ եւ խանդավառ պահերը միջմասնաճիւղային խաղերուն:

Աւարտական մրցումին յաղթեցին Հալէպին՝ 4-1 արդիւնքով եւ բաժակը բերին Պէյրութ: ՀՄԸՄի միջմասնաճիւղային խաղերու շրջագծէն ներս՝ վերջին մրցումս եւ վերջին տողանցքս պիտի ըլլար:



1951 ՎԵՐՋԻՆ ՏՈՂԱՆՑՔՍ ՊԻՏԻ ԸԼԼԱՐ

## ՀՄԸՄ-Ի Բ. ԽՈՒՄԲԵՐՈՒ ԽԱՂԱՑՈՂՆԵՐԸ ԿԸ ՓՈԽԱՐԻՆԵՆ Ա. ԽՈՒՄԲԷՆ ՄԵԿԵՆՈՂՆԵՐԸ

1945ին ստեղծուած ՀՄԸՄի ֆութպոլի կեդրոնական յանձնախումբը, ըստ իր առաքելութեան, պատրաստած էր արդէն ապագայի խաղացողները. իր բոլոր գործունէութեան ընթացքին մասնակից դարձուցած էր ՀՄԸՄի վեթերան անուանի խաղացողները, ինչպէս՝ Օննիկ Կելբեկեան, Ջաւէն Չորպանեան, իսկ վերջերս՝ Սաաթնի, Նիլշ, Տիգրան, Տրդատ, Կիրակոս եւ ուրիշներ: Նալպանտեան շատ մ'օտէն

հետեւելով այս խումբերուն, առաջին հազրուանին զտուեցան հետեւեալ Բ. խումբի խաղացողները, որոնք սկսան փոխարինել տարիքի բերմամբ կամ որեւէ պատճառով հեռացողները: Յովհաննէս Թերզեան, Գէորգ Ոսկերիչեան «Շամի», Պետրոս Վեֆիլեան, Օննիկ Պարսամեան, Լեւոն Ալթունեան, Սարգիս Սարգիսեան, Յարութիւն Մարկարոսեան, Ժիրայր Ատուրեան, Մանուկ Զիւրիւֆեան, Յակոբ Պարիկեան, Արիս Մարգամանեան եւ ուրիշներ:

## HOMENETMEN - COUPE INTER - HOMENETMEN 1951

ՊԷՅՐՈՒԹԻ ՀՄԸՄ-Ը ՄԻՋՄԱՍՆԱԾԻՒՂԱՅԻՆԻ ԲԱԺԱԿԱԿԻՐ



ԿԱԶՄԸ 1951 - ՆԿԱՐՈՒԱԾ ՀԱԼԷՊ ՅԱՂԹԱՆԱԿԻ ԲԱԺԱԿՈՎ

Զախէն ոտքի՝ Լեւոն Պալապանեան, Մանուէլ, Արիս, Օննիկ, Յակոբ Գըլընեան, Գամարեան, Մանուկ (սիվիլ հագած՝ Հալէպէն) եւ Սարգիս Ազնաւորեան:

Զախէն ծոած՝ Գէորգ Ոսկերիչեան, Պետրոս Վեֆիլեան, Յովհաննէս Նազարեան (խմբապետ), Յովհաննէս Թերզեան եւ Վարդիվառ Յովհաննէսեան:

1951 - 1952 ՖՈՒԹՊՈՒԼԻ ԵՂԱՆԱԿ

Այս տարուան (1951-1952) ֆութպոլի եղանակին համար բաւական փոփոխութիւններ եղան մեր Ա. խումբին կազմէն ներս: Վերջնականապէս ֆութպոլը ձգեցին, տարիքի բերմամբ, մեր լաւագոյն խաղացողներէն՝ Ստեփան Մելիքսեբեան եւ Ժորժ Շատարեւեան, որոնք տարիներ շարունակ ՀՄԸՄի խումբին խաղացողները եղան ազնիւ նկարագիրով եւ օրինակելի բնաւորութեամբ:

Ես ալ, պետութեան կողմէ Շուէտ պիտի երթամ՝ ինքնագործ հեռաձայնի մասնագիտութեան, հինգ - վեց ամիսով: Մրազրած եմ նաեւ մարզուիլ առաջնակարգ խումբի մը հետ, միեւնոյն ատեն հետեւիլ մարզիչի դասընթացի:

**1951- ՀՄԸՄԻ Ա. ԽՈՒՄԲԻՆ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ԽԱՂԱՅՈՂՆԵՐԸ**

- ԲԵՐԴԱՊԱՀ՝ Տիգրան Արապեան*  
*ՅԵՏՍԱՊԱՀ՝ Յովհաննէս Նազարեան, Յովհաննէս Թերզեան, Պետրոս Վեֆիլեան, Յարութիւն Մարկարոսեան, Արիս եւ Էլի Հաֆիմ:*  
*ՄԻՋՆԱՊԱՀ՝ Լեւոն Պալապանեան, Գէորգ Ոսկերիչեան եւ Գամարեան:*  
*ՅԱՌԱՋԱՊԱՀ՝ Ստեփան, Շատարեւեան, Օննիկ, Ժիրայր Ատուրեան, Սարգիսեան, Սարգիս Ազնաւորեան, Վարդիվառ, Մանուէլ եւ Լեւոն Ալթունեաններ, Գէորգ Քէօրեան, Առաքել Թօգաթեան եւ Մանուկ Զիւրիւֆեան:*  
*ԽՄԲԱՊԵՏ՝ Յովհաննէս Նազարեան:*  
*ՄԱՐՁԻԶ՝ Ժոզէֆ Նալպանտեան:*

**1951 ՀՄԸՄ -Ի Ա. ԽՈՒՄԲԻ ՄՐՅՈՒՄՆԵՐԸ ԳՈՒՄԱՐ՝ 15**

ՅԱՂԹԱՆԱԿ՝ 11 - ՀԱԻԱՍԱՐՈՒԹԻՒՆ՝ 1 - ՊԱՐՏՈՒԹԻՒՆ՝ 3

**ԿԱՐԵՒՈՐ ՄՐՅՈՒՄՆԵՐ**

ԹՈՒԱԿԱՆ	ՄՐՅԱԿԻՅ ԽՈՒՄԲ	ԱՐԴԻՒՆՔ	ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ
Փետր. 11	Ռընեսանս	1-0	Սարգիս
Փետր. 18	Մազրաա	1-0	
Փետր. 25	Սուրբիոյ Ժանտար.	1-0	Պէյրուքի մէջ
Մարտ 11	Ռասիկկ	5-3	ախոյեանական
Մարտ 18	ՀՄՄ	2-1	ՀՄԸՄ հոչակուեցաւ ախոյեան
Մարտ 25	ՀՄԸՄ Ա.մման	3-1	միջմասնահերիւղային
Մարտ 26	ՀՄԸՄ Հալէպ	4-1	առիւնք բաժակը միջմսն.
Մայիս 3	Նըժմէ	3-2	նոր է այս խումբը
Նոյեմ. 25	Ռասիկկ	6-1	
Դեկտ. 9	Սաժէս	3-1	
Յունվ. 28	Վարսիթի	1-1	
Յունվ. 7	Ռընեսանս	0-3	բարեկամական
Մայիս 27	Օլիմբիք Ադեֆսանդ.	1-2	

1951 ՄԵԿՆՈՒՄ ԾՈՒԷՏ ՀԵՌԱԶԱՅՆԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ



ՄԵԿՆՈՒՄԷՍ ԱՌԱՋ՝ ՀԱՅՐՍ, ՄԱՅՐՍ, ՅԱՍՄԻԿ ԵՒ ԵՍ:





*Մեկնումիս նախօրեակին՝ Յասմիկենց տունին բակը, ողջերթի երեկոյ. գործի մեծաւորս՝ Ժան Պըրիսուշ, Ապտալլա Սաֆար, Սելիմ Ազար, Պուլոս Պէտրի, մտերիմ ընկերս՝ Մըխայիլ Նըսէյր եւ գործի ընկերներս:*



*Օղակայան, տխուր բաժանում, ծնողքս եւ հարազատներս:*

## ՇՈՒԷՏ ՍԹՈՔԶՈՒՄ ( L M ERICSSON ) ՀՈԿՏԵՄԲԵՐ 1951

### ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ ԻՆՔՆԱԳՈՐԾ ՀԵՌԱԶԱՅՆԻ

Արդարեւ, ֆուբպոլի 1951 - 1952 տարեշրջանի մրցումներուն պիտի չկարենայի մասնակցութիւնս բերել, տրուած ըլլալով որ լիբանանեան կառավարութեան կողմէ, ուրիշ պաշտօնակիցներու հետ պիտի ուղարկուէի Շուէտ՝ Սթոփոլմի մէջ մասնագիտանալու, հինգ վեց ամիսներու ընթացքին, հեռաձայնային ինֆնագործ նոր դրութեան մէջ: Շուէտի մէջ կեցութիւնս առիթ պիտի ընծայէր ինձի, զուգահեռաբար հետեւելու՝ ֆուբպոլի խաղարկութեանս բարելաման եւ որպէս մարզիչի պատրաստութեան դասընթացներու:

Միւս կողմէ, հեշտ պիտի չըլլար բաժանումս իմ հարազատներուս անմիջական շրջանակէն, որուն մաս կը կազմէին ընտանեկան պարագաներս, նշանածս՝ Յասմիկը, մտերիմ ըներներս, ինչպէս նաեւ ՀՄԸՄի ընտանիքս. բոլորն ալ այնքան սիրելի դէմքեր: Այս բաժանումը կ'ենթադրէր որքա՞ն հոգեկան տուայտանքներ: Բայց հարկ էր լաւատեսութեամբ դիտել գալիք օրերը: Լիբանանի Փոսթ - Հեռագրական եւ Հեռաձայնի Նախարարութեան պաշտօնական պատուիրակութեան մաս կը կազմէին քանը հինգ անձեր, որոնց մէջ միակ հայը ես էի: Շուէտ կ'երթայինք յատկապէս մասնագիտանալու՝ օթօմաթիֆ հեռաձայնի սանդղակներու սարքաւորման եւ նորոգութեան մէջ: Մեզ հիւրընկալող ընկերութիւնն էր՝ L M ERICSSON, Սթոփոլմ՝ մայրաքաղաքը: *Installation des centraux telephoniques et Maintenance:*

Ինձի ընծայուող այս բացառիկ պատեհութիւնը կը պարտէի գլխաւորաբար *Le Soir* օրաթերթի տէր եւ տնօրէն, հրապարագիր եւ լիբանանեան խորհրդարանի անդամ, հայ երեսփոխան՝ Պր. Տիգրան Թոսպաթին, որ չէր վարանած անձնապէս միջամտելու ուղղակի Լիբանանի Նախագահ՝ Քամիլ Շամունի մօտ, յաջողցնելու համար մասնակցութիւնս Սթոփոլմ մեկնող լիբանանեան պատուիրակութեան:

Պր. Տիգրան Թոսպաթ կը պատկանէր ՀՄԸՄի հաւատարիմ համակիրներու շրջանակին եւ կը փաստէր իր կապը, յանախ ներկայ գտնուելով մեր կարելոր մրցումներուն: Ժողէֆ Նալպանտեան, մեր մարզիչը, իբր *Le Soir* օրաթերթին վարչական տնօրէն, միջամտեց Պր. Տիգրան Թոսպաթին մօտ, որ Շուէտ ուղեւորութիւնս յաջողի:

Կեցութիւնս՝ Շուէտ, որ պիտի տեւէր հինգ վեց ամիս, քանկագին առիթ էր ինձի, օգտուելու այս ժամանակամիջոցէն՝ մարզուելու ֆուբպոլի խումբի մը հետ, միեւնոյն ատեն հետեւելու ֆուբպոլի մարզիչի պատրաստութեան դասընթացքի: Տուն-տեղ, ամէն ինչ ապահովուած էր, երեք հոգիի համար տուն մը տրամադրեցին մեզի, լաւ



կահաւորուած, խոհանոց, նաշարան, շատ հանգիստ էինք եւ գոհ: Տունի ընկերներս էին՝ Ա.Ֆիֆ Թապըշ եւ Ֆուատ Իպրահիմ, երեքս ալ Արուեստից եւ Արհեստից վարժարանէն էինք:

Սկսանք գործի. նախ պտտցուցին մեզ հսկայական գործարանը, ուր հազարներով մարդիկ կ'աշխատէին, ամէն կողմ՝ մ'ափուր, ամէն ինչ կանոնաւոր: Վերջապէս իմի մը խումբի բաժնուեցանք. հեռաձայնի սանթրալին վերաբերեալ ամէն գործերը պիտի ընէինք՝ THEORIE ET PRATIQUE: Այս ձեւով պիտի ընթանար մեր վարժութիւնը (STAGE) հեռաձայնի մասնագիտութեան:



ՓԱՌԱԿՈՐ ԾԱՇՎԵՐՈՅԹԻ ՊԱՏԻԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՏՈՒՐԱԿՈՒԹԵԱՆ  
L MERICSSON STOCKHOLM 1951

Առջեւէն՝ էլի Վեֆիտ, Ասատ Եագուպ, Վարդիվառ, Ա.Ֆիֆ Թապշ, էլիաս Ապու Մուրատ, Շավֆեթ (Շուէտի մեր պատասխանատուն) եւ այլն:

#### ԿԸ ՆԵՐԿԱՅԱՆԱՄ ԸՈՒԷՏԻ ՖՈՒԹՊՈՒՒ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻՆ

Այլեւս կրնայի այնպէս դասաւորել կեցութիւնս, որ գործէս դուրս՝ պարապոյ օրերս եւ ժամերս յատկացնէի ֆութպոլի: Այս նպատակով ներկայացայ Շուէտի ֆութպոլի ֆետերասիոնի գրասենեակը, եւ պատասխանատուին յանձնեցի յատուկ մէկ յանձնարարական Լիբանանի

Ֆետերասիոնին կողմէ, որ պաշտօնապէս կը հաստատէր Լիբանանի ազգային խումբին խմբապետ ըլլալս, եւ կը խնդրէր պատասխանատու մարմինէն պէտք եղածը տնօրինել շուէտական առաջնակարգ խումբի մը հետ մարզումս իրագործելու եւ մարզիչի դասընթացներու հետեւելու: Ֆետերասիոնի նախագահը՝ ազնիւ անձ մը, սիրալոծար կատարեց պէտք եղած կարգադրութիւնները՝ ծրագիրը յարմարցնելով իմ պարապոյ օրերուս եւ ժամերուս: Ֆութպոլի փորձերը տեղի կ'ունենային իրիկունները, մինչ Շաբաթ եւ Կիրակի օրերը ցերեկին է որ տեղի կ'ունենար երկար վազքը ձիւնի վրայ եւ անտառներու մէջ: Իսկ մարզիչի դասընթացներու եւ դասախօսութեանց՝ կը հետեւէի իրիկունները:

## ԶԷՐՈՅԷՆ ՎԱՐ 20 ԱՍՏԻՃԱՆ՝ ՍԹՈՔԶՈԼՄԻ ԱՆՏԱՌՆԵՐՈՒՆ ՄԷՁ

Սկիզբը շատ կը յոգնէի, գործէն ետք փորձերու կ'երթայի եւ ծանր տեսակի մարզանքներ կ'ընէի: Այս դրութեան վարժ չէի, բայց երկու շաբաթ ետք կրցայ հետեւիլ իրենց բոլոր մարզանքներուն եւ փորձերուն: Մասնաւոր կարեւորութիւն կու տային ձիւնով ծածկուած անտառներու մէջ երկար վազքի. մինչեւ զերոյէն վար 20 աստիեան եղած ատեն վազած ենք, անշուշտ շատ լաւ պատսպարուած:

Այս երկար վազքը կը տեւէր մէկէն երկու ժամ: Երեկոյեան ծանր մարզանքներէն ետք, էրտնած եւ մերկ, կը նետուէինք դուրսի ձիւններուն մէջ եւ կը տապալկեիք, ապա քանի մը վայրկեան յետոյ ներս մտնելով՝ կը նետուէինք տաք աւազանին մէջ: Կը խոստովանիմ որ այս մարզանքները օր քստ օրէ մարմինս շատ տոկուն դարձուցին, այնուհետեւ սիրով կը հետեւէի մարզումներուն:

Ֆութպոլի մարզիչը, բարեբախտաբար, ֆրանսերէն գիտէր եւ կը սիրէր խօսիլ այս լեզուն, այս պատճառով իմ բոլոր հարցումներուս սիրով կը պատասխանէր:

Կ'ըսէր թէ՛ ֆութպոլի ընդհանուր օրէնքներէն զատ, զորս աշխարհի բոլոր խումբերը գիտեն եւ կը գործադրեն, ուրիշ մասնաւոր օրէնք չկայ: Իւրաքանչիւր խումբ, իր խաղացողներուն խաղին համեմատ կ'որոշէ իր գործադրելիք թափփէք, միշտ նկատի առնելով դիմացի խումբին խաղացողները եւ իրենց խաղարկութիւնը:

Չկայ խումբ մը որ նոյն մակարդակի ուժով խաղացողներ ունենայ բաղդատմամբ ուրիշ խումբի, ուրեմն չկայ որոշ թափփէք: Մրցումին միշտ յարձակողական դիրքերու վրայ պէտք է գտնուիլ՝ զգուշանալով անակնկալի քալէ: Ֆութպոլիստ մը, օրերով, ժամերով փորձեր պէտք է ընէ մինչեւ որ ֆութպոլը իր գերին դառնայ եւ ինք իր ուզածը ընէ: Նաեւ քալէն դուրս ազատ հարուածը կամ բեկալթին քաշելու ձեւը կայ, որուն պէտք է վարժուի հարիւրաւոր շուրթերէն ետք:

Բենալիսին քառորդը որոշած պէտք է ըլլայ, թէ ո՞ր կողմէն կը մտադրէ գնդակը քաշել: Ամէնէն ապահովը այն է թէ պէտք է նշան առնէ որոշած ծայրը, վերէն, գնդակը պէտք է անցնի մէկ մեթր քառակուսիի մէջէն: Ուրիշ բազմաթիւ օգտակար խրատներ:

Վեց ամսուան ընթացքին ժամանակ բնաւ չկորսնցուցի, գործէն վերջ պարապոյ ժամերուս գացի մարզուեցայ, ֆուլթայոյի դասընթացներու կանոնաւորաբար հետեւեցայ, կարելոր դասախօսութիւններու ներկայ եղայ, վերջաւորութեան ֆուլթայոյի գաղտնիքներուն բաւական տեղեակ եղայ եւ մարմնով ինքզինքս համեմատաբար աւելի տոկուն կը զգայի՝ թեթեւցած եւ ֆիզիքապէս *En forme*:

Նախքան վերջնական վերադարձս, մարզիչիս քով գացի եւ իմ սրտագին շնորհակալութիւններս յայտնեցի իրեն, աւելցնելով որ շատ լաւ օգտուեցայ ֆուլթայոյի այս փորձերէն: Մարզիչս զիս գրկելով ըսաւ.

- Սիրելի Վարդիվառ, հանգիստ սրտով վերադարձիր երկիրդ, այս կարն ժամանակի մէջ սորվածդ իրականացուր դաշտի վրայ եւ խումբիդ մէջ: Ֆուլթայոյի մէջ, իբր խաղացող, շատ լաւ կազմաւորուեցար: Նաեւ իբր մարզիչ լաւագոյնս կրնաս մարզել խաղացողներդ եւ պատրաստել մեր խումբերուն հաւասար խումբ: «*Bonne chance*»:

Այսպէս, սիրալիր մաղթանքներով բաժնուեցայ իմ ազնիւ մարզիչէս եւ շատ լաւ մարզուած ու ֆուլթայոյի թեքնիքներու եւ թափփիքներու ծաւալուն պաշարով ծանրաբեռն՝ կրնայի շատ դիրուութեամբ 10 տարի եւս խաղալ, հիմա, որ 26 տարեկան եմ... ֆուլթայոյիստի ամենակայտառ տարիքը:

Ֆուլթայոյ խաղալը դադրեցնելէն ետք, սիրով կրնամ շարունակել ֆուլթայոյիստի դերս եւ պարտաւորութիւններս ՀՄԸՄէն ներս, այս անգամ իբր մարզիչ: Մակայն եակատագիրը պիտի տնօրինէր այլ կերպ:

## ՎԱՐԴԱՎԱՌ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ ԸՈՒԷՏԻ ՄԷՋ

Գրեց Վարդգէս Տէր-Կարապետեան «Ազդարար»ի մէջ

2 նոյեմբեր 1951 - Ամիս ու կէս առաջ Շուէտ մեկնեցաւ Լիբանանի ֆուլթայոյի ազգային խումբի խմբապետ եւ ՀՄԸՄի լաւագոյն մարզիկներէն՝ Վարդիվառ Յովհաննէսեան, մասնագիտանալու համար ինքնագործ հեռաձայնի մէջ, կառավարութեան կողմէ նշանակուած իր 25 ընկերներուն հետ: Օգտուելով այս պատեհութենէն, հետաքրքրուած է մարզական կեանքով եւ մասնաւորաբար՝ ֆուլթայոյով: Մեկնելէ առաջ Լիբանանի ֆետերասիոնը, Վարդիվառին տուած էր վկայագիր մը, որպէս ազգային խումբի խմբապետ:



ՎԱՐՂԻՎԱՌ ԾՈՒԷՏ 1951  
ԻՆՔՆԱԳՈՐԾ ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԵՔՆԻԿԻ  
ՎԱՐԺՈՒԹԻՒՆ



ՄԻՆՁԵԻ ՈՒԾ ԳԻԾԵՐ ԿԸ ՍԵՐՏԷԻ ՏՈՒՆԸ

Սթոֆհոլմի մէջ, Վարդիվառ ներկայացած ըլլալով Շուէտի ֆուֆպոլի Յետերասիոնի նախագահին, թէ ինք լիբանանցի է, բնիկ հայ եւ ֆուֆպոլիստ: Նախագահը սիրով եւ մեծ գոհունակութեամբ ընդունած է զինքը եւ անձամբ պտտցուցած ֆետերասիոնի պատկանող խաղավայրերն ու շէնքերը:

Ապա Վարդիվառ կը հրաւիրուի մասնակցելու ֆուֆպոլի փորձերուն: Յետերասիոնի շրջանակները նկատելով Վարդիվառի գեղեցիկ խաղարկութիւնը, կը հրաւիրեն զինք մասնակցելու Շուէտի ազգային խումբի փորձերուն:

Վստահ ենք, որ Վարդիվառ Շուէտի մէջ, ոչ միայն պիտի մասնագիտանայ ինքնագործ հեռաձայնի մէջ, այլ նաեւ ֆուֆպոլի, որ իր վերադարձին օգտակար պիտի ըլլայ ՀՄԸՄին եւ Լիբանանի ազգային խումբին:

## ՄԱՐԶԻԿԻ ՄԸ ԾԱՄԲՈՐԴԱԿԱՆ ՆՕԹԵՐԸ

1952 Ամառնորի եւ Ս. Մնունդի երկու շաբթուան արձակուրդ ունենալով, ուզեցի այցելել Տանիմարֆա, Գերմանիա, Պելնիֆա եւ Ֆրանսա, վիզաները ապահովեցի եւ համրայ ելայ: Դեկտեմբեր 21ին առտու կանուխ հասանք Շուէտական սահմանը, ուրկից շոգեկառնով հսկայ նաւուն մէջ մտնելով եւ մէկ ժամէն հասանք Քոբէնհակ, ուր 2-3 ժամ պտտելէ վերջ, ժամը 6ին առի հռչակաւոր Express du Nord, որ ինծի համար առասպելական կը թուէր, իմ տեսած ֆիլմերէն եւ կարդացած վէպերէն քաղուած: Վակոնի մեր բաժանմունքին մէջ ուրքը հոգի էին: Մէկ ժամի չափ լուռ մնացինք, իւրաքանչիւրս առանձնացած իր խոհերուն մէջ, մինչ էֆսքրէսը ժամական հարիւր տասը քիլոմետրի վրայ կը սուրար: Ընկերական մթնոլորտ մը ստեղծելու համար պայուսակէս հանեցի չոր թուզ եւ բոլորին հրամցուցի: Հիւրասիրութիւնս եւ մանաւանդ՝ չոր թուզը մատնեցին արեւելիցի ըլլալս, եւ այսպիսով կամաց կամաց սկսաւ խօսակցութիւնը: Ըսի թէ հայ եմ եւ տեղեկութիւններ տուի հայերու մասին: Շատերը հայու անուն չէին լսած: Մէկը՝ որ զուիցերացի էր, հարցուց.

- Ինչպէ՞ս արտասահման մնացեր էք եւ ձեր երկիրը չէք գացած:

- Շատ պարզ է, ըսի, որովհետեւ մեր հայրենիքը այժմ կը գտնուի ռուսական համայնավար րեժիմի տակ, իսկ մենք՝ հակահամայնավար ենք, բայց արտասահմանի հայերը, - շարունակեցի, - իւրաքանչիւր երկրի մէջ սիրուած քաղաքացիներ են եւ կը վայելեն հարազատ քաղաքացիի մը բոլոր իրաւունքները: Ապա աւելցուցի, թէ մենք կը հաւատանք, որ մը պիտի գայ, ուր մեր հայրենիքը նորէն պիտի ազատագրուի եւ ունենայ իր դեսպանները աշխարհի բոլոր երկիրներուն մէջ:

## ԵՒ ՀԻՄԱ ՓԱՐԻԶ «ՅԱՌԱԶ» ՕՐԱԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ

Վիրակի Դեկտեմբեր 23ին հասայ Փարիզ: Անմիջապէս գացի եւ ելայ «Tour Eiffel»ի սֆանջելի աշտարակը, դիտեցի աչեքոսս առջեւ եւ շուրջս պարզուող գեղեցիկ տեսարանները մինչեւ՝ Յաղթանակի Կամարը:

Յետոյ գացի «Յառաջ» օրաթերթի խմբագրատունը: Երեք ամիսներէ ի վեր հայու մը հետ չէի խօսած: Հայու կարօտն ունէի: Ուղղակի ներս մտայ ու բարեւեցի, ներկայացուցի ինքզինքս.- Պէյրութի ՀՄԸՄի վարդիվառը... Եկաւ խմբագրապետ Պր. Շաւարշ Միսախեանը, ու ուսիս մտերմաբար զարնելով ըսաւ.- Յիշեցի, այո, Վարդիվառ, այո, դուն էիր, Հալէպ, երբ 1948ին ՀՄԸՄի միջմասնահիւղային ֆութպոլի ասոյեանութեան բաժակը կը յանձնէի քեզի, այնքան յուզուած էիր, որ լաց եղար, էհ, ես ալ լացի: Բաւական խօսեցանք Պէյրութի եւ Սթոքհոլմի կեանքէն: Բաժանումի պահուն Պ. Միսախեան քանի մը օրինակ թերթ տուաւ, որ կարդամ:

## ՓԱՐԻԶԷՆ - ՄԱՐՍԷՅԼ - ԿԱՐՏԱՆ

13 ժամ շոգեկառնով Փարիզէն Մարսէյլ. հասայ 25 Դեկտեմբեր 1951ի առաւօտուն, զիս դիմաւորելու եկած էր Յասմիկին մօրաքոջը աղջիկը՝ Սիւզանը, որ անձնապէս զիս չէր նանչնար: Նախապէս իրենց ուղարկել էի լուսանկարս գլխարկով, թրանշէքով եւ շրթունքիս՝ ծխամորե... Այսպէս նանչցաւ զիս, ուղղակի եկաւ եւ ողջագուրուեցանք: Շատ լաւ հայերէն կը խօսէր: Յասմիկին մօրաքոյրը եւ ամուսինը հարազատի մտերմութիւն ցոյց տուին:

Կը բնակին Կարտան, որ Մարսէյլէն 25 ֆիլմեթր հեռու է: Իրենց մօտ մնացի ութը օր, հայկական մթնոլորտի մէջ, ուր շատ ուրախ ժամանակ անցուցի:

Պտտցուցին զիս Մարսէյլի բոլոր տեսարժան վայրերը, նաեւ նաւով գացինք CHATEAU D'IF ի կղզեակը, ուր «Մոնթէ Քրիսթոֆի կոմսը» բանտարկուած էր:

Կորկոտեաններու շերմ ու սիրալիր ընդունելութենէն ֆաղուած անջնջելի տպաւորութիւններով հրածեշտ տուի իրենց՝ վերադարձայ Փարիզ:



ԱՅՍՊԷՍ ՀԱՍԱՅ ԿՈՐԿՈՏԵԱՆՆԵՐՈՒՆ ՄՕՏ 25 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1951  
Վարդիվառ, տէր եւ տիկին Կորկոտեաններ եւ Սիւզան:

## ԱՄԷՆԷՆ ՅՈՒՋԻՉ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՍ ԵՂԱԻ

### ՓԱՐԻՋԻ Հ. Յ. Դ. ԹԱՆԳԱՐԱՆԸ

Վերադարձիս այցելեցի Հ. Յ. Դ. ի թանգարանը: Տեսայ տարիֆոտ մարդ մը խոհեբու մէջ թաղուած. սեղանի մը վրայ գիրքեր եւ թերթեր: Ինքզինքս ծանօթացուցի. նանչցաւ, որովհետեւ «Յառաջ» 30 Դեկտեմբերի թիւով անդրադարձած էր Փարիզ այցելութեանս: Նստեցայ դիմացը, կամացուկ մը անունը հարցուցի.

- Պալայեան,- ըսաւ...

Կը գտնուէի Հայաստանի Ա. Հանրապետութեան Խորհրդարանի անդամ Գերասիմ Պալայեանի առջեւ... Անակնկալը մեծ էր: Սկսանք խօսիլ Պէյրութի կեանքէն, անդրադառնալով Սթոնհոլմի մէջ կեցութեանս, իրեն պատմեցի հետեւեալը.

«Սթոնհոլմ հասնելէս քանի մը շաբաթ ետք, հայու կարօտը զգալով, սկսած էի հայ փնտռել: Վերջապէս հայու մը հասցէն գտայ, փրոֆեսոր Ս. Լօրէլիի, Ուփսալա համալսարանական քաղաքը կը գտնուէր Սթոնհոլմէն 60-70 քիլոմէթր հեռու: Յաջորդ օրը շոգեկառնով գացի Ուփսալա. վերջապէս իր մասին մէկու մը հարցուցի.

- Կը նանչնա՞ս զինքը,- հարց տուաւ ինծի:

- Ոչ, չեմ նանչնար,- ըսի,- բայց ան ալ հայ է, կ'ուզեմ տեսնել եւ խօսիլ հետը:

- Եկուր,- ըսաւ, խոր ու խոհուն նայուածք մը նետելով վրաս: Հետեւեցայ իրեն:

Մեծ շէնքէ մը ներս մտանք, գրադարաններով լեցուն սրահ մը: Հասկցայ, որ առաջնորդս պատմաբան էր: Քանի մը տեղեր հեռաձայնելէ ետք վերջապէս գտաւ Լորէլիի հասցէն եւ ինծի տալով ըսաւ.

- Հայոց պատմութեան մէջ կարդացեր եմ, որ հայերը ինչպէս կապուած կ'ըլլան իրարու, ու հիմա կը հաստատուի կարդացածս...

Գացի տրուած հասցէին, գտայ տունը, բայց ափսոս, ամիս մը առաջ ուրիշ տեղ փոխադրուած էր: Չյուսահատեցայ, եւ գացի նոր հասցէին, բայց անգամ մը եւս չյաջողեցայ զինք գտնել: Շուէտի մէջ չհանդիպեցայ հայու:

Պատմութիւնս լսելէ ետք, Գ. Պալայեանը ըսաւ.

- Եկուր եւ տես մասունքները հայ յեղափոխականներու եւ մտաւորականներու:

- Այս՝ զօրավար Անդրանիկի դաշոյնը: Չդիմադրելով ներքին ինքնաբոլի մղումի մը, զայն ձեռքս առի ու համբուրեցի: Յոյց տուաւ Հայ Յեղափոխական ֆետայիներու առաջին դրօշակը, որուն առաջնորդութեամբ 1895ին գացին պատերազմի դաշտ: Դողդղալով բռնեցի

դրօշակը եւ համբուրելով երեսս քսեցի: Ետ դառնալով տեսայ, թէ Պալայեան ուշադիր կը հետեւէր շարժումներու: Ձէի կրնար յուզումէս խօսիլ:

Ինք կը շարունակէր.- «Սա Առիւծ խումբի դրօշակն է... սա Քեռիի տասնոցն է, սա Սեպուհի հեռադիտակն է...» եւ հանդարտ, իւրա-  
ֆանչիւրին պատմականը կ'ընէր:

Յետոյ անցանք նկարներու սրահը, ուր կը գտնուէին մեր բոլոր ֆետայիներու, յեղափոխականներու եւ մտաւորականներու մեծադիր նկարները: Երբ մտանք զգեստներու սրահը, որքան յուզեցայ, երբ ըսաւ.

- Սա ոտնամանները եւ վերարկուն՝ Զաւարեանը հագնում էր եւ սա գաւազանը ձեռքին՝ պտըտում էր եւ քարոզում հայկական գաւառ-  
ներում...

Սա փափիոն փողկապը՝ Գրիգոր Զօհրապին է, զայն դրած՝ բողոք էր բարձրացնում օսմանեան խորհրդարանի ամպիոնից, թրքական զու-  
լումներու դէմ:

- Սա Արարատեան դաշտի հողից է. սա Երեւանի հողից, սա Հա-  
յաստանի հանքերից արտահանուած կտորներ են, որ գնում էր Զաւար-  
եանը եւ ցոյց տալիս օտարներին մեր երկրին բնական հարստութեանց  
կարելորութիւնը:

Մարմինս դարձեալ փուշ փուշ եղաւ, երբ ցոյց տուաւ կտորները այն  
ռումբին, զոր Քրիստափոր կը փորձէր Վիտոշի բարձունքին վրայ,  
Պուլկարիա, եւ որուն պայթումին զոհ գնաց,- «սա ալ իր շիրիմի հողից  
է»: Մեր այցելութեան քիչ մը դադար տալով բաւական հանդարտեցայ,  
հոգեկան անդորրութիւնս վերագտեր էի:

Ուրիշ տեղ ցուցադրուած էին Աւետիս Ահարոնեանի պատմական  
այն գրիչը, որով ստորագրած էր Սեւրի Դաշնագիրը՝ 10 Օգոստոս  
1920ին, իբր Հայասանի պատուիրակութեան նախագահը: Ապա տեսայ  
Դանիէլ Վարուժանի ոսկեայ գրիչը, յետոյ՝ Հ. Յ. Դ.ի առաջին կնիքը:  
Վերջապէս տեսայ Սեպուհի եւ իր կնոջը համբիչը եւ Սեքաստացի Մու-  
րատի ոսկեայ ժամացոյցը: Նուիրական անուններ եւ յիշատակներ  
բոլորն ալ: Պ. Պալայեան, նկատելով չափազանց յուզումս ուզեց վերջ  
տալ եւ գնաց բերաւ այցելուներու մեծ մատեանը, որուն մէջ 1952ի  
առաջին ստորագրողը ես էի՝ «ՀՄԸՄի Վարդիվառը»:

— Քանի այսօր գգայուն ես, ու կապուած մեր պատմութեան, քեզի  
պիտի տամ քանի մը յիշատակներ Հայաստանի Հանրապետութեան  
դրամներէն:

Փոխադարձաբար ես ալ կ'ուզէի յիշատակ մը նուիրել ՀՄԸՄի կողմէ  
Հ. Յ. Դ. թանգարանին: Պայուսակէս հանեցի ՀՄԸՄի նկարը, որուն մէջ  
կը ստանայի 1948ի Լիբանանի ախոյեանութեան բաժակը: Բաժնուելու  
պահուն Պ. Պալայեանի ձեռքը տարի շրթներուս եւ զայն համբուրելով  
հազիւ կրցայ ըսել:



— Շատ շնորհակալ եմ ձեզի, կեանքիս մէջ առաջին անգամ ըլլալով նման խոռովալոյզ ապրումներ կ'ունենամ: Ինքն ալ համբուրելով նախաձեռն ըսաւ.

— Գնա՛, սիրելի վարդիվառ, Աստուած հետդ լինի, կը մաղթեմ աւելի մեծ եւ նորանոր յաջողութիւններ քեզի եւ ՀՄԸՄին: Ու այսպէս բաժնուեցայ մեր սրբութիւններէն:

Ուրբաթ երեկոյեան ժամը 7ին, Փարիզի հիւսիսի կայարանէն դարձեալ առի «Express du Nord» նեպընթացը, ու 38 ժամ նամբորդելէ ետք Կիւրակի 6 Յունուար, 1952ի առաւօտեան ժամը 9ին հասայ Սթոքհոլմ, որ թաղուած էր ձիւներու տակ, մինչ ես սուգուեր էի իմ երկար նամբորդութեանս քաղցր յիշատակներուն մէջ:

«Ա.Զ.Դ.Ա.Ր.Ա.Ր.»ի մէջ լոյս տեսա՛ (նամակ վարդիվառէն) 14 Յունուար 1952:



ՎԵՐԱԴԱՐՁ ՍԹՈՔՀՈԼՄ 6 ՅՈՒՆՈՒԱՐ 1952

### ՎԱՐԴԻՎԱՌԻ ԿԸ ՎԵՐԱԴԱՌՆԱՅ ՍԹՈՔՀՈԼՄԷՆ

«Ազդարար»-8 Մարտ 1952

Մեր սիրած մարզիկներէն՝ վարդիվառ Յովհաննէսեան, վեց ամիս Սթոքհոլմի մէջ հետեւելէ ետք հեռաձայնի մասնագիտութեան, Մարտ 8ին կը վերադառնայ Լիբանան: Վստահ ենք, որ վարդիվառ, ինչպէս քաջածանօթ է ֆութպոլի գաղտնիքներուն, թափանցած է նաեւ հեռաձայնի բարդ կառոյցին, իսկ ֆութպոլի գաղտնիքներն ու գիտելիքները ի սպաս պիտի դնէ իր շատ սիրած միութեան՝ ՀՄԸՄին:

## ՀԱՍԱՆՔ ՊԷՅՐՈՒԹԻ ՕԴԱԿԱՅԱՆԸ

Հարիւրաւորներ եկած էին զիս դիմաւորելու, ամէնն ալ սիրելիներ, հարազատներ, մտերիմ բարեկամներ, ՀՄԸՄականներ, խումբիս խաղընկերները, Յասմիկը... Բայց չկար այն մէկը, որ ամենաջերմ սիրով եւ գուրգուրանքով պիտի գիրկընդխառնուէր հետս, եւ համբուրելով կարօտնիս պիտի առնէի՛նք... Չկար հայրս...

## ՀԱՍԱՆՔ ՏՈՒՆ

Սեւ օրերու մէջ գտայ այդքան շէն մեր տունը, հայրս մահացած էր, բաց աչքերով գացած էր առանց կարենալ տեսնելու իր զաւկին յաջողութեամբ վերադարձը. ամէն մարդ սուգի մէջ էր. ով որուն կրնար մխիթարական խօսք քսել: Սրտաբեկ ընկնուած էի, միակ մխիթարութիւնս Յասմիկն էր, որ գիշեր-ցերեկ քովէս չբաժնուեցաւ եւ քաջաբար, կամաց-կամաց կրցաւ բառերը գտնել զիս մխիթարելու:

Քանի մը օր ետք գործիս գացի, առօրեայ զբաղմունքով հանդարտեցայ քիչ մը, բայց նորէն աչքիս առջեւ կու գային Շուէտ երթալու բաժանումին վերջին վայրկեանները օդակայանին մէջ, երբ իրար փաթրուած առատ արցունքներ քափելով կու լայինք: Ինչ տխուր օր էր:

Օրերն են, որ հանդարտեցուցին զիս, եւ ֆութպոլի փորձերու սկսայ, կամաց կամաց վերագտայ բնականոն վիճակս, բայց խառն հոգեվիճակ մը ունէի, սգաւոր էի եւ ամէն օր կէսօրէն վերջէն սկսեալ կու գային ցաւակցութիւն յայտնելու եւ միեւնոյն ատեն բարի գալուստ մաղթելու՝ ՀՄԸՄի վարչականներ եւ խումբին խաղացող ընկերներս, գործի ընկերներս, ազգականներս, բարեկամներս, իմ խումբիս «Մայր Հայաստան»ի տղաքը, ամէնքն ալ իրենց ուրախութիւնը կը յայտնէին, Սթոհոլմէն ինձմէ քաթ ստանալնուն համար:

Յասմիկը, որ կ'աշխատէր, գործէն ելլելուն պէս մեր տունը կու գար եւ ժամերով կը պատմէր, թէ հայրս ամէն օր իրենց տունը կ'երթար լուրերս իմանալու: Ապա կը պատուիրէր իրեն ամէն օր գալու, որ կարօտը առնէր: Անուշ եւ միեւնոյն ատեն յուզիչ էին Յասմիկին պատմածները իմ բացակայութեան օրերէն: Մտերիմ ընկերներէս ալ, գրեթէ ամէն օր կու գային, կը պատմէին Լիբանանի կեանքէն, իսկ ես՝ կը պատմէի Շուէտի կեանքէն, մանաւանդ՝ հոն տիրող պաղէն, երբ ջերմաստիճանը զերոյէն վար 20ի կ'իջնէր եւ ես այդ պաղին՝ ամէն առտու կէս ժամ կը վազէի: Նաեւ կը պատմէի ֆութպոլի փորձերէն, թէ որքան օգտակար եղան անոնք, եւ այլն...

Այսպէս օրերը անցան մինչեւ ՀՄԸՄ - Եգիպտոս չարաղէտ մրցումը:

ՀՄԸՄ - ԵԳԻՊՏՈՍ ՉԱՐԱՂԷՏ ՄՐՑՈՒՄԸ՝ 23 ՄԱՐՏ 1952  
ՈՐ ՎԵՐՋ ԴՐԱԽ ԾՈՒԹՊՈՒԻ ԱՍՊԱՐԷԶԻՍ

ՊԷՅՐՈՒԹԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԴԱՇՏԸ ԱՅՍՔԱՆ  
ԲԱԶՄԱՀԱԶԱՐ ԺՈՂՈՎՈՒՐԴ ԶԷՐ ՏԵՍԱԾ

Շուէտէն վերադարձու հազիւ երկու շաբաթ ետք, առաջին մրցումս էր, որ պիտի խաղայի Եգիպտոսի Աղեֆսանդրիա քաղաքի հաւաքականին դէմ:

Սկիզբը շատ խանդավառուած չէի այս մրցումով. հայրս նոր մահացած էր, բայց մեր մարզիչը՝ Ժոզէֆ Նալպանտեան, քանի մը անգամ մեր տունը եկաւ, զիս երկու անգամ փորձի տարաւ եւ համոզեց որ անպայման խաղամ, ըսաւ. - «Ժողովուրդը անհամբեր էեզ կը սպասէ, չխաղալու պարագային՝ պիտի մտածեն որ ինքնահաւան ես եւ չես խաղար»: Վերջապէս համոզուեցայ եւ դաշտ գացի: Մեծ ինքնավըստահութեամբ լեցուած կը զգայի ինքզինքս:

(Միջանկեալ կ'ուզեմ յիշել հետեւեալ պարագան. Յամիկը՝ նշանածս, պնդեց որ այս մրցումին չխաղամ ըսելով. - «Դեռ սուգի մէջ ես եւ ինքզինքդ չես գտած, շատ յուզուած ես, սպասէ նաեւ մէկ ամիս», - մտիկ չըրի եւ խաղայ...)

Դաշտ իջանք որոտընդոստ ծափերու եւ «ՀՄԸՄ, կո՛ւ կ'ուզենք» բացագանչութիւններու մէջ: Անցեալի յաղթանակներու քաղցր վերլիշումով նորէն ուխտեցինք անպայման յաղթել: Հոգիս կը հրճուէր տեսնելով մարզաւէր ՀՄԸՄականներու խանդավառութիւնն ու ցնծութիւնը:

Ինքնաբեր մղումով, նայուածքս յառեցի դէպի թրիպիւնները, ուր հազարներով հայերու կուրծքերէն բարացող հուռոտներով, խանդավառ երգերով, - «կեցցէ՛, ՀՄԸՄ» բացագանչութիւններով դիմաւորեցին մեզ, իսկ անձնապէս զիս ողջունելու համար, կը պոռային. - «Վարդիվա՛ն, կո՛ւ կ'ուզենք»:

Վեց երկար ամիսներէ ի վեր որքան կարօտցած էի այս անմոռանալի եւ քաղցր յիշատակներով լեցուն մթնոլորտը դիտել եւ հիանալ: Յուզումէս, աչքերէս արցունքները ջուրի պէս սկսան հոսիլ, հոգեկան անկարագրելի պահեր կը վերապրէի այս սիրելի ժողովուրդին խանդավառութիւնը տեսնելով:

Կրնայի՞ արդեօք այս ժողովուրդը յուսախաբ տեսնել: Միշտ ուրախ կ'ուզէի տեսնել, եւ առաւել եւս հպարտ տեսնելու համար, այս անգամ եւս սրտիս խորերէն ուխտեցի լաւագոյնս խաղալ, նոր սորված թեքնիքս ամբողջ ուժովս ի գործ դնել, անպայման փառաւոր յաղթանակ մը ապահովելու համար:

Հին օրերու քանի մը խրախուսական խօսքեր ըսի խաղացողներուն եւ՝ «մեռնիլ կայ, յաղթուիլ չկայ» նշանաբանով՝ խաղը սկսանք:

## ՃԱԿԱՏԱԳՐԻՆ ՏՆՕՐԻՆՈՒՄԸ

Եւ իսկապէս, խաղին եօթներորդ վայրկեանին, երբ գնդակը առած կը յառաջանայի նեղֆելով դիմացի պաշտպանողական գիծը, հասած էի հակառակորդի քարէին մօտ կոյ նշանակելու դիրքին, յանկարծ ետեւէն ձախ ոտֆէս հարուած մը ստացայ եւ ոտֆս իր ոտֆերուն մէջ աֆցանի պէս մնալով, մարմինս շրջուեցաւ եւ ինկայ, կրունկիս վերի մասէն՝ կոճէն վիրաւորուած էի: Դուրս ելայ, կարծելով որ քիչ ետֆ կ'անցնի, բայց սխալած էի: Փոխադրեցին զիս վարպետ բեկարոյժ Օննիկ Եագմանեանին մօտ, որ զիս լաւապէս ֆննելէ ետֆ յանձնարարեց հիւանդանոց փոխադրել:

Զգացի որ հարցը լուրջ էր...



ՀՄԸՄ-ի ԿԱԶՄԸ ԵԳԻՊՏՈՍԻ ԴԷՄ ԱՅԴ ԶԱՐԱՂԷՏ ՄՐՑՈՒՄԻՆ

Զախէն ոտֆի՝ Լեւոն Ալթունեան (ապագայի ՀՄԸՄի նշանաւոր Լեւոնը, առաջին անգամ է որ հետս կը խաղար), Անդրանիկ Գամարեան, Արիս Մարգումանեան, Վարդիվառ Յովհաննէսեան, Տիգրան Արապեան եւ էլի Հաֆիմ:

Զախէն ծոած՝ Լեւոն Պալապանեան, Յովհաննէս Նազարեան, Օննիկ Պարսամեան, Սարգիս Ազնաւորեան, Մանուէլ Ալթունեան: (Ոտֆիս արկածով դուրս ելլելէս վերջ զիս կը փոխարինէ Գէորգ Քէօրեան՝ «Ղարա Օղլան»):

Ծանօթ. Լեւոն Ալթունեան այս մրցումին միայն 7 վայրկեան խաղցանք միասին: Ապագային ֆութպոլի աստղը: Կ'ուզեմ անպայման գնահատանքս վկայել իր մասին յաջորդ տողերուն մէջ:

## ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ԼԵՒՈՆ ԱԼԹՈՒՆԵԱՆԻ ՄԱՍԻՆ (ԳՐՔԻՍ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒՄ)

Լեւոն Ալթունեան, ծանօթ՝ Ուստա անունով, քրծուած ՀՄԸՄի Բ. խումբերու մէջ, մուտք գործեց Ա. խումբին 1952ին. նիշդ 16 տարեկանին:

Մօտաւորապէս քսան տարիներ, մինչեւ 1973, պաշտպանած է ՀՄԸՄի գոյները (Լիբանանի ՀՄԸՄի ֆութպոլի պատմութեան մէջ մըրքանիշը կոտրած է իբր ամէնէն երկար շրջան խաղացողը Ա. խումբին մէջ) եւ վարած է անոր խմբապետութիւնը տասնեակ տարիներ, միաժամանակ մնալուն խաղացողը եղած է Լիբանանի Ազգային խումբին, յաճախ իբր խմբապետ՝ կը վկայեմ ամենայն վստահութեամբ, իբր նախկին ֆութպոլիստ, ապա ՀՄԸՄի ֆութպոլի պատասխանատու, որ Լեւոն եղած է Լիբանանի ՀՄԸՄի ֆութպոլի բոլոր ժամանակներու ամենահռչակաւոր խաղացողը իր ցուցաբերած սեփական խաղանկաւոր խաղարկութեամբ, նաեւ նկատուած է Լիբանանի Ազգային խումբին ամենափայլուն աստղը:

Լիբանանի ֆութպոլի սիրահարներուն կուռքը եղած էր:

Վարդիվառ



Դամասկոս, դրօշակներու փոխանակում ՀՄԸՄի խմբապետ Լեւոն Ալթունեանի եւ Սուրիոյ Ծրթա Ժէլշի խմբապետ Աւետիս Գաւլագեանի միջեւ: Աւետիս Գաւլագեան եղած է նոյնքան հռչակաւոր խաղացող եւ 1974ին Պէլրուրի ՀՄԸՄի ֆութպոլի մարզիչ նշանակուած: :



ՀՄԸՄ - ԵԳԻՊՏՈՍ ԽՄԲԱՆԿԱՐ 23 ՄԱՐՏ 1952

*Ձախեն ծռած երկրորդը՝ ոտքս վիրաւորող եգիպտացին է:*

### ԱՅՍ ԱՐԿԱԾԷՆ ԵՏՔ ՎԵՐՋԻՆ ՅԻՇԵՑՈՒՄՍ ՀՄԸՄ-Ի ԵՒ ՀՄԸՄ-ԱԿԱՆՆԵՐՈՒ

Ապագայի երանելի յոյսերով եւ երազներով հետեւած էի Շուէտի մէջ, ֆութպոլի թեֆնիֆ եւ թաֆթիֆ բոլոր փորձերուն, մինչեւ այն ատեն, երբ շուեւտացի մարզիչս ըսաւ, - «VOUS ETES EN PLEINE FORME» նաեւ հետեւած էի մարզիչի դասընթացներու եւ դասախօսութիւններու, յաճախ ներկայ ըլլալով եւ ուշի ուշով հետեւելով առաջնակարգ խումբերու փորձերուն:

Այս գեղեցիկ երկրին մէջ, պարապոյ օրերս եւ ժամերս կը յատկացնէի միայն ֆութպոլին, որ վերադարձիս Պէյրութ՝ լաւագոյնս օգտագործէի ֆութպոլի կազմաւորումս, նուազագոյնը տասը տարի, շարունակելով յաղթական երթը ՀՄԸՄի ֆութպոլի խումբին, իսկ անկէ վերջ մարզիչի գիտելիքներս եւ ֆութպոլի փորձառութիւնս ի սպաս դնէի ՀՄԸՄի ֆութպոլի վերելքին եւ բարգաւաճման:

Ափսոս, երազներս չիրականացան: Միայն եօթը վայրկեան խաղայ:

## ԳԱՇՏԷՆ ՀԻՒԱՆԳԱՆՈՑ

Նշանաւոր բեկարոյժ Եագմանեանի յանձնարարութեան վրայ փոխադրեցին զիս Ամերիկեան հիւանդանոց: Սաստիկ ցաւ ունէի, բըմբեցուցին, որ կարենայի քնանալ: Երեկոյեան դէմ, թղթակիցներ եկեր էին, հարցումներ ուղղեցին, բացատրեցի եղելութիւնը եւ ըսի.- «Փութպոլի մէջ պատահական է, որ խաղացող մը վիրաւորուի, բայց կոլի մը իրագործումը արգիլելու համար մինչեւ իսկ դիմացինին ոտքը կոտրելը, ես կը նկատեմ վատ, ստորին արարք մը»: Յաջորդ օրը Եգիպտոսի հիւպատոսարանէն մարդիկ եկան ինձ, ստուգելու համար տեղական թերթերուն մէջ լոյս տեսածը: Հաստատեցի թերթերուն մէջ գրուածներուն ճշմարտութիւնը, եւ կրկնեցի, թէ Եգիպտացի այդ խաղացողը դժբախտաբար զուրկ է մարզական ոգիէ, անպայման պէտք է պատժուի Եգիպտոսի ֆութպոլի ֆետերասիոնին կողմէ, յետագային կանխելու համար կրկնութիւնը նման վատ արարքներու: Ինձի խոստացան պէտք եղածը ընել եւ գացին: Իմ շատ մտերիմ ընկերս՝ Պարգեւ Տապանեան, միշտ ինձ էր եւ գիշերը ինձ մնաց: Հիւանդանոցը ուղղակի Տոթ. Երուանդ ձիտեանին խնամքին տակն էի, զիս շատ լաւ կը ճանչնար, քանի մը քատիօ նկարներէ ետք ի յայտ եկաւ, թէ ոտքիս կոնի ոսկորին մէջ ճեղք կար, անպայման գործողութիւն պէտք էր, բայց դժբախտաբար ան կրնար իրագործուիլ միայն Եւրոպայի կամ Ամերիկայի մէջ եւ ամիս մը չանցած բոլորովին կը բուժուէի եւ ֆութպոլս կրնայի շարունակել:

Գալով մրցումին, իմ ելլելէս ետք տեսակ մը յուսալուծ եկած է խաղացողներուն վրայ, տեղս մտած է Գէորգ Քէօրեան (ղարա օղլան), սկսած է շատ կարծր խաղալ, ձեւով մը վրէժս լուծելու համար, վերջապէս խաղը վերջացած է 0-2 ՀՄԸՄի պարտութեամբ: Քանի մը օր ետք ելայ հիւանդանոցէն յուսալուծ՝ առանց դարմանումի տուն եկայ: Յաւոյ սրտի, կ'ըսեմ որ ՀՄԸՄի այդ օրերու վարչականները երբեք լրջօրէն չհետաքրքրուեցան ոտքիս բուժուելուն դարմանումի հարցով... Իմ ալ նիւթականս չէր ներք օտար երկիր երթալ ոտքիս գործողութեան համար: Անդին, խեղճ մայրս, այս արկածին ամբողջ յանձնաքը իր վրայ առած էր, որովհետեւ, մրցումի օրը մոռցեր էր կարելու ֆութպոլի շապիկիս թելին տակը կապոյտ հուլունքը (հմայեկ)՝ զիս չար աչքերէ գերծ պահելու համար:

Օճանք.- Երախտագիտական խօսքս կ'արձանագրեմ յանձինս բժշկապետ Երուանդ Ծիտեճեանին, որ պէտք եղածը ըրաւ ոտքիս համար առաւել՝ միշտ ընդունած է մեր վիրաւոր խաղացողները, դարմանած է, եւ այս բոլորը առանց դրամի: Քաջալերող էր մեր խումբը, ներկայ եղած է մեր բոլոր կարեւոր եւ միջազգային մրցումներուն:

Լիրանանեան թերթերը դատապարտեցին Եգիպտոսի խաղացողը իր վայրագութեան համար, որ կոլ մը ըլլալը արգիլելու համար յանդգնեցաւ մինչեւ իսկ դիմացի խաղացողին ոտքը կոտորել: Անոնք միահամուռ պահանջեցին Եգիպտոսի ֆութպոլի ֆետերասիոնէն խիստ պատիժի ենթարկել յիշեալ խաղացողը:

### «ԱԶԴԱԿ» ՕՐԱԹԵՐԹԷՆՆ

#### ՄՐՑՈՒՄԷՆ ԱՌԱՋ

ՀՄԸՄ այս անգամ ինքզինքը պիտի պարտադրէ այս միջազգային մրցումին, մանաւանդ՝ Վարդավառին ներկայութիւնը պիտի կրկնապատկէ յառաջապահ գծի արագութիւնը եւ վնասկանութիւնը, նաեւ Սարգիս Ազնաւորեան, գտած ըլլալով իր երբեմնի խաղընկերը, շատ աւելի լաւ արդիւնք պիտի տայ:

#### ՄՐՑՈՒՄԷՆ ՎԵՐՋ

Բազմաժանտ մարզասէրներու ներկայութեան տեղի ունեցաւ եղանակի ամէնէն հետաքրքրական մրցումը, որ սակայն պատճառ եղաւ ՀՄԸՄի լաւագոյն խաղացողներէն՝ մեր աննման Վարդիվառին, ոտքի ոսկրաբեկումին: Մրցումին առաջին վայրկեաններուն, երբ հակական խումբը իր գերակայութիւնը զգալի դարձուցած էր, հակառակորդ միջնապահը վայրագ հարուածով մը անշարժութեան կը դատապարտէր մեր աննման Վարդիվառը:

### ԵՂԻՇԻՆ ՄԱՐԳԱՐԷԱԿԱՆ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ

Ոտքիս արկածէն ետէք չորս տարի առաջ, Մարտ 1948ին, ՀՄԸՄ-Ռասիակ վնասկան մրցումէն ետք, «Ազդարար» շաբաթերթի մէջ լոյս տեսած գրութեամբ մը, Եղիշ զիս կը զգուշացնէր վտանգաւոր միջադէպէ մը, որ կրնար չարաղէտ հետեւանքներ ունենալ:

#### Եղիշ գրեց «Ազդարար»ի մէջ Մարտ 1948

«Ծանօթ իրողութիւն է, որ հակառակորդ պաշտպանողական գիծերը անակնկալի բերելու եւ յարձակող խումբին կոլ նշանակելու ամենալաւ միջոցն է, աչէն եկած գնդակը շուտով ձախ կողմ նետելն է: Այս մարզին մէջ լաւապէս կը փայլի ՀՄԸՄի խմբապետը՝ Վարդիվառ, որ վերջին տարիներու լիրանանեան ֆութպոլի աննախընթաց յայտնութիւնը եղաւ: Անզուսպ թափով այս տղան, իր ֆութպոլիստի վարկը, ինչպէս նաեւ իր հիւլէական ուժով զինուած հարուածները՝ միշտ վախն ու սարսափը եղած են դիմացի պաշտպանողական գծին եւ մանաւանդ՝ բերդապահին: Կ'ուզեմ զգուշացնել զինք չափազանց տախարիւն եւ տախարիս խաղարկութենէ վտանգաւոր կացութեանց մէջ, եւ քանի մը հակառակորդներու միջեւ անխոհեմ կերպով նետուիլը



կրնան չարաղէտ վերջակէտ դնել իր մարզական կեանքին, որ աննախընթաց կարելի է համարել մեր տարեգրութեանց մէջ: Շատ զգոյշ պէտք է ըլլայ, ՀՄԸՄ ԵՒ ՎԱՐԴԻՎԱՌ իրարու պէտք ունին: Մեր խմբապետին կը մնայ իր մտքին մէջ դրոշմուած պահել այս զգուշացումները, որոնք կը բխին իմ անկեղծ սրտէս:

Ուրեմն այս հրապարակային զգուշացումէն չորս տարի ետք, 23 Մարտ 1952ին, Եղիշին գուշակութիւնը, ափսոս, կ'իրականանար ճիշդ այն պայմաններուն մէջ, զորս կը նախատեսէր ան, ու այսպէս վերջ կը դրուէր ֆութպոլի փայլուն ասպարէզիս:

## ՅԱՆՑԱԳՈՐԾԻՆ ՈՒՇԱՑԱԾ ԶԳՋՈՒՄԸ

Ոտքիս արկածին վերաբերեալ պատմութիւնը պակասաւոր պիտի ըլլար, եթէ այս կապակցութեամբ չաւելցնեմ հետեւեալ վկայութիւնը: ՀՄԸՄի Ա. եւ Բ. խումբերուն տարիներով, իբր բեկաբոյժ հաւատարմօրէն եւ կամաւոր ծառայած՝ «Եւրիկ» Յակոբ Արգարեանն է պատմողը.



ՅԱԿՈՐ ԱՐԳԱՐԵԱՆ (ԵԱԻՐԻԿ)

«F I F Աի կազմակերպած ընդհանուր դասընթացներուն շրջագծին մէջ, որոնք տեղի ունեցան 1993ին Լիբանանի մէջ, ես ալ մասնակցեցայ բժշկական դասընթացներու, յատկապէս՝ բեկաբուժութեան եւ մարմնամի մասնագիտութեան գծով: Կային նաեւ Համբիկ Միսաբեան՝ վարչական քարտուղարութեան եւ Վաչէ Սարգիսեան՝ մարզումի դասընթացներու հետեւող: F I F Աի մարզումի մասնագէտը առիթով մը մեր մօտ եկաւ, եւ հարց տուաւ թէ հա՞յ ենք եւ ՀՄԸՄ է՞ն: Երբ դրական պատասխան տուինք, ձեռք տարաւ նակտին եւ խոստովանեցաւ, թէ ինք էր, որ ակամայ, ՀՄԸՄի լաւագոյն խաղացողներէն մէկու մը ոտքը կոտրած էր 1952ին, Պէյրութի մէջ, մրցումի ընթացքին:

«Անիկա Լիբանանի լաւագոյն խաղացողներէն էր», - աւելցուցած է ան, մինչեւ հիմա խիղես կը չարչարէ զիս: Քանի դուք ալ ՀՄԸՄէն էք, ձեզմէ ներողութիւն կը խնդրեմ»:

**ԱՅՍՊԷՄ՝ ՇԱՏ ԿԱՆՈՒՅ  
ՖՈՒԹՊՈՂԻ ԱՍՊԱՐԷԶՍ ԿԻՍԱՏ ՄՆԱՑ**

ՀՄԸՄԻ երկրորդական խումբերու գեղեցիկ շրջանակին մէջ լաւ մը թրծուելէ վերջ, Ա. խումբի հսկաներուն մաս կազմեցի 1941ին՝ նիշդ 16 տարեկեանիս: Տարուէ տարի յառաջդիմելով ՀՄԸՄականի հասկացողութեամբ եւ իբր ֆութպոլիստ, 1945ին՝ խումբին դժուար օրերուն խմբապետութեան ծանր եւ պատասխանատու պարտականութիւնը ստանձնեցի, զոր վարեցի 6 երկար տարիներ, մինչեւ 1950ի վերջը:

Այս շրջանին շահեցանք.- չորս անգամ Լիբանանի ախոյեանութիւն, երկու անգամ Լիբանանի բաժակ, հինգ անգամ ՀՄԸՄի միջմասնանիւդայինի ֆութպոլի բաժակ եւ մրցաշարքերու բազմաթիւ բաժակներ, արժանանալով լիբանանեան մարզական թերթերու գնահատական գովասանքներուն:

1951ին Շուէտ կեցութեանս ընթացքին, կատարելագործեցի ֆութպոլի թեքնիքս, միեւնոյն ատեն մասնագիտանալով որպէս ֆութպոլի մարզիչ: 1952ին, նակատագրի տնօրինութեամբ, այս բոլորին «մնաս բարեաւ» ըսի, ի խորոց սրտի, ՀՄԸՄի միջազգային մէկ մրցումին ոտքիս արկածին հետեւանքով. նիշդ 26 տարեկանիս:

«ՎԱՐՁԳԻ ԿԱՏԱ՛Ր, ՎԱՐԴԻՎԱՌ», - ըսի ես ինծի:

Գոհունակութիւնը ունիմ ՀՄԸՄի հանդէպ ֆութպոլի մարզին մէջ պարտականութիւնս լի ու լի կատարած ըլլալուս համար, գործօն մասնակցութիւնս բերած ըլլալով ՀՄԸՄի գերագոյն յաղթականի տիտղոսներուն: Նաեւ գոհունակութեամբ կը հաստատեմ, թէ մաս կազմելով ՀՄԸՄի Բ. խումբերու կեդրոնական յանձնախումբին, ունեցանք տասնեակներով խումբեր, որոնց խաղացողներուն հոգիներուն մէջ ներմուծեցինք՝ անսակարկ նուիրումը ՀՄԸՄին, հայ ժողովուրդին եւ հաւատարմութիւն՝ ՀՄԸՄի վսեմ գաղափարին հանդէպ: Արթնցուցինք իրենց հոգիներուն մէջ՝ ֆութպոլի սէրը, խմբային խաղ կիրարկելու վեճականութիւնը եւ «Բարձրացի՛ր Բարձրացո՛ւր» նշանաբանով յաղթանակներ տանելու ձգտումը: Միշտ քաջալերութեամբ, գնահատանքով եւ գուրգուրանքով մօտեցած ենք բոլոր խաղացողներուն, եւ խրատ տուած ենք միայն ու միայն խումբին համար խաղալ: Հոս կ'ուզեմ նաեւ արձանագրել: Այս վերջին տասնամեակին ունեցեր ենք պարտութիւններ, բայց երբեք չեմ յիշեր որեւէ պարտութեան պարագային, որ մեր մարզասէր համակիրները տգեղ արտայայտութիւններ ունեցած ըլլան խումբին, խաղացողներուն կամ վարչականներուն հանդէպ, քաջ գիտնալով որ խումբը իր լաւագոյնը տուած է այդ մրցումին, կամ իրաւարարի կողմնակալութիւնը դեր ունեցած է, կամ ալ երբեմն իսկապէս «MALCHANCE» անբախտութիւն է: Ունեցած ենք պարտութիւններ, որոնք յաղթանակի պէս տօնած ենք, օրինակ՝ երբ Եգիպտոսի նշանաւոր Ահլիէն պարտուեցանք՝

2-0 արդիւնքով, 1946ին: Բոլոր մեր համակիրները ուրախութեան «ԿԵՑՑԷ՛, ՀՄԸՄ» պոռագին, որովհետեւ մենք շատ լաւ խաղացանք եւ մէկ օր առաջ Ռընեսանսը ջախջախիչ պարտութեան մատնուած էր՝ 6-1 արդիւնքով:

### ԼԻԲԱՆԱՆԻ ԻՆՔՆԱԳՈՐԾ ՀԵՌԱԶԱՅՆԻ ԿԵԴՐՈՆԻ ԲԱՅՈՒՄԸ՝ 1953




Ոտքիս արկածէն քանի մը ամիս վերջ գործի սկսայ հեռուստայնի նոր կեդրոնը: 1953ին՝ վարչապետ Ապտալ-լա Պէյ Եաֆի պաշտօնական բացումը կատարեց: Իմ պաշտօնս եղաւ՝ *Chef Technique du Centre International*:

Պաշտօնեային կը բացատրեմ աշխատանքին ձեւը:

### ՀՄԸՄ ԼԻԲԱՆԱՆԻ ԱԽՈՅԵԱՆ 1955 ՓԱՏՏԸ ՄԵՐ ՅՈՅՍԵՐՈՒՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ

1952ին արդէն տասնեակ մը խաղացողներ մեր երկրորդական խումբերէն մաս կը կազմէին Ա. խումբին: Հոս կ'ուզեմ անպայման արձանագրել, թէ ինչ անհուն սիրով եւ պատրաստակամութեամբ լծուած էի ՀՄԸՄի Բ. խումբերէն ապագայի աստղեր պատրաստելու սուրբ գործին: Կ'ուզէի ՀՄԸՄի ոգիով թրծուած տեսնել զիրենք, որ գալի՛՛ք գեղեցիկ օրերէն մէկը, ինծի պէս նաշակէին ՀՄԸՄի յաղթանակներուն ստեղծած հոգեպարար ապրումները, եւ տեսնէին հայու հպարտութեամբ մեր բազմահազար համակիրներուն անսահման ուրախութիւնն ու ցնծութիւնը: Ահաւասիկ, Ա. խումբին կազմը բոլորովին փոխարինուած Բ. խումբերու խաղացողներով, որ իրենց երիտասարդական կայտառութեամբ եւ յաղթանակներու ձգտող վեհ ու մարզիկի ազնիւ ոգիով սկսան նորէն թռչիլ յաղթանակէ յաղթանակ, հասցնելով իրենց պաշտած խումբը Լիբանանի 1955ի ախոյեանութեան տիտղոսին: Հոս է իմ հոգեկան գոհունակութիւնս՝ տեսնելով մեր խումբը, ամուր եւ ախոյեանի դիրքի վրայ: Այս բոլորը իրագործուեցան ակի մը նուիրեալ ՀՄԸՄականներու տարիներու տփնաջան աշխատանքին շնորհիւ: Գնահատանքի խօսք ունիմ Կեդրոնական Յանձնախումբի միւս եղբայրներուս, եկող ու գացող վարչականներուն, Բ. խումբերու վարիչներուն եւ մարզիչներուն:



ՀՄԸՄ-ի ԱԽՈՅԵԱՆ ԿԱԶՄԸ՝ 1955

*Ձախէն՝ Աւետիս, Յարութիւն Մարկարտեան, Պետրոս Վեֆիլեան, Յովհաննէս Նազարեան (խմբապետ), Գեորգ Ոսկերիչեան, Մանուկ Ալբունեան, Արիս Մարգարեան, Լեւոն Ալբունեան, Ժիրայր Ատուրեան, Յովհաննէս Թերզեան, Սարգիս Մարգինեան, Յակոբ Պարիկեան եւ Ժողէֆ Նալպանտեան (մարզիչ):  
Այս կազմին մէջ կան հինգէն՝ Յովհաննէս Նազարեան եւ Մանուկ Ալբունեան:*

1942 - 1952 ՀՄԸՄԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԿԱՐԵՒՈՐ  
ՄՐՑՈՒՄՆԵՐԸ

ՏԱՐԻՆ	ՄՐՑԱԿԻՑ ԽՈՒՄԲ	ԱՐԳԻՒՆՔ
1942	Պիրթար - ԹԷԼ ԱՎԻԻ մէջ	0-3
	ՀՄԸՄ Երուսաղէմ - Երուսաղէմի մէջ	4-2
	ՀՄԸՄ Հալէպ, միջմասնաճիղային - Պէյրութի մէջ	4-3
1943	ՀՄԸՄ Հալէպ, միջմասնաճիղային - Հալէպի մէջ	2-3
1944	ՀՄԸՄ Հալէպ, միջմասնաճիղային - Հալէպի մէջ	2-1
	Մաքքապի ԹԷԼ ԱՎԻԻ - Պէյրութի մէջ	3-2
1945	ՀՄԸՄ Հալէպ միջմասնաճիղային - Հալէպի մէջ	0-0
	Իսլէմի Եաֆա - Եաֆայի մէջ	0-3
	Օրթոտոքս - Երուսաղէմի մէջ	2-0
	Շէպէպ էլ Արսայ - Հալէպի մէջ	2-3
	Էբա - Կիպրոսի ախոյեան - Պէյրութի մէջ	1-0
1946	ՀՄԸՄ Հալէպ միջմասնաճիղային - Հալէպի մէջ	2-2
	ՀՄԸՄ Հալէպ միջողոմպիական - Պէյրութի մէջ	1-1
	Ահլի Եգիպտոս - Պէյրութի մէջ	0-2
	Ահլի Դամասկոս - Պէյրութի մէջ	3-0
	Ահլի Դամասկոս - Դամասկոսի մէջ	8-2
1947	ՀՄԸՄ Հալէպ միջմասնաճիղային - Հալէպի մէջ	2-3
	ՀՄԸՄ Հալէպ միջողոմպիական - Պէյրութի մէջ	0-3
	Պարատա Դամասկոսի մէջ	2-1
1948	ՀՄԸՄ Հալէպ միջմասնաճիղային - Հալէպի մէջ	1-0
	ԱէԼ - Կիպրոսի մէջ	5-1
	Կիպրոսի խառն խումբ - Կիպրոսի մէջ	2-2
	ԱԲՕԷԼ - Կիպրոսի մէջ	0-0
	Պարատա - Դամասկոսի մէջ	1-1
1949	Թրամ Աղէքսանդրիա - Պէյրութի մէջ	3-3
1950	ՀՄԸՄ Ամման միջմասնաճիղային - Հալէպի մէջ	5-1
	Սուրիական ըքանակ - Պէյրութի մէջ	0-3
1950	Աղէքսանդրիա - Պէյրութի մէջ	1-0
1951	Սուրիական ժամտարմըրի Պէյրութի մէջ	1-0
	ՀՄԸՄ Հալէպ միջմասնաճիղային - Հալէպի մէջ	4-1
1952	Հէլլէնիք Յունաստան Պէյրութի մէջ	3-4
	Աղէքսանդրիա Պէյրութի մէջ	0-2
	ՀՄԸՄ Հալէպ միջմասնաճիղային - Հալէպի մէջ	3-0
1952	ՀՄԸՄ Յունաստանի - Պէյրութի մէջ	3-2

Ծանօթ. - Արդիւնքի առաջին թուանշանը ՀՄԸՄ-ին է:

**ՀՄԸՄԻ ԼԱԻԱԳՈՅՆ ՖՈՒԹՊՈԼԻԻՍՏՆԵՐԸ 1942 - 1952**

**ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ ԳԻԾ**

Կարապետ Սասթրեան  
 Եղիշէ Մանուկեան  
 Տրդատ Փանոսեան  
 Կիրակոս Գալայեան  
 Յովհաննէս Նազարեան  
 Ժիրայր Ուրֆալեան

**ԲԵՐԳԱՊԱՀ**

Ժողէֆ Նալպանտեան  
 Տիգրան Արապեան  
 Գեորգ Էյնշլեան

**ՅԱՐՁԱԿՈՂԱԿԱՆ ԳԻԾ**

Հանի Հայկ Կարմիրեան  
 Օզսէն Սմբատեան  
 Ներսէս  
 Մանուէլ Ալթունեան  
 Սարգիս Ազնաուրեան  
 Ժորժ Ծատարեան  
 Ստեփան Մելիքսեթեան  
 Վարդիվառ Յովհաննէսեան  
 Գեորգ Բէօրեան  
 Մարտիրոս Պալլոզեան

**ՈՒՐԻՇ ՄԱՐՁԻԿՆԵՐ**

**ԼԱԻԱԳՈՅՆ ՀԱՅԵՐԸ**

Կարպիս Սարափեան  
 Բարգէն Պոյաճեան  
 Երուանդ Էլլեզեան  
 Քաջայր  
 Օզնայեան  
 Պօրոլոս  
 Աւետիս  
 Զիլիակիրեան

**ԼԱԻԱԳՈՅՆ ՏԵՂԱՑԻՆԵՐԸ**

Էմիլ Նասսար  
 Լեպիպ Մեծտէլեանի  
 Քէմիլ Ըրտամի  
 Ժողէֆ Ապունատրո  
 Մոհամմէտ Ժարմուի  
 Սալահ Ֆալահ  
 Ժորժ Պիթար  
 Եռսիֆ Հէնի

*Նաեւ յիշողութեանէս վրիպած մի քանիներ ալ ըլլալու են:*

*Վերոյիշեալ խաղացողները Լիբանանի ֆութպոլի պատմութեան մէջ անցան իբր ոահվիրաներ:*

**ԼԻԲԱՆԱՆ - ՀՄԸՄ - ՖՈՒԹՊՈԼ 1941 - 1952**

**ՀՄԸՄ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ԳԱՍԱԻՈՐՄԱՆ ՄԷՋ**

1941 - 1942	ԵՐԿՐՈՐԴ
1942 - 1943	ԵՐԿՐՈՐԴ
1943 - 1944	ԱԽՈՅԵԱՆ
1944 - 1945	ԵՐԿՐՈՐԴ
1945 - 1946	ԱԽՈՅԵԱՆ
1946 - 1947	ԶՈՐՐՈՐԴ
1947 - 1948	ԱԽՈՅԵԱՆ
1948 - 1949	ՀԻՆԳԵՐՈՐԴ
1950 - 1951	ԱԽՈՅԵԱՆ

**ՅԵՏԱԳԱՅԻՆ ԱԽՈՅԵԱՆ**

1954 - 1955	1959 - 1960
1962 - 1963	1968 - 1969

## ՅԻՇԵԱԼ ԽԱՂԱՑՈՂՆԵՐԸ ԵՂԱՆ ՀՄԸՄ-Ի ՍԻՒՆԵՐԸ

ՀՄԸՄի երկրորդական խումբերու մէջ թրծուած՝ Սարգիս Ազնաւորեան, Վարդիվառ եւ Յովհաննէս Նազարեան, մուտք գործեցին Ա. խումբէն ներս՝ 1941-1942ին: Քանի մը տարի, անուանի խաղացողներուն կողմէն խաղալով, հսկայական յառաջդիմութիւն արձանագրեցին եւ շահեցան Լիբանանի բաժակը 1943ին, եւ Լիբանանի ախոյեանութիւնը՝ 1944ին:

Հասաւ 1945ի ՀՄԸՄ Ա. խումբին ցնցումը, երբ ՀՄԸՄի լաւագոյն վեց խաղացողները ձգեցին եւ համայնավար նորակազմ «Բագրամեան» խումբին գացին: Մեծ կորուստ էր մեր խումբին համար: Այս տղաքն էին, որոնք ՀՄԸՄի առաջելութեան ճաշ գիտակից, ջանք ձեռնարկին, գիշեր ցերեկ իրարու խառնած, խումբը վերակազմելու աշխատանքին լծուեցան, իրենց թիկունք ունենալով՝ Սաաթին, Նդիշը եւ Կիրակոսը: Այսպիսի անհուն զոհաբերութեան արդիւնքը անպայման յաջողութիւն կրնար ըլլալ եւ եղաւ...

Տարի մը չանցած, 1946ին, ՀՄԸՄ կրկին տիրացաւ Լիբանանի ախոյեանութեան: Այս չէր բաւեր, իրենց սկսած նւիրական սփանչելի գործը շարունակուեցաւ, հասցնելով ՀՄԸՄը յաղթանակէ յաղթանակ, մինչեւ 1948ի Լիբանանի ֆութպոլի գերագոյն տիտղոսները՝ Ախոյեան եւ Բաժակակիր:

Ցարդ, որեւէ խումբ այս գոյգ տիտղոսներուն չէր արժանացած նոյն տարին: Արդարօրէն, Լիբանանեան մամուլը միաբերան հռչակեց ՀՄԸՄի խումբը, տարուան ամէնէն՝ գօրաւորը:

Այս տղոց մօտ ՀՄԸՄի խումբին խաղընկեր ըլլալը վերածուեցաւ իրարու մտերիմ բարեկամներ ըլլալու, միշտ միասին բաժնելով իրարու ցաւն ու ուրախութիւնը, որ տեսեց մինչեւ 1952, ուր Վարդիվառին ոտքին արկածը պատահեցաւ եւ դադրեցաւ ֆութպոլ խաղալէ:

Միւս երկուքն ալ քանի մը տարի խաղալէ ետք, ձգեցին ֆութպոլը:

Այսպէս, այս երեք մարզիկները, մանաւանդ՝ 1945էն վերջ, բարի օրինակ եղան ՀՄԸՄի երկրորդական խումբերէն եկող սերունդին: Միրուեցան ամբողջ ժողովուրդէն իբր տիպար ՀՄԸՄականներ եւ մահուր մարզիկներ, յարգելով ամենուրեք ՀՄԸՄ-ի «ԲԱՐՁՐԱՅԻՐ ԲԱՐՁՐԱՑՈՒՐ» վսեմ նշանաբանը:

«Ու ինչ վեհու աւելի արդար ու աւելի անաչառ, յանախ աւելի անողոք, քան վեհուր այն մարդոց, որոնք կը սիրեն քեզ, բայց աւելի կը սիրեն քեզ տեսնել ամէն մէկ մրցումին նոր եւ աւելի անհասանելի բարձունքներուն վրայ»:

Եւ ճիշդ այսպէս եղան այս երեք մարզիկները:

Ֆութպոլի սիրահար եւ նուիրեալ ՀՄԸՄականի մը վկայութիւնը, քաղուած՝ իրանաւանդալ մամուլէն՝ 1940-1952 շրջանին:

ԼԻԲԱՆԱՆ - ՀՄԸՄ - ՖՈՒԹՊՈԼ 1942 - 1952  
 ՀՄԸՄ-Ի ԵՐԵՔ ԱՆԲԱԺԱՆ ԸՆԿԵՐՆԵՐԸ  
 ՄԱՐԶԱԴԱՇՏԻ ՎՐԱՅ ԹԷ ԿԵԱՆՔԻ ՄԷՋ

**ՍԱՐԳԻՍ ԱԶՆԱԻՈՐԵԱՆ** - ՀՄԸՄի մէջ սկսած է խաղալ 1942ին՝  
 ձախ ծայր: Հակառակորդի քարէին մէջ, օդէն եկած որեւէ գնդակ, թռչելով  
 խաղացողներու ուսերուն վրայէն, գլուխով, այնպէս զօրաւոր կը հարուածէր,  
 որ անպայման կոլի կը վերածուէր:

**ՎԱՐԴԻՎԱՌ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ** - ՀՄԸՄի մէջ սկսած է խաղալ  
 1941ին, ձախ մէջ: Կոչեցեալ «Պոմպ Աթոմիք» 25-30 մեթր հեռուէն  
 քաշած ումբի պէս գնդակները անտեսանելիօրէն կը տեղաւորուէին  
 հակառակորդի բերդէն ներս:

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ՆԱԶԱՐԵԱՆ** - կոչեցեալ «Կիւլիւմ», ՀՄԸՄի մէջ  
 սկսած է խաղալ 1940ին միջնապահ գծի վրայ: Իր խելացի եւ նկուն  
 խաղարկութեամբ, օդէն թէ գետնէն, պաշտպանողական գծին սիւնն  
 էր: Ինքն է, որ կը չէզոքացնէր Հալէպի ՀՄԸՄի ձախ ծայր, սարսա-  
 փազդու Համագասպր:



ՍԱՐԳԻՍ

ՎԱՐԴԻՎԱՌ

ՅՈՎՀԱՆՆԷՍ





ԳԼՈՒԽ 4

## ԼԻՔԱՆԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ 1942 - 1952

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՄՆԵՐ

1948 ԼԻՔԱՆԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՄՐՑՈՒՄԸ ԱՆԳԱՐԱՅԻ ԴԷՄ

1948 ԼԻՔԱՆԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ ԴԷՊԻ ԹՈՒՐՔԻԱ

ԼԻՔԱՆԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԻՆ ԽԱՂԱՑՈՂՆԵՐԸ ԵՒ  
ՄՐՑՈՒՄՆԵՐԸ

### ԼԻՔԱՆԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԻՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

1940 - 1943 Լիբանանի Ազգային Խումբը կը կազմուէր գրեթէ տեղացի խաղացողներով. հայ չէին առներ: Այդ շրջանին չկար խումբերու համար մարզիչի դրութիւն մը՝ նաեւ Լիբանանի Ազգային Խումբին համար: Տեղական խումբերու ներկայացուցիչներէն էր կազմուած ֆետերասիոնը, եւ անոնք կ'որոշէին Ազգային Խումբին կազմը:

Բացառաբար Նալպանտեանէ եւ Ծատարեւեանէ, որոնք այն տարիներուն մաս կը կազմէին ոչ հայկական խումբերու:



## ԼԻԲԱՆԱՆ - ՍՈՒՐԻԱ ՄՐՑՈՒՄԸ՝ 26 ԱՊՐԻԼ 1942

Անգամ մը եւս այդպէս որոշած էր ֆետերասիոնը, 26 Ապրիլ 1942ին Սուրիոյ Ազգային Խումբին դէմ մրցիլ: Մրցումը տեղի ունեցաւ Ամերիկեան Համալսարանի խոտածածկ դաշտին վրայ, որ «Լիբանանի մէջ միակ խոտածածկ դաշտն է»: Լիբանանի խումբը դաշտ իջաւ կազմըւած՝ 5 խաղացողէ Ռընեսանսէն եւ 5 խաղացողէ DPHBէն: Ըստ երեւոյթին, երկու մեծ խումբերը կէս առ կէս բաժնուեր էին «կարկանդակը»․ մէկ խաղացող առին ՀՄԸՄէն, յանձին՝ Ժիրայր Ուրֆալեանի, երեւոյթները փրկելու համար:

Անդին՝ Սուրիոյ Ազգային Խումբը կազմուած էր 7 հայ խաղացողներէ, ճը Հալէպի եւ Դամասկոսի ՀՄԸՄէն, որոնց մէջ կը գտնուէր նշանաւոր բերդապահ՝ Տիգրանը, իսկ 7րդ հայը՝ Սուրիոյ լաւագոյն յառաջապահ՝ հռչակաւոր Արտաւազդը, Հալէպի «Union Sportive»էն:



ՍՈՒՐԻԱ - ԼԻԲԱՆԱՆ ՄՐՑՈՒՄԷՆ ՎԵՐՋ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՈՒՍԱՄԲԱՐՁ ԿԸՏԱՆԻ ՀՄԸՄ-ԱԿԱՆ ՏՐԴԱՏԸ, ՏԻԳՐԱՆԸ ԵՒ ՎԱԶԳԷՆԸ

Լիբանանի ֆետերասիոնին ըրած աչք ծակող այս անարդարութեան առ ի անուղղակի բողոք, մրցումին ներկայ մարզատրներուն շատերը սկսան քաջալերել սուրիական խումբը, որուն յառաջապահ գիծը գուտ հայերէ կազմուած էր, որ շատ ներդաշնակ խաղարկութիւն մը ցուցաբերեց, արժանանալով ոչ միայն մեր, այլ նաեւ տեղացիներուն սփանչացումին: Արսէնը, Արմէնը եւ Վազգէնը, եռանկիւն բասերով կը յառաջանային, կարծես իրենց առջեւ մարդ չկար. իր հերթին՝ Արտաւազդ, իր գլխապտոյտ պատնառող տրիպլինկներով հիացում կը պատնառէր ժողովուրդին, իսկ օրուան գլխաւոր

հերոսը կը մնար Տիգրանը, որ իր նկուն խոյանքներով, մէյ մը ձախ անկիւնէն, մէյ մը աջ անկիւնէն կը պաշտպանէր սուրիական բերդը՝ ընդդէմ ամէն ոտնձգութեան:

Եւ Սուրիան տարաւ արժանի յաղթանակ մը՝ 2-1 արդիւնքով:

Յաջորդ օր, լիբանանեան մամուլը, եւ յատկապէս՝ արաբական թերթերը, չժամժմեցին իրենց բառերը, խստօրէն դատապարտելով ֆետերասիոնը՝ իր անարդար եւ կողմնակալ կարգադրութեան համար, յատկապէս մատնացոյց ընելով լիբանանեան խումբին մաս կազմելու արժանի ՀՄԸՄի շատ զօրաւոր հետեւեալ խաղացողները. - Սաաթի, Նիլիշ, Հանի Հայկ, Օգսէն, նաեւ ուրիշ խումբերէն ալ քանի մը անուններ:

## 1943-1944ԷՆ ԵՏՔ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՒԱՔԱԿԱՆԻՆ ՄԷՋ



### ՀԱՅԵՐ ԱՌԵՈՒԵՑԱՆ

Երբ ՀՄԸՄ շահեցաւ Լիբանանի բաժակը 1943ին եւ ախոյեանութիւնը՝ 1944ին, մարզական թերթերը ստիպեցին Ֆետերասիոնը նկատի առնել հայերը ազգային խումբի կազմէն ներս:

1945ԷՆ ՍԿՍԵԱԼ ԼԻԲԱՆԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԻՆ ՄՆԱՅՈՒՆ ԽԱՂԱՑՈՂՆԵՐԸ ՀՄԸՄ-ԷՆ՝ ՄԱՆՈՒԷԼ, ՍԱՐԳԻՍ, ՎԱՐԴԻՎԱՌ:

1943ին՝ ՎԱՐԴԻՎԱՌ ԵՒ ԳԷՈՐԳ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԻ ՏԱՐԱԶՈՎ:



**ՊԷՅՐՈՒԹ - ԴԱՄԱՍԿՈՍ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՄՐՑՈՒՄԸ  
ԱՒԱՐՏԵՑԻՆՔ ՄԵՐ ՅԱՂԹԱՆԱԿՈՎ 5-1 ՊԷՅՐՈՒԹ՝  
2 ՓԵՏՐՈՒԱՐ 1947**

Պէյրուք - Դամասկոս մրցումը, զոր կը հովանաւորէր Լիբանանի վարչապետ՝ Ռիատ Սոլի, տեղի ունեցաւ հազարաւոր մարզասէրներու ներկայութեան: Լիբանանի կազմին մէջ կային 7 հայեր, 4ը՝ ՀՄԸՄէն եւ 3ը՝ Բագրամեանէն: Այս մրցումը առաջին անգամ ըլլալով րատիօ-ձայնասփիւռով սփռուեցաւ ուղղակի մարզադաշտէն, որուն խօսնակն էր Իզզէթ Թուրք՝ ֆետերասիոնի քարտուղարը: Յառաջապահ գիծը, որ կազմուած էր ՀՄԸՄի 4 խաղացողներէ, շատ ներդաշնակ խաղ մը ցուցաբերեց: Յաջորդական 5 կոլեր արձանագրուեցան, արժանանալով անդադրում ծափահարութեանց: Սարգիսը՝ ըստ իր թեֆնիֆին, օդէն թռչելով շատ գեղեցիկ կոլ մը նշանակեց: Երեկոյեան, երկու խումբերուն ի պատիւ հիւրասիրութեան մը ետք, Hotel St. Georges, ուր ֆետերասիոնի նախագահ Նասիֆ Մեծտելեանի, խօսք առնելով, նախ շնորհակալութիւն յայտնեց վարչապետին, անձամբ ներկայութեանը մրցումին եւ այս հիւրասիրութեան, ապա դառնալով մարզիկներուն ըսաւ, ի միջ այլոց.



ՊԷՅՐՈՒԹԻ ՀԱՒԱՔԱԿԱՆԻՆ ԿԱԶՄԻՆ ՄԷՋ 7 ՀԱՅԵՐ

Մէջտեղէն ձախէն՝ Էմիլ Նասսար (խմբապետ), բերդապահ՝ Ժորժ Պիթար, Մանուէլ, Քեմիլ Ըրտահի, Հրայր Ուրֆալեան, Հանի Հայկ, Ժորժ Շատարեւեան, Սարգիս Ազնաւորեան, Ժողէֆ Ապու Նատրը, վարդիվառ եւ խաղացող մը՝ Բագրամեանէն:

(ՀՄԸՄէն՝ վարդիվառ, Սարգիս, Շատարեւեան եւ Մանուէլ):

«Արժանի գնահատանքը կ'ուզեմ ընել եւ շնորհաւորել խումբին բոլոր խաղացողները, իսկ այս պարագային՝ մասնաւորապէս կը գնահատեմ Հանի Հայկը եւ Վարդիվառը, որոնք Լիբանանի Ազգային խումբին կարկառուն աստղերը եղան 1944էն սկսեալ, նաեւ այսօր փաստեցին իրենց վնասակամութիւնը Լիբանանի յաղթանակին համար, ոգի ի բռին եւ սրտանց խաղալով»:

Յետոյ շարունակեցինք մեր խրատները՝ Սարգիս Ազնաւորեանեց տունը:

Յաջորդ առտու, գործատեղի հասնելուս, պաշտօնակիցներս գիտիմաւորեցին «Եաիշ Վարդիվառ» (կեցցէ, Վարդիվառ) պոռալով, բերին արաբատառ թերթ մը, որուն նկարին մէջ կը տեսնուէր Վարչապետը հետս ձեռնուելու պահուն, հետեւեալ մեկնաբանութեամբ. - «Վարչապետ Ռիատ Սուլի կը շնորհաւորէ օրուան յաղթանակին հերոս՝ Վարդիվառը»: Նաեւ թերթը կ'աւելցնէր, - «Այս մրցումին հերոսները հանդիսացան, Վարդիվառ, Հանի Հայկ, Ժոզէֆ Ապու Նատըր, Քամիլ Ըրտահի, Մանուէլ եւ Սարգիս, որոնց ոգի ի բռին խաղարկութեամբ է որ այս շոնդալից յաղթանակը կերտուեցաւ»: Այս յաղթանակը եկաւ նուիրագործելու այն նախապատուութիւնը, զոր ՀՄԸՄի մարզիկները սկսեցին էին վայելել, Ազգային խումբի կազմութեան պարագային:



ՊԷՅՐՈՒԹ - ԴԱՄԱՍԿՈՍ  
ՄՐՑՈՒՄԻՆ՝ 2 ՓԵՏՐ. 1947

Պէյրուսի հաւաքականի  
ամէնէն փայլուն աստղերը՝  
Հանի Հայկ Կարմիրեան եւ  
Վարդիվառ Յովհաննէսեան,  
Ճետերասիոնի նախագահ՝  
Նասիֆ Մեժտելեանի  
արտայայտութեամբ:

**ՊԷՅՐՈՒԹ - ԴԱՄԱՍԿՈՍ ՓՈՒՑ ՎՐԷԺԻ ՄՐՑՈՒՄ - ՅԱՂԹԵՑԻՆՔ 3-1  
ԴԱՄԱՍԿՈՍ 28 ՄԱՐՏ 1947**

*Պէյրութի կազմը՝ բերդապահ Օսկար (Ռընեսանս), յետսապահ Նասսար (Ռընեսանս), Հանի Հայկ (Բագրամեանէն, Եղիշ (ՀՄԸՄ միջնապահ), Ժիրայր (Բագրամեանէն), Շատարեւեան (ՀՄԸՄ յառաջապահ աջէն), Ժարուտի (Ռընեսանս), Ապու Նատիր (Ռընեսանս), Կարպիս (Բագրամեանէն), Վարդիվառ (ՀՄԸՄ), Քեմիլ (Ռընեսանս), Սարգիս Ազնաւորեան (ՀՄԸՄէն):*



Սարգիս Ազնաւորեան թռչելով կը նշանակէ Պէյրութի վերջին կողը:

*Երեկոյեան մեծ հիւրասիրութիւն Մարտամ Պէյի կողմէ, ի պատիւ երկու խումբերուն:*

**ԼԻԲԱՆԱՆ - ՍՈՒՐԻԱ ՄՐՑՈՒՄԸ՝ ՊԷՅՐՈՒԹԻ ՄԷՋ  
Լիբանան յաղթուեցաւ 4-2 արդիւնքով 4 Մայիս 1947**

Այս կազմին մէջ կան 7 հայեր՝ 2 ՀՄԸՄէն, Եղիշ եւ Վարդիվառ, 5 Բագրամեանէն  
Կողմի իրաւարարները՝ Աոյնպէս հայ, Ցաւակ եւ Պոյանեան

*Այս մրցումին մեր պարտութեան պատճառը նորէն ֆետերասիոնն էր, որ ինչ ինչ նկատառումներով Բագրամեանէն առած էր հինգ խաղացողներ, իսկ ՀՄԸՄէն միայն երկու՝ ես եւ Եղիշ: ՀՄԸՄի կազմին մէջ կային անուանի խաղացողներ, որոնք արժանիօրէն կրնային խաղալ*



հաւաքականէն եւ անպայման ի նպաստ մեզի կ'ըլլար այս մրցումին արդիւնքը. անոնք էին՝ բերդապահ Տիգրան, միջնապահ Շատարեւեան, յառաջապահ Մանուէլ եւ Սարգիս Ազնաւորեան:

Անդին, Սուրբոյ յառաջապահ գծին մէջ էին անուանի խաղացողներ Հալէպի ՀՄԸՄԷՆ՝ Արմէն, Վազգէն, Համազասպ եւ Յակոբ, որոնց ներդաշնակ խաղարկութեամբ է որ փայլուն յաղթանակ տարին մեր վրայ՝ 4-2 արդիւնքով: Լիբանանի կողին մէկը ես ըրի՝ բենալթիով: Երեկոյեան REGENT HOTEL ի մէջ տեղի ունեցաւ մեծ հիւրասիրութիւն, որմէ



ԼԻԲԱՆԱՆ - ՍՈՒՐԻԱ  
ՄՐՑՈՒՄԻՆ ՊԷՅՐՈՒԹԻ  
ՄԷՋ՝ 4 ՄԱՅԻՍ 1947

ԷՄԻԼ ՆԱՍՍԱՐ՝  
ԼԻԲԱՆԱՆԻ ԽՄԲԱՊԵՏԸ  
ԵՒ ՍՈՒՐԻՈՅ ԽՄԲԱՊԵՏԸ՝  
ԴՐՕՇԱԿՆԵՐՈՒ  
ՓՈԽԱՆԱԿՈՒՄԻ ԱՏԵՆ:  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱԽԱՐԱՐ  
ԹՈՒՐԲԻԱՅԷՆ ԵՒ  
ՕԳՆԱԿԱՆ  
ԻՐԱԽԱՐԱՐՆԵՐ  
Ձախիճ՝ ՅԱԻԱԿ, մէջտեղը՝  
ԽԱԶԱՏՈՒՐ ՊՈՅԱՃԵԱՆ  
(այդ տարիներու Լիբանանի  
լաւագոյն իրաւարարներէն):



վերջ նախկին Lieutenant Տեմիրեանին հիւրերը եղանք, իր սրճարանին մէջ՝ Պուրն Համուտ (Տեղակալ Տեմիրեան եղած է զինուորական սպայ Սուրիոյ Ֆրանսական բանակի մէջ եւ ՀՄԸՄի ֆուքպոլի խումբին շատ մօտիկ)։ Ներկայ էին Հալէպի եւ Պէյրութի ՀՄԸՄի խաղացողները եւ մեր մօտիկ ընկերները՝ Տոպրի, Պարգեւ եւ այլն, ու մինչեւ ուշ գիշեր փառաւոր խնճոյք մը ըրինք։



Սուրիոյ եւ Լիբանանի ազգային խումբերու փառքն ու պատիւը կազմող Հալէպի եւ Պէյրութի Հ.Մ.Ը.Մ.ի անուանի խաղացողները.

Զախէն՝ Վազգէն Ղուկասեան, Արսէն Աբգարեան, Վարդիվառ Յովհաննէսեան, Եղիշէ Մանուկեան, Յակոբ Աֆարեան եւ Համազասպ Արզումանեան:



Ծրած աջէն  
երկրորդը՝  
խաչատուր  
Պոյանեան,  
1929ի Պէյրութի  
ՀՄԸՄի  
կազմին մէջ:

*FIFA իր 30 Հոկտեմբեր 1963 թուականի նամակով, ուղղուած Լիբանանի ֆուտպոլի ֆետերասիոնին, խաչատուր Պոյանեան կը նշանակէ FIFAի կողմէ իբր միջազգային իրաւարար:*



ԼԻԲԱՆԱՆ - ՍՈՒՐԻԱ ՓՈՒՆՎՐԷԺԻ ՄՐՑՈՒՄ 18 ՄԱՅԻՍ 1947 ՀԱԼԷՊ  
Լիբանան յաղթեց՝ 1-0

*Այս կազմին մէջ կան 7 հայեր՝ 3 Բագրամեանէն, 1 ՀՄՄԷՆ, 3 ՀՄՐՄԷՆ՝ Մանուէլ, Վարդիվառ, Սարգիս:*



ԼԻԲԱՆԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԻՆ ԿԱԶՄԵՐԷՆ ՄԷԿԸ 1948

*Աջէն՝ Սիմոն Խուրի (Selectionneur), Էմիլ Նասսար (խմբապետ), Տիգրան, Իսկէնտեր Արամունի, Ժորժ Շատարեան, Նուսիֆ Հանի, Սարգիս, Թաւիլ, Ժապրա Զարկա, Վարդիվառ, Քեմիլ Ըրտահի, Մանուէլ եւ պահեստիները:*

ԵՐԿՈՒ ԾԱԿԱՏՈՒՄՆԵՐ ԱՆԳԱՐԱՅԻ ՀԱՒԱՔԱԿԱՆԻՆ ՀԵՏ  
25 Ապրիլ եւ 2 Մայիս 1948 Պէլրուք

Տասը հազարէ աւելի բազմութեան մը ներկայութեան, Քաղաքապետարանի դաշտին վրայ, տեղի ունեցաւ պատմական մրցում մը, Լիբանանի Ազգային Խումբին եւ Անգարայի հաւաքականին միջեւ: 2 Մայիս 1948ին կայացած այս մրցումը երկրորդն էր, զոր թրքական խումբը կ'ունենար Պէլրուքի մէջ:

Առաջին մրցումին թրքական խումբը պարտուած էր 4-1 արդիւնքով: Լիբանանեան հաւաքականին մաս կազմող ՀՄԸՄականներ՝ Ստեփան ճշանակած էր 2 կոլ, իսկ Շատարեւեան՝ 1 կոլ, մինչ Ռասիւնկի Հանին՝ կը ճշանակէր 4րդ կոլը:

Մայիս 2ի մրցումին մարզադաշտ իջնող լիբանանեան խումբին վեց խաղացողները հայեր էին՝ ՀՄԸՄէն:

Խաղը սկսաւ շատ տափ: Յայտնապէս ջղային վիճակի մէջ էին մեր խաղացողները: Հակառակ հազարաւոր հայերու հուռոտներուն եւ «կոլ, կ'ուզենք» բացազանչութիւններուն, արդիւնքը մնաց հաւասար՝ 0-0 մինչեւ կիսախաղ:


Ուշադրութեամբ հետեւած ըլլալով խաղին փուլերուն, հասկցայ մեր տկար կողմը: Այս մրցումէն յաղթական դուրս գալու համար յառաջապահ գիծը բաղկացած ըլլալու էր զուտ ՀՄԸՄի խաղացողներէ, որոնք իրենց վճռական խաղարկութեամբ թուրքին դէմ, կրնային յաղթանակը ապահովել: Մեր յառաջապահ գիծէն կը պակսէր Սարգիսը, ճախ ծայր, տեղը կը խաղար էլի Հատտատ:

Կիսախաղի դադարին հաւաքեցի ՀՄԸՄի խաղացողները, պարզեցի միտքս, թէ մենք կրնանք յաղթել, եթէ առջեւի գիծը բոլորն ալ հայ ըլլան՝ ՀՄԸՄէն, այսինքն՝ Սարգիսը պէտք է խաղայ էլի Հատտատին տեղ, հակառակ պարագային՝ չենք խաղար: Այսպէս բոլորին հաւանութիւնը առնելէն ետք, գացի ֆետերասիոնի նախագահ Նասիֆ Մեժտելեհիի մօտ, յայտնեցի մեր մտահոգութիւնը եւ աւելցուցի.

— Մենք թէեւ Լիբանանեան տարագով կը խաղանք այսօր, բայց իբր հայեր կը ճակատինք մեր դարաւոր թշնամի՝ թուրքին դէմ: Հազարաւոր հայեր թրիպիւններուն մէջէն կը պոռան եւ մեր յաղթանակը կը պահանջեն: Յառաջապահ գիծը՝ բոլորն ալ հայեր պէտք է ըլլան, Սարգիսը՝ էլի Հատտատին տեղ պէտք է խաղայ, կ'ընդունինք որ էլի Հատտատը Սարգիսէն աւելի լաւ կը խաղայ, բայց թուրքին դէմ Սարգիսը աւելի կրակոտ եւ աւելի վճռական կը խաղայ: Առիւծի պէս խաղալով է որ կրնանք յաղթել թուրքներուն:

Ֆետերասիոնի նախագահը կատարելապես իրաւունք տուաւ ինծի: Երկրորդ կիսախաղին, երբ յառաջապահ գիծը՝ հինգ ՀՄԸՄականներով դաշտ իջաւ, դիմաւորուեցանք ներկայ հայ մարզասէրներուն որոտընդոստ բացագանչութիւններով: Կարծես ամբողջ դաշտը գետնէն մինչեւ երկինք կը թնդար:

Այս ելեւտրականացած մթնոլորտին մէջ կայծակի արագութեամբ յարձակողականի անցանք, թուրքերը շուարած էին, կրակի պէս կը խաղային, իւրաքանչիւր խաղացող ամէն տեղ էր, ֆուլպայլի խաղ չէր, յաղթանակ տանելու ճակատամարտ էր, իսկապէս կ'իշխէինք խաղին: Ետեւէն եկած գնդակ մը Շատարեւեան այնպիսի թեփնիփով մը փոխանցեց Մանուէլին, որ գնդակը առնելով, աղուէսի նման տրիպլէներով խաղի բերաւ Անգարայի պաշտպանողականը եւ նշանակեց Լիբանանի առաջին կողմը:



Սարգիս Ազնաւորեանին նշանակած կայծակնային 2 կոլերէն մէկը:

Դաշտին եւ գնդակին բացարձակ տէրն էինք: Նորէն նոյն թափփի վրայ ինծի եկած գնդակը անմիջապէս հասցուցի ձախ ծայր՝ Սարգիսին եւ պոռացի, «եալլա, Սարգի՛ս, մու՛խը մարէ եւ կո՛լ ըրէ»: Սարգիս գնդակը առնելով կայծակի պէս սուրաց եւ ռումբի պէս հարուածով մը գնդակը տեղաւորեց Մեմետի բերդէն ներս՝ նշանակելով Լիբանանի երկրորդ կողմը:

Ժողովուրդը խելագարած՝ հուռոտներ պոռայու սկսաւ, երբ նոյն Սարգիսը նոյն արագութեամբ խուժեց Անգարայի բերդէն ներս, եւ նշանակեց Լիբանանի երրորդ եւ վերջին կողմը, թուրքերը ապշած եւ

զարմացած իրարու կը նայէին, թէ ինչ պատահեցաւ որ այսպէս 3-0 արդիւնքով չարաչար պարտուեցան:

Հայերուն ուրախութեան չափ ու սահման չկար, հուռուներ եւ կեցցէներ պոռալով թրիպիւնները կը թնդացնէին: Ֆետերասիոնը իր լրիւ կազմով հանդերձարան եկաւ եւ շնորհաւորեց բոլոր խաղացողները, իսկ ֆետերասիոնի նախագահը՝ Նասիֆ Մեծտելեանի, հանդերձարան եկաւ, շնորհաւորեց բոլոր խաղացողները, յետոյ փաթեւեցաւ վզիս եւ ըսաւ.

- Վարդիվառ, այսօրուան յաղթանակը քեզի կը պարտինք, իրաւունք ունէիր պնդելուդ, որ մեր յառաջապահ գիծը ամբողջովին ՀՄԸՄէն ըլլար:

Այդ հերոսներն էին ՀՄԸՄէն.

Բերդապահ՝ Տիգրան Արապեան,

Յետսապահ՝ Յովհաննէս Նազարեան,

Յառաջապահ՝ Ստեփան Մելիքսեթեան եւ Ժորժ Շատարեան:

Մանուէլ Ալթունեան՝ Վարդիվառ Յովհաննէսեան եւ Սարգիս

Ազնաւորեան:

Երեկոյեան, Լիբանանի Ֆետերասիոնը մեծ հաշկերոյթ մը սարքեց ի պատիւ երկու խումբերուն, որուն ներկայ եղան նաեւ Լիբանանի Ազգային կրթութեան նախարարը եւ ֆուլպոլի խումբերու միութեանց նախագահները:

Անդրադառնալով այս մրցումին «Ազդակ», 6 Մայիս 1948 թուակիր համարով ի միջի այլոց կը գրէր.

«Այս ջախջախիչ արդիւնքը կը պարտինք յետսապահ գիծի տոկունութեան շնորհիւ՝ Յովհաննէսի եւ Հանիի: Իսկ յարձակողական գիծին վրայ՝ Շատարեան, Վարդիվառ, Մանուէլ եռեակը հրաշքներ գործեց, եւ Սարգիս իր կայծակնային արագութեամբ եւ ճշգրիտ հարուածներով երկու կէտեր նշանակեց»:



Լիբանանի  
խումբին կազմը  
2 Մայիս 1948  
Անգարայի  
յաղթեցին՝  
3 - 0:

ԼԻԲԱՆԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ ԴԷՊԻ ԹՈՒՐՔԻԱ  
9 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1948

Լիբանանի ազգային խումբէն երկու անգամ չարաչար պարտուելէն ետք, Անգարան չուշացաւ մեզի Անգարա հրաւիրելու փոխվրէժի մրցումներու համար: Թրքական խումբին համար այդքան պատուաբեր չէր Լիբանանի պէս փոքր երկրի մը խումբէն պարտուիլը: Լիբանանի ֆետերասիոնը ընդունեց հրաւերը եւ ըստ այնմ կազմեց խումբը: 1915ին, Թուրքիայէն հայերուն տեղահանումէն երեսուն տարիներ ետք, առաջին անգամ ըլլալով է որ, արտասահմանէն հայ մարզիկներ ոտք պիտի դնէին թրքական հողին վրայ: Ո՞վ կնար ապահովել մեր կեանքերը Թուրքիոյ մէջ: Ճիշդ այս պատեհաւ ՀՄԸՄի վարչականներ ներկայացան Ֆետերասիոնին եւ այդ հարցը արծարծեցին, որուն հետեւանքով իւրաքանչիւր խաղացողը ապահովագրուեցաւ մէկ միլիոն Լիբ. Ոսկիով:



Պատուիրակութեան պատասխանատու՝ Սիմոն Խուրի, ՌԸՆԵ-ՍԱՆՍԷՆ՝ Էմիլ Նասսար (խմբապետ), Ժորժ Պիթար, Թաիլ, Ժապրա Զարկա, Քեմիլ Ըրտահի, ՄԱԶԲԱԱՅԷՆ՝ Միթրի Ատըմ, Իսկենտեր Արամունի, երրորդ մը ՌԱՍԻՆԿԷՆ՝ Եուսիֆ Հեմի, Ֆիլիպ, ՀՄԸՄ-ԷՆ՝ Նալպանտեան, Շատարեւեան, Տիգրան, Մանուէլ, Սարգիս եւ Վարդիվառ:

Ողջերթի եկած էին ֆետերասիոնի դիւանը:  
Նկարին մէջտեղը՝ Իզզէթ Թիւրք, Նասիֆ Մեժտելեմի եւ Ապու Էլիաս:

9 Հոկտեմբեր, 1948ին նամբայ ելանք Պէյրուքէն - Թրիփօլի օթօպիւսով, ուր Wagon - Lit շոգեկառք առինք մինչեւ Անգարա: Շատ յուզիչ եղաւ մեզի համար, երբ յաջորդ առաւօտուն հասած էինք արդէն երբեմնի հայոց շէնք Ատանան: Սարգիսը, որ բնիկ ատանացի է, իջաւ եւ հողը համբուրեց: Վերջապէս հասանք Անգարա եւ տեղաւորուեցանք շէնք պանդոկ մը՝ 11 Հոկտեմբեր, 1948ին:

## ԱՆԳԱՐԱՅԻ ՄԷՋ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ 1948

Անգարայի մէջ տեղի ունեցած երեք մրցումներուն ալ չարաչար պարտուեցանք: Կը խոստովանիմ որ մեզմէ շատ բարձր մակարդակով ֆութպոլ կը խաղային: Ջարմանալին ինծի համար կը մնար այն, թէ նոյն այս խումբը քանի մը ամիս առաջ Պէյրուքի մէջ երկու անգամ պարտուեցաւ Լիբանանի խումբին նոյն կազմէն: Այս կէտը լուսաբանելու համար իրենց հետ եղած խօսակցութեանց ընթացքին, հետեւեալ ձեւով բացայայտեցին իրենց գոյգ պարտութիւնները:



ԼԻԲԱՆԱՆԻ ԽՈՒՄԲԻՆ ԿԱԶՄԸ ԱՆԳԱՐԱ 13 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1948  
Ձախէն ծոած՝ Վարդիվառ, Տիգրան եւ Էմիլ Նասսար:

«Պէյրուք, մենք մեզ շատ օտար զգացինք, մարդիկ կարծես ծուռ աչքով կը նայէին մեզի, մրցումներուն ձեռք ժողովուրդը այնպէս պոռալով կը քաջալերէր ձեզ, որ մենք տեսակ մը շշմած էինք, խաղին պէտք եղածին պէս չկրցանք հետեւիլ, դուք ալ շատ վեճակամ խաղցաք Պէյրուք ձեռք ժողովուրդին ներկայութեան»:

Անգարայի մէջ երեք մրցումներու ընթացքին երբեք առիթը չտուին մեզի լաւ խաղարկութիւն մը ցուցադրելու: Միայն մէկ անգամ առիթէն օգտուելով հեռուէն գնդակ մը քաշեցի կռիւն նիշդ անկիւնէն, բերդապահը շատ նարպիկօրէն եւ հրաշալիօրէն բռնեց այդ գնդակը: Յաջորդ օրուան թերթի մը մէջ կարդացի.

- (Լիպնան թաքմընըն Քարիթանի՝ Վարդիվառըն օթուզ մեթրտէն պոմպա կիպի պիր շութունու պիզիմ Մեմետ ուչարաք քուրթու)

Քարգմանեմ՝ Լիբանանի խումբին խմբապետ՝ Վարդիվառին 30 մեթրէն ոռմբի պէս մէկ հարուածը մեր Մեմետը թռչելով բռնեց: Փութպոլի մրցումները այս ձեւով վերջ գտան:

Յանախ իրենց խմբապետ Մեմետը, պանդոկ կու գար, կը խօսէինք, Անգարայի տեսարժան վայրերը պտտուց զիս եւ Սարգիսը, օր մըն ալ տարաւ մեզ Թուրքիոյ ֆութպոլի ֆետերասիոնի նախագահին ներկայացուց, որ մեզ շատ սիրալիր ընդունեց եւ հիւրասիրեց, յետոյ գացինք Անգարայի բոլոր մարզական կառոյցները դիտելու:

### ԼԻԲԱՆԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ ԱՆԳԱՐԱ ՀՈԿՏ. 1948 Յիշատակելի իրական դէպք մը

Անգարայի մէջ տեղի ունեցած երկրորդ մրցումին, Սիմոն Խուրի՝ մեր խումբին մարզիչը եւ պատասխանատուն, զիս նշանակեց խումբին խմբապետը:

Այս մրցումին ներկայ էր Թուրքիոյ նախագահը, Իսմէթ Իւնէօհիւ: Երկու խումբերը դաշտ իջան, քայլերգները ունկնդրելէ յետոյ, ըստ սովորութեան, երկու խմբապետներու միջեւ դրօշակներու փոխանակում եղաւ: Ես թրքական դրօշակը ձեռքս բռներ էի, ըլլալի՞ք բան է, շուարած, տակն ու վրայ եղած էի, մէջէս բողբոջով մը կ'ընդվզէի ես ինծի դէմ, եւ իւրովի կ'ըսէի.- «Վարդիվառ, դուն հարազատ հայրդի, երդուեալ դաշնակցական, ինչպէ՞ս թուրքին դրօշակը ձեռքդ բռներ ես, ձեռքդ չ'այրի՞ր, պիտի անիծուիս դուն...»: Խենթի պէս եղած էի, ի՞նչ ընել, այդքան ներկայ ժողովուրդին առջեւ, դրօշակը չէի կրնար պատռել, ոտքիս տակ առնել եւ կոխկոտել... Այս մտածումներէն տարուած, բնագդական մղումով մը, թերեւս, ըրեր էի ժեսթ մը, չեմ գիտեր... վերջապէս հանդարտեցայ: Խաղը սկսաւ:



ԽՄԲԱՆԿԱՐ ԼԻԲԱՆԱՆԻ ԵՒ ԱՆԳԱՐԱՅԻ ՀԱՒԱՔԱԿԱՆՆԵՐՈՒ ԱՆԳԱՐԱ ՀՈԿՏԵՄԲԵՐ 1948



Յաջորդ օրը երկու հոգի եկան օթել, զիս հարցուցին, սալօնն էին, ներկայացայ եւ հարցուցի, թէ ի՞նչ կ'ուզեն. մէկը գրպանէն նկար մը հանեց, ինծի ցուցնելով ըսաւ.

— Այս նկարը բու նկարդ է, տարօրինակ բան մը չե՞ս նկատեր նկարին մէջ:

— Ոչ,- ըսի,- շատ **նորմալ** նկար է, մրցումէն առաջ նկարուած, ըսէ՛ք ինծի, թէ ի՞նչ կ'ուզէ՛ք:

Ըսին, թէ գաղտնի ոստիկան են, ստուգումի եկած են.

— Որովհետեւ նկարին մէջ մեր դրօշակը քիչ մը անվայել կերպով բռնած ես, եթէ դիտումնաւոր ըրած ես, ամօթ կը նկատենք: Մաքուր թրքերէնով մը պատասխանեցի.

— Կը ներէ՛ք, կը զարմանամ, թէ այսպէս սխալ ենթադրութիւն կ'ընէ՛ք: Գիտե՞ք թէ ֆուքսպոլիստ մը մրցումէն առաջ ինչ «հէյնանի» մէջ կ'ըլլայ, (տագնապ), միայն մրցումի մասին կը մտածէ եւ ինչ ըրածը չի գիտեր, դուք երբեք ֆուքսպոլիստ եղա՞ծ էք, եւ նախագահի մը առջեւ ֆուքսպոլ խաղցած:

— Ոչ,- ըսին: Ուրեմն... Նայեցան որ պարապ տեղ եկած էին, ներդուքիւն խնդրելով գացին: Չեմ կարծեր, որ համոզուած գացին... Շատ նիշդ գուշակեր էին:

## ՄԵՐ ԱՅՍ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԵՆԷՆ ԴՐՈՒԱԳ ՄԸ ԵՒՍ

Երիտասարդ թուրք սպայ մը, սիվիլ հագած, յանախ պանդոկ կու գար, կը մօտենար մեզի, կը խօսէր: Մանօթացանք, ինքզինքը ներկայացուց՝ Քենան, բանակի կոփամարտի ախոյեան: Կը սիրէր մեզի հետ խօսիլ եւ կը զարմանար մեր թրքերէն խօսելուն, ամէնքս ալ լաւ թրքերէն կը խօսէինք, բացի Շատարեւեանէն:

Առտու մը Քենանը պանդոկ եկաւ, նախանաշը ըրեր էինք, ես ու Սարգիսը իրեն կը սպասէինք, որ պտտելու երթանք: Մտաւ մեր սենեակը, վերարկուն հանեց, - «տաք է», - ըսաւ, յետոյ մէջքէն հանեց ատրճանակը եւ մահճակալին վրայ նետեց: Սարգիսը եւ ես իրար երես նայեցանք, ժպտացինք, տարօրինակ գտանք եղածը. ես ատրճանակը առի, նայեցայ եւ չհաւնողի պէս ետ տեղը նետեցի ու Քենանին նայելով ըսի, - «Քենան պէյ, այս ատրճանակը քո՞ն տրճանակդ է», - «այո՛», - ըսաւ, - «բանակէն տրուած», - ըսի, - «կը նմանի պելճիֆական պարզ ատրճանակներու, արդեօք թուրք բոլոր սպաները նմա՞ն տրճանակ կը գործածեն», «այո՛», - ըսաւ եւ հպարտօրէն, «ասոնք թրքական արտադրութիւն են», - «անայիպ» (կը զարմանամ), - ըսի, - «որ թուրք սպայ մը այս տեսակ պարզ ատրճանակ կը գործածէ: Մենք Պէլլորթի մէջ, որ բանակային չենք, միայն գերմանական բարապէլլում կը գործածենք»: Ատրճանակը վերցուց, եւ ասկէ վերջ մեր իով ատրճանակով չեկաւ:



ՆԿԱՐՆԵՐ ԱՆԳԱՐԱՅԷՆ  
10-10-1948

Զախէն՝ Վարդիվառ, Քենան եւ  
Սարգիս:



Զախէն ոտքի՝ Նալպանտեան,  
Շեվքեթ եւ Էմիլ Նասսար:  
Նստած՝ թուրք գաղտնի ոստիկանը,  
Վարդիվառ եւ Քենան:

Ռամագանի տօներ էին, ազատ ըլլալուն մեզ պտտցուց բոլոր դիտարժան վայրերը: Օր մը իրմէ խնդրեցի, որ մեզ տանի բացօդեայ սրնարան մը, մէջտեղը աւագան, ուր կարենանք սուրն մը խմել, **Ներկիլէ** (կլկլակ) մը ծխել, **Նարտի** խաղալ: Զիշդ ուզած տեղերնիս տարաւ, ներկիլէն եւ սուրնը եկան եւ սկսանք նարտի խաղալ: Քիչ մը վերջ,- «Վարդիվառ, քարտաշըմ,- ըսաւ,- ինձի հետ թաւլի չես կրնար խաղալ, ես ուզած զարս կը բերեմ, լաւ գիտցիր, որ թուրք սպայ մը խումարներու բոլոր գաղտնիքները գիտէ, ուր որ երթայ, երբեք խաղի չգար»:

Միշտ իրեն տոմս կու տայինք մեր մրցումներուն ներկայ ըլլալու: Ամէն օր կը հանդիպէր, ժամերով կը խօսէինք, բայց չկրցանք հասկնալ թէ ինչի կը պարտէինք այս կարն ժամանակին մէջ տարօրինակօրէն այնքան լաւ մտերմանալը մեզի: Իր կողմէ որեւէ ակնարկութիւն չլսեցինք հայերու մասին: Արդեօք բանակի կողմէ՞ դրկուեր էր մեզ լրտեսելու: Անկեղծօրէն կը վարուէր հետերնիս: Ինչ որ ուզէինք, պատրաստ էր ընելու: Օր մը Սարգիսին ըսի, - «Ձըլլայ որ ասոր ծնողքը հայ եղած ըլլան եւ հայու արիւնն է, որ կը քաշէ զինք դէպի մեզ», - որովհետեւ իսկապէս հայու կը նմանէր: Երբեք հարց ու փորձ չըրինք, շատ լաւ ժամանակ անցուցինք միասին:

### ԱՆԳԱՐԱ ՄԵՐ ՎԵՐՋԻՆ ԿԷՍՕՐՈՒԱՆ ԾԱՇԸ ՊԱՊԱ ՔԱՓՐԻՉԻՆ ՀԻՒՐԵՐԸ

Փառաւոր պանդոկին մէջ, ուր իջեւանած էինք, տէրը հայ էր. իմացեր էր որ հայ տղաք կային լիբանանեան խումբին հետ:



ՆԿԱՐՆԵՐ ԱՆԳԱՐԱՅԷՆ  
13-10-1948  
Սարգիս եւ Վարդիվառ:



Ֆիլիք (Ռասինկի խաղացող),  
Վարդիվառ եւ Մանուէլ:

Անունն էր՝ Պապա Քափրիչ, կովկասահայ, համայնավար բեթմեն խոյս տուած էր եւ ինքզինքը նետած Անգարա: Վարպետ խոհարար եղած էր, եւ տարիներու տֆնաջան աշխատանքով է որ տիրացած էր այս շֆեղ պանդոկին: Իրիկունները այս պանդոկը ճաշի կու գային Անգարայի ընտրանին, հարուստ դասակարգը, նաեւ՝ երեսփոխաններ եւ նախարարներ:

Անգարայի մէջ մեր վերջին օրն էր: Պապա Քափրիչը գիս կանչեց եւ յայտնեց, թէ կը փափաքէր ճաշի հիւրասիրել լիբանանեան խումբին մաս կազմող հայերը: Սիրով ընդունեցին: Շֆեղ եւ ճոխ սեղան մը սարքուած էր, ինքը մէջտեղը նստած, մենք ալ՝ սեղանին շուրջը: Իւրաքանչիւրիս ձախ եւ աջ կողմը սպասեակ մը կար, ամէն մէկ շարժումին, - «պուլուրունուզ, էֆէնտիմ» հրամմեցէք, էֆէնտիմ», - կ'ըսէին: Ուտելիքներու, մսեղէններու, պէօրէկներու եւ խմիչքներու տեսակներով լեցուն էր սեղանը:

Պապա Քափրիչ քիչ կը խմէր, քիչ կ'ուտէր, բայց լուռ էր, կարծես երազներու մէջ թաղուած եւ յուզուած մեզ կը դիտէր: Վերջապէս պատմեց իր տխուր յուզումին պատճառը: Ուրեմն՝ 19 տարեկան երիտասարդ տղան կորսնցուցած է ինքնաշարժի արկածով: Մեզ կը դիտէր...

Այս փառաւոր, բայց յուզիչ ճաշկերոյթով վերջ գտաւ մեր կեցութիւնը Անգարա: Պապա Քափրիչ անպայման պնդեց որ յաջորդ անգամ Անգարա որ երթանք, իր հիւրերը ըլլանք: Արդարեւ, 25 տարի վերջ, երբ Յասմիկին հետ Անգարա էինք, գացինք գտանք պանդոկը խեղճ վիճակի մէջ: Հարցուցի Պապա Քափրիչի մասին. ծեր խոհարար մը կար. ըսաւ, որ Պապա Քափրիչը վաղուց մահացած էր, եւ իր մահէն ետք ինչ խեղճ վիճակի հասած է այդ շէն ու շֆեղ պանդոկը:

## ՄԵՐ ՄԵԿՆՈՒՄԻ ՕՐԸ ԳԷՊԻ ՊՈԼԻՍ

Վերջապէս մեր մեկնումի օրը եկաւ, գիշերուան շոգեկառնով պիտի ճամբորդէինք դէպի Պոլիս, պանդոկի մեծ սրահին մէջ հաւաքուած նստած էինք՝ ճամբայ ելլելու ժամը սպասելով: Քենանն ալ եկաւ, քովս նստեցաւ: Խօսեցանք ասկից անկից. լսեք է, որ էմիլ Նասսարը իր գինուորական բանկոնը կ'ուզէ ծախել (էմիլ Նասսար՝ Պէյրութի հրշէջներու գնդապետ է), հագած բանկոնը ամերիկեան է: Այդ շրջանին Լիբանանի մէջ ամերիկեան բանակային առարկաներ շատ կային շուկայի վրայ:

- Վարդիվառ, գարտաշքմ, - ըսաւ, - էմիլ Նասսարին հագած սպայի բանկոնը շատ գեղեցիկ է, շատ հաւնեցայ, ամերիկացի սպայի բանկոն է:

- Լաւ, եթէ կ'ուզես վրադ փորձել, բերեմ փորձէ, - ըսի:

Գացի հարցուցի էմիլ Նասսարին: 125 թրքական ոսկի է գինը, - ըսաւ (թրքական մէկ ոսկին կ'արժէր մէկ եւ քառորդ լիբանանեան ոսկի):

Առի բանկոնը, Քենանը հազաւ գայն, այնքան լաւ վայելեց իրեն,  
կարծես իր վրայ կարուած ըլլար:

- Հաւնեցա՞ր,- հարցուցի:

- Այո,- պատասխանեց,- եւ իմացայ, որ գինը 125 թրքական ոսկի  
է, ես ինչու դրամ չունիմ եւ դուք այս գիշեր կը մեկնիք:

- Քենան,- ըսի,- եթէ հաւնեցար, առ այս բանկոնը, ես կը վճարեմ:  
Քանի մը օր վերջ պիտի վերադառնանք Անգարայի վրայով դէպի  
Պէյրուս: Եթէ այդ օրը կրցար դրամը բերել, շատ լաւ, եթէ ոչ, այդ ֆանի  
մը օր մտերմաբար միասին անցուցած բարեկամութեան հաշուէ, հալալ  
ըլլայ:

Քենանը քար լուծիւն կը պահէր: Գացի էմիլ Նասսարին 125  
թրքական ոսկին վճարեցի: Մեր միւս ընկերները արաբերէնով,- «եա (ով)  
վարդիվառ, դուն խենթ ես, անգամ մըն ալ եր՞բ պիտի տեսնես, որ դրամդ  
առնես»: Ես չպատասխանեցի անոնց, իմ նպատակիս հասեր էի, ցուցնելով  
թուրք սպայի մը, որ հայու հետ ֆանի մը օրուան բարեկամութիւնը իր  
արժէք ունի:

Վերջապէս, երբ ճամբայ պիտի ելլէինք, Քենանը մօտեցաւ ինծի,  
փաթթուեցաւ վզիս,- «նորէն կը տեսնուիմք», - ըսաւ եւ բաժնուեցանք:

## ԼԻԲԱՆԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ ՊՈԼԻՍ ՊՏՈՅՏԻ

18-էն 22 Հոկտ. 1948

18 Հոկտեմբեր առաւօտեան հասանք Պոլիս: Տեղաւորուեցանք  
ֆաղափին կեդրոնը պանդոկ մը եւ քիչ մը հանգչելէ ետք դուրս ելանք  
պտտելու այդքան գովբերուած Պոլիսը: Իսկապէս բանաստեղծներու  
գովարանած գեղեցկութեան արժանի ֆաղափ է, մէկ կողմէն Ասիա, միւս  
կողմէն՝ Եւրոպա, բաժնուած Վոսփորի նեղուցով:

Հինգ օր ունէինք պտտելու եւ տեսնելու մեր սրտին խօսող վայրերը եւ  
սրբավայրերը: Առաջին առթիւ այցելեցինք «Մարմարա» օրաթերթին  
խմբագրատունը, ուր ծանօթացանք իմ քաղաքացի Տոքթ. Վահրամ  
Զօպեանին: Բացատրեցինք որ մենք կ'ուզենք այցելել հայկական դպրոց-  
ներն ու եկեղեցիները, որոնք հայ մտաւորականութեան ոստանը եղած էին,  
մեր անմահ գրագէտներու շիրիմները եւ ինչ որ հայու հետ կապ ունի եւ  
հայու սրտին կը խօսի:

Հայու հարազատ զգացումներով տոգորուած մտաւորական  
Վահրամ Զօպեան, մեծապէս ուրախացաւ իմանալով մեր այցելելիք  
վայրերը:

Այս նպատակով մեզի ծանօթացուց շուկայի վրայ գտնուող ֆանի մը  
հայերու՝ Անդրանիկին եւ Հրանդ Շահրիկեանին, որ տեղեակ էր մեր  
ժամանումէն իր մէկ բարեկամ թուրք գաղտնի ոստիկանի մը  
միջոցաւ: Հրանդ Շահրիկեան մեզի պատուիրեց շատ զգոյշ ըլլալ:

*նստիկանութիւնը մեր իւրաքանչիւրին կենսագրականը շատ լաւ գիտէր, որով հեռու մնալու էինք զինուորական եւ նստիկանական վայրերէն. խուսափիլ մանաւանդ՝ զանոնք նկարելէ եւ այլն:*



ԼԻԲԱՆԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԻՆ ՀԵՏ ՊՈԼԻՍ 1948

ՊՈԼՍԱՀԱՅՅԵՐՈՒ ՀԵՏ 18 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1948 ՊՈԼԻՍ

*Ձախէն ոտփի՝ Անդրանիկ (պոլսահայ), Մանուէլ Ալթունեան, Սարգիս Ազնաւորեան եւ Տոֆոր Վահրամ Զօպեան (պոլսահայ):*

*Ձախէն նստած՝ Ժոզէֆ Նալպանտեան, Հրանդ Շահրիկեան (պոլսահայ) եւ Վարդիվառ Յովհաննէսեան:*

**ԱՅՅԵԼԵՑԻՆՔ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՔԱՐԱՆԸ,**

**ԳՊՐՈՑՆԵՐ, ԵԿԵՂԵՑԻՆԵՐ,**

**ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆԻ ԵՒ ՄԻՍԱՔ ՄԵԾԱՐԵՆՑԻ ԾԻՐԻՄՆԵՐԸ**

*Այցելեցինք հայոց պատրիարքանը, դար մը առաջ մեծ եւ նուիրեալ նարտարապետներու ձեռամբ կերտուած գեղեցիկ հաստատութիւն մըն է իր յարկաբաժիններով, շէնդ սրահներով: Յայտնի է, որ ատենին նիւթականը չեն խնայած Պոլսոյ անուանի ամիրաները: Այցելեցինք հայոց եկեղեցիները, նոյնպէս գեղեցիկ եւ նոխ զարդարանքներով: Մեր սրտերը կը հրճուէին ի տես այս պատմական թանկարժէք եկեղեցիներու, զորս կը վայելէին Պոլսոյ հայերը:*

*Հայ վարժարանները այցելեցինք, Կեդրոնականը եւ միւս բոլորը, ուր մեր աննման գրագէտներն ու բանաստեղծները յանախած էին:*

Անակնկալօրէն հանդիպեցայ վարժարանի մը մէջ 1900ական թուականներու տարեվերջի մը խմբանկարին. նկարի մը մէջ աչքիս զարկաւ մեր անմահ հերոս Բարգէն Սիւնին: Գացի եկայ, վերջապէս լաւ մը ստուգելէն վերջ որ զիս դիտող չկայ, նկարեցի քիչ մը գաղտնօրէն, որովհետեւ Հրանդ Շահրիկեանին զգուշացումը միշտ միտքս էր:

Ոչ ոք լուր ունէր որ այդ նկարին մէջ կը գտնուի անմահ Բարգէն Սիւնին, Դաշնակցական վեհ հսկան: Այս միակ նկարն է, որ ունինք արտասահմանի մէջ: Երբ դուրս ելանք, հարցուցի ֆոլիոնիս թէ պանֆաները ո՞ւր են, կ'ուզէի դրամ փոխել: Ըսաւ.- «Քիչ մը անդին պանֆ Օթօմանը կայ, մօտ է հոն երթանք», - ճիշդ ուզածս ալ այդ էր արդէն:

«Պանֆ Օթօման գրաւած է Դաշնակցական կոմիտէն»:

Այս պտոյտներու տեսն շատ զգոյշ էինք, հաւանական էր, որ մեր հտեւէն լրտեսներ կային մեզ հետապնդող:

### ՎԵՐՋԱՊԷՍ ԳՏԱՆՔ ՆԱԽԿԻՆ ՀՄԸՄ-ԱԿԱՆ ՄԸ՝ ԹՈՒՐԲԻՈՅ ՀԵԾԵԼԱՐՇԱԻԻ ԱԽՈՅԵԱՆ 1922ԻՆ

Որքան ուրախացաւ, երբ իմացաւ մեր ալ ՀՄԸՄական ըլլալը: Իրեն բացատրեցի որ ՀՄԸՄի Շրջանային Վարչութիւնը ձեռնարկած է ՀՄԸՄի յուշամատենան պատմութիւնը հրատարակել. այս նպատակով հաւաքելու վրայ ենք ՀՄԸՄի վերաբերեալ հին նկարներ:

- Շատ նկարներ ունիմ եւ ձեզի կու տամ, - ըսաւ:

Գիշեր մը Սարգիսին հետ գացինք գտանք զինքն էլ առինք նկարները: (ՀՄԸՄի 1958ի յուշամատենանին մէջ լոյս տեսած Պոլսոյ վերաբերեալ նկարները իմ բերածներս են):

### ՄԵՐ ԱՆՄԱՀ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐՈՒ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐՈՒՆ ԱՌՋԵԻ՝ 1948



Այցելեցինք Սկիւտարի հայոց գերեզմանատունը, ուր գտանք մեր անմահ բանաստեղծներուն շիրիմները: Յուզում, յետոյ սրտագին աղօթք մը մրմնջեցինք՝ իրենց լուսաւոր հոգիներուն ի հանգիստ:

ՄԵՐ ԱՆՄԱՀ ԲԱՆԱՍՏԵՂԾ  
ՄԻՍԱՔ ՄԵԾԱՐԵՆՑԻ

ՇԻՐԻՄԻՆ ԱՌՋԵԻ ՊՈԼԻՍ 1948

Չախէն հտեւը՝ Շահրիկեան եւ Զօպեան:  
Չախէն առջեւը՝ Վարդիվառ եւ Սարգիս:

Բոլոր պոլսահայերը, որոնց հանդիպեցանք, շատ ուրախացան մեզ տեսնելով, որովհետև առաջին անգամ էր արտասահմանէն եկած հայեր կը տեսնէին: Շատ զգոյշ էին իրենց հարցումներուն մէջ: Պոլսոյ բոլոր տեսարժան վայրերը պտտեցանք: Փողոցներէն անցնելու ատեն կը մտածէի, թէ այս փողոցներէն անցած են մեր վրիժառու հերոսները, արժանի պատիժով սատկեցնելու արիւնարբու գազանները եւ ազգադաւ դաւանանները: Որքան գաղտնի զէնքեր փոխադրեր էին այս փողոցներէն, առանց վախի եւ ինչ մեծ զոհողութեամբ: Սարգիսը եւ ես տխուր էինք, որովհետև մեր հեռաւոր պանծալի պատմութենէն եւ մօտաւոր տխուր օրերէն լաւապէս ճաշատեղեակ ըլլալով, իրաւ կ'ափսոսայինք, որ հայոց ճակատագիրը այսպէս դասաւորուած էր: Յայտնեցինք պոլսահայ բարեկամներուն, թէ կ'ուզէինք այցելել «Հիրրիէթ Տեքեսի», ուր արձանը կար ամենամեծ արիւնարբու գազանին: Գացինք. մարմարի վրայ արձանագրուած էր հետեւեալը.

թրքերէն այսպէս կը վերջանար.	թարգմանութիւնը
Սանա նէյ տիր պու հէլքէլ	Քեզի համար ոչինչ է այս շինութիւնը
Սանա նէյ տիր պու թիրպէ	Քեզի համար ոչինչ է այս յուշարձանը
Իսմին յէթիշիր պէ	Անունդ միայն բաւ է:
ԹԱԼԷԱԹ	

Մէկուկէս միլիոն հայերուն ջարդը գործադրող հրէշը... Միջազգային անարդար դատարանէն պրծած գազանը...



«Հիրրիէթ Տեքեսի»  
 Չախէն՝ Սարգիս, Շահրիկեան (պոլսահայ), Մանուէլ, պոլսահայ մը եւ վարդիվառ:

Կ'ԵՐԳԵՆՔ.  
 Թալէաթ փաշան փախաւ Պերլին,  
 Թէհլիրեանը հասաւ Ետին,  
 Չարկաւ ճակտէն, փոնց գետին,  
 Գիւնի լի'ց, ախպեր, գիւնի լի'ց,  
 Խմողաց անուշ, անուշ:



Բայց Հ.Յ. Դաշնակցութեան արդար դատաստանէն չէր կրնար պրծիլ, մահուան դատապարտուեցաւ եւ դատավճիռը գործադրեց դաշնակցական անմահ հերոս Սողոմոն Թեհլիրեան, Պերլինի փողոցներուն մէջ եւ երգեցինք...

Անմիջապէս մօտեցաւ մեզի Շահրիկեանը, «ինչ կ'ընէք, տղաք, շուտ մը ցրուեցէ՛ք, - ըսաւ,- գաղտնի ոստիկանները կը վիտան հոս: Հոս Թուրքիա է, Լիբանան չէ, որ ինքզինքնինդ այսպէս ազատ զգաք»: Այսպէս տարօրինակ պատահարներով վերջ կը գտնէր մեր այցելութիւնը Պոլիս, եւ 21 Հոկտեմբեր 1948ին՝ վերադարձ դէպի Պէյրութ:

## ԴԷՊԻ ԼԻԲԱՆԱՆ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԾԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ - ԱՆԳԱՐԱ

Վերադարձի նամբուն վրայ, ճիշդ կէս գիշերին, հասանք Անգարա, ուր 5 վայրկեան շոգեկառքը պիտի կենար կայարան: Պատուհանէն դուրս կը նայէինք. տեսանք՝ բանակային սպայ մը խուժեց մեր վակոնէն ներս, ետեւէն քարշ տալով ծրարներ շալկած քանի մը զինուորներ: Քենանն էր, զինուորական համազգեստով, այդ բանկոնը հագած՝ կը նմանէր հրամանատարի մը: Փաթթուեցանք: Ապա, Քենանը 125 ոսկին հանեց եւ ինծի տալով հազար անգամ շնորհակալութիւն յայտնեց: Այս տեսարանին ներկայ եղող մեր լիբանանցի բարեկամները ափ ի բերան մնացեր էին: Շատ դժուար բաժնուեցաւ Քենանը: Երբ շոգեկառքը շարժեցաւ, իջաւ վար, եւ երկար ատեն գամուած մնաց քարափին վրայ մինչեւ շոգեկառքին անհետանալը: Ես մէկ վայրկեան չէի կասկածած. անպայման պիտի բերէր դրամը:

Երկու օր վերջ հասանք Լիբանան:

## ԼԻԲԱՆԱՆ - ՍՈՒՐԻԱ ՄՐՑՈՒՄԸ ՊԵՅՐՈՒԹԻ ՄԷՋ 1949

Սուրիոյ այս կազմին մաս կը կազմէ Հալէպի հռչակաւոր Այրաննին, լաւագոյն սանթրահաֆը Սուրիոյ: Առաջին անգամ է որ իրարու դէմ կը խաղային: Շատ հետաքրքրական եւ բարձր թեմնիքով մրցում մը եղաւ: Մրցումի ընթացքին քանի անգամ ուզեցի հսկայ Այրաննին խաղի բերել եւ անցնիլ, անկարելի եղաւ, բերդի պէս կեցեր էր: Ինք կը խաղայ Հալէպի Վասպուրականէն, բաղկացած առաւելաբար մարաշցիներէ, որոնք հակադաշնակցական եւ հակաՀՄԸՄ են: ՀՄԸՄ Պէյրութ, երբեք չենք խաղած Վասպուրականի դէմ, հաւանական կոխներու առիթ չտալու համար:



ԿՐԹԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ ՎԱՐԴԻՎԱՌԻՆ ՀԵՏ ՁԵՆՈՆՈՒԵԼՈՒ ՊԱՀՈՒՆ  
 Աշէն՝ Օգնայեան (ՀՄՄ), Ժիրայր (Բագրամեան), Վարդիվառ  
 (ՀՄԸՄ), իրաւարարը, Հալէպի հռչակաւոր Այրաննին (Աբրահամ  
 Քէշիշեան) եւ միւսները:

Այս մրցումին գնդակը առած յառաջացայ: Երբ Սուրիոյ քարէին  
 մօտեցայ, ոտքիս զարկին ետեւէն, գետին ինկայ, իրաւարարը ֆաուլ



սուլեց Սուրիոյ դէմ: Ես պիտի  
 քաշէի, 30 մեթր կար հեռաւորու-  
 թիւնը կոլէն, նշան առի ուղղակի  
 աջ կողմի անկիւնէն եւ վերէն, ու  
 ամբողջ ուժովս քաշեցի փառաւոր  
 կոլ մը նշանակելով: Խաղը ըն-  
 թացաւ մեր տիրապետութեան  
 տակ եւ վերջացաւ Լիբանանի  
 յաղթանակով՝ 4-2: Երկու կոլերը  
 ես նշանակեցի:

ԼԻԲԱՆԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ  
 ԽՈՒՄԲԻՆ ՄԱՐԶԻԶԸ 1949  
 Հունգարացի մարզիչը՝ Հէր  
 Զինկըր, քովը՝ Վարդիվառ:

ԼԻՔԱՆԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ ՓՈՐՁ - ՄՐՑՈՒՄ  
ԹՐԻՓՈԼԻԻ ԽՈՒՄԲԻՆ ՀԵՏ 27 ՄԱՐՏ 1949



*Զախէն՝ Ստեփան,  
Մանուէլ, Վարդիվառ  
եւ Սարգիս:  
Մրցումէն առաջ՝  
ընկեր կիրակոս  
Թննուկեանին  
լուսանկարչական  
խանութին առջեւ:*



Հ.Մ.Ը.Մ. ԷՆ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՖՈՒԹՊՈԼԻՍՏՆԵՐԸ  
Զախէն՝ Շատարեան, Ստեփան, Վարդիվառ, Մանուէլ եւ Սարգիս:

ՎԵՐՋԱՊԷՍ ԼԻՔԱՆԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ ՈՒՆԵՑԱԻ  
ԻՐ ԼԱԻԱԳՈՅՆ ՄԱՐԶԻՉԸ՝ ԺՈՂԵՖ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ, 1950ԻՈ

Եղբայր ժողէֆ Նալպանտեան, 1940 թուականներու Լիբանանի ամենահռչակաւոր բերդապահը, 1945էն սկսեալ մաս կազմած ՀՄԸՄի: Նախ՝ իբր բերդապահը, ապա՝ մարզիչը, որ ՀՄԸՄը հասցուց տիտղոսներու գերագոյնին: Նոյն տարին Լիբանանի ախոյեան եւ բաժակակիր: Մարզիչի մասնագիտութիւնը կատարելագործեց 1950ին՝ Ֆրանսա:

Լիբանանի ֆետերասիոնը նկատի ունենալով եղբայր ժողէֆ Նալպանտեանին վերի յիշուած յատկութիւնները, իր վերադարձին անմիջապէս նշանակեց զինք Ազգային խումբի մարզիչ, որ մեծ պատիւ էր ՀՄԸՄի համար:

ԼԻԲԱՆԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԻՆ ՄԱՍ ԿԱԶՄԱԾ  
 ԽԱՂԱՑՈՂՆԵՐԸ ԻՄ ՕՐԵՐՈՒՄ,  
 ՈՐՈՆՑ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ ԽԱՂՑԱԾ ԵՄ 1942-1952

**ՏԵՂԱՑԻՆԵՐ**

Սալահ Ֆալահ  
 Լեպիպ Մեժտելեմի  
 Սելֆետտին  
 Էմիլ Նասասար  
 Մուհամմետ Ժարուտի  
 Քեմիլ Ըրտահի  
 Ժոզեֆ Ապու-ճատըր  
 Ժորժ Պիթար  
 Օսկար  
 Անտրե  
 Միթրի Ատըմ  
 Եուսիֆ Հանի  
 Իսքենտեր Արամունի  
 Ֆիլիպ Քեմիլ  
 Թուֆիք Թավիլ  
 Ժապրա  
 Ապոս  
 Էլի Հատտատ  
 Սահիուն

**ՀԱՅԵՐ**

Կարապետ Սաաթնեան «Սաաթնի»  
 Եղիշէ Մանուկեան  
 Ժիրայր Ուրֆալեան  
 Հանի Հայկ Կարմիրեան  
 Ժորժ Շատարեան  
 Ժոզեֆ Նալպանտեան  
 Յովհաննէս Նազարեան  
 Տիգրան Արապեան  
 Ստեփան Մելիքսեթեան  
 Մանուէլ Ալթունեան  
 Սարգիս Ազնաւորեան  
 Կարպիս Սարաֆեան  
 Երուանդ Էլլեզեան  
 Քաջայր  
 Օզնայեան  
 Պորոլոս  
 Աւետիս  
 Վարդիվառ Յովհաննէսեան

Անպայման ուրիշ խաղացողներ ալ կային, որոնք իմ յիշողութեանէս վրիպած են:

ԱՅԳ. ՇՐՋԱՆԻՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ԿՈՂՄԷ  
 ԾԱՆՁՑՈՒԱԾ ԼԱԻԱԳՈՅՆ ԵՒ ԱՆԱԶԱՌ ԻՐԱԽԱՐԱՐՆԵՐԸ՝  
 ՓԻԷՌ ԺԵՄԱՅԷԼ, ԱՏԻԼ ՍԻՏԱՆԻ, ՊԻԵՍԱԶԻ ԽԱԶԱՏՈՒՐ  
 ՊՈՅԱԺԵԱՆ ԵՒ ՑԱԻԱՎ:

ԼԻԲԱՆԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԻՆ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ  
1942 - 1949

ԵՒ ՀՄԸՄ-ԷՆ ՄԱՍՆԱԿՑՈՂՆԵՐԸ

- 26 Ապրիլ 1942 Լիբանան յաղթուեցաւ Սուրիայէն 2-1:  
Պէյրութի կազմին մէջ կար միայն 1 խաղացող ՀՄԸՄէն,  
Սուրիոյ կազմին մէջ կային՝ 6 խաղացողներ ՀՄԸՄէն:
- 5 Մարտ 1944 Լիբանանի դպրոցներու խառն խումբը յաղթեց Իրաքի դըպ-  
րոցներուն՝ 4-1: Պէյրութի խմբապետն էր՝ Վարդիվառ:
- 27 Մայիս 1945 Լիբանան յաղթուեցաւ Եուկոսլաւ Հայդուկ խումբէն՝ 6-1:  
ՀՄԸՄ-էն կային՝ Սաաթճի եւ Ժիրայր:
- 2 Յունիս 1946 Պէյրութ յաղթուեցաւ Ադեքսանդրիայէն՝ 2-0, Պէյրութ:  
2 Փետր. 1947 Պէյրութ յաղթեց Դամասկոսի՝ 5-1, Պէյրութ ՀՄԸՄէն կային՝  
Վարդիվառ, Մանուէլ եւ Սարգիս:
- 28 Մարտ 1947 Պէյրութ յաղթեց Դամասկոսի՝ 3-1, Դամասկոս:  
ՀՄԸՄէն կային՝ Եղիշ, Վարդիվառ, Մանուէլ եւ Սարգիս:
- 4 Մայիս 1947 Լիբանան յաղթուեցաւ Սուրիայէն՝ 4-2, Պէյրութ:  
ՀՄԸՄէն կային՝ Եղիշ եւ Վարդիվառ:
- 18 Մայիս 1947 Լիբանան յաղթեց Սուրիոյ՝ 1-0, Հալէպ:  
ՀՄԸՄէն կային՝ Վարդիվառ, Մանուէլ եւ Սարգիս:
- 25 Ապրիլ 1948 Պէյրութ յաղթեց Անգարայի՝ 4-1, Պէյրութ:  
ՀՄԸՄ-էն կային 5 հոգի՝ Տիգրան, Ծատարեւեան, Յովհանն-  
նէս, Մանուէլ եւ Ստեփան, որ 2 կոլ ըրաւ:
- 2 Մայիս 1948 Պէյրութ յաղթեց Անգարայի՝ 3-0, Պէյրութ:  
ՀՄԸՄէն կային 7 հոգի՝ Տիգրան, Յովհաննէս, Ծատարեւ-  
եան, Ստեփան, Մանուէլ, Վարդիվառ եւ Սարգիս, որ 2 կոլ  
ըրաւ:
- 9-էն 1-Հոկտ. 1948 Պէյրութ յաղթուեցաւ Անգարայէն 3 անգամ, Անգարա՝ 6-1,  
3-0, 8-0: ՀՄԸՄէն կային 6 հոգի՝ Տիգրան, Սարգիս, Ծատա-  
րեւեան, Մանուէլ, Վարդիվառ եւ Նալպանտեան պահեստի:
- 24 Ապրիլ 1949 Պէյրութ յաղթեց Հալէպի՝ 7-1, Պէյրութ: ՀՄԸՄէն կային 4  
հոգի՝ Վարդիվառ - Մանուէլ - Տիգրան - Սարգիս:
- 20 Մայիս 1949 Պէյրութ յաղթուեցաւ Հալէպէն՝ 1-0, Հալէպ: ՀՄԸՄէն կային  
4 հոգի՝ Վարդիվառ - Մանուէլ - Տիգրան - Սարգիս:

Ծանօթութիւն.- Լիբանանի Ազգային խումբը եւ Պէյրութի խումբը հոյներն էին՝  
անշուշտ այս շրջանին ուրիշ միջազգային մրցումներ ալ եղան:





ԳԼՈՒԽ 5

**ՀՄԸՄ-Ի ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲԵՐԸ 1937-1952**  
(ՄԵՐ ԱՊԱԳԱՅԻ ՄԻԱԿ ՅՈՅՍԸ)

**ՖՈՒԹՊՈԼԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՋՆԱԽՈՒՄԲ  
ՄՐՑԱՇԱՐՔԵՐ - ՇՐՋԱՊՏՈՅՏՆԵՐ - ԲԱՆԱԿՈՒՄՆԵՐ**





ՀՄԸՄ - 1945

**ՀՄԸՄ-Ի ՖՈՒԹՊՈԼԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲԵՐՈՒ  
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ**

1945ի ՀՄԸՄի Ա. խումբին ցնցումէն ետք, ուր մեր լաւագոյն խաղացողներէն վեց հոգի «Բագրամեան» գացին, մնացին մէջտեղ: Լաւ կազմակերպուած երկրորդական խումբեր չկային: Այդ ահարկու բացը գոցելու համար, ՀՄԸՄի Պէյրութի եւ Պուրն Համուտի վարչութիւնները շատ իմաստուն եւ շինիչ գաղափարը ունեցան յառաջացնելու ֆութպոլի կեդրոնական յանձնախումբ հետեւեալ կերպով.

Ժողէֆ Նալպանտեան - ՀՄԸՄի Ա. խումբի մարզիչ,

Վարդիվառ Յովհաննէսեան - ՀՄԸՄի Ա. խումբի խմբապետ,

Յովհաննէս Տէր Յարութիւնեան - Պուրն Համուտի ՀՄԸՄի վարչական եւ ֆութպոլի խումբի խմբապետ:

**ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ ԼԾՈՒԵՑԱԻ ԳՈՐԾԻ ՈՒՂԵՑՈՅՑ ՈՒՆԵՆԱԼՈՎ  
ՀՄԸՄ-Ի ԾՐԱԳԻՐ ԿԱՆՈՆԱԳԻՐԸ ՈՐՈՒՆ ՆՊԱՏԱԿՆ Է**

Պատրաստել ֆիզիքապէս տոկուն, իմացական եւ հոգեկան բարձր արժանիքի տէր հայեր եւ տիպար քաղաքացիներ՝ սորվեցնելով ըլլալ չարձալ եւ արի, ազգասէր եւ հայրենասէր, օրինապահ եւ կարգապահ, զարգացնելով պարտականութեան գիտակցութիւն, պատասխանատուութեան եւ պատուի զգացումները, համերաշխութեան եւ փոխադարձ օգնութեան ոգին, համակելով միտքն ու սիրտը մարզական ազնուագոյն ոգիով:

Սոյն յանձնախումբը ժողովի կանչեց գոյութիւն ունեցող խումբերու պատասխանատուները եւ որոշուեցաւ հետեւեալը.

Ա - Վերակազմակերպել գոյութիւն ունեցող խումբերը՝ ամուր հիմերու վրայ:

Բ - Նոր խումբեր յառաջացնել:

Գ - Իւրաքանչիւր խումբին նշանակել վարիչ-մարզիչ ՀՄԸՄի Ա. խումբէն:

Դ - Դասախօսութիւններու հրաւիրել բոլոր խաղացողները:

Ե - Մրցաշարքեր, ամառնային բանակումներ եւ շրջապտոյտներ կազմակերպել:

Երկու վարչութիւններու կողմէ գնահատանքով վաւերացուեցան վերի որոշումները եւ իրենց կողմէ մեզի վստահուած բացարձակ լիազօրութեամբ եւ խանդավառ եռանդով գործի լծուեցանք, ապագայի տիպար ՀՄԸՄական, մարզիկ, ֆութպոլիստ, պատրաստելու առաջադրանքներով եւ յոյսերով:

Ունեցանք տասնեակներով խումբեր Պէյրութի եւ Պուրն Համուտի

բոլոր շրջաններէն: Մեր այդ պատանի ապագացու խաղացողներուն ուրախութիւնը չափ չունէր տեսնելով զիրենք մարզող, դաստիարակող եւ իրենց վրայ գուրգուրացող ՀՄԸՄի Ա. խումբէն անուանի խաղացող մը:

Երկրորդական խումբերու մրցաշարքերը սկսան կազմակերպուիլ անթերի կերպով, ստեղծելով մեծ խանդավառութիւն: Մրցումներ տեղի կ'ունենան Քօրնիշ Նահրի վրայ՝ Ժեզուիթներու դաշտը եւ ԸՓԽԵի, ուր հարիւրաւոր համակիրներ եւ ֆութպոլի սիրահարներ ներկայ կ'ըլլային: Մրցաշարքի աւարտականը կը հովանաւորէր ՀՄԸՄի անուանի վեթերան ֆութպոլիստներէն մէկը՝ Սաաթին, Դամասկոսի Զաւէնը, յետագային՝ Եղիշը, եւ ուրիշներ: Յաղթական խումբը կ'առնէր բաժակը ընդհանուրի հունոաներու մէջէն:

Այսպէս՝ բաժակները մէկ - մէկ սկսան երթալ, յաղթողին ակումբէն ներս ստեղծելով աննկարագրելի խանդավառութիւն նոյն շրջանին մէջ:



ՀԱՅԱՇՆԻ ՄՈՒՐԱՏ ԽՈՒՄԲԸ ԱՆՈՅՆԱՆ 1946ԻՆ

ՀՄԸՄի Բ. խումբերու ասոյեան՝ «Մուրատ», կազմուած հաւատաւոր ՀՄԸՄականներէ. իրենց վարիչ-մարզիչն էր ՀՄԸՄի Ա. խումբէն՝ Անդրանիկ Գամարեան:

ԽՈՒՄԲԻՆ ԿԱԶՄԸ ձախէն ոտքի՝ Գրիգոր Ղազարեան, Գարեգին Պիչմենեան, Հայկազ Սողոմոնեան (խմբ.), Սարգիս Միսաբեան, Զաւէն Գալուստեան, Ճորճիկ Վարժապետեան, Անդրանիկ Գամարեան. ձախէն ծոած՝ Սարգիս Հայթայեան, Եդուարդ Թօփալեան եւ Յակոբ Արթինեան (բաժակով). առջեւը նստած՝ Կարապետ Գալֆայեան (բերդապահ):



1937ին ՀՄԸՄԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ «ՄՈՒՐԱՏ»  
ՄԱՅԻՍ 28Ի ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ ՆԱՀՐ ԷԼ ՔԵԼՊ

*Յակոբ Աշեան(1), Արմեն Աշեան(2), Արօ Աշեան(3), Լեւոն Եւ Արթին Հատիտեան(4-5), Մելիքոն (Բրոջս տղան)(6), Յովհաննէս Ժամկոչեան(7) (ՀՄԸՄԻ Սկաուտապետ), Զօհրապ Ժամկոչեան(8) Եւ միւսները:*



ՄՈՒՐԱՏ  
ՖՈՒԹՊՈԼԻ  
ԽՈՒՄԲԸ

*Զախէն ոսփի՝  
Յակոբ, Ներսէս  
Թեհիրեան,  
Պետիկ, Եղիշ  
(մարզիչ), Յովհ.  
Ժամկոչեան,  
մարզիկ մը,  
Յարութիւն  
Հատիտեան Եւ  
միւսները:*

## ԱԿՆԱՐԿ ՄԸ ՀՄԸՄ-Ի ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲԵՐՈՒ 1945

Պէյրուբէն եւ Պուրն համուտէն՝ «Բարգէն Սիւնի», «Խանասոր», «Շանք» եւ «Կամֆ»:

Սկաուտներու խումբը՝ «Մուրատ», «Հայրենիք», «Մայր Հայաստան»ի Ա. եւ Բ. խումբերը, «Նիկոլ Դուման» եւ «Եօթնեղբայրեան» խումբը:  
Կային նաեւ ուրիշ խումբեր:



ՀՄԸՄ-ի միջմասնաճիւղային խաղերու Բ. դասի ախոյեան՝  
Պուրն Համուտի խումբը՝ Հալէպ 1946:  
Աւարտական մրցումին լաղթելով Տեր-Ջօրի ՀՄԸՄի՞ն՝ 2-0:



ՀՄԸՄ - Ի Բ. ԽՈՒՄԲԵՐԸՆ ՄԵՐ ԱՊԱԳԱՅԻ ՖՈՒԹՊՈՒԼԻՍՏՆԵՐԸ 1949  
Զախէն՝ Գօգօ Պապոյեան, Ժիրայր Ատուրեան, Վահէ Մինասեան,  
Յարութիւն Մարկարոսեան եւ Օննիկ Պարսամեան:



Առջեւը՝ «Անդրանիկ».  
 ճախէն Ա. շարֆ՝  
 Նիկողոս Գալայնեան,  
 Պետրոս Վեֆիլեան եւ  
 Իսայիր Թալաթինեան:  
 Բ. շարֆ՝ Գէորգ Ոսկե-  
 րիչեան (Շամի), Յով-  
 հաննէս Թերզեան  
 (Խմբապետ), Գ. շարֆ՝  
 Գօգօ Պապոյեան, Ժի-  
 րայր Ատուրեան, Վա-  
 հէ Մինասեան, Յարու-  
 թիւն Մարկարոսեան  
 եւ Օննիկ  
 Պարսամեան:  
 Գ. շարֆ՝ Վարդիվառ  
 Յովհաննէսեան (խում-  
 բին վարիչ-մարզիչ):

ՀՄԸՄ-ի «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»-ի Ա. խումբը ժեզմոնիթներու դաշտը 1948:  
 Ծանօթ. - Յետագային «Մայր Հայաստան»-ի սոյն մարզիկներէն ուրբ խաղա-  
 ցողներ մաս կազմեցին ՀՄԸՄի Ա. խումբին:



«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»-ի ԺՈՒՆԻԻ ԴԱՇՏԸ 1949

Ջախէն աջ՝ Յովհաննէս Թերզեան, Յովսէփ Զիֆթլեան  
 (բերդապահ), Սարգիս Սարգիսեան, Նիկողոս Գալայնեան, Վահէ  
 Մինասեան, Նազարէթ Սահակեան, Պետրոս Վեֆիլեան, Ժիրայր  
 Ատուրեան, Գօգօ Պապոյեան, Օննիկ Պարսամեան, Գէորգ Ոսկերիչեան  
 (Շամի) եւ Յարութիւն Մարկարոսեան:



ՀՄԸՄ-Ի Բ. ԽՈՒՄԲԸ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» 1949

*Ջախեն՝ հոչակաւոր Եղիշը (Եկած է քաջալերելու խումբերը), Մարկարոսեան, Վահէ Մինասեան, Գէորգ (Շամի), Պետրոս, Ժիրայր Ասուրեան, Նիկողոս, Օննիկ, Թալաթինեան, Գօգօ Պապոյան, Անդրանիկ, Հովհաննէս Թերգեան (խմբապետ), Սարգիս Սարգիսեան եւ Վարդիվառ (խումբին վարիչ-մարզիչը):*



«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»-Ի ՈՒՐԻԾ ՄԷԿ ԿԱԶՄԸ 1949

*Ջախին ոտքի՝ Գէորգ Ոսկերիչեան, Գօգօ Պապոյեան, Յակոբ Պարիկեան, համակիր մը, Նազարէթ, Օննիկ, համակիր մը եւ Ապոլի:*  
*Ջախեն ծոած՝ Սարգիս Սարգիսեան, Գէորգ Տէր Յարութիւնեան, Նիկողոս, Յարութիւն Մարկարոսեան, Անդրանիկ, Վարդիվառ (վարիչ), Պետրոս եւ համակիր մը:*

ՀՄԸՄ-ի Բ. ԽՈՒՄԲԵՐՈՒ ԱԽՈՑԵԱՆ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» 1949  
ՅԱՂԹԱԿԱՆ ԲԱԺԱԿՈՎ ԵՒ ԻՐ ՀԱՄԱԿԻՐՆԵՐՈՎ ԵԿԱՐՆԵՐ



*Զախէն՝ Պարգել, Պետրոս,  
Յարուքիւն, Կարպիս  
եւ առջեւը՝ Վարդիվառ:*



*Վարդիվառ, Յովհաննէս,  
Պարգել:*



*Զախէն՝ Յովսէփ, Մարկա-  
րոսեան եւ Վարդգէս:*



*Եղիա, Վահէ  
եւ Վարդիվառ:*



*Նազարէթ եւ Վարդիվառ:*



*Մինաս Զիւրիւժեան,  
Վարդիվառ եւ Կարպիս:*

## «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»Ի ԲԱՆԱԿՈՒՄԸ ՇԹՈՐԱ ՏԱՆԱՅԷԼ

Ճէն 8 Սեպտեմբեր 1947, եռօրեայ բանակումի համար մեծ պատրաստութիւններով, ուտելիքի պաշարներով, վրաններով եւ անհուն ուրախութեամբ Նոր Մարաշէն ճամբայ ելանք դէպի Շթորա - Տանայէլ, «Մայր Հայաստանի» մօտիկ բարեկամները, բարի ճանապարհ մաղթելու եկած էին: Ա. խումբէն՝ Յովհաննէսն ու Սարգիսը, ինչպէս նաեւ անուանի մագիկներ՝ Հրաչ եւ Գեղամ Տատեան եղբայրները, որովհետեւ առաջին անգամ ըլլալով կը կազմակերպուէր նման բանակում մը: Օթոպիւսին մէջ կը թնդացնէին մեր յեղափոխական երգերը:

Պէյրուքէն Շթորա երկար ճամբան ինչպէս կտրեցինք եւ ինչպէս հասանք Տանայէլ՝ չգագցինք բնաւ: Առաւօտեան ժամը 9ին հասանք, ուր բանակած էին Պէյրուքի ՀՄԸՄի սկաուտները, որոնք մեծ ուրախութեամբ դիմաւորեցին մեզ եւ մեր վրանները առնելով իրենք լարեցին իրենց բանակավայրին կից:

Տանայէլի կալուածը, որ կը պատկանի Ֆրանսացի ժեզուիթներուն, անծայրածիր դաշտեր ունի, ցորենի, բանջարեղէնի, պտղատու ծառերու եւ մանաւանդ խաղողի այգեստաններ՝ օղի եւ գինի պատրաստելու: Այս դաշտերը շրջապատուած են հսկայ ծառերով, կեղտոնը կը գտնուի արւեստական շատ ընդարձակ լիւն մը, ուր լողալու համար մասնաւոր արտօնութիւն ձեռք ձգեցինք մեծաւորէն: Շատ գեղեցիկ եւ արդիական մեքենաներով սարքուած մեծ ագարակ մը կար, ուրկէ կը պարենաւորուէինք թարմ կաթով ու կարագով, պանիրով եւ լեպնիով, թուզով եւ խաղողով եւ ամէն տեսակ պտուղներով: «Ալաման» վարդան մեր խոհարարն էր, որուն ամէն մարդ կ'օգնէր, համով հոտով կերակուրներ եւ խորոված կը պատրաստէր:

Կիրակի կէսօրին, Սարգիսը Ազնաւորեանը՝ Ա. խումբէն, եկաւ եւ միացաւ մեզի:

## ՀՄԸՄ-Ի ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒՆ ԽԱՐՈՒԿԱՀԱՆ ԴԷՍԸ

Շրջակայ գիւղերէն, Շթորայէն եւ Թալապիայէն բազմաթիւ հայեր եկան ներկայ գտնուելու այս սկաուտական հանդէսին: Սկաուտները իրենց զանազան տեսակի խաղերով այնքան զուարնացուցին ներկաները, որոնք ինքնարուխ նուէրներով իրենց գնահատանքը յայտնեցին ՀՄԸՄի սկաուտապետին: «Մայր Հայաստան»ի տղաքը իրենց բաժինը բերին այս հանդէսին երգերով, արտասանութիւններով եւ Սարգիսեանի հաճելի պատմուածքներով:

Ամէն առտու կանուխէն կ'արթննայինք եւ այդ գեղեցիկ ծառուղիներու մէջէն կը վազէինք մինչեւ լիճին եզերքը, ուր բաւական մարզանք



ընել վերջ լաւ մը կը տաճնային, արդէն արեւն ալ ծագած կ'ըլլար, կը նետուէին լիճը ու պաղ ջուրին մէջ կը լողային: Ասկէ աւելի զուարթ եւ առողջ մթնոլորտ կարելի չէր երեւակայել: Տղաքը այսպէս ուրախ ու կայտառ վիճակի մէջ տեսնելով՝ ես կը մտածէի յաճախ նման պտոյտներ կամ բանակումներ կազմակերպելու մասին:

Երեկոյեան դէմ, սկառուները այս անգամ տպաւորիչ խարուկահանդէս մը կազմակերպեցին նորէն շատ յաջող եւ բազմաթիւ հանդիսատեսներու ներկայութեան: Այս հանդէսին ալ մեր խումբը իր մասնակցութիւնը բերաւ արտասանութիւններով եւ խմբային երգերով: Շատ ուրախ եւ յիշատակելի ժամանակ անցուցին: Երկուշաբթի առտու կանուխէն վերադարձանք Պէյրութ եւ ամէն մարդ իր գործին գնաց իրարու խոստանալով, որ նման պտոյտ-բանակում յաճախ պիտի կազմակերպենք:

**ՀՄԸՄ - «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԱՄԱՌՆԱՅԻՆ ՇՐՋԱՊՏՈՅՑ ԱԼԷՅՅ  
ՖՈՒԹՊՈԼԻ ՄՐՑՈՒՄ - 22 ՕԳՈՍՏՈՍ 1948  
ԲԱՆԱԿՈՒՄ 28 ԵՎ 29 ՕԳՈՍՏՈՍ 1948**

Կիրակի, 22 Օգոստոս 1948, ֆութպոլի մրցում ունեցանք Ալէյի դէմ: Ամառնային բոլոր մրցումներուն պէս, այս ալ շատ ուրախ եւ խանդավառ մթնոլորտի մէջ ընթացաւ, ամենուրեք արժանանալով բոլուն ծափահարութիւններու եւ «եախ'չ, ՀՄԸՄ» (կեցցէ՛, ՀՄԸՄ) բացազանչութիւններու:

Արդէն որոշած էինք յաջորդ շաբաթ բանակումի ելլել՝ Ալէյ: Ֆութպոլի խաղէն ետք գացինք բանակումի վայրն ալ որոշեցինք: Յաջորդ շաբաթ, երկօրեայ բանակումի համար անհրաժեշտ ուտելիքներով եւ քանի մը վրաններով բեռնաւորուած՝ ուրախ ու զուարթ երգելով օթոպիւս առինք եւ ելանք Ալէյ, «Մայր Հայաստան»ի Ա. եւ Բ. ի խաղացողները, խումբին շատ մօտիկ ընկերներով, նաեւ Սարգիս Ազնաւորեան եւ Մանուէլ Ալթունեան՝ ՀՄԸՄի Ա. խումբէն, միշտ միասին կ'ըլլային. անշուշտ ես ալ իբր՝ խումբին վարիչը: Հոս կ'ուզեմ արձանագրել երախտագիտական խօսքերս՝ Միսաք Աղա Ազիրեանին, որ պէտք եղած վրանները սիրայօժար տրամադրեց մեզի: Հասնելով Այն Ռըմմէն գիւղը, Ալէյէն անմիջապէս ետք, գեղեցիկ անտառի մը մէջ, սաղարթախիտ ծառերու շուէին տակ մեր վրանները լարեցինք: Հազիւ տեղաւորուած էինք, երբ յանկարծ վրայ հասաւ անտառին սեփականատէրը, եւ փորձեց մեզ վտարել: Առաջին առթիւ ընդդիմութիւն ցուցաբերեցինք, առարկելով թէ մարզիկ երիտասարդներ էինք: Չուզեց իմանալ եւ սպառնաց ժանտարմ կանչել մեզ բռնի դուրս նետել տալու համար: Ես ճանչցայ զինքը՝ շրջանի երեսփոխան՝ Շէյխ Սէլիմ Թալիու: Մօտեցայ եւ իրեն

յարգալիր շեշտով ըսի.- «Մենք ձեզ շատ լաւ կը ճանչնանք իբր ազնիւ մարդ, շրջանի երեսփոխանը եւ սիրուած բոլորէն: Անցեալ Կիրակի դուք հովանաւորեցիք մեր ֆուլթալի մրցումը Ալէյի խումբին դէմ՝ վերի դաշտը: Մենք «րիատի» (մարզիկ) երիտասարդներ ենք, եկած ենք ձեր հողին վրայ երկու օր իբր հիւր. եթէ կ'ընդունիք, կը կենանք, թէ ոչ՝ կ'երթանք եւ ձեր այս անհիւրընկալ վերաբերմունքը ամէնուն կը պատմենք»: Մարդը նայեցաւ մեզի, լաւ մը քննեց, համոզուեցաւ, եւ գլուխը շարժելով ըսաւ.- «Լաւ, այն ատեն մ'նացէք»: Մենք ալ մ'նացինք: Մարդը ազնիւ գտնուեցաւ, նոյնիսկ մեզի արտօնութիւն տուաւ իր տունէն էլեկտրականութիւն քաշելու: Մեր ուրախութեան չափ ու սահման չկար, ամէն մարդ խանդավառ գործի լծուեցաւ: Մանուէլը իբր պարենաւորումի պատասխանատու, խոհարարապետ նշանակեց «Ալաման» վարդանը, որ շատ համեղ կերակուրներ կը պատրաստէր, կը ճաշէինք ուրախ գուարթ երգելով եւ արտասանելով: Գիշերը պահակ կենալու դրութիւն մը հաստատեք էինք, հերթով՝ երկուֆական ժամ պահակ կը կենայինք: Պահակ կամ ոչ, Սարգիսեանը անպայման իր կատակի խաղերը ընելու էր: «Ալաման» վարդանի պահակութեան հերթն էր, Սարգիսեանը գլուխը փաթթոց մը կը փաթթէ, ծառերու տերեւներու մէջէն անճոռնի ձայներ հանելով կը մօտենայ վարդանին, որ վախէն կը պոռայ... վլվլուկ եւ իրարանցում, վրաններէն ամէն մարդ դուրս կ'ելլէ եւ... Սարգիսեանին խաղը մէջտեղ կ'ելլէ:

Առտու կանուխ իւրաքանչիւր խումբ իր վրանը մաքրեց-շտկեց: Միւս կողմէ, կերակուրը ատենին պէտք էր ըլլար՝ գիւղէն թարմ կաթ, պանիր, լեպնի եւ պտուղներ կը բերուէին, աղբիւրէն՝ պաղ ջուրը պէտք էր ապահովուէր. այս բոլորը կը պարտէին Մանուէլին, որուն անմիջական օգնականներն էին՝ Յովսէփը եւ վարդգէսը սեղան շտկելու. Գոգօ, Ժիրայր եւ Գեւորի մ'նացեալը կ'ընէին: Կէսօրուան ճաշին անակնկալ մը ըրաւ մեզի Պետրոս Վեֆիլեանը. հետը բերաւ Ապէլիասէն որսացած յիսունի չափ թռչունները, զորս խորովեցինք եւ ախորժակով կերանք:

Այսպէս ուրախ երկու օր բանակում մը անցուցինք, եւ նոր ու գեղեցիկ յիշատակներով, երկուշաբթի առտու կանուխէն վերադարձանք Պէյրուք:

Ահա թէ ինչպէս մեր երկրորդական խումբերուն վրայ կը գուրգուրայինք, սիրով յանձնառու կ'ըլլայինք այս բոլոր զոհողութեանց՝ ապագայի տիպար սերունդ մը պատրաստելու մտահոգութեամբ, որպէսզի իրենք ալ անուանի ֆուլթալիստներ ըլլալէն ետք, նոյնը ընէին իրենց կրտսեր եղբայրներուն համար:



ՀՄԸՄ - «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԱՄԱՌՆԱՅԻՆ ԵՐԶԱՊՏՈՅՑ ՄՐՑՈՒՄ ԱԼԷՅ

*Զախէն՝ Նիկողոս, Յովհաննէս, Անդրանիկ, Վարդիվառ, Յարութիւն, Ժիրայր, Տոբ. Միսաք Արզումանեան եւ Ահարոն:*



*Վարդիվառ եւ Պետրոս:*



*Նիկողոս, Պետրոս  
եւ Թալաթինեան:*

ՀՄԸՄ-Ի ԱՄԱՌՆԱՅԻՆ ԽՈՒՄԲԻՆ ՇՐՋԱՊՏՈՅՏԸ  
ԵՒ ՖՈՒԹՊՈԼԻ ՄՐՑՈՒՄԸ ԴԱՄԱՍԿՈՍ 1948

ՀՄԸՄի ամառնային խումբը կազմուած կ'ըլլար մեծ մասամբ մեր երկրորդական խումբերու խոստմնալից տարրերէն եւ քանի մը Ա. խումբի խաղացողներէն:

Այսպիսի կազմով մը շատ հետաքրքրական շրջապտոյտ մը կազմակերպեցինք դէպի Դամասկոս: Նման պտոյտներ 1946էն սկսեալ ամէն ամառ կը կազմակերպէինք. կ'ուզեմ հոս մանրամասնօրէն այս շրջապտոյտներու մասին խօսիլ:

ՀՄԸՄի ամառնային խումբը, իր մօտիկ բարեկամներով, Շաքաթ իրիկունը շոգեկառքը կ'առնէինք Քարանթինայի կայարանէն եւ կը հասնէինք Դամասկոս Կիրակի առտու, կտրելով 100 քիլոմէթր ճամբան տասներկու ժամէն, անցնելով Ալէյէն, Տահր էլ Պէյտարէն, Ըժտիթայէն, Զահլէէն, Ռայաֆէն մինչեւ Դամասկոս:

Ուղղակի կ'երթայինք ծածկուած շուկան նախանաշելու Դամասկոսի հոչակաւոր սահլէպը, յետոյ կ'երթայինք ՀՄԸՄի ակումբը: Դամասկոսի ՀՄԸՄի վարչականներէն կը տեղեկանայինք օրուան յայտագրին նաեւ դիմացի խումբին ուժին եւ վտանգաւոր խաղացողներու մասին:

Կէսօրուան ճաշին, ըստ սովորութեան, հիւրը կ'ըլլայինք մեզ հրաւիրող խումբին, Պարատա գետի գեղատեսիլ դալար ափերուն ճաշարաններէն մէկուն մէջ, Դամասկոսի համեղ խորովածը ուտելու եւ պաղ թանը խմելու (օղիւն արգիլուած էր): Կէսօրէ ետք նորէն գոց շուկան կ'երթայինք գնումներու եւ չէինք մոռնար ճաշակել Դամասկոսի արդարօրէն հոչակ վայելող պաղպաղակը: Կէսօրէ վերջ ժամը 4ին կը սկսէր մրցումը: Ընդհանրապէս սիրալիք մթնոլորտի մէջ կ'ընթանար խաղը եւ կը վերջանար նոյն ձեւով: Լաւ մուտք կ'ապահովէր մեզ հիւրընկալող խումբը, մեզ դարձեալ կը հրաւիրէին:

Իրիկունը նորէն շոգեկառքը կ'առնէինք, երկուշաբթի առտու կը հասնէինք Պէյրութ, ամէն մարդ կը վերադառնար իր գործին, պահելով անմոռանալի յիշատակներ այս շրջապտոյտէն: Ամառնային այս մրցումներուն մեծ թիւով Բ. խումբի խաղացողներ կը մասնակցէին: Իրենց պատկանած խումբերու մէջ, ՀՄԸՄի հիմալիչ ոգիով լաւ մը թրծուած եւ ֆուլթայլի մրցաշարքերու մէջ լաւ մը մարզուած, այսպէս կ'ամբողջացնէինք պատրաստութիւնը ՀՄԸՄի ապագայ սերունդի ֆուլթայլիստներուն: Այս ընթացքով վստահ էինք, որ ապագային, տարիքի բերմամբ, կամ որեւէ պատճառով Ա. խումբէն հեռացող խաղացողները պիտի փոխարինուէին վերոյիշեալ խաղացողներով:

Մեծ էր ժողով նալպանտեանի դերը այս երկրորդական խաղացողներու գտումի դերին մէջ, քիչ թէ շատ ձիրք ունեցողին անպայման առիթ կը տրուէր Ա. խումբէն քանի մը մրցում խաղալու:

Ամառնային նման շրջապտոյտ մրցում կը կազմակերպէինք,

ընդհանրապէս իւրաքանչիւր Կիրակի քաղաք մը երթալով, կը նախընտրէինք լեռնային օդասուն գիւղերը: Ֆուֆուլի մրցումներուն, երբ մեր խումբը դաշտ իջնէր, ամէն կողմէ ծափահարութիւններ եւ «Եախշ էրմէն, Եախշ ՀՄԸՄ» (կեցցեն հայերը, կեցցէ ՀՄԸՄ) կը պոռային: Ինչ մեծ հմայք ունէր ՀՄԸՄը Լիբանանի այս հեռաւոր գիւղերուն եւ քաղաքներուն մէջ: Ֆուֆուլի գեղեցիկ ցուցադրութիւն կ'ընէինք. յաճախ մրցումը կը վերջանար հաւասար արդիւնքով:

Եւ շատ կարեւորութիւն կու տայի այս մրցումներուն:

### ՇՐՈՐԱՅԻ «ԴԱՇՆԱԿԱԻԱՆ» ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՒՂԻՆ ՄԷՋ ՀՄԸՄ-Ի ՖՈՒԹՊՈՒԼԻՍՏՆԵՐՈՒ ԲԱՆԱԿՈՒՄ 18 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1948

Շրորայի այս հայկական գիւղը արդարօրէն եւ արժանիօրէն կոչուեցաւ ԴԱՇՆԱԿԱԻԱՆ, որովհետեւ գիւղի բնակիչները կամ դաշնակցական էին կամ ՀՄԸՄական, որոնք իրենց սեփական տունները ունէին, ամբողջ եղանակը անցնելու համար: Գիւղը ունէր իր պատուոյ բնակիչը՝ յանձին գրականագէտ Նիկոլ Աղբալեանի, որ կը վայելէր բոլորին անվերապահ եւ սրտագին յարգանքը:

Այս գեղեցիկ վայրը, լեռներու ստորոտին եւ Պէքաայի ընդարձակ հարթավայրի մուտքին վրայ, շրջապատուած էր խաղողի այգիներով եւ մեղրածոք պտուղ տուող թզենիներու եւ տեսակ տեսակ պտղատու ծառերու պարտէզներով:

Ամառը երեքէն չորս ամիս հայերը Պէյրութէն կու գային եւ այս գիւղը կ'անցընէին: Այս ամիսներուն, Կիրակի օրերը գիւղը կը վիժար հայերով. ամէն ընտանիք իր հիւրը կ'ունենար՝ Պէյրութէն եկած: Վայ որ հեռուէն հայ մը իյնար այդ գիւղը Կիրակի օր մը, զարմանալով պիտի զարմանար, լսելով ամէն տունէն յեղափոխական եւ ազգային երգեր, արտասանութիւններ, որոնք կը թնդացնէին մթնոլորտը, կարծես թէ ամբողջ գիւղը, ուրախ գուարթ խրախնանքի բանակատեղի մը ըլլար, ամէն մարդ կ'ուզէր զինքը ներս հրաւիրել գաւաթ մը գոնէ օղի առնելու եւ խորոված ուտելու:

Հարազատօրէն կը նկարագրեմ այս մթնոլորտը, որովհետեւ մենք ալ ծնողիքիս հետ քանի մը ամառ այս գիւղը անցուցած ենք:

Ուրեմն, մենք՝ ֆուֆուլիստներս ալ պէտք էր վայելէինք ԴԱՇՆԱԿԱԻԱՆԻ այս ուրախ եւ գեղեցիկ մթնոլորտը: 18 Սեպտեմբեր 1948, Շարաթ երեկոյեան հասանք գիւղ եւ յարմար տեղ մը վրանները լարեցինք, ելեկտրականութիւնը քաշեցինք ամենամօտ հայու մը տունէն: Տեղաւորուեցանք, ամէն ինչ շտկեցինք ՀՄԸՄի սկաուտի բժախընդրութեամբ:

Երեկոյեան ճաշի սեղանին շուրջը բոլորուեցանք, ամէն մարդ ուրախ էր, օդը զով, երկինքի աստղերը կը փայլէին: Սկսանք մեր աւանդական

նաշ-խնճոյքը միշտ մեր անմահ յեղափոխականներու երգերը թնդացը-  
նելով միևչեւ ուշ գիշեր:

Կէս գիշերին, անսպասելիօրէն հեռուէն մեղեդի մը լսեցինք. այնքան  
անուշ կը հասներ մեր ականջներուն, որ հմայուած մտիկ կ'ընէինք: Մէկը  
կ'երգէր հետեւելով երկրորդի մը նուագին: Գիշերուան այս լուսեան  
մէջէն կամաց կամաց անոնք մօտեցան, եւ երբ յստակօրէն լսեցինք երգը,  
«խորոտիկ, մորոտիկ իմ եարն ես, մէկ հատիկ ես խումար ես...  
դաշնակցական եղեր ես, եռագոյնը պարզեր ես, խորոտիկ»: Բոլորս ալ  
վրաններէն դուրս ցատկեցինք, եւ ո՞վ տեսնեմք, մեր ամենամտերիմ  
ընկերները՝ Տոպրին կ'երգէր եւ Պարգելը կը նուագէր իր մանտոլինով.  
Ի՛նչ մեծ անակնկալ էր: Վերստին սեղան դրինք եւ խնճոյքը վերսկսանք:

Յաջորդ առտու մեզի սուրբ բերաւ Տիկին Շահինեանը, նաեւ  
ուրիշներ, գիւղի դաշնակցական եւ ՀՄԸՄականներէն մեզի այցելութեան  
եկան՝ ձեռքերնին լեցուն, մէկը կաթ ու կարագ, միւսը՝ անուշ եւ պանիր,  
ուրիշ մը՝ զամբիղով թուզ ու խաղող, ուրիշ մը՝ թարմ հաց սանի վրայ  
եփած եւ այլն... Եկան մեզի բարի գալուստի:

Իսկապէս շատ զգացուեցանք հայու այս սիրալիր հիւրասիրութեանէն:

Նախանշէն ետք գացինք Այննարի տօնակատարութեան. Տաւուլ  
զուռնան վայելելէն եւ հարիսէն ալ համտեսելէն ետք՝ վերադարձանք:

Երեկոյեան՝ մեր վրաններուն առջեւ խարուկահանդէս մը սար-  
քեցինք: Եկած էին ՀՄԸՄի ֆուբպոլի սիրահարները: Շատ ուրախալի  
ժամանակ անցուցինք. Պարգելը իր մանտոլինով կ'ընկերակցէր  
մենքեզներուն եւ խմբերգներուն, իսկ Տոպրին իր զուարճալի կատակ-  
ներով կը զուարճացներ ներկաները:

Այսպէս՝ գեղեցիկ բնութիւն, մաքուր եւ զով օդ, ամէն կողմ  
հայութիւն: Դժուար եղաւ բաժնուիլը, Շարաթ, Կիրակի եւ Երկուշաբթի  
վայելելէ ետք Շքորայի Դաշնակաւանի բարիքները, վերադարձանք  
Պէյրուք:



#### ԲԱՆԱԿՈՒՄ

Պարգելը իր նուագարանով:

Պետրոս, Յովհաննէս, Գրիգոր,  
Վարդիվառ եւ Մելին:



«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ՈՒՐԻՇ ՄԷԿ ԲԱՆԱԿՈՒՄԸ՝ ՀԱՄՄԱՆԱ 1950:  
*Զախէն՝ նստած, Արմինէ, Յասմիկ, Վարդիվառ, Մարկարոսեան, հիւր  
 մը իր երկու փոքրիկներով, Վարդգէս եւ Վահէ: Ոտքի՝ Մանուէլ եւ  
 Յովսէփ:*



ՀՄԸՄ-ԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԵՏ ԼԻԲԱՆԱՆԻ ԳԵՂԵՑԻԿ ՎԱՅՐԵՐԸ  
*Ժագ, Վարդիվառ, Մանուէլ, Գօգօ, Լեւոն, Պարգեւ, Մելիֆոն, Ժիրայր  
 եւ Վարդիվառ:*

## ԱՄԱՌՆԱՅԻՆ ՊՏՈՅՏ ՊԷՅԹԷՏՏԻՆ ԵՒ ԱՅՆ ՊԱՐՈՒՔ 1949

3 Յուլիս, 1949: Լիբանանի լեռնային գեղատեսիլ եւ սփանջելի վայրերը դէպի Պէյթետտին եւ Պարուֆ: Պուրն Համուտէն ճամբայ ելանք, թնդացնելով ՀՄԸՄի քայլերգը՝ Յառաջ Նահատակ, հասանք Տամուր եւ այնտեղէն զովասուն ձորերու մէջէն բարձրացանք Տէյր էլ-Ամար, հմայիչ գիւղ մը՝ լիբանանեան կղմիներածածկ տուններով եւ իր գիւղական շուկայով: Շարունակեցինք եւ բարձրացանք պատմական պալատը Պէյթետտինի, որ կը գտնուի 800 մեթր բարձրութեան վրայ: Այս պալատէն է, որ էՄԻՐ ՊէՇԻՐ Բ. ՇԵՀԱՊ ղեկավարած է ամբողջ Լիբանանը փորձելով իր երկիրը պաշտպանել թրքական բռնատիրութեան դէմ: Պատմութիւնը կ'ապրի այս պալատին մէջ: Գլխաւոր մուտքէն անմիջապէս ետք, ձախին՝ դիւանատունն է, հանգստաւէտ բազմոցներով, յետոյ կու գայ բուն պալատը՝ իր սրահներով, յարկաբաժիններով եւ բաղնիքներով:

Ամէն քայլափոխին հիացումի պատճառ մը կը գտնէինք:



ԽՄԲԱՆԿԱՐ ՊԷՅԹԷՏՏԻՆԻ ՊԱԼԱՏԻՆ ԲԱԿԸ՝ 3 ՅՈՒԼԻՍ, 1949

Ջախէն ետեւի շարքը՝ Սարգիս Ազնաւորեան գիրկը Զօհրայ՝ պզտիկ եղբայրը, քովը՝ ընկեր մը, Փանոս Կրտաւեան, Յովսէփ, Հաճի, Վարդիվառ, Պարգեւ, Մանուէլ, Մինաս Թերզեան, Ապրաս Արթին եւ Մելքոն՝ քրոջս տղան: Առջեւը նստած՝ Յովհաննէս Թերզեան, Վարժապետեան եղբայրներ եւայլն:

Ապա ճամբան շարունակեցինք մինչեւ Պարուֆ՝ 1135 մեթր բարձրութեան վրայ: Տեղաւորուեցանք սրնարանը: Քառասուն հոգի էինք, եւ հարկ էր պատրաստել քառասուն տեսակ մէզէներ ու խորոված: Թոյլտրութեամբ մեզի ընկերակցող ՀՄԸՄի ատենապետ՝ եղբայր Անդրանիկ Երամեանին, ապապրեցինք ճաշ ներկիլէ եւ բոլորուեցանք ուտելիքներով ծանրաբեռնուող սեղաններուն շուրջ: Կը բաւէր տեսնել այս ուրախ երիտասարդութիւնը գեղեցիկ բնութեան մէջ, երկինք



հասնող ծառերու շուփին տակ, գետինը՝ չորս կողմերէն հոսող զուլայ ջուրերու առուակներուն ունկնդրելով, յետոյ ումպ առ ումպ խմուող անմահական օղին, մինչ այդ արդէն ծայր տուած էին հայկական գեղեցիկ մեղեդիները, որոնց կ'ընկերակցէին Պարգելը՝ իր մանտոլինով, Վարժապետեան եղբայրները՝ մին ջութակով, միւսը՝ աֆօրտիոնով. եւ վերջապէս մեր անմահ ֆետայիներու յեղափոխական երգերը, որոնք կը նպաստէին ստեղծելու այնպիսի խանդավառ ու ջերմ մթնոլորտ մը, այն աստիճան, որ իբր թամադա՝ ես ի վիճակի չէի անթերիօրէն կատարելու պաշտօնս, որովհետեւ անպակաս էին ինքնակոչ երգողները, եւ բաժականառ արտասանողները: Քիչ ետք հերթը եկաւ Տոպրիին, իր գուարնալի պատմութիւններուն կծիկը բանալու:

ՊԷՅԹԷՏՏԻՆ ԱՅՆ - ՊԱՐՈՒԻՔ 1949 ՀՄԸՄ-Ի ՖՈՒԹՊՈԼԻՍՏՆԵՐՈՒ ԽՐԱԽԾԱՆՔԸ ԻՐԵՆՑ ՄՏԵՐԻՍՆԵՐՈՎ



Հանին կը դիտէ Մելոնին  
ներկիլէ ծխելը:



Վարդիվառ ներկիլէով,  
ձորնիկ իր աֆօրտիոնով:



Յեղափոխական երգերով կը թնդացնենք մթնոլորտը:  
Զախէն՝ Վարդիվառ, Ագատ,  
Արթին Պուլտուգեան, Վարդգէս  
Պերպէրեան եւ Հանի Գամաֆեան:



Վարդիվառ եւ եղբայր  
Երամեան:



ՀՄԸՄի ֆուրյադիստ թէ մարզաւեր համակիր, ամէն մարդ ուրախ, զուարթ այս գեղեցիկ բնութեան մէջ եւ տարուած վարժապետեան եղբայրներու հմայիչ նուագէն, Գրիգորը իր ջութակով եւ Ճորճիկը իր աքօրտիոնով, անդին Պարգեւը իր մանտոլիոնով, իսկ մենք՝ մեր յեղափոխական խանդավառ եւ զմայլելի խմբերգներով կը թնդացնէինք մթնոլորտը:  
Այսպէս կ'անցընէինք ամառուան եղանակը:

*Աջէն՝ Մինաս Թերզեան, Յովհաննէս Թերզեան, Սարգիս Ազնաւորեան, օթոպիւսի վարիչ՝ Սարգիս, Վարդիվառ, Մելիօն, Ապրաս Արթին, Յովսէփ եւ ուրիշներ:*

ԼԻԲԱՆԱՆ ԱՅՆ  
ՊԱՐՈՒՔ 3 ՅՈՒԼԻՍ  
1949

Վարդիվառ՝ Լիբանանի այս բնութեան գեղեցկութենէն հմայւած, Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկներուն եւ համակիրներու այս ուրախ մթնոլորտէն գինովցած՝ երազներ կը հիւսէ Հ.Մ.Ը.Մ.ի ապագայի ֆուրյադիս եւ ֆուրյադիստներուն համար:



## ԼԻԹԱՆԻ ԳԵՏԻՆ ԵԶԵՐՔԸ 1949

Օգոստոս 1949: Ֆուլբյուրիստներս՝ Յովհաննէս Նազարեան, Յովհաննէս Թերզեան, Սարգիս Ազնաւորեան եւ ես նաեւ ՀՄԸՄի վարչական՝ Կրէկուար Մղսի-Աւետիքեան, իր երկու ընկերներով եւ մեր անբաժան երկու ընկերները՝ Պարգեւն ու Տոպրիւն: Հագիւ կէսօրուան մօտերն էր՝ հասանք Լիթանիի գետեզերքը:

Այսօր գեղեցիկ բնութիւն ուրիշ տեղ չի կրնար ըլլալ: Աստուած ստեղծեք էր Լիթանան, որ մարդիկ վայելեն իր գեղեցկութիւնը: Ամառուան այս տաքին, ջուրին եզերքը, հսկայ ծառերու շուրջին տակ վրանը լարեցիմք եւ անմիջապէս գետը նետուեցանք զովանալու այդ պաղ ջուրին մէջ: Լաւ մը զովանալէն եւ քիչ մը հանգչելէն ետք սկսանք կերակուրի պատրաստութեան եւ կամաց կամաց սկսանք համտեսել օղիով մէզէները, անդիէն Պարգեւը ձեռք առած էր իր մանտոլինը, եւ կ'ընկարակցէր մեր խանդավառ երգերուն:



### ԼԻԹԱՆԻ ԳԵՏԻՆ ԵԶԵՐՔԸ Օգոստոս 1949

Նկարներու մէջ՝ Կրէկուար Մղսի-Աւետիքեան իր երկու ընկերներով, Յովհաննէս Նազարեան, Յովհաննէս Թերզեան, Սարգիս Ազնաւորեան, Վարդիվառ Յովհաննէսեան: Ֆուլբյուրիստներ՝ Պարգեւ Տապանեան եւ Տոպրի:

Քիչ ետք նաևակ մը վարձեցինք և գետին հոսանքն ի վեր սկսանք թիավարել: Ինչ գեղեցիկ տեսարան՝ գետին եզերքի հսկայական ծառերէն երկինքը չէր տեսնուեր. յոգնած վերադարձանք, և անուշ բուն մը քաշեցինք, գետին ջուրերուն գլգլալէն և ծառերու տերեւներուն խշրտոցէն օրօրուած: Բայց Տոպրին մեզ հանգիստ չէր ձգեր. հանելիօրէն մեզ կը խանգարէր... կէսօրէ ետք գացինք ծով և նետուեցանք ջուրին մէջ: Այնքան մաքուր էր ջուրը, որ յատակին աւազները յստակօրէն կը տեսնուէին:

Առտուրնէ մինչեւ իրիկուն, այսպէս խանդավառ մթնոլորտի մէջ անցուցինք մեր ժամանակը: Ճամբայ ելլելէ առաջ խորհրդակցեցանք, յաջորդ կիրակիներուն նոր արշաւներ կազմակերպելու մասին: Այս պտոյտը առիթ տուաւ մեզի նոր ու անմոռանալի յիշատակներով նոխացնելու մեր ՀՄԸՄականի կեանքի այլոմը:

**«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»Ի Ա. ԵՒ Բ. ԽՈՒՄԲԵՐԸ՝ ԴԱՄԱՍԿՈՍ**

10 Սեպտեմբեր 1950ին, Դամասկոսի մէջ տեղի ունեցան ՀՄԸՄի Բ. խումբերու «Մայր Հայաստան»ի Ա. և Բ. կազմերուն մրցումները՝ ԷԼ ՆԻՏԷԼի Ա. և Բ. խումբերուն դէմ: Դաշտը լեցուած էր կոկիկ բազմութեամբ մը, որոնք առանց կենալու կը խանդավառէին իրենց խումբը: «Մայր Հայաստան»ի Բ. խումբը խաղաց օրուան առաջին մրցումը և իր շատ գեղեցիկ խաղարկութեամբ յաղթեց 3-0 արդիւնքով:



«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՄ.Ը.Մ.Ի ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲԵՐՈՒ ԱԽՈՅՅԱՆ  
 Զախէն ոտքի՝ Նալպանտեան, Գոգօ Պապոյեան, Օննիկ Պարսամեան, Պետրոս Վեֆիլեան, Գէորգ Ոսկերիչեան (Շամի), Ժիրայր Ատուրեան, Վահէ Մինասեան, Յովհաննէս Թերզեան (խմբապետ) և Վարդիվառ:  
 Մոսձ՝ Իսպիր Թալաթինեան, Յարութիւն Մարկարոսեան, Անդրանիկ և Նիկողոս Գալայնեան:

Երկրորդ մրցումը շատ անելի տա՛մ մթնոլորտի մը մէջ սկսաւ: Էլ Նիտելի յառաջապահ գիծը քանի մը վտանգաւոր իշուածքներ ունեցաւ, սակայն «Մայր Հայաստան»ի ժայռի պէս տոկուն պաշտպանողականը այնպիսի դիմադրութիւն մը ցուցաբերեց որ խեղճերը չկրցան այլեւս մօտենալ: Իսկ յառաջապահ գիծը, իր գեղեցիկ խաղարկութեամբ, ֆուլպոլի թափփի քանի մը ցուցադրութիւններէ ետք՝ շատ դիւրութեամբ 3 կոլեր նշանակելով ապահովեց յաղթանակը: Մեր երկու խմբապետները պատուոյ թրիպիւն ներկայացան եւ Էլ Նիտելի նախագահին ձեռքէն ստացան յաղթանակի բաժակները:

Ժողէֆ Նալպանտեան, իբր ՀՄԸՄի Ա. խումբի մարզիչ, ներկայ էր այս մրցումներուն՝ զատելու անոնց մէջէն լաւագոյն խաղացողները:

Շատ չանցած, ֆուլպոլի նոր եղանակին, «Մայր Հայաստան»ի ուրբ խաղացողներ արդէն մաս կը կազմէին ՀՄԸՄի Ա. խումբին:

Յարութիւն Մարկարոսեան, Օննիկ Պարսամեան, Գեորգ Ոսկերիչեան, Յովհաննէս Թերզեան, Պետրոս Վեֆիլեան, Ժիրայր Ասուրեան եւ Վահէ Մինասեան:

Ասոնցմէ մի քանիներ արդէն սկսեցին խաղալ Ա. խումբէն:

## 1951 «ՀԱՅՐԵՆԻՔ» ԿԸ ՀՌՁԱԿՈՒԻ

### ՀՄԸՄ-Ի ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲԵՐՈՒ ԱԽՈՅԵԱՆ

ՀՄԸՄի երկրորդական խումբերու ֆուլպոլի Կեդրոնական Յանձնախումբի կազմակերպած մրցաշարքը շատ մեծ խանդավառութիւն ստեղծեց խումբերու մօտ եւ իւրաքանչիւր մրցումին մեծ թիւով դաշտ եկան մրցակից խումբերու համակիրները եւ ֆուլպոլի սիրահարները: Շատ խրախուսիչ երեւոյթ էր մեզի համար տեսնել այս մատղաշ ֆուլպոլիստներուն յառաջդիմութիւնը տարուէ տարի, եւ նոյնիսկ մրցումէ մրցում... Ամէնուս համար յայտնութիւն եղաւ այս մրցաշարքին յաղթական խումբերէն՝ «Բարգէն Սիւնի»ն, որ անարտական մրցումը պիտի խաղար «Հայրենիք»ի դէմ: Այս մրցումին հրաւիրեցինք ՀՄԸՄի վարչականները, վեթերան ֆուլպոլիստները եւ հայ ժողովուրդը:

Մրցումը տեղի ունեցաւ 8 Յուլիս 1951ին, մարզական գեղեցիկ մթնոլորտի մը մէջ, երկու խումբերուն առիթ տալով ներդաշնակ խաղարկութիւն մը ցուցաբերելու: Բայց հետզհետէ «Հայրենիք» սկսաւ խաղին տիրապետել եւ իր գերակայութիւնը ցուցադրել շնորհիւ Լեւոն Ալթունեանի, որ իր սփանջելի խաղարկութեամբ քանի մը կոլեր նշանակեց «Բարգէն Սիւնի»ի բերդէն ներս, ներկաներուն անվերապահ հիացումին արժանալով: Խոստմնալից նոր տարր մըն էր, ֆուլպոլի մարզին մէջ քացառիկ յատկութիւններով օժտուած:

(Յետագային ան պիտի դառնար ՀՄԸՄի նշանաւոր Լեւոնը): Խաղը վերջացաւ արժանի յաղթանակովը «Հայրենիք»ին, որուն խմբապետը ստացաւ օրուան բաժակը՝ ընդհանուր ծափահարութեանց մէջ:

Ամենէն ուրախը «Հայրենիք»ի մարզիչն էր՝ Մանուէլ Ալթունեան, գացինք ու ջերմօրէն շնորհաւորեցինք զինք:

Ապա վարչականներ եւ ՀՄԸՄի վեթերան ֆութպոլիստներ եկան շնորհաւորեցին մեզ, ֆութպոլի Կեդրոնական Յանձնախումբը, այս շատ գնահատելի գործունէութեան համար: Իսկ մենք՝ այս մրցաշարքի վերջաւորութեան ՀՄԸՄի օգտակար գործ մը ըրած ըլլալու գոհունակութեամբ, իրար շնորհաւորեցինք «վարձեղ կատար» ըսելով:

ՀՄԸՄ-ի երկրորդական խումբերու ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ եւ ՀԱՅՐԵՆԻՔԻ ամառնային վերջին բանակումը Լիբանանի գեղատեսիլ լեռնային անտառներուն մէջ՝ ՊԻՔՖԱՅԱ, 1951:



### Յովհաննէս, Վարդիվառ եւ Մարկարոսեան:

Երկու խումբերու խաղացողներէն մէջտեղը՝ Վարդիվառ գլուխը փաթթոցով:

Այս բանակումէն վերջ նամբորդեցի Շուէտ, գործի բերումով վեց ամսուան համար: Յարութիւն Մարկարոսեանը սոյն նկարները դրկեց ինծի՝ Շուէտ, հետեւեալ սրտագին գրութեամբ.

Սիրելի՛ եղբայր Վարդիվառ,

Ես էեզ շատ լաւ կը ճանչնամ, պզտիկուց միասին մեծցած, հմուտ եմ էու բոլոր զգացումներուդ: Դուն էու վերջին օրերդ մեզի հետ միասին անցուցիր, ընկերներուդ սէրը աւելի պատուեցիր: Մենք ուրախ ենք այն անմոռանալի յիշատակներուն համար:

Յարութիւն Մարկարոսեան



Մարկարոսեան,  
Վարդիվառ եւ  
Սարգիսեան:

ՀՄԸՄԻ Բ. ԽՈՒՄԲԵՐՈՒ ԲԱԺԱԿԻ ՄՐՑԱՇԱՐՔ 30 ՅՈՒՆԻՍ 1946  
 «ԽՐԱԽՈՒՍԻՉ ՕՐՈՒՆԱԿ ՄԸ ՄԷԿ ՕՐՈՒԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐԷՆ»  
 D. P. H. B. - Ի ԵՒ ԺԵՁՈՒԹՆԵՐՈՒ ԴԱՇՏԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Ազատամարտ Ա. —————	Կամֆ
Մայր Հայաստան Ա. —————	Շանթ
Սկառուտներ Բ. —————	Համազասպ Բ.
Ազատամարտ Բ. —————	Խանասոր
Մայր հայաստան Բ. —————	Քրիստափոր Բ.
Սկառուտներ Ա. —————	Բարգէն Սիւնի
Համազասպ Ա. —————	Կայծ
Մուրատ —————	Քրիստափոր

**ԻՄ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՍ**

ԵՍ՝ ՀՄԸՄ-ԱԿԱՆ ՄԱՐԶԻԿ -ՖՈՒԹՊՈՒԼԻՍՏ, ՎԱՐԴԻՎԱՌ  
 ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ,  
 ՀՄԸՄ-Ի Բ. ԽՈՒՄԲԵՐՈՒ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ  
 ԱՆԴԱՄ, ՀՄԸՄ-Ի Ա. ԽՈՒՄԲԻ ԽՄԲԱՊԵՏ,

**ԿԸ ՎԿԱՅԵՄ...**

Արդարօրէն եւ արժանիօրէն, թէ ՀՄԸՄի երկրորդական խումբերը, 1945էն սկսեալ, լուրջ ուշադրութեան, տեւական հսկողութեան եւ եղբայրական գուրգուրանքի արժանացան, Կեդրոնական Յանձնախումբի անդամներուն եւ անոնց յառաջացուցած վարիչ-մարզիչներու կողմէ:

Յիշեալ յանձնախումբի հետեւողական եւ անհուն ջանքերուն պտուղները կը քաղէինք այսօր, իր կազմակերպած մրցաշարքերու, դասախօսութիւններու, շրջապտոյտներու եւ ամառնային բանակումներու շնորհիւ:

ԱՅՍՕՐ, ՅՈՒԼԻՍ 1951, ՄԵՐ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲԵՐԷՆ  
 ՏԱՍՆԵԱԿԷ ԱԻԵԼԻ ԽԱՂԱՅՈՂՆԵՐ ՄԱՍ ԿԸ ՎԱՋՄԵՆ  
 ՀՄԸՄԻ Ա. ԽՈՒՄԲԻՆ







ԳԼՈՒԽ 6

1955-ԻՆ ԱՄԵՐԻԿԱ ՈՏՔԻՍ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԸ  
ՏԱՍԸ ԱՄԻՍ ՄՆԱՑԻ ՄԻՆՉԵՒ ԱՊԱՔԻՆՈՒՄ  
ԿԵՑՈՒԹԵԱՆՍ ԱՄՓՈՓ ՅՈՒՇԵՐԸ



## 1952ԷՆ ԵՏՔ ՈՏՔԻՍ ՎԻՃԱԿԸ ԿԸ ԾԱՆՐԱՆԱՅ

Ֆուֆուպուլիստի մը ասպարէզին մէջ ամէնէն բեղուն ու կայտառ շրջանը կը հանդիսանայ 18էն 28 տարեկանը (*En pleine forme*), որուն ընթացքին ֆիզիքական տեսակետով շատ լաւ կազմուած կ'ըլլայ, մինչ 12 տարեկանին է, որ յայտնի կ'ըլլայ թէ պատանին ձիւրք ունի՞ թէ ոչ ֆուֆուպուլի մարզին մէջ:

Եւ ահա ֆիզիքայէս շատ լաւ կազմուելէ եւ ֆուֆուպուլի թեքնիքին գագաթնակէտին հասնելէ վերջ է որ նակատագիրը հարուածեց զիս եւ 26 տարեկանիս դադրեցայ ֆուֆուպուլ խաղալէ: Շատ դժուար էր ինծի համար այսպէս մէկ օրէն միւսը զրկուիլ ֆուֆուպուլէն, որ պատանեկութենէս մինչեւ հիմա եղած է պաշտամունքիս առարկան ու նաեւ առանցքը իմ ամէնօրեայ զբաղումներուս: Հոգեկան տառապանքս կը ծանրանար անոր համար, որ ֆուֆուպուլի թեքնիքս կատարելագործած էի Շուէտ, ֆուֆուպուլի առաջնակարգ խումբի մը մէջ, լուրջ հսկողութեանը տակ մեծանուն մարզիչի մը: Կը ցաւէի անոր համար, որ այս բոլորը պիտի չկարենայի ալլելս ի սպաս դնել ՀՄԸՄի գալիք յաղթանակներուն, որով ընդմիջտ պիտի զրկուէի այդ յաղթանակներուն անփոխարինելի հոգեկան ֆաղցր վայելքէն:

Ոտքիս արկածին հետեւանով բաւական երկար ատեն անկողնին ծառայելէ ետք, երբ ոտքի ելայ եւ սկսայ գործիս երթալ, շուտով անդրադարձայ, թէ մէջս կը պակսէր բան մը. անկարելի դարձած էր ինծի համար կեանքը՝ առանց որեւէ գործունէութեան ՀՄԸՄէն ներս: Անպայման բան մը ընելու էի եւ գործ չէր պակսեր մարզական-ընկերային գետնի վրայ... 1953ին մաս կազմեցի Պէյրութի ՀՄԸՄի վարչութեան, գործօն մասնակցութիւնս բերելու համար, մարզական որեւէ նիւղի մէջ, մասնաւորաբար՝ ֆուֆուպուլի երկրորդական խումբերու կազմակերպչական աշխատանքներուն: Այս առաջադրութեամբ գործի լծուեցայ: Կազմակերպեցինք մրցաշարքեր ներկայ խումբերու միջեւ, դասախօսական ժողովներ՝ ՀՄԸՄի եւ ֆուֆուպուլի վերաբերեալ: Երկրորդական խումբերը սկսան աշխուժանալ եւ բազմանալ: Այս խումբերուն ժողովներուն եւ փորձերուն յանախ ներկայ կ'ըլլայի:

Բայց ափսոս, պէտք է խոստովանիմ որ կտրուած ոտքիս ցաւը օր ըստ օրէ աւելի կը սաստկանար, ստիպողական դարձնելով վերջնական ու ամբողջական դարմանումը:

## ԳԻՊՈՒԱԾԻՆ ՏՆՕՐԻՆՈՒՄԸ

### ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՄԷՋ ՀԱՄԲԱԻԱՒՈՐ ՈՍԿՐԱԳԷՏ ՏՈՔԹՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՔԵՔԼԻԿԵԱՆ ՊԷՅՐՈՒԹ ԿԸ ԺԱՄԱՆԷ 1954Ի ԱՄԱՌԸ

Բախտի բերումով իմացանք, որ Պէյրուք այցելութեան եկած էր Տոքթ. Քեֆլիկեան, բնիկ հանրացի, որ Միացեալ Նահանգներու մէջ իբր ոսկորի մասնագէտ, մեծ հռչակի էր տիրացած: Ընկեր Տոքթ. Կարօ Զալեանի հետ, որ նմանապէս հանրացի է, ներկայացայ Տոքթ. Քեֆլիկեանին, եւ իրեն պատմեցի թէ ինչ պարագաներու մէջ եւ երբ պատահած էր ոտփսարկածը, ցոյց տալով բոլոր ուստիօ նկարները: Բժիշկը շատ ուշադրութեամբ նայեցաւ անոնց, քանի մը անգամ գլուխը շարժեց, ապա ոտփս լաւ մը քննելէ ետք ըսաւ. - «Ափսոս, շատ ուշացեր ես: Ոտփոյ վնասուած ոսկորները արդէն փտելու սկսած են: Որեւէ յապաղում կրնայ անդարմանելի հետեւանքներ ունենալ: Եթէ օրին եկած ըլլայիր քուս, թեթեւ գործողութեամբ կը բուժէի ոտփո եւ ամիսէ մը կրնայիր ֆութպոլդ խաղալ: Նման պարագաներ շատ պատահած են ամերիկացի ֆութպոլիստներու»:

### ՏՐՈՒԱԾ ԷՐ ԱՆԳՈՒԹ ՎՃԻՌԸ

Վերջին յոյսս ալ ի դերեւ ելաւ:

Արդէն, արկածէն ետք, երբ փոխադրուեցայ Ամերիկեան հիւանդանոց, Տոքթ. Երուանդ ձիտեհեանը, որ նմանապէս ոսկորագէտ է, ուշադրութեամբ քննելէն ետք ոտփս ուստիօ նկարները, յայտարարած էր թէ անհրաժեշտ էր գործողութիւն մը, Ամերիկայի մէջ կամ Եւրոպա: Այդ օրերուն տակաւին յոյս ունէի որ գործողութենէն ետք կրնայի ֆութպոլ խաղալ:

Արդարեւ, իմացեր էի, թէ համաշխարհային հռչակի տիրացած՝ հունգարացի ֆութպոլիստ Փիւշքաշ, 1954 ին Զուիցբերիոյ մէջ կայացած «Մոնտիալ»ի մրցումի մը ընթացքին ճիշդ ինձի նման վիրաւորուեր էր ոտփէն, եւ թէ արկածէն անմիջապէս ետք անհրաժեշտ գործողութեան ենթարկուելէ երկու շաբաթ ետք՝ վերսկսած էր խաղալ:

Իսկ հիմա, ոտփս արկածէն երկու տարիէն աւելի անցեր էր եւ անդարմանելիօրէն աւերը գործուած:

Շատ լուրջ կացութիւն էր: Ուրիշ ճար չկար, պէտք էր երթայի եւ ձերբազատուէի այս մտալլկիչ տաղտուկէն աւելի ծանրակշիռ հետեւանքներուն առաջին առնելու նպատակով: Այսպէս, ՀՄԸՄի շատ համեստ

նիւթական աջակցութեամբ, իմ կողմէ նիւթական շատ մեծ դժուարութիւններով բոլոր պատրաստութիւններս տեսայ, որպէսզի անպայման տարուայ վերջը կարենայի եամբայելլել:

Այս տենդագին պատրաստութեանց դժուարին օրերուն, Յարութիւն Մարկարոսեան («Մայր Հայստան»էն, ՀՄԸՄի Ա.խումբ անցած ֆուլպոլիստ, որ մտերիմ ընկերս էր) մեծապէս օգտակար եղաւ ինձի, իր անձնական գործը ձգած՝ հետս ամէն տեղ վագեց. Ֆրանսայի եւ Ամերիկայի համար մուտքի վիզաներ, եւ եամբորդութեան տոմսակներ ապահովելու նպատակով:

## ԲԱԶՈՒՄ ԷՒՆ ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Դժուարագոյնը կը հանդիսանար գործատեղիիս արտօնութիւնը:

Մեր պետական բժիշկը պէտք էր յայտարարէր, թէ նման գործողութիւն մը կարելի չէր ընել Լիբանանի մէջ: Հակառակ պարագային, ստիպուած պիտի ըլլայի արձակուրդի երթալ անորոշ ժամանակով, որուն իբր հետեւանք պիտի գրկուէի ամսաթոշակներէս: Հոս է, որ թանկագին ընկերս՝ Վարդիվառ Տէր Գալուստեան, ընկերակցութեամբ Սին էլ Ֆիլի սիրուած դեկալար եւ մեծ հայասէր Տոքթ. Սելիմ Հայկի, միջամտեց Հանրային Առողջապահութեան նախարարութեան մօտ, եւ բերաւ անհրաժեշտ պաշտօնական արտօնագիրը, որով կը թոյլատրուէր ինձի օրինաւոր պայմաններու մէջ երթալ Ամերիկա ոտքիս գործողութեան համար եւ մնալ մինչեւ ապափնում: Այլեւս եամբան բաց էր առջեւս...

Պարտք կը զգամ հոս երախտագիտական խօսքս արձանագրելու Տոքթոր Սելիմ Հայկի, իբրեւ ազնիւ եւ հայասէր լիբանանցի, որ իբր Լիբանանի Առողջապահական Նախարարութեան Ընդհանուր Տնօրէն, միշտ օգտակար եղած է մեր ֆուլպոլիստներուն վիրաւորուելուն պարագային: Երբ դիմած եմ իրեն, սիրով ընդունած է մեզ եւ պէտք եղածը տնօրինած է, դեղորայքի կամ հիւանդանոց կեցութեան պարագային:

## ՈՂՋԵՐԹԻ ԵՐԵԿՈՅ

15 Դեկտեմբեր 1954: Եղբայր Յակոբ Խուպէսէրեան՝ ՀՄԸՄի Շրջանային Վարչութեան անդամ եւ շատ մօտիկ ֆուլպոլիստներուն, գեղեցիկ գաղափարն էր ունեցած ողջերթի ընդունելութիւն մը սարքելու իր բնակարանին մէջ, ուր հրաւիրուած էին հին եւ նոր ֆուլպոլիստները, մարզիչ եղբայր Ժոզէֆ Նալպանտեանը նաեւ Տիգրան Ոսկունին, «Ազդակ» օրաթերթի խմբագիրը եւ ուրիշներ: Ճոխ պիւնֆէի մը շուրջը բոլորուած, բաժակները վեր, ողջերթի սրտագին մաղթանքներ ըրին ոտքիս կատարեալ ապափնման համար: Երթալով մթնոլորտը աւելի

ջերմացաւ եւ ծայր տուին խմբերգներ, մեներգներ եւ արտասանութիւններ: Ֆուլթպոլիստները առատ պատմելիքներ ունէին՝ քաղաքացիական պատերազմի մեր սեփական մարտիմներու եւ փառապանծ յաղթանակներու կապացութեամբ:

Սարգիս Սարգիսեանը՝ պատմելու մէջ վարպետ՝ ներշնչուելով այս խանդավառ մթնոլորտէն, սկսաւ պատմել դէպքեր, հանելի ձեւով, ընդհանրապէս առնուած մեր ֆուլթպոլի իրական կեանքէն: Տիգրանը քանի մը անեքստներ պատմեց բանտի մեր կեանքէն, այնքան խնդրեց ընելիք էր, որ հագիւ ինքզինքնիս կը բռնէին գետին չիյնալու համար: Բանտի կեանքը նաշակած անձերէն երեք հոգիներ ներկայ էին՝ Տիգրան, Սարգիս Ազնաւորեան եւ ես:

Ժամանակը անզգալաբար կ'անցնէր: Մերք ընդ մերք իրականութեան կը վերադառնայի, յիշելով թէ քանի մը օրէն պիտի մեկնէի եւ բաժնուէի այս ընկերական հարազատ ու սիրալիր մթնոլորտէն: Ու տխրութիւն մը կը պատէր զիս երեւակայելով բաժանումի պահը: Սրտիս վրայ տեսակ մը ծանրութիւն կը ննշէր: Կ'ուզէի հոգեւին թեթեւնալ... Եւ հասաւ առաջին բաժանումի պահը՝ երբ յուզումներու մէջ ողջագուրվեցայ իմ անգին ընկերներուս հետ:

18 Դեկտեմբեր 1954ին նաւը առի դէպի Ամերիկա...



ՈՂՋԵՐԹԻ ԵՒ ԲԱԺԱՆՈՒՄԻ ՅՈՒՋԻՉ ԵՐԵԿՈՅԻՆ 15 ԴԵԿՏ. 1954  
ՆԱԽԿԻՆ ԽԱՂՈՆԿԵՐՆԵՐՈՒՄ ՀԵՏ  
Ձախէն՝ Յովհաննէս, Մանուէլ, Նալպանտեան, Վարդիվառ եւ Տիգրան:



**ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ՖՈՒԹՊՈԼԻՍՏՆԵՐՈՒՆ ՀԵՏ**

*Ձախէն ոտքի՝ Տիգրան Արապեան, Յարութիւն Շիրիկեան, Օճնիկ Պարսամեան, Յարութիւն Մարկարոսեան, Ոսկունքի, Ժոզէֆ Նալպանտեան, Սարգիս Ազնաւորեան, Յովհաննէս Նազարեան, Յակոբ Խուպեսերեան եւ Սարգիս Սարգիսեան:*

*Ձախէն ծոած՝ Յովհաննէս Թերզեան, Մանուէլ Ալթունեան, Վարդիվառ Յովհաննէսեան, Պետրոս Վեֆիլեան եւ Լեւոն Ալթունեան:*



ՎԱՐԴԻՎԱՌ  
ԽՆԴԱԼԷՆ ԿԸ  
ՃԱԹԻ  
ՊԱՏՄԵԼՈՒ  
ԱՏԵՆ, ԲՈՎԸ՝  
ՆԱԼՊԱՆՏԵԱՆ,  
ԽՈՒՊԵՍԵՐԵԱՆ  
ԵՒ ՄԻԻՍ  
ՏՂԱՔԸ:  
*Այնքան  
խնդալիք  
յիշատակներ  
կան իրար  
պատմելու...*



Լրջօրէն եղբայր ժողէֆ Նալպանտեանին ուշադրութեան կը յանձնեմ ֆութպոլի Ա. Խումբին ճակատագիրը մաղթելով՝ նորէն յաղթանակներ եւ ախոյեանական տիտղոսներ: Ուշադրութեամբ կը հետեւին՝ եղբայր Յակոբ Խուպեսերեան, Սարգիս Սարգիսեան եւ Յարութիւն Շիրիկեան:

## 18 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1954 – ՆԱԻԸ ԱՌԻ ԴԷՊԻ ԱՄԵՐԻԿԱ

Մարդուս կեանքին մէջ ամենադժուար բանը՝ սիրելիներէ եւ հարազատներէ բաժանումն է եղեր: Ահա, այս վերջին երեք տարիներու ընթացքին, երկրորդ անգամն էր որ երկար ժամանակի համար ընտանեկան յարկէն կը հեռանայի: Առաջին անգամ գացեր էի Շուէտ, ուր մնացի հինգ ամիս: Եւ հիմա, դէպի Ամերիկա՝ անորոշ ժամանակով: Շատ դժուար եղաւ բաժանումս ձագուկէս՝ Շահէէն, Յասմիկէն՝ յղի վիճակով, նաեւ հարազատներէս եւ ընկերներէս, որոնք եկեր էին նաւահանգիստ ինձի բարի ճանապարհ մաղթելու: «Իսկէնտերուն» նաւով կը ճամբորդէի: Պէյրութի նաւահանգիստէն հեռանալէ ետք, ծովուն բացերը հասնելով, Լիբանանի լեռները հագիւ կը տեսնուէին: Քաշուեցայ խուցիս մէջ, ապրումներուս եւ տպաւորութիւններուս հետ առանձնանալու համար: Աչքիս առջեւ կը տողանցէին նաւահանգիստ բարի ճանապարհ մաղթելու եկած սիրելի դէմքերը: Իրենց ձայները կ'արձագանգէին սրտիս մէջ, մինչ նաւը կը սուրբար հեռանալով Լիբանանէն:



Մովը փոքորկալից եղաւ Ադեֆսանդրիայէն անդին մինչեւ Մարսէյ:  
23 Դեկտեմբեր 1954. հասայ Փարիզ, ուր Մելիոն Պետրոսեան  
ֆեոիենցս տունը իջեւանեցայ: Շատ սիրով ընդունեցին, առաջին  
անգամ էր որ կը տեսնուէիս:

Քեոիս ունէր երկու մանչեր՝ Վահան եւ Ժագօ, եւ աղջիկ մը՝ Շուշան:  
Տեսութեան եկան նաեւ ֆեոիիս երկու փոքրերը՝ Ադաւնի եւ Մարիամ, նաեւ  
մեր հայրենակիցը՝ Յովնան: Անուշ ֆեոկիկն շատ լաւ է, սիրալիր, համեղ  
կերակուրներ պատրաստեց ամէն օր: Պատմեց որ 1928ին, Պէյրութ մեր  
տունը մնացեր է ֆանի մը օրով, գալէ առաջ Ֆրանսա, ուր պիտի ամուս-  
նանար ֆեոիիս հետ:

Գտայ նաեւ Պէյրութէն ինծի ծանօթ Սերոբը, որուն հետ երկարօրէն  
խօսեցանք Լիբանանէն, ՀՄԸՄէն եւ այլն: Քանի մը օրերը, որոնք Փարիզ  
մնացի, հարազատներու մօտ շատ լաւ անմոռանալի յիշատակներով  
անցուցի:

Le Havre նաւահանգիստէն առի հսկայ նաւը, եւ տեղաւորուեցայ  
ինծի յատկացուած սենեակը: Նաւը կարծես ֆաղաֆ մըն էր ինքնին՝ իր  
սրճարաններով, ճաշարաններով, սինեմայի սրահներով եւ մինչեւ իսկ՝  
թատերասրահով մը: Սեղանիս վրայ ամէն օր կը դրուէր օրուան թեր-  
թը: Աշխարհի մեծագոյն նաւն էր, ութսուներկու հազար թօն, հազար-  
հինգհարիւր գործաւորներ, պաշտօնեաներ եւ նաւաստիներ ունէր, ա-  
նունը՝ «Քուին Էլիզապէթ»: Երկու հազար ճամբորդներով հինգ օրէն  
հասանք New York եւ շատ հանգիստ՝ 31 Դեկտեմբեր 1954ին:

## ԱՌԱՋԻՆ ՀԱՆԳՐՈՒԱՆ՝ ՆԻՒ ԵՈՐՔ

Նիւ Եորքի նաւահանգիստէն ֆաղաֆը երեւաց իր տպաւորիչ  
համեմատութիւններով, այս ինչ հրաշալիք, երկինք հասնող շէնքերով  
եւ սլացիկ աշտարակներով: Ուրիշ աշխարհ մըն էր Ամերիկան: Քաղաքին  
կեդրոնը պանդոկ մը իջեւանեցայ: Ամանորի տօնակատարութիւնները  
սկսեք էին եւ ամէն տեղ զարդարուած էր գունագեղ լոյսերով:  
Չյաջողեցայ դիմադրել ֆաղաֆին այս արտակարգ հմայֆին եւ գիշերը  
ելայ շրջագայելու փողոցներուն մէջ, դիտելու մարդիկը, որ ուղղակի  
խենթացած էին:

Յաջորդ օրը Յասմիկին ֆեոին եկաւ, եւ զիս հրաւիրեց իր տունը.  
գացինք, ուր տեսայ նաեւ ֆեոկիկը, բարի եւ ազնիւ անձեր էին:

Ապա գտայ տիկին Սերոբեանը, ՀՕՄի պատասխանատու Ա ՆՁԱի մօտ,  
որուն պարզեցի պարագան Պէյրութի ընկերներէս Ջարեհ Ջարգունի,  
ուսուցիչ եւ մտաւորական, որ կոնակի ցաւէն կը տառապէր, անպայման  
Ամերիկա գալու էր բուժուելու համար. միմիայն եթէ ԱՆՁԱ Ն ստանձնէր  
բոլոր ծախսերը. - ANCHA, AMERICAN NATIONAL COMMITTEE TO AID

*HOMELESS ARMENIANS»: Ամերիկեան ընկերութիւն մըն է, 1940 - 1944 պատերազմէն ետք օգնեցին համայնավար երկիրներու մէջ գտնուող հայերուն, որոնք կ'ուզէին Ամերիկա երթալ:*

*Տիկին Սերոբեան ազնուութեամբ խոստացաւ իր կարելին ընել յաջողցնելու համար Զարեհ Զարգունիի Ամերիկա գալը, կեցութիւնն ու դարմանումը: Մեծապէս ուրախացայ այս հարցին յաջող ընթացքին մէջ դրուելուն համար:*

*Նաեւ գտայ Յակոբ Աֆարեանը, հոչակաւոր ֆութպոլիստ Հալէպի ՀՄԸՄէն: Ամբողջ օրը միասին անցուցինք եւ վերարժարծեցիկ մեր յուշերը ֆութպոլի գեղեցիկ օրերէն, միջմասնանհիւդային խաղերէն, փառաւոր տողանցքներէն եւ Պէյրութի ու Հալէպի ՀՄԸՄներու միջեւ կայացած այնքան գեղեցիկ եւ խանդավառ մրցումներէն: Յաջորդ օրը մինչեւ իրիկունը Sight seeng tour of NY ըրի: Յունուար 3 իրիկունը, շոգեկառք առի դէպի Շիքալօ:*

## WESLEY MEMORIAL HOSPITAL OF CHICAGO

### ՇԻՔԱԿՕ ՎԵՍԼԷՅ ՄԵՄՈՐԻԱԼ ՀԻՒԱՆԳԱՆՈՑԸ

*3 Յունուար 1955 իրիկունը. շոգեկառք առի դէպի Շիքալօ, ուր հասայ յաջորդ օրը կէսօրէն վերջ ժամը 3ին, քսանըմէկ ժամէն կտրելով 1600 քմ. համբան: Հեռաձայնեցի Տոքթ. Քեֆլիկեանին տունը, - «տեղէդ մի՛ շարժիր, - ըսաւ, - հիմա մէկը կու գայ եւ քեզ հոս կը բերէ»: Շատ չանցած հասաւ Տոքթ. Կարօ Զալեանը, Պէյրութէն ծանօթ, արդէն ինքն էր գիս ներկայացնողը Տոքթ. Քեֆլիկեանին Պէյրութ այցելութեան տեսնը: Գացինք տունը, շատ սիրով ընդունեց զիս, կէս ժամուան մէջ արդէն ամէն ինչ կարգադրած էր: Յաջորդ օրը հիւանդանոց պիտի մտնէի: Այսպէս ազնիւ մարդ շատ քիչ կը գտնուի: Պատմեցի իրեն բուն վիճակս, շատ լաւ հասկցաւ, խրատուսեց զիս եւ, - «երբեք մի մտահոգուիր», - ըսաւ: Ըլլայ հիւանդանոցը, ըլլայ դուրսը՝ դարմանումի շրջանին: Ուրախ եւ հանգիստ մտքով Տոքթ. Կարոյին հետ իր տունը գացինք եւ ես հոն գիշերեցի:*

*Զորեքշաբթի՝ 5 Յունուար 1955. Կարոյին հետ գացինք հիւանդանոց, կարծես առաջին կարգի լիւքս պանդոկ մը ըլլար: Ներկայացանք ընդունելութեան գրասենեակը. ամէն ինչ արդէն կարգադրուած էր, ինծի յատկացուած սենեակին թիւը առինք եւ ելանք վեր: Ուրկէ ուր, քովիս հիւանդը երիտասարդ հայ մըն էր. հագիւ հայերէն կը խօսէր. ծանօթացանք: Գիշերը հիւանդապահուհին եկաւ, պէտք եղած դեղերը տուաւ, որպէսզի պատրաստ ըլլայ յաջորդ օրուայ գործողութեան:*

## ՈՏՔԻՍ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԸ

Հինգշաբթի՝ 6 Յունուար 1955. առտու եկան եւ իջեցուցին զիս գործողութեան սրահը... Իրիկունը աչքս բացի որ սենեակս եմ, ոտքս վերէն վար գանի մէջ, երազի պէս. ուր ըլլալս չէի գիտեր, շատ սուր ցաւ մը ունեցայ, սիսալ շարժում մը ըրած էի. անմիջապէս հասան եւ հանդարտեցուցիչ դեղեր տուին. պառկած եմ մինչեւ յաջորդ օրը: Առաւօտեան հանդարտած էի. Տոքթ. Քեֆլիկեանը եկաւ, քանի մը խրախուսիչ խօսքեր ըսաւ, բացատրեց, թէ ինչ տեսակ գործողութիւն ըրեր է,- ուրեմն՝ ոտքիս կոնին ներսի ոսկորը փտեր է, միւս կողմէն ոսկոր հաներ եւ փտած տեղը պտուտակով ամրացուցեր է, յետոյ մեղադրական շեշտով աւելցուց.

- Եթէ արկածէն քանի մը ամիս, նոյնիսկ տարի մը ետք գալիր, շատ թեթեւ գործողութեամբ մը կ'ազատէիր: Հիմա, դժբախտաբար ամէն ինչ վերջացած է *Fusion de la cheville* եղած է: Ափսոս որ օրին պէտք եղած կարգադրութիւնը չէ եղած: Մեղք չէ՞ քեզի պէս երիտասարդ մը, այս տարիքիդ, այսպիսի ցաւալի վիճակին հասնի, միայն ու միայն քու պատասխանատուներուդ անհոգութեան պատճառաւ:

Այս բոլորը ըսաւ, ափսոսալով ցուցաբերուած տեսակ մը անփութութեան համար եւ ջղայնացած գնաց: Մատը վերքիւն վրայ դրաւ:

Շատ գէշ ազդուեցայ իմանալով եղելութիւնը. ինչո՞ւ այսպէս երեսի վրայ ձգեր էին զիս եւ վատթարացումի առաջք չէր առնուած, որ ի վերջոյ այսպէս գործողութեան ենթարկուեցայ եւ ապագային, ո՞վ գիտէ թէ ինչ ցաւերու պիտի ենթարկուէի առ ի հետեւանք այս գործողութեան: Հոս է որ իսկապէս մեղադրեցի ոտքիս արկածին շրջանին պատասխանատու վարչականները: Կէսօրէն ետք Տոքթ. Կարօ Զալեանը եկաւ այցելութեան:



Շատ ուրախացայ որ այս ցաւերուս մէջ գոնէ ունէի մտերիմ բարեկամ մը, որուն կրնայի սիրտս բանալ: Կը քաջալերէր զիս: Խօսեցաւ գործողութեան մասին, որ յաջողութեամբ անցած էր՝ ըստ Տոքթ. Քեֆլիկեանի:

- Բայց ափսոս,- աւելցուց ան,- որ ֆուրպոլը վերջ գտած է քեզի համար:

Այս ինչ անփութութիւն ցուցաբերուած է, երեք տարի անցեր է:

- Ինչ ընենք, Կարօ, նակատագիրս այս է եղեր,- աւելցուցի ես:

ԱՅՍՊԷՍ ՄՏԱՅ ՀԻԻԱՆՂԱՆՈՑ  
5 ՅՈՒՆՈՒԱՐ 1955իս:



Չախէն՝ ընկեր մը, քահանան,  
Վարդիվատ եւ Սահակ Շաքարեան:

Վարդիվատ

ԵՒ ԱՅՍՊԵՏ ԵԼԱՅ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԷՆ ԴԷՊԻ ԱՊԱՔԻՆՈՒՄ:

Հիւանդանոցէն ելայ 9 Յունուար 1955ին եւ գացի Յասմիկին ազգականին՝ Թաֆեհեաններուն տունը: Մեր մաման սիրով ընդունեց զիս եւ հանգիստ սենեակ մը տրամադրեց ինծի: Հետը կ'ապրէր թոռնիկը՝ Նուպար, Պէյրութէն եկած էր ուսանելու: Տո՛ք. Կարոն երկու օր անգամ մը կու գար, այս գալուն ըսաւ, - «նուագագոյն վեց ամիս պիտի տեւէ ոտքիս ապաքինումը»: Անակնկալի եկայ, խեղճանալիք բան էր, այսպէս առանց շարժելու վեց ամիս, օտար երկիր, հեռու սիրելիներէս... Մէկ բան ունէի սփոփուելու, այդ ալ նամակ գրել Յասմիկին, ամէնօրեայ տարտերս պատմել, եւ իր պատասխան նամակներով հանգստանալ: Կարոն լուր տուած էր Ամմանէն գաղթած ՀՄԸՄական տղոց, նաեւ ընկեր Յովիկ Էթեմեմեանին, որոնք գրեթէ, երկու երեք օր անգամ մը մէկ երկու հոգիով կու գային, կ'այցելէին զիս եւ զուարեանլի բաներ պատմելով ուրախ ժամանակ կ'անցընէին. նոյնը՝ Շիֆակոյի դաշնակցական ընկերները. լուր ունենալով՝ սկսան այցելել զիս:

### ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ՀԱՅ ՀԱՐԵՒԱՆԻՍ ՏՈՒՆԸ

Օր մը երիտասարդ տիկին մը եկաւ. հիւանդանոց գտնուած միջոցիս իմ բովի հայ երիտասարդին տիկինն էր. խնդրեց մամայէն իր տունը տանիլ զիս. գացինք:

Ուրիշ հիւրեր ալ կային, պատմեցի իրենց մեր հայկական կեանքէն, ՀՄԸՄէն, մեր հայեցի դաստիարակութենէն՝ ըլլայ Լիբանանի, ըլլայ Սուրիոյ մէջ: Հիւրերը ուշ ատեն գացին: Յաջորդ օրն ալ միասին անցուցինք: Մարդն ալ ինծի պէս անթացուպերով կը քալէր, իրարու վիճակէն լաւ կը հասկնայինք: Իրիկունը տիկինը զիս մամային տունը հասցուց. անկեղծ շնորհակալութիւնս յատնեցի իրեն:

Ուրեմն այս մարդը եւ իր հիւրերը կը պատկանին, Վարդանանց Ասպետներու Ընկերակցութեան, հայկական կազմակերպութիւն մըն է,

չէզոք, շատ ալ համակիր չեն մեզի: Երբ իրարու ներկայացանք, հասկցայ ասոց ինչ գաղափարի ծառայելը, անհանոյ յայտարարութիւններու առաջքը առնելու մտահոգութեամբ՝ իրենց ըսի, թէ ես ՀՄԸՄական մարզիկ եմ եւ դաշնակցական: Տան երիտասարդ տիկիներ շատ ուրախ էր, վերադարձի նամբուն վրայ ինձի ըսաւ, թէ ինքը դաշնակցական մարդու աղջիկ է:

## ՏՈՔԹՈՐ ՔԵՔԼԻԿԵԱՆԻՆ ԾԱՇԻ ՀԻՒՐՆ ԵՄ՝ 1 ՓԵՏՐՈՒԱՐ 1955

Օր մըն ալ Տոքթ. Քեֆլիկեանը զիս նաշի հրաւիրեց: Կարոն եկաւ տարաւ զիս: Տոքթորը շատ սիրալիք ընդունելութիւն մը ցուցաբերեց՝ լիբանանեան կերակուրներով նոյս սեղանի մը շուրջ: Զարմանալի չէր ասիկա, քանի տիկիներ լիբանահայ էր եւ հանրեցի՝ իրեն պէս: Առջի տարի, երբ Պէյրութ եկած էր Տոքթորը, ամուսնացած էր հետը: Տոքթ. Քեֆլիկեան պերճախօս ու կատակասէր մարդ է, ազնուասիրտ մեծ հայ մը, որ կը սիրէ իր տունը նաշի հիւր ունենալ. սիրտը բաց է իր տան ու իր սեղանին նման: Ամերիկայի մէջ հռչակի տիրացած ոսկրագէտ՝ ան սիրուած է եւ յարգուած՝ բոլոր հայերէն: Որեւէ կուսակցութեան չի պատկանիր:

## ԱՅՑԵԼՈՒՆ ԵՐՍ

Լսողը անմիջապէս կու գար այցելութեան: Օր մըն ալ եկաւ Տիգրան Տէր Ղազարեանը, լաւ ծանօթ ինձի Պէյրութէն՝ ՀՄԸՄի փառքի շրջանէն, կուսակցական, հիմա Շիֆակոյի կոմիտէին մաս կը կազմէր: Այցի եկան նաեւ Կարմիր Խաչի տիկիները՝ եւ մօտէն հետաքրքրուեցան իմ վիճակովս: Յետագային իմացայ, թէ Տոքթ. Քեֆլիկեան՝ բոլորին խօսած է իմ մասիս, կարգադրելով որ հիւանդանոցի ծախսերը իրենք հոգան: Խոստովանիմ, որ սկիզբի սրտնեղութիւններս սկսան կամաց կամաց փարատիլ. հոս ամէն հայ տեղեակ էր, որ Պէյրութի ՀՄԸՄի Վարդիվառը ոտքի գործողութեան ենթարկուած է եւ կը գտնուի Շիֆակօ, ամմանցի տղաքը, ՀՄԸՄական կամ դաշնակցական, ամէն օր այցելութեան կու գային, Կիրակի օրերը եկեղեցի կ'երթայինք, պատարագէն վերջ նաշի՝ մէկու մը տունը: Իւրովի կ'ըսէի.

**- Ինչ մեծ բախտաւորութիւն է եղեր ՀՄԸՄական ըլլալը, իսկ իմ պարագայիս՝ առաւել եւս դաշնակցական ըլլալը:**

Մամային տունը սկսան այնքան մեծ թիւով այցելուներ գալ, որ երբեմն նստելիք տեղ չէր ըլլար, եւ ձեռով մը արգելք կ'ըլլայինք Նուպարին դպրոցական աշխատանքներուն: Կամաց կամաց սկսայ դուրս ելլել. անթացուպերով քիչ մը կը քալէի մինչեւ ընկեր Տիգրանին խանութը: Օր մը բացատրեցի թէ ամէն օր, քանի մը հոգիներ այցի կու գային. ես ուրախ էի, որ կ'այցելէին, բայց հիւրերս մինչեւ ուշ ատեն կը մնային

յաճախ, եւ ակամայ կը խանգարէին Մամային թոռնիկին դասերը: Հարկ էր ուրիշ յարմար տեղ մը գտնել ինծի համար: Վերջապէս օր մը յայտնեցի Մամային, որ շատ գոհ եմ իր հիւրընկալութենէն, բայց այսօր քաւարար ըլլալու էր եւ յաւելեալ ճանճոյթ եւ յոգնութիւն չէի ուզեր պատճառել իրեն, լաւ պիտի ըլլար որ քիչ մըն ալ մեր ընկերները խորհէին կեցութեանս մասին:

Մէկ շաբաթ չանցած՝ Շիֆակոյի կոմիտէի անդամներ՝ Պօղոս Տեմիրճեան եւ Տիգրան Տէր Ղազարեան այցելութեան եկան եւ յայտնեցին թէ ժողովին որոշուեր է զիս մեր ընկերներէն մէկու մը տունը փոխադրել: Մամային ալ ըսին, որ ընկեր մը յօժար կամֆոլ կ'ուզէ զիս տունը ընդունիլ, ինքը մի՞նակն է եւ տուն մը ունի վեց սենեակներով: Երեկոյեան՝ Տոքթ. Քեֆլիկեանը հեռաձայնեց, խօսեցաւ Մամային որ երթալիք տեղս շատ յարմար էր: Ես ալ Մամային շնորհակալութիւն յայտնեցի որ ինծի գաւկին պէս նայեր էր եւ թէ երթալիք տեղս ալ մարդը յօժար կամֆոլ կ'ընդունէր զիս:

- Դուն գիտես, - ըսաւ Մաման, - եւ հոս կրնաս գալ եւ մնալ երբ որ ուզես:

## ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԸՆԿԵՐ ԿՈՓՈՅԻՆ ՅԱՐԿԻՆ ՏԱԿ

Երկուշաբթի՝ 14 Փետրուար 1955. առտու կանուխ ընկեր Գըլըն-եանը եկաւ եւ տարաւ զիս ընկեր Կոփոյին սեփական տունը, ուր մինակը կ'ապրէր: Շատ սիրով ընդունեց զիս, տունը պտտցուց, տարաւ ինծի յատկացուած սենեակը եւ ըսաւ. - «Այս սենեակին մէջ ժամանակին պառկած է Զօրավար Սեպուհը»:

Խորապէս զգացուեցայ այս իմանալով: Ընկեր Միսաֆ Կոփոյեան, բարի մարդ, հաւատաւոր դաշնակցական, 1906ին ձգեր է երկիրը՝ Խարբերդ, եւ եկած Ամերիկա հաստատուած՝ եղբօրը հետ: Երկուֆն ալ չեն ամուսնացած, այն յոյսով որ օր մը Երկիր կը վերադառնան՝ գրք-պանները տոլարով լեցուն: Երեք տարի առաջ եղբայրը մահացեր է եւ ինքը մնացեր մի՞նակ: Պատմեց թէ ինչ դժուարութիւններով հասած են հոս, հայրենակիցները գտած են, լեզու չեն գիտեր, նոյնիսկ հայերէն գրել կարդալ չեն գիտեր, (յետագային հայերէն գրել կարդալ սորված են «Հայրենիք» օրաթերթը կարդալով), հայու մը քով կօշիկի հնակարկատութիւն սորվելէ ետք իրենց հաշւոյն խանութ բացած են եւ յիսուն տարի է հոն է խանութը:

Ընկերը առտու կանուխ կ'ելլէ եւ գործին կ'երթայ, կէսօրուան ուտելիքս պատրաստած կ'ըլլայ: Երեկոյեան կը նստինք, կը ճաշենք, մէկական գաւաթ ալ վիսքի կը խմենք: Իր կեանքը կ'ընթանար, տունէն խանութ՝ գործի, եւ գործէն տուն. Կիրակի օրերը եկեղեցի, կուսակցական ժողով:

Ես ալ իրեն կը պատմէի, ուշի ուշով մտիկ կ'ընէր իմ պատմածներս, ՀՄԸՄի մրցումներն ու յաղթանակները, Հալէպի մէջ տեղի ունեցած միջմասնանհիւղային խաղերն ու սֆանջելի տողանցքը, այս առթիւ երեսուն հազարի հասնող հոծ ներկայութիւնը հայերուն եւ ուրախութիւնն ու աննկարագրելի խանդավառութիւնը: Այս բոլորը մտիկ կ'ընէր եւ աչքերը կը լեցուէին. չէր կրնար հաւատալ, որ հայեր ֆութպոլի խումբեր ունէին, ախոյեան էին, սկաուտներ ունէին եւ հազարներով կը տողանցէին, կը հարցնէր՝ իրա՞ւ է: Այսպէս կ'անցնէինք, երբ այցելուներ չունենայինք երեկոները:

Այսօր շատ ուրախացայ. նամակաբերը նամակները տուաւ, Յամիկին նամակին մէջ կար Շահիկին նկարը. համբուրելէն չէի կշտանար:



ՅԱՍՄԻԿ ԵՒ ԸԱՀԻԿ. ԿԿԱՐԸ ԱՏԱՑԱՅ 19 ՓԵՏՐՈՒԱՐ 1955ԻՆ:

## ԱՄՄԱՆԱՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒ ՍՔԱՆՁԵԼԻ ՇՐՋԱՆԱԿԸ

1950 թուականներուն Յորդանանի տնտեսական կացութիւնը կայուն չըլլալուն մեծ թիւով հայ երիտասարդներ Ամմանէն եւ Երուսաղէմէն Ամերիկա գաղթեցին: Ասոնք Շիֆակօ եկած են՝ ՀՄԸՄական կամ դաշնակցական են, բոլորն ալ արհեստաւոր, միշտ իրարու հետ են եւ ուրախ, երբեմն իրենց կարօտէն կը խօսին ծնողներուն մասին: Իրենց մեծ եղբօր դերին մէջ է ընկեր Յովիկ Էթեմեզեան, իրենցմէ առաջ հաստատուած է Շիֆակօ: Ամման դեղարան ունէր եւ լաւ դիրքի տէր, դաշնակցական դեկավար: Շիֆակոյի եւ մերձակայ ֆաղաֆներու մէջ, ուր Դաշնակցութեան տօնակատարութիւն ըլլար, հոն էր ինք՝ իբր

օրուան բանախօս: Այս տղաքը շատ կը յարգեն զինքը նաեւ տեղւոյն հայերը: Շիֆակոյի հին ընկերները կը խոստովանին որ, այս տղաքը Շիֆակոյի ծերացած հայերուն հայեցի նոր շունչ բերին:

Այն օրէն երբ իմացան իմ հոս ըլլալս, բնաւ առանձին չթողուցին զիս, Կիրակի օրերը եկեղեցի կ'երթայինք, այնտեղ էն Սահակեց տունը, ուր լաւ մը քէֆ կ'ընէինք: Սահակը բուն Հալէպէն էր եւ ֆուլթալ խաղալս տեսած հոն. իր զիւ ձայնով այնքան լաւ կ'երգէր, որ Պէյրուսի մեր խրախնամները կը յիշեցնէր: Գոգոն ալ կ'արտասանէր, բուն Երուսաղէմէն էր: Սահակին տիկինը՝ Խաթուն, ուրֆացի Ապու Մուսային աղջիկն է:

### ԱԻԵՏՕ ԿՈՄԻՏԷԻ 52րդ ՏԱՐԵԴԱՐՁԸ 20 ՓԵՏՐՈՒԱՐ 1955

Կիրակի մըն ալ եկաւ Սահակը՝ ընկեր Կոփոն միասին, Վեսթուրման գացինք, ուր Աւետօ Կոմիտէին 52րդ տարեդարձը պիտի տօնուէր: Հոն ընկեր Յովիկը բոցավառ ճառ մը խօսեցաւ, տղաքն ալ ճաշի սեղանին շուրջ յեղափոխական երգերով թնդացուցին մթնոլորտը: Սահակը իր զիւ ձայնով երգեց, Գոգոն արտասանեց, Ամմանի տղաքը ելան եւ շուրջպար մը ըրին խանդավառելով մթնոլորտը:

Հոն ծանօթացայ ընկեր Էսմերեանին, որ յաճախ Շիֆակոյի եկեղեցին կու գար զիս տեսնելու: Այս մարդոց խօսակցութեան գլխաւոր նիւթն էր Երկիրը. եւ թէ երբ պիտի վերադառնային հոն իրենց վրէժը լուծելու թուրքէն:



ԱՄՄԱՆՑԻ ՏՂՈՑ ՀԵՏ ԵԿԵՂԵՑԻԻՆ ԲԱԿԸ՝ 20 ՓԵՏՐՈՒԱՐ 1955  
Առջեւը ծոած՝ Սահակ - ձախին՝ ընկեր Էսմերեան - մէջտեղը՝ Վարդիվառ:





## ՇԱՏ ՈՒՐԱԽ ՕՐԵՐԷՍ ՄԷԿԸ - ԱՆԱԿՆԿԱԼ ԽՐԱԽՃԱՆՔ

Ամէն օր Յասմիկին նամակներուն կը սպասէի իմանալու մանաւանդ թէ ինչպէս օրը օրին հասակ կ'առնէր ձագուկս, նաեւ իր յղի վիճակով մտահոգ էի: Միւս կողմէն միտքս հանգիստ էր. խոյրը՝ Արմինէն կար, որ տան բոլոր գործերը կ'ընէր, Յասմիկը՝ գործի կ'երթար:



Իրիկունները, բարեբախտաբար յանախ այցելուներ կ'ունենային: Ամմանցի տղոցմէ գատ, դաշնակցական ընկերներ կու գային եւ ընկերական ջերմ մթնոլորտի մէջ կը մոռնայի պահ մը կարօտներս... Գրեթէ ամէն օր կու գար ընկեր Մարտիրոսը, որ եկած է Ամերիկա 1894ի ջարդէն ետք, իսկ 1918ին ետ վերադարձած է իբր կամաւոր՝ կռուելու թուրքին դէմ: Շարաք իրիկուն մը, Սահակը անակնկալօրէն եկաւ. - «պատրաստըւեցէք, պիտի երթանք», - ըսաւ եւ ընկեր Կոփոյին հետ միասին գացին ուղղակի եկեղեցիին սրահը, ուր երեսուն հոգիի չափ նստած էին հոյսօրէն սարքուած հաշասեղաններուն շուրջը: Երբ ներս մտանք, բոլոր ներկաները ոտքի ելան եւ միաձայն բացագանչեցին. - «Անցած ըլլայ, եղբայր Վարդիվառ», - եւ ծափահարեցին: Գօգոն բարի գալուստ մաղթեց եւ աւելցուց, - «Այս հաշկերոյքը ի պատիւ քեզի սարքուած է, առաջին անգամ առանց անբացու պի ֆալելուդ առթիւ»:



ԱՄՄԱՆՑԻ ԱՅՍ ՍՔԱՆՉԵԼԻ ՏՂԱՔՆ ԷԻՆ ԽՐԱԽՃԱՆՔԸ ՊԱՏՐԱՍՏՈՂՆԵՐԸ Այս նկարներուն մէջ կան Սահակ, Գօգո, ընկեր Էսմերեան, Ճէք, Արշակ եւ Վարդիվառ:

Այս տեսնելով՝ յուզուեցայ, աչքերս լեցուեցան, ողջագուրուեցայ տղոց հետ: Այս ինչ փափկանկատ վերաբերմունք: Կեանքիս մէջ բնաւ պիտի չմոռնամ... Մինչեւ ուշ գիշեր, խանդավառ, յուզիչ, բայց շատ ուրախ ժամանակ անցուցիւնք:


**ԹԷՅԱՍԵՂԱՆ Ի ՊԱՏԻ ԸՆԿԵՐ ՍԻՄՈՆ ՎՐԱՅԵԱՆԻ**  
9 Մարտ 1955՝ Ծիբակոյի Դաշնակցութեան կոմիտէին կողմէ

Կոմիտէի անդամ ընկեր Տիգրանին հետ գացիւնք եկեղեցոյ սրահը, ուր հաւաքուած էին բոլոր դաշնակցական ընկերները:

Ես արդէն խումբին մաս կը կազմէի եւ մասնակցած ասկէ առաջ քանի մը ժողովներու: Հաւաքոյթին, ընկեր Վրացեանը պարզեց իր առաջելութեան նպատակը: Ամերիկայի Միացեալ Նահանգներու քաղաքներուն մէջ, ուր հոժ հայութիւն կայ, ձեռնարկած էր՝ ի նպաստ Պէյրութի Նշան Փալանեան ձեմարանին, հանգանակութիւն:

Մթնոլորտը ջերմացնելու համար՝ յեղափոխական երգ մը երգեցիւնք, յետոյ՝ ես արտասանեցի Ա. Ահարոնեանի «Ազատութեան ձանապարհին» գիրքին նախաբանը, որ ձօնուած է մեր անմահ ֆետայիներուն:

Այսպէս՝ շատ ուրախ եւ խանդավառ մթնոլորտի մէջ վերջացուցիւնք հաւաքոյթը, որուն աւարտին գոյացած էր կոկիկ գումար մը:



Այս հրատիրագիրով Ծիբակոյի Է.Յ.Դ. կոմիտէի ժողով-թէյասեղանին ներկայ եղայ:

Հոս է, որ որոշուեցաւ ժողովրդային բուն հանգանակութեան հանդիսութիւնը կատարել՝ 20 Մարտ 1955, Կիրակի կէսօրէ ետք CONRAD HILTON HOTEL-ին մէջ:

Մեր ընկերները, մտիկ ընելի վերջ ասմունքս, շատ խանդավառ-  
լած պնդեցին որ անպայման արտասանեմ հանդէսի օրը, յաւուր պատ-  
շանի բանաստեղ ծուփիւն մը: Ձէի կրնար մերժել: Մտադրեցի ան-  
պայման յաջողիլ, թէեւ կեանքիս մէջ բեմի վրայ եւ ժողովուրդին առջեւ  
բնաւ չէի ասմունքած:

Ժողովէն ետք ընկեր Տիգրանին տունը գացիմ, ուր մէկ շաբաթ  
մնացի:

## ԹԷ ԻՆՉՊԷՍ ԹԵԼԵՎԻԶԻՈՆ ՈՒՆԵՑԱՆՔ ԿՈՓՈՅԻՆ ՏՈՒՆԸ

Առտու մը, գործի երթալու պահուն, ընկեր Կոփոն ըսաւ.

- Այսօր գործաւոր մը պիտի գայ եւ նորոգէ էլեկտրական աւրուած  
գործիքերը՝ գանգը, բանալին, եւ այլն: Ահա քեզի հարիւր տոլար, գործը  
լրացնելէն ետք իրեն տուր:

- Շատ լաւ, - ըսի եւ գնաց:

Ահա ասիկա յարմար առիթ մըն էր ձեռով մը գոնէ իրեն օգտակար  
ըլլալու: Շուտով իջայ տան ներքեւի մտանը, ուր գտայ մեծ  
ֆանակութեամբ էլեկտրական սարքեր, նոր կամ քիչ մը գործածուած, հոս  
հոն նետուած: Ինչ որ ինծի պէտք էր առի, եւ մօտաւորապէս մէկ ժամուան  
մէջ նորոգեցի գանգը, լամբերը, բանալիները եւ այլն: Ժամը 10ին  
ամերիկացի գործաւորը եկաւ նորոգութիւնները ընելու համար:

- Պէտք չկայ, - ըսի, - ամէն ինչ OK է... Ձգեց, գնաց:

Երեկոյեան տուն վերադառնալով ընկեր Կոփոն՝ նախ գանգը  
գարկաւ, ստուգելու համար թէ կ'աշխատէ՞ր, գացի բացի դուռը,  
ուրախացաւ, գնաց բոլոր չաշխատող լամբերը վառեց, ամէնն ալ  
աշխատեցան:

- Շատ լաւ է, պրաւօ, մինչեւ ժամը քանի՞ աշխատեցաւ գործաւորը, -  
ըսաւ...

Եւ յանկարծ սեղանին վրայ նշմարեց հարիւր տոլարնոցը, որ տեղէն  
չէր շարժած, շուարած հարց տուաւ թէ ի՞նչ տեղի ունեցած էր:

- Ընկեր Կոփօ, - պատասխանեցի, - ես Արուեստից եւ Արհեստից  
վարժարանէն վկայեալ եմ, եւ մասնագէտ հեռաձայնի եւ էլեկտրակա-  
նութեան: Ընկերութեան մէջ, ուր կ'աշխատիմ, այս տեսակ էլեկտրական  
գործերը ձեռքիս տակը եղող գործաւորները կ'ընեն: Վարի մտանին մէջ  
գտայ պէտք եղած ապրանքներն ու գործիքները եւ մէկ ժամուան մէջ  
նորոգեցի ամէն ինչ: Ամերիկացի գործաւորը, որ եկաւ, ամէն ինչ նորոգուած  
էր: Վզիս փաթթուելով. «Եկուր գաւաթ մը աւելիով խմենք եւ այս հարիւր  
տոլարով տունին թելեփիզիոն մը առնենք, - ըսաւ:

Այսպէս տունը օժտուեցաւ հեռատեսիլի (TV) գործիքով մը:

## ԵՐԿՐՈՐԴ ՇԱՏ ՈՒՐԱԽ ՕՐՍ ԱՅՍ ՀԵՌԱԻՈՐ ԵՐԿՐԻՆ ՄԷՋ

18 Մարտ 1955: Վերջապէս ստացայ նամակը, որ կ'աւետէր աղջկանս ծնունդը՝ 12 Մարտ 1955ին: Բացի նամակը անմիջապէս, ուր Յասմիկը կ'աւետէր աղջիկ զաւակ մը ունենալինս: Ուղղակի գացի ընկեր Կոփոյին այս ուրախ լուրը տուի. փաթթուեցանք, համբուր-ւեցանք: Երեկոյեան տուն եկաւ ուտելիքներով եւ խմիչքով ձեռքերը լեցուն: Քիչ ետք իր ընկերները եւ Սահակենք եկան: Ամէնուն այս բարի լուրը տուած էր: Արագ նոյս սեղան մը սարքեցինք, ընկեր Մարտիրոսը հում ֆէօֆթէն պատրաստեց, խորոված հաւերը մէջտեղ դրուեցան, ուրիշ տեսակ տեսակ ուտելիքներ. ամէն մէկը բան մը բերած էր հետը, վիսքիին սկսանք խմել եւ շատ ուրախ մթնոլորտի մէջ տօնեցինք աղ-ջրկանս ծնունդը իրմէ տասնեակ հազարաւոր ֆիլոմեթթ հեռու երկրի մէջ: Շատ ուրախ էի,- ըսի:

-Թոյլ տուէք համբուրեմ ձեր բոլորին նակատներէն իբր իմ հարազատներս, որ ինծի պարգեւեցիք այս երջանիկ պահը:

Յաջորդ օրը Յասմիկին նամակով եղածը պատմեցի, ուրախութիւնս յայտնեցի եւ գրեցի, որ աղջկանս անունը ըլլայ Աննա, մօրս՝ նաեւ իր հօրաբոլոր անունով:

Այ հանգիստ մտնով սկսայ պատրաստուիլ Կիրակի օրուան ասմունքի պարտականութեանս: Սիամանթոյի հայ գիրքերու Գիւտին Փառքն էր ընտրածս:

## ՀԱՆԴԷՍ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՊԷՅՐՈՒԹԻ ԾԵՄԱՐԱՆԻՆ Ի ՆՊԱՍՏ

20 Մարտ 1955: CONRAD HILTON HOTELի սրահը լեցուն էր: Շիֆակոյի ընկերներէն եւ համակիրներէն գատ նաեւ եկած էին շրջակայ քաղաքներէն: Բացումը ըրաւ ընկերս՝ Տոմթ. Կարօ Չալեան, Պէյրութի ձեմարանէն վկայեալ: Վեր առաւ հայերէնի ուսուցման բարձր մակար-դակը այս օճախէն ներս, բացատրելով՝ թէ ձեմարանը այսօր ար-տասահմանի հայ գիրի եւ գրականութեան միակ լոյսն է, ստիպուած ենք գայն վառ պահել, որպէսզի յաւիտեանս փայլի այդ լոյսը: Յետոյ խօսեցաւ ընկեր Կոպեռնիկ Թանտրընեան, գրեթէ նոյն իմաստով եւ ներկայացուց ընկեր Վրացեանը՝ Հայաստանի առաջին անկախ հանրա-պետութեան վարչապետը: Եկած էր իբր տնօրէն այդ ձեմարանին՝ իր ծառայութիւնը ի սպաս դնելու: Վերջապէս ընկեր Սիմոն Վրացեանը բեմ բարձրացաւ, ժողովուրդը յոտնկայս յարգեց այս մեծ հայր: Ան հարազատ պատկերը տուաւ ձեմարանին իբր հայեցի դաստիարա-կութեան կեդրոն:

Նիւթական կացութիւնը շատ նախանձելի չէ, այս անհրաժեշտ հայու օճախը պէտք է գոյատեւէ եւ այդ միայն մեր գիտակից հայու լումայով:

Վերջը կարգը եկաւ ինծի, բարեբախտաբար առանց անթացուպի բեմ բարձրացայ եւ սկսայ արտասանել Սիամանթոյի հայ գիրերու «Գիւտին Փառքը»: Ժողովորդը լուռ, ուշի ուշով կը հետեւէր, բայց ես ուրտեղէն պիտի գիտնայի լաւ արտասանելու: Յանկարծ դիմացի շարքին վրայ տեսայ ընկեր Կոփոն ժպտադէմ, գլուխը բարձրացուցած, հասկըցայ թէ լաւ կ'արտասանեմ: Կոկիկ գումար մըն ալ հաւաճուեցաւ, 5800 տոլար: Հանդէսէն ետք ընկեր Վրացեանը համբուրեց զիս եւ ըսաւ.

- Գիտէի լաւ ֆութպոլ խաղալդ, բայց չէի գիտեր այսպէս լաւ արտասանելդ:

Կարօ Զալեանը, ընկեր Կոփոն, ամմանցի տղաքը եւ Շիֆակոյի Կոմիտէի ընկերները ուրախութեամբ շնորհաւորեցին զիս:

Յետ այսու տղաքը որոշեցին, ֆութպոլիստ Վարդիվառ պիտի չըսեն, այլ ասմունքող Վարդիվառ:



ՊԷՅՐՈՒԹԻ ԾԵՄԱՐԱՆԻ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ ԿԱՐՏԱՍԱՆԵՄ 20 ՄԱՐՏ 1955

### ՎՈՔԻԿԱՆԻ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱԿՈՒՄԲԻՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Կիրակի, 27 Մարտի առաւօտեան՝ գացինք ծխատէր քահանան առինք եւ ուղղուեցանք դէպի Վոքիկան՝ 100 քիլոմէթր հեռու: Իջանք Դաշնակցութեան ակումբը, բաւական վերջ միւս ամմանցի տղաքն ալ եկան եւ գացինք տեղական եկեղեցի մը, (հայերը այս քաղաքին մէջ սեփական եկեղեցի չունին): 12 ամմանցի տղաքը շապիկ հագուեցան, եւ սկսաւ եկեղեցին շատ լաւ երգեցողութեամբ. տեղացի հայերը շատ

ուրախ էին. եկան խոստովանեցան, որ ֆսան-երեսուն տարի է, այսֆան նոխ երգեցողութեամբ եկեղեցիի արարողութիւն չէին տեսած:

Եկեղեցիէն վերջ մարդիկը ճաշկերոյթ մը պատրաստած էին Դաշնացութեան ակումբը, ուր շատ խանդավառ եւ ուրախ ժամանակ անցուցին, յեղափոխական երգերով, Սահակին մեներգներով, Գոգոն եւ ես արտասանեցին: Բերանին քաց հիացած մեզ կը դիտէին:

Այո, ես ալ գիրենք կը դիտէի եւ կը հիանայի այս հաւատաւոր դաշնակցական մարդոց վրայ, որոնք 50-60 տարիներ առաջ խոյս տուած են թուրքին դժոխային պայմաններէն, եկած են այս հեռաւոր երկիրը եւ իրենց առաջին գործը եղած է Դաշնացութեան ակումբ բանալ: Ահաւասիկ մէկ երկու ամիս է հոս եմ եւ այս երրորդ տարեդարձն է, որ կը տօնենք: Առաջինը եղաւ Աւետօ Կոմիտէի հիմնադրութեան 52րդ տարեդարձը, երկրորդը՝ Շիֆակոյի 4. Օ.Մ.ի 45րդ տարեդարձը: Այսօր ալ նոր տարեդարձ: Կարծեմ նոյնն է պարագան Ամերիկայի այն ֆողաֆներուն մէջ, ուր հայեր հաստատուած են: Այս ակումբներուն գոյութիւնը որքա՞ն պիտի տեւէ, որովհետեւ դժբախտ պարագայ մը որ նկատեցի՝ շատ քիչ թիւով Ամերիկա ծնած երիտասարդներ ներկայ կ'ըլլային այս հանդէսներուն:

Երբեք լաւատես չեմ, քանի մը տարիէն այս ակումբները մէկը միւսին ետեւէն կը փակուին, քացի այն պարագայէն՝ երբ երիտասարդ հայեր, Միջին Արեւելքի հայահոծ ֆողաֆներէն եւ Պարսկաստանէն, գան եւ նոր աւիւն ներարկեն այս ծերացող հայ համայնքներուն, ինչպէս է պարագան բարեբախտ Շիֆակոյի՝ ամմանցի երիտասարդներուն ներկայութեամբ, որ յուսամ կը գոյատեւէ 40-50 տարի:

## 8 ԱՊՐԻԼԷՆ ՄԻՆՉԵՒ 2 ՄԱՅԻՍ 1955 ՏԻԹՐՈՅՏ

Իրիկունը նորէն տղաքը եկած էին, Արշակը եւ եղբայրը՝ Սագոն, Յովհաննէսը եւ այլն, սա ալ ըսեմ որ, եթէ տղաքը մէկ երկու օր չգային, անդիէն ընկեր Կոփոն՝ «ո՞ւր են, ընկերներդ չեկան», - կ'ըսէր: Ճաշեցին հետերնին բերած տեսակ տեսակ ուտելիքները, ուրախ ժամանակ անցուցին, բարի նանապարհ մաղթեցին, թելադրելով ինձի, որ շատ չմնամ եւ շուտ վերադառնամ: Առտու կանուխէն եկաւ ընկեր Էսմէրեանը եւ GREYHOUND պասով գացինք Տիթրոյտ. զիս հասցուց Վարդան Քէթեանին տունը, որուն ծանօթն էր եւ տիկինը՝ իմ հայրենակիցս:

Ընկեր Էսմէրեանը այս երկար ճամբորդութիւնը ըրաւ միայն ինձի ընկերակցելու համար եւ երթ ու դարձի տոմսակն ալ ինքը վճարեց:

Քանի մը օր վերջ վերադարձաւ Շիֆակօ: Այսպիսի ազնիւ եւ անձնուէր մարդիկ կան եղեր:

## ՔԵԹԷԵԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՄՕՏ ՏԻԹՐՈՅՏ ԱՊՐԻԼ 1955

Ձիս ընդունեցին հարազատի պէս, յաջորդ օրը գացինք Դաշնակ-  
ցութեան կեդրոնը, հսկայական շէնք մը, ուր կայ եկեղեցի, ժողո-  
վասրահներ, սրնարան՝ լեցուն հայերով: Ելանք եկեղեցի, Տէր Սուրէն  
Բարախեան զիս տեսնելուն պէս փաթթուեցանք իրարու, շատ լաւ կը



նանչնայի զինքը Հալէպէն, եւ Լաթաֆիայէն, որուն եկե-  
ղեցիին քահանան էր: «Վարդիվառ, ա՞յս վիճա-  
կին մէջ պիտի տեսնէի  
քեզ», - ըսաւ եւ յուզուեցաւ: Տէր Սուրէն Բարախեան,  
դաշնակցական եւ ՀՄԸՄ-  
ական, այժմու Տիբրոյտի  
եկեղեցիի քահանան է:

Այսօր Ձատիկ է: 10  
Ապրիլ 1955: Անմիջապէս  
աչքիս առջեւ եկան Հալէպի  
ՀՄԸՄի միջմասնանիւղա-  
յին Նաւասարդեան խաղերը,  
Հալէպի ՀՄԸՄի ակումբը,  
ուր հայ ժողովուրդը կ'ետար  
մեծով պզտիկով, սկառտով  
արենոյշով, մարզիկներով,  
եկած՝ Սուրիոյ, Լիբանանի եւ  
Անդրյորդանանի քաղաք-  
ներէն մասնակցելու խաղե-  
րուն եւ այնքան սպասուած  
պանծալի տողանցին: Այս  
բոլորը պատմեցի ընկեր  
Վարդանին, ապշած մտիկ  
կ'ընէր եւ դժուար կը հա-  
ւատար, որ ասոնք իրակա-  
նութիւն են, իսկ ես, ափսոս,  
զրկուած էի այս անգամ  
այդ բոլորը վայելել:



ՔԵԹԷԵԱՆՆԵՐՈՒ ՄՕՏ

## ՏԻԹՐՈՅՏԻ ԶԱԽԱՐԵԱՆ ԱԿՈՒՄԲԸ 1955

Կիրակի 17 Ապրիլ առտու կանուխ՝ Տէր Սուրէն Բարախեան հեռաձայնեց եւ հրաւիրեց մեզ Զաւարեան ակումբը, ուր Հ.Օ.Մ.ը ձեռնարկ ունէր եւ նաշկերոյթ: Ընկեր Վարդանին եւ տիկնոջը հետ գացինք, լեցուն էր սրահը, իսկապէս տօն էր, նոյն նուագ եւայլն: Բանախօսէն վերջ, հանդէսին նախագահը՝ Տէր Սուրէն Բարախեան ելաւ եւ յայտարարեց որ այսօր անակնկալ մը կայ, Պէյրութէն եկած ռտֆին գործողութեան համար, ընկեր Վարդիվառ մեր մէջն է, ՀՄԸՄի ֆութպոլիստ է, քանի մը անգամ Լիբանանի ախոյեան: Հիմա կը հրաւիրեմ՝ գինքը որ մեզի արտասանէ, յուսամ դաշտի վրայ ունեցած յաջողութիւնը կ'ունենայ նաեւ բեմի վրայ: Ելայ բեմ եւ արտասանեցի Սիամանթոյի «Գիւտին Փառքը»: Սուրէն քահանան յուսախարչեղաւ, որովհետեւ ասմունքս լրանալուն պէս փաթթուեցաւ եւ շնորհաւորեց զիս ըսելով. - «Ֆութպոլ խաղալուդ պէս արտասանեցիր»:

Օր մըն ալ, Պաղտատէն գաղթած Գարեգինին հետ, ՀՄԸՄի ֆութպոլի մրցումին դաշտ գացինք, ինքը խումբին բերդապահն է: Գերմանական խումբի մը հետ խաղցան եւ 1-0 պարտուեցան: Խաղէն վերջ գացինք ՀՄԸՄի ակումբը, ուր մէկ ժամէ աւելի խօսեցայ Լիբանանի եւ Սուրիոյ հայութեան մասին ի մասնաւորի՝ ՀՄԸՄի հսկայական յառաջդիմութեան մասին, սրբի եւ սկառուտիզմի բոլոր մարզերուն մէջ: Հոս ծանօթացայ եղբայր Օննիկ Խաչիկեանի, որ Տիբրոյտի ՀՄԸՄի ֆութպոլի խումբին պատասխանատու է:

Յետոյ զիս տուն հասցուցին, ուր նոյն սեղան մը պատրաստած էին: Վերջին գիշերս էր, շատ ուրախ ժամանակ անցուցինք: Այսպէս երեք շաբաթ անմոռանալի յիշատակներով լի ժամանակ անցուցի: Յաջորդ օրը հրաժեշտ առի՝ Քէթեաններէն՝ շնորհակալութիւն յայտնելով իրենց ազնիւ ընդունելութեան համար:



1 ՄԱՅԻՍ 1955 ՏԻԹՐՈՅՏԻ ՀՄԸՄ-Ի ՖՈՒԹՊՈՒԼԻ ԽՈՒՄԲԸ  
Զախ՝ Վարդիվառ. առջեւը ծոած՝ Գարեգին (բերդապահ):



## ՎԵՐԱԴԱՐՁ ՇԻՔԱԿՕ

Երկուշաբթի առտու կանուխէն GREYHOUND BUS առի եւ վերադարձայ Շիֆակօ, ուր հասնելուս պէս գացի տոբօրը տեսայ, քննեց,- «լաւ է»,- ըսաւ:

Յետոյ տուն եկայ, ընկեր Կոփոն սեղանը դրած զիս կը սպասէր: Անմիջապէս տուաւ ինծի նամակներու տրցակ մը, ուր Յասմիկին դրկած նամակներէն մէկուն մէջ գտայ փնտոածս՝ նորածին աղջիկս՝ Յասմիկին գիրկը նկարուած: Այնքան անուշիկ որ համբուրելէն չէի կշտանար: Կոփոն յուզուած ինծի կը նայէր, գաւաթը լեցուց,- առ, խմէ եւ պատմէ Տիբորոյտէն,- ըսաւ:

Բոլորը պատմեցի, շատ ուրախացաւ:

## ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՊԱՔԻՆՈՒՄՍ ԴԵՌ ՀԵՌՈՒ ԷՐ

Օրերը կ'անցնէին, բայց որոշ թուական մը չկար վերջնական ապափինման: Առէն գացի հիւանդանոց, բժիշկը լաւ մը քննեց ոտքս, նկարեց եւ ըսաւ,- «ամէն ինչ լաւ է, միայն ժամանակի կը կարօտի»: Ոտքիս մէջի պտուտակը հանելը բռնէ 3 ամսուայ կը կարօտէր: Տոբօրը առաջարկեց ինծի Գալիֆորնիա երթալ, ըսաւ,- «եթէ ծանօթ բարեկամ ունիս, կրնաս քանի մը ամիս երթալ եւ մնալ հոն»: Ես մտերիմ բարեկամ ունիմ Գալիֆորնիա՝ Ջարեհ Փանոյեան, Պէյրութէն գացած, արդէն քանի անգամ գրեց ինծի որ անպայման բոլոր երթամ ոտքիս ապափինման շրջանին: Տոբօրին յայտնեցի այս բարեկամիս մասին, անմիջապէս հեռաձայնեց իրեն եւ որոշուեցաւ Գալիֆորնիա երթալս: Տուն



Փասատիակայ տան առջեւ՝ 12 Յունիս 1955 Չախէն՝ Վարդիպառ, Չարլի՝ բարեկամիս տղան եւ Ջարեհ Փանոյեան:

վերադարձիս իմացայ, որ եղբայր Բերովըէ Առաքելեանը, Մեքսիկոյի ՀՄԸՄի հիմնադիրը, զիս կը փնտոէ: Անմիջապէս գացի գրտայ գինեքը, Պ. Պարսումեանեցմօտ, ուր ծանօթացայ նաեւ Սուրէն Սարոյեանին՝ Սան Փրանսիսկոյէն: Իրիկունը ամմանցի տղաքը եկան տեսակ մը ողջերթի խննոյք ըրինք, լսած էին որ Գալիֆորնիա պիտի երթամ մէկ երկու ամիսով:

## ՅՈՒՆԻՍ 1955 ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍ

Զարեհ Փանոյեանը եւ Մանասէ Պալեանը եկած էին օդակայան գիւս դիմաւորելու: Եօթը տարի էր չէինք տեսած զիրար. ողջագուրուեցանք եւ ուղղուեցանք իրենց տունը՝ PASADENA: Այսօր գեղեցիկ քաղաք չէի կրնար երեւակայել. ամէն կողմ վարդ ու ծառաստաններ, կարծես թէ Գեթսեմանի պարտէզին մէջ ըլլայինք: Հասանք տունը. այնքան իրա-րու խօսելիք ունէինք որ երբեք չգագցինք թէ կէս գիշերէն վերջ ժամը 3 եղեր է:

## 5 ՅՈՒՆԻՍ 1955 ՄԱՅԻՍ 28Ի ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍ

Այսօր իջայ Լոս Անճելոս եւ գացի ուղղակի Հայ Կեդրոն՝ Դաշնակցութեան ակումբը. սրահը լեցուն էր: Շատ ծանօթներու հանդիպեցայ Պէյրութէն եւ Հալէպէն: Մանօթացայ ևս Յակոբ Մանեհիկեանին, շատ լաւ մէկն է, ինծի թելադրեց որ առանց այլեւայլի իրեն դիմեմ, դժուարութեան պարագային: Հոս ալ իմացեր էին եւ հրաւիրեցին, որ արտասանեմ. Աւետիս Ահարոնեանէն արտասանեցի:

Հոս բախտը ունեցայ ձեռնուելու մեծ գրագէտ Վիլիամ Սարոյեանին հետ. հարագատ հայու դիմագիծով եւ փառաւոր պեխով՝ կարծես իջած ըլլար հայոց լեռներէն: Հանդէսէն վերջ տուն վերադարձայ: Պէտք է ըսել, որ Զարեհ բարեկամս ամէն ինչ կ'ընէր զիս գոհ՝ ձգելու համար: Գործը լաւ է, արդուկիչի խանութ ունի: Շաբաթ եւ Կիրակի օրերը բոլոր շրջակայքի տեսարժան վայրերը կ'երթանք պտտելու: Այս քաղաքին անպատեհութիւնը այն է, թէ միայն երկու ընտանիք հայ կայ: Հայ մը տեսնելու համար միւսին Լոս Անճելոս պէտք է իջնել: 18 Յունիս 1955ին Զարեհ եղբայրը գնաց Լիբանան: Այստեղէն 17 տարեկան շատ լաւ հայ աղջիկ մը տարաւ, Ռուբի անունով, ամուսնացնելու իր եղբոր՝ Խաչիկին հետ՝ Այննարի մէջ:

## 20 ՅՈՒՆԻՍ 1955 ՍԱՆ - ՖՐԱՆՍԻՍԿՕ



Եղբայր Մործ Մարտիկեանի հիւրն էմ Սան Ֆրանսիսքօ՝ իր Աշանատր «Օմար Խալեամ» ճաշարանին մէջ, 26 Յունիս, 1955:

Սան Ֆրանսիսքօ՝ տարօրինակ քաղաք. շատ գեղեցիկ, իր կլիմայով մեր Լիբանանին կը նմանի: ՄԱԿի 10րդ տարեդարձի հանդիսութիւնները կային Յունիս 26, 1955ին: Գացի ներկայ եղայ MEMORIAL WAR OPERA HOUSE: Նախագահ ԹՐՈՒՄԱՆԻՆ ճառը մտիկ ըրի եւ շատ գեղեցիկ գուգադիպութեամբ հանդիպեցայ եղբայր Լեւոն Քեշիշեանին, որուն ծանօթացեր էի

1942ին Երուսաղեմ. ՀՄԸՄի վարչական էր:

Ճաշի հիւրը եղայ անուանի ճորն Մարտիկեանին, (ԱՆԶԱի նախագահ), իր նշանաւոր Օմար Խայեամ ճաշարանին մէջ, ուր միայն հայերու եւ ՀՄԸՄի մասին խօսեցանք. ինքը ՀՄԸՄի սկաւուտ եղած է Յունաստան, հիմա մեծ դեր կը խաղայ ՀՄԸՄի բարգաւաճման գծով Ամերիկայի մէջ, եղբայր Քէրովրէ Առաքելեանին հետ: Հայ Մարմնակրթական Միութեան ատենապետն է:

Տասը օր լաւ մը պտտելէ եւ Սան Ֆրանսիսքոյի տեսարժան վայրերը տեսնելէ ետք վերադարձայ Փասատինա 30 Յունիս 1955ին: Ճամբան հանդիպեցայ Ֆրեզնօ, ուր ժամանակին հոժ հայութիւն եղած է. «Ասպարէզ»ի խմբագրատունը գացի, յետոյ՝ Հայ Կեդրոն, ուր գտայ ընկեր Կոփոյին հօրեղբօրը տղան՝ Սեդրակ Կոփոյեան, որուն պատմեցի թէ ես ընկեր Կոփոյին տունը կը մնամ Շիֆակօ:

Շահէն Ենիգոմուշեան անունով երիտասարդ մը՝ Երուսաղէմէն, զիս նանչցաւ, ամբողջ Ֆրեզնօն պտտցուց եւ թելադրեց, որ անպայման այցելեմ Ենսեմիտի Փարֆ: Այցելեցի, բնութեան հրաշալիք մըն է:

Լոս Անճելոս վերադարձիս, Յունիս 15ին 1955, եղբայր Զարեհը վերադարձաւ Պէյրութէն, ուր գացեր, գտեր եւ տեսեր էր իմ հարազատներս՝ Յասմիկը եւ ձագուկներս: Շատ ուրախացայ այս լուրերը առնելով. անշուշտ շատ կարօտցեր էի գիրենք:



Զախէն՝ Արմինէ, Յասմիկը՝ գիրկը Նոնոն, Զարեհ՝ եղբայրը, գիրկը՝ Շահէն եւ Մելիֆոն՝ քրոջս տղան:

## ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ՀՄԸՄ-Ը



28 Յուլիս 1955՝ Լոս Անճելոսի ՀՄԸՄի  
Վարչականներու հետ:  
*Զախէն՝ Յակոբ Մաննիկեան, մէջտեղը՝  
Վարդիվառ եւ վարչականներ:*

Ընկեր Յակոբ Մաննիկեանի կարգադրութեամբ եւ իր հետ, Յուլիս 28ին գացին ՀՄԸՄի ակումբը, ուր թէյասեղան մը պատրաստած էին ի պատիւ ինձի: Իսկապէս գրնահատեցի այս ժեստը: Կուզէին տեղեկութիւններ ունենալ ՀՄԸՄի կեանքէն՝ Լիբանանի եւ Սուրիոյ մէջ: Այնքան պատմելի կար, որ մէկ ժամը ինչպէս անցաւ չգացին: Յետոյ յիշատակի համար նկարուեցանք:

## DISNEYLAND-Ի ՄԷՋ



ROSE BOWL Ամերիկայի ամենամեծ դաշտը: Այս նկարը մօտս դրկած եմ՝  
31 Յուլիս 1955ին:

Լոս Անճելոսի եւ շրջակայքի՝ Հոլիվուտի եւ ամէն տեղերը այցելելէ ետք մնացած էր Disneyland: Նոր բացուած էր. հոն ալ գացինք. ամբողջ օր մը այցելութեան տրամադրեցինք... Հրաշալիքներուն հրաշալիքը: Շատ սիրեցի Փասատինան, որ գեղեցիկ քաղաք է: Միայն երբեմն այնպէս մուխ ու ծուխի նմանող ըսմօք մը կ'ըլլայ, որ աչքերէդ արցունք կու գայ, իսկ շատ «ըսմօք» ըլլալու պարագային՝ արգիլուած է տուներէն դուրս ելլել:

## ՎԵՐԱԴԱՐՁ ՇԻՔԱԿՕ ԵՒ ՆՈՐԷՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՅ

Երկու ամիս մնալէն ետք Գալիֆորնիա, Վերադարձայ Շիֆակօ՝ 9 Օգոստոսին: Նորէն հիւանդանոց մտայ, ուր Տոքթ. Քեֆլիկեանը ոտքիս մէջի պտուտակը հանեց. յաջորդ օրը ելայ հիւանդանոցէն:

Զարեհ Զարգունը եկաւ եւ ընկեր Կոփոյին տունը մնաց: Շատ ուրախ էի, լուր բերած էր Պէյրութէն, կը պատմէր, ես ալ իրեն կը պատմէի: Ամէն օր այսպէս ուրախ ժամանակ կ'անցընէինք: Օր մը նկատեցի, որ ոտքիս երակները բնականէն աւելի լայնցած էին. անմիջապէս գացի բժիշկին. ըսաւ, - «մեծ բան չէ, բայց նորէն հիւանդանոց պիտի մտնես, որ աւելորդ երակները հանենք»: Խենդանալիք բան էր. ստիպուած մըտայ հիւանդանոց եւ նորէն գործողութիւն: Միեւնոյն ատեն ընկեր Լեւոնը եւս (Զարեհ Զարգունը) մտաւ հիւանդանոց, ուր իր կոնակին ցաւը մարձուումով դարմանեցին. ցաւ մը, որ տարիներէ ի վեր զինք կը տառապեցնէր եւ անոր բուժումին համար եկած էր Ամերիկա: (ԱՆՁԱյի մօտ

ՀՕՄի ներկայացուցիչ Տիկին Սերոբեանը կարգադրած էր իմ միջամտութեամբս): Երեք օր մնալէն ետք երկուքս ալ ելանք հիւանդանոցէն: Տոքթ. Կարօ Զալեանը եկած էր: Հետը կային Տոքթ. Ժանէթ Զաւտարեանը եւ Տոքթ. Արա Տումանեանը: Երբեք չեմ կրնար մոռնալ այս բրժիշկները: Օրերը այնպէս բերին, որ Տոքթ. Քեֆլիկեանն ալ կոնակէն գործողութեան ենթարկուեցաւ. այս անգամ մենք իրեն այցելութեան կ'երթայինք: Շիֆակոյի ՀՅԴի ատենապետը մեզ ճաշի հրաւիրեց, ընկեր Կոփոն եւ քանի մը ամմանցի տըղաքը, Զարեհ Զարգունը եւ ես:



ԶԱՐԵՀ ԶԱՐԳՈՒՆ ԵՒ ՎԱՐԴԻՎԱՌ ՇԻՔԱԿՈՅԻ ՄԷՋ 1955:

Շատ ուրախ ժամանակ անցուցինք:

## ՈՂՋԵՐԹԻ ՑԵՐԵԿՈՅԹ ՎՈՔԻԿԱՆԻ ՄԷՋ

Վերադարձիս թուականը երբ յայտնի եղաւ, ամէնուն ինձ պէտք էր երթալի շնորհակալութիւն յայտնելու եւ հրաժեշտ առնելու: Այս առթիւ ընկեր Յովիկը մեզ նաշի հրաւիրեց, հաւաքուեցանք տասը հոգիի չափ՝ գացինք: Խանդավառ, ուրախ եւ միեւնոյն ատեն յուզիչ ժամանակ անցուցինք. մեզի հետ էին՝ տոբօրներ՝ Կարօ Չալեանը եւ Ժանէթ Չաւտարեանը: Յաջորդը՝ 11 Սեպտեմբերին, ընկեր էամերեանը կը հրաւիրէր Վոքիկան՝ իր բնակած քաղաքը: Կիրակի նոյն խումբով գացինք:

Նորէն նաշի սեղանի շուրջ, մէկ կողմս՝ ընկեր Կոփոն, միւս կողմս՝ ընկեր էամերեանը նստած էին. սկսանք մեր յեղափոխական երգերով, խանդավառ մթնոլորտ, ինքնաբուխ ճառեր եւ արտասանութիւններ, մեներգներ, վերջաւորութեան՝ ընկեր Յովիկը ելաւ եւ շատ իմաստալից ճառ մը խօսեցաւ, վեր առնելով ՀՄԸՄի ազգօգուտ դերը հայ երիտասարդութեան մէջ, մանաւանդ՝ Միջին Արեւելքի երկիրներուն մէջ, ուր հայուն յառաջադէմ ըլլալը պայման էր ինքզինքը յարգել տալու համար: Շատ յուզիչ բաժանում մը եղաւ, ընկեր էամերեանը եկաւ փաթթուեցաւ եւ յիշատակի համար պայուսակ մը նուէր տուաւ:

Մինչեւ մեկնելու օրս ամէն օր տեղ մը կը հաւաքուէինք, իբր թէ մնաք բարով պիտի ըսէի, բայց սեղան կը շտկէին եւ խրախնանք կ'ընէինք միմեկին ուշ գիշեր: Այլ վերջին օրը՝ Սեպտեմբեր 11ին գացի հիւանդանոց, Տոբ. Արա Տումանեանը լաւ մը քննեց ոտքս: Պէտք եղած թելադրանքները ըրաւ եւ մնաք բարով ըսելով բաժնուեցանք:

Իրիկունը բոլոր տղաքը եկած էին՝ Չալեան, Ժանէթ Չաւտարեան, ընկեր Կոփոյին հետ ինձ ինձի նստած, լուռ, իրար կը դիտէինք. ալ տղաքը գաւաթները լեցուցին եւ սկսան խմել ու երգել: Ուշ գիշեր բաժնուելու պահը եկած էր, շատ դժուար էր ինծի համար, գացի սենեակները, ուր ամիսներ մենութիւնս անցուցեր էի, ինչ ինչ մտածումներ ունեցեր էի, բայց շնորհիւ ընկեր Կոփոյին այսօր հարազատ վերաբերմունքին ինծի հանդէպ՝ այդ դժուարին օրերը թեթեւ անցեր էին: Հայա ինչ ըսեմ այս աննման ամմանցի տղոց, որոնք օր մը առանձին չձգեցին զիս: Շարաթ եւ Կիրակի օրերը խրախնանքի եւ ուրախութեան օրեր եղան այս ամբողջ երկար կեցութեանս ընթացքին:

## ԱԶՆԻԻ ՑԵՂԻ ԱԶՆՈՒԱԳՈՅՆ ԶԱՒԱԿՆԵՐՆ ԷԻՆ ԱՅՍ ՏՂԱՔԸ

Մէկ բան կըրցայ խոստանալ իրենց, տեսնելով իրենց աչքերուն մէջ անհուն կարօտը իրենց սիրելիներուն, ծնողքին, հարազատներուն, ընկերներուն, որոնք մնացեր էին Ամման եւ Նրուսադէմ, որովհետեւ ես ալ իրենց պէս տառապեալ էի իմ սիրելիներուս կարօտէն, անոր համար շատ լաւ կը հասկնայի իրենց վիճակը:

Դարձայ իրենց եւ ըսի,- «Լիբանան վերադարձիս, իմ սիրելիներուս կարօտը առնելէն ետք, առաջին գործս պիտի ըլլայ երթալ Ամման եւ Երուսաղէմ եւ ձեր կարօտագին բարեւներն ու համբոյրները տանիլ ձեր սիրելիներուն»:

Շատ յուզիչ եղաւ ընկեր Կոփոյէն բաժնուիլս, վզին փաթթուեցայ եւ արցունքոտ աչքերով հագիւ,- «մնա՛ք բարով», - ըսի: Այսպէս բաժնուեցայ Շիֆակոյէն, վերջին շնորհակալութիւնս յայտնելէ ետք Տոքթ. Համբարձում՝ Քեֆլիկեանին եւ բոլորին:

Տղաքը հասցուցին զիս GREYHOUND BUS STATION եւ կէս գիշերէն ետք ժամը 2ին համբայ ելայ:

Վերադարձ դէպի Երկիր... դէպի տուն:

## ԱՎՆԱՐԿ ՄԸ ՇԻՔԱԿՕ ԿԵՑՈՒԹԵԱՆՍ

Շիֆակոյի մէջ այսպէս անկեղծ, հարագատ եւ սիրալիք ընդունելութեան արժանանալս երբեք չէի կրնար երեւակայել: Տասը ամիս երկար էր եւ երեք անգամ գործողութեան ենթարկուիլը՝ աներեւակայելի:

Երախտապարտ եմ ազնուասիրտ Տոքթ. Քեֆլիկեանին, որ պատճառ եղաւ Շիֆակօ գալուս: Ոտքիս գործողութիւնը եւ կեցութեանս բոլոր կարգադրութիւնները ըրաւ, յետոյ իրեն օգնական՝ Տոքթ. Արա Տումանեանին, որ ամէն ատեն հսկեց վրաս հիւանդանոցը եւ յաճախ տուն եկաւ այցելութեան: Տոքթ. Կարօ Զալեան, առաջին օրէն զիս տարաւ հիւանդանոց, տասը ամիս՝ շաբաթը քանի մը անգամ ինձի այցելեց, միշտ մխիթարելով զիս, որովհետեւ ամէնէն լաւ ինքը կը ճանչնար զիս Պէյրութէն, եւ Տոքթ. Ժանէթ Զաւտարեան՝ որ յաճախ այցելեց զիս:

Ի՞նչ կրնամ ըսել Ամմանի հրաշալի տղոց մասին: Առաջին օրէն, երբ իմացան որ ՀՄԸՄի Վարդիվառն էր եկած եւ ենթարկուած ոտքի գործողութեան, ալ գիշեր ցերեկ, ամէն օր մէկը կու գար, կ'այցելէր զիս եւ ինչ բանի որ պէտք ունեւայի, կը կարգադրուէր: Ինչպէ՞ս երախտապարտ չըլլալ եւ մոռնալ Սահակ Շաֆարեանը, որ Շաբաթ իրիկուրնէ կու գար, կը տանէր զիս իրենց տունը, գիշերը հոն կը մնայի յաջորդ օրը՝ Կիրակի, եկեղեցի կ'երթայինք եւ եկեղեցիէն ետք իր տունը՝ ճաշի: Ինչպէ՞ս չարձանագրել ազնիւ վերաբերմունքը ընկեր Տիգրան Տէր Ղազարեանին, եղբօրը՝ Կարոյին եւ ազնիւ քոջը: Արդեօք կրնա՞մ մոռնալ Մաման՝ որ առաջին անգամ հիւանդանոցէն ելլելուս իր տունը գացի եւ իր հարագատ տղուն պէս նայեցաւ եւ խնամեց զիս:

Ինչպէ՞ս մոռնալ եւ երախտապարտ չըլլալ այդ սփանջելի, հաւատաւոր դաշնակցական ընկերներուն, որոնք իրենց երիտասարդ տարիքին, 1894 եւ 1904ի ջարդերէն խոյս տուած, եկած են այս հեռաւոր Շիֆակոն, Դաշնակցութիւն հիմնած եւ մինչեւ այսօր երկրին կարօտով կ'սպրին: Երբ իմացան իմ պարագաս, յաճախ այցելեցին զիս եւ իրենց

տունը հրաւիրեցին: Ես մեծ յարգանք ունիմ այս հաւատաւոր դաշնակցականներուն հանդէպ: Վերջապէս՝ ընկեր Կոփոն: Իր տունը հիւրանոց եղած է դաշնակցական որեւէ մէկուն, որ հիւրաբար կամ գործով Շիֆալօ կը գտնուի: Ամբողջ տունը տրամադրութեան տակ դրած էր: Ամէն իրիկուն երբ առանձին մնայինք, իւրաքանչիւրս իր պատմութիւնը կը պատմէր: Այսպէս կապուեցանք իրարու եւ հարազատներու պէս բաժնրեցանք իրարմէ:

## 17 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1955՝ ՎԵՐԱԴԱՐՁ ԴԷՊԻ ԼԻԲԱՆԱՆ

Ճամբուս վրայ գացի Նիակարա ֆոլս՝ աներեւակայելի մեծ ջրվէժը այցելեցի, անկէ դէպի ALBANY, ուր գտայ խաչիկ խաչատուրեանը, ՀՄԸՄի Ա. խումբի խաղացող մինչեւ 1944 եւ Պօղոս Շահինեանը: Միասին հին գեղեցիկ օրերը յիշելով լաւ ժամանակ անցուցինք: 22 Սեպտեմբեր, հասայ Պոսթոն: Ուղղակի գացի «Հայրենիք»ի խմբագրատունը եւ տեսայ մեր մեծ ընկերներէն՝ Գուրգէն Մխիթարեանը, Ռուբէն Դարբինեանը, Համաստեղը: Շատ կը հետաքրքրուէին Լիբանանի եւ Սուրիոյ վիճակով, որովհետեւ կը նկատէին այս երկու երկիրներուն հայութիւնը մեր ապագայի յոյսը:

Երբ Նիւ Եորք հասայ, Յասմիկին քեզի կը ցուցնէր գացի: Քեռին մահացեր էր երկու ամիս առաջ. շատ տխրեցայ: Շատ պնդեց եւ իր տունը մնացի, ուր երկու տղամն ալ եկան:

## ՆԻԻ ԵՈՐՔԷՆ ԻԻՆԱՅԹԸՏ ՍԹԷՅԹ ՆԱԻԸ ԱՌԻ՝ 30 ՍԵՊՏ. 1955ԻՆ

Այս ինչ հսկայ նաւ: Տեղաւորուեցայ սենեակս, աշխարհի երկրորդ մեծ նաւն է Քուին Էլիզապէթէն ետք, եւ առաջինը՝ արագութեամբ. անելի արդիական է, բայց չի հասնիր Քուին Էլիզապէթի նոյն կահաւորումին: Յանախ պատշգամբ կ'ելլէի, եւ անձայրածիր ովկիանոսը կը դիտէի, մտաբերելով այդ երկար ամիսներու մեծութեան մէջ անցընելս:

Կ'երեւակայէի Ամերիկայի մեծութիւնը ամէն տեսակէտով, հարստութիւնը, նոյնութիւնը, անձայրածիր դաշտերը, լեռները, անտառները, թեքնիք յառաջդիմութիւնը, այս բոլորը տեսայ եւ չեմ ուզեր ժխտել այդ հզօրութիւնը: Այնուամենայնիւ, ինձի պէս մէկու մը համար, որ իր ժողովուրդին մէջ սնած եւ մեծցած է, դժուար է Ամերիկայի մէջ ապրիլը, հոն կարենալ ապրելու եւ այդ երկիրը սիրելու համար, հոն ծնած պէտք է ըլլալ: Այնպէս որ կ'ուզէի վայրկեան առաջ հասնիլ Լիբանան: Արդէն Յասմիկին հետ համաձայնած էի, որ իրարու հանդիպինք Լոնտոն: Չորս ու կէս օրէն հասանք Եւրոպա, Լը Հավր, անկից՝ Անգլիա:



## 5 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1955՝ ԼՈՆՏՈՆ

Նաւէն իջայ Անգլիա, SOUTHAMPTON, շոգեկառք առի եւ գիշերով հասայ Լոնտոն, մեծ քաղաք՝ բայց ամէն ինչ պզտիկ կ'երեւար աչքիս բաղդատմամբ՝ Ամերիկայի: Վերջապէս պանդոկ մը տեղաւորւեցայ: Անկարելի էր ճնանալ, ինչպէս պիտի դիմաւորէի զինքը, ինչ ինչ բաներ ունէր պատմելիք: Հինգշաբթի՝ 6 Հոկտեմբեր առտու կանուխէն գացի օդակայան: Օդանաւը 12:30ին եկաւ, տեսայ Յասմիկը հեռւէն, ինք զիս չտեսաւ, սիրտս սկսաւ այնքան զօրաւոր տրոփել, որ քիչ մնաց պիտի պայթէր: Անկիւն մը գացի, հինգ վայրկեան հանգչեցայ, յետոյ ինքն ալ տեսաւ զիս եւ վազեց, իրարու փաթթուեցանք...

Փառք Աստուծոյ, ի՛նչ մեծ ուրախութիւն. ուղղակի պանդոկ գացինք, յուզմունքէն չէինք կրնար խօսիլ, շատ ուրախ էինք: Այդ օր ալ Լոնտոն մնացինք՝ բաւական պտըտելէ ետք:



ՅԱՍՄԻԿ ԼՈՆՏՈՆԻ ՄԷՋ՝ 6 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1955:

### ԾՐՋԱՊՏՈՅՑ ԼՈՆՏՈՆԷՆ ՄԻՆՉԵՒԻ ՄԱՐՍԷՅ - ԿԱՐՏԱՆ 1955

8 Հոկտեմբեր երեկոյեան Անգլիայէն Հոլանտա գացող նաւ առինք, յաջորդ առտու հասանք Ռոթերտամ, Պրիւքսէլի վրայով: 12 Հոկտեմբերին հասանք Փարիզ. կայարանը կը սպասէին մեզի Մելիոն՝ Բեռիս, Միհրանը, Յովնանը, Արան, Զուարթը եւ Մարիամը, ապա գացինք Բեռիս տունը՝ Անթօնի: Տասը օր մնացինք, Փարիզի լաւագոյն տեղերը այցելեցինք: Ամէն օր մէկու մը տունը շատ ուրախ անցուցինք: Քեռիներս ունէին երեք զաւակներ՝ Վահան, Ժագօ եւ Շուշան: Քեռիս ունի

*Երկու հոյր՝ Մարիամ, որ այրի էր, ուներ երկու տղայ, մէկ աղջիկ, իսկ Աղաւնիին ամուսինը՝ Յովհաննէս Մամբրէեան, ունին երեք զաւակ՝ Զուարթ, Սոնա եւ մանչ մը Փիերօ:*



*Զախէն՝ Ժաօ, Բեռիս, Վարդիվառ: Անուշ Բեռլինս, Յասմիկ եւ Աղաւնի:*



*Զախէն՝ Անուշ Բեռլինս, Վարդիվառ, Յովնան եւ Բեռիս՝ Մելհոն:*

## ՎԱՀԱՆԻՆ ՏՈՒՆԸ ՍԱՐՊՈՒՐԿ-ԳԵՐՄԱՆԻԱ 22 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1955

Փարիզէն դէպի Գերմանիա շոգեկառնով գացինք եւ հասանք Սարպուրկ, քեռիիս տղուն՝ Վահանին տունը: Վահանը կ'աշխատի ֆրանսական բանակի մօտ, իբր մասնագէտ սինեմալի մեքենաներու:

Մեզ պտտցուց քաղաքին տեսարժան վայրերը: Մէկ գիշեր մնացինք, ուր շատ ուրախ ժամանակ անցուցինք:



Վահանին տունը՝  
Վարդիվառ  
եւ Վահան:

## 27 ՀՈԿՏԵՄԲԵՐ ՎԵՐՋԱՊԷՍ ՀԱՍԱՆՔ ԿԱՐՏԱՆ՝ ՖՐԱՆՍԱ

Միշտ շոգեկառնով կը նամբորդէինք, անցանք Շթուրկարտ, Յիւրիիս, Միլանո: Իւրաքանչիւր քաղաք կը մնայինք մէկ գիշեր եւ քաղաքին լաւագոյն տեղերը անպայման կը պտտէինք:

Մեր վերջին կայանը Կորկոտեաններուն տունն էր: Յասմիկը շատ ուրախ էր, առաջին անգամ կը տեսնուէին մօրաքրոջը հետ, մէկ շաբաթ մնացինք, մեզ ամէն կողմ պտտցուցին: Ամուսինը՝ պարոն Համբար-



ճում, Կարտանի հան-  
քերուն մէջ կ'աշխա-  
տէր: Երկրէն եկած  
բոլոր հայերուն պէս,  
շատ ծանր գործ էր:  
Վերջապէս, շատ լաւ  
ժամանակ անցու-  
ցինք Մօրային տունը,  
յիշատակելի եւ ան-  
մոռանալի օրեր էին:  
Շատ գոհ մնացինք:

Յասմիկը եւ Մօրան՝ Կարտանի տունը, 28 Հոկտ., 1955:

### 3 ՆՈՅԵՄԲԵՐ 1955 ՀԱՍԱՑ ԼԻՒԱՆԱՆ

Տասը երկար ամիսներ է ետք վերադարձայ Լիբանան՝ 3 Նոյեմբեր, 1955ին: Մարսէյէն «Իսթեռտերուն» նաւը առինք, շատ հանելի ժամանակ անցընելով եւ անհամբեր սպասելով մեր հասնելուն վերջապէս, հինգերորդ օրը տեսնուեցան հեռուէն Լիբանանի գեղեցիկ լեռները: Քիչ ետք անհուն կարօտս պիտի առնէի ձագուկներէս: Նաւահանգիստը կը վիտար դիմաւորելու եկած բազմութեամբ մը. հեռուէն տեսայ ձագուկներս, սիրտս սկսաւ արագ արագ տրոփել, աչքերէս արցունքները կը հոսէին:

Ահա ընկերս՝ Յովհաննէս Փանոսեանը, նաւ ելաւ հետը գրկած Շահիկս... յուզումնալի գիրկընդխառնում, կը սեղմէի կուրծքիս վրայ, կը համբուրէի, չէի յագեանար: Այլ նաւէն իջանք, նորածին Նոնոն տեսայ, Աստուած իմ, ի՞նչ անուշիկ ձագուկ է, գրկեցի, համբուրեցի, ապշած կը նայէր, քիչ մը հանդարտելէն ետք Շահէն հարցուց, - «պապա, ոտքդ ինչպէ՞ս եղաւ». շատ յուզուեցայ այս հարցումէն: Հասանք տուն, հանգչեցայ, հանդարտեցայ, վրաս թեթեւութիւն մը եկաւ, տասը ամսուան բաժանումը, միևնափութիւնը, ոտքիս ցաւերը փարատեցան եւ կարծես մոռցայ ամէն ինչ:

Փառք Աստուծոյ, խերով-բարով սիրելիներուս միացեր էի:

### ԸՍՏ ԽՈՍՏՈՒՄԻՍ ԳԱՑԻ ԱՄՄԱՆ ԵՒ ԵՐՈՒՍԱՂԷՄ



ԱՄՄԱՆԻ ՆԿԱՐՆԵՐԷՆ ԱՊՈՒՄՈՒՍԱՅԻՆ  
ՏՈՒՆԸ 1956

Զախէն ոտքի՝ Սարգիս Ազնաւորեան, Ամմանէն մէկը, Վարդիվաւ, Ապու Մուսա, Էմմօ Լեւոն Քայսերլեան, Ապու Մուսայիմ տղան՝ Մովսէս եւ բոռնիկը:

Գացի եւ տեսայ այդ սքանչելի տղոց ծնողքը՝ Ամման եւ Երուսաղէմ. այն տըղոց, որոնք մէկ օր զիս մեծակ չձգեցին, ըլլա՛յ հիւանդանոց, ըլլա՛յ տունը կեցութեանս տասը երկար ամիսներու ընթացքին՝ Շիֆալոյի մէջ:

1956ի սկիզբը՝ չորս մտերիմ ընկերներով գացինք Ամման, Սարգիս Ազնաւորեան, Պետրոս Վե-

հիլեան եւ կնքահայրը՝ Յովսէփ: Իջանք Ապու Մուսային տունը՝ Պօղոս Գասապեան, որ կ'ըլլայ Շիֆակոյի Սահակ Շաֆաբեանին աները: Շատ սիրալիք ընդունեցին մեզ եւ իրենց միջոցաւ բոլորին ծնողքը եւ ազգականները տեսայ եւ իրենց հաղորդեցի իրենց զաւակներուն ջերմագին բարեւները եւ կարօտագին համբուրեցի ամէնն ալ: Որեւէ մէկու մը տունը որ գացինք, անմիջապէս սեղան կը սարքէին: Կը պատմէի իրենց զաւակներուն հետ անցուցած օրերէս: Մտիկ ընելով կու լային, կը յուզուէին, նաեւ կ'ուրախանային իմանալով իրենց լաւ յուրերը: Գացինք նաեւ Երուսաղէմ, Ճարաշ եւ Մեռեալ ծով:

Ապու Մուսան ինչ ընելը չէր գիտեր: Առտու կանուխ մեծ ափսէով անուշեղէն «ֆնէֆի» կը բերէր, իսկ կէսօրները՝ Ուրֆայի քեպպը պակաս չէր ըլլար, պզտիկ ուղտի միսով «չիյ ֆէօֆթէ» կ'ընէր այնքան համով: Ամէն օր մեզի հետ կ'ըլլար Էմմօ Լեւոնը (Քայսերլեան), որ Շիֆակոյի տղոց ամէնուն էմմօն էր: Ճէֆին ծնողքին հետ ալ գացինք



Ճէֆին Ծնողքին Հետ  
Գեթսեմաւնի Ամսուն 1956



Չախէն՝ Վարդիվառ, Ապու Մուսա, Պէյրութէն ընկերս՝ Յարութիւն Սարաֆեան, Բարունակ, Ետելը ոտֆի՝ Մովսէս:

Գեթսեմանի Պարտէզը Հայոց: Շիֆակոյի տղոց ծնողներուն մէկ մէկ այցելեցի: Ես իմ ուսերուս վրայ դրած պարտականութիւնս եւ Շիֆակոյի տղոց խոստումս լի ու լի կատարեցի եւ երեք օր մնալէ հտֆ վերադարձանք Պէյրութ:

Ամման, այս մարդոց հետ տեսնուելով հետեւեալ եզրակացութեան եկայ. թէպէտ կը տառապին իրենց զաւակներուն կարօտը քաշելէն, բայց գոհ են որ անոնք գացին Ամերիկա, որովհետեւ կը մտածեն թէ իրենց զաւակներուն ապագան Ամմանի մէջ շատ փայլուն պիտի չըլլար, նաեւ կը յուսան, որ մօտ ատենէն կը միանան անոնց: Արդարեւ, քանի մը ամիս չանցած՝ օրինակ, Ապու Մուսան իր ամբողջ ընտանիքով Ամերիկա գնաց:



ԱՊՈՒ ՄՈՒՍԱՅԻ ՀԵՏ ԼԻԲԱՆԱՆԻ ՏԵՍԱՐԺԱՆ ՎԱՅՐԵՐԸ



*ԼԻԲԱՆԱՆ՝ ԷՐԶ Վարդիվառ, Ապու Մուսա, Սարգիս Ազնաուրեան, Մովսէս:*

*Առջեւը ծռած՝ Ապու Մուսային պզտիկ տղան՝ Ժանօ:*



## ԳԼՈՒԽ 7

**ՄԻՇՏ ՀՄԸՄ-Ի ՀԵՏ 1956 - ՄԻՆՉԵԻ ՕՐԵՐՍ**

ՀՄԸՄ-Ի ՆԵՐԿԱՅՈՒՑՈՒՑՉԱԿԱՆ ԽՈՒՄԲԻՆ ՀԵՏ ՀԱԼԷՊ

ՀՄԸՄ-ԱԿԱՆ ՀԻՒՐԵՐՍ

ՀՄԸՄ-ՀՅԴ ՓՈԽ-ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ ՆԵՐԸ

ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ՄԱՐԶԱԴԱՇԻՆ ԾԻՆՈՒԹԻՒՆԸ

ՀՄԸՄ-Ի ՎԵՐՋԻՆ ԸՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆՍ ՀԱՄԱԾԽԱՐՀԱՅԻՆ ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐՈՒ

1995 - ՀՄԸՄ-Ի Զ. ՊԱՏԳԱՄԱԿՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

1999 - ՊԱՐԳԵԻԱՏՐՈՒՄ ՀՄԸՄ-Ի ՊԱՏՈՒԱՆՇԱՆՈՎ





## ՀՄԸՄ-ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՁԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ 1956

ՀՄԸՄի Պէյրուքի եւ Պուրն Համուտի վարչութիւնները որոշեցին երկու մասնանհիւղերու լաւագոյն խաղացողներով կազմել ներկայացուցչական խումբ մը, որ պիտի ներկայացնէ ՀՄԸՄը, միեւնոյն ատեն մասնաւոր ուժ տալ Բ. խումբերուն:

Այս առթիւ նշանակուեցաւ հետեւեալ ֆուլթայոյի յանձնախումբը.

Պէյրուքի մասնանհիւղէն՝ Արամ Անթիֆանեան, Վարդիվառ Յովհաննէսեան, Ժոզէֆ Նալպանտեան՝ խումբին մարզիչը:

Պուրն Համուտի մասնանհիւղէն՝ Յարութիւն Մարկարոսեան, Ալպեր Ուննեան, Արսէն Նանարեան, Զաֆար Զորպանեան:

ԶԱՔԱՐ ԶՈՐՊԱՃԵԱՆ - Գնահատական խօսք կ'ուզեմ արձանագրել Զաֆար Զորպանեանի մասին, որ անսակարկ գոհողութեամբ եւ նուիրումով ծառայեց ՀՄԸՄի ֆուլթայոյի զարգացման, իբր Պուրն Համուտի ՀՄԸՄի ֆուլթայոյի պատասխանատու եւ Լեռնալիրանանի ֆուլթայոյի ֆետերասիօնի մէջ՝ ՀՄԸՄի ներկայացուցիչ:

## ԶԱՏԻԿ - ԸՍՏ ԱՒԱՆԴՈՒԹԵԱՆ՝ ԴԷՊԻ ՀԱԼԷՊ 1956ԻՆ ՀՄԸՄ-Ի ՄԻԶՄԱՍՆԱԾԻՒՂԱՅԻՆ ԽԱՂԵՐՈՒ ՖՈՒԹՊՈԼԻ ԽՈՒՄԲԻՆ ՀԵՏ

Ամերիկայէն վերադարձիս այնքան կարօտը ունէի ՀՄԸՄի ֆուլթայոյի խումբին ջերմ մթնոլորտին, ուր տասնեակ տարիներ յաղթական դրօշակը միշտ բարձր պահած էի: Այսպէս՝ ընկերակցեցայ խումբին դէպի Հալէպ, Զատկուայ Նաւասարդեան խաղերուն ներկայ ըլլալու եւ վերապրելու ՀՄԸՄի միջմասնանհիւղայինի անմոռանալի յիշատակներով լեցուն պահերը եւ պանծալի տողանցքը:

Պէյրուք-Հալէպ վերջին մրցումին, փափաքեցայ խումբին հետ դաշտ իջնել ֆուլթայոյի տարագով (անշուշտ խաղը չսկսած դուրս պիտի ելլէի): Լսեցի թրիպիւնէն հալէպցիներուն բացազանչութիւնները՝ «Վարդիվառը նորէն եկած է»: Շատ լաւ ֆուլթայոյի մրցում եղաւ, հին օրերը յիշեցնող, իսկ դադարին՝ ՀՄԸՄի պանծալի տողանցքը: Շատ ուրախ էի եւ երնէկ կու տայի այն օրերուն, որ ես ալ կը տողանցէի: Իրիկունը, ըստ մեր սովորութեան, ակումբին մէջ մեծ խրախնանքով տօնեցինք ՀՄԸՄի յաղթանակը, թնդացնելով մթնոլորտը մեր յեղափոխական երգերով, ժողովուրդը հաւաքուած մեր շուրջը, խանդավառութեամբ մեզի կը հետեւէր:



ՊԷՅՐՈՒԹԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՄԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ ՀԱԼԷՊԻ ԴԱՇՏԸ 1956

*Ձախէն ոտքի՝ Նալպանտեան, Յովհաննէս Նազարեան (խմբապետ), Ժիրայր Ատուրեան, Օննիկ Պարսամեան, Գեորգ Ոսկերիչեան, Արիս Մարգումանեան, Մանուէլ Ալթունեան եւ երկու խաղացողներ՝ Աւետիս եւ Սարգիս Սարգիսեան:*

*Ձախէն ծոած՝ Լեւոն Ալթունեան, Վահէ Մինասեան, լիբանանցի Քղթակից՝ Ժոզէֆ Հըրտան, Վարդիվառ, Եղիա Բիւսկիլեան (բեկարոյժ), Յակոբ Պարիկեան:*

*Այս կազմին մէջ կան իմ օրերէս՝ Յովհաննէս Նազարեան եւ Մանուէլ Ալթունեան:*



ՀՄԸՄ-Ի ՄԻՋՄԱՍՆԱԺԻՒՂԱՅԻՆ ԽԱՂԵՐԸ ՀԱԼԷՊ 1956  
ԽՈՒՄԲԻՆ ՀԵՏ ԵՄ ԵՒ ԿԸ ՅԻՇԵՄ... (ԵՐՆԷՎ ԱՅՆ ՕՐԵՐՈՒՆ...)  
*Վերի նկարը՝ Վարդիվառ ֆուլպուլի ցուցադրութիւն մը կ'ընէ:*

## ՀՄԸՄ-ԱԿԱՆ ՀԻՒՐԵՐՍ

Հնու տեղին է յիշատակել այն ՀՄԸՄականները, որոնք պարագաներու բերումով Լիբանանը ձգած եւ գաղթած են հեռաւոր երկիրներ: Տարիներ ետք, իրենց կարօտը առնելու համար, վերադարձած են Լիբանան տեսնելու իրենց երբեմնի սիրելի ՀՄԸՄը եւ ՀՄԸՄական եղբայրները:

Այսպէս շատեր եկան, բայց ես հոս կ'ուզեմ յիշել Տատեան եղբայրները՝ Հրաչ եւ Գեղամ, մաքուր նկարագիրով, նուիրեալ ՀՄԸՄականներ:

Քառասունական թուականներուն ՀՄԸՄի անուանի աբլեթներն էին (BARRE FIXE): Այս երկու եղբայրները գաղթեցին Պրագիլ եւ տարիներ ետք վերադարձան Լիբանան 1956ին, մեծ յոյսով՝ առաջուան հայահոծ եւ զուտ հայութեամբ բնակուած Պուրն Համուտը տեսնելու: Բայց ափսոս, իրենց օրերու հայկական Պուրն Համուտը չգտան եւ որոշեցին ետ Պրագիլ վերադառնալ:

1956ին նաեւ Պէյրուք կը գտնուէր եղբայր Քերովրէ Առաքելեան՝ Մեքսիքոյէն, անցեալ տարի Շիֆակօ, ոտքիս գործողութեան առթիւ եկած էր զիս այցելելու:

Այս վաստակաւոր ՀՄԸՄականներուն ի պատիւ, ճաշկերոյթ-խրատխնամք մը սարքեցի մեր տունը, ուր նաեւ հրաւիրեցի ֆուլպուլիստ ընկերներս եւ մեր մտերիմներ՝ Գեղարդը, Պօղոս Սնապեանը, Յակոբ Կիւլոյեան եւ ուրիշներ:

Եղբայր Գեղարդը բարի գալուստ մաղթեց հիւրերուն եւ արժանի գնահատանք ըրաւ Տատեան եղբայրներուն, իրենց ՀՄԸՄականի մաքուր նկարագրին եւ մարզիկի ազնիւ ոգիին համար, նաեւ եղբայր Քերովրէ Առաքելեանին գնահատանքի խօսքը ըրաւ՝ հեռաւոր Մեքսիքոյի մէջ ՀՄԸՄի մասնաճիւղ հիմնելուն համար: Անկէ ետք սկսանք մեր խանդավառ խրատխնամք, «Յառաջ Նահատակ»ով եւ յեղափոխական երգերով թնդացուցինք մթնոլորտը: Պօղոս Սնապեան, խանդավառուած այս մթնոլորտէն, բոցավառ ճառ մը խօսեցաւ ՀՄԸՄի օգտաշատ գործունէութեան մասին մեր ժողովուրդէն ներս: Մեր հիւր եղբայրները կը հիանային այս խանդավառ հայկական մթնոլորտէն:

Անմոռանալի յիշատակներով լեցուն այս խրատխնամք տեսց մինչեւ ուշ գիշեր: Մանաւանդ Տատեան եղբայրները կը վերյիշէին իրենց Պուրն Համուտի տան մէջ եղած երբեմնի նոյնանման խրատխնամքները, ուր յանախ ՀՄԸՄի ֆուլպուլի խումբը կը հրաւիրէին յաղթանակէն ետք:

Անպայման կ'ուզեմ յիշել հոս իմ թանկագին ընկերներս՝ Պարգեւ եւ Թովմաս, որոնք սիրով պատրաստեցին սեղանի խորովածը մեր տունին տանիքին վրայ քարիւղով լամբի լոյսին տակ:



ՀԱՐՄ-ԱԿԱՆ ՀԻՒՐԵՐՈՒՄ ՃԱԾԿԵՐՈՅԹԻ ՄԵՐ ՏՈՒՆԸ, 1956:  
ՅԱՌԱՋ ՆԱՀԱՏԱԿ ԵՐԳԵԼԷՆ ՎԵՐՋ՝ ԵՂԲԱՅՐ Յ. ԳԵՂԱՐԴԻ  
ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏԻ ԽՕՍՔԸ:

*Զախէն՝ Գրիգոր Ուզունեան, Կարօ Կիւլոյեան, Յարութիւն Մարկարոսեան, Պողոս Սնապեան, ետեւը՝ Յակոբ Կիւլոյեան, Վարդիվառ, Յ. Գեղարդ, Հրաչ Տատեան, Քերովբէ Առաքելեան եւ ուրիշներ:*



ՊՕՂՈՍ ՍՆԱՊԵԱՆԻ ԽԱՆԳԱՎԱՌԻ ԲԱԺԱԿԱՃԱՌԸ



ՀՌՉԱԿԱՒՈՐ ՓԵԼԷՆ ՊՐԱԶԻԼ

*Ձախէն՝ Գեղամ Տատեան, Վարուժան Բամպուլեան (ՀՄԸՄԻ Ա. խումբի նախկին ֆուլպուրիստ), հռչակաւոր ֆուլպուրիստ՝ Փելէ եւ Հրաչ Տատեան:*



*ԵՂԱՅՐ ԲԵՐՈՎԲԷ ԱՌԱՔԵԼԵԱՆ ՀՄԸՄ-Ի ՊԱՍՔԵԹՊՈԼԻ ԴԱԾՏԸ Ձախէն՝ Տոֆ. Արամ Պաղտասարեան, Քերովրէ Առաքելեան, Վարդիվառ, Մանուէլ, Օրիորդ Առաքելեան, ետեւը՝ Յակոբ Թաշնեան, Պէյրուս 1956:*



*Իմ մտերիմ ընկերոջս՝ Վարդիվառ Տէր Գալուստեանին տունը ֆուքպոլիստներ եւ մեր մտերիմները: Շատ խանդավառ մթնոլորտ:*

*Յարութիւն Մարկարոսեան, Արմէն Աբգարեան՝ անուանի ֆուքպոլիստ Հալեպէն, Տէր Հայրը, Վարդիվառ Տէր Գալուստեանին եղբայրը, Հրաչ Տատեան, Տոպրի, Վարդիվառ Տէր Գալուստեան, Յակոբ Թաշնեան, Յովհաննէս Թերգեան, Սարգիս Սարգիսեան, Օննիկ Պարսամեան, Եղիա Բիւսկիւլեան՝ ֆուքպոլի խումբերուն քեկարոյժը, Վահէ Մինասեան, Գօգօ Պապոյեան եւ ուրիշներ:*

*Վարդիվառ Տէր Գալուստեան աշխոյժով բարի գալուստ կը մաղթէ ներկաներուն իր յարկին տակ:*



*Սեղանին գլուխը՝ Վարդիվառ, Հրաչ եւ Տոպրի:*

## ՇԻՔԱԿՈՅԻ ԱՄՄԱՆՑԻ ՏՂՈՑ ԱՆՆՄԱՆԸ

Հիւրս է Պէյրուք Շիֆակոյի ամմանցի հրաշալի տղաներէն Ճէֆ Պարսամեանը: Պտտցուցի զինք Լիբանանի գեղատեսիլ վայրերը՝ Զահլէ, Վատիի անուանի նաշարանը, ուր շատ ուրախ ժամանակ անցուցինք նաեւ այցելեցինք Անթիլիաս՝ Վեհափառ Զարեհ Կաթողիկոսին օրհնութիւնը առնելու:



ԱՄՄԱՆՑԻ ԺԷՔ ՊԱՐՍԱՄԵԱՆԻՆ ՀԵՏ ՎԵՀԱՓԱՌԻՆ ՄՕՏ



ԶԱՀԼԷ-ՎԱՏԻ 27 ՅՈՒՆԻՍ 1959

Զախէն՝ Ստեփան Թօժաթլեան, Սարգիս Ազնաւորեան, Ճէֆ Պարսամեան, Վարդիվառ, Յարութիւն Մարկարոսեան եւ Պարգեւ Տապանեան:

## ՀԱՃԻ ՀԱՅԿ ԼԻՒԱՆԱՆԻ ՄԷՋ

1941 - 1945 ՀՄԸՄ-ի Ա.ԽՈՒՄԲԻ ԽԱՂԸՆԿԵՐՍ ԵՂԱԾ Է

Հանի Հայկ Կարմիրեան, ՀՄԸՄի եւ Լիբանանի լաւագոյն խաղացողներէն եղած է 1941-1945: 1945ին, ներգաղթի օրերուն, համայնավարներու կողմէ «Բագրամեան» ֆութպոլի խումբը մէջտեղ կու գայ, Հանի Հայկ կը ձգէ ՀՄԸՄը եւ քանի մը ուրիշ խաղացողներով կ'երթայ «Բագրամեան»: Հոս, արդար ըլլալու համար կ'ուզեմ արձանագրել, որ Հանի Հայկը սկիզբէն համայնավարամիտ էր եւ մնաց այդպէս, հակառակ ՀՄԸՄի մէջ ըլլալուն, երբեք ՀՄԸՄի դէմ գէշ չէ խօսած: Վերջ ի վերջոյ ՀՄԸՄի մէջ է որ անուն շահեցաւ եւ հռչակի տիրացաւ: «Բագրամեան» խումբը եւ խաղացողները ներգաղթի վերջին կարաւանով գացին Հա-յաստան: Տարիներ ետք, 1972ին, Հանի Հայկ կը վերադառնայ Լիբանան՝ այցելութեան: Մեզ, իր ատենին ՀՄԸՄի մէջ միասին խաղած ֆութպոլիստներս, գացինք իրեն բարի գալուստ մաղթեցինք եւ հրաւիրեցինք զինք մեր ակումբը:

Եկաւ մեր ակումբը, ուր պատուեցինք զինք պատշաճօրէն, նաեւ ՀՄԸՄի Վարչութիւնը իրեն ի պատիւ թէյասեղան մը սարքած էր, առիթ տալու համար իր շրջանին խումբին մաս կազմած մարզիկներուն եւ վարչականներուն՝ որ զիրար տեսներ: Նոյն ձեւով եւ նոյն մարդոցմով ճաշկերոյթ մը կազմակերպեցի Անթիլիասի ճաշարաններէն մէկուն մէջ:

Ակումբէն ներս սկսաւ նայիլ պահարանին մէջի բաժակներուն, տեսաւ իր շրջանին շահուած բաժակները եւ խմբակները, տեսաւ մեր սիրալիր վերաբերմունքը իրեն հանդէպ, յուզուեցաւ, աչքերը լեցուեցան: Բաւական հանդարտելէ վերջ՝ խօսեցանք հին օրերէն, ինքը հետեւեալը պատմեց.

«1940ի ամառը ելած էինք լեռ՝ Պասիինթա գիւղը: Ամրան վերջաւորութեան, օր մը, անակնկալօրէն մեր տունը եկաւ ՀՄԸՄի հռչակաւոր ֆութպոլիստ՝ Նիլըրը եւ ուզեց առանձին հետս խօսիլ: Սենեակ մը քաշուեցանք եւ անմիջապէս բացաւ ֆութպոլի հարցը, ըսաւ.

- Դուն ֆութպոլի ձիւք ունիս, եթէ կ'ուզես ապագային լաւ ֆութպոլիստ ըլլալ, անուն շահիլ, միմիայն ՀՄԸՄի մէջ է, որ կրնաս յաջողիլ: Շատ լուրջ խօսակցութենէ ետք համոզեց զիս եւ ես իմ յօժար կամեով ստորագրեցի ՀՄԸՄէն խաղալու պայմանագիրը: Այո, ես ստորագրեցի ՀՄԸՄէն եւ տարիներ խաղայ, երբեք չեմ զղջացած, եւ Նիլըր չէր սխալած: Քանի մը տարի չանցած իր ըսածը իրականութիւն եղած էր:

- Այսօր տակաւին, եթէ մարդկային առաքինութիւններէն մէկ երկու գիծ կը պահեմ, ատիկա կը պարտիմ ՀՄԸՄին:

Նիլըր երթալէն կէս ժամ չանցած՝ ՀՆԸԻ մարդիկը եկան, որ «Անդրանիկ»էն ստորագրեմ: Ըսի, ուշացեր էք, քիչ առաջ ստորագրեցի ՀՄԸՄէն խաղալու պայմանագիրս:



## ԾԱՇԿԵՐՈՅԹ Ի ՊԱՏԻ ԼԱՃԻ ԼԱՅԿԻ 1972

Ուզեցի նաշասեղանի մը շուրջ հաւաքել իր օրերուն ՀՄԸՄի մէջ միասին խաղցած խաղացողները, զգացնելու իրեն թէ ՀՄԸՄականները չեն մոռնար իրենց երբեմնի խաղացողը եւ միշտ կը սիրեն զինք: Այս նպատակով, իր հետ ՀՄԸՄի մէջ խաղցած բոլոր խաղացողները գտայ եւ հրաւիրեցի, նաեւ իր եւ մեր մօտիկ մտերիմները, մասնաւորաբար իր ժամանակին ՀՄԸՄի ընդհանուր խմբապետը՝ եղբայր Սամուէլ Գալուստեան, եղբայր Ժողէֆ Նալպանտեան, որոնք ներկայ եղան Անթիլիասի շէնդ մէկ նաշարանին մէջ սարժուած նաշկերոյթին:

Շատ ուրախ եւ յուզումնալից պահեր անցուցինք, պատմելով մեր սփանջելի մրցումներէն, ամառուան խրախնանքներէն, պտոյտներէն, դէպի Հալէպ նամբորդութենէն, ՀՄԸՄի միջմասնաճիւղային խաղերէն եւ մեր յաղթանակներէն, Լիբանանի բաժակը՝ 1943ին, եւ Լիբանանի ախոյեանութիւնը՝ 1944ին:



## ԾԱՇԿԵՐՈՅԹ Ի ՊԱՏԻ ԼԱՃԻ ԼԱՅԿԻՆ

Զախէն՝ Պարգեւ Տապանեան, Սարգիս Ազնաւորեան, Աւետիս Տէր Պետրոսեան, Տոպրի, Տիգրան Արապեան, Հանի Հայկին ազգականը՝ Նուպար, Զաւէն Զօրպանեան, Սամուէլ Գալուստեան, Կիրակոս Գալայնեան, Սաաթի (Կարապետ Սաաթեան), Հանի Հայկ, Վարդիվառ, Ժողէֆ Նալպանտեան եւ Վարդգէս Հայրապետեան՝ Պէյրուքի ՀՄԸՄի Վարչութեան ներկայացուցիչ:

Այս վեյիշումները մեզի տարին 1940ական անմոռանալի գեղեցիկ տարիները, ուր մեր փայլուն յաղթանակներով մեր ազնիւ ժողովուրդին ուրախութեան գագաթները կը հասցնէինք:

Այս բոլորը մեր աչքերուն առջեւէն երագի պէս կը տողանցէին եւ մենք՝ ներկաներս, վարչական թէ խաղացող, անսահմանօրէն ուրախ էինք:



ԱՆԹԻԼԻԱՍ 1972

Զախէն՝ Սասնթի, Հանի Հայկ, Աւետիս եւ Վարդիվառ:

## ՀՄԸՄ - ՀՅԴ ՀԻԱՆԱԼԻ ՓՈԽՅԱՐԱՔԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Անուրանալի է, որ ՀՄԸՄը մեր ժողովուրդի իրականութեան մէջ, հսկայական դեր կատարած է պատրաստելով մեր երիտասարդութիւնը, «առողջ միտք առողջ մարմնի մէջ» սկզբունքով, յետոյ առաջնորդելով զայն դէպի ազնիւն ու հայրենասէրը՝ ապագայի լաւագոյն ձգտումներով, միշտ աչքին առջեւ ունենալով ՀՄԸՄի «Բարձրացի՛ր Բարձրացո՛ւր» վսեմ նշանաբանը: Այս բոլորը օրը օրին ներմուծելով սկառուտական շարքերու եւ ամէն տեսակի մարզական խումբերուն մէջ:

Այս բոլորին մէջ կարեւորագոյնը այն եղաւ, որ այսպէս առողջ, մաքուր, ազնիւ եւ հայրենասէր պատրաստուած երիտասարդութիւնը եկաւ խտացուց Հ.Յ.Դ.ի շարքերը, մանաւանդ՝ ներգաղթի օրերուն, 1945էն սկսեալ: Այսպէս, տարիներու թաւալումով, ՀՄԸՄ եւ ՀՅԴ եղան միատարր՝ մտածումով եւ հոգեբանութեամբ:

Կը յիշեմ 1960ական թուականները, ուր ՀՄԸՄ եւ ՀՅԴ փոխ յարաբերութիւնները աւելիով սկսան զարգանալ, շնորհիւ այդ տարիներու ՀՄԸՄական եւ միեւնոյն ատեն կուսակցական շարժալիւններու, որոնք իրենց գործօն ծառայութիւնը աւարտելէն ետք ՀՄԸՄէն ներս, եկան Դաշնակցութեան շարքերը եւ իրենք զիրենք դրին կուսակցութեան տրամադրութեան տակ:

Մեծ թիւով պարտանանաչ ՀՄԸՄականներ եկան միանալու կուսակցութեան, իրենց ազգային գործունէութիւնը շարունակելու անոր շարքերուն մէջ: Ինչպէս:

ՅԱԿՈՒՅ ԱՇՃԵԱՆ - Եղած է ՀՄԸՄական եւ խաղցած է ֆութպոլի «Մուրատ» խումբէն, ապա վարած է Պէյրութի ՀՄԸՄի վարչութեան ատենապետութիւնը, յետոյ ծառայած է Քրիստափոր Կոմիտէի մէջ եւ հասած՝ Հրուանդանի Կեդրոնական Կոմիտէ, որուն հերթապահութիւնը վարած է տարիներ շարունակ:

ՎԱՐԴԳԷՍ ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ - Եղած է ՀՄԸՄական, պասէթի անուանի խաղացող, մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային վարչութեան եւ եղած է Հ.Մ.Ը.Մ.ի Անդրանիկ Կեդր. վարչութեան ատենապետ: Պատկանած է Քրիստափոր Կոմիտէութեան, վարելով պատասխանատու պաշտօններ, ապա մաս կազմած է Հրուանդանի Կեդրոնական Կոմիտէին, տարիներ շարունակ:

ՍԱՐԳԻՍ ԱԶՆԱԻՈՐԵԱՆ - Եղած է ՀՄԸՄական, անուանի ֆութպոլիստ Ա. խումբէն, տարիներ վարած է Նիկոլ Դուման Կոմիտէի հերթապահութիւնը, ապա մաս կազմած է Հրուանդանի Կեդրոնական Կոմիտէի տարիներ շարունակ:

ՎԱՐԴԻՎԱՌ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ - Եղած է ՀՄԸՄական, խաղցած է Ա. խումբէն, որուն խմբապետութիւնը վարած է վեց տարի, եղած է Պէյրութի վարչական եւ շրջանային վարչութեան մաս կազմած, ապա տարիներ մաս կազմած է Սարդարապատ Կոմիտէին՝ ստանձնելով պատասխանատու պաշտօններ: Վերջապէս մաս կազմած է Հրուանդանի Կեդրոնական Կոմիտէի տարիներ շարունակ:

Ահա այս վերոյիշեալ ընկերներէն կազմուեցաւ Հրուանդանի Կեդրոնական Կոմիտէի կորիզը, ամբողջացած ուրիշ նուիրեալ ընկերներով եւ ծառայեց չորս տարի շարունակաբար: Այսպիսով, աւելի սերտացաւ փոխ յարաբերութիւնները ՀՄԸՄ-ՀՅԴի միջեւ. տարբեր չէր կրնար ըլլալ: Կ. Կ.ի մէջ կային չորս աչճառու ՀՄԸՄականներ:



Հ. Յ. Դ. - ՀՄԸՄ-ի ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ ԿՈՑՆ ՍԵՂԱՆԻ ՇՈՒՐՋ  
*Ջախեն՝ Յովհաննէս Շահինեան, դիմացը՝ Տոբթ. Միսաֆ Արզումանեան՝  
 ՀՄԸՄի Շրջանային Վարչութեան Եւ Վարդիվառ Յովհաննէսեան եւ  
 Սարգիս Ազնաւորեան Կեդրոնական Կոմիտէի անդամներէն:*



ՀՅԴ - ՀՄԸՄ

*Ջախեն՝ Յովհաննէս Շահինեան՝ ՀՄԸՄի Շրջ. Վարչութեան ատենապետ,  
 Տիգրան Ոսկունի («Ազդակ»ի խմբագիր), Ժոզէֆ Նալպանտեան (ՀՄԸՄի  
 ֆուրսպոլի մարզիչ), Վարդիվառ Յովհաննէսեան, Սարգիս Ազնաւորեան  
 եւ Արրահամ Ոսկերիչեան (Կեդրոնական Կոմիտէի անդամներ):*

**ՊՈՒՐԾ ՀԱՄՈՒՏԻ ԱՐԴԻԱԿԱՆ ՄԱՐԶԱԴԱՇՏԻՆ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ**  
**Ընկեր Յակոբ Աշենանի Քաղաքացիությունը օրով սկսաւ 1960ին:**

Հ. Յ. Գ. Հրուանդանի Կեդրոնական Կոմիտէի օրով եւ կուսակցական բարեբաստիկ մէկ որոշումով ընկեր Յակոբ Աշենան ընտրուեցաւ Պուրն Համուտի Քաղաքացետ: Գործի շնուեցաւ, հայահոծ Պուրն Համուտի բազում կարիքներու դարման գտնելու աշխատանքին: Կ. Կ. ի ընկերներուն՝ ՀՄԸՄական անուանի մարզիկներ՝ Վարդգէս Տէր Կարապետեանի, Սարգիս Ազնաւորեանի եւ Վարդիվառ Յովհաննէսեանի առաջարկով, նոյնինքն՝ ՀՄԸՄական Քաղաքացետ՝ ընկեր Յակոբ Աշենանի հաւանութեամբ, որոշուեցաւ Պուրն Համուտի մէջ Քաղաքացետարանի մարզադաշտ մը շինել:

Ընկեր Աշենան խոստացաւ իր առաջնահերթ ծրագիրը դարձնել մարզադաշտին շինութիւնը: Պետական շրջանակներու մօտ հետեւողական դիմումները, մանաւանդ Միշէլ Մըրրիին (օրին Պուրն Համուտի Քաղաքացետարանի ճարտարացետ) աջակցութիւնը այս մեծ ծրագիրին իրագործման, իր ունեցած ազդեցութեամբ կառավարական վերին խաւերու մէջ, արագացուցին այս ազգօգուտ ծրագիրին իրագործումը: Իր անմիջական եւ հաւատարիմ գործակիցն էր՝ Մըրիայիլ Նըսէյր՝ Քաղաքացետարանի ընդհանուր բարտուղարը:

Այլեւս մարզադաշտին գործավարը ամէն տեղ կը վազէր սոյն ծրագրին յաջողութեան համար:



Պ. ՄԻՇԷԼ  
ՄԸՐ  
ԸՆԿ. ՅԱԿՈԲ  
ԱՇԵՆԱՆ

Ընկեր Յակոբ Աշենանի հետեւողական դիմումներով եւ Պ. Միշէլ Մըրրիի միջամտութեամբ պետական վերին խաւերու մէջ, իրագործուեցաւ Պուրն Համուտի մարզադաշտին շինութիւնը:

**ՊՈՒՐԾ ՀԱՄՈՒՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՐԴԻԱԿԱՆ  
ՄԱՐԶԱՐԱՇՏԻՆ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ ՀԱՆԳՐՈՒԱՆ ԱՌՀԱՆԳՐՈՒԱՆ**

1960.- Պուրն Համուտի քաղաքացիները Յակոբ Աշենան, գործի կը լծուի եւ կը դիմէ պատկան իշխանութիւններու մօտ օժտելու Պուրն Համուտի հայաբնակ շրջանը արդիական մարզադաշտով մը: Ապա կը կազմուի եւ կը վաւերացուի պետական յանձնախումբ՝ իրագործելու այս կենսական ծրագիրը:

1964.- 11 Ապրիլ, Լեռնալիբանանի Մուհաֆըզ (նահանգացիտ)՝ Ֆաուզի Պարտաուիլ, Գայմագամ՝ Շէյխ Համիտ Խուրի եւ Լիբանանի Առաջնորդ՝ Տահատ Սրբազան կը կատարեն պաշտօնական հիմնօրհնէք մարզադաշտին, որ պիտի կառուցուի 32.200 քառ.մեթր տարածութեամբ հողամասի մը վրայ:

1967.- 14 Նոյեմբեր, պետութեան որոշումով կը կազմուի գործադիր յանձնախումբը, որ կը ստանձնէ մարզադաշտին հսկողութիւնն ու գործածութիւնը. նախագահ՝ ընկեր Յակոբ Աշենան, անդամներ՝ Էտուար Խուրի, Թօնի Միր, Ժոզէֆ Նալպանտեան, Վարդիվառ, գործավար՝ Մըխայիլ Նըսէյր:

1969.- 13 Փետրուար, մարզադաշտին պաշտօնական բացումը կը կատարուի մեծ հանդիսութեամբ, բազմահազար հայերու ներկայութեան: Այս բացումը յատկանշելու համար, կը կայանայ ֆութպոլի առաջին մրցումը՝ ՀՄԸՄի եւ հունգարական՝ «Թաթապանիա» խումբին միջեւ:



ԸՆԿԵՐ ՅԱԿՈՒ ԱՇԵՆԱՆ ՊՈՒՐԾ ՀԱՄՈՒՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ  
ՄԸԽԱՅԻԼ ՆԸՍԷՅՐ՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Միխայիլ Նըսէյր իբր մարզադաշտի յանձնախումբի գործավար՝ հեւ ի հեւ վազեց դաշտին շինութիւնը ապահովելու համար:

ԿԱՌՈՒՑՈՒԵՑԱԻ ԱՐԴԻԱԿԱՆ ՄԱՐԶԱԴԱՇՏԸ  
 ՊՈՒՐԾ ՀԱՄՈՒՏԻ ՀԱՅԱՀՈԾ ՇՐՋԱՆԻՆ ՄԷՋ  
 ՀՄԸՄականներու և տարիներու երազն էր իրագործուած



*Ու այս մեծ իրագործումը արժանացաւ բոլորին գնահատանքին, Հայ ժողովուրդին, ՀՄԸՄին, Կուսակցութեան, մեր ազգային վարժարաններու տնօրէնութեանց եւ տեղական մարզական միութիւններուն:*

*Պուրն Համուտի մարզադաշտը, նոյնպէս Լիբանանեան բոլոր թերթերուն կողմէ նկատուեցաւ իբր ամբողջ Լիբանանի լուսագոյն դաշտը, որ պիտի օգտագործուէր մարզական բոլոր միութիւններու կողմէ. անշուշտ*

Պուրն Համուտի մարզադաշտի հիմնօրհնէքի արարողութիւնը կը կատարէ Լիբանանի առաջնորդ՝ Տանատ Սրբազան Ուրֆալեան առաջին քարը կը դնէ Լիբանանի մուհաֆըզ՝ Ֆավզի Պարտավիլ՝ 11 Ապրիլ 1964 ձախին՝ ընկեր Պետրոս Վեքիլեան

առիւծի բաժինը, ըստ արժանւոյն, կ'իյնար ՀՄԸՄին, իր ֆուլթայլի տասնեակ խումբերով եւ աթլետիկայի կազմերով:

14 Նոյեմբեր 1967ին, Քաղաքապետը կազմեց հինգ հոգիանոց մասնախտուկ դաշտի յանձնախումբ՝ իր նախագահութեամբ, դաշտին գործերը վարելու, որուն մէջ կային Եղբայր Ժոզէֆ Նալպանտեան, դաշտին թեֆնիֆ տնօրէնը եւ ես՝ իբր խորհրդատու: Այս գեղեցիկ, նորակառոյց դաշտը, որուն իրագործման տարիներ սպասած էինք, սկսաւ ծառայել առաւելաբար ՀՄԸՄին, հայկական ազգային ձեռնարկներուն, դպրոցներու մարզական հանդէսներուն եւ Մայիսեան Փառատօնին:



ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ՄԱՐԶԱԴԱՇՏԻՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԲԱՑՈՒՄԸ

ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՀԱԶԱՐՆԵՐՈՎ

13 Փետրուար 1969, Վարդանանց տօնին առթիւ: Զախէն՝ Տանատ Սրբազան, Միշէլ Մըրր, Յակոբ Աշնեան (Քաղաքապետ), Յաուզի Պարտաուիլ (Լեռնալիբանանի մուհաֆըզ), հրամանատար՝ Հայտար (Լեռնալիբանանի ներքին ուժերու հրամանատար):



Մարզադաշտին պաշտօնական բացման հանդիսաւոր արարողութեան, որ տեղի ունեցաւ մեծ շուքով, Լիբանանի ֆութպոլի ֆետերասիոնի նախագահը՝ Նասիֆ Մեժտելեհի, մարզական միութիւններու ներկայացուցիչները, Լիբանանեան թերթերու մարզական թղթակիցները, հիացական բառերով դրուատեցին այս ազգօգուտ շինութիւնը, գնահատական խօսքեր ըսին Պուրն Համուտի Քաղաքապետութեան Խորհուրդի անդամներուն եւ մասնաւորաբար՝ Քաղաքապետին:

Վերջապէս՝ եղբայր Յովհաննէս Շահիեան, ՀՄԸՄի անունով, ընդգծել էտք այս դաշտին ընծայելիք բարիքները մարզական գետնի վրայ՝ շրջանին բոլոր մարզական միութիւններուն, դպրոցներուն եւ վերջապէս՝ ՀՄԸՄին, այս բոլորը նկատեց մեծ բարիք ընդհանրապէս Լիբանանի բոլոր մարզական միութիւններուն: Այս գեղեցիկ եւ մեծ իրագործումին համար բոլոր ՀՄԸՄականներու եւ Շրջանային Վարչութեան անունով, շնորհաւորեց եւ գնահատեց Պուրն Համուտի Քաղաքապետութիւնը եւ անոր նախագահ՝ ընկեր Յակոբ Աշնեանը:

**Մանօթութիւն.** - Պարտք կը զգամ իբր հայ եւ ՀՄԸՄական մարզիկ, երախտագիտական խօսքս արձանագրել, յանձինս՝ Պ. Միշէլ Մըրրի, որ ջանք չխնայեց, պետական վերին շրջանակներու մօտ, յաջողցնելու մարզադաշտի այս գեղեցիկ ծրագիրը: Այս մարզադաշտէն պիտի օգտուին ընդհանրապէս ՀՄԸՄը, Ազգային վարժարանները եւ Հայ ժողովուրդը՝ կատարելու իր ազգային տօնակատարութիւնները: (Յետագային, Պ. Միշէլ Մըրր, քանիցս յայտնաբերեց իր սրտակցութիւնը հանդէպ Հայ ժողովուրդին):

### ՀԻՆԳՇԱԲԹԻ 13 ՓԵՏՐՈՒԱՐ 1969 «Ազդակ»

Հայ մարզասէրներու, ի մասնաւորի ՀՄԸՄի անդամներու եւ համակիրներու տարիներու երազը իրագործուեցաւ: Պուրն Համուտի նորակերտ դաշտին վրայ բացումը եղաւ պաշտօնական եւ ՀՄԸՄ, առաջին անգամ, սոյն դաշտին վրայ, մրցեցաւ հունգարական «Թաթապանիա» խումբին դէմ: Տասնեակ հազարաւոր հայ հանդիսատեսներուն ջնծութիւնը գագաթնակէտին հասած էր:




ՊՈՒՐԾ ՀԱՄՈՒՏԻ ՄԱՐԶԱԴԱՇՏԻՆ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԻՆ ԱՌԹԻԻ ԿԸ ԸՆՈՐՀԱԻՐԵՆ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԸՆԿԵՐ ՅԱԿՈՐ ԱՇԾԵԱՆԸ *Զախին՝ Նասիֆ Մեժտելեցի (ֆուլբյուրլի ֆետերասիոնի նախագահ), աջին՝ Մըլիեմ Քարամ (Լիբանանեան մամուլի սենտիֆայի նախագահ):*



ՄԱՐԶԱԴԱՇՏԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՅԱՆՁՆԱԽՈՒԲԸ ՆԵՐԿԱՅ Է *Զախէն՝ վարդիվառ Յովհաննէսեան (ՀՄԸՄ), Մըլիայիլ Նըսէյր, Էլի Քորալի (Ռասինկ), Նասիֆ Մեժտելեցի, ընկեր Յակոբ Աշնեան, Մըլիեմ Քարամ, Էտուար Խուրի, Ժոզէֆ Նալպանտեան (ՀՄԸՄ), Թօնի Միբ Եւ Վահան Սալորեան:*



ԹԱՆԿԱԳԻՆ ԸՆԿԵՐՍ ՏՈՊՐԻԻՆ ԵՐԱՆԵԼԻ ՕՐԵՐԸՆ  
ՏՈՊՐԻ ՎԱՐԴԻՎԱՌ



ՅԻՇԱՏԱԿԵԼԻ ՆԿԱՐՆԵՐ ԴԷՊԻ ՀԱԼԷՊ 1972

*Ինչպէս 25 տարիներ առաջ՝ Վարդիվառ եւ Տոպրի, նոյնը, այս անգամ՝ տիկիներով եւ Շողիկ: Դէպի Համա նամբան:*



1973ին գումարակցաբար ՀՄԸՄԻ Պատգամադրական ժողովը, ուր Բնութեցաւ նոր օրակարգ մը, Կեդրոնական վարչութիւնը: Նախապատրաստական աշխատանքներուն համար կը յարաջացուի երանգաւ մարմին մը, որ նոր ընտրուելիք վերջին Տրջանային վարչութեան հետ, պիտի պատրաստէ Պատգամաւարական ժողով, ընտրելու համար Կեդրոնական վարչութիւնը, որուն մաս պիտի կազմեն աշխարհի բոլոր ՀՄԸՄԻ վարչութիւնները, փոխան՝ ներկայի Սերժաւոր Արեւելիի Տրջանային վարչութեանը:

**ՀՄԸՄ-ի ՊԱՏԳԱՄԱՐԱԿՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ՊԵՅՐՈՒԹ ՀՄԸՄ-ի ԱԿՈՒՄԲԸ 11 ՄԱՐՏ 1973**

Ա. շարք՝ Բախտեան Բարսեղեան, Նշան Թրեյրիկեան, Հրաչ Թրեյրիկեան, Պետրոս Բերթեկեան, Զորիկ Պանոսեան, վարդգէս Տէր Կարապետեան, վարդիկաւ Յովհաննէսեան, Յովհաննէս Շահինեան, Տիգրան Ռայունի, Յովհաննէս Պէրպէրեան, Երուանդ Տէմիրճեան, Անդրանիկ Ուրֆալեան, Յովհաննէս Տէր Յարութիւնեան, Եղբայր մը, վարդգէս Հարապետեան, Բիւզանդ Թրեյրիկեան եւ ...



*Զախեն ոսֆի՝ (սիվիլ) Հալէպի նշանաւոր Արտաւազդը, Վարդիվառ, Սաաթնի, Պետրոս, Նալպանտեան, Արմէն, Սարգիս, Տիգրան եւ Վազգէն: Զախէն ծոած՝ Լեւոն Պալապանեան, Կիրակոս, Յովհաննէս Թերզեան եւ Եղիա Բիւսկիլեան (խումբին բեկարոյժը):*



*Վարդիվառ գնդակը կը քաշէ, բայց հազիւ կը հասնի բերդապահ Տիգրանին:*

*Երնէկ այն օրերուն, երբ արգիլուած էր ինձի փորձերու ատեն գնդակ քաշել մեր բերդապահին, վախճալով որ կը վիրաւորուի...*

ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆՄ ՀԱՄԱՇԵԱՐ ՀԱՅԻՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՆԳԻՊՈՒՄՆԵՐՈՒ  
Ա- ԱՇԽԱՐՀԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ ԼՈՆՏՈՆ 1966



WORLD CUP ENGLAND 1966 WEMBLEY STADIUM

ԱՇԽԱՐՀԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ ԱՆԳԼԻԱ 1966 ԹԱԳՈՒՀԻՆ ԲԱՑՈՒՄԸ ԿԸ ԿԱՏԱՐԷ

Լիբանանէն տասէ աւելի ՀՄԸՄականներ ներկայ էին ԵՅՄ մրցումներուն, Անգլիա՝ Նալպանտեան եւ տիկինը, Վարդիվառ, Յակոբ Գալրագեան «Ազդակ»ի թղթակից, Պերն Խանամիրեան, Յակոբ Պարիկեան եւ ուրիշներ: Նալպանտեան եւ ես կը ներկայացնէին Կաշտունայէս Լիբանանի ֆութպոլի ֆետերասիոնը, FIFAի Համագումարին մասնակցեցանք նաեւ նաշի հրաւիրուեցանք Անգլիոյ վարչապետ՝ Վիլսոնի կողմէ, ֆութպոլի բոլոր ներկայացուցիչներուն հետ:

Խաղերուն բացումը կատարեց Թագուհին: Ինծի համար հոգեկան մեծ վայելք էր տեսնել եւ դիտել աշխարհի լաւագոյն խումբերն ու խաղացողները: Շատ մեծ հետաքրքրութեամբ հետեւեցանք գրեթէ բոլոր մրցումներուն եւ հիացանք իրենց խմբային խաղարկութեան, բայց նորէն «Աստղ» խաղացողներն էին, որ անհատական իրենց թեֆնիքով հրաշքներ կը գործէին: Ուրիշ բան մը, որ նկատեցի եւ հաստատեցի այս անուանի խաղացողներուն մօտ, ինքնավստահութիւնը, պարագաներու բերմամբ այդ անուանի խաղացողը, երբ կը տեսնէ թէ ընկերները նեղի են, ինքն է, որ կը յառաջանայ գնդակով մինչեւ կտրը եւ յաճախ կը յաջողի կոլ նշանակելով:

Պրագիլ-Պուլկարիա մրցումին դուրսը կը սպասէինք: Եկաւ Պրագիլի օթօպիւսը եւ Փելէն վար իջաւ: Ամէնը վագելով իրեն մօտեցան. մէկը ձեռքը կը բռնէր, ուրիշ մը շապիկին կը դպնար, պատանիններ, աղջիկ ու տղայ մատիտով եւ տետրակով ստորագրութիւնը կ'ուզէին: Անմոռանալի տեսարան էր ինծի համար: Սովետական խումբէն տեսանք աշխարհի լաւագոյն բերդապահը՝ հսկայ Եաշինը:



FIFA-ի ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻՆՔ  
Առջեւէն երրորդ շարք, ձախէն՝ Ժողէֆ Նալպանտեան եւ  
Վարդիվառ:

### ԱՆԳԼԻՈՅ ԱՒԱՐՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՄԻՆ 1966

Անգլիա-Գերմանիա աւարտականի մրցումը շատ բարձր թեքնիք եւ թափփ մակարդակով մրցում մը եղաւ, իսկապէս հաւասար էին եւ հաւասար մնացին 2-2:

Կէս ժամ եւս խաղցան եւ Անգլիան յաղթեց 4-2: Ընդհանուր ծափերու մէջ Թագուհին բաժակը յանձնեց աշխարհի նոր ախոյեան՝ Անգլիոյ խմբապետին:

Լոնտոն կեցութեանս իջած էի ընկեր Զալբին տունը, անցեալ ունեցող հաւատաւոր դաշնակցական: Վերջին մրցումին զինքն ալ դաշտ տարի, կեանքին մէջ առաջին անգամ ֆուքպոլի մրցումի կ'երթար: Խաղէն վերջ վերադարձանք իր տունը...

Ապշած մնացին, տունին դրան կղպանքը կոտրած էին, ներս մտած եւ արժեքաւոր շատ մը բաներ առած էին, իմ ալ նոր զգեստս եւ շապիկներս, միայն զգեստիս գրպանէն բասըբորս հաներ եւ սեղանին վրայ դրեր էին: Ըսին՝ ասոնք «նէնթլմէն» գողեր են:



ԱՒԱՐՏԱԿԱՆ ԱՅՍ ՄՐՑՈՒՄԻՆ ՆԵՐԿԱՅ ԵՆՔ

Զախէն՝ ՀՄԸՄական մը, Տիկին Նալպանտեան, Պերն Խանամիրեան, Ժողէֆ Նալպանտեան, Վարդիվառ եւ Ընկեր Զալբֆ:

## Բ- ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒ ԲԱՑՈՒՄԸ ՄԻՒՆԻՒՍ 1972

Բացումը տեղի ունեցաւ Միւնիխի Ողիմպիական նոր դաշտին վրայ: Ներկայ էին՝ Յովհաննէս Շահինեանը, ես եւ Յասմիկը եւ ուրիշ քանի մը ՀՄԸՄականներ: Շատ գեղեցիկ տողանցէն վերջ, որուն կը մասնակցէր նաեւ Լիբանանը, (Լիբանանի դրօշակիրն էր բարեկամս՝ Թօնի Միր), գերմանացիները հին օրերէն մնացած մարզական շատ տարօրինակ եւ հիանալի ցուցադրութիւններ ըրին:

Այս խաղերուն պատահեցաւ արիւնոտ ծանր միջադէպ մը, ուր պաղեստինցի ֆետայիներ պատանդ բռնեցին իսրայէլացի մարզիկներ՝ Ողիմպիական աւանին մէջ, 3-5 Սեպտեմբերին, սպաննուեցան իսրայէլացի եօթը մարզիկներ, չորս պաղեստինցի ֆետայիներ եւ մէկ՝ գերմանացի:





Միւնիխի անրակառոյց դաշտը



Միւնիխ 1972 ՀՄԸՄ միշտ անրկայ  
Վարդիվառ, Յասմիկ եւ եղբայր  
Շահինեան:

### Գ- ԵՒՐՈՊԱՅԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ԱՐԱՐԱՏ - ՊԱՅԵՐՆ ՄԻՒՆԻԽ 1973

Արարատ՝ Սովետ Միութեան երկիրներու ախոյեան, պիտի մրցէր Գերմանիոյ ախոյեան Պայրն Միւնիխի դէմ: Մեզի պէս, աշխարհի ամէն կողմէն փութացեր էին հայերը: Միւնիխի փողոցներէն «Արարատ, կո՛ւ կ'ուզենմք» պոռալով կը տողանցէին Վենետիկէն եկած հայ ուսանողները: Եռագոյն դրօշակներով Պարսկաստանէն եկած հայ աղջիկներ հայկական տարազներով, պարելով եւ երգելով կ'ուղղուէին դաշտ: Կարծես հայկական Նաւասարդեան խաղեր ըլլալին:

Մրցումը սկսաւ, մերինները բաւական դիմադրեցին, բայց գերմանացիները շատ զօրաւոր էին եւ յաղթեցին:

Երեկոյեան, Միւնիխի հայ համայնքը ընդարձակ սրահի մը մէջ նաշկերոյթ մը կազմակերպած էր, ուր դուրսէն եկած բոլոր հայերը ներկայ էին, իսկ երբ հայկական խումբը սրահ մտաւ, ամէնուն կողմէ հուռոտաներու արժանացաւ:

Իսկապէս հայկական մթնոլորտի մէջ գեղեցիկ երեկոյ մը անցուցին:

### Դ- ԱՇԽԱՐՀԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ ԳԵՐՄԱՆԻԱ 1974


Այսպիսի մեծ ֆութպոլի հանդիսութիւն մը չէինմ կրնար փախցնել, ՀՄԸՄականներս, անպայման ներկայ պէտք էր ըլլալինմ՝ Ժոզէֆ Նալպանտեան, Բարսեղ, ֆութպոլիստ Աբօ, Տոբթոր Կիւրեղեան, Նօնօ Շահինեան, պաղեստինցի Ժիրայր եւ ուրիշներ: Նաեւ կային չորս-հինգ

հոգի Լոս Անճելոսէն: Վերջին կարեւոր բոլոր մրցումներուն ներկայ եղանք, Ֆրանսֆորթ թէ Տորթմունտ: Գերմանիա յաղթեց Հոլանտայի 2-1 արդիւնքով եւ հռչակուեցաւ աշխարհի ախոյեան:

Ես եւ Բարսեղը, Ֆրանսֆորթէն Միւնխի գալու ատեն, օդանաւին մէջ բախտը ունեցանք Փելէին հետ խօսելու եւ իր ստորագրութիւնը առի ուղղակի փաստորիս վրայ, զոր կը պահեմ մինչեւ այսօր:

## Ե- ԱՇԽԱՐՀԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ ԱՐԺԱՆԹԻՆ 1978

Յասմիկին հետ միասին ճամբայ ելանք Պէրուքէն դէպի Փարիզ, յետոյ Արժանթին՝ Պուէնոս Այրես: Յունիսի վերջերն էր, բայց հոն ձմեռ էր: Նորէն տասէ աւելի ՀՄԸՄականներ էինք, Լիբանանէն՝ Նալպանտեան, ես եւ տիկինս, պաղեստինցի ժիրայրը, ֆութպօլիստ Աբոն, Կարապետը եւայլն, հինգ վեց հոգի ալ կային Լոս Անճելոսէն, մէջերնին՝ Մարաշը եւ Գանատայէն երկու հոգի: Շատ լաւ խումբ մը կազմեր էինք:



ԱՐԺԱՆԹԻՆԵԱՆ ԹԻԲԻ-Ք ՃԱՇԱՐԱՆ, ՈՒՐ ՅԱՃԱԽ ՃԱՇԵՑԻՆ-Ք

ԱՐԺԱՆԹԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԻՒՊԱՏՈՍԸ ՄԵՁ ՃԱՇԻ ՀՐԱԻՐԵՑ

Առաջին գիշերը Լիբանանի հիւպատոսը մեզ նաշի հրաւիրեց լիբանանեան ճաշարան մը, մեզի հետ էին նաեւ Բանի մը գղարթացիներ: Ճաշարանին տէրը՝ ծագումով Լիբանանցի, յիսուննոց

մը կար եւ արարերէնը կը խօսէր լիբանանեան բարբառով: Լիբանանի պէս, նոյն սեղան մը սարքեց մեզեաներով եւ համեղ խորովածով: Ասոր վրայ աւելցուցէ՛ գեղեցիկ պարուհի մը՝ որ լիբանանեան պարեր կը կատարէր քննուշ նագաններով: Յաջորդ օրը լուր առինք, թէ Յունիս 13ին, Սլէյման Ֆրանժիէի տղան՝ Թոնի Ֆրանժիէ իր ընտանիքով եւ կողմնակիցներով սպաննուած էին քրիստոնեայ փաղանգաւորներու կողմէ: Միայն պզտիկ տղան ազատած էր: Այս գէշ լուրին վրայ զղարթացիները Լիբանան վերադարձան: Արժանթինի մէջ կան մէկ միլիոն լիբանանցի եւ սուրիացիներ, որոնք գաղթած են այս երկիրը 1900ական թուականներուն՝ փախչելով թուրքին լուծէն: Ընդհանրապէս օրթոտոքս են, բայց հայերու պէս լաւ կազմակերպուած չեն:



ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԾԱՇԱՐԱՆ ՊՈՒԷՆՈՍ-ԱՅՐԷՍ 1978

Լիբանանէն ձախէն՝ Նալպանտեան, ոմն, Արօ Գասապեան,  
Կարապետ, Յասմիկ եւ Վարդիվառ:

Վարի նկարը՝ Լիբանանցի պարուհիով:

## ԱՐԺԱՆԹԻՆ 1978

*Արժանթին հին երկիր մըն է: Եւրոպայի կամ Միացեալ Նահանգներու նորութիւնները դեռ հոս չեն հասած: Ընդարձակ շուկաներ, հսկայ*



*Չախէն՝ թաղականներ, Վարդիվառ, Հայր Արշաւիր եւ Յամիկ:  
Այս խաղերուն հայր Արշաւիրն ալ կը գտնուէր Արժանթին:*



*ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑԻՆ ԲԱԿԸ ԱՐԺԱՆԹԻՆ 1978  
Յամիկ հայկական եռագոյնը կը բարձրացնէ:*

նոր շէնքեր չկան: Դար մը առաջ կառուցուած շինութիւններ կան լայն պողոտաներով, որոնք ունին իրենց հմայիչ գեղեցկութիւնը:

Ամէն ինչ առատ է, բայց աղքատներ շատ կը տեսնուին ճամբաներու վրայ:

Աշխարհի ամենաշատ կովեր ունեցող երկիրն է՝ անծայրածիր արօտավայրերով: Քսանհինգ միլիոն բնակչութեան համար կան կրկնակի թիւով կովեր: Աշխարհի ամէնէն համեղ միսը կու տան անոնք:

Հայ համայնքը շատ լաւ կազմակերպուած է իր ՀՄԸՄով, կեդրոններով, եկեղեցիներով եւ դպրոցներով: Օր մը կանուխէն այցելեցինք հայկական վարժարանը, ուր ներկայ եղանք շատ գեղեցիկ արարողութեան: Աշակերտները հաւաքուած էին բակը, հայկական եռագոյնը եւ արժանթիւնեան դրօշակները բարձրացնելու արարողութիւնն էր: Պատիւ ըրին մեզի, եւ Յասմիկը բարձրացուց հայկական դրօշակը: Դասարանները մտանք, հայ աշակերտները մեզի հարցումներ կ'ընէին, բայց ափսոս, սպաներէն լեզուով, ուսուցիչը կը թարգմանէր: Տնօրէնը զիս լաւ կը ճանչնար, Հալէպէն է եւ շատ անգամ ներկայ եղած է իմ մրցումներու: Բացատրեց իրենց, որ ես ալ անուանի ֆութպոլիստ եղած եմ, անմիջապէս հարց տուին թէ ես ալ արժանթիւնի նշանաւոր ֆութպոլիստ Քեմբէսին պէս կը խաղա՞մ, ուսուցիչը՝ «այո՛» պատասխանեց: Պէտք էր տեսնել աշակերտներուն ուրախութիւնը:

Թաղականութիւնը մեզ հաշի հրաւիրեց դպրոցին ճաշարանը, ուր աշակերտները ամէն կէսօր կը ճաշեն:

Շատ յուզիչ էր հայկական դրօշակի արարողութիւնը, որ ամէն առտու կը կրկնուէր, եւ այդ ոչ հայախօս պատանիներու սրտերուն եւ հոգիներուն մէջ կը թրծուէր իրենց հայկականութիւնը: Ներկայ էինք մեր իրումբով:

## ՄԱՅԻՍ 28 - ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ՝ ՊՈՒԷՆՈՍ-ԱՅՐԷՍ 1978


Հրաւիրուեցանք Հայաստանի Հանրապետութեան Անկախութեան Մայիս 28ի տօնկատարութեանը: Խումբով գացինք: Ընդարձակ սրահ մը, ուր տեղի պիտի ունենար հանդէս եւ ճաշկերոյթ: Շատ ուրախալի երեւոյթ էր ինձի համար տեսնել այսօրվան հոծ բազմութեամբ լեցուած սրահը, աշխարհի հեռաւոր այս անկիւնը՝ տօնելու եւ յանդիմանելու համար Մայիս 28ը: Ճոխ յայտագիրով հանդիսութիւն մը ըրին, ճառախօսներ խօսեցան հայերէն եւ սպաներէն, մեներգներ եղան: Այլ եւ չկրցայ համբերել, գացի օրուայ նախագահին մօտ, որ Հալէպէն էր եւ զիս լաւ կը ճանչնար, ըսի իրեն՝ թէ կը փափաքիմ արտասանել: Շատ ուրախացաւ. հարցուց թէ ինչ պիտի արտասանէի. ըսի Աւետիս Ահարոնեանի «Ազատութեան Ճանապարհին» գործէն հատուած մը եւ Շաւարշ Նարդունիի «Ամէն Բանէ Վեր»ը:

Նախագահը բեմ հրաւիրեց եւ ներկայացուց զիս իբր Լիբանանի լաւագոյն ֆուքպոլիստներէն, իմ բոլոր հանգամանքներովս եւ արժանիքներովս, աւելցնելով՝ թէ ընկերներով եկած էին Արժանքին «Մոնտիալ»ի մրցումներուն ներկայ ըլլալու, իսկ թէ հիմա ինքնաբոյս կը փափաքի արտասանել:

Առաջին բաժինը արտասանելէս վերջ ամբողջ ժողովուրդը ոտքի ելաւ եւ որոտընդոտ ծափահարութիւններէ վերջ՝ կ'ուզէին որ երկրորդ մըն ալ արտասանեմ, արտասանեցի եւ ըստ ներկաներուն վկայութեան՝ շատ լաւ արտասանած եմ:

Տեղս վերադառնալով մեծապէս անակնկալի եկայ, երբ քանի մը հոգիներ եկան մօտս, Պէյրութէն ծանօթներ էին: Եկաւ նաեւ մէկը, սեւեռուն նալուածով դիտեց զիս. հանչեցայ. Ամանոս քեմը՝ Քարանթիւն եղած ատեննիս, իմ պատիկութեան լաւագոյն ընկերս էր: Քառասուն-յիսուն տարիէ ի վեր զինք չէի տեսած. Գասպար Գասպարեան՝ Լարանցի: Յուզուած ողջագուրուեցանք: Տիկինը բերաւ ներկայացուց: Յետոյ իր տունը գացինք եւ հին ու անուշ օրերը յիշեցինք:

Ուրիշ երիտասարդ մը եկաւ զիս շնորհաւորեց ասմունքիս համար, եւ առ ի յիշատակ «Պայքար մինչեւ Յաղթանակ» եռագոյն հետեւեալ նկարը տուաւ:



Արժանքինահայ դաշնակցականի մը թանկագին յուշանուէրը՝ Մայիս 28ի տօնակատարութեան ասմունքելէս ետք:

## ՏԱՐՕՐԻՆԱԿ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՐԺԱՆԹԻՆԻ ՀԱՅԵՐՈՒՆ ՀԵՏ

Յասմիկին հետ օր մը շուկան պտտելու ատեն խանութի մը առջեւը գրուած էր ՀԱԻ, այսինքն՝ ՀԱՅ, իրարու հետ սկսանք բարձրաձայն հայերէն խօսիլ: Խանութին տէրը լսեց եւ մ'օտեցաւ. - «Հա՞յ էք», - ըսաւ: «Այո՛, հայ ենք՝ Լիբանանէն եւ ֆուլպոլի խաղերուն համար եկած ենք», - ըսինք: Մարդը ուրախացաւ, բաւական մը խօսելէն վերջ խնդրեց մեզմէ՝ իրենց երթալ նաշի, բոլոր խումբով, աւելցնելով. - «Ծնողքս շատ պիտի ուրախանայ ձեզ տեսնելով»: Երեկոյեան խմբովին գացինք ընթրիֆի: Շատ ուրախացան եւ միասին շատ խանդավառ ժամանակ անցուցինք:

## ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷՆԵՐՈՒ ԴՊՐՈՑԸ ԱՐԺԱՆԹԻՆ 1978

Օր մը Յասմիկին հետ գացինք փնտտելու կաթողիկէ Հայր Ներսէս վարդապետը. բսան տարի առաջ Լիբանանէն գացած էր. Պուրն Համուտի Մեսրոպեան վարժարանի տեսուչն էր: Գտանք եկեղեցին, ուր առտուան ժամերգութիւնը կ'ընէր, արարողութենէն ետք գացինք հայ կաթողիկէներու կեդրոնը, ուր մեծաւորին ծանօթացանք: Շատ ուրախացանք տեսնելով հայ աշակերտներ սկառուտի տարագով: Յետոյ մեծաւորը մեզ նաշի հրաւիրեց:

## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՄՈՆԹԷՎԻՏԷՕ - ՈՒՐՈՒԿՈՒԷՅ 1978

Անակնկալ այցելութիւն մը տուինք Ուրուկուէյ, նախկին ընկերոջս՝ Եփրեմ Կիւլիզեանին, ուր իր եղբայրը մեզ հասցուց իր թափսիով (պատահմամբ):



ՄՈՆԹԷՎԻՏԷՕ ԿԱՐՕ ԿԻԻԼԻԻԶԵԱՆԻՆ ՀԵՏ

Շատ ուրախացանք, մայրը, Եփրեմը եւ Կարոն տեսնելով: Քիչ ետք, տեղւոյն հայկական ռատիոկայանէն հաղորդեցին, թէ Պէյրութի ՀՄԸՄի Վարդիվառը եկեր է տիկնոջը հետ: Զիս հրաւրեցին որ անպայման ռատիոկայանէն խօսիմ: Գացի եւ տասը վայրկեանի չափ հարց ու պատասխան եւայլն, անշուշտ Լիբանանի հայերու կեանքէն, ՀՄԸՄէն եւայլն: Վերադարձանք տուն. քիչ ետք դռնէն ներս կը մտնէ մէկը, նանչցայ, պոռացի.- «Սըչան Արթին», - ողջագուրուեցանք:

Երեսուն տարի առաջ իմ թաղի Ամանոս խումբիս կոլարն էր:

Երեկոյեան Հ.Օ.Մ.ի հանդէսին գացինք, ուր շատ ուրախ ժամանակ անցուցինք եւ ինչ զուգադիպութիւն, Պէյրութէն Կարպիս Հարպոյեանին հանդիպեցանք, տիկինին հետ եկեր էին «Մոնտիալին»: Երեք օր լաւ մը պտտեցանք, շատ մը ծանօթներու հանդիպեցանք, որոնք բարեկեցիկ վիճակ ունին, քիչ հարուստներ կան:

Նոյն ճամբով՝ օթօպիւսով եւ նաւով վերադարձանք Պուէնոս-Այրէս:

## ԱՇԽԱՐՀԻ ՖՈՒԹՊՈԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ ԱՐԺԱՆԹԻՆ 1978

Բոլոր մրցումներուն գրեթէ ներկայ եղանք: Սֆանչելի մրցում էր Արժանթինի եւ Պրագիլի միջեւ, երկուքն ալ պաշտպանողական, կոլ ընելու մասին մտածող չկար: Երկու երկիրներուն նախագահները ներկայ էին: Երբ խաղը վերջացաւ հաւասար արդիւնքով, ամբողջ ժողովուրդը սփոփանքի «ուֆ» մը քաշեց: Ըսողներ եղան, թէ որեւէ մէկ կողմի յաղթանակի պարագային, կրնար պատահիլ որ երկու երկիրներու միջեւ պատերազմ ծագէր...

## ԱՐԺԱՆԹԻՆ ԱՇԽԱՐՀԻ ԱԽՈՅԵԱՆ ՊՈՒԷՆՈՍ-ԱՅՐԷՍ 25 ՅՈՒՆԻՍ 1978

Հարիւրհազար ժողովուրդ պարունակող դաշտը բերնէ բերան լեցուն էր, անդադար կը պարէին եւ կ'երգէին: Շատ գեղեցիկ խաղարկութիւն եղաւ, օրուայ հերոսն էր՝ Արժանթինի Քեմբէսը, որ գնդակը առած կը սուրար հակառակ հոլանտացիներու վայրագ խաղարկութեան: Վերջապէս Արժանթին արժանիօրէն յաղթեց Հոլանտային 3-1 արդիւնքով եւ տիրացաւ աշխարհի խիտնախաղարկութեան: Այսպէս ուրախութիւն եւ ցըն-ծութիւն արժանթինցիներու կողմէ երբեք չէի տեսած, ներկայ եղեր էի նմանօրինակ պարագաներուն Անգլիա 1966ին եւ Գերմանիա 1974ին: Բայց այստեղ մարդիկ իսկապէս ուրախ էին: Մենք ալ մեր եռագոյնը պարզած խառնուեցանք ժողովուրդին եւ իրենց հետ սկսանք երգել մեր ՀՄԸՄի քայլերգը՝ «ՅԱՌԱՋ ՆԱՀԱՏԱԿ»ը:





ԱՐԺԱՆԹԻԳ ՅԱՂԹԵՑ ՀՈԼԱՆՏԱՑԻՆ 3-1 ԱՐԴԻԻՆ-ՔՈՎ 1978  
ՄԵՆ-Ք ՄԱՍՆԱԿԻՑ ԵՆ-Ք ԻՐԵՆՑ ՑՆԾՈՒԹԵԱՆ  
*Զախէն՝ պաղեստինցի ժիրայր, Վարվիվառ եւ Յակոբ Փոսթանեան:*

### ՎԵՐԱԴԱՐՁ ԴԷՊԻ ԼԻԲԱՆԱՆ - ՆԱԽ ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍ

Պուլենոս-Այրէսէն դէպի Լիբանան վերադարձի նամբուն վրայ առաջին հագրուանն էր՝ Լոս Անճելոս, ուր գտայ իմ երբեմնի մտերիմ ընկերս Պէյրութէն՝ Ներսէս Իդեան (1946ին ՀՄԸՄի Ա. խումբին մաս կազմած է), շատ յուզիչ հանդիպում, տարիներով չէինք տեսած զիրար, ինչ յիշատակներ ունէինք ՀՄԸՄի յաղթանակներու առթիւ եղած խննոյքներէն: Փափաքեցաւ ճիշդ այդ օրերը յիշեցնող խրախնանք մը սարքել ՀՄԸՄի ակումբը եւ հրաւիրել բոլոր ծանօթներս: Այդպէս ալ ըրաւ: Քառասուն-յիսուն ՀՄԸՄական հրաւիրեալներ կային. ճոխ սեղան կը սպասէր մեզի, լիբանանեան մեզէներով, տեսակ տեսակ խորովածներով: Տեղաւորուեցանք սեղաններուն շուրջ, մէկ կողմս նստած էր Ներսէսը, միւս կողմս՝ երբեմնի իմ ֆուքսոյի խաղընկերս եւ մտերիմ բարեկամս՝ Յովհաննէս Նազարեան (Կիւլիւմ) եւ սեղանին շուրջը բոլորը Պէյրութի ընկերներէս: Ճիշդ Պուրն Համուտի Սարդարապատ ակումբի մէջ եղած մեր երանելի խրախնանքներուն նման խանդավառ մթնոլորտի մէջ, յեղափոխական երգերով, մեներգներով եւ ինքնաբոյս արտասանութիւններով՝ շատ ուրախ եւ յիշատակելի պահեր անցուցինք: Մեր ուրախութիւնը իր գագաթնակէտին հասաւ, երբ կէս գիշերին, ճիշդ ժամը 12ին, ըստ մեր գեղեցիկ սովորութեան թնդացուցինք:

*«Հագիւ լրացաւ քսան մէկ տարիս,  
Աղուամազ բուսաւ, աղբեր ջան, երես ծնօտիս:  
Սուր ակոսներով պողպատ կը ծամենք,  
Մառը արմատէն, աղբեր ջան, քէօքէն կը հանենք:*

Ինձ պէս բիրեբրով լի է Հայաստան,  
 Նրա սուրբ հողին, աղբեր ջան, լինեմ ես դուրպան:  
 Պարզեմք դրօշակ վեհ Դաշնակցութեան,  
 Նրա գոյներին, աղբեր ջան, լինեմ ես դուրպան» եւ այլն:

Շատ ուշ բաժնուեցանք իրարմէ, յուզուած, բայց վերջապէս հին ու մեր գեղեցիկ օրերը յիշեցնող խրախնանքէ ետք:



Նորէն հիրճեմ Լուս Անճելոսի ընկերներուս Հայ Կեդրոնին մէջ: Տասնեակ տարիներու բաժանումի կարօտը կ'առնենք երգելով մեր անմահ փետայիներու երգերը, 1978:

### ՎԵՐԱԴԱՐՁ ԴԷՊԻ ԼԻԲԱՆԱՆ 1978

Շարունակելով մեր նամբան հասանք Շիֆակօ, ուր վերագտայ ամմանցի ընկերներս. Ապու Մուսան ծերացեր էր. հին օրերը յիշեցինք:

Այն տեղէն անցանք Վաշինկթըն, գտայ իմ ընկերս՝ Յարութիւն Նալչայեան, ՀՄԸՄական, 1948-1950 Լիբանանի հեծելարշաւի ախոյեան, եղբօրը՝ Ժան Նալչայեանին հետ: Մեզ շատ լաւ պտտուց քաղաքին տեսարժան վայրերը: Նաեւ բախտը ունեցանք 4 Յուլիսի ամերիկեան անկախութեան օրուան տօնահանդիսութիւնը տեսնելու: Յարութիւն Նալչայեան, ըլլալով նշանաւոր «Նեշընըլ ձէռկրաֆիք Մեկեզին» ամսագրի լուսանկարիչ, յաջողեցաւ ապահովել մեր մուտքը Սպիտակ տուն, ուր նոյնիսկ ձեռնուեցանք նախագահ ձիմի Քարթըրի հետ: Հոն հանդիպեցայ նաեւ Պուրն Համուտի մեր ընկերներէն Բենիամինի եւ ուրիշ ծանօթներու:

Վաշինկթընէն անցանք Նիւ Եորք, ուր հիւրը եղանք գանատացի բարեկամիս՝ Պելալին. մեզ շատ լաւ տեղեր պտտցուց: Հասանք Մոնրէալ. նոյնպէս քաղաքը պտտցուց մեզի քեռայրիս՝ Յարթթին տղան: Տարաւ մեզ հայոց եկեղեցին եւ քովի սրահը. շատ մը ծանօթներու հանդիպեցանք:

Վերջապէս հասանք Փարիզ: Քանի մը օր գաւակներուս հետ մնալէ ետք, չուզելով վերեդարձանք Լիբանան, քաղաքացիական պատերազմի ամենավատ օրերուն, երբ մէկ շաբաթ անդադար Պուրն Համուտը ումրակոծուեցաւ, աւերակ դարձնելով ամէն տեղ: Այս աւերումները գործուեցան սուրիացիներու եւ փաղանգաւորներու միջեւ եղած բախումներու ընթացքին:

Այսպէս, այս գեղեցիկ եւ յիշատակելի շրջապտոյտէն ետք եկանք Լիբանան եւ այս ցաւալի դէպքերուն մէջ մխրճուեցանք:

## ՀՄԸՄ-Ի ՄԱՅԻՍԵԱՆ ՓԱՌԱՏՕՆԸ 1975

ՀՄԸՄի Մայիսեան փառատօնը կը նշուի Մայիս 28ի առթիւ, Պուրն Համուտի մարզադաշտին վրայ: Ֆութպոլի աւարտական մրցումներէն ետք կը սկսի պանծալի տողանցքը, առաջնորդութեամբ ՀՄԸՄի ֆանֆարին: Կը տողանցեն մարզական եւ սկաւտական խումբեր, ինչպէս նաեւ ԼԵՎԱՄի, հայկական վարժարաններու մարզական խումբերը, որոնց յաղթականներուն կը տրուին բաժակներ: Այս փառատօնը ձեռով մը կը փոխարինէ ՀՄԸՄի Հալէպի մէջ տեղի ունեցած Միջմասնահիւղային երբեմնի Նաւասարդեան անմոռանալի յիշատակներով լեցուն խաղերը, Զատկուան երեք օրերուն, մասնակցութեամբ՝ Սուրիոյ, Լիբանանի, Պաղեստինի եւ Անդրյորդանանի մասնահիւղերուն: Ֆութպոլի սիրահարներուն համար առիթ էր ներկայ ըլլալ՝ Սուրիոյ եւ Լիբանանի ֆութպոլի խոյնեաններու, «ՀՄԸՄ Պէյրութ - ՀՄԸՄ Հալէպ», այնքան սպասուած եզրափակիչ մրցումին, ի ներկայութեան՝ երեսունհազարէ աւելի հայ ժողովուրդին, որուն ուրախութիւնը իր գագաթնակէտին կը հասնէր, երբ տեղի կ'ունենար ՀՄԸՄի շարքերուն փառահեղ ու յաղթական տողանցքը:

## ՀՄԸՄ-Ի Զ. ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

11 ԷՆ 17 ԱՊՐԻԼ 1995 ՊՐՈՒՄԱՆԱ ԼԻԲԱՆԱՆ

Այս ժողովը տեղի ունեցաւ Պրումանայի մէջ, Լիբանան, Ապրիլ 1995ին:

Կը մասնակցէին աշխարհի չորս կողմերէն՝ Ամերիկաներէն եւ հեռաւոր Աւստրալիայէն եւս եկած պատգամաւորներ: Խորհրդակցական հանգամանքով ես մաս կը կազմէի Ֆրանս ՀՄԸՄի պատուիրակութեան: Շատ ուրախ էի այս ժողովին ներկայ գտնուելուս, կը յիշէի 1947ի

պատմական պատգամաւորական ժողովը, ուր մասնակից էի, ինչպէս նաեւ անկէ ետք մինչեւ 1973 կայացած ժողովները:

Եղբայրական գեղեցիկ մթնոլորտի մէջ ընթացաւ ժողովը եւ շինիչ որոշումներ առնուեցան ՀՄԸՄի ապագայի գործունէութեան համար:

Ժողովականներս պաշտօնական այցելութիւններ տուինք Անթիլիասի Վանքը, Նշան Փալանեան ձեմարանն ու Առաջնորդարանը: Լիբանանի Շրջանային Վարչութեան հիւրը եղանք ողջերթի փառաւոր մէկ ճաշկերոյթին, Եղիշէ Մանուկեան վարժարանի ընդարձակ սրահին մէջ, ուր հրաւիրուած էին նաեւ Առաջնորդը, նախարար, երեսփոխան եւ հայ ժողովուրդի ընտրանին: Սրահի մուտքին հիւրերը ընդունուեցան ՀՄԸՄի ֆանֆարի «Պատուի առ» նուագով:

Նաեւ հրաւիրուեցանք հաւատաւոր ՀՄԸՄական եղբայր Սարգիս Անեմեանի կողմէ, Յասմիկին եւ Արմինէին հետ, ՀՄԸՄի Շրջանային Վարչութեան ուրիշ մէկ ճաշկերոյթին՝ Պոլոնիա:

## ԶՐՈՅՑ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐՈՒ ՀԵՏ 1995 (ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԾԻՐԷՆ ՆԵՐՍ)

Ժողովի դադարին զրոյց ունեցայ պատգամաւորներու հետ, որոնք մտահոգ էին Լիբանանի ՀՄԸՄի այժմու ֆուլպոլի ոչ նախանձելի վիճակէն. հարց տուին, թէ մեր ժամանակաշրջանին ի՞նչ տեսակ ֆուլպոլիստներ էինք, որ ախոյեանութեան եւ բաժակակիրի տիտղոսներ շահած էինք:

Կ'ամփոփեմ պատասխանս հետեւեալ նկարագրութեամբ.

**Նիւթ - 1940-1950 թուականներուն ՀՄԸՄական ֆուլպոլիստը եւ անոր զոհողութիւնը իր միութեան:**

ՀՄԸՄի երկրորդական խումբերուն մէջ արդէն թրծուած զոհաբերութեան ոգիով իբր մարզիկ-ֆուլպոլիստ եւ ՀՄԸՄի ծառայելու անսակարկելի պատրաստակամութեամբ, 1941-1942 ֆուլպոլի եղանակին, մուտք գործեցի նուիրեալ հսկաներու՝ (Սաաթնի, Եղիշէ, Յովհաննէս, Կիրակոս) ՀՄԸՄի առաջին խումբի կազմէն ներս: Երազներուս իրականանալուն չէի հաւատար...

Մեր ժողովներն ու փորձերը կ'ըլլային մեր սիրելի վարիչներու հսկողութեամբ եւ մրցումները կը խաղայինք անպայման յաղթելու վճռականութեամբ՝ «մեռնիլ կայ՝ յաղթուիլ չկայ» նշանաբանով, որպէսզի մեր ժողովուրդը ճակատաբաց, ուրախ եւ հպարտ տեսնէինք մրցումին աւարտին դաշտէն հեռանալու ատեն:

Ընդհանրապէս առաջին դասակարգի մրցաշարքներուն յաղթական կ'ըլլայինք, կը պատահէր, որ պարտութիւններ ալ արձանագրէինք,

սակայն ամէն տարի անպայման տիտղոս մը կը խլէինք. ինչպէս՝ ախոյեանութիւն, Լիբանանի Բաժակ, Պէյրութի Քաղաքապետարանի Բաժակ, Ֆետերաս իռնի մրցաշարքի բաժակ եւայլն. իսկ ՀՄԸՄի ոսկի տարին՝ 1948ին, տիրացանք Լիբանանի Ախոյեանութեան եւ Բաժակին:

Համեստօրէն յայտնեմ, թէ մեր ժողովուրդին սիրելիներն էինք, քան զգիտակից այս իրականութեան, պատրաստ էինք ամէն զոհողութեան:

Հակառակ մեր ընտանիքներուն նիւթական անձուկ վիճակին, ՀՄԸՄէն ներս երբեք նիւթական հարց չէր եղած. նոյնիսկ կը պատահէր, որ փոքրիկ գացող մարզիկներու վարպետները անոնց շաքաթական աշխատավարձէն զեղչէին:

Մրցումի մը օրը, խաղացողը իր ծնողքին պատրաստած համեստ կերակուրը կը ճաշակէր եւ հանրակառնով կամ քաղցրով կ'երթար դաշտ: Կը պատահէր որ ֆութպոլի կօշիկը եւ զգեստաւորումը մէկ տարիէն աւելի գործածէինք:

Ահա այսպիսի նուիրումով հետեւեցանք մեր նախորդներուն, եւ այդ ՀՄԸՄի նուիրումի ոգին փոխանցեցինք մեր յաջորդներուն:

**ՎԱՐԴԻՎԱՌ**

ՄԵՐ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ



ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԺԵՄԱՐԱՆԵՐԻ ԱՆԹԻԼԻԱՍ:  
*Արմինե, Վարդիվառ եւ Յասմինկ:*



ՀՄԸՄ ՖՐԱՆՍԻ ՊԱՏԳԱՄԱԻՈՐՆԵՐԸ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՎԱՆՔԸ  
*Զախէն՝ Վարանդ Պաղտասարեան, Հրաչ Սիսեռեան, Արտաւազդ Սրբազան եւ Վարդիվառ:*



ԼԻԱՆԱՆԻ ՀՄԸՄԻ ԾՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԾԱԾԿԵՐՈՅԹԻՆ ՀՄԸՄ-Ի  
 ՖԱՆՏԱՌԸ ԿԸԹՆԴԱՑՆԷ ՄԹԵՈԼՈՐՏԸ ԵՐԲԵՄՆԻ ՀՌԶԱԿԱԻՈՐ ՖՈՒԹ-  
 ՊՈԼԻՍ ԵՂԻԾԷ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ԱՆՈՒԱՆ ԴՊՐՈՑԻ ԾՔԵՂ ՍՐԱՀԻՆ ՄԷՋ  
 ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՎ  
*(Սարգիս Թօփալեանի խմբավարութեամբ)*



ԼԻԱՆԱՆԻ ՀՄԸՄ-Ի ԾՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՊՈԼՈՆԻԱՅԻ  
 ԾԱԾԿԵՐՈՅԹԻՆ 1995  
*Չախէն՝ Տիկին Քեշիշեան, Արա Յակոբեան (ոտֆի), Յարութիւն  
 Քեշիշեան (երբեմնի մտերիմ բարեկամս) եւ Վարդիվառ:*

**ԱՊՐԻԼ 24 80 ԱՄԵԱԿ ՊՈՒՐԾ ՀԱՄՈՒՏ 1995**

*1995ը՝ ութսունամեակ Ապրիլ 24ի: Այս տխուր տարեդարձը նշուեցաւ  
 մեծ շուքով, Պուրն Համուտի դաշտին վրայ, համայն հայ ժողովուրդի  
 մասնակցութեամբ: Հայկական վարժարաններու աշակերտները կու*

գային շարան շարան լեցնելու մարգադաշտը: ՀՄԸՄի ֆանֆառը կ'առաջնորդէր այս բոլորը եւ սկառուտական խումբերը՝ պարզած իրենց դրօշակները: Հայ ժողովուրդը իր կաթողիկոսով, մեծով-պգտիկով, իր նախարարներով, երեսփոխաններով, երեք յարանուանութեանց ներկայացուցիչներով՝ անվերջ կը դիտէին կայտառ շարքերը վերածնած հայորդիներուն:

Պետութեան կողմէ ներկայ էր հայ ժողովուրդի մեծ բարեկամ՝ Ներքին Գործոց Նախարար՝ Պ. Միշէլ Մըրր:

Շատ յուզիչ էր մէկ վայրկեանի լոռութիւնը, ուր ՀՄԸՄի ֆանֆառը սուգի նուագով ոգեկոչեց անմահ հոգիները մեր նահատակներուն: Ոգեկոչումի հանդիսութիւնը վերջ գտաւ օրուան պատշաճ ճաշերէն ետք:

Այսպէս՝ ՀՄԸՄ իր մասնակցութիւնը կը բերէ հայ ժողովուրդի ազգային, եկեղեցական եւ ժողովրդային բոլոր տօնակատարութիւններուն եւ այլ հրապարակային ձեռնարկներուն՝ անխտիր, որով հայ ժողովուրդը հպարտ է ՀՄԸՄով:

## ԱՊՐԻԼ 24-80 ԱՄԵԱԿ 1995

### ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՏԷՐ ԶՕՐ ԵՒ ՄԱՐԿԱՏԷ

Հալէպի հայութիւնը Ապրիլ 24ը կը տօնէ Մայիսի առաջին Կիրակին, ուխտի երթալով Տէր Զօր: Մենք ալ՝ Յասմիկ, Արմինէ, Վարսենիկ ու ես, Պէյրութէն ճամբայ ելանք ուխտի, դէպի Տէր Զօր: Ծամբան՝ Հոմսէն առաջ, այցելեցիմք KRAK DES CHEVALIERS «Քարաք՝ Ասպետներու բերդը», խաչակիրներու պատմական բերդը:

Անկէ անցանք PALMYRE՝ «Արմաւենիներու քաղաք», հնամեայ Թատմորը, ուր սփռեցիք հնութիւններ կան հռոմէական կայսրութենէն մնացած: Հոս՝ սուրիական անապատներուն այս կեդրոնը, առաջնակարգ պանդոկ մը կայ, շրջապատուած է արմաւենիներով: Երեկոյեան հասանք Հալէպ: Այն պանդոկը, ուր իջանք, կը վիտային հայեր՝ եկած Ամերիկայէն, Յունաստանէն, Ֆրանսայէն:

Յաջորդ օրը հարիւրաւոր օթոպիւսներով, Հալէպի հայ ժողովուրդով, գացիմք Տէր Զօր՝ չորս հարիւր ֆ.մ. հեռու, եւ տեղաւորուեցանք առաջնակարգ պանդոկ մը:

Երեկոյեան՝ Հալէպի Առաջնորդ Տէր Սուրէն Սրբազան Գաթարոյեան, հրաւիրեց ուխտաւորները երթալ Տէր Զօրի եկեղեցին, մասնակցելու գիշերուան հսկումին, որ շատ յուզիչ անցաւ: Յաջորդ օրը նորէն եկեղեցի, պատարագ, հոգեհանգիստ: Կէսօրին բոլոր ներկաները դէպի Մարկատէ՝ 100 ֆ.մ. հեռու: Հոս է, որ հովիւ մը բլուրին վրայ մարդկային ոսկորներ գտած է եւ լուր տուած պետութեան, որ իր կարգին լուր տուած է հայոց Առաջնորդարան: Հիմա հայերը հոս կը շինեն մատուռ մը՝ «Ս. Յարութիւն»: Նորէն եկեղեցական արարողութիւն, հոգեհանգիստ,



*Ֆարոգ, եւ օրուան խորհուրդին պատշաճ եղանակներ կը նուագէին Գամբշլիի ՀՄԸՄի սկաուտական ֆանֆառը, նաեւ եղանակները «Իբրեւ Արծիւ» եւ այլ ազգային երգերուն: Բոլոր ներկաներուն աչքերը արցունքով լեցուեցան այս սրտանմլիկ տեսարաններուն դիմաց, հայկական մատուռ՝ նահատակներու Յարութեան ձօնուած, Սուրիոյ այս հեռաւոր անապատին մէջ՝ Մարկատէ:*

*Նոյն օրը վերադարձանք Հալէպ եւ յաջորդ օրը՝ Պէյրութ:*



**ՏԷՐ-ԶՕՐԻ ԵԿԵՂԵՑԻՒՆ ԳԵՏՆԱՅԱՐԿԸ 1995  
ԳԻՇԵՐՈՒԱՅ ՀՍԿՈՒՄԻՆ ԱՂՕԹՔ ՄԵՐ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ՀՈԳԻՈՑՆ ՀԱՄԱՐ  
Յասմիկ, Վարդիվառ եւ Արմինէ:**



**ԱՊՐԻԼ 24Ի ԱՌԹԻԻ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՏԷՐ-ԶՕՐ՝ 1995  
ՀՈՄՍԷՆ ԱՌԱՋ՝ ԲԱՐԱՔ, CRAK DES CHEVALIERS  
Վարդիվառ, Յասմիկ, Արմինէ եւ Վարսենիկ:**



Հնամեայ Թաատորը՝ PALMYRE, SYRIE  
Արմինէ, Վարդիվառ, Յասմիկ եւ  
Վարսենիկ:



ՀԱՄԱՅԻ ԶՐՀԱՆԻՆ ԱՌՋԵԻ  
Արմինէ, Վարդիվառ, Յասմիկ:



*Մտերիմ ընկերոջս՝  
Մինաս Պուտազեանի հետ:*



*Եղբայր Զօհրայ Անտոնեանի  
հետ՝ ՀՄԸՄական Սան  
Ֆրանսիսսոյէն:*

ՏԷՐ - ԶՕՐԻ ԵԿԵՂԵՑԻԻՆ ԲԱԿԸ 1995  
ԱՊՐԻԼ 24Ի 80 ԱՄԵԱԿԻՆ

